Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1900-1914 ԹԹ)

ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

В. А. БАЙБУРТЯН

ТУРЕЦКО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЯ

(1900—1914 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(1900—1914 թթ.)

Ա 53985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1974

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Բ 26
9 (Մ) 32

Գրքում քննության են առնվում օսմանյան Թուրքիայի և Իրանի միջպետական հարաբերությունները XX դարի սկզբին, մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Հենվելով պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունների վրա, Թուրքիան Իրանի նկատմամբ վարում էր ագրեսիվ նվաճողական քաղաքականություն, որը պաշտպանություն էր գտնում իմպերիալիստական մի շարք պետությունների՝ մասնավորապես կայզերական Գերմանիայի կողմից։ Հերքվում է այն տեսակետը, որ իբր ներքին քայքայումից ծվատվող և իմպերիալիստական պետությունների գրոհից պաշտպանվող Օսմանյան կայսրությունը հետու էր հարևան երկրների նկատմամբ նվաճողական քաղաքականություն վարելուց։

Պատասխանատու խմբագիր
Ե. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Բ $\frac{0164-056}{703(02)-74}$ 16—73

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974 թ.

ԴԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XVI դ. սկզբին ասիական մայր ցամաքում ձեռք բերելով մի շարք խոշոր ռազմական հաղթանակներ Օսմանյան կայսրությունը նվաճեց հակայական տերիտորիաներ և վերածվեց Մերձավոր Արևելքի խոշորագույն պետության։ Սակայն սուլթանին լուրջ անհանդստություն էր պատճառում իր արևելյան հարևանի՝ Սեֆեյան Իրանի արագ հզորացումը, նրա ուժեղացող էքսպանսիան և բաղաքական կշռի մեծացումը Մերձավոր և Միջին Արևելքում ու Անդրկովկասում։ Նույնիսկ բուն Օսմանյան կայսրության մեջ, Փոքր Ասիայում, որտեղ բնակվում էին տասնյակ հաղարավոր շիիներ, XVI դ. սկզբին ծայր առավ բաղաքական շարժում շիիական Իրանին աջակցություն ցույց տալու լոզունգի տակ։ Այդ շարժումը ուղեկցվում էր բռնվորների և դյուղացիության ապատամբությունների բռնկումներով, որոնք, անկասկած, շոշափելի հարվածներ էին հասցրնում Օսմանյան կայսրության ռազմա-բաղաքական հզորությանը։

Արդեն XVI դ. սկզբից օսմանյան Թուրքիայի և Սեֆեյան Իրանի միջև մղվում էր լարված բաղաքական պայքար՝ Մերձավոր և Միջին Արևելքում գերիշխանություն ձեռք բերելու նպատակով։ Այս երկու հզոր, կենտրոնացված ֆեոդալա-բռնապետական պետությունների առաջին ռազմական բախումը 1514 թ. էր, երբ սուլթան Սելիմ I Յավուզը Չալդրանի ճակատամարտում ջախջախեց Սեֆեյան շահ Իսմայիլի բանակը և ողջ Արևմտյան, Հարավային և Կենտրոնական Քրդստանը միացրեց իր տիրապետություններին[1]։ Այնու-

[1] Հակոբ Նաճիրագեան, *Քիւրդո-հայ պատմութիւն*, Կ. Պոլիս, 1911, էջ 57։

հետև պատերազմը երկու հարևան պետությունների միջև ընդունեց տևական բնույթ, ընդ որում, Իրանը հանդես էր գալիս որպես պաշտպանվող կողմ, իսկ Թուրքիան՝ հարձակվող։

1548 թ. սուլթան Սուլեյման I Ղանունիի բանակը նոր հարձակում գործեց Սեֆեյան Իրանի վրա։ Պատերազմը, որ ընթանում էր փոփոխակի հաջողությամբ, ավարտվեց 1555 թ. Ամասիայում կնքված հաշտությամբ, որով Արաբական Իրաքը Բաղդադի հետ անցնում էին Թուրքիային, իսկ Ադրբեջանը՝ Թավրիզ քաղաքով մնում էր Իրանի տիրապետության տակ։ Բացի այդ, Թուրքիային էին անցնում Վրաստանի և Հայաստանի արևմտյան շրջանները, իսկ Իրանին՝ արևելյան շրջանները։

1578 թ. Թուրքիան վերսկսեց պատերազմը Իրանի հետ, որը շարունակվեց մինչև 1590 թ.։ Նույն թվականին Սեֆեյան պետությունը Ստամբուլում ստիպված էր կնքել իր համար չափազանց ծանր պայմանագիր, որով ողջ Արևելյան Վրաստանը, Արևելյան Հայաստանը, Լուրիստանի մի մասը և Ադրբեջանը, բացառությամբ Արդեբիլի ու Թալիշի շրջանների, անցնում էին Թուրքիային[2]։

Օգտվելով Օսմանյան կայսրության ներքին քաղաքական ծանր կացությունից, Աբբաս I-ը 1603 թ. սեպտեմբերին խախտեց 1590 թ. հաշտությունը և ռազմական գործողություններ սկսեց Թուրքիայի դեմ[3]։ 1603—1612 և 1616—1618 թթ. պատերազմների ընթացքում Իրանը առաջին անգամ հանդես էր գալիս հարձակվողի, իսկ Թուրքիան պաշտպանվողի դերում։ Սեֆեյան պետությանը հաջողվեց ամբողջապես վերադարձնել 1590 թ. պայմանագրով կորցրած բոլոր հողերը։

XVII դ. թուրք-իրանական պատերազմների երկար շարանը միաժամանակ դադարեց 1639 թ. Զոհաբում կնքված հաշտության պայմանագրով[4]։ Այս պայմանագիրն ըստ էության միակողմանի ակտ էր, որը թելադրված էր շահ Սեֆիին հաղթանակած սուլթան

---

[2] اسکندرِ بیك ترکمان (منشی)، تاریخ عالم آرای عباسی، بعی و اهتمام میرزا محمود خونساری، تهران، ۱۳۱۳، ص ۲۳۱

[3] Նույն տեղում, էջ 441։

[4] St'u J. Hammer, Geschichte des Osmanischen Reiches, Bd. III. Pesth, 1834, s. 187.

Մուրադ IV-ի կողմից։ Սակայն այն միջազգային-իրավական տեսակետից թուրք-իրանական հարաբերությունների պատմության մեջ նոր էտապի սկիզբ դրեց։ Պայմանագիրն առաջին անգամ գրավոր փաստաթղթով որոշում էր երկու պետությունների փաստական սահմանագիծը Արարատից մինչև Պարսից ծոց՝ անորոշ թողնելով մի շարք ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեցող տերիտորիաների պատկանելության հարցը։ Երկու երկրների սահմանները լիակատար պարզությամբ չնշվելու հետևանքով ծնունդ առավ, այսպես կոչված, «վիճելի գոտու» պրոբլեմը, որը և պատճառ հանդիսացավ հետագա հարյուրամյակների ընթացքում համարյա անընդհատ սահմանային վեճերի և արյունահեղ ռազմական բախումների։

XVIII դ. սկզբին Օսմանյան կայսրությունը մեծ ձգտում էր դրսևորում հատկապես Սեֆեյան պետության անդրկովկասյան «ժառանգությունը» գավթելու ուղղությամբ։ Թեև 1723 թ. ռուս-իրանական պայմանագիրը խափանեց այդ ծրագրի իրականացումը, այնուամենայնիվ, Թուրքիային հաջողվեց իր տիրապետությունը հաստատել Անդրկովկասի մի մասի վրա, ինչպես նաև գրավել Իրանական Ադրբեջանը և Հյուսիս-արևմտյան Իրանը։ Աֆղանական տիրակալ Աշրաֆի տիրապետության շրջանում Իրանը Օսմանյան կայսրությունից կրեց նորանոր պարտություններ։ 1727 թ. Աշրաֆը իրեն ճանաչեց Թուրքիայի վասալ և նրան զիջեց ոչ միայն մինչ այդ արդեն գավթված տերիտորիաները, այլև Խուզստանը և մի շարք խոշոր քաղաքներ։ Բավական է ասել, որ Թուրքիայի տիրապետությանն անցավ նախկին Սեֆեյան Իրանի տերիտորիայի մոտ 2/5-ը[5]։

1730 թ. վռնդելով աֆղանական գավթիչներին Իրանից, զորավար Թահմասպ Կուլի-խանը (հետագայում Նադիր շահ) անմիջապես պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ։ 1730 թ. գրավեց Համադանը, Քերմանշահը և Իրանական Ադրբեջանը։ 1732—1733 թթ. Նադիրը հաջողությամբ շարունակում էր պատերազմը։ Միաժամանակ դադարեցնելով ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ, նա 1743 թ. սկսեց նոր պատերազմ, որն ավարտվեց 1746 թ.

---

[5] «История стран зарубежной Азии в средние века», М., 1970, стр. 585—586.

խաղաղության դաշնագրի կնքումով։ Այն անփոփոխ էր թողնում Թուրքիայի և Իրանի սահմանները։

XVI—XVIII դդ. թուրք-իրանական պատերազմները, որոնք արտաքուստ շղարշված էին մահմեդական կրոնի երկու հիմնական աղանդների՝ շիիզմի (Իրան) և սուննիզմի (Թուրքիա) միջև պայքարի քողով, իրականում ունեին խոր տնտեսական և քաղաքական պատճառներ։ Պայքարը գնում էր տնտեսական ու ռազմական խոշոր նշանակություն ունեցող այն շրջանների համար, որոնք ընկած էին Կովկասյան լեռնաշղթայից մինչև Պարսից ծոց։ Օսմանյան կայսրությունը մասնավորապես ձգտում էր գավթել Իրանական Ադրբեջանն ու Քրդստանը, Մերձկասպյան շրջանը, Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը, Իրանի տիրապետության տակ գտնվող Պարսից ծոցի առափնյա շրջանները և արաբական հողերը։ Սուլթանները երազում էին նաև ձեռք բերել Վոլգա-Կասպյան առևտրական մեծ ճանապարհը, որը կարելի էր իրականացնել միայն իրանական պետությանը ծնկի բերելով։

Խոսելով անցյալի թուրք-իրանական պատերազմների բուն պատճառների մասին, թուրք ռազմական պատմաբան, գնդապետ Բերկուքը նշում է, որ այդ պատերազմների նպատակն էր գավթել Կովկասը, Իրանը և Միջին Ասիան[6]։

Չպետք է անտեսել նաև այն փաստը, որ Արևելքում, հատկապես Իրանում և Եվրոպայում մղվող գավթողական պատերազմների միջոցով Օսմանյան կայսրությունը աշխատում էր դուրս գալ երկիրը համակած սոցիալական, տնտեսական և քաղաքական ճգնաժամից[7]։

XVI—XVIII դդ. թուրք-իրանական պատերազմներում սահմանամերձ շրջանների հսկայական տերիտորիաներ անցնում էին ձեռքից-ձեռք, մի հանգամանք, որը դժվարացնում էր կայուն սահմանների պահպանումը մարտնչող պետությունների միջև և պատճառ էր դառնում համարյա անընդհատ սահմանային վեճերի, մեծ մասշտաբի ռազմական բախումների, իսկ հաճախ նաև պատե-

---

[6] *Miralay Berkuk*, Büyük harpte (334) Şimali Kafkasyadaki faaliyetlerimiz ve 15 firkanin harekâti ve muharebeleri, Istanbul, 1934, s. s. 1—2. („Askeri mecmuanin tarih kismi", s. 35).

[7] «История стран зарубежной Азии в средние века», стр. 592.

բազմների։ Այդ երևույթը հատկապես բնորոշ էր XIX դ. համար, երբ տնտեսական և ռազմա-քաղաքական տեսակետից զգալիորեն թուլացած Օսմանյան կայսրությունը, օգտագործելով «վիճելի տերիտորիաների» պատրվակը, հետևողականորեն փորձում էր ընդլայնել իր սահմանները իրանական տերիտորիաների հաշվին։

XIX դ. առաջին տասնամյակներին Թուրք-իրանական սահմանային վեճը ընդունեց սուր բնույթ, հանդեցնելով երկու պետությունների միջև լուրջ քաղաքական կոնֆլիկտի, որը 1821 թ. վերածվեց բացահայտ պատերազմի։ Թեև 1822 թ. գարնանը Թուփրակկալեի մոտ թուրքական զորքերը կրեցին խոշոր ռազմական պարտություն և Իրանական Ադրբեջանում Աբաս Միրզան ջախջախեց դեպի Թավրիզ շարժվող օսմանյան մեծաթիվ բանակը[8], սակայն Իրանը ի վիճակի չեղավ զարգացնելու իր հաջողությունը, որի հետևանքով 1822 թ. Էրզրումում պատերազմող կողմերի միջև սկսվեցին բանակցություններ խաղաղության դաշինք կնքելու վերաբերյալ։ Բանակցություններն ավարտվեցին 1823 թ. հուլիսի 28-ի խաղաղության արձանագրի կնքումով, որը նախատեսում էր պահպանել երկու պետությունների սահմանների պատերազմից առաջ եղած վիճակը՝ այսինքն տերիտորիալ ստատուս-քվոն[9]։

Էրզրումի դաշնագիրը, սակայն, չլուծեց Օսմանյան կայսրության և Իրանի միջև գոյություն ունեցող սահմանային բազում վիճելի հարցերը։ Այդ պատճառով սահմանի առանձին հատվածներում վերոհիշյալ դաշնագրի ստորագրումից հետո ևս անընդհատ տեղի էին ունենում ռազմական ընդհարումներ[10]։

---

[8] Տե՛ս R. G. Watson, A history of Persia from the beginning nineteent century to the year 1858, London, 1866, p. 199—201.

[9] Էրզրումի դաշնագրի տեքստը տե՛ս «Материалы для географии Азиатской Турции и Персии. Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара-посредника по русско-персидскому разграничению, 1849—1852», СПб., 1825, стр. 638—648.

[10] XIX դ. 40—50-ական թվականների թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Н. А. Халфин, Борьба за Курдистан (Курдский вопрос в международных отношениях XIX в.), М., 1963, стр. 52—67.

1838 թ. Օսմանյան կայսրության կոնֆլիկտը իր ձևական վասալ եգիպտական խեդիվի՝ Մուհամմեդ Ալիի հետ և Թուրքական բանակի ջախջախումը Հյուսիսային Սիրիայում Բ. Դռանը դրեց չափազանց ծանր վիճակում։ Երկրում վերստին ուժեղացան բրդական ֆեոդալների անջատողական ձգտումները, որոնք իրենց բաղաքական նպատակների իրականացման համար դիմում էին իրանական կառավարությանը, խնդրելով նրա օգնությունը։ Այս կապակցությամբ Թուրք-իրանական հարաբերությունները կրկին սրվեցին։ Շահական կառավարությունը որոշեց օգտվել իր համար ստեղծված բարենպաստ քաղաքական իրադրությունից Թուրքիային հարված հասցնելու համար։

1842 թ. իրանական զորքերը երկու անգամ ներխուժեցին Թուրքական տերիտորիաները։ Առաջին անգամ նրանք ավերածության ենթարկեցին Սուլեյմանիե քաղաքը և դրավեցին շիիթների սրբազան քաղաք Քարբալան, իսկ երկրորդ անգամ հարձակվեցին Բայազիդի շրջանի վրա, սակայն այստեղ բախվելով Հաֆիզ փաշայի գլխավորությամբ գործող Թուրքական բանակի հետ, կրեցին լուրջ պարտություն։ Այնուհետև 1843 թ. սկզբին Բաղդադի փաշա Ալի Ռիզան հանկարծակի հարձակում գործեց Քարբալայի վրա և կողմակերպեց քաղաքի շիիթ բնակչության սարսափելի կոտորած[11]։ Ստեղծվեց իրանա-Թուրքական նոր պատերազմի բռնկման սպառնալիք։

Ելնելով Իրանում և Թուրքիայում իրենց ունեցած առևտրական և քաղաքական շահերից, որոնք կարող էին տուժել այդ երկու պետությունների պատերազմի հետևանքով, Անգլիան և Ռուսաստանը 1843 թ. որոշեցին միջամտել վեճին, կողմերին առաջարկելով իրենց միջնորդությունը կոնֆլիկտը լուծելու հարցում։ Բանակցությունների վայր ընտրվեց Էրզրումը։

Թուրք-իրանական խաղաղության Էրզրումի պայմանագիրը ստորագրվեց 1847 թ. մայիսի 31-ին և վերջնականապես վավերացվեց 1848 թ.։ Ըստ այդ դաշնագրի, կողմերը հրաժարվում էին փոխադարձ տերիտորիալ պահանջներից, համաձայնվում էին Զոհաբի վիճելի շրջանը բաժանել միմյանց միջև, ընդ որում, նրա արևմտա-

[11] R. G. Watson, նշվ. աշխ., էջ 340—341։

յան՝ հարթավայրային մասը անցնում էր Թուրքիային, իսկ արևելյան կամ լեռնային շրջանը Քերինդի հովտով՝ Իրանին։ Շահական կառավարությունը պարտավորվում էր շմիջամտել Սուլեյմանիե քաղաքի և նրա շրջանի ներքին գործերին և նրա նկատմամբ չներկայացնել ոչ մի պահանջ։ Օսմանյան կառավարությունը նույնը պարտավորվում էր անել Մոհամմերայի, Շաթթ-էլ-Արաբ գետի ձախափնյա շրջանի և Աբադան կղզու նկատմամբ։ Պայմանավորվող կողմերը պարտավորվում էին անհապաղ նշանակել կոմիսարներ երկու պետությունների միջև որոշակի ու ճշգրիտ սահման անցկացնելու համար։ Էրզրումի պայմանագիրը կարգավորում էր նաև իրանա-թուրքական առևտրական փոխհարաբերությունները, արտոնություններ էր տալիս ուխտավորներին «սրբազան վայրերն» այցելելու համար, ինչպես նաև նախատեսում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սահմանների մոտ վաչկատուն ցեղերի ասպատակությունները կանխելու համար։ Կարգավորվում էր նաև սահմանամերձ շրջանների ցեղերի ստատուսի հարցը։ Այն ցեղերը, որոնց հպատակության հարցը վիճելի էր, կարող էին մեկ անգամ ընդմիշտ որոշել այն և ընտրել իրենց բնակության համար համապատասխան վայր Իրանի կամ Թուրքիայի տերիտորիայում։ Իսկ որոշակի հպատակություն ունեցող ցեղերը պարտավոր էին վերադառնալ իրենց պետության տերիտորիան։ Կողմերը համաձայնվեցին հյուպատոսներ փոխանակել իրենց հպատակների իրավունքները պաշտպանելու համար։

Պայմանագրի գործնական իրականացման և, մանավանդ, Օսմանյան կայսրության ու Իրանի միջև սահմանների որոշման համար դաշնագրի 3-րդ հոդվածի համաձայն չորս պետությունների ներկայացուցիչներից կազմվեց միջազգային խառը հանձնաժողով[12]։

Հանձնաժողովը դեռ չէր սկսել իր գործունեությունը, երբ օսմանյան կառավարությունը կազմակերպեց քաղաքական դավ Իրանի դեմ։ Դերվիշ փաշայի հրամանով Ռաշիդ փաշան Վանից ուղղակի շարժվեց դեպի սահման և օկուպացրեց առաջնակարգ ռազ-

[12] Տե՛ս „Correspondence respecting the demarkation of the frontiers between Turkey and Persia. Presented to both Houses of Parliament", London, 1865, p. 2—4, ինչպես նաև՝ „Материалы для географии Азиатской Турции и Персии", стр. 631—638.

մական նշանակություն ունեցող Ղոթուրի շրջանը[13], որովհետև Իրանի հետ պատերազմի դեպքում Վանում կենտրոնացած թուրքական զորքերը նրա վրայով ուղղակի կարող էին ներխուժել Իրանի սիրտը։ Պատահական չէ, որ Ղոթուրի գրավումից հետո Իրանի կառավարող շրջաններում ուժեղանում էր այն մտավախությունը, թե թուրքական բանակը կարող է շարժվել դեպի Ուրմիա և Թավրիզ[14]։

Ղոթուրի գրավումը նշանակում էր Էրզրումի դաշնագրի խախտում, որովհետև այդ շրջանի ստատուս-քվոյի պահպանումը կողմերի համար պարտադիր պայման էր։ Այդ պատճառով շահական կառավարությունը վճռական բողոք հայտնեց Օսմանյան կայսրության կոպիտ և ոչնչով չարդարացվող գործողությունների դեմ։ Իրանական կառավարության բողոքները, սակայն, ոչ մի արդյունք չտվեցին, մանավանդ որ, սահմանային հանձնաժողովի անգլիական ներկայացուցիչը պաշտպանեց Դերվիշ փաշային։ Մյուս կողմից Իրանում Բաբիդական ապստամբությունների (1848—1852 թթ.) հետևանքով ստեղծված ներքին անկայուն վիճակը և քաղաքական սուր ճգնաժամը հնարավորություն չտվեց շահական կառավարությանը դիմելու առավել կտրուկ քայլերի։

Խրախուսվելով դրանից, Դերվիշ փաշան կազմեց մի քարտեզ, որտեղ թուրք-իրանական սահմանը գծվում էր 1639 թ. Զոհաբի դաշնագրի ծավալով, այլ կերպ ասած, նախատեսվում էր իրանական մի շարք տերիտորիաներ միացնել Թուրքիային։ Իր հաշվետվության մեջ մանրամասնորեն նկարագրելով «հին» սահմանը, Դերվիշ փաշան եզրակացնում էր, որ անհրաժեշտ է այն վերականգնել[15]։

1849 թ. թուրք-իրանական սահմանազատման միջազգային հանձնաժողովի անդամները Ստամբուլից մեկնեցին Բաղդադ, որն ընտրված էր որպես բոլոր սահմանային կոմիսարների հավաքա-

---

13 فریدون آدمیت، امیرکبیر و ایران، طهران، ۱۹۵۶، ص ۳۹۱ — ۳۹۰

14 Նույն տեղում։

15 Տե՛ս «Турецко-персидская пограничная спорная полоса». Сборник Главного управления Генерального штаба, вып. 58, март 1914 г., СПб., стр. 78.

տեղի։ Այնուհետև նրանք ուղևորվեցին Մոհամմերա, սահմանների ուսումնասիրությունը սկսելու համար[16]։

Հանձնաժողովի անգլիական և ռուսական ներկայացուցիչների կազմած փաստաթղթերից պարզորոշ երևում է, որ նրանք իրենց առջև խնդիր էին դրել մանրամասն ուսումնասիրել Իրանի և Թուրքիայի խորը ընկած շրջանները, այնտեղ իրենց պետությունների առևտրա-բաղաքական էքսպանսիան ծավալելու նպատակով։ Ընդ որում, հանձնաժողովի աշխատանքներին ուշի-ուշով հետևող, Սաամբուլում բրիտանական դեսպան լորդ Ստրեդֆորդ-Կաննինգը խորհուրդ էր տալիս Վիլյամսին հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություններ ծագելու դեպքում միավորվել Ռուսաստանի ներկայացուցչի հետ ընդդեմ «մահմեդական կոմիսարների»[17]։ 1853 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը հույս ներշնչեց իրանական կառավարող շրջաններին, թե Ռուսաստանի օգնությամբ հնարավոր կլինի լուծել սահմանային վեճը Թուրքիայի հետ և նաև ստանալ թուրքերի կողմից գավթված մի շարք տերիտորիաներ։ Այդ նպատակով 1853 թ. հուլիսի 24-ին սադրազամ Ազա Նուրի խանը և օգոստոսի 5-ին իրանական շահը դիմեցին Թեհրանում ռուսական դեսպանորդ Դոլգորուկիին, առաջարկելով Թուրքիայի դեմ կնքել ռուս-իրանական ռազմական դաշինք[18]։ Սակայն ցարական կառավարությունը չհամաձայնվեց այդ առաջարկի հետ, գրանելով, որ ռազմա-տնտեսական տեսակետից թույլ իրանական պետության հետ դաշինքը ոչինչ չի տա Ռուսաստանին։

Ղրիմի պատերազմի տարիներին հանդես գալով Թուրքիայի դաշնակցի դերում, Անգլիան հակայական ճիգեր էր գործադրում հակաթուրքական ռուս-իրանական պայմանագրի կնքումը խափա-

---

[16] Այս հանձնաժողովի գործունեության մասին մանրամասն տե՛ս «Материалы для географии Азиатской Турции». Նույն գրքում տեղ են գտել նաև սահմանային հարցի վերաբերյալ շափազանց հարուստ և արժեքավոր տեղեկություններ, որոնք հավաքել է գրքի հրատարակիչ, հայազգի Մ. Ա. Դամադովը (Մ. Ա. Ղամազյան)։

[17] *Н. А. Халфин*, նշվ. աշխ., էջ 59։

[18] «Акты Кавказской археографической комиссии», т. X, Тифлис, 1885, стр. 745.

նելու համար[19]։ Միաժամանակ նա աշխատում էր Թուրքիայի օգնությամբ իրանական քրդերին ոտքի հանել Ռուսաստանի դեմ՝ իր մրցակցի դիրքերը Միջին Արևելքում խարխլելու նպատակով։ Թավրիզի անգլիական հյուպատոսությունը ակտիվ աջակցություն էր ցույց տալիս Իրանական Քրդստանում և Անդրկովկասում գործող թուրքական գործակալությանը, որն աշխատում էր «սրբազան պատերազմ» հրահրել Ռուսաստանի դեմ։

1856—1857 թթ. անգլո-իրանական պատերազմի ժամանակ (այսպես կոչված «Հերաթի երկրորդ կոնֆլիկտը») Անգլիան ամեն կերպ աշխատում էր Իրանի ուշադրությունը իր արևելյան սահմաններից շեղել Օսմանյան կայսրության կողմը, որպեսզի այս երկու պետությունների միջև հակասությունները խորացնելու միջոցով գործողությունների ազատություն ստանա Հերաթի հարցում։ Առհասարակ XIX դ. երկրորդ կեսին անգլիական դիվանագիտությունը ճարպկորեն օգտագործում էր իրանա-թուրքական հակասությունները այդ պետությունների ներքին գործերին միջամտելու և Իրանում ու Թուրքիայում իր տնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու համար[20]։

Ինչպես հայտնի է XIX դ. 50—70-ական թվականներին բրիտանական կառավարության մերձավորարևելյան քաղաքականության հիմքում ընկած էր Օսմանյան կայսրության գոյության պահպանումը իբրև պատվար Ռուսաստանի առաջխաղացման դեմ։ Այդ առթիվ լորդ Դերբիին ուղղված 1877 թ. հունիսի 13-ի հեռագրում անգլիական գաղութային քաղաքականության ականավոր գործիչ սըր Լևարդը գրում էր. «Թուրքիան Արևելքում Ռուսաստանի փառասիրական ձգտումների դեմ մի պատնեշ է, իսկ սուլթանն իբրև իսլամական կրոնի իսկական գլուխը՝ շատ օգտակար և պետական դաշնակից է Անգլիային, որն ունի միլիոնավոր մահմեդական հպատակներ»[21]։

---

19 *П. П. Бушев*, Герат и англо-иранская война 1856—1857 гг., М., 1959, стр. 50.

20 محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی یا سپهسالار اعظم، طهران، ۱۹۵۷، ص ۲۹

21 *Adolphe d'Avril*, Negociations au traite de Berlin, Paris, 1886, p. 257.

Առաջնորդվելով այս քաղաքականությամբ, անգլիական կառավարող շրջանները որդեգրել էին «ընդդեմ Իրանի, հօգուտ օսմանյան Թուրքիայի» տակտիկան[22]։ Բրիտանական քաղաքականությունը հատկապես ցայտուն կերպով դրսևորվում էր թուրք-իրանական սահմանային վեճերի ընթացքում, որոնք անգլիական ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ սովորաբար ավարտվում էին ի վնաս Իրանի։ Խոստովանելով այդ մասին Հենրի Ռաուլինսոնը գրում էր, որ այն ժամանակից, երբ անգլիական ներկայացուցիչները ընտրվեցին իրանա-թուրքական սահմանային վեճի միջնորդ-հաշտարար, նրանք հանդես էին գալիս ի պաշտպանություն Թուրքիայի[23]։

Այսպիսով թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների, մասնավորապես սահմանային վեճի հարցը անգլիական կառավարության համար ստանում էր առաջնակարգ քաղաքական նշանակություն։ Պատահական չէ, որ Ֆորին Օֆիսը մեծագույն ուշադրությամբ հետևում էր այդ վեճին, ամեն կերպ աշխատելով այն ծառայեցնել իր քաղաքականությանը։ Դրա ակնառու վկայությունն է նաև այն, որ լորդ Պալմերստոնի հանձնարարությամբ թուրք-իրանական սահմանային հանձնաժողովի անգլիական ներկայացուցիչներից մեկը՝ Լ. Լոֆտուսը այդ հարցի վերաբերյալ գրեց երկհատոր մի ուսումնասիրություն, որը 1852 և 1854 թթ. լույս տեսավ Լոնդոնում[24]։

Ղրիմի պատերազմից հետո իրանա-թուրքական սահմանազատիչ հանձնաժողովը վերսկսեց իր ընդհատված գործունեությունը։ Նա հավաքեց անհրաժեշտ քանակությամբ նյութեր սահմանամերձ շրջանների քարտեզ կազմելու համար։ Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչների ջանքերով Պետերբուրգում և Լոնդոնում կազմվեց սահմանային գոտու նախնական մի քարտեզ, որն ընդգրկում էր քսանից մինչև քառասուն մղոն լայնությամբ վիճելի տարածություն։ Հենց այդ քարտեզի սահմաններում շահագրգռված պետությունները, այսինքն Թուրքիան և Իրանը, պետք է ճշտեին

---

[22] فريدون ادميت նշվ. աշխ., էջ 35—37։

[23] *George Rawlinson*, A memoir of major General Sir Henry Greswiche Rawlinson, p. 124.

[24] *Տե՛ս* **Լեռն Մեսրոպ**, *Քրդստան և քրդերը (ակնարկ), Փարիզ, 1957, էջ 390։*

սահմանային գիծը[25]։ Հիշյալ բարեկեղը սաացավ «իդեալային» անվանումը։

Սակայն սահմանային գիծը ճշտելու հարցում, առավելապես օսմանյան կառավարության մեղքով, կողմերը ոչ մի կերպ չէին կարողանում համաձայնության գալ։ Թուրքերը հավակնություն ունեին մի շարք շրջանների նկատմամբ, որոնք Իրանը պատմականորեն համարում էր իր սեփականությունը։ Ի վերջո, համաձայնության եկան վիճելի շրջանները նոր միջազգային սահմանազատիչ հանձնաժողով ուղարկելու՝ Անգլիայի, Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի ներկայացուցիչներից։

Այս անգամ ևս շահական կառավարության և Բ. Դոան միջև առանձնակի սուր վեճի առարկա էր Ղոթուրի շրջանը։ Թեև 1848 թ. այն ապօրինաբար զավթելուց հետո Թուրքիան հետագայում ստիպված էր այնտեղից դուրս բերել իր զորքերը, սակայն, այնուամենայնիվ, նա ոչ մի կերպ չէր ցանկանում հաշտվել այն մտքի հետ, որ Ղոթուրի շրջանը գտնվի Իրանի կազմում։

1862 թ. թուրքական զորքերը կրկին գավթեցին Ղոթուրը։ Ի դեպ պետք է նշել, որ այդ գործում Օսմանյան կայսրությանը մեծապես օգնեց Անգլիան[26]։ Միայն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում պարտություն կրելուց հետո Բեռլինի վեհաժողովի 60-րդ հոդվածի համաձայն, 1878 թ. հուլիսի 1-ին Թուրքիան ստիպված էր կրկին Ղոթուրը վերադարձնել Իրանին[27]։

Սահմանի անորոշ վիճակը շարունակում էր տեղի տալ անընդհատ զինված բախումների և այդ պատճառով Ռուսաստանի և Անգլիայի պահանջով 1869 թ. Օսմանյան կայսրության և Իրանի միջև կնքվեց հատուկ կոնվենցիա մինչև վերջնական սահմանազատումը

---

25 *C. U. Aitchison*, A collection of treaties, engagements and sanads relating to India and neighboring Countries, Calcutta, 1892, V. X, p. 23—24.

26 *F. Millingen*, La Turque sous la règne d'Abdul Aziz (1862—1867), Paris, 1868, p. 13.

27 Ի դեպ, Բեռլինի կոնգրեսում իրանական կառավարության ներկայացուցիչն էր հայազգի Մալքոմ խանը։ Վերջինս փայլուն կատարեց իր վրա դրված պարտականությունները և հասավ այն բանին, որ թուրքերը հեռանան Ղոթուրից։ Այդ ծառայության համար շահական կառավարությունը նրան տվեց «Ջանարե Աշրաֆ» բարձր տիտղոսը։ Տե՛ս

محمد محیط طباطبائی، مجموعهٔ آثار میرزا ملکخان، تهران، ۱۹۴۸، ص ۶.

սահմաններում խստագույն սատարություն պահպանելու վերաբերյալ[28]։

1874 թ. Ստամբուլում Թուրք-իրանական սահմանային հանձնաժողովը գումարեց նոր նիստ։ Սակայն հենց սկզբից կողմերը անհաշտ դիրք գրավեցին միմյանց նկատմամբ սահմանային հարցում փոխադարձ զիջումներ անելու ուղղությամբ։ Իրանի ներկայացուցիչը պահանջում էր վերականգնել սահմանային այն գիծը, որն ընդունված էր 1847 թ. պայմանագրով, իսկ օսմանյան կողմը համառորեն մերժում էր այն, վկայակոչելով 1639 և 1823 թթ. համաձայնագրերը։ Վրա հասած 1877—1878 թթ. ռուս-Թուրքական պատերազմի հետևանքով սահմանազատման հարցը այդպես էլ մնաց անորոշ վիճակում։

Թուրք-իրանական սահմանազատիչ հանձնաժողովների գործունեության մանրակնին ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ սահմանագծերի որոշման բոլոր փորձերը ավարտվում էին անհաջողությամբ ոչ միայն Թուրքիայի և Իրանի միջև գոյություն ունեցող սուր հակասությունների և քաղաքական հակամարտության հետևանքով, այլև Ռուսաստանի և Անգլիայի միջամտության պատճառով։ Այս պետությունները, որոնք Մերձավոր և Միջին Արևելքում ունեին կարևորագույն տնտեսական և քաղաքական շահեր, հանդես գալով Թուրքիայի և Իրանի միջև իբրև հաշտարար, իրականում հետապնդում էին սեփական նպատակներ։ Նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր սահմանագիծը այնպես անցկացնել, որ առավելագույն շահ ձեռք բերեր։ Մյուս կողմից թեև նրանք խոսքով շահագրգռված էին Թուրք-իրանական սահմանազատման հարցում, բայց գործնականում ոչինչ չէին անում վերացնելու համար երկու հարևան պետությունների միջև գոյություն ունեցող սահմանային վեճերը։ «Դրանով,—ինչպես նշում է իրանական պատմաբան Ֆերիդուն Ադամյաթը,—նրանք ցանկանում էին ապագայում ևս, հարմար առիթի դեպքում, օգտվել այդ վեճերից և կողմերին կրկին սրել միմյանց դեմ՝ իրենց նպատակներին հասնելու համար»[29]։

---

[28] «Сборник договоров России с другими государствами (1856—1917)», М., 1952, стр. 205.

[29] فریدون آدمیت، امیرکبیر و ایران، ص ۳۵

ՀԱՅԿ ԳՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԿԳԴԵՄԻ

A 53985

Թուրք-իրանական հարաբերությունների սրման հաջորդ էտապը 1880 թ. շեյխ Օբեյդուլլայի ապստամբության շրջանն է։ Անցյալ դարի 70-ական թվականների վերջին Օսմանյան կայսրությունում բռնկվեցին մի շարք հակակառավարական քրդական ապստամբություններ, որոնք, սակայն, դաժանությամբ ճնշվեցին[30]։ Այդ հանգամանքը քրդերին բերեց այն համոզման, որ Օսմանյան կայսրության շրջանակներում անկախություն ձեռք բերելու ձգտումը անիրականանալի երազանք է։ Այդ պատճառով նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի Իրան, նպատակ ունենալով Իրանի քրդաբնակ շրջանների տերիտորիայում ստեղծել անկախ քրդական պետություն։ Ընդ որում, նրանք իրենց այդ նպատակը համարում էին միանգամայն ռեալ, նկատի ունենալով, որ համեմատաբար թույլ կենտրոնացված Իրանը ի վիճակի չի լինի կասեցնելու հիշյալ ծրագրի իրականացումը։ Քրդական մի շարք ազդեցիկ շեյխերի և ցեղային առաջնորդների շրջանում այս գաղափարը որոշ չափով հասունացնելուց հետո, 1880 թ. հուլիսին շեյխ Օբեյդուլլան Շամդինանում գումարեց ողջ Քրդստանի քրդական առաջնորդների համաժողով, որտեղ մանրամասնորեն շարադրեց իր ծրագիրը։ Թուրքական կառավարությունը, որն ուշի-ուշով հետևում էր քրդերի շրջանում ծայր առած խմորումներին, սկսեց գաղտնի աջակցություն ցույց տալ Օբեյդուլլայի ծրագրին, նպատակ ունենալով քրդական ընդվզումն ուղղել բացառապես իր արևելյան հարևանի դեմ, ապահովել իրեն քրդական խոշոր ապստամբություններից և բացի այդ դժվարություններ ստեղծել իր վաղեմի թշնամի Ռուսաստանի համար, որը Հյուսիս-արևմտյան Իրանում ուներ նշանակալի տնտեսական և ռազմա-քաղաքական շահեր[31]։

Թուրքական կառավարող շրջանները ենթադրում էին նաև, որ Իրանից քրդերի գրաված տերիտորիաները հետագայում կանցնեն

---

[30] *П. И. Аверьянов,* Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов, Тифлис, 1900, стр. 223—225.

[31] *М. С. Лазарев,* Курдистан и курдская проблема, М., 1964, стр. 30. *Տե՛ս նաև К. П. Камсаракан,* Вторжение шейха Обейдуллы в Персию в 1880 г. «Сборник географических, топографических и статистических материалов по Азии», вып. XI, СПб., 1884; *Джалиле Джалил,* Восстание курдов 1880 г., М., 1966.

Օսմանյան կայսրությանը։ Օրեյդուլլայի դինված ջոկատների շարժումը դեպի Իրան պետք է զոհունակությամբ ընդունվեր Բ. Դռան կողմից նաև այն պատճառով, որ դրանից Իրանը նշանակալիորեն կթուլանար։

Վերոհիշյալ փաստերը անուրիրայորեն վկայում են, որ Օսմանյան կայսրությունը և Իրանը աշխատում էին օգտագործել սահմանամերձ շրջանների քրդական բնակչությանը միմյանց նկատմամբ իրենց քաղաքական ծրագրերը իրագործելու նպատակով։ Հաճախ իրենց տրամադրության տակ չունենալով բավարար չափով տնտեսական և ռազմա-քաղաքական ուժեր Քրդստանում իրենց դիրքերն ամրապնդելու համար, այդ պետությունները գժտեցնում էին քրդական ցեղերին, կազմակերպում միջֆեոդալական բախումներ և այլն[32]։

Թուրք-իրանական հարաբերությունների սրման հաջորդ էտապը անցյալ դարի 90-ական թվականներն են, երբ սուլթան Աբդուլ Համիդ II-ի նախաձեռնությամբ կազմակերպվում էին «Համիդիե» քրդական գնդեր։ Սուլթանական կառավարության հանձնարարությամբ համիդիեների մեջ ընդգրկված քրդերը սիստեմատիկորեն անցնում էին իրանական Քրդստան՝ քրդական ցեղերի շրջանում պրոթուրքական ագիտացիա մղելու և հակաիրանական գրգռիչ գործունեություն ծավալելու նպատակով։ Նրանք միաժամանակ իրանական տերիտորիայում ասպատակում ու կողոպտում էին սահմանամերձ շրջանների առավելապես քրիստոնյա բնակչություն ունեցող գյուղերը, տեղական քրդերին հորդորում հանդես գալ իրանական իշխանությունների դեմ և այլն։

1895—1896 թթ. Թուրքիայում Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ քաղաքականությունից ահաբեկված մեծ քանակությամբ հայեր տեղափոխվում էին Իրան և Անդրկովկաս ու ապաստան գտնում այնտեղ[33]։ Իրանական կառավարությունը անարգել թույլատրում էր թուրքահպատակ հայերին անցնելու իրանական սահմանը, որը թուրքական և իրանական իշխանությունների միջև սուր վեճերի տե-

---

[32] *Н. А. Халфин*, նշվ. աշխ., էջ 20—21։

[33] *П. И. Аверьянов*, Отчет о поездке по северному Азербайджану полковника Шкинского и капитана Аверьянова в конце 1899 г., Тифлис, 1900, стр. 76—77.

ղիք էր տալիս։ Թուրքերը նույնիսկ սահմանային մի քանի կետերում կենտրոնացրին զորքեր։ Իրանը դրան պատասխանեց նույն քայլով։

Թուրքական իշխանությունները սպառնալով պահանջում էին, որպեսզի իրանական կառավարությունը իր տերիտորիայից վտարի հայերին և հետագայում ևս թույլ չտա նրանց անցնելու Իրան[34]։ Սակայն շահական կառավարությունը հրաժարվեց կատարել այդ պահանջը[35]։ Չկարողանալով սպառնալիքներով ազդել շահական կառավարության վրա, Բ. Դուռը դիմեց փորձված մեթոդի։ Նրա հրահանգով թուրքական զորձակալությունը սկսեց բրդերին բորբոքել հայերի դեմ։ Սահմանամերձ շրջաններում, հատկապես Խոյում, Սալմաստում, Մակուում տեղավորված հայ բնակչության ոչնչացման նպատակով Թուրքիայից հաճախ Իրան էին ուղարկվում նաև համիդիե բրդեր, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում նաև բրդական տարազ հագած թուրքական զինվորները[36]։

Իր կանոնավոր զորքերի և համիդիե գնդերի ներխուժումներն Իրան արդարացնելու նպատակով օսմանյան կառավարությունը պատճառաբանում էր, որ իբր իրանական տերիտորիայում կենտրոնացել են մեծ քանակությամբ հայկական զինված ջոկատներ, որոնք պատրաստվում են անցնելու Թուրքիա։ Այսպես, 1897 թ. Թեհրանի թուրքական դեսպանատունը ազմուկ բարձրացրեց, որ իբր Մակուի խանության Կարա Քիլիսե (Թադևոս Առաքել) գյուղում կենտրոնացել են խոշոր հայկական ջոկատներ։ Սակայն ստուգումից հետո պարզվեց, որ այնտեղ գտնվում են միայն ջարդերից փրկված փախստական վանեցի հայեր[37]։

Ցարական կառավարությունը Ստամբուլում իր դեսպանի միջոցով աշխատում էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա, վերջ տա-

---

[34] *Мак-Коль*, Ответственность Англии перед Арменией, М., 1897, стр. 153.

[35] «Из тегеранского дневника полковника В. А. Косоговского», М., 1960, стр. 148.

[36] ЦГВИА, ф. 446, д. 48, лл. 65—66.

[37] Отчет о поездке в Макинское ханство драгомана ген. консульства в Азербайджане Минорского в октябре 1905 г. «Материалы по изучению Востока». Изд. Мин-ва иностран. дел, вып. I, СПб., 1909, стр. 26.

յու համար Իրանի նկատմամբ նրա վարած պրովոկացիոն քաղաքականության։ Կովկասյան իշխանությունները ահազանգում էին իրենց կառավարությանը, որ Թուրքերի այդօրինակ գործողությունները ոչ միայն վտանգավոր վիճակ են ստեղծում կովկասյան սահմանների ապահովության տեսակետից, այլև բազմաթիվ փաստեր էին բերում այն մասին, որ համիդիե ջոկատները Թուրքիայից Անդրկովկաս անցնող հայերին հետապնդելու պատրվակով հաճախ անցնում են ռուսական սահմանը և ասպատակում ու կողոպուտի ենթարկում ռուսական տիրապետության տակ գտնվող շրջանները։

Իրանական Քրդստանում սուլթանական կառավարության գրգռիչ քաղաքականության համար պատրվակ էր հանդիսանում նաև այն, որ սահմանամերձ շրջանների մի շարք քրդական ցեղեր հրաժարվեցին մտնել համիդիե գնդերի մեջ և Թուրքիայից տեղափոխվեցին Իրան[38]։ Քրդական զանգվածների այս տեղաշարժերի պատճառով հաճախակի տեղի էին ունենում սահմանային կոնֆլիկտներ, որոնք, ըստ էության, միշտ էլ կարող էին վերածվել երկու տերությունների ռազմական բախման։ Նման իրադրություն ստեղծվեց, օրինակ 1893 թ., երբ Հայդերանլի և Հասանանլի աշիրեթները արյունահեղ ընդհարումներ ունեցան միմյանց հետ և Հեյքարիի քրդերի մի մասը տեղափոխվեց Իրան[39]։

Նման դեպքերում Թուրքական իշխանությունները պահանջում էին շահական կառավարությունից անմիջապես եռ վերադարձնել «փախստական» քրդերին, նախապես իմանալով, որ նույնիսկ ցանկության դեպքում անհնարին է բավարարել այդ պահանջը։ Օգտվելով դրանից, նրանք հաճախակի կազմակերպում էին համիդիե գնդերի ներխուժումներ Իրանի տերիտորիան՝ իբր թե իրենց անհնազանդ հպատակներին պատժելու համար, իրանական քրդերի շրջանում ուժեղացնում էին հակակառավարական պրոպագանդան և այլն։ Միաժամանակ Իրանում գործող Թուրքական դիվանագիտական ներկայացուցիչները, հատկապես դեսպան Մյունիֆ փաշան, որը լայն քայքայիչ գործունեություն էր ծավալել երկրի ներսում, ամեն կերպ շափազանցնում էին սահմանում տեղի ունեցող միջա-

[38] АВПР, ф. «Политархив», 1889—1894 гг., д. 1630, лл. 104—105.
[39] *А. Карцев*, Заметки о курдах, Тифлис, 1896, стр. 37.

գնալերը՝ իրանական կառավարության վրա ճնշում գործադրելու նպատակով[40]։

Բնականաբար օսմանյան կառավարության նման բաղաքականությունը չէր կարող չանհանգստացնել Իրանի կառավարող շրջաններին, որովհետև երկրի վրա կախվում էր նրա տերիտորիալ ամբողջականությունը խախտվելու սպառնալիքը։ Այդ պատճառով շահական կառավարությունը երկրի անվտանգությունը պահպանելու խնդրանքով բազմիցս դիմել է Ռուսաստանին, համոզված լինելով, որ նրա շահերը պահանջում են թույլ չտալ օտարերկրյա որևէ պետության, մանավանդ Թուրքիայի ոտնձգությունները տնտեսական և ռազմա-քաղաքական տեսակետից Ռուսաստանի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող շրջաններում։

Այսպես, 1893 թ. Նասր-էդ-Դին շահը հեռագիր ուղարկեց Ալեքսանդր III-ին, խնդրելով Ստամբուլում ռուսական դեսպանության միջոցով ճնշում գործադրել Բ. Դռան վրա։ Նման խնդրանքով շահը ստիպված էր կրկին դիմել 1896 թ., որովհետև տեղեկություններ կային, որ շեյխ Օբեյդուլլայի որդիներից շեյխ Սադիկը պատրաստվում է ներխուժել Իրան և իրանական քրդերի շրջանում մղել հակակառավարական ագիտացիա և այլն։ Թեև Ռուսաստանը Ստամբուլում իր դեսպանի միջոցով կատարեց համապատասխան դիվանագիտական առաջադրություններ, սակայն դրանք մնացին անհետևանք։ Որպես կանոն Թուրքիան ներկայացնում էր հակամեղադրանքներ իրանական կառավարությանը, որ իբր վերջինս ինքն է գրգռում իր քրդերին Թուրքիայի դեմ և անընդհատ կազմակերպում է իրանական քրդերի դիմված արշավանքներ դեպի թուրքական տերիտորիան[41]։

Առհասարակ այն հանգամանքը, որ քրդերի հսկայական մեծամասնությունը ինչպես Թուրքիայում, այնպես էլ Իրանում սունիթ մահմեդականներ էին, Քրդստանում իրանա-թուրքական մրցակցության մեջ վերջինիս տալիս էր մեծ առավելություն[42]։ Թուրքիան հաջողությամբ կարողանում էր Իրանի մահմեդական քրդերին

---

[40] М. С. Лазарев, նշվ. աշխ., էջ 74։

[41] Նույն տեղում, էջ 72—73։

[42] В. Ф. Минорский. Курды. Заметки и впечатления, Пг., 1915, стр. 21.

օգտագործել իր բաղաքական նպատակների համար, առաջին պլան մղելով իր հպատակ քրդերի հետ նրանց դավանակից լինելու հանգամանքը[43]։ Այդ քաղաքականության իրագործումը հեշտանում էր նրանով, որ Իրանում սուննիթ քրդերի մեծամասնությունը տեղաբաշխված էր սահմանամերձ շրջաններում։ Թուրքական ագիտատորները աշխատում էին համոզել իրանական քրդերին, որ Թուրքիայում քրդերը շատ ավելի բարեկեցիկ կյանք ունեն, քան Իրանում։ Որ սուննիթների համար դերադասելի է ապրել սուննիթական կառավարության իշխանության ներքո, քան շիիթական։ Որպես ապացույց բերվում էր այն փաստարկը, որ Թուրքիայում քրդերն ունեն սեփական ռազմական կազմակերպություն՝ համիդիե գնդերը, որոնք օգտվում են արտոնյալ վիճակից, կառավարությունը նրանց շնորհում է զանազան իրավունքներ և այլն[44]։

Այսպես կոչված իրանա-թուրքական «վիճելի գոտին» իր մեջ ընդգրկում էր հետևյալ շրջանները. Խոյի (Մակուի խանության հետ), Ուրմիայի (ներկայումս Ռեզայե) և Սոուջբուլաղի (ներկայումս Մեհաբադ) նահանգները և Սուլդուզի շրջանը։ Նշված շրջանների բնակչությունը բաղկացած էր ազգությունների երեք հիմնական խմբերից. 1) քրդեր, 2) ադրբեջանցիներ (այդ թվում նաև կարապապախներ) և 3) ասորիներ։ Զգալի տոկոս էին կազմում նաև հայերը, հատկապես Սալմաստում և Ուրմիայում[45]։ Տարբեր վայրերում բնակվում էին նաև ոչ մեծ թիվ կազմող ազգային այլ փոքրամասնություններ (օրինակ հրեաներ) և եվրոպացիներ։ Վիճելի գոտու բնակչության մոտավոր թիվը կազմում էր մեկ միլիոնից ավելի[46]։

Քրդերին պայմանականորեն կարելի էր բաժանել հետևյալ հիմնական խմբերի. հյուսիսային կամ Մակու—Ուրմիայի շրջանի համեմատաբար ոչ մեծ խումբ և հարավային, կամ Քրդստան նահան-

---

[43] «Отчет о поездке в Макинское ханство», стр. 18.

[44] ЦГВИА, ГУГШ, ф. 2000, оп. 1, д. 1009, л. 3 об.

[45] *П. Я. Максимович-Васильковский*, Поездка в Персию. «Известия Кавказского отделения императорского русского географического общества», 1904, т. XVII, № 4, стр. 233—234.

[46] «Население Западного Азербайджана». «Сборник Главного управления Генерального штаба», вып. 56, январь, СПб., 1914, стр. 66.

դապետության[47] քրդեր։ Մակու—Ուրմիայի շրջանի քրդերը առանձին ոչ մեծ խմբերով ցրված էին Արարատից մինչև Ուշնու քաղաքի գուգահեռականը ընկած շրջանը, որտեղից հարավ արդեն սկսվում էին քրդական հոծ բնակչություն ունեցող տերիտորիաները (Սենան, Քերմանշահ)։

Հյուսիսում, Մակուի խանությունում բնակվում էին, այսպես կոչված, Մակուի քրդերը, որոնք պատկանում էին երեք հիմնական ցեղախմբերի՝ ջելալի, միլյան և հայդերանլու (հայդերանլու ցեղային միավորման մեջ մտնում էին զիլյան, սիփրի, ջիբրան, զիրբան, ադաման և այլ ճյուղեր)։ Ավաջիկ խանությունը միակ վայրն էր, որի բնակչությունը բացառապես կազմում էին ադրբեջանցիները (այրումլի ցեղը)։ Սահմանի մոտ նրանք ընդհատում էին քրդերի համատարած շերտը[48]։ Սոմայում, որը Մակուի խանությունից բաժանվում էր նույնպես ադրբեջանական բնակչությամբ, ինչպես նաև Բարադոսթում, բնակվում էին շեքքաք ցեղի քրդերը։ Ավելի հարավ, Թերգևերում, Դեշտում և Ուրմիայում տարածված էին բեկզադե, իսկ Մերգևերում՝ խարբի ցեղի քրդերը։

Հարավային շրջանի քուրդ բնակչությունը բաժանվում էր հետևյալ ցեղախմբերի՝ զերզա, բիլբաս և մուքրի։ Իրենց հերթին բիլբասները բաժանվում էին մամաշ, փիրան և մանգուր ճյուղերի, իսկ մուքրիները դեհբորքի, գավրիլ, բեկզադե, մելքարի ճյուղերի[49]։

Ասորիների բնակության հիմնական վայրերը Ուրմիայի, Սալմաստի, Սուլդուզի դաշտավայրերը և Մերգևերի, Թերգևերի և Բարադոսթի հարթություններն էին[50]։

Հասկանալի է, որ այսպիսի բազմալեզու, բազմացեղ ու բազմակրոն բնակչություն ունեցող շրջաններում պետք է լիներ ինչ-

---

[47] Քրդստան նահանգապետության կենտրոնն էր Սուլդուզը։ Այդ նահանգապետությունը բնդունված էր անվանել նաև Մուքրի Քրդստան։

[48] *В. Ф. Минорский*, Курды, стр. 4.

[49] «Население Западного Азербайджана», стр. 67, 71—72.

[50] *Տե՛ս* „Bulletin of the American Geographical Society", 1963. № 1. «Известия Кавказского отдела Императорского географического общества», 1903, т. XVI, № 4, стр. 53. *Իրանում և Թուրքիայում ասորական բնակչության տեղաբաշխման մասին մանրամասն տե՛ս J. Joseph.* The Nestorians and their muslem neighbors. Princeton, New Jersey, 1961.

պես ազգային ու կրոնական, այնպես էլ դասակարգային խորը հակամարտություններ, որոնք ուժեղանում էին շահական ասոցիացիաների ու տեղական խանների, բեգերի ու աղալարների հոծ բազմության կողմից սոցիալական բիրտ ու վայրենի ճնշման հետևանքով։

Ինչպես Իրանի բոլոր բնակչություն ունեցող մյուս շրջաններում, այնպես էլ սահմանամերձ գոտում տիրապետում էին ֆեոդալա-հարատարական, կիսանահապետական հարաբերությունները։ Որոշ վայրերում տակա էին նաև տոհմա-ցեղային կացութաձևի մնացուկները, որոնք ամեն կերպ օգտագործում էր ցեղային ավագանին իր տիրապետությունը պահպանելու և ամրապնդելու համար։ Սահմանային գոտու բնակչությունը նոմինալ ձևով էր ենթարկվում կենտրոնական շահական կառավարությանը։ Քրդական ցեղերը, որոնք գերազանցապես վարում էին բոլորական և կիսաբոլորական կյանք, համարյա հաշվի չէին նստում իշխանության հետ։ Նրանք գանձարանին հարկեր էին մուծում կամ ընչին քանակությամբ, կամ բնավ չէին մուծում։ Շահական նահանգապետների և ասպիճանավորների, «մամուրների» մուտքը բոլոր ցեղերի բնակության վայրերը չափազանց սահմանափակ էր։ Անասնապահության հետ միաժամանակ սահմանամերձ շրջանների քրդական ցեղերի մի մասը սիստեմատիկորեն զբաղվում էր նաև հարևան նստակյաց շրջանների ասպատակությամբ և կողոպուտով, որը քրդական բեգերի ու աղաների համար հանդիսանում էր հարստացման հավելյալ աղբյուր։ Հատկապես սովորական երևույթ էր արոտավայրերի համար քրդական ցեղերի ղինված բախումները, որոնք հաճախ վերջանում էին ամբողջ ցեղերի ոչնչացումով։ Այս շրջաններում բաղաքական սահմանը տեղական բնակչության համար բնական սահման չէր[51]։ Թուրքիայից Իրան և հակառակը տեղի էին ունենում անընդհատ տեղափոխություններ, որովհետև երբեմն միևնույն աշիրեթների (օրինակ բեկզադե, խարքի, շեքքաքներ, ջաֆեր, ջելալի և այլն) մի հատվածը բնակվում էր Թուրքիայում, մյուսը Իրանում։ Նույնիսկ կային այնպիսի ցեղեր (օրինակ բոլոր խարքի

[51] Էլիզե Ռեկլյու. *Լազիստան, Հայաստան և Քրդստան*. Վաղարշապատ, 1893. էջ 24։

ցեղերը), որոնք ամառը բնակվում էին Իրանում, իսկ ձմռանը անցնում էին Թուրքիա։

Օսմանյան կայսրությունում անգլիական հյուպատոս Թեյլորը անցյալ դարի 80-ական թվականներին գրում էր. «...խառը հպատակություններ և չսահմանված կարգը սահմանում ծնում են անթիվ վիճաբանություններ Պարսկաստանի և Թուրքիայի միջև։ Քրդերը, որոնք ինչպես այս, այնպես էլ մյուս երկրում գտնվում են իրենց տանը, անցնում են սահմանը, երբ ցանկանում են և երբ դա համապատասխանում է իրենց շահերի համար օգտավետ...»[52]։

Երբեմն Թուրքիայից դժգոհ ցեղերը տեղափոխվում էին Իրան և ապա զինված ջոկատներ կազմակերպելով կրկին անցնում էին Թուրքիա՝ ասպատակելու և կողոպտելու։ Նույն կերպ վարվում էին Իրանից դժգոհ ցեղերը, անցնելով Թուրքիա։ Դա հաճախ պատրվակ էր հանդիսանում խոշոր զինված բախումների, որոնց պատճառը մասամբ այն էր, որ մի շարք թուրքահպատակ քուրդ կալվածատերեր Իրանում ունեին հողային տիրույթներ։ Այսպես, Շամդինանի և Թավանի շեյխերը Իրանական Քրդստանում իրենց խոշոր տիրույթները տեղական քուրդ բեկերից պաշտպանելու համար ժամանակ առ ժամանակ իրենց զինված ջոկատներով արշավում էին Իրան, կամ կաշառքի ու զանազան խոստումների միջոցով տեղական քրդերին ստիպի էին հանում իրենց հակառակորդների դեմ[53]։

Հասկանալի է, որ այս բոլորը սահմանամերձ շրջանը պահելու էր մշտական լարվածության մեջ։ Դա բացառիկ հնարավորություններ էր ստեղծում թուրքական իշխանությունների համար Իրանից մի շարք «վիճելի» վայրեր գավթելու ուղղությամբ։ Խոսելով այդ մասին, իրանական պատմաբան Մեհդի Մալեքզադեն նշում է, որ «XVI դարից մինչև օրս, երբ Իրանը դառնում էր թույլ ու անզոր, Օսմանյան կայսրությունը հարձակվում էր նրա վրա, Ադրբեջանից ու սահմանակից այլ տերիտորիաներից գավթում էր ամբողջ շրջան-

---

[52] *Троттер*, Малоазийские курды. «Известия Кавказского отдела Императорского русского географического общества», т. VII, Тифлис, 1882—1883, прил., стр. 13.

[53] «Кавказский военный округ». Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой. За время с 15-го июня по 15 июля 1911 г., № 3, Тифлис, 1911, стр. 18.

ներ և դրանք օկուպացիայի վիճակում էր պահում այնքան ժամանակ, մինչև որ ուժեր հավաքելով Իրանը վերստին նա էր վերցնում այդ հողերը»[54]։

* * *

Սկսած XIX դ. վերջերից Թուրք-իրանական հարաբերությունները ստացան միջազգային-քաղաքական նշանակություն։ Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով։ Ինչպես հայտնի է, անցյալ դարի կեսերից արդեն իմպերիալիզմի զարգացման ուղին թևակոխած եվրոպական պետությունները ուժեղացրին իրենց գաղութային նվաճողականությունը նաև Օսմանյան կայսրությունում և Իրանում։ 90-ական թվականներից հետո տրանս-միջագետքյան և եփրատյան երկաթուղիների նախագծերը զգալիորեն մեծացրին Թուրքիայի ու Իրանի այն շրջանների քաղաքական, տնտեսական ու ստրատեգիական նշանակությունը, որոնց վրայով անցնելու էին իմպերիալիստական աշխարհի ագահ երկաթյա զարկերակները։ Բացի այդ, Միջագետքում և Իրանում հայտնաբերվեց հզոր նավթային շերտ, որը տարածվում էր Մոսուլից հարավ-արևելք ուղղությամբ դեպի Շուստեր և Բանդար-Աբբաս, այսինքն մինչև Պարսից ծոց[55]։ Թուրք-իրանական սահմանը հատող նավթային այդ հսկա ավազանն ուներ 2000 կիլոմետր լայնություն, որից մոտ 1700 կմ ընկած էր իրանական, իսկ 300 կմ՝ թուրքական տերիտորիայում[56]։ Այդ գոտին անմիջապես վերածվեց իմպերիալիստական պետությունների, և հատկապես Անգլիայի ու Գերմանիայի պայքարի սուր օբյեկտի։ Պայքարը նավթի համար ընդունեց սուր և անհաշտ բնույթ։

Այսպիսով, իմպերիալիզմի դարաշրջանում, երբ առաջնահերթ հարց դարձավ աշխարհը վերաբաժանելու խնդիրը, առավել սերտ կապ հաստատվեց իրանական, թուրքական և միջագետքյան «պրոբ-

---

54 دکتر مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، جلد ۲، طهران، ۱۳۳۰، ص ۳۵

55 Տե՛ս Ç. A. Schafer, Die Anglo-Persian oil C°. „Der Neue Orient", 1917, B. I, H. I.

56 Эрнест Шульце, Борьба за персидско-месопотамскую нефть, М., 1924, стр. 54.

լեմների» միջև։ Համաշխարհային-քաղաքական այս շրջադարձը պայմանավորված էր նրանով, որ առավել հզոր իմպերիալիստական պետությունները այլևս չէին կարող իրենց քաղաքականությունը կառուցել տեղայնական նեղ սկզբունքների վրա, այլ նրանց տնտեսական և քաղաքական ծրագրերը պահանջում էին ամենալայն հորիզոններ։

Գաղութային «հին» պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողքին Մերձավոր և Միջին Արևելքում հանդես եկավ մի նոր դիշատիչ՝ իմպերիալիստական Գերմանիան։ Վերջինիս արդյունաբերական բուռն զարգացումը, որը սկսվեց 1871 թ. նրա միավորումից հետո, ուժեղացրեց գերմանական բուրժուազիայի ձգտումը գաղութներ գավթելու և գերմանական ինդուստրիայի համար արտաքին շուկաներ նվաճելու ուղղությամբ[57]։ Իր առևտրական և գաղութային էքսպանսիան Օսմանյան կայսրության նկատմամբ ծավալելու հետ զուգահեռ, Գերմանիան բնականաբար չէր կարող իր հետաքրքրությունների շրջանակից դուրս թողնել նաև Իրանը։ Դեպի Մերձավոր և Միջին Արևելք գերմանական էքսպանսիայի ջատագովներից մեկի՝ Պաուլ Դենի կարծիքով գերմանական զարգացող արդյունաբերության համար Իրանը կարող էր հանդիսանալ հիանալի արտահանման շուկա և հումքի աղբյուր[58]։ Մի այլ աշխատության մեջ նա այն միտքն էր զարգացնում, որ Գերմանիան պետք է ունենա սեփական և ուղիղ ճանապարհ դեպի Հնդկաստան, որն անցնելու է Բալկանյան թերակղզու, Փոքր Ասիայի, Միջագետքի և Իրանի վրայով[59]։

Գերմանիայի առաջին ակտիվ փորձերը Իրան ներթափանցելու ուղղությամբ վերաբերում են անցյալ դարի 70-ական թվականներին։ 1873 թ. Բիսմարկի կառավարությանը հաջողվեց Իրանի հետ կնքել «Բարեկամության, առևտրի և ծովագնացության մասին»

---

[57] *А. С. Силин*, Экспансия Германии на Ближнем Востоке в конце XIX века, М., 1971, стр. 23.

[58] *Paul Dehn*, Deutschland und Persien. „Deutsche Kolonialzeitung," 1885, 2, S. 8—10.

[59] *Paul Dehn*, Deutschland und die Orientbahnen, München, 1883, S. 50—51.

պայմանագիր[60], որը սկիզբ դրեց երկու երկրների միջև անմիջական հարաբերությունների հաստատմանը։ Պայմանագիրը Գերմանիային արտադրում էր դիվանագիտական և առևտրական հարաբերություններում առավելագույն բարենպաստ պայմաններ։ Նա ստանում էր ազատ առևտրի և նավագնացության իրավունք, կապիտուլյացիոն արտոնություններ, ինչպես նաև Թեհրանում, Թավրիզում և Բուշիրում հյուպատոսություններ բաց անելու իրավություն։ Պայմանագրի 18-րդ հոդվածը նախատեսում էր Գերմանիայի միջնորդությունը այն դեպքում, եթե Իրանը վեճի կամ ընդհարման մեջ մտներ որևէ երրորդ պետության հետ[61]։

Մինչև XIX դ. 80—90-ական թվականների կեսերը Իրանի նկատմամբ գերմանական բաղաքականության մեջ առանձին ակտիվություն չի նկատվում։ Այդ ժամանակամիջոցում Գերմանիային գլխավորապես համակել էր «ֆրիկյան տենդը» և Օսմանյան կայսրությունում ամրապնդվելու խնդիրը։ Սակայն, այնուամենայնիվ, գերմանական իմպերիալիզմը Իրանում շարունակում էր տանել հետագա ներթափանցման համար նախապատրաստական մեծ աշխատանք և ոչ առանց հաջողության։ Այսպես, 1895 թ. գերմանահպատակ Ֆելիքս Մորալին, որը հանդիսանում էր Անատոլիական երկաթուղիների սինդիկատի ներկայացուցիչը, հաջողվում է ստանալ Թեհրան—Քերմանշահ խճուղային ճանապարհի կոնցեսիան։ Քիչ անց, նա ձեռք է բերում նաև Թեհրան—Բաղդադ երկաթուղային գծի կառուցման իրավունքը[62]։ Իսկ մինչ այդ, 1888 թ. գերմանական խոշոր ֆինանսական միավորումները (օրինակ, „Berliner Handelsgesselschaft“ և „Württembergische Vereinsbank“) փորձում էին ստանալ մի շարք երկաթուղային կոնցեսիաներ[63]։

1890-ական թվականներից գաղութային դավթումները դառնում են Գերմանիայի արտաքին բաղաքականության գլխավոր

---

[60] *Martin Bradford Garry*, German-Persian diplomatic relations 1873—1912, S. Gravenhage, 1959, p. 21—22.

[61] *Motamen-ol-molk*, Recueil des traités de l'Empire persan avec les pays etranger, Teheran, 1908, p. 1—3.

[62] *Տե՛ս А. Попов*, Страница из истории русской политики в Персии. «Международная жизнь», 1924, № 4—5.

[63] *Martin Bradford Garry*, նշվ. աշխ., էջ 43։

նպատակը։ Այդ ժամանակաշրջանից սկսած գերմանական իմպերիալիզմը սկսեց մշակել և գործնականում իրագործել Արևելքի նկատմամբ ակտիվ քաղաքականություն, որը դարձավ վիլհելմյան Գերմանիայի քաղաքական հավատամքը «օրիենտպոլիտիկ»—անունով։ 1891 թ. ստեղծված պանգերմանական միությունը, որը ֆինանսավորվում էր ծանր արդյունաբերության խոշոր կոնցերնների կողմից, պահանջում էր Մերձավոր և Միջին Արևելքում ձեռնամուխ լինել գաղութային լայն էքսպանսիայի։ Վիլհելմ II-ը հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում Թուրքիայում գերմանական էքսպանսիայի հարցի վրա, գտնելով, որ Օսմանյան կայսրությունում գերմանական իմպերիալիզմի դիրքերի ամրապնդումը ոչ միայն հնարավորություն կտա առաջ շարժվելու դեպի Միջին Արևելք, այլև իր մրցակիցների հետ առաջիկա պատերազմում հնարավոր կլինի Թուրքիային օգտագործել որպես դաշնակից[64]։ Այսպիսով թուրք-իրանական հարաբերությունների հարցը Գերմանիայի համար ստանում էր առաջնակարգ քաղաքական նշանակություն։

Օսմանյան կայսրության և Իրանի նկատմամբ իր լայնահուն ծրագրերի իրագործումը Գերմանիան հատկապես կապում էր Բաղդադի երկաթուղու հետ։ 1899 թ. նոյեմբերի 27-ին Աբդուլ Համիդ II-ը հատուկ իրադեյով (հրամանագիր) հայտարարեց իր՝ Բաղդադի երկաթուղու շինարարության կոնցեսիան գերմանական բանկին հանձնելու վերաբերյալ որոշման մասին։ Գերմանական կառավարող շրջաններում այն գնահատվեց որպես արտաքին քաղաքականության բնագավառում «Գերմանիայի խոշորագույն հաղթանակ»[65]։ Հատկանշական է, որ Մերձավոր Արևելքում տիրապետության համար իր հակառակորդների, և առաջին հերթին Անգլիայի դեմ մղած պայքարում գերմանական դիվանագիտությունը այս շրջանում ձգտում է ակտիվացնել Բ. Դեան գործունեությունը, նրա միջոցով բայքայել Անգլիայի դիրքերը Պարսից ծոցի արևմտյան շրջանում, արաբական երկրներում և այլն, ամրապնդել Աբդուլ Համիդի դիր-

---

[64] «История дипломатии», т. II, М., 1963, стр. 283.

[65] „Die grosse Politik der Europäischen Kabinette," 1871—1914. Sammlung der Diplomatischen Akten des Aus-Wärtigen Amtes, Bd. XIV (2). №3993.

բը որպես խալիֆի և իր գավթողական քաղաքականության շահերի համար լայնորեն օգտագործել մարգարեի կանաչ դրոշը[66]։

Գերմանական իմպերիալիզմի այս նոր քաղաքական գիծը կյանքի կոչելու համար 1898 թ. Վիլհելմ II կայզերը մեկնեց Արևելք։ Ի միջի այլոց, Դամասկոսում արտասանած ճառում նա ի լուր աշխարհի հայտարարեց. «Ներին մեծություն սուլթանը և աշխարհով մեկ ցրված երեք հարյուր միլիոն մահմեդականները, որոնք մեծարում են նրան որպես իրենց խալիֆի, թող վստահ լինեն, որ գերմանական կայսրը առհավետ լինելու է նրանց բարեկամը»[67]։

Արևելքում Վիլհելմ II-ի ճանապարհորդությունից հետո, գերմանական յունկերական մամուլը և պանգերմանական քաղաքականները աշխատում էին ապացուցել, որ Գերմանիայի կենսական շահերը պահանջում են մերձենալ մահմեդական արևելքի հետ[68]։ Իր հերթին սուլթան Աբդուլ Համիդը ձգտում էր գերմանական կառավարության և գերմանական կապիտալի օգնությամբ ամրապնդել իր դիրքերը և հանձինս Գերմանիայի ստեղծել հենարան Օսմանյան կայսրության ենթված ժողովուրդների՝ սլավոնների, հայերի, արաբների և այլն, ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարելու համար[69]։

Խրախուսվելով գերմանական իմպերիալիզմի վերոհիշյալ քաղաքականությունից, Թուրքիան անմիջապես ակտիվացրեց իր քաղաքականությունը արաբական թերակղզում, ուժեղացրեց Միջագետքում տեղավորված բանակային 6-րդ կորպուսի կազմը, ծրագրեր սկսեց մշակել Պարսից ծոցում ռազմա-ծովային նավատորմ ստեղծելու վերաբերյալ և այլն[70]։

XX դարի սկզբին Մերձավոր Արևելքում ձեռք բերած հաջողությունները հնարավորություն տվեցին գերմանական իմպերիալիզմին ավելի նպատակասլաց դարձնել Իրանի նկատմամբ տարվող

---

[66] *Г. Л. Бондаревский*, Английская политика и международные отношения в бассейне Персидского залива, М., 1968, стр. 445—447.

[67] *Бернгард фон Бюлов*. Воспоминания, М.—Л., 1935, стр. 131—132.

[68] Տե՛ս օրինակ *Davis Trietsch*. Deutschland und der islam. Eine Weltpolitische Studie. Orient verlag, Berlin, 1912.

[69] «История дипломатии», т. II, стр. 632.

[70] *Г. Л. Бондаревский*, Английская политика..., стр. 213.

քաղաքականությունը։ Առաջին հերթին գերմանական և հատկապես պանգերմանական մամուլը կատաղի կամպանիա ծավալեց Իրանում Անգլիայի և Ռուսաստանի դիրքերի դեմ։ Մասնավորապես ուժգին կրակի տակ էր առնվում 1900 թ. ռուս-իրանական պայմանագիրը Իրանում երկաթուղային շինարարության արգելքի մասին[71]։ Միաժամանակ Գերմանիան սկսեց Թուրքիային հրահրել, որպեսզի վերջինս վերականգնի իր տիրապետությունը Քուվեյթում և արաբական այն տերիտորիաներում, որոնք անցել էին անգլիական «հովանավորության» տակ[72]։ Գերմանական գործակալությունը աշխատում էր Թուրք-իրանական սահմանային գոտու իրանական ցեղերին՝ բախտիարներին, լուրերին, արաբական Բանի և այլ ցեղերին գրգռել Անգլիայի դեմ[73]։

1902 թ. հունվարին Ռայխստագում կանցլեր Բերնհարդ ֆոն Բյուլովը հայտարարեց, որ այսուհետև Իրանը պետք է ընդգրկվի Գերմանիայի ակտիվ քաղաքականության շրջանակների մեջ[74]։ Բեռլինում ցարական կառավարության դեսպան Օստեն-Սակենը արտաքին գործերի մինիստր Լամզդորֆին գրած նամակում այդ առթիվ հայտնում էր, որ ֆոն Բյուլովը իր ճառում խոսելով Գերմանիայի համար առևտրական շուկաների ավելացման անհրաժեշտության մասին, որպես գերմանական ապրանքների նոր ու ցանկալի շուկայի, ի թիվս այլ երկրների, նշել է նաև Իրանը[75]։

Կանցլերի նման հայտարարությունը չէր կարող աննկատ անցնել։ Պանգերմանական մամուլը ցնծության մեջ էր[76]։ Կառավարող շրջաններին մոտ կանգնած ամսագրերից մեկը՝ «Der Tag»-ը անմիջապես հրապարակեց «Գերմանական համաշխարհային քաղաքականության նպատակները» խորագրով հոդվածը, որի մեջ զարգացվում էր Իրանը գերմանական տնտեսական ազդեցությանը ենթարկելու անհրաժեշտության գաղափարը[77]։ Հասկանալի է, որ Գերմա-

---

71 *Martin Bradford Garry*, նշվ. աշխ., էջ 76—81։

72 Ibid, p. 81—82.

73 Ibid, p. 83.

74 Ibid, p. 84.

75 АВПР, ф. «Канцелярия МИД», 1902 г., д. 14, л. 6.

76 *Martin Bradford Garry*, նշվ. աշխ., էջ 85—86։

77 АВПР, ф. «Канцелярия МИД», 1902 г., д. 14, л. 6.

նիայում այդ ժամանակ դեռ չէր կարող մշակված լինել Իրանի նկատմամբ տնտեսական քաղաքականության կոնկրետ ծրագիր, սակայն կարելի էր, այնուամենայնիվ, կանխատեսել, թե իրանական շուկա Գերմանիայի տնտեսական ներխուժման ինչպիսի հնարավոր ուղիներ կարող են լինել։ Օստեն-Սակենը, օրինակ, իր վերոհիշյալ հաղորդագրության մեջ նշում էր այն գլխավոր ուղիները, որոնցով գերմանական առևտրական քաղաքականությունը ձգտում էր թափանցել Իրան։ Դա Հյուսիս-արևմտյան Իրանն էր, հատկապես՝ Տրապիզոն—Էրզրում—Բայազեդ ուղին և Պարսից ծոցը, որտեղ գերմանացիները ցանկանում էին իրենց ձեռքը վերցնել ծովային առևտրի մի մասը[78]։

Տրապիզոն—Էրզրում—Բայազեդ առևտրական ճանապարհով Իրան ներթափանցելու համար Գերմանիան որոշեց կարգավորել նրա տեխնիկական վիճակը և դրանով իսկ հնարավորություն ստեղծել Իրանի հյուսիսում մրցակցելու ռուսական առևտրի հետ։ Ընդ որում, այդ նպատակի համար Գերմանիան հույս ուներ լայնորեն օգտագործել ոչ միայն թուրքական վաճառականներին, այլև Թավրիզում և Թեհրանում գոյություն ունեցող հոլանդական առևտրական գրասենյակները[79]։

Այս շրջանում Պարսից ծոցը ևս դառնում էր գերմանացիների քաղաքական և տնտեսական ակտիվության կենտրոն։ Այստեղ XIX դարի վերջերից սկսած հայտնվեցին գերմանական խոշոր «Վոնկհաուզ» ֆիրմայի գործակալները, որոնք առևտրի հետ միաժամանակ սկսեցին զբաղվել նաև ռազմական հետախուզությամբ, զենքի մաքսանենգային վաճառքով և այլն[80]։ Այդ ֆիրմայի համբուրգյան վարչությունը կազմակերպեց իր բաժանմունքները Մոհամմերա, Ահվազ և Բանդար-Աբբաս նավահանգիստներում։

Իրանում գերմանական իմպերիալիզմի աճող ակտիվությունը արժանանում էր գաղութային քաղաքականության ջատագովների ջերմ հավանությանը։ Այսպես, 1901 թ. Պաուլ Ռոհրբախը հրապա-

---

[78] Նույն տեղում, էջ 77—78։

[79] Նույն տեղում։

[80] Այս ֆիրմայի գործունեության մասին մանրամասն տե՛ս Eugene Staley, Business and Politics in the Persian Gulf; the story of the Wönckhaus Firm. „Political Science Quarterly", 1933, № 48, p. 367—385.

բակեց մի աշխատություն «Պարսկաստանը և գերմանական շահերը» վերնագրով, որտեղ նկարագրում էր Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմա-ստրատեգիական նշանակությունը Գերմանիայի համար և կոչ էր անում ակտիվ քաղաքականություն մշակել նրա նկատմամբ[81]։

Ինչպես հայտնի է, 1903 թ. մարտի 5-ին կնքվեց գերմանա-թուրքական վերջնական կոնվենցիան Բաղդադի երկաթուղու վերաբերյալ։ Գերմանական կապիտալը իր ձեռքն էր վերցնում Քոնիա—Ադանա—Մոսուլ—Բաղդադ—Բասրա ամբողջ գծի շինարարությունը։ Այդ երկաթուղին ոչ միայն հնարավորություն էր տալու «պողպատյա շղթայով Օսմանյան կայսրությունը կապել Գերմանիային»[82], իրագործել նրա գաղութակալական ծրագրերը Միջագետքի նկատմամբ, այլև թափանցել Իրան։ Պանգերմանական գաղափարախոսները ցնծությամբ հայտարարում էին. «Բաղդադի երկաթուղին մեզ համար ճանապարհ կբացի դեպի Իրան և Աֆղանստան։ Նա կլինի Բրիտանական Հնդկաստանի վրա կախված մի մերկացված սուր»[83]։ Հայտնի պանգերմանական հեղինակ Ալբրեխտ Վիրտը գրում էր, որ Բաղդադի երկաթուղին կփշրի Ասիայում Գերմանիայի առջև ստեղծված բոլոր արգելքները, որոնք կառուցված են Ռուսաստանի և Անգլիայի կողմից։ Այն կնպաստի, որպեսզի գերմանական կուլտուրան տիրապետող լինի ողջ Ասիայում[84]։ Մեկ ուրիշ հեղինակ, Հենրիխ Վամբերին աշխատում էր ցույց տալ Բաղդադի երկաթուղու դերը ասիական երկրների և հատկապես Իրանի գերմանացման համար[85]։

Գերմանական իմպերիալիստները երազում էին կազմակերպել մահմեդական ժողովուրդների միջինարևելյան հզոր մի միություն,

---

81 *Paul Rohrbach*, Persien und die Deutschen Interessen, Berlin, 1901.

82 *H. Grothe*, Die Bagdadbahn und das schwäbische Bauernelement in Transkaukasien und Palestina, Gedanken zur Kolonisation Mesopotamiens, München, 1902, S. 10.

83 *Г. Л. Бондаревский*, Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888—1903), Ташкент, 1955, стр. 46.

84 *Albrecht Wirt*, Die Lage in Indien und Iran, „Preussische Jahrbücher", 1899, № 98, S. 417—437.

85 *H. Vambery*, Die europäische Rivalität in Persien und die deutsche Bagdadbahn. „Deutsche Rundschau", 1900, № 103, S. 206—220.

որը քաղաքականապես և տնտեսապես պետք է կապված լիներ միջինեվրոպական գերմանական բլոկի հետ։ Այս ծրագրի իրագործման առաջին նախապայմանը ևս դիտվում էր Բաղդադի երկաթուղու իրագործումը։

1883 թ. ցարական կառավարության կողմից եվրոպական ապրանքների անդրկովկասյան տրանզիտի փակումը գերմանական ձեռնարկատերերին հույս էր ներշնչում իրենց կողմը գրավել Իրանի ապրանքափոխանակության զգալի մասը։ Այդ նպատակով նախատեսվեց Բաղդադի երկաթուղու, այսպես կոչված, հյուսիսային տարբերակը, որը Անզորան կապելու էր Էրզրումի հետ և այնուհետև Բայազեդի վրայով շարժվելու էր դեպի իրանական սահմանը[86]։

Բաղդադի երկաթուղու շինարարության կապակցությամբ Գերմանիան հատուկ ուշադրություն դարձրեց իրանական այն շուկաների վրա, որոնք տնտեսական սերտ կապերով կապված էին Թուրքիայի հետ։ Դրանք առաջին հերթին Իրանական Ադրբեջանն ու Քրդստանն էին։ Բնական է, որ Թուրքիայում ունենալով կայուն տնտեսական դիրքեր, Գերմանիան ի վիճակի էր այդ շուկաները հեղեղել իր էժան արդյունաբերական ապրանքներով և հաջողությամբ մրցակցել Ռուսաստանի հետ։ Ուշադրավ է, որ մինչև 1906 թ. Իրանի հետ առևտուր անող երկրների մեջ Թուրքիան սովորաբար գրավում էր հինգերորդ կամ վեցերորդ տեղը։ Սակայն, երբ գերմանական կապիտալը սկսեց հատուկ ուշադրություն դարձնել իրանական շուկայի վրա, Թուրքիան Իրանի հետ առևտրում անմիջապես գրավեց երրորդ տեղը, զիջելով միայն Ռուսաստանին և Անգլիային։ Ընդ որում, թուրքական առևտրի հիմնական հոդվածները բաղկացած էին գերմանական, մասամբ նաև ավստրիական ապրանքներից, այլ կերպ ասած, նա կատարում էր լոկ տրանզիտային միջնորդի դեր Գերմանիայի և Իրանի միջև[87]։ Սա անշուշտ վկայում էր այն մասին, որ գերմանական իմպերիալիզմի առևտրա-

---

[86] *Siegmund Schneider*, Die Deutsche Bagdadbahn, Wien und Leipzig, 1900, S. 23—24.

[87] *А. Хащаб*, Экономическое положение современной Персии и ее торговля с прочими странами. «Мир ислама», СПб., 1912, т. I, № 2, стр. 161, 171; «Вестник финансов, промышленности и торговли», 1909, т. IV, стр. 611—612.

տնտեսական ներթափանցման գործում դեպի Իրան կարևոր դեր էր խաղալու օսմանյան Թուրքիան։

1904 թ. Լիսաբոնի միջազգային կոնգրեսի կողմից փոստային ծանրոցների վերաբերյալ ընդունած որոշումը գերմանացիների համար ուղի բացեց դեպի իրանական շուկա նաև Ռուսաստանի վրայով։ Գերմանիան այն երկրներից էր, որը լայնորեն օգտագործեց այդ հնարավորությունը և փոքրածավալ փոստային ծանրոցների միջոցով սկսեց Իրան առաքել մեծ քանակությամբ ապրանքներ։ Եթե 1901—1902 թթ. ընթացքում Իրանի հետ Գերմանիայի առևտրական շրջանառության գումարը կազմում էր 2,6 միլիոն ղրան[88], ապա 1908—1909 թթ. այն աճեց ու հասավ 6,3 միլիոն ղրանի։ Իսկ 1911—1912 թթ. գերմանա-իրանական առևտուրը 1901—1902 թթ. համեմատությամբ ավելացավ ավելի քան 5 անգամ[89]։

Իրանում Գերմանիայի առևտրա-տնտեսական ներթափանցման հետ միաժամանակ տեղի էր ունենում նաև քաղաքական և գաղափարական ներթափանցում։ 1903 թ. սկսած Իրանական Ադրբեջանում և Քրդստանի առավել խոշոր կենտրոններում՝ Սոուջբուլաղում, Սուլեյմանիեում, Սեննեում, Համադանում և այլն գերմանացիները սկսեցին կազմակերպել միսիոներական քարոզչության կենտրոններ, ստեղծել կուլտուր-լուսավորչական և ֆիլանտրոպիկ հիմնարկություններ, ուսումնասիրել տեղական լեզուները, բարքերն ու սովորությունները և այլն[90]։

Գերմանական իմպերիալիզմի արևելյան քաղաքականության ակտիվացումը հանգեցրեց նրան, որ Մերձավոր և Միջին Արևելքում հարված հասցվեց հավասարակշռության հին սիստեմին և իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականության մեջ սկսվեց միանգամայն նոր շրջան։ Սրվեցին հակասությունները Ռուսաստանի և Գերմանիայի, Անգլիայի և Գերմանիայի, Ռուսաստանի և Անգլիայի միջև։ Այս երեք պետություններից յուրաքան-

---

88 Ղրանը պարսկական դրամական միավոր է։

89 *Ж. Я. Кассис*, Экономическое положение современной Персии, Киев, 1915, стр. 144.

90 АВПР, ф. «Персидский стол «Б», 1913, д. 61, л. 64.

չյուրը փորձում էր ամրապնդել իր դիրքերը և միաժամանակ խորացնել հակասությունները մյուս երկու պետությունների միջև։ Գերմանական դիվանագիտությունը իր հաշիվները կառուցում էր հիմնականում երկու մրցակից պետությունների՝ Անգլիայի և Ռուսաստանի հակասությունների վրա, միաժամանակ աշխատելով նրանցից յուրաքանչյուրին հավատացնել, որ ինքը նրա բնական դաշնակիցն ու բարեկամն է։ Օգտագործելով նշված տակտիկան, գերմանական իմպերիալիզմը նաև աշխատում էր ուժեղացնել անգլո-ռուսական փոխադարձ բախումները Մերձավոր և Միջին Արևելքում, որը հնարավորություն կտար նրան հաղթահարել այդ երկու պետությունների դիմադրությունը Բաղդադի երկաթուղու նախագծի իրականացման հարցում։ «Երբ բրիտանացիներն ու ռուսները կսկսեն կրծոտել միմյանց,— գրում էր կայզեր Վիլհելմ II-ը,— այնժամ մենք կկարողանանք Բաղդադի ճանապարհը դնել մեր գրպանը»[91]։

Մերձավոր և Միջին Արևելքում գերմանական իմպերիալիզմի ակտիվացումը մեծագույն անհանգստություն պատճառեց ինչպես անգլիական, այնպես էլ ցարական կառավարող շրջաններին։ Անգլիան առանձնապես մտահոգված էր Գերմանիայի թափանցումով Պարսից ծոցի շրջանը, որովհետև նա ինքն էր ձգտում տիրանալ Միջագետքին և Պարսից ծոցի ու Կարմիր ծովի ավազանում գտնվող երկրներին՝ Քուվեյթին, էլ-Խասային, Եմենին, Ասիրին, Հեջազին և այլն, որոնք համարվում էին Օսմանյան կայսրության տիրապետությունները։

1903 թ. մայիսի 5-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Լենդսդոունը լորդերի պալատում պաշտոնական հայտարարություն արեց այն մասին, որ որևէ պետության փորձը Պարսից ծոցում ռազմական հենակետ ձեռք բերելու ուղղությամբ Անգլիայի համար կդիտվի որպես «կարուս բելլի»։ Այդ հայտարարությունը Հնդկաստանի փոխ-թագավոր լորդ Քերզոնը ամրապնդեց նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբերին՝ բրիտանական ռազմանավով ցուցադրական այցելություն կատարելով Պարսից ծոցի նավահանգիստները[92],

---

[91] „Die Grosse Politik...", Bd. 17, № 5213, S. 375.

[92] *P. Sykes*, A history of Persia. vol. II, London, 1951, p. 379—380.

որը ուղղված էր ինչպես Գերմանիայի, այնպես էլ Ռուսաստանի դեմ։ Միաժամանակ այսպես կոչված «միջինարևելյան» խմբավորման ճնշման տակ, 1903 թ. Բալֆուրի կառավարությունը հրաժարվեց անգլո-գերմանական համաձայնագրից, որը նախատեսում էր ինտերնացիոնալիզացիայի ենթարկել ապագա Բաղդադի մագիստրալը[93]։

Այսպիսով, բրիտանական դիվանագիտությունը գերմանական, ինչպես նաև ռուսական դիվանագիտությանը հակադրեց այն ծրագիրը, որը ժամանակակիցների կողմից ընդհանրացվում է «Պարսից ծոցը բրիտանական լիճ է» խոսքերով։

Այս շրջանում անգլիական դիվանագիտությունը արդեն բաց գիտակցում էր, որ Պարսից ծոցի շրջանում Մեծ Բրիտանիայի գլխավոր հակառակորդը ոչ թե ցարիզմն է, այլ Օսմանյան կայսրությունը և նրա թիկունքում կանգնած գերմանական իմպերիալիզմը, որի «Բաղդադի» քաղաքականությունը ամրապնդում էր սուլթան-խալիֆի դիրքերը Օսմանյան կայսրության արաբական շրջաններում[94]։ Այդ պատճառով Անգլիան սկսեց գաղտնապես քաջալերել Օսմանյան կայսրության այն բոլոր ժողովուրդների ապստամբությունները ու անկախության ձգտումները, որոնք դժկամությամբ էին կրում արյունոտ թուրքական լուծը։ Այդ քաղաքականությունը նպատակ ուներ նաև կանխել Թուրքիայի միջոցով Գերմանիայի կողմից պանիսլամիզմի բարոզչությունը օգտագործելու հնարավորությունը իր միլիոնավոր մահմեդական բնակչություն ունեցող գաղութներում։

Բրիտանական կառավարության այս նկրտումներից հետո գերմանական դիվանագիտությունը վճռականորեն աշխատեց սրել հակասությունները Թուրքիայի և Անգլիայի միջև։ Այդ նպատակով Ռիխտհոֆենը հատուկ գրույց ունեցավ Բեռլինում թուրքական դեսպան Թևֆիկ փաշայի հետ, որին նա աշխատում էր համոզել, որ Քերզոնի ուղևորությունը անխուսափելիորեն կհանգեցնի անգլիական դավերի ուժեղացմանը Պարսից ծոցում և Թուրքիայի վիճակի բարդացմանը[95]։

---

[93] *Г. Л. Бондаревский*, Багдадская дорога..., стр. 262—269.

[94] *Г. Л. Бондаревский*, Английская политика..., стр. 44.

[95] *Г. Л. Бондаревский*, Английская политика..., стр. 497.

1904 թ. Բաղդադի երկաթուղու առաջին տեղամասը արդեն ավարտվել ու շահագործման էր հանձնվել։ Սակայն գծի շարունակումը հանդիպեց Անգլիայի ուժեղ դիմադրությանը[96], որովհետև Բաղդադի երկաթուղին կարող էր Սուեզից ամբողջապես շեղել Հարավային Իրանի ողջ առևտուրը և ուժգին հարված հասցնել բրիտանական իմպերիալիզմին։ Անգլիան բացահայտորեն հասկացրեց, որ թույլ չի տա երկաթուղու հետագա առաջխաղացումը դեպի Հարավ՝ Պարսից ծոցի ուղղությամբ։ Իր հայտարարությունը գործնականում իրագործելու համար նա ամրապնդվեց Քուվեյթում և հայտարարեց, որ այլևս չի ճանաչում թուրքական սուլթանի գերիշխանությունը Քուվեյթի նկատմամբ և թույլ չի տա, որ որևէ այլ պետություն զավթի Քուվեյթը[97]։ Կանցլեր ֆոն Բյուլովի դեռևս 1901 թ. արած այն նախատեսությունը, որ «Անգլիան ձգտում է Քուվեյթը կամ Բասրան զավթելու միջոցով խափանել Հնդկաստան տանող նոր կարճ ճանապարհի նշանակությունը»[98], միանգամայն արդարացավ։

Այսպիսով Գերմանական քաղաքականության ակտիվացումը Մերձավոր Արևելքում սրեց նաև անգլո-թուրքական հարաբերությունները։

Ցարական կառավարությանը ևս լրջորեն անհանգստացնում էր Գերմանական էքսպանսիայի բուռն ծավալումը և, հատկապես, Բաղդադի երկաթուղու պրոբլեմը։ Միանգամայն պարզ էր, որ նեղուցների և Հայաստանի զավթման բոլոր անեքսիոնիստական նախագծերը ի չիք էին դառնում գերմանական մերձավորարևելյան ծրագրի հետևանքով։ Ռուսական դիվանագիտությունը բաց գիտակցում էր նաև, որ Բաղդադի երկաթուղին կհզորացնի Թուրքիային, հնարավորություն տալով նրան անհրաժեշտության դեպքում կատարել զորքերի արագ մոբիլիզացիա[99], և իր իշխանությունը կայուն կերպով ամրապնդել կայսրության արևելյան շրջաններում, որտեղ

---

[96] *Dr. Afschar*, La politique Europeenne en Perse, Berlin, 1921, p. 247.

[97] «Известия штаба Кавказского военного округа», № 13—14, Тифлис, 1906, стр. 21—22 (հետագայում „ИШКВО").

[98] *А. Д. Новичев*, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 154.

[99] *Dr. Afschar*, նշվ. աշխ., էջ 248։

Թուրքիան միշտ էլ եղել էր համեմատաբար թույլ ու անզոր տեղական բնակչության անհնազանդության և հաղորդակցության ճանապարհների բացակայության պատճառով։ Այն միաժամանակ դարկ կտար Օսմանյան կայսրության ագրեսիվ ձգտումների ուժեղացմանը Անդրկովկասի և Իրանի նկատմամբ։ Այդ առթիվ Բասրայում ռուսական հյուպատոս Կ. Իվանովը իր զեկավարությանը գրում էր, որ «Բաղդադի երկաթուղին Թուրքիային կդարձնի մեզ համար շատ ավելի վտանգավոր ինչպես իր ուժով, այնպես էլ իր ազդեցությամբ Կովկասի մահմեդական բնակչության վրա, ստիպելով մեզ ևս զգալիորեն ավելացնել զորքերի թիվը և ռազմական ծախսերը»[100]։

Սակայն Մերձավոր և Միջին Արևելքում ակտիվ քաղաքականություն վարելու հնարավորությունը Ռուսաստանի համար կասեցվում էր նրանով, որ նրան ոչ մի կերպ չէր հաջողվում դուրս գալ հեռավորարևելյան ճգնաժամից։ Մանավանդ որ այդ ճգնաժամը խորացավ ու Ռուսաստանի համար ընդունեց սպառնալից բնույթ, երբ 1902 թ. Անգլիան դաշինքի մեջ մտավ Ճապոնիայի հետ։ Այդ դաշինքով անգլիական կառավարող շրջանները ցանկանում էին մեկուսացնել ու թուլացնել Ռուսաստանին ոչ միայն Հեռավոր Արևելքում, այլև Մերձավոր ու Միջին Արևելքում։

Նման պայմաններում Ռուսաստանը ստիպված էր միաժամանակ ձեռնպահ մնալ Մերձավոր Արևելքում ակտիվ ելույթներից, հանդես գալ նրա ստատուս-քվոյի օգտին և սահմանափակվել լոկ Անգլիայի և Գերմանիայի միջև հակասությունների սրման քաղաքականությամբ։

Նոր քաղաքական իրադրությունը ստիպեց Անգլիային և Ֆրանսիային ևս արմատապես վերափոխել իրենց դիրքերը Օսմանյան կայսրության նկատմամբ, հրաժարվել նրա տերիտորիալ ամբողջականությունը պահպանելու ավանդական քաղաքականությունից և այսուհետև հանդես գալ այն բաժանելու օգտին, որպեսզի Գերմանիային կանխեն ամբողջապես զավթելու հնարավորությունից։

Այսպիսով XX դ. սկզբին Մերձավոր և Միջին Արևելքում իմպերիալիստական պետությունների փոխադարձ հակասությունների

[100] «Записка по вопросу об организации изучения Ближнего Востока консула в Басре К. В. Иванова». «Материалы по изучению Востока». вып. I. СПб., 1909, стр. 88.

սրման հետևանքով Օսմանյան կայսրության համար ստեղծվել էր բարենպաստ վիճակ ոչ միայն կայսրության տերիտորիալ ամբողջականությունը հաջողությամբ պահպանելու տեսակետից, այլև արտաքին քաղաքականության բնագավառում ակտիվ գիծ մշակելու համար։ Պատահական չէ, որ հենց այս շրջանում, չնայած կայսրության ներքին կյանքի հեղհեղուկ և անկայուն վիճակին, Թուրքիայի կառավարող շրջանները եռանդուն կերպով սկսում են պրոպագանդել մահմեդական բոլոր ժողովուրդներին միավորելու գաղափարախոսությունը գերագույն խալիֆի՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի գլխավորությամբ։ Աբդուլհամիդյան պանիսլամիզմը Թուրքիայի ֆեոդալական, ռեակցիոն, ագրեսիվ շրջանների զավթողական մտադրությունների գաղափարախոսությունն էր, որը հետապնդում էր նոր զավթումների միջոցով կայսրությունը ընդարձակելու մտադրություններ։ Այն միաժամանակ ուղղված էր մահմեդական արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական և դասակարգային պայքարի դեմ։

Պանիսլամիստներն առաջին հերթին իրենց հայացքն ուղղում էին Արևելք՝ Իրան, Աֆղանստան, Թուրքեստան, Հնդկաստան և այլն, երկրներ, որտեղ բնակվում էին միլիոնավոր մահմեդականներ։ Նրանց մտայնության համաձայն XX դարում Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը անխուսափելիորեն տեղափոխվելու էր Արևելք, որը երաշխիք կհանդիսանար նրա հետագա կենսունակության, բարգավաճման ու ծավալման համար։ Պանիսլամիստների այս տեսակետը արժանանում էր անձամբ սուլթան-խալիֆի հավանությանը, հասնելով պետական քաղաքականության մակարդակի։ Այդ քաղաքական գիծը չէր սահմանափակվում լոկ տեսական դատողություններով, այլ XX դ. առաջին տարիներից սկսած գործնականում իրագործվում էր կյանքում։ Սուլթանական կառավարությունը հատկապես մշակել էր ագրեսիվ հարձակողական ծրագիր հարևան Իրանի դեմ, նպատակ ունենալով նրանից կտրել ու Օսմանյան կայսրությանը միացնել մի շարք տերիտորիաներ և առաջին հերթին Իրանական Ադրբեջանն ու Քուրդստանը։

Նկատի առնելով շիիզմի դիմադրության ոգին «ուղղափառ» մահմեդականությանը՝ սուննիզմին և այն, որ ինքնուրույն պետա-

կան միավոր հանդիսացող Իրանը կդիմադրի և կամովին չի ճանաչի ինչպես սուլթանի համայն մահմեդականության գերագույն խալիֆ լինելու հանգամանքը, այնպես էլ Թուրքիայի քաղաքական գերիշխանությունը Իրանի նկատմամբ, պանիսլամիստները և օսմանյան կառավարող շրջանները գտնում էին, որ Իրանը խոչընդոտ է Թուրքական մեծ կայսրություն ստեղծելու ճանապարհին, որ նա պատնեշ է մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Հնդկաստանի, Աֆղանստանի ու Թուրքեստանի միջև։ Եվ այդ պատճառով նրանց մեծագույն երազանքն էր ոչնչացնել այդ պատնեշը[101]։

1900 թ. սկսած սուլթանական կառավարությունը սկսեց բացահայտորեն հանդես բերել թուրք-իրանական սահմանի ստատուս-քվոն խախտելու ձգտում։ Նախ Բաշկալայի մութեսարիֆը զավթեց Ուրմիայի նահանգապետության մեջ մտնող Սերո և Սարթիկ գյուղերը[102]։ Երկու տարի անց, 1902 թ. անցնելով իրանական սահմանը, թուրքական կանոնավոր զորքերը փորձեցին գրավել ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Կազլիգել և Բելլյասուր բնակավայրերը։ Ընդ որում, հիմնովին քանդելով Բելլյասուրը, նրանք իրենց սահմանի մոտ հիմնեցին նոր գյուղ, որն անվանեցին Կիզիլկայա[103]։

1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը սկսվելուց հետո Բ. Դուռը մեծագույն ուշադրությամբ հետևում էր Հեռավոր Արևելքում ծավալվող իրադարձություններին, որպեսզի Ռուսաստանի ռազմական անհաջողությունների դեպքում կարողանա որոշակի օգուտ քաղել ստեղծված իրադրությունից։ Կորեայում և Լյաոդունյան թերակղզում ցարական զորքերի խոշոր պարտությունը ցնծություն առաջացրեց Օսմանյան կայսրության կառավարող շրջաններում։ Ստամբուլը անմիջապես հրամայեց երկրի արևելյան շրջանների զորքերին բերել մարտական պատրաստության վիճակի և մոբիլիզացնել նոր ուժեր, այդ թվում նաև համիդիե գնդերին։

Չորրորդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշային հրամայվեց զորքերը կենտրոնացնել ռուսական և իրանական սահմանների մոտ։ 1904 թ. ռուսական հյուպատոսները Թուրքիայից տաղ-

---

101 «Мир ислама», СПб., 1913, т. II, вып. VIII, стр. 568.

102 АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 106 об—107.

103 ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, лл. 123—123 об.

նապալից լուրեր էին ուղարկում Պետերբուրգ, հայտնելով, որ օրըստօրե զորքերի թիվը սահմանամերձ շրջաններում ավելանում է[104]։ Ցարական կառավարության հարցմանը, բացատրել զորքերի այդ կենտրոնացումների նպատակը, Բ. Դուռը պատասխանեց, որ ըստ իր ունեցած հավաստի տեղեկությունների Անդրկովկասից և Իրանից պատրաստվում են Թուրքիա անցնել հայկական զինված ջոկատներ հայերի համընդհանուր ապստամբություն բարձրացնելու նպատակով, և որ իրենց պետության անվտանգության շահերը պահանջում են զորքերի կենտրոնացման միջոցով խափանել այն[105]։ Այս բացատրությունը ճշմարտանման դարձնելու համար թուրքական արտաքին գործերի մինիստրությունը լրացուցիչ հայտնեց, որ իբր մակեդոնական և կովկասյան հայկական կոմիտեների միջև գոյություն ունի պայմանավորվածություն համատեղ խռովություն բարձրացնելու վերաբերյալ[106]։ Թուրքական սահմանային գլխավոր կոմիսար Աբուկ Ահմեդ փաշան նույնիսկ փորձում էր համոզել ռուսական իշխանություններին, որ սահմաններում թուրքական զորքերի կենտրոնացումը միանգամայն համապատասխանում է Ռուսաստանի շահերին, որովհետև իբր թե անդրկովկասյան հայկական կոմիտեները որոշել են ռուսական կառավարության համար ստեղծել արտաքին բարդություններ, որպեսզի դաժանորեն վրեժ լուծեն ցարական կառավարությունից եկեղեցական գույքերի բռնագրավման և 1904 թ. Մուշի դեպքերին չմիջամտելու համար[107]։

Այսպիսով «հայկական վտանգի» պատրվակի տակ թուրքական կառավարությունը խնամքով աշխատում էր թաքցնել իր ռազմական նախապատրաստությունների իսկական նպատակը։ Ռուսական դիվանագիտությանը ապակողմնորոշելու նպատակով Ստամբուլը ներկայացրեց նաև մի այլ պատճառաբանություն, որ կառավարությունը մտադիր է ամենակարճ ժամկետում ճնշել արաբների ապըս-

---

[104] АВПР, ф. «Политархив», 1904, д. 1640, л. 62; ф. «Канцелярия МИД», 1904, д. 29, л. 499.

[105] ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, лл. 57—58; АВПР, ф. «Канцелярия МИД», 1904, д. 29, л. 499; д. 26 лл. 170—174.

[106] ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, л. 65.

[107] ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, лл. 63—63 об.

տամբությունը Եմենում և այդ պատճառով սահմանային շրջաններում կատարում է զորքերի տեղաշարժեր[108]։

Ցարական որոշ չինովնիկներ, ինչպես կովկասյան ռազմական շրջանի շտաբի պետ գեներալ-մայոր Գրյազնովը, Ռիզեում փոխհյուպատոս Մաևսկին և ուրիշներ, հակված էին կարծելու, որ կովկասյան սահմանում թուրքական զորքերի կենտրոնացման հիմնական մեղավորը անգլիացիներն են, որոնք լուրեր տարածելով, որ հայկական զինված ջոկատները պատրաստվում են անցնել սահմանը և Թուրքիայում բարձրացնել հայերի ապստամբություն, ստիպում են սուլթանական կառավարությանը ձեռնարկել հակամիջոցներ։ Անգլիայի այդ քաղաքականությունը նրանք բացատրում էին նրանով, որ նա ցանկանում է, որ ռուսները չկարողանան իրենց զինված ուժերը լրիվ օգտագործել Հեռավոր Արևելքում և կամ ուժեղացնել Թուրքեստանի ռազմական շրջանի զինված ուժերը։ «Կարճ ասած,— եզրակացնում էին նրանք,— Անգլիային հարկավոր է Կովկասին գամել ռուսական կովկասյան զորքերը և այդ նպատակով Անգլիան աշխատում է օգտագործել հայկական հեղափոխական շարժումը»[109]։

Ստամբուլում ռուսական դեսպան Ի. Ա. Զինովևը համաձայն չէր ցարական չինովնիկների այն տեսակետի հետ, որ իբր 1904—1905 թթ. հայկական հեղափոխական շարժումը Թուրքիայում «ամբողջապես» ղեկավարվում է անգլիացիների կողմից։ Նա գտնում էր, որ այդ շարժումը միանգամայն ինքնուրույն է[110]։ Դեսպանի այս գնահատելի առարկումը, որը հուշում էր ավելի զգաստ վերլուծության ենթարկել սահմանի այն կողմում ծավալվող իրադարձությունները, հաղորդվել էր կովկասյան ռազմական շրջանի շտաբ, բայց, քանի որ նրա պետը գտնվում էր առաջին տեսակետի ազդեցության տակ, ոչ մի ուշադրություն չդարձվեց Զինովևի հաղորդագրությանը։

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Թուրքիան ունի ինչ-որ լուրջ մտադրություններ և դրանք առաջին հերթին ուղղված են Իրանի դեմ։

---

108 АВПР, «Канцелярия МИД», 1904, д. 29, л. 499.

109 ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, лл. 73, 76—76 об.

110 Նույն տեղում, թ. 58։

1905 թ. սկզբին Բայազետում, Վանում, Բաղեշում, Էրզրումում, Տրապիզոնում և Թուրք-իրանական սահմանի մոտ գտնվող մի շարք այլ շրջաններում շարունակվում էր զորքերի մոբիլիզացիան։ Ընդ որում, բացի ռեդիֆի (ռեզերվային բանակ) մոբիլիզացիայից, ուժեղացվում էին նաև նիզամի (մշտական բանակ) և համիդիեների զորամասերը։ Միաժամանակ Թուրքական իշխանությունները որոշակի միջոցառումներ էին ձեռնարկում միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված քրդական ցեղերի առաջնորդներին հաշտեցնելու, քրդական զինված աշխարհազորեր (մուսթախֆիս) կազմակերպելու ուղղությամբ և այլն[111]։

1905 թ. գարնանը սահմանի Բայազետի հատվածում Թուրքական և իրանական քրդերի միջև սկսվեցին զինված բախումներ։ Նախահարձակ եղան համիդիե յուզբաշի ցեղի քրդերը Միրզա աղայի գլխավորությամբ։ Մի այլ համիդիե գունդ Այուբ խանի գլխավորությամբ ներխուժեց Մակուի խանության սահմանները։ Թուրքիան անմիջապես սահմանի այդ շրջաններում կենտրոնացրեց զորքեր[112]։ Դժվար չէր կռահել, որ սահմանամերձ շրջանների քրդերի զինված բախումների կազմակերպիչը Թուրքական իշխանություններն էին, որոնք հող էին նախապատրաստում իրանական տերիտորիա կանոնավոր բանակի ներխուժման համար։

Թուրքիան հետևողականորեն ագրեսիվ քայլեր էր կատարում հատկապես Մակուի հարևան Ավաջիկ փոքր խանության նկատմամբ[113], որն ուներ ստրատեգիական չափազանց կարևոր նշանակություն։

1905 թ. ամռանը Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Նիզամ-էս-Սալթանեի կողմից քրդական շեքքաք ցեղի առաջնորդ Ջաֆար աղայի սպանությունը, որը հրաժարվում էր ենթարկվել շահական իշխանություններին, մեծ խլրտումների տեղիք տվեց իրանական քրդերի շրջանում։ Բազմաթիվ ցեղեր սկսեցին բացահայտորեն արտահայտել իրենց դժգոհությունը իրանական կառավարության նկատմամբ։ Նրանից վրեժ լուծելու նպատակով, սպանված Ջաֆար աղայի հայրը՝ Մեհմեդ աղան մեկնեց Թուրքիա, որտեղ դաշինք

111 Նույն տեղում, թ. 57։

112 Նույն տեղում, էջ. 118—118հ.։

113 «Отчет о поездке в Макинское ханство...», стр. 57.

կնքեց իր ցեղակից, համիդիե քրդական գնդի հրամանատար Շարիֆ բեկի հետ։ Այդ դաշինքը արժանացավ սուլթանական կառավարության հավանությանը։ Սուլթան Աբդուլ Համիդը անձամբ Մեհմեդ աղային հրավիրեց մայրաքաղաք[114]։ Թուրքիայի քրդական ցեղերի շրջանում սկսվեց հակաիրանական բուռն շարժում[115]։ Օսմանյան կառավարությունը աշխատում էր բորբոքել այդ շարժումը և սրել քրդական զանգվածների հակաիրանական տրամադրությունները։ Մահմեդական քրդերի կրոնական ֆանատիզմը իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու և հակաիրանական շարժման մեջ ավելի մեծ թվով ցեղեր ներգրավելու նպատակով Թուրքիան քրդական շարժումն ուղղեց իր նախասիրած հունով՝ քրիստոնյա բնակչության կոտորածներ կազմակերպելով։ Արևմտյան Հայաստանում ուժեղացվեց հակահայկական շարժումը։

Թուրքիան սկսեց էմիսարների միջոցով բուռն պանիսլամիստական պրոպագանդա մղել Իրանում, Անդրկովկասում և Կովկասում։ Այդ պրոպագանդան ուներ շեշտված հակահայկական, ինչպես նաև հակառուսական բնույթ։ Թուրքական կառավարությունը չէր սահմանափակվում լոկ մահմեդականների վրա բարոյական ներգործության միջոցներով, այլ նրանց մատակարարում էր մեծ քանակությամբ նորագույն զենք ու զինամթերք։ Անդրկովկասի հայ-ադրբեջանական բախումների ժամանակ Իրանական Ադրբեջանում թուրքական գործակալությունը ուժգին ագիտացիա էր տանում հայկական կոտորածներ հրահրելու միտումով։ Թեև այդ ագիտացիան չհասավ իր նպատակին, սակայն երևույթը միանգամայն հատկանշական էր։ Այդ առթիվ կովկասյան մամուլը գրում էր, որ «նեղ մահմեդական տենդենցներից շատերը, որոնք քաղաքացիության իրավունք են ստացել Թուրքիայում, համակրանք չեն գտնում Պարսկաստանում»[116]։ Հատկանշական է, նաև, որ թուրքական գործակալներն աշխատում էին քուրդ սուննիթների և մոլեռանդ ամբոխի կրքերը բորբոքել նաև շիիթական բնակչության դեմ։ Այդ պատճառով սահմանամերձ շրջանների և հատկապես Սալմաստի շրջա-

---

114 *Martin Bradford Garry*, նշվ. աշխ., էջ 93։

115 «Тифлисский листок», 26 июля 1905 г.

116 *Хан-заде*, О персидских делах, «Тифлисский листок», 22 сентября 1905 г.

նի ադրբեջանական բնակչությունը ևս սկսեց մտնել հայերի կազմակերպած ինքնապաշտպանության ջոկատները[117]։

Թուրքիան աշխատում էր Իրանի դեմ ուղղված շարժման մեջ ընդգրկել ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ իրանական քրդերին։ Բ. Դուրը համիդիե հրամանատարներին և ազդեցիկ քրդական ցեղապետներին հրավիրում էր Ստամբուլ հատուկ հրահանգներ տալու համար[118]։ Իսկ իրանական քրդերի մասին քրդական հարցի լավագույն գիտակ Վ. Մինորսկին գրում էր. «Քրդերին վերաբերող բոլոր հարցերի հետ այս կամ այն կերպ կապված է Թուրքիան, որն աշխատում է բոլոր դեպքերում օգտվել իր հարևան Պարսկաստանի թուլությունից. դրա համար առանձնապես հարմար պատրվակ է քրդերի սունիթի լինելը, որը պարտավորեցնում է նրանց հնազանդվել իրենց հոգևոր առաջնորդին՝ խալիֆ-սուլթանին»[119]։ Ավելի հանգամանորեն անդրադառնալով Իրանի քրդական ցեղերից շատերի մոտ նկատվող պրոթուրքական տրամադրություններին Վ. Մինորսկին մի այլ առիթով նշում էր. «Քրդերը Թուրքիայի նկատմամբ վերաբերվում են համակրանքով... Դրա գլխավոր պատճառն է. 1) կրոնի ընդհանրությունը, 2) այն, որ Թուրքիան ցանկանում է օգտվել իր հպատակ քրդերի ռազմունակ հատկանիշներից և շոյելով նրանց ինքնասիրությունը, ընդգրկում է համիդիե գնդերի մեջ. մինչդեռ Պարսկաստանը վախենում է նրանցից և հնարավորություն չունենալով տիրել, հենվել նրանց ուժերի վրա, քրդերի նկատմամբ վերաբերվում է անսքող անվստահությամբ՝ բավարարվելով միայն առանձին ցեղերի միջև բանսարկություններ բորբոքելով»[120]։

Իրանի նկատմամբ Թուրքիայի աճող հետաքրքրության դրսևորումներից մեկն էր հանդիսանում նաև այն, որ Իրանական Ադրբեջանում և Քրդստանում գնալով ավելանում էր թուրքական պաշտոնական ներկայացուցիչների թիվը, չհաշված այն, որ ամբողջ

---

117 Նույն տեղում։

118 *Хан-заде,* Брожение среди курдов, «Тифлисский листок», 19 июля 1905 г.

119 «Отчет о поездке в Макинское ханство...», стр. 18.

120 «Сведения, собранные драгоманом ген. консульства в Тавризе Минорским во время поездки в Марагу и район рек Джагату и Татаву в начале августа 1906 г.», «ИШКВО», Тифлис, 1907, № 20, стр. 41.

սահմանների երկայնքով վխտում էին գաղտնի գործակալները։ Թուրքիան գլխավոր հյուպատոսություններ էր բաց արել Խոյում, Թավրիզում, Սեննեում (Սեննենդեջ) և հյուպատոսություն Սոուջբուլաղում։ Բ. Դուռը փորձում էր շահական կառավարությունից թույլտվություն ստանալ մի շարք այլ վայրերում ևս հյուպատոսություններ բաց անելու կամ հյուպատոսական ներկայացուցիչներ ունենալու համար։

Անկարող լինելով կտրուկ միջոցներ ձեռնարկել Թուրքիայի կողմից Իրանի դեմ հրահրվող քրդական շարժման նկատմամբ, 1904—1905 թթ. շահական կառավարությունը Թեհրանում հավատարմագրված ռուսական և անգլիական ներկայացուցիչների միջոցով անընդհատ խնդրում էր Պետերբուրգին և Լոնդոնին ճնշում գործադրել Բ. Դռան վրա։ Բրիտանական կառավարությունը անմիջապես հանդես եկավ Իրանի պաշտպանի դերում, որովհետև դա նրան կարող էր բերել երկակի օգուտ. նախ կմեծանար անգլիական ազդեցությունը իրանական կառավարության վրա, որը կարելի էր ծառայեցնել երկրում տնտեսական ու քաղաքական նոր արտոնություններ ձեռք բերելու նպատակին և ապա կուժեղանար Անգլիայի կշիռը սահմանամերձ նահանգների բնակչության և մասնավորապես քրդերի շրջանում։ Անգլիայի այդ քայլը պայմանավորված էր նաև նրա քաղաքականությամբ, որը այդ շրջանում կրում էր շեշտված հակաթուրքական բնույթ։ Ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ Թուրքիայի կողմից Իրանին ներկայացվող տերիտորիալ հավակնությունները կարող էին սպառնալիքի տակ դնել սահմանամերձ գոտում առաջնակարգ նշանակություն ունեցող անգլիական տնտեսական և քաղաքական շահերը։

Չսահմանափակվելով Բ. Դռան վրա դիվանագիտական ճնշում գործադրելով, Անգլիան սկսեց իրանական քրդերին գրգռել Թուրքիայի դեմ, կաշառել համիդիե գնդերի հրամանատարներին և ազդեցիկ ցեղապետներին հակակառավարական ելույթներ կազմակերպելու համար և այլն[121]։ Մյուս կողմից բրիտանական կառավարությունը փորձում էր օգտագործել ռուս-թուրքական հարաբերությունների սրումը Թուրքիայի ուշադրությունը ամբողջապես Ռուսաս-

[121] АВПР, ф. «Канцелярия МИД», 1904, д. 28, л. 321.

տանի կողմը ուղղելու մտադրությամբ։ Ստամբուլի անգլիական դեսպանը աշխատում էր համոզել, որ Ռուսաստանի կողմից Թուրքական կառավարությանը սպասվում է մեծագույն վտանգ, հետևաբար անհրաժեշտ է առաջին հերթին ամրապնդել Թուրք-ռուսական սահմանը և հենց այնտեղ ավելացնել զորքերի թիվը[122]։ Թուրքական կառավարության աչքում անկեղծ երևալու համար անգլիացիները դարձյալ քաղաքական շահադիտության առարկա դարձրին հայերին, Բ. Դոանը հավաստելով, որ իրենք այլևս մտադիր չեն որևէ ձևով նեցուկ հանդիսանալ արևմտահայերին։ Որպես ապացույց Վանի անգլիական հյուպատոսը տեղեկություններ էր հավաքում հայկական կազմակերպությունների գործունեության և ծրագրերի մասին և դրանք հաղորդում Թուրքական իշխանություններին[123]։

Միանգամայն ակնհայտ էր, որ անգլիական կառավարող շրջաններն աշխատում էին Թուրքիայի հարվածն ուղղել բացառապես Ռուսաստանի դեմ, զերծ պահելով Իրանին ագրեսիայից։

Ինչ վերաբերում է ցարական Ռուսաստանին, ապա նա Իրանի դիմումների նկատմամբ բռնեց ծայրահեղ զգույշ դիրք, չցանկանալով Հեռավոր Արևելքում իր համար ստեղծված անբարենպաստ պայմաններում սրել հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ։ Մյուս կողմից Ռուսաստանը աշխատում էր, որ Անգլիան չկարողանա ռուսական միջամտությունը Թուրք-իրանական հարաբերություններին ծառայեցնել իր հակառուսական քաղաքականությանը։ Այդ առթիվ ցարական արտաքին գործերի մինիստր Վ. Ն. Լամզդորֆը 1904 թ. սեպտեմբերին հետևյալ ցուցումն էր տալիս Թեհրանում ռուսական դեսպանորդ Շպեյերին։ «Ռուսաստանի խնդիրն է Իրանը վերածել քաղաքականապես հնազանդ մի պետության, տնտեսական տեսակետից պահպանել ընդարձակ իրանական շուկան՝ այնտեղ ռուսական կապիտալներ ներդնելու համար, պահպանել Իրանի տերիտորիալ ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը և թույլ չտալ, որ որևէ երրորդ պետություն աստիճանաբար Իրանը ենթարկի իր ազդեցությանը։ Այս խնդիրն ինքնըստինք-

---

[122] Նույն տեղում, թթ. 321—322։ ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, лл. 14—16.

[123] АВПР, ф. «Канцелярия МИД», 1904, д. 26, лл. 128—129.

յան հեշտ չէ, և նրա իրագործումը հնարավոր է միայն ժամանակի ընթացքում։ Այն առավել դժվարանում է նաև Անգլիայի՝ ասիական մայր ցամաքում մեր մշտական քաղաքական մրցակցի դեմ համառ պայքար մղելու անհրաժեշտությամբ։ Ինչ վերաբերում է սահմանային միջադեպերին, որոնք պարբերաբար ծագում են Թուրքիայի և Իրանի միջև, ապա, հետևելով մեր ավանդական քաղաքականությանը, մենք աշխատում ենք հարթել դրանք Թեհրանում և Կոստանդնուպոլսում անմիջական դիմումների միջոցով, առանց անգլիացիների որևէ մասնակցության»[124]։

Չնայած կառավարության այս դիրքորոշմանը, ռուսական որոշ դիվանագետներ գտնում էին, որ անհրաժեշտ է քաղաքական լայն աշխատանք տանել իրանական քրդերի շրջանում, մասնավորապես նրանց մոտ արմատավորել ինքնավարության գաղափարը և ներշնչել պրոթուրքական տրամադրություններ ունեցող քրդական ցեղերին և ցեղային ավագանուն, որ նրանք ազգային-ռասայական տեսակետից տարբերվում են թուրքերից[125]։

Այնուհանդերձ, անգլո-ռուսական փոխադարձ հակասությունները և դրանից բխող նրանց պասսիվ դիրքը Օսմանյան կայսրության ագրեսիվ նկրտումների նկատմամբ, ինչպես նաև սուլթանական ռեակցիայի դաշինքը գերմանական իմպերիալիզմի հետ, ոգեշնչելու էին Աբդուլ Համիդ II-ին՝ իրականացնել իր պանիսլամիստական զավթողական ծրագրերը Իրանի նկատմամբ։ Մյուս կողմից շահական կառավարության թուլությունն ու նրա դրսևորած անվճռականությունը իրանական տերիտորիայում քրդական ցեղերի պրոթուրքական շարժման և թուրքական գործակալության հակահիրանական քայքայիչ գործունեության դադարեցման ուղղությամբ խրախուսելու էր օսմանյան կառավարությանը և ստեղծելու էր այն հաստատ համոզմունքը, որ Իրանի նկատմամբ իր զավթողական ծրագրերի կիրառումը չի հանդիպելու լուրջ հակահարվածի։

---

[124] «Царская Россия и Персия в эпоху русско-японской войны», «Красный архив», 1932, 4 (53), стр. 14—15, 32.

[125] «Записка по вопросу об организации изучения Ближнего Востока консула в Басре К. В. Иванова (по поводу отчета В. Ф. Минорского о поездке в Макинское ханство)». «Материалы по изучению Востока», вып. I, СПб., 1909, стр. 91.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 1905—1908 ԹԹ. ԵՎ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1905 թ. օգոստոսի 17-ին օգտվելով Լահիջանում ծագած մաքսային վեճից, գեներալ Մուհամմեդ Ֆազիլ փաշայի հրամանատարությամբ գործող նախկին 6-րդ միջադետքյան զորաբանակը մոտ երկու հազար թուրքահպատակ քրդերի ուղեկցությամբ ներխուժեց Լահիջանի շրջանը և համարյա չհանդիպելով դիմադրության, գրավեց Սոուջբուլաղի նահանգապետության մեջ մտնող մի շարք վայրեր[1]։ Թուրքական հրամանատարությունը հայտարարեց, որ Լահիջանի շրջանը պատմականորեն պատկանում է Թուրքիային[2]։

Իրանական իշխանությունները այս փաստը կարող էին մեկնաբանել որպես հասարակ սահմանային միջադեպ, եթե նրանց չհաջողվեր ձեռք բերել Թուրքական ռազմական մինիստրի նամակը՝ ուղղված Իրանի ազդեցիկ քրդական ցեղապետներին, ուր ասվում էր, որ շուտով Իրանական Քրդստանում հայտնվելու են «խալիֆի զորքերը»[3]։ Այս փաստաթղթերից իրանական պաշտոնական շրջանների համար միանգամայն ակնհայտ դարձավ, որ Թուրքիան մտադիր էր պանիսլամիզմի դրոշի տակ Քրդստանի սուննիթ բնակչությանը ոտքի հանել շահական կառավարության դեմ։

---

[1] *Yusub Hikmet Bayur*, Türk inkilab Tarihi, Cilt II, kisim IV, Ankara, 1952, S. 86.

[2] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1904—1907 гг., д. 3541, лл. 21—22. *«Մշակ», 7 դեկտեմբերի 1905 թ.։*

[3] *Хан-заде*, О персидских делах, «Тифлисский листок», 30 октября 1905 г.

Մինչև 1905 թ. դեկտեմբերը սահմանային գոտում Թուրքիայի կողմից նոր զավթումներ չկատարվեցին։ Սակայն սահմանի մոտ շարունակվում էր զորքերի կենտրոնացումը։ 1905 թ. նոյեմբերի վերջին սուլթանը հրամայեց բանակային չորրորդ կորպուսի մուշիրին (զորքերի գլխավոր հրամանատար) Բաղեշի (Բիթլիսի) վիլայեթի զորքերը շարժել Մոսուլի վիլայեթ, Ռևանդուզից արևելք՝ իրանական Վեղնե և Փեսվե (Կալափասովա) գյուղերի ուղղությամբ։ Ստանալով սուլթանի հրամանը, մուշիրը դիմեց Բ. Դռանը խնդրելով, որ նկատի առնվի չորրորդ կորպուսի ֆինանսական ծանր վիճակը, ձմեռային արշավանքի հետ կապված դժվարությունները և զորքերի տեղաշարժը հետաձգվի մինչև գարուն։ Բացի այդ, չորրորդ կորպուսի կենտրոն էրզինջանի զինվորական և քաղաքացիական իշխանությունները հայտնեցին սերասկերաթին (ռազմական մինիստրություն), որ չի կարելի Բաղեշի վիլայեթից հանել զորքերը։ Սակայն այս առարկությունները չընդունեց Ստամբուլը։ Կրկին ստացվեց սուլթանի հրամանը, որտեղ ասվում էր, որ զորքերի շարժման համար տրվում է երկօրյա ժամկետ[4]։ Անմիջապես չորրորդ բանակային կորպուսից սահման ուղարկվեց նիզամի 8 գումարտակ, 2 լեռնային մարտկոց, համիդիե 4 գունդ, իսկ սահմանապահ գումարտակներն ուժեղացվեցին մոտ 700 մարդով։ Բաղեշի վիլայեթից Մոսուլ մեկնած զորամասերի ընդհանուր հրամանատարությունը դրվեց գեներալ Աբիֆ բեյի վրա։ Իսկ Բաղդադում տեղավորված վեցերորդ բանակային կորպուսի կազմից Վեղնե, Լահիջան և Միրիան ուղարկվեցին 46 և 47-րդ գնդերի 2-րդ և 4-րդ գումարտակները և մեկ լեռնային մարտկոց։ Միաժամանակ Մուշից Բաղեշ ժամանեց 32-րդ հետևակային գնդի 4-րդ գումարտակը, որ պետք է մեկներ Սեերթ—Ջեղիրե—Ջահո—Ռևանդուզ և ապա Վեղնե[5]։

Էրզրումում գլխավոր հյուպատոս Սկրյաբինը արտաքին գործերի մինիստրությանն ուղղած իր գաղտնի հաղորդագրության մեջ հայտնում էր, որ նախատեսվում է Վեղնեում կենտրոնացնել մոտ մեկ դիվիզիա (16 գումարտակ), որի կեսը՝ Բաղդադի 6-րդ կորպուսից[6]։

---

[4] ЦГВИА, «Турция», ф. 450, д. 142, лл. 132 об—133, 163, 172 об.

[5] Նույն տեղում, թթ. 126, 132—132 հ., 147—148, 163, 168։

[6] Նույն տեղում, թ. 142։

Թե ինչպիսի մեծ նշանակություն էր տրվում այս արշավանքին, երևում է թեկուզ այն բանից, որ ռազմական մինիստրությունը բարձրացնում էր այն սպաների զինվորական աստիճանը, որոնք կամովին համաձայնություն էին տվել մեկնել իրանական սահմանը[7]։

1905 թ. դեկտեմբերին Թուրքական զորքերն անցան իրանական սահմանը և սկսեցին «վիճելի» և նույնիսկ անվիճելի տերիտորիաների գրավումը։ Առաջին հերթին նրանք զավթեցին Վեղնեն, Փեսվեն և այնուհետև շարժվեցին դեպի հյուսիս և արևելք։ 1906 թ. փետրվարի վերջերից Թուրքական կառավարությունը սկսեց ուժեղացնել Իրանում գտնվող իր զորքերը, նրանց թիվը հասցնելով մինչև 10 հազար մարդու (այլ տվյալներով մինչև 15 հազարի)[8]։

Թուրքական զորքերի ագրեսիան անվիճելիորեն վկայում էր, որ Աբդուլ Համիդի կառավարությունը ծրագրել է զավթողական լայն քաղաքականություն Իրանում։ Որոնք էին, սակայն, այդ քայլին դիմելու դրդապատճառները։ Նախ՝ Թուրքիան մտադիր էր ընդարձակել կայսրության սահմանները իր արևելյան հարևանի հաշվին, մասնավորապես, զավթել Իրանական Քրդստանն ու Ադրբեջանը և իր քաղաքական գերիշխանության տակ իրագործել այդ շրջանների միավորման վերաբերյալ Աբդուլ Համիդ II-ի պանիսլամիստական ծրագիրը։ Այդ մասին Իրանում ռուսական պրակտիկ գործիչներից մեկը գրում էր. «Թուրքիայի ձգտումը՝ ընդարձակվել Իրանի հաշվին, կարմիր թելի պես անցնում է այդ երկու հարևան պետությունների պատմության միջով։ ... Թուրքիան միշտ էլ օգ-

---

[7] Նույն տեղում, թ. 148։ Բաղեշի ռուսական փոխ-հյուպատոս Շիրքովը հայտնում էր, որ զորքերի տեղափոխությունը կատարվում է ձմեռային անասելի ծանր ու դժվարին պայմաններում։ «Ջոկատը ճանապարհին սպանում էր մեծ քանակությամբ եղներ և ոչխարներ, որոնք պատկանում էին հայերին. զինվորական շինքերը տաքացնելու համար օգտագործվում էր գյուղերի բնակիչների ձմեռվա համար պատրաստած փայտը, իսկ երբ չէր գտնվում փայտ, այրում էին սահնակները, աթոռները և այլ փայտյա տնային կահ-կարասիք։ Ջյունով ծածկված ճանապարհը մաքրելու համար իշխանություններն օգտագործեցին Մուշի հովտի գյուղերի հայերին և 150 քրդերի։ Բացի այդ հայերը կատարում էին բեռների փոխադրություն և Մուշից մինչև Բիթլիս քարշ էին տալիս հրանոթներով բեռնավորված սահնակները»։ (Նույն տեղում, թթ. 163—164)։

[8] «Сведения, собранные драгоманом...», стр. 37.

տրվել է Իրանի թուլությունից՝ վերջինիս հաշվին իր տերիտորիայի ընդարձակման համար»[9]։

Այնուհետև, դիմելով արտաքին զավթումների քաղաքականության, սուլթանական կառավարությունը հույս ուներ բորբոքել կայսրության մահմեդական բնակչության ռազմաշունչ ոգին և միաժամանակ շեղել նրա ուշադրությունը իր սոցիալ-տնտեսական ծանր կացությունից։

1905 թ. ռուսական հեղափոխության ազդեցության տակ Օսմանյան կայսրությունում ծայր էին առել ազգային-ազատագրական և սոցիալական բնույթի բուռն շարժումներ աբդուլհամիդյան բռնակալական կամ «զուլյումի» վարչակարգի դեմ։ Ազգային և սոցիալական ճնշման դեմ պայքարի դուրս եկան հայերը[10], Մակեդոնիայի և արաբական վիլայեթների ժողովուրդները[11] և այլն։ Անհանգիստ վիճակ էր նաև Թուրք-իրանական սահմանի մոտ, որտեղ հաճախակի տեղի էին ունենում տեղական քրդական բնակչության հարձակումներ թուրքական զինվորների վրա[12]։ Դերսիմում, Բայազեդում և Բաղեշում կրկին սկսվեցին քրդական շարժումներ։ Կառավարության ծանր հարկային լծից ազատվելու համար քրդերը մասսայաբար սկսեցին տեղափոխվել Իրան։ Հուզումներ սկսվեցին նաև Կենտրոնական Անատոլիայի թուրքական բնակչության մեջ։ Նույնիսկ մայրաքաղաքում նավատորմի սպաներն ու նավաստիները 1906 թ. հունվարին ապստամբելով կառավարության դեմ, ցույց կազմակերպեցին ուղղակի սուլթանի պալատի առջև[13]։

Սուլթանական կառավարության համար այս շարժումները առավել սպառնալից էին դառնում, որովհետև հաճախ բռնակալության դեմ պայքարը միավորում էր տարբեր ժողովուրդների։ Այսպես, 1905 թ. Դերսիմի քրդերի ապստամբությունը պաշտպանություն գտավ շրջակա հայ բնակչության կողմից, Հարավային (կամ Իրաքյան)

---

[9] ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, л. 13 об.

[10] Արևմտյան Հայաստանում հայկական հուզումների կենտրոններ էին Վանի, Բաղեշի վիլայեթները և Սասունի շրջանը։ Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, лл. 3—3 об.

[11] Նույն տեղում։

[12] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, л. 1 об.

[13] «Մշակ», 14 հունվարի 1906 թ., էջ 3։

Քրդստանում քրդերը պայքարի ելան արաբների հետ համատեղ, կայսրության արևելյան և արևմտյան վիլայեթների ժողովուրդների միջև փորձեր էին կատարվում կապեր հաստատել համատեղ և միաժամանակյա ելույթների համար և այլն։

Երկրի ներսում սահմանադրության կողմնակիցների ջախջախումը դեռևս երաշխիք չէր, որ իսպառ վերացել են առաջադիմական մտքերի ու դաղափարների ապագա վերածննդի հնարավորությունները։ Թեև սուլթանը դաժան հալածանքների էր ենթարկում և ֆիզիկապես ոչնչացնում էր իր բոլոր քաղաքական հակառակորդներին, անկախ նրանց ազդեցությունից և կրոնական պատկանելությունից, սակայն ընդդիմադիր ուժերը շարունակում էին ակտիվորեն գործել թե՛ բուն Թուրքիայում և թե՛ արտասահմանում։

Հեղափոխության ալիքը ներխուժեց Թուրքիա ոչ միայն Ռուսաստանից, այլև հարևան Իրանից։ Ահաբեկված թուրքական կառավարող շրջանները աշխատում էին ելք գտնել ստեղծված վիճակից։ «Ասիայի զարթոնքի» դարաշրջանում Արևելքի մահմեդական երկրներից Իրանը առաջինն էր, որ ընդվզեց միապետական-բռնակալական կարգերի դեմ։ 1905 թ. գարնանը Իրանում սկսվեցին հեղափոխական խմորումներ, որոնք հետագայում ընդունեցին կազմակերպված շարժման բնույթ։

Բնականաբար Իրանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունները չէին կարող իրենց արձագանքները չունենալ հարևան Թուրքիայում։ Այդ պատճառով սուլթանը որոշեց ջախջախել հեղափոխական շարժումն Իրանում և թույլ չտալ նրա ներթափանցումը Թուրքիա։ Պատահական չէ, որ թուրքական ագրեսիան ծավալվեց 1905 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ Իրանում արդեն տեղի էին ունենում բուռն իրադարձություններ։

Ձեռնամուխ լինելով Իրանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականության, Օսմանյան կայսրությունը ձգտում էր խոչընդոտել Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում։ Վերջին տասնամյակի ընթացքում Ռուսաստանի ազդեցության ու կշռի խիստ մեծացումը Իրանական Ադրբեջանում ու Քրդստանում վերին աստիճանի մտահոգում էր Թուրքիայի կառավարող շրջաններին։ Մի շարք քաղաքներում (Խոյ, Ուրմիա, Քերմանշահ և այլն) բացվել էին ռուսական հյուպատոսություններ

և ուղղափառ միսիաներ (Ուրմիա), տեղական բնակչության, այդ թվում նաև քրդերի, ասորիների մեջ նկատվում էր ռուսասիրական ձգտումների ուժեղացում, նախատեսվում էր մի շարք վայրերում հիմնել ռուսական հաշվառու-վարկատու բանկի բաժանմունքներ և անցկացնել հեռագրական գծեր, կառուցվում էին խճուղային ճանապարհներ և, վերջապես, նախագծվում էր Ջուլֆա—Թավրիզ—Ուրմիա երկաթուղին[14], որը մեծապես նպաստելու էր Իրանական Ադրբեջանի տնտեսական յուրացմանը։ Այս բոլոր փաստերը, իհարկե, չէին կարող աննկատ մնալ Թուրքիայում։

Թուրքական ագրեսիան Իրանում հետապնդում է նաև ռազմաքաղաքական և ստրատեգիական նպատակներ. այդ մասին ռուսական դիվանագետները գրում էին. «Վիճելի գոտու նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունը պատահական չէ, այն, ըստ երևույթին, նախապատրաստվում էր վաղուց, այդ գոտու կարևոր ստրատեգիական նշանակության պատճառով։ Թուրքիայի այդ քաղաքականությունը նպատակ ունի հակակշիռ ստեղծել վերջին ժամանակներս Ադրբեջանում Ռուսաստանի ազդեցության խիստ մեծացման դեմ, որն արտահայտվում է նրանով, որ տնտեսապես նվաճվում է պարսկական այդ նահանգը, Անդրկովկասի և Պարսկաստանի սահմանների մոտ անց են կացված ճանապարհներ, բացվել են նոր հյուպատոսություններ և այլն»[15]։

1900—1905 թթ. ընթացքում Ռուսաստանը պատրաստվում էր երկաթուղի անցկացնել Մարանդ—Թավրիզ ուղղությամբ և Մարանդից առանձին գիծ տանել դեպի Խոյ։ Այդ նախագծերը խիստ անհանգստացնում էին թուրքական կառավարությանը։ Նրանք մտածում էին, որ վերոհիշյալ նախագծերի իրականացումից հետո Ռուսաստանը չի հապաղի շարունակել երկաթուղու կառուցումը դեպի Ուրմիա և ապա դեպի Միջագետք[16]։ Պատահական չէ, որ Վանի ռազմական շրջաններում խոսում էին, որ սահմանային հարցը կրկին

[14] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1020, л. 19.

[15] «Штаб Кавказского военного округа». Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой за время с 15 июня по 15 июля 1911 г., № 3, Тифлис, 1911, стр. 26.

[16] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 180.

բարձրացված է, որովհետև Ռուսաստանը պատրաստվում է երկաթուղային գծեր անցկացնել Իրանական Ադրբեջանում, որը խիստ անշահավետ ու վտանգավոր է Թուրքիայի համար[17]։ Նույնիսկ տեղեկություններ կային, որ Սամսունը ճնշում է գործադրել շահական կառավարության վրա, պահանջելով մերժել Ռուսաստանի երկաթուղային շինարարության նախագծերը, սակայն համոզվելով, որ իրանական կառավարությունը ուշադրություն չի դարձնում այդ հարցին, որոշել է բռնի ուժով ստիպել նրան կատարելու իր պահանջը[18]։

Ցարական քաղաքական գործիչների կարծիքով Իրանում Ռուսաստանի երկաթուղային նախագծերը ի չիք դարձնելու համար Թուրքիան որոշել է զավթել ռազմական կարևոր նշանակություն ունեցող իրանական սահմանային տերիտորիայի մի մասը։

Իրանի ռազմա-տնտեսական թուլությունը Օսմանյան կայսրության համար երաշխիք էր, որ նրա ագրեսիվ-զավթողական քաղաքականության ծավալումը չի հանդիպի լուրջ դիմադրության և երբեք չի ունենա ծանր հետևանքներ։

XX դ. սկզբին Իրանը նշանակալիորեն կորցրել էր իր ազգային անկախությունն ու ինքնուրույնությունը, վերածվելով տիպիկ կիսագաղութային երկրի։ Շահը, նրա մինիստրներից շատերը, նահանգապետներն ու ֆեոդալական խաները վերածվել էին իմպերիալիստական պետությունների գործիքի։ Շահական իշխանության թուլացումը ուղեկցվում էր ծայրամասերում ֆեոդալների անջատողական ձգտումների ուժեղացմամբ, որոնք ամեն կերպ խրախուսվում էին իմպերիալիստական պետությունների կողմից։ Նահանգական իշխանությունը կենտրոնացվում էր առանձին նահանգների գեներալ-նահանգապետների ձեռքերում, որոնք բնակչությունից հարկերի գանձումը իրագործում էին անկանոն հեծելազորի ավազակային պատժիչ ջոկատների օգնությամբ[19]։

Շահական զորքերը միանգամայն անմարտունակ էին։ Դեռևս XIX դ. արված բոլոր փորձերը, վերակազմակերպել բանակը և ստեղծել եվրոպական տիպի զինված ուժեր ավարտվեցին անհա-

---

[17] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009, лл. 6 об—7.

[18] Նույն տեղում, թ. 7հ։

[19] *Н. П. Мамонтов*, Очерки современной Персии, СПб., 1909, стр. 63.

ջողությամբ։ XX դ. սկզբին իրանական բանակը բաղկացած էր հետևյալ միավորներից, կանոնավոր զորքեր (նիզամ), անկանոն զորքեր (ղեյրե նիզամ) և աշխարհազոր (չարիքներ)։ Կանոնավոր բանակի մեջ մտնում էին հետևակը (փիյադ), հրետանին (թուփխանե) և հեծելազորը (սավար)։

Թեև շահական կառավարությունը իր կանոնավոր բանակի թիվը հաշվում էր 80 ֆոուջ (գումարտակ)[20], սակայն այդ թիվը գոյություն ուներ միայն թղթի վրա։ Իրականում կար 26—27 ֆոուջ[21]։ Ռազմական ծառայության ոչ մի որոշակիորեն սահմանված կարգ գոյություն չուներ։ Նույնիսկ օրենքով որոշված չէր զորակոչման տարիքը։

Իրանական բանակի շարքերում 80—90-ամյա ծերունիների հետ կողք-կողքի կարելի էր տեսնել 16-ամյա պատանիների։ Ֆոուջներում 800-ի փոխարեն գոյություն ուներ հազիվ 100—200 մարդ։ Կառավարությունը բանակի վրա ծախսում էր շնչին գումարներ։ Սպաներն ու զինվորները աշխատավարձ չէին ստանում, որը հաճախ զինվորական խռովությունների պատճառ էր հանդիսանում։ Զինվորները կաշառքի միջոցով ազատվում էին ծառայությունից և զբաղվում զանազան գործերով. ոմանք դրամափոխությամբ, մանր առևտրով, իսկ ոմանք էլ ուղղակի դառնում էին այս կամ այն մեծահարուստի մոտ դռնապան կամ ծառա[22]։ Նրանց աշխատավարձը սովորաբար դրպանվում էր բարձր սպայության կողմից։ Սարբազները զինված էին Վերնդելի և Կրինկի հնացած և հաճախ ժանգոտված հրացաններով։ Բանակում ծառայելու օրենքը տարածվում էր միայն շիիթ մահմեդականների վրա, իսկ այլադավաններն ու բազաքաբնակները ազատվում էին զինվորական ծառայությունից[23]։ Այդ ծանրությունը ամբողջապես ընկնում էր աղքատ գյուղերի վրա, որովհետև հարուստ գյուղերը փրկագնով ազատվում էին ծառա-

---

[20] Ֆոուջը բաղկացած էր 800—1000 մարդուց։

[21] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1027, лл. 16—40.

[22] *Л. Ф. Богданов,* Персия в географическом, религиозном, бытовом, торгово-промышленном и административном отношении, СПб., 1909, стр. 124.

[23] *М. П. Павлович,* Казачья бригада в Персии. (Из истории персидской контрреволюции), «Новый Восток», 1925, № 8—9, стр. 178.

յությունից։ Բանակի կրտսեր սպայական կազմի ընտրության իրավունքը տրվում էր բարձր սպայական կազմին, որի համար դա ևս դրամ կորզելու միջոց էր։ Գոյություն չուներ նաև զինվորական աստիճաններ շնորհելու որոշակի կարգ։ Հաճախ զինվորական ծառայության մասին ոչ մի գաղափար չունեցող մարդիկ միանգամից ստանում էին սուլթանի (վաշտի հրամանատար), սարհանգի (գնդապետ) և նույնիսկ սարթիբի (գեներալ) կոչում։ Յուրաքանչյուր հարուստ բեկ կամ խան կարող էր գնել գեներալի աստիճան. դրա համար պահանջվում էր ռազմական մինիստրության գանձարանը մուծել 2000 թուման[24]։ Բանակում ամենուրեք իշխում էր կաշառակերությունը։ Միջոցների զգալի մասը յուրացնում էին ռազմական մինիստրը և բարձրաստիճան սպաները։ Մինիստրից մինչև ամենաստորին սպաները իրենց պաշտոնները ստանում էին կաշառքի օգնությամբ[25]։ Թեհրանում գոյություն ունեին երկու զինվորական դպրոցներ, որոնք հիմնադրվել էին դեռևս Նասր-էդ-Դին շահի կողմից և կոչվում էին «Նասիրիյե» և «Դար-օլ-ֆոնուն»։ Սակայն այդ դպրոցները չունեին ոչ մի որոշակի ծրագիր։ Նրանք ավելի շուտ պատրաստում էին զինվորական նվագախմբերի ղեկավարներ, քան թե հետևակի և հրետանու սպաներ[26]։

Անկանոն զորքերը կազմվում էին երկրի իլլյաթ (քոչվոր) բնակչությունից։ Կառավարության պահանջով քոչվոր ցեղերի առաջնորդները պարտավոր էին հատկացնել որոշակի քանակությամբ զինված հեծելազորայիններ, որոնց սպառազինության բոլոր ծախսերը հոգալու պարտականությունը ընկած էր ցեղապետների վրա[27]։ Այդ պատճառով վերջիններս աշխատում էին խուսափել, կամ հաճախ ուղղակի հրաժարվում էին կառավարությանը հատկացնել զինված ջոկատներ։ Իսկ կառավարությունը այն աստիճանի թույլ էր, որ ի վիճակի չէր միջամտելու նույնիսկ ամենաթույլ թայֆաների ներքին գործերին։ Ավելին, իմանալով, որ այդ թայֆաները ունեն համեմատաբար կուռ ռազմական կազմակեր-

---

[24] *Л. К. Артамонов*, Северный Азербайджан, Тифлис, 1890, стр. 58.

[25] *М. Карнаухов*, Кавказ, Турция и Персия. Военно-статистические очерки. Тифлис, 1908, стр. 23.

[26] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 1024, лл. 12—12 об.

[27] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 1027, лл. 32 об—33.

պություն, ցեղային արյունակցական հիմքի վրա հիմնված կարգապահություն, բարձր մարտական ոգի և վաղուց ղինված են ժամանակակից զենքով, շահական կառավարությունը աշխատում էր նրանց անհնազանդության դեպքում խուսափել իր կանոնավոր զորքերի և այդ ռազմաշունչ հեծելազորայինների բախումներից։

Իրանում միակ մարտունակ և կարգապահ ռազմական ուժը, այսպես կոչված, պարսկական կազակային բրիգադն էր, որը 1879 թ. կազմակերպել էին ռուսները և գտնվում էր ռուսական սպաների հրամանատարության տակ։ Սակայն այն կատարում էր միայն արքունական պահակախմբի դեր և կոչված էր ճնշելու ներքին խռովություններն ու հակակառավարական ելույթները։

Ուսումնասիրելով իրանական բանակի վիճակը, ռուսական սպա Մ. Կարնաուխովը եզրակացնում է, որ այն «ի վիճակի չէ վարելու ռազմական գործողություններ»[28]։ Եվ իսկապես, երբ Թուրքական զորքերը գրավեցին Լահիջանը, շահական կառավարությունը ոչ միայն ի վիճակի չեղավ զավթիչների դեմ հանել զորքեր, այլև սահմանից հեռացրեց այնտեղ գտնվող ջոկատներին, վախենալով, որ նրանց նկատմամբ ձեռք բերած հեշտ հաղթանակով Թուրքերը «շահնշահին կդնեն ծիծաղելի դրության մեջ»[29]։

Սակայն Իրանի ներքին իրադրության կենտրոնական պրոբլեմը երկրի ֆինանսական սիստեմի ողբալի վիճակն էր։ XX դ. սկզբին պետական բյուջեն ուներ տարեկան մոտ երեք միլիոն թումանի հեղբված[30]։ Ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ պետական մեխանիզմը կարող էր գործել միայն արտաքին փոխառությունների օգնությամբ։ Դրա հետևանքով էլ ավելի էր ուժեղանում Իրանի կախվածությունը Անգլիայից և Ռուսաստանից, որոնք հնարավորություն էին ստանում միջամտելու այդ երկրի ներքին գործերին։ Իրանի տնտեսության մեջ հետամնաց ֆեոդալական հարաբերությունների տիրապետությունը, նրա միջնադարյան քաղաքական վարչակարգը, երկրի ֆեոդալական տրոհվածությունն ու խոշոր ֆեոդալների անջատողական ձգտումները, շահական իշխանու-

---

[28] *М. Карнаухов*, Кавказ, Турция и Персия, стр. 31.

[29] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 1027, л. 29.

[30] احمد کسروی، تاریخ مشروطهٔ ایران، چ۱، طهران، ۱۳۱۹، ص ۲۸۱

թյունների և նահանգապետների կամայականություններն ու բռնություները իրանական պետությունը դատապարտում էին հետագա անկման ու բայքայման։

Միանգամայն հասկանալի է, որ զաջարական պետության տընտեսական ու քաղաքական այսպիսի սուր ճգնաժամի պայմաններում Իրանի տերիտորիալ ամբողջականության ու ինքնուրույնության վրա կախվելու էր մեծագույն սպառնալիք։

Իրանում իր ագրեսիվ քաղաքականությունը իրագործելու ճանապարհին Թուրքիան որևէ դիմադրություն չէր տեսնում նաև մեծ պետությունների կողմից։ Թուրքական դիվանագիտության հարուստ փորձը հուշում էր, որ Անգլիան ու Գերմանիան անպայման շահագրգռված կլինեն Ռուսաստանի թուլացման մեջ, իսկ Գերմանիան արդեն մեկ տասնամյակից ավելի հանդես էր գալիս Աբդուլ Համիդի պանիսլամիստական ծրագրերը խրախուսողի դերում։

Բրիտանական կառավարությունը հենց սկզբից անտարբեր դիրք գրավեց Թուրքիայի ագրեսիվ նկրտումների նկատմամբ, համոզված լինելով, որ նրա հարվածը գերազանցապես ուղղված է Ռուսաստանի և Իրանում ռուսական ազդեցության դեմ։ Ֆորին Օֆիսը նույնիսկ հակված էր ենթադրելու, որ օսմանյան կառավարությունը փաստորեն օգնում է իրեն անդամալուծելու Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դիրքերը նրա «կենսական շահերի» գոտու շրջանում։ Բրիտանական դիվանագիտության կարծիքով Ռուսաստանը կարող էր շարժվել դեպի Միջագետք և Կովկասից երկաթուղային գիծ անցկացնել՝ Բաղդադի գծի հետ միանալու համար, միայն այդ գոտու վրայով[31]։

XX դ. սկզբին Անգլիայի շեշտված հակառուսական քաղաքականությունը պայմանավորված էր նրանով, որ նրա ախոյանը կայուն բույն էր դրել Հյուսիսային Իրանում, սկսել էր առաջնակարգ դեր խաղալ այդ երկրի շուկաներում և կրկնապատկել էր իր ազդեցությունը Իրանի ներքին գործերում։ Այսպես, եթե 1891 թ. ռուս-իրանական ապրանքափոխանակության ընդհանուր ծավալը չէր գերազանցում 22 միլիոն ռուբլուց, ապա 1902—1903 թթ. այն ավե-

[31] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009, л. 9 об.

չի քան կրկնապատկվել էր[32]։ Գնալով ուժեղանում էր նաև Ռուսաստանի ազդեցությունը Իրանի քաղաքական շրջանների, մանավանդ շահական կառավարության վրա։

Թուրք-իրանական կոնֆլիկտը բորբոքվելուց հետո անգլիական դիվանագիտությունն իր առջև խնդիր դրեց մեկուսացնել Ռուսաստանին այդ կոնֆլիկտին միջամտելուց, որպեսզի նա առիթ չդարձնի այն Իրանի քաղաքական շրջաններում իր հեղինակությունը բարձրացնելու համար։ Թեհրանում անգլիական գործերի հավատարմատարը խորհուրդ էր տալիս արտաքին գործերի մինիստր Մուշիր-էդ-Դոուլեին, որ «անհրաժեշտ է հույս դնել սեփական ուժերի վրա և եռանդուն դիմադրություն ցույց տալ Թուրքիային, քանի որ Ռուսաստանը ամբողջապես կլանված է իր ներքին գործերով և չի համարձակվի ակտիվորեն հանդես գալ Պարսկաստանի պաշտպանության օգտին»[33]։ Մյուս կողմից՝ բրիտանական կառավարող շրջանները աշխատում էին բորբոքել թուրք-իրանական հարաբերությունները Թուրքիայի ուշադրությունը արաբական գործերից շեղելու համար։ Այդ բանը կռահում էին նաև թուրքական դիվանագետները։ Թեհրանում Օսմանյան կայսրության դեսպանի կարծիքով Անգլիային շափազանց ձեռնտու կլիներ, եթե Թուրքիայի և Իրանի միջև պատերազմ ծագեր, որովհետև դա կհեշտացներ նրա զավթողական ծրագրերի իրագործումը Իրաքում[34]։ Բացի այդ, 1906 թ. հունվարին անգլիացիները միանգամայն անսպասելի կերպով զորքեր հանեցին Սինայի թերակղզու արևելյան ափի մոտ (Աքաբայում)։ Դա էլ ավելի սրեց Թուրքիայի և Եգիպտոսի միջև առանց այն էլ լարված հարաբերությունները։ Ըստ էության, դա նաև թուրք-անգլիական կոնֆլիկտ էր, որովհետև Եգիպտոսի թիկունքում կանգնած էր Անգլիան (հատկապես 1904 թ. Դելկասսեի պայմանագրով Ֆրանսիայի Եգիպտոսից հրաժարվելուց հետո)։ Ստամբուլի հրամանով անմիջապես թուրքական զորքեր ուղարկվեցին Աքաբայի ծովածոց. այնուհետև նրանք շարժվելով դեպի արև-

---

[32] *Б. Гурьев,* Торговля России с Персией и проект великого индийского пути. «Восточный сборник», кн. I, СПб., 1913, стр. 91.

[33] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 908, л. 36.

[34] АВПР, «Канцелярия МИД», 1906, д. 39, лл. 36—37.

մուտք՝ Սինայի թերակղզում գրավեցին մի քանի գյուղեր, որոնք հանդիսանում էին դեպի Սուեզ, Իսմայիլիա, Աքաբա և էլ-Արիշ տանող ճանապարհների հանգույցներ։ Աքաբայի շրջանը հայտարարվեց Հեջազի վիլայեթի մեջ մտնող թուրքական սանջակ[35]։

Թուրք-եգիպտական, հետևաբար նաև թուրք-անգլիական հարաբերությունների վատթարացմանը նպաստում էին նաև հետևյալ հանգամանքները. Եգիպտոսի հովանավորության տակ աղատ արաբական խալիֆաթի ստեղծման գաղափարի վերաբերյալ պանարաբական պրոպագանդան, Կահիրեից Սիրիայի վրայով ողջ Օսմանյան կայսրությունում հակակառավարական պրոկլամացիաների տարածումը. եգիպտական նավահանգիստներից գաղտնի ճանապարհով դեպի Եմեն, Ասիր և Հեջազ զենքի տեղափոխումը ու Աղենից Եմենի ապստամբներին ցույց տրվող բացահայտ աջակցությունը, և, վերջապես, 1905 թ. մայիսին Անգլիայի կողմից Քուվեյթի գրավումը[36]։

Լիբերալների կառավարությունը, որն ակտիվացրել էր Մեծ Բրիտանիայի զավթողական քաղաքականությունը Սուեզից արևելք ընկած երկրներում, հույս ուներ նաև թուրք-իրանական հարաբերությունների լարվածությունը ծառայեցնել Սեիստանից և Բելուջիստանից շահական կառավարության ուշադրությունը դեպի արևմուտք շեղելու համար։ Հայտնի է, որ նշված ժամանակաշրջանում անգլիական գնդապետ Մակ-Մահոնը Սեիստանում գլխավորում էր այսպես կոչված «սահմանազատման արշավախմբի» աշխատանքները, որի նպատակն էր իրանական տերիտորիայի հաշվին ընդարձակել աֆղանական էմիրի տիրապետությունները։ Արշավախմբի «գործունեության» շնորհիվ Սեիստանը զրկվեց իր տերիտորիայի նշանակալից մասից։ Ավելին, Արևելյան Իրանում Անգլիայի զավթողական քաղաքականությունն իրագործող մայոր Սայքսը պահանջեց ստուգել և վերանայել արևելյան իրանա-աֆղանական սահմանը Քյարիզից մինչև Բենդանա ընկած շրջանում։ Ընդ որում, Բրիտանական կառավարությունը իր այդ պահանջները հիմնավորում էր 1858 թ. Փարիզի տրակտատի 6-րդ հոդվածով, ըստ որի

---

[35] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, лл. 6—7.

[36] ЦГА ВМФ СССР, ф. 418, оп. 1, д. 4196, лл. 82 об—84 об.

Իրանի և Աֆղանստանի միջև սահմանային վեճ ծագելու դեպքում Իրանը պարտավոր էր դիմել Անգլիայի «բարի ծառայություններին», որի ընդունած վճիռներին շահական կառավարությունը պետք է անվերապահորեն ենթարկվեր[37]։

Բրիտանական արտաքին քաղաքականության ղեկավարների նման դիրքորոշումը Թուրք-իրանական հարաբերությունների նկատմամբ բացատրվում է նաև նրանով, որ անգլիացիները ցանկանում էին օգտագործել Թուրքական ինտերվենցիան իրանական հեղափոխությունը ճնշելու համար։

Այսպիսով, Թուրք-իրանական կոնֆլիկտի ցանկացած հետևանքները Թուրքական ինտերվենցիայի սկզբին ձեռնտու էին անգլիացիներին[38]։

Ստամբուլը այն կարծիքին էր, որ Գերմանիան ևս պետք է շահագրգռված լինի Իրանի նկատմամբ Թուրքական ագրեսիայով, որովհետև նա ոչ միայն իր «մեծ բարեկամն» էր, այլև այդ հնարավորություն կտար նրան թափանցել Արևմտյան Իրան, մանավանդ որ Գերմանիան մտադիր էր Արևմտյան Անատոլիայից Բաղդադի երկաթուղու ճյուղեր անցկացնել դեպի Իրան՝ Ուրմիայի և Լահիջանի, ինչպես նաև Քերմանշահի և Խանեկինի վրայով[39]։ Բացի այդ, Թուրքերին քաջ հայտնի էր, որ գերմանացիները մեծ հետաքրքրություն են դրսևորում իրանա-Թուրքական սահմանային շերտի, և առհասարակ Իրանական Ադրբեջանի ու Քրդստանի նկատմամբ, որը սակայն փակ էր նրանց առջև ռուսական դիմադրության շնորհիվ։ 1905 թ. սկսած Մոսուլում գերմանական փոխ-հյուպատոս Անդերսը սկսեց շրջագայել Թուրք-իրանական վիճելի գոտում, բազմիցս եղավ Իրանում և առհասարակ ուշադիր հետևում էր Թուրքիայի ագրեսիվ գործողություններին[40]։ Իսկ Բեռլինում ռուսական ռազմական գործակալը հաղորդում էր, որ Փոքր Ասիայում գերմանացիներն ունեն երեք խումբ քարտեզագիրներ, որոնք հանդիսանում են գլխավոր շտաբի սպաներ և ռուսական ու իրանական սահ-

---

[37] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 907, лл. 222 об—223.

[38] *М. С. Лазарев, նշվ. աշխ., էջ 122։*

[39] АВПР, ф. «Канцелярия МИД», 1906 г., д. 26, л. 166 об.

[40] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1020, л. 21 об.

մաններում կատարում են քարտեզագրական աշխատանքներ, վարում են ռազմա-հետախուզական ակտիվ գործունեություն և այլն[41]։

Այս բոլորը հիմք էր տալիս թուրքական դիվանագիտությանը և ռազմական շրջաններին ենթադրելու, որ Գերմանիան անվերապահորեն նեցուկ կհանդիսանա իր զավթողական ծրագրերին։ Սակայն այս կարգի դատողությունները սխալ դուրս եկան։ Եվ իսկապես, Թուրքիան դիմադրության հանդիպեց այն կողմից, որ ամենից քիչ էր սպասում։ Ստամբուլում գերմանական դեսպան Մարշալլ ֆոն Բիբերշտեյնը պահանջեց Աբդուլ Համիդից դադարեցնել իրանական տերիտորիաների զավթումը և կատարյալ գոհացում տալ Իրանին։ Այդպիսի անսպասելի քայլը «մեծ բարեկամի» կողմից վհատեցուցիչ տպավորություն գործեց Բ. Դոան վրա։ Ստամբուլը որոշեց գերմանական արդելքը հաղթահարելու համար խաղալ անգլո-գերմանական հակասությունների վրա։ Թուրքական դիվանագիտությունը խորհրդապահորեն հայտնեց Ստամբուլում անգլիական դեսպան Օ'Կոննորին, որ Գերմանիան մտադիր է առաջիկայում նոր կոնցեսիաներ ստանալ Բաղդադի երկաթուղու շրջանում և ածուխի պահեստ Պարսից ծոցի թուրքական ջրերում[42]։ Սակայն Անգլիայի ու Գերմանիայի միջև փոխադարձ անվստահություն սերմանելու միջոցով իրանական հարցում գործողություններ ազատություն ստանալու Բ. Դոան այդ քաղաքականությունը կատարելապես ձախողվեց, որովհետև բրիտանական կառավարությունը կռահեց Թուրքիայի այդ անկեղծության իսկական շարժառիթը։

Շուտով թուրք-իրանական կոնֆլիկտի հարցում Գերմանիան կողմերին առաջարկեց ընդունել իր միջնորդությունը այդ վեճը խաղաղ ճանապարհով լուծելու համար[43]։ Իր այդպիսի միջնորդության իրավունքը Գերմանիան հիմնավորում էր 1873 թ. Իրանի հետ կնքած «Բարեկամության, առևտրի և ծովագնացության մասին» պայմանագրի 18-րդ հոդվածով, որը, ինչպես նշվել է վերևում, գերմանացիներին իրավունք էր տալիս Իրանի վեճի կամ տարաձայնու-

---

[41] *М. С. Лазарев*, նշվ. աշխ., էջ 122—123։

[42] «Թուրք-պարսկական կոնֆլիկտը», «Մշակ», 26 հուլիսի, 1906 թ.։

[43] ЦГА ВМФ СССР, ф. 418, оп. 1, д. 4196, лл. 89—89 об.

թյան դեպքում երրորդ պետության հետ հանդես գալ միջնորդի դերում[44]։ Տվյալ դեպքում Գերմանիայի հաշտարարի դերում հանդես գալը կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով։ Նախ, Իրանում հայտնվելով համեմատաբար ուշ, գերմանական իմպերիալիզմը ստիպված էր միաժամանակ պայքարել և Անգլիայի և Ռուսաստանի դեմ՝ այդ երկրում «հավասար իրավունքներ» ստանալու, այլ կերպ ասած, Իրանի բնական հարստությունների շահագործման մեջ իր բաժինն ունենալու համար։ Հենց այդ նպատակով նա առաջ քաշեց «Իրանը անկախ երկիր է, և որպես այդպիսին պետք է բաց լինի բոլորի համար»[45] լոզունգը։ Սակայն տնտեսական տեսակետից բոլոր ազգերի «ազատության և հավասարության» վերաբերյալ գերմանական այդ քաղաքականությունը ևս չտվեց ցանկալի արդյունքներ, որովհետև նրա ամրապնդվելը Իրանում Անգլիայի և Ռուսաստանի կողմից դիտվում էր որպես անմիջական սպառնալիք իրենց շահերին ոչ միայն այդ երկրում, այլև ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքում։

Վերոհիշյալ պետությունների սահմանափակումները հաղթահարելու և կոնցեսիաներ ու տնտեսական բնույթի այլ արտոնություններ ստանալու նպատակով Գերմանիան որոշեց անմիջական կապերի մեջ մտնել շահական կառավարության հետ, շահել նրա համակրանքը և այն ծառայեցնել իր տնտեսական ու քաղաքական ծրագրերի իրագործմանը։ Իրանում Անգլիայի և Ռուսաստանի գերակշռող դիրքերին հակազդելու միտումով գերմանացիները սկսեցին Իրանի քաղաքական շրջաններում ագիտացիա մղել այն առումով, որ Գերմանիան տերիտորիալ տեսակետից հեռու է ընկած Իրանից և հետևաբար նրա նկատմամբ չի կարող ունենալ գաղութակալական նպատակներ։

1905 թ. վերջերից գերմանական իմպերիալիզմը Իրանում նետվեց նոր գրոհի։ «Դեյչե օրիենտբանկին» հաջողվեց իրանական մի շարք քաղաքներում հիմնել առևտրական գրասենյակներ, Համբուրգի ընկերությունները առևտրական կանոնավոր կապեր հաս-

---

[44] АВПР, ф. «Персидский стол», 1906 г., д. 908, лл. 207—209.

[45] *А. К. Фукс.* Германская политика в Персии, «Новый Восток», № 20—21, 1928, стр. 112.

տատեցին Բուշիրի, Լենգեի, Մոհամմերայի, Բասրայի և Բահրեյն կղզու հետ[46], Գերմանիան փորձեց ստանալ Համադան—Քարբալա երկաթուղու կոնցեսիան[47] և այլն։ 1906 թ. «Համբուրգ—Ամերիկա» գերմանական ծովային ընկերության գործունեությունը ավելի լարկ տվեց Գերմանիայի արդյունաբերական ապրանքների հոսքին դեպի Իրանի հարավային շրջանները։ Այդ ընկերության անօրեն Ա. Բալինը կարգադրել էր անել հնարավոր ամեն ինչ գերմանական ներմուծողների արտոնությունները ընդլայնելու համար։ Գերմանիան Պարսից ծոցում սկսեց ոչ միայն հաջողությամբ մրցակցել Անգլիայի հետ, այլև ծովային ճանապարհով ապրանքների փոխադրության ասպարեզում մղել նրան երկրորդ պլան[48]։

Գերմանական իմպերիալիզմը միաժամանակ սկսեց լրջորեն ուսումնասիրել Իրանի հարավային և հարավ-արևմտյան շրջանները։ Այդ նպատակով Շիրազում, Ահվազում, Մոհամմերայում և այլ քաղաքներում ուղևորություններ էին կատարում բազմաթիվ «զբոսաշրջիկներ», «հնագետ-գիտնականներ» և այլն[49]։ Մի շարք վայրերում հաստատվեցին գերմանական հոգևոր միսիաներ, որոնք առավելապես զբաղվում էին հետախուզական գործունեությամբ։ Իրանի հարավում գերմանացիների գործունեության ակտիվացումը ոչ միայն չէր հանդիպում շահական կառավարության դիմադրությանը, այլ հակառակը, արժանանում էր նրա խրախուսանքին։ Բացատրելով դրա պատճառները արտաքին գործերի մինիստր Նասրոլլա խան Մոշիր-էդ-Դոուլեն հայտնում է Թեհրանում ռուսական գործերի հավատարմատար Սոմովին, որ որքան շատ եվրոպական ծովային հաղորդակցության գծեր և առևտրական ֆակտորիաներ լինեն Բուշիրում և Պարսից ծոցի մյուս նավահանգիստներում, այնքան լավ Իրանի համար, որովհետև անգլիացիների յուրաքանչյուր գավթումը կամ բռնությունը կհանդիպի ոչ միայն Իրանի, այլև մյուս շահագրգռված պետությունների դիմադրությանը և բռ-

---

[46] ЦГИАЛ, ф. 560, д. 359, лл. 107—108.

[47] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 907, л. 219.

[48] Այդ մասին մանրամասն տե՛ս *Kurt Himer*, Geschichte der Hamburg-America Linie, Hamburg, 1927, t. II.

[49] АВПР, «Персидский стол», 1906, д. 907, лл. 176—177.

զոքներին[50]։ Իսկ աթաբեկ (պրեմիեր-մինիստր) Էյն-ուդ-Դոուլեն գտնում էր, որ, քանի Գերմանիան քաղաքական տասպարեզում հանդես է գալիս որպես Ռուսաստանի և Անգլիայի ախոյան, անհրաժեշտ է նրան տալ որոշ արտոնություններ[51]։

1905 թ., երբ ցարական կառավարությունը մերժեց Մոզաֆֆար-էդ-Դին շահի խնդրանքը նոր փոխառություն տրամադրելու վերաբերյալ և Անգլիան նույնպես չընդառաջեց այդ խնդրանքին, շահը դիմեց Գերմանիային, որպեսզի ելք գտնի վերահաս ֆինանսական կրախից դուրս գալու և հեղափոխության դեմ պայքարելու համար։ Գերմանական կառավարությունը, իհարկե, անմիջապես օգտվեց առիթից և 1905 թ. վերջին, 1906 թ. սկզբին Թեհրանում գերմանական գործերի հավատարմատար կոմս Ռեքսի և իրանական կառավարության միջև սկսվեցին համապատասխան բանակցություններ, որոնց արդյունքի մասին Փարիզից Նեկլյուդովը 1906 թ. մայիսի 31-ի հեռագրում հաղորդում էր, որ Գերմանիան շահի համար հաջողեցրեց 25 միլիոն մարկի փոխառություն[52]։

1905 թ. Մոզաֆֆեր-էդ-Դին շահը սկզբունքային համաձայնություն տվեց նաև Թեհրանում գերմանական բանկ հիմնելու վերաբերյալ։ 1906 թ. հուլիսի 1-ին Իրանում գերմանական գործերի ժամանակավոր հավատարմատար բարոն Ռիխտհոֆենին հաջողվեց արտաքին գործերի մինիստր Մոշիր-էդ-Դոուլեի հետ կնքել համաձայնագիր Թեհրանում գերմանական բանկ հիմնելու վերաբերյալ[53]։ Ռիխտհոֆենին հաջողվեց նաև Էյն-ուդ-Դոուլեին կաշառելով ստանալ Թեհրանում գերմանական ուսումնական հաստատություն բաց անելու իրավունք[54]։

---

50 Նույն տեղում, թթ. 177—177 հ.։

51 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 915, лл. 220—220 об.

52 *А. Попов*, Царская Россия и Персия в эпоху русско-японской войны, «Красный архив», № 53, 1932, стр. 31.

53 ЦГИАЛ, ф. 600, д. 345, лл. 14—15. Սակայն անգլո-ռուսական դիմադրության հետևանքով Գերմանիային չհաջողվեց այդ գործը գլուխ բերել։ Մյուս կողմից իրանական Մեջլիսը մտադիր լինելով ստեղծել իրանական ազգային բանկ հանդես էր գալիս ամեն տեսակի օտարերկրյա փոխառությունների և բանկային կոնցեսիաների դեմ (Տե՛ս А. Фукс, նշվ. աշխ., էջ 116)։

54 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 915, лл. 220—220 об.

Այս հաջողությունները ոգևորեցին գերմանական կառավարող շրջաններին, որոնք որոշեցին ավելի ակտիվացնել իրանական քաղաքականությունը։ Այդ առթիվ ֆրանսիական «La Memorial diplomatique» հանդեսը իր 1906 թ. ապրիլի 15-ի № 15-ում գրում էր. «Թուրքիայից բացի, մի այլ մահմեդական անկախ պետություն՝ Պարսկաստանը ևս սպասում է իր հերթին ներգրավվելու համար ակտիվ քաղաքական կյանքի մեջ, գերմանական եղեկիելի կենսատու շնչի ներքո»։

Ֆրիդրիխշտրասսեն ևս կանչեց Թեհրանում դեսպանորդ կոմս Ռեբսին պասսիվ քաղաքականություն վարելու համար և նրա փոխարեն նշանակեց Ստամբուլում գերմանական հյուպատոս Շտեմբրիխին, որին Բեռլինում ռուսական դեսպան Օստեն-Սակենը տալիս էր հետևյալ բնութագիրը. «Արևելքի լեզուներին ու քաղաքականությանը բաց գիտակ, եռանդուն ու արագ կարիերա ստեղծող գործիչ, Բաղդադի երկաթուղու համոզված կողմնակից և Վիլհելմ II-ի անձնական բարեկամ»[55]։

Նոր դեսպանորդը իր գործունեությունը սկսեց Անգլիայի և Ռուսաստանի նկատմամբ պրովոկացիոն քայլով։ Նա դեսպանատան առաջին բարտուղար բարոն Բիխտհոֆենի միջոցով մայրաքաղաքում սկսեց լուրեր տարածել, որ Ռուսաստանի և Անգլիայի միջև գնում են գաղտնի բանակցություններ Իրանում «կատարյալ համաձայնությամբ» հանդես գալու վերաբերյալ։ Դա Իրանի քաղաքական շրջանների վրա թողեց խորը ազդեցություն։ Լամզդորֆին ուղղված 1906 թ. ապրիլի 28-ի հաղորդագրության մեջ Թեհրանից Սոմովը գրում էր. «Բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի Գերմանիան ենթադրելով, որ միայն նա, շահագրգռված լինելով Բաղդադի երկաթուղու հարցով, ի վիճակի է փրկել Պարսկաստանը և արգելք հանդիսանալ հյուսիսում Ռուսաստանի՝ իսկ հարավում՝ Անգլիայի կողմից նախատեսվող զավթումներին»[56]։ Սոմովը անհանգստություն էր հայտնում, որ Գերմանիան առանց որևէ ջանքի, «օգտվելով իրանական կառավարության և քաղաքական շրջանների աջակ-

---

[55] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 907, л. 219.

[56] Նույն տեղում, թթ. 215—215 հ.։

ցությունից կարող է մանել Պարսկաստան և հանգիստ գրավել երրորդ ակտիվ պետության տեղը այդ երկրում»[57]։

Եվ այսպես, տվյալ էտապում Գերմանիան շահագրգռված էր իրանական կառավարության հետ իր փոխհարաբերություններում թույլ չտալ որևէ տհաճ դիպված, որը կարող էր կասկածի տակ դնել գերմանական գործի հաջողությունը Իրանում։ Հետևաբար թուրք-իրանական կոնֆլիկտում հաշտարարի դիրք բռնելու քաղաքականությունը Գերմանիային հնարավորություն էր տալու Իրանի կառավարող շրջանների մոտ շահել որոշակի քաղաքական կապիտալ։ Ելնելով այս նկատառումներից Բեռլինն աշխատում էր ազդել Ստամբուլի վրա, որպեսզի վերջինս Իրանի նկատմամբ իր քաղաքականության մեջ դրսևորի ավելի «չափավորություն»։

Գերմանական դիվանագիտությունը աշխատում էր կասեցնել Օսմանյան կայսրության քաղաքական ավանտյուրաները Իրանում վախենալով, որ դա կարող է Ռուսաստանի և Անգլիայի կողմից վճռական հակահարվածի տեղիք տալ։ Իսկ այդ բոլորովին ձեռնտու չէր Գերմանիային, մանավանդ որ նա զբաղված էր Մարոկկոյի ճգնաժամով։

Այդ պատճառով Ստամբուլում գերմանական դեսպան Մարշալլ ֆոն Բիբերշտեյնը կրկին առաջարկեց թուրքական կառավարությանը իրանական հարցում անել որոշ զիջումներ, պատճառաբանելով, որ թուրքական զավթումների հետևանքով Բաղդադի և Բասորի վիլայեթներում բնակվող շիիթ ազգաբնակչությունը կարող է տրամադրվել թուրքերի դեմ, որից չի հապաղի օգտվել Անգլիան Իրաքում իր դիրքերն ամրապնդելու համար[58]։

Ի պատասխան թուրքական կառավարությունը հայտարարեց, որ կընդունի Գերմանիայի առաջարկը միայն այն դեպքում, եթե նա ճանաչի Թուրքիայի իրավունքները Վեղնեի, Լահիջանի և սահմանամերձ մի շարք այլ կետերի նկատմամբ[59]։

Բ. Դոան այս հարցադրումը չթաքցված դժգոհությամբ ընդունվեց գերմանական արտաքին գործերի մինիստրության կողմից։

---

[57] Նույն տեղում, թ. 218։

[58] АВПР, ф. «Канцелярия МИД», 1906 г., д. 38, л. 291.

[59] ЦГВИА, ф. 2000, д. 310, л. 159.

Զինովևը 1906 թ. մայիսի 27-ի հեռագրով Ստամբուլից հաղորդում էր, որ գերմանական արտաքին գործերի մինիստր ֆոն Զիրսկին Բեռլինում թուրքական դեսպան Թևֆիկ փաշայի հետ ունեցած զրույցի ժամանակ հայտարարել է, թե նա հավանություն չի տալիս Իրանի հետ Թուրքիայի ունեցած սահմանային վեճին։ Մի քանի օր անց Զինովևը կրկին հաղորդում է, որ գերմանական կառավարությունը ճնշում է գործադրել Բ. Դոան վրա, պահանջելով կարգավորել թուրք-իրանական վեճը։ Մայիսի 31-ի հեռագրում ռուսական դեսպանը ամբողջությամբ բերում է ֆոն Զիրսկու հայտարարությունը Թևֆիկ փաշային. «Թուրքիան ավանտյուրաների է նետվում Պարսկաստանում և Աֆրիկայում, հաշվի չառնելով դրանց հետևանքները»։ Մինիստրը իր պարտքն է համարում զգուշացնել Բ. Դոանը. «Դուք չպետք է ոչ մի դեպքում հույս դնեք մեր օգնության վրա ձեր կողմից հարուցված հարցում։ Գերմանիայի աջակցությունը այս դեպքում վատ ծառայություն կլինի Թուրքիային և կհանգեցնի եվրոպական պատերազմի»[60]։

Գերմանական կառավարող շրջանների այս քաղաքականությունը որոշ չափով հիասթափեցրեց Բ. Դոանը, սակայն դա Թուրքիային չկանգնեցրեց Իրանում ագրեսիան շարունակելու իր քաղաքական գծից։ Սա անշուշտ վկայում էր այն մասին, որ Օսմանյան կայսրությունը Իրանի նկատմամբ իրագործում էր ագրեսիվ-զավթողական քաղաքականություն առանց կողմնակի թելադրանքի, միանգամայն ինքնուրույն կերպով։

Թուրքական դիվանագիտական և ռազմական շրջաններում սակայն, պարզ հասկանում էին, որ իրենց զավթողական քաղաքականության համար ստեղծված միջազգային-քաղաքական բարենպաստ իրավիճակը կարող է ժամանակավոր բնույթ կրել և համարյա համոզված էին, որ վաղ թե ուշ Ռուսաստանը և Անգլիան վճռականորեն հանդես կգան Իրանում իրենց տնտեսական և քաղաքական դիրքերը պաշտպանելու օգտին։ Այդ պատճառով Թուրքիան դերադասեց շտապել իր հարաբերությունները Գերմանիայի հետ և հանգստացնել նրան, խոստանալով ուղիներ որոնել կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծելու համար։

---

[60] А. К. Фукс, նշվ. աշխ., էջ 121։

Ցարական կառավարությունը հենց սկզբից պասսիվ դիրք գրավեց Իրանում Օսմանյան կայսրության ագրեսիվ ելույթների նկատմամբ։ Մեկնաբանելով դրա պատճառները, Վանում փոխհյուպատոս Տերմենը գրում էր. «Թուրքերը սկսեցին իրենց ագրեսիվ քաղաքականությունը... հույս դնելով Ռուսաստանի խաղաղասիրության վրա, հատկապես Ճապոնական պատերազմից հետո, և այն բանի վրա, որ զբաղված լինելով ներքին գործերով, Ռուսաստանը ուշադրություն չի դարձնի իր դեմ ուղղված թուրքերի մեքենայություններին»[61]։ Այսպիսով ռուսական դիվանագետը խոստովանում էր, որ հեռավորարևելյան ճգնաժամը և Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունները թույլ չեն տալիս Պետերբուրգին ակտիվ քաղաքականություն վարել Մերձավոր ու Միջին Արևելքում։ Թուրքական ագրեսիայի սկզբնական շրջանում, չցանկանալով սրել հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ, ցարական կառավարող շրջանները իրենց և իրենց ենթականերին սնում էին այն պատրանքներով, թե այդ բոլորը Ռուսաստանի շահերը շոշափում են անուղղակիորեն, հետևաբար, ոչ մի անհրաժեշտություն չկա ակտիվ միջամտության համար։ Բացի այդ, ցարական դիվանագետների մի մասը այն համոզմունքին էր, որ Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի թշնամական քաղաքականություն վարելը կնպաստի, որ Անգլիան ու Գերմանիան անմիջապես օգտվեն դրանից և Թուրքիայի օգնությամբ թուլացնեն Ռուսաստանի դիրքերը Մերձավոր ու Միջին Արևելքում։ Այսպես, Ռիզեում հյուպատոս Մաևսկին Կովկասյան զինվորական շտաբի գեներալ-կվարտիրմեյստեր Բերխմանին գրած 1906 թ. հունվարի 17-ի հաղորդագրության մեջ նշում էր, որ «...Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու համար պետք չէ նրա հետ կնքել ոչ դաշինքներ, ոչ կոնվենցիաներ, ոչ արտոնություններ և ոչ էլ համաձայնագրեր... Պետք է միայն նրան ձեռք չտալ։ Նա մեզ համար այնպիսի հարևան է, որից լավը նույնիսկ դժվար է պատկերացնել»[62]։

---

[61] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1020, л. 21 об.

[62] ЦГВИА, «Турция», ф. 450, оп. 1, д. 145, л. 4 об.

Ի տարբերություն այսպես մտածող դիվանագետների, կովկասյան իշխանությունները, որոնք ավելի հավաստի ու հարուստ տեղեկություններ ունեին Ռուսաստանի ու Իրանի նկատմամբ Օսմանյան կայսրության դիտավորությունների մասին, ավելի զգաստ էին նայում սահմանի մյուս կողմում ծավալվող իրադարձություններին։ Նրանց կարծիքով, նույնիսկ Թուրքիայի ռազմական միջոցառումները ուղղված էին ոչ այնքան Իրանի, որքան Ռուսաստանի դեմ։ Օսմանյան կառավարող շրջանների շովինիստական մտադրություններն արգելելու համար Կովկասի ռազմական շրջանի հրամանատարությունը իր 1906 թ. հունվարի 20-ի զեկուցագրում խորհուրդ էր տալիս գլխավոր շտաբին կովկասյան զորքերին բերել մարտական պատրաստության վիճակի[63]։

Շահական կառավարությունը ևս, իր թուլության հետևանքով անկարող լինելով իրական դիմադրություն ցույց տալ թուրքական ագրեսիային, ստիպված էր սահմանափակվել լոկ դիվանագիտական ելույթներով։ Ստամբուլում դեսպան Միրզա Ռիզա խանին հանձնարարվեց բողոքել Իրանի տերիտորիալ ամբողջականության նկատմամբ Օսմանյան կայսրության կոպիտ ոտնձգությունների դեմ։ Այնուհետև 1905 թ. դեկտեմբերին շահական արտաքին գործերի մինիստր Աթաբեկ Ազամը պաշտոնական նամակով դիմեց Թեհրանում թուրքական դեսպան Շեմսեդդին բեյին, պահանջելով բացատրություն։ Վերջինս, ըստ երևույթին, իր կառավարության կողմից տրված նախնական հրահանգի համաձայն պատասխանեց, որ «Վեղնեի և Լահիջանի վերաբերյալ գործը այն աստիճանի կարևոր չէ, որ ազդի հարևան պետությունների փոխհարաբերությունների վրա»։ Դեսպանը խոստանում էր, որ շուտով կոնֆլիկտը կկարգավորվի[64]։ Սակայն տեսնելով, որ խոստումը չի կատարվում, Աթաբեկ Ազամը կրկին ստիպված էր հարցում անել թուրքական դեսպանին, թե «ինչո՞ւ մինչև այժմ տեղի չունեցավ Պարսկաստան ներխուժած թուրքական զորքերի ետ կանչումը»[65]։ Այս անգամ արդեն Բ. Դուռը որոշեց փոխել իր տակտիկան և Շեմսեդդին բեյի միջոցով պրովո-

---

[63] ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, л. 131 об.

[64] АВПР, ф. «Персидский стол», 1905, д. 903, л. 262.

[65] Նույն տեղում, թ. 264։

կացիոն բնույթի հակամեղադրանք ներկայացրեց շահական կառավարությանը։ Թուրքական նոտայում ասվում էր, որ իբր Իրանը սահմանի մոտ կենտրոնացնում է կանոնավոր զորքեր և տարբեր ցեղերից բաղկացած զինված ջոկատներ, որպեսզի նրանք անցնեն սահմանը և թուրքական հողում կատարեն տերիտորիալ զավթումներ[66]։ Ի հավելումն դրա, Բ. Դուռը կարգադրեց իր դեսպանին հայտնել շահական կառավարությանը, որ Բայազեդի մոտ իրանական զորքերը իբր արդեն անցել են սահմանը և որ «եթե այդ շարժումը նպատակ ունի խախտել բարեկամական հարաբերությունները, ապա Թուրքիան չի հապաղի ձեռնարկելու համապատասխան հակամիջոցառումներ»։ Հեռագրի վերջում հանձնարարվում էր դեսպանին կտրուկ տոնով հայտնել շահական արտաքին գործերի մինիստրությանը, որ «եթե Պարսկաստանի անզիջող դիրքի հետևանքով տեղի ունենա որևէ միջադեպ, ապա դրա ողջ պատասխանատվությունը կընկնի իրանական կառավարության վրա»[67]։

Թուրք-իրանական դիվանագիտական այս մենամարտը տևեց երկու ամսից ավելի և, սակայն, ոչ մի շոշափելի օգուտ չբերեց շահական կառավարությանը։ Թուրքիան շարունակում էր համառորեն պաշտպանել իր «իրավունքները» զավթած տերիտորիաների նկատմամբ։ Ավելին, նա իր հարձակողական քաղաքականությունը ներկայացնում էր որպես այն տերիտորիաների վերադարձում, որոնց նկատմամբ իբր թե ունի պատմական իրավունքներ[68]։

Իրանում իր զավթողամոլական ծրագրերն իրագործելու համար որպես հարվածող ուժ Ստամբուլը լայնորեն սկսեց օգտագործել ինչպես համիդիե գնդերին, այնպես էլ Իրանի քրդական ցեղերին։ 1906 թ. գարնանից իրանական տերիտորիայում սկսեցին հայտնվել մեծ քանակությամբ թուրքական ագիտատորներ, որոնք աշխատում էին տարբեր խոստումներով քրդերին դրավել Թուրքիայի կողմը։ Թուրքական գործակալությունը առաջին հերթին աշ-

---

66 Նույն տեղում։

67 Նույն տեղում, թ. 266։

68 «Объезд оккупированных Турцией персидских округов русским и великобританским представителями Минорским и Шипле 8 июня—16 сентября 1911 г.», «Материалы по изучению Востока», 1915, вып. II, стр. 95.

խատանք ծավալեց այն ցեղերի շրջանում, որոնք նախապես հայտնի էին իրենց պրոթուրքական տրամադրություններով կամ թշնամական հարաբերությունների մեջ էին շահական իշխանությունների հետ։ Ագիտացիայի շնորհիվ իրենց հեծյալ ջոկատներով թուրքերի կողմն անցան այնպիսի ազդեցիկ քրդական ցեղապետներ, ինչպես մանգուր, փիրան, մամաշ ցեղերի առաջնորդներ Բայիզ աղան, Մամեդ էմին աղան, Համզե աղան և այլն[69]։ Նույն կերպ վարվեց նաև շեքքաք ցեղի առաջնորդներից Մուհամմեդ աղան, որը 1906 թ. սկզբին մեկնեց Ստամբուլ և խնդրեց սուլթանին իրեն և իր բոլոր ցեղակիցներին վերցնել թուրքական հովանավորության տակ։ Մայրաքաղաքում նրան ցույց տրվեց հանդիսավոր ընդունելություն։ Աբդուլ Համիդը նրան շնորհեց լիվայի (գեներալ-մայոր) կոչում և փաշայի տիտղոս ու անմիջապես ուղարկեց Իրան՝ սահմանամերձ շրջանների քրդերի մեջ պրոթուրքական ագիտացիա տանելու համար[70]։

Թուրքիայի կողմն անցած քրդական ցեղապետների միջոցով սուլթանական կառավարությունն աշխատում էր պայքարել այն ցեղերի ու ցեղախմբերի դեմ, որոնք հրաժարվում էին ընդունել թուրքական հովանավորությունը։ Այսպես. գրավելով Լահիջանը, թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը մամաշ ցեղի առաջնորդ Համզե աղային շնորհեց «ֆերմանդեի Լահիջան վե Սուլդուզ» (Լահիջանի և Սուլդուզի հրամանատար) տիտղոսը, որպեսզի նա պայքարի իրանական կառավարությանը հավատարիմ մնացած նույն ցեղի ազդեցիկ բեյերից մեկի՝ Քարանի աղայի դեմ։ Բացի այդ Քարանի աղայից բռնագրավվեցին 14 գյուղեր և հանձնվեցին Համզե աղային, որպեսզի վերջինս առմիշտ հավատարիմ մնա թուրքական իշխանություններին[71]։

Եթե քրդական ցեղային վերնախավը թուրքերի կողմն անցնելով ակնկալում էր զանազան պաշտոններ, արտոնություններ և այլն, ապա քրդական զանգվածները հույս ունեին ազատվել շահական իշխանությունների և սեփական խաների ֆեոդալական դաժան

---

[69] «Сведения, собранные драгоманом...», стр. 38—39.

[70] АВПР, ф. «Персидский стол», д. 1194, лл. 104—105, 131—133.

[71] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, л. 8.

շահագործումից։ Պարսկական կազակական բրիգադի հրահանգիչ կապիտան Ուշակովը, որը շրջագայել էր Քրդստանում, հայտնում էր այն կարծիքը, որ նահանգապետների գիշատիչ գործունեության և պարսկական իշխանությունների չարաշահումների հետևանքով համբերությունից դուրս եկած քրդական զանգվածները որոշել են կապերը խզել Իրանի հետ և ընդունել թուրքական հովանավորություն[72]։

Իրանական իշխանությունները, որոնց հայտնի դարձան քրդերի շրջանում տիրող տրամադրությունները, փոխանակ փորձելու համաձայնության գալ նրանց հետ, դիմեցին հալածանքների ու ահաբեկման տակտիկային։ Նրանք պահանջեցին, որպեսզի քրդերը ամենակարճ ժամկետում վճարեն իրենց ընթացիկ և նախկին տարիներից կուտակված հարկերը։ Իրանական իշխանությունների կողմից դա դիտվում էր որպես քաղաքական նշանակություն ունեցող քայլ, որի նպատակն էր շոշափել քրդերի տրամադրությունները և հիշեցնել նրանց, որ իրենք շահի հպատակներն են։ Արդյունքը եղավ այն, որ նույնիսկ այն ցեղերից շատերը, որոնք լոյալ վերաբերմունք ունեին շահական կառավարության նկատմամբ, սկսեցին խնդրագրեր ուղարկել Վանի վալի Թահիր փաշային, խնդրելով իրենց վերցնել թուրքական հովանավորության տակ[73]։ Այսպիսով, շահական կառավարությունը ոչ միայն ի վիճակի չէր թուրքական ագրեսիայի դեմ օգտագործել իրեն հպատակ մարտունակ և ռազմաշունչ քրդական ցեղերին, այլև իր անհեռատես քաղաքականության շնորհիվ վանում էր նրանց։

Քրդական ցեղերի թուրքերի կողմն անցնելու պատճառներից մեկն էլ այն էր, որ Թուրքիայի զավթողական քաղաքականության նկատմամբ կենտրոնական կառավարության պասսիվությունը նրանք համարեցին թուլության նշան։ Այդ առթիվ Վ. Մինորսկին նկատում է, որ «պարսկական զորքերի նկատմամբ քրդերը վերաբերվում են չթաքցված արհամարհանքով. և իսկապես, պետք է

---

[72] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 426, лл. 30, 34, 39.

[73] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009, л. 3 об; *М. А. Ардатов*, Турецко-персидский пограничный конфликт. «ИШКВО», 1907, № 21, 3-я треть, Тифлис, 1908, стр. 11—12.

համաձայնվել, որ սահման ուղարկված կիսամերկ, շուկայում առևտուր անող բաղցած սարբազները քրդերի վրա թողնելու են ամենաանպատշաստ տպավորությունը»[74]։ Շահական զինված ուժերի նկատմամբ նման վերաբերմունք ունեին ոչ միայն քրդերը, այլև սահմանամերձ շրջանների մյուս ազգությունները։ Այսպես, Սալմաստի ադրբեջանական բնակչությունը անընդհատ հեռագրում էր Թավրիզ, խնդրելով սարբազներ չուղարկել իրենց մոտ։ Ընդ որում դա պատճառաբանվում էր նրանով, որ շահական զինվորները խբտություն չեն գնում իրենց և ուրիշների գույքի միջև։ Նրանք խնդրում էին զորքեր ուղարկելու փոխարեն տեղական ադրբեջանական բնակչությանը և հայերին տրամադրել զենք, համատեղ ուժերով պաշտպանվելու համար քրդական հարձակումներից[75]։

Ստամբուլը իր գործակալության միջոցով աշխատում էր իր կողմն անցած քրդերի կրոնական ֆանատիզմն ուղղել հատկապես սահմանամերձ շրջանների քրիստոնյա բնակչության դեմ։ Ուրմիայի, Սալմաստի և մի շարք այլ շրջաններում սկսվեցին հայերի և ասորիների կոտորածներ[76]։ Այդ ջարդերը լայն չափեր ընդունեցին 1906 թ. գարնանից, երբ ասպատակություններին ու ջարդերին սկսեցին մասնակցել նաև Թուրքիայից եկած համիդիե ջոկատները։ Քրիստոնյա բնակչության դեմ կազմակերպած գազանություններով աչքի էր ընկնում հատկապես մաղրիբ ցեղի առաջնորդ Շարաֆ աղան[77]։

Իրանում թուրքական գործակալության գործունեությունը աստիճանաբար դուրս էր գալիս սահմանամերձ գոտու շրջաններից, ընդունելով առավել լայն թափ ու ծավալ։ Թեհրանում ռուսական գործերի հավատարմատար Ա. Սոմովը 1906 թ. գարնանը հաղորդում էր Պետերբուրգ, որ երկրի տարբեր շրջաններում և նույնիսկ մայրաքաղաքում գնալով ուժեղանում է պանիսլամիստական պրոպագանդան։ «Թուրքական գործակալները,— գրում էր նա,— հայտարարում են խալիֆ-սուլթանի գլխավորությամբ միասնական մեծ

---

[74] «Сведения, собранные драгоманом...», стр. 42.

[75] «Тифлисский листок», 4 августа 1905 г.

[76] «Тифлисский листок», 19 июля 1905 г.

[77] «Тифлисский листок», 7 июня 1906 г.

մահմեդական պետություն ստեղծելու անհրաժեշտության մասին, որի կազմի մեջ պետք է մտնեն Թուրքիան, Պարսկաստանը, Կովկասը և Թուրքեստանը»[78]։ Թեհրանում ակտիվ գործունեություն էր ծավալել հայտնի պանիսլամիստ, թուրքական դեսպան Շեմսեդդին բեյը։ Նրան հաջողվել էր կապեր հաստատել իրանական բարձր հոգևորականության մի շարք ներկայացուցիչների՝ հատկապես ազդեցիկ մուշտեհիդների հետ և հորդորել նրանց հեռագրել սուլթանին, որ իրենք ճանաչում են նրան որպես «ուղղափառ մահմեդականների գերագույն պաշտպանի»։ Իրանական կառավարությունը ստիպված էր հեռացնել նրան երկրից որպես անցանկալի անձ (persona non grata) և մեղադրելով Իրանի նկատմամբ անլսելի արարքների և սահմանային հարցում իրանական կառավարության նկատմամբ անհաշտ դիրք ունենալու մեջ[79]։ Թուրքական դեսպանատանը հաջողվեց նույնիսկ կաշառել մի շարք իրանական թերթերի և նրանց միջոցով քարոզել պանիսլամիստական գաղափարներ։ Այդ թերթերը կատաղի հարձակումներ էին գործում Ռուսաստանի ու Անգլիայի դեմ և կոչ անում Իրանին միանալ Թուրքիայի հետ[80]։ Միաժամանակ թուրքերի ներշնչումով իրանական պանիսլամիստական ուղղության թերթերը հանդես էին գալիս հայերի մասին ստահոդ և թունավոր հոդվածներով, աշխատելով հրահրել հայկական ջարդեր։ Ճգնելով կառավարության աչքում հայերին մեղադրել քաղաքական անբարեհուսության մեջ, մի շարք թերթեր գրում էին, թե իբր հայերը Իրանում ունեն անջատվողական ձգտումներ և ցանկանում են Իրանական Ադրբեջանը միացնել իրենց ապագա անկախ պետությանը[81]։ Ջարդերի սպառնալիքը կանխելու համար Կովկասի և Իրանի հայկական մամուլը տպագրում էր մեծ քանակությամբ հոդվածներ, որոնցում բացահայտվում էին հակահայկական պրոպագանդայի բուն պատճառները։ Միաժամանակ հայերը Իրանական Ադրբեջանում ստիպված էին կազմակերպել ինքնապաշտպանության ջոկատներ։

---

78 АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 907, лл. 173—175.

79 Նույն տեղում, թթ. 51—53։

80 «Մշակ», 15 հունիսի 1906 թ., էջ 3—4։

81 «Մշակ», 21 ապրիլի 1906 թ., էջ 3։

Համոզված լինելով, որ ցարական Ռուսաստանը, հակառակ իր ներքին անկայուն վիճակի և հեռավորարևելյան ճգնաժամի, այնուամենայնիվ չի կարող անտարբեր դիրք բռնել Իրանում Թուրքիայի քաղաքական ոտնձգությունների ու տերիտորիալ բռնի հափշտակումների նկատմամբ, շահական կառավարությունը շարունակում էր անընդհատ դիմումներ կատարել նրան, խնդրելով պաշտպանել Իրանի տերիտորիալ անձեռնմխելիությունը[82]։ Ռուս-ճապոնական պատերազմից հետո, երբ Ռուսաստանը կրկին հնարավորություն էր ստացել ակտիվացնել իր քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում, Պետերբուրգում որոշվեց գեթ դիվանագիտական առաջադրություններով սահմանափակել Թուրքական ախորժակը։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը Ստամբուլում իր դեսպանի միջոցով պահանջեց անհապաղ դադարեցնել իրանական տերիտորիաների զավթումը։ Միաժամանակ հանձնարարվեց Թեհրանում դեսպանորդ Ն. Գարտվիգին հասկացնել շահական կառավարությանը, որ վերջինս խուսափի Թուրքական զորքերի հետ ռազմական բախումից, որը կարող էր ունենալ առավել վտանգավոր հետևանքներ իրանական պետության համար[83]։ Այդ հարցի առթիվ շահական պալատում կայացած հատուկ խորհրդակցության ժամանակ Գորտվիգը հայտարարում է, թե նկատի ունենալով այն հանգամանքը, որ շահական կառավարությունը իր տրամադրության տակ չունի ոչ բանակ և ոչ էլ ֆինանսական միջոցներ, փոքրաթիվ ռազմական ուժերի ուղարկումը սահման, այնտեղ կենտրոնացված Թուրքական զորքերի դեմ, ոչ մի օգուտ չի բերի։ «Մինչդեռ,—շարունակում է նա,—երկու հակառակորդների միջև ամենափոքր բախման իսկ դեպքում Թուրքերը չեն հապաղի, որպեսզի Պարսկաստանի դեմ սկսեն ձևական ռազմական գործողություններ, որի վերաբերյալ ըստ երևույթին արդեն վաղուց պնդում է 6-րդ Թուրքական բանակային կորպուսի հրամանատարը»[84]։

---

[82] АВПР, ф. «Персидский стол», 1905, д. 903, л. 262; ф. «Персидский стол», 1906, д. 909 лл. 35—35 об.

[83] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 909, л. 65.

[84] Նույն տեղում, թ. 65 հ.։

Առաջնորդվելով այս հրահանգով, շահական կառավարությունը, որը առանց այն էլ ոչ մի զինված դիմադրության փորձ չէր կատարել թուրքական ագրեսիայի դեմ, խստիվ արգելեց սահմանամերձ շրջանների ատիճանավորներին և անկանոն զորքերի հրամանատարներին ռազմական բախման մեջ մտնել թուրքերի հետ։ Վ. Մինորսկին հաղորդում էր, օրինակ, որ թեև Սուջբուլաղի նահանգապետ Ռաշիդ-ուլ-Մուլքը կառավարությունից պահանջում էր թույլտվություն թուրքական զորքերին զինված հակահարված տալու համար, իր պահանջը հիմնավորելով նրանով, որ շարիաթական իրավունքը թույլ է տալիս կազմակերպել ինքնապաշտպանություն (դեֆա), սակայն Թեհրանը վճռականորեն արգելեց նրան դիմելու այդ քայլին[85]։

Ի վերջո Ռուսաստանի ակտիվ դիվանագիտական ճնշման հետևանքով Բ. Դուռը ստիպված էր համաձայնվել թուրք-իրանական սահմանային հանձնաժողով կազմելու ռուսական առաջարկի հետ։ Օսմանյան կայսրության կողմից այդ հանձնաժողովի կոմիսար նշանակվեց Ահմեդ փաշան, որը, սակայն, ինչ-որ պատճառներով ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին։ Նրա փոխարեն նշանակվեց գլխավոր շտաբի սպա Ֆերիկ Զեքի փաշան։ Հանձնաժողովի կազմում նշանակվեցին նաև 8-րդ դիվիզիայի շտաբի պետ մայոր Հյուսամեդդինը և գլխավոր շտաբի երկու սպաներ։ Հանձնաժողովի գործունեության ընթացքում սահմանների պաշտպանության պարտականությունը դրվեց 8-րդ դիվիզիայի հրամանատար Ֆերիկ Մահմուդ փաշայի վրա։

Իրանական կողմից սահմանազատիչ հանձնաժողովի կոմիսար նշանակվեց Էհթեշամ-օս-Սալթանեն։

Զեքի փաշան երկար ժամանակ խուսափում էր հանդիպել իրանական կոմիսարի հետ։ Ստամբուլի հանձնարարությամբ նա մի քանի ամիս շարունակ շրջում էր սահմանամերձ գոտում, հանդիպում թուրքական զորքերի հրամանատարների հետ, կատարում այդ գոտու քարտեզահանման աշխատանքներ և այլն[86]։ Միայն Թուրքիայում ռուսական ու անգլիական դեսպանների կտրուկ առա-

---

[85] «Сведения, собранные драгоманом...», стр. 42.

[86] Նույն տեղում, էջ 11։

ջադրություններից հետո Բ. Դուրը հրամայեց նրան հանդիպել իրանական կոմիսարի հետ[87]։

1906 թ. օգոստոսին, սկզբում Սուլդուզում և ապա Մոսուլում թուրքական և իրանական պատգամավորների միջև սկսվեցին բանակցություններ։ Հանձնաժողովի հենց առաջին նիստում Զեքի փաշան հայտարարեց, որ Թուրքիան պատմական իրավունքներ ունի Լահիջանի, Վեղնեի և Փեսվեի նկատմամբ[88]։ Բանակցությունների ընթացքի վերաբերյալ արտաքին գործերի մինիստր Իզվոլսկուն գրած հաղորդագրության մեջ Գարտվիգը հայտնում էր, որ «Զեքի փաշան վարում էր այնպիսի քաղաքականություն, որը վկայում է գործը խզելու թուրքերի մտադրությունների մասին, համոզված լինելով, որ Պարսկաստանը ի վիճակի չէ ուժով պաշտպանել իր տիրապետությունների անձեռնմխելիությունը։ Օտտոմանյան կոմիսարները,—շարունակում էր նա,—որոնց աջակցում էր թուրքական ջոկատների հրամանատար Մահմուդ փաշան, ծայրահեղ վրդովեցուցիչ տոն էին ընդունել պարսկական պատգամավորի նկատմամբ, միաժամանակ նրան հասկացնելով, որ ոչ մի նշանակություն չեն տալիս ներկա բանակցություններին, որովհետև հարցը լուծվելու է ուժի օգնությամբ»[89]։

Թուրքական հանձնաժողովի նման դիրքորոշումը խրախուսվում էր Բ. Դուան և անձամբ սուլթանի կողմից։ Այդ առթիվ Ստամբուլում իրանական դեսպան Արֆա-ուդ-Դոուլեն հաղորդում էր, որ թուրքական սահմանային կոմիսարը հրահանգներ է ստանում ոչ թե արտաքին գործերի մինիստրից, այլ անձամբ Աբդուլ Համիդից[90]։

Օսմանյան պատգամավորների կողմից նշված սահմանը և այսպես կոչված Մոսուլի նախագիծը չընդունվեց Թեհրանի կողմից, որովհետև նրանցում բացահայտ ձևով ոտնահարվում էին Իրանի իրավունքները[91]։

---

[87] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 909, лл. 64—64 об.

[88] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 908, лл. 138—139 об, 232—232 об.

[89] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 909, лл. 28—28 об.

[90] АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 908, лл. 34 об—35.

[91] «Турецко-персидская граница. Донесения российского императорского комиссара по турецко-персидскому разграничению В. Ф. Минорского в 1914», «Материалы по изучению Востока», вып. 2, Пг., 1915, стр. 512—516.

Միանգամայն պարզ էր, որ Թուրքիան միտումնավոր ձախողում է հանձնաժողովի աշխատանքները, առաջադրելով այնպիսի պայմաններ, որոնք չէին կարող ընդունվել իր տերիտորիալ ամբողջականությունը հարգող պետության կողմից։

Այդ պատճառով շահական կառավարությունը գտավ, որ հետագա բանակցությունների վարումը միանգամայն անիմաստ է և որոշեց սպասել Ստամբուլում Ռուսաստանի, մասամբ նաև Անգլիայի առաջադրությունների հետևանքին։

Այս պայմաններում Ռուսաստանի համար ստեղծվեց դժվարին իրավիճակ։ Թուրքական կառավարությունը ոչ միայն կտրականապես հրաժարվում էր իր զորքերը դուրս բերել զավթած տերիտորիաներից, այլև 1906 թ. առաջին կեսի ընթացքում շարունակում էր նոր զորքեր կենտրոնացնել իրանական սահմանների մոտ։ Հունիսին Մոսուլից դեպի սահման շարժվեց նիզամի 8 հետևակային գունդ և յոթ քրդական համիդիե գնդեր։ Ընդ որում, Մոսուլում կազմակերպվել էր հատուկ մատակարարման բաժին, որը զբաղվելու էր էքսպեդիցիոն զորքերի սպասարկման հարցերով[92]։ Թուրքական գլխավոր շտաբի սպաները տենդագին շարունակում էին սահմանային շերտի քարտեզահանման աշխատանքները[93]։ Բոլոր նշաններից երևում էր, որ թուրքական զինված ուժերը մտադիր են շարժվել ստրատեգիական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող Ուրմիայի շրջանի ուղղությամբ[94]։ Ստամբուլից ստացվող հաղորդումների համաձայն սուլթանը նույնիսկ մտածում էր պատերազմ սկսել Իրանի դեմ «համոզված լինելով, որ ինքը հաղթող դուրս կգա և կբարձրացնի իր հեղինակությունը»[95]։

Նման պայմաններում ռուսական կառավարող շրջանների առջև հարց էր առաջանում, թե այսուհետև ինչպիսի՞ միջոցների պետք է դիմի Ռուսաստանը։ Դա, իսկապես, բարդ խնդիր էր, որովհետև Թուրքիայի նկատմամբ դիվանագիտական ներգործության ձախողման դեպքում հնարավոր էր ազդել նրա վրա միայն զենքի ուժով, մինչդեռ, ինչպես նկատում էր Ստամբուլում ռուսական ռազմա-ծովա-

---

92 АВПР, ф. «Персидский стол», 1906, д. 908, лл. 54—55.

93 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 1003, л. 5.

94 *М. Арватов*, Турецко-персидский пограничный конфликт, стр. 12.

95 ЦГА ВМФ СССР, ф. 418, оп. I, д. 4196, л. 88 об.

յին ուժերի ներկայացուցիչը, «Ռուսաստանը դժվար թե ցանկանար և նույնիսկ ի վիճակի լիներ Կովկասում մոբիլիզացնել զորքեր իր պահանջները պաշտպանելու համար։ Մյուս կողմից,—շարունակում էր նա,—Ռուսաստանի համար միանգամայն անցանկալի է թողնել Անգլիային, որ նա մենակ լուծի այդ հարցը»[96]։

Թուրքական ագրեսիայի ակտիվացումը Իրանում և զորքերի կենտրոնացումը ռուսական սահմանների մոտ լուրջ տագնապներ էր առաջ բերում հատկապես Կովկասյան ռազմական իշխանությունների մոտ, որովհետև նույնիսկ կասկածներ կային, որ շուտով կարող է բռնկել ռուս-թուրքական պատերազմ։ Անակնկալի չգալու համար Կովկասի ռազմական շրջանի շտաբը որոշեց ձեռնարկել որոշ միջոցառումներ։ Պատերազմի դեպքում ռազմական գործողությունների հնարավոր թատերաբեմի բնակչության աջակցությունը ստանալու նպատակով 1906 թ. ամռանը հանձնարարվեց Վանում ռուսական փոխ-հյուպատոս Ն. Ս. Տերմենին ուղևորություն կատարել Հեքյարիի սանջակում, պարզելու համար, թե Թուրքիայի հետ պատերազմի դեպքում որքանով Ռուսաստանը կարող է հույս դնել տեղական քրիստոնյա բնակչության աջակցության վրա և որքանով բրդերը հավատարիմ կլինեն Թուրքիային։

Այդ ուղևորության հետևանքով փոխ-հյուպատոսը հանգեց հետևյալ եզրակացությունների. ասորիները համակրանքով են լցված Ռուսաստանի նկատմամբ, առաջնորդվելով այն գիտակցությամբ, որ «միայն Ռուսաստանը կարող է փրկել ասորիներին անեծանելի վիճակից»[97]։ Ասորիների հոգևոր առաջնորդ Մարշիմունի հետ զրույցի ժամանակ Տերմենի այն հարցին, թե նա ի վիճակի է արդյոք Թուրքիայի հետ Ռուսաստանի պատերազմի դեպքում զորքեր հանել վերջինիս օգնելու նպատակով, Մարշիմունը պատասխանում է. «Եթե Ռուսաստանը իր զորքերով գրավի Վանը և զենք տա նեստորականներին (ասորիներին—Վ. Բ.), ապա ինքը երաշխավորում է, որ հենց այժմ կարող է հանել 40 հազարանոց բանակ, որից 20 հազարը՝ լեռների պաշտպանության և 20 հազարը՝ ռազմական գործողությունների թատերաբեմի այլ շրջաններում գործելու համար. որ նա Մոսուլից մինչև Բիթլիս և մինչև պարսկական սահմանը

[96] Նույն տեղում, էջ. 89—90։

[97] ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 1003, лл. 90—91 об.

հեշտությամբ կարող է ենթարկել իրեն և ինքը պատրաստ է այդ ամբողջը գրավել Ռուսաստանի համար»[98]։

Ինչ վերաբերում է քրդերին, ապա Տերմենի կարծիքով «գոյություն ունի քրդերի համընդհանուր դժգոհություն թուրքական կառավարությունից։ Նրանցից շատերը սիրով կընդունեն ռուսական հպատակություն կամ Ռուսաստանի հովանավորությունը[99]։

* * *

1906 թ. ամռանը հեղափոխական շարժումն Իրանում գնալով ընդունում էր ավելի հուժկու թափ։ Ռեակցիան այլևս անկարող էր դիմադրավել սահմանադրական շարժմանը։ 1906 թ. օգոստոսի 5-ին շահը ստիպված էր հրապարակել հրամանագիր սահմանադրություն ընդունելու մասին, իսկ օգոստոսի 19-ին հայտարարվեց իրանական առաջին պառլամենտի՝ Մեջլիսի հիմնադրման մասին։ Նույն թվականի դեկտեմբերի 30-ին մահամերձ Մոզաֆֆեր-էդ-Դին շահը ստորագրեց սահմանադրության հիմնական օրենքը[100]։

Իրանում տեղի ունեցող հեղափոխական բուռն իրադարձությունները խուճապ առաջացրին Օսմանյան կայսրության կառավարող շրջաններում։ Հեղափոխական ալիքը հուժկու թափով Ռուսաստանից և Իրանից թափանցում էր Թուրքիա։ Կայսրության արևելյան շրջաններում, հատկապես Արևմտյան Հայաստանում, տեղի էին ունենում գյուղացիական բուռն հուզումներ։ Զինովևը Ստամբուլից հաղորդում էր, որ Կովկասի հեղափոխական շարժումները մեծ արձագանք են գտել Էրզրումի վիլայեթում, որտեղ մահմեդական բնակչության տարբեր խավերից կազմակերպվել է «Ջան վերիր» անունով մի կոմիտե, որը պայքարում է տեղական իշխանությունների և օսմանյան կառավարության դեմ[101]։ Այդ կոմիտեի պրոպագանդան նույնիսկ թափանցել էր թուրքական բանակի շարքերը։ Զորքերը հրաժարվեցին ապստամբների վրա կրակ բաց անել, հայտարարելով, որ իրենք «պատրաստ են կյանքի գնով պաշտպա-

---

98 Նույն տեղում, թթ. 92—93։

99 Նույն տեղում։

100 *М. С. Иванов*, Иранская революция 1905—1911 гг., стр. 104.

101 ЦГВИА, ф. 2000, оп. I, д. 1002, лл. 136—136 об.

նելու հայրենիքը, բայց իրենց եղբայրների վրա չեն կարող զենք բարձրացնել»[102]։

Թեև կառավարությունը փորձեց թուրք և այլազգի ապստամբ ժողովուրդների միջև պառակտում առաջացնել, քրդերին ու թուրքերին հրահրել հայերի դեմ, սակայն ոչինչ չստացվեց, որովհետև մահմեդականները հայտարարեցին, որ իրենք գործում են միանգամայն ինքնուրույն կերպով[103]։

Սուլթանական կառավարությանը առանձնապես ահաբեկում էր այն, որ հարևան երկրում սահմանադրության հաղթանակի հետևանքով միապետական վարչակարգի հիմքերի խարխլումը կարող էր ամրապնդել նաև Թուրքիայում սահմանադրության բոլոր կողմնակիցների, այդ թվում նաև երիտթուրքերի դիրքերը և նպաստել Իրանի և Օսմանյան կայսրության հեղափոխական շրջանների միջև կապի հաստատմանը։ Այդ վտանգը խիստ շոշափելի էր, մանավանդ, որ Իրանում սահմանադրության հաղթանակից հետո Օսմանյան կայսրությունում և արտասահմանում գործող երիտթուրքական կոմիտեները այդ ուղղությամբ կատարում էին որոշակի քայլեր։ Բացի այդ, նրանք ուժգին պայքար ծավալեցին Աբդուլ Համիդի դեմ, աշխատելով համոզել կայսրության բոլոր ժողովուրդներին, որ սուլթանը և նրա կառավարությունը քաղաքականապես լրիվ սնանկացել են։ «Իթթիհադ վե Թերաքիի» Փարիզի կենտրոնը հեռագրեր էր հղում Իրանի պրեմիեր-մինիստրի, Մեջլիսի, Ստամբուլի և Փարիզի իրանական դեսպանությունների հասցեով, որոնց մեջ նա բացահայտում էր իր հայացքներն ու տեսակետները իրանական հեղափոխության նկատմամբ և միաժամանակ ցույց էր տալիս իթթիհադի վերաբերմունքը դեպի թուրքական ագրեսիան։ Հեռագրերում նշվում էր, որ «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեն խորապես ցավում է Թուրքիայի և Իրանի միջև ծագած բախումների առթիվ։ Որ «Համիդյան բռնակալական կառավարությունից, որը ջանում է բռնության ստրուկը դարձնել ողջ Օսմանյան կայսրությունը, ավելին չի էլ կարելի սպասել։ Մի սուլթան, որը գութ և կարեկցություն չունի իր հպատակների, իր ժողովրդի նկատմամբ, միթե՞ կարող է հարգել իր հարևանին»։ Հատկանշական է, որ այդ

[102] АВПР, ф. «Политархив», д. 1642, л. 35.
[103] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, лл. 136—136 об.

հեռագրերում միաժամանակ կոչ էր արվում իրանական կառավարությանը դրսևորել խոհեմություն և իմաստուն հեռատեսություն, չհենվել Ռուսաստանի վրա ու չառաջնորդվել նրա խորհուրդներով[104]։ Թավրիզի «Ազգային խորհրդին» («Անջումանե մելլի») ուղղված ուղերձներում իթթիհադը հետևողականորեն առաջ էր քաշում այն միտքը, որ թուրք-իրանական կոնֆլիկտի միակ պատճառը աբդուլ-համիդյան բռնատիրությունն է և երբ Օսմանյան կայսրությունում ևս հաստատվեն սահմանադրական կարգեր, երկու երկրների միջև կստեղծվի «անսասան բարեկամություն»[105]։

Երիտթուրքերը հատկապես եռանդուն գործունեություն ծավալեցին սուլթանին զրկելու համար նրա ամենահզոր զենքից՝ համայն աշխարհի մահմեդականներին հովանավորողի և համիսլամության գաղափարախոսության մարմնացումը հանդիսանալու լուսապսակից։ Այսպես, Եգիպտոսում հրապարակվող երիտթուրքական ուղղության «Ալ-Մենիր» թերթը իրանական սահմանադրությանը նվիրված ընդարձակ հոդվածում հայտարարում էր, որ «այսուհետև իսլամի հովանավորող և մահմեդականների պաշտպան պետք է համարվի իրանական շահը, որովհետև իր պետության մեջ առաջինը նա իրագործեց մեծ հեղաշրջումը, իր ժողովրդին շնորհելով սահմանադրության բարիքները»[106]։ Այս հոդվածին անմիջապես արձագանքեց Կալկաթայում հրատարակվող իրանական «Հաբլ-ուլ-մաթին» թերթը, որի կարծիքով «արդի պայմաններում Թուրքիան այլևս ի վիճակի չէ իրագործել պանիսլամիզմի գաղափարները»[107]։

Երիտթուրքական մի շարք թերթեր («Ենի-ֆիքր», «Շուրայի ումմեթ», «Սանջակ» և այլն) սուլթանական կառավարության արտաքին քաղաքականությունը քննադատելու և առհասարակ Աբդուլ Համիդին վարկաբեկելու նպատակով լայնորեն սկսեցին օգտագործել Իրանի նկատմամբ կիրառվող զավթողական քաղաքականության փաստը։ Այդ թերթերը ուղղակի գրում էին, որ Իրանից իր տիրապետության սահմանները ազատագրական գաղափարների

---

104 *Yusub Hikmet Bayur*, Türk inkilabi Tarihi, Cilt II, Kisim IV, Ankara, 1952, S. 98—99.

105 *Նույն տեղում, էջ 100։*

106 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 47, л. 65.

107 *Նույն տեղում, թ. 65 հ.։*

թափանցումը արգելակելու համար սուլթանը ձեռնամուխ է եղել հակահեղափոխական ինտերվենցիայի։ «Ի հեճուկս սուլթանի,— գրում էր «Մանչակ» թերթը,—մենք պետք է հաստատենք, որ բոլոր գիտակից թուրքերը տվյալ մոմենտին մեծագույն բերկրանքով իրենց հայացքներն ուղղում են դեպի Թեհրան և սրտի հաճախակի բաբախումներով ունկնդրում պարսկական Մեջլիսի հռետորների ճառերը»[108]։

Ավելի ուշ, 1907 թ. օգոստոսի 23-ին երիտթուրքական «Ստամբուլ» թերթում լույս տեսավ մի հոդված, որտեղ ավելի հանգամանորեն էին շարադրվում թուրքական ինտերվենցիայի դրդապատճառները և այդ հարցի կապակցությամբ երիտթուրքերի տեսակետը։ Հոդվածում բերվում էին փաստեր, որ դեռևս XIX դ. 90-ական թվականներին Ելդզ-Քյոշքից Աբդուլ Համիդը «բարեկամական» նամակներ էր ուղարկում Նասր-էդ-Դին շահին, իսկ ապա նաև Մոզաֆֆար-էդ-Դին շահին, առաջարկելով նրանց համատեղ ուժերով ջախջախել ժողովրդական շարժումներն Իրանում։ Այժմ Աբդուլ Համիդը օգտագործելով թուրք-իրանական սահմանային կոնֆլիկտը, որոշել է ջախջախել հեղափոխական շարժումներն այնտեղ, որտեղից այն հայկական կոմիտեների միջոցով կարող է թափանցել Թուրքիա[109]։ «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեն գտնում էր, որ հարևան երկրում հեղափոխական շարժման վերելքը և սահմանադրական կարգերի հաղթանակը զգալիորեն կամրապնդի նաև իր դիրքերը Օսմանյան կայսրությունում և ընդհակառակը, կխարխլի միապետության հիմքերը։ Այդ պատճառով երիտթուրքերը կարևոր նշանակություն էին տալիս իրանական հեղափոխականների հետ շփումներին[110]։

Երիտթուրքերի կարծիքով Իրանում Աբդուլ Համիդի վարած քաղաքականության բուն շարժառիթներն էին. ա) մտավախությունը, որ Իրանի հեղափոխական իրադարձությունները արձագանք կգտնեն և կտարածվեն նաև Թուրքիայում. բ) Անատոլիայում և կայսրության այլ շրջաններում ներքին ապստամբությունների սար-

---

108 *Османли*, Младотурецкая печать о турецко-персидском конфликте, «Тифлисский листок», 1907, 22 августа.

109 *М. Ардатов*, Турецко-персидский пограничный конфликт, стр. 24.

110 *Yusub Hikmet Bayur*, նշվ. աշխ., հ. II. մաս IV, էջ 99։

սափը, որոնք ընդունակ էին վերջ տալու սուլթանական բռնատիրությանը[111]։ Իրանական հեղափոխական շարժման հետ կապ հաստատելու նպատակով երիտթուրքական կոմիտեն իր ներկայացուցիչներին ուղարկում էր Իրանական Ադրբեջան[112], որտեղ նրանք հանդես էին գալիս ճառերով, ցրում երիտթուրքական գրականություն, թռուցիկներ և այլն։ Օգտագործելով Իրանում սուլթանական կառավարության ագրեսիվ-զավթողական քաղաքականություն վարելու փաստը, երիտթուրքերը ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք էին ծավալել նաև Իրանում գտնվող թուրքական օկուպացիոն զորքերի շրջանում, նպատակ ունենալով վարկաբեկել սուլթանին[113]։ Իրենց հերթին Ստամբուլում բնակվող իրանական հեղափոխական վտարանդիները կապվեցին երիտթուրքերի հետ և նույնիսկ նրանցից մի մասը անդամագրվեց «Իթթիհադ վև Թերաքքի» կուսակցությանը «պայքարելու համար հանուն Թուրքիայի և Իրանի ազատագրության՝ միապետական-բռնատիրական վարչակարգի իշխանությունից»[114]։ Թեև սուլթանական կառավարությունը ձերբակալեց Ստամբուլում գործող «Անջումանե ազադի» իրանական հեղափոխական կազմակերպության անդամներից շատերին[115], սակայն կազմակերպությունը շարունակում էր իր ընդհատակյա գործունեությունը։

Այս իրադարձություններից ահաբեկված թուրքական կառավարող շրջանները որոշեցին դիմել կտրուկ քայլերի։ Աբդուլ Համիդը ծրագրել էր Իրանում ազատագրական շարժումը սրատել ու ջախջախել ինչպես հակահեղափոխական ինտերվենցիան ուժեղացնելու, այնպես էլ իրանական ֆեոդալա-միապետական ռեակցիային աջակցություն ցույց տալու միջոցով[116]։ Իր հերթին իրանական ռեակցիան ևս սուլթանական կառավարության հետ դաշինքի մեջ մտնելու փորձեր էր անում։ Թեհրանում նույնիսկ լուրեր տարած-

---

111 Նույն տեղում, էջ 100։

112 Yusub Hikmet Bayur, նշվ. աշխ., հ. 2, մաս 4-րդ, էջ 100—103։

113 Նույն տեղում, էջ 100—101։

114 دکتر مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، جلد ۳، طهران، ۱۳۳۰، ص ۱۷۴

115 Նույն տեղում, էջ 162։

116 احمد کسروی، تاریخ مشروطهٔ ایران، طهران، ۱۳۱۹، جلد ۲، ص ۱۷۳

վեցին, որ Մոհամմեդ Ալի շահը Թուրքական դեսպանի միջոցով Աբդուլ Համիդից օգնություն է խնդրել Իրանում հեղափոխական շարժումը համատեղ ուժերով ջախջախելու համար[117]։ Հարկ է նշել, որ սուլթանի ծրագրի իրագործման համար ստեղծվել էր միանգամայն նպաստավոր պահ։ 1907 թ. փետրվարին շահական ռեակցիան սկսեց գրոհը սահմանադրության, Մեջլիսի և առհասարակ հեղափոխական շարժման դեմ[118]։ Կառավարության և Մեջլիսի միջև առաջ եկան սուր տարաձայնություններ, որովհետև Մոհամմեդ Ալին բացահայտորեն դրսևորում էր հակահեղափոխական հեղաշրջում կատարելու ձգտումներ։

Իրանում ստեղծված իրադրությունը հույսեր էր ներշնչում Աբդուլ Համիդին, որ շահական կառավարությունը կարագացնի երկու միապետների դաշինքը հեղափոխության դեմ։ Սուլթանը անմիջապես պալատ է հրավիրում Ստամբուլում իրանական արտակարգ դեսպան, ռեակցիոներ Արֆա-էդ-Դոուլեին և գաղտնի զրույց ունենում նրա հետ Իրանում ծավալվող իրադարձությունների մասին։ Մասնավորապես հայտարարում է շահական դեսպանին, որ «եթե Իրանի վիճակը շարունակի մնալ անփոփոխ և սահմանադրական շարժումը հնարավորին չափ շուտ արմատախիլ չարվի, ապա այդ խտը կտարածվի նաև այլ մահմեդական երկրներում և այլևս ոչ մի կերպ հնարավոր չի լինի խոչընդոտել ու արգելակել այն։ «Այդ պատճառով,—ավելացնում է սուլթանը,—մենք պետք է Մոհամմեդ Ալի շահի հետ դաշնակցած պայքարենք և արմատախիլ անենք այդ վտանգը»[119]։ Սուլթանը այնուհետև խնդրում է իր անունից հայտնել շահին, որ ինքը պատրաստ է 50 հազար լիրա ոսկի և մեծ բանակությամբ զորք դնել նրա տրամադրության տակ[120]։ Թեև Արֆա-ուդ-Դոուլեն մտավախություն է հայտնում, որ Թուրքերի միջամտությունը Իրանի ներքին գործերին կարող է առաջ բերել Ռուսաստանի և Անգլիայի եռանդուն դիմադրությունը և անցանկալի բարդությունների տեղիք տալ, այնուամենայնիվ, սուլթանի առաջարկը հաղոր-

---

[117] ЦГИАЛ, ф. 600, оп. 4, д. 340, л. 36.

[118] *М. С. Иванов*, Иранская революция 1905—1911 гг., стр. 109.

[119] دکتر مهدی ملکزاده، تاریخ انقلاب...، جلد چهارم، طهران، ۱۳۳۱ص ۱۷۹

[120] *Նույն տեղում, էջ 180։*

դում է շահին[121]։ Շահական դեսպանի և սուլթանի դաղտնի բանակցությունների լուրը շուտով հայտնի է դառնում Թեհրանում։ Հեղափոխական ուղղության «Թաղա հայաթ» («Նոր կյանք») թերթը այդ մասին հրապարակում է հաղորդագրություն, որտեղ հայտարարվում է նաև, որ իրանական դեսպանը բանակցությունների մեջ է մտել սուլթանի հետ սադր ազամ (պրեմիեր-մինիստր) Ամին-էս-Սուլթանի կարգադրությամբ[122]։ Այս լուրը ողջ երկրում առաջ բերեց զայրույթի փոթորիկ։ 1907 թ. օգոստոսի 5-ին Թեհրանում Մեջլիսի նիստի ժամանակ Թավրիզի էնջումենը կազմակերպում է բողոքի ցույց, որին միանում են նաև ժողովրդական հոծ զանգվածներ։ Իսկ օգոստոսի 18-ին Մեջլիսի շենքից դուրս գալու ժամանակ սադրազամ Ամին-էս-Սուլթանը ատրճանակի մի քանի կրակոցով սպանվում է հեղափոխական ֆիդայիի կողմից[123]։

Փաստերը անվիճելիորեն վկայում են, որ շահական և սուլթանական ռեակցիայի միջև գոյություն ուներ ներքին համաձայնություն համատեղ ուժերով Իրանում հեղափոխական շարժմանը մահացու հարված հասցնելու համար։ Պատահական չէ, որ վերոհիշյալ բանակցություններից անմիջապես հետո Թուրքիան ուժեղացրեց իր հակահեղափոխական ինտերվենցիան Իրանում։ 1907 թ. հուլիսին Յավեր փաշան Վանի կողմից ներխուժեց Ուրմիայի արևմտյան շրջանները, Թերգևերում ջախջախեց Մեջդ-ուս-Սալթանների զորքերը և գավթեց մի շարք տերիտորիաներ, այդ թվում նաև ռազմական կարևոր նշանակություն ունեցող կետեր[124]։ Ընդ որում, թուրքական զորքերի հրամանատարը ամենուրեք հայտարարում էր, որ իր պարտքն է համարում Իրանի սուննիթ բնակչությանը պաշտպանել իրանական հեղափոխականների «բռնություններից ու հալածանքներից»[125]։ Միաժամանակ Բաշկալայում կենտրոնացվեցին ռեդիֆի երկու և նիզամի չորս գումարտակներ, ինչպես նաև համիդիե ութ

---

121 Նույն տեղում։

122 «Մշակ», 12 հոկտեմբերի, 1907 թ.։

123 احمد كسروى، تاريخ مشروطهٔ ايران، ج ۲، ص ۳۲۱ տե՛ս նաև АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, л. 53 об.

124 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009, л. 5 об; *М. Ардатов*, Турецко-персидский пограничный конфликт, стр. 12—15.

125 Նույն տեղում։

գնդեր, որոնք տենդորեն նախապատրաստվում էին շարժվելու Ուրմիայի ուղղությամբ[126]։ Սահմանային հանձնաժողովի կոմիսար, գեներալ Զեքի փաշան Լահիջանից անմիջապես ժամանեց Բաշկալա, որտեղ հանդիպելով Վանի վալի Թահիր փաշայի հետ պարզաբանեց Իրանի նկատմամբ տարվող քաղաքականության իմաստը և հրահանգեց նրան Թուրքական զորքերի գործողություններին տալ կրոնական երանգ։ Միսիան հաջողությամբ գլուխ բերելու համար Թահիր փաշայի տրամադրության տակ դրվեցին գլխավոր շտաբի երկու գեներալներ՝ Ֆերիկ Դանիել փաշան և լիվա Շաբիր փաշան[127]։

Իրանական տերիտորիայում Թուրքական զորքերը դաժանորեն ճնշում էին տեղական բնակչության կողմից դիմադրության ամեն մի փորձ։ Նման դեպքերում նրանք այրում էին գյուղերն ու բնաջրնջում բնակիչներին[128]։ Այսպես, երբ 1907 թ. օգոստոսին Մավանա գյուղի բնակչությունը անձնազոհ դիմադրություն ցույց տվեց օսմանյան զորքերին, վերջիններս հրետանային կրակով գյուղը վերածեցին ավերակների[129]։ Առանձին վայրերում իրանական զորքերի կողմից դիմադրության փորձ լինելու դեպքում Թուրքական հրամանատարները հայտարարում էին, որ դրանց իրենք համարում են ոչ թե կառավարական զորքեր, այլ զինված բանդաներ կամ պարսիկ և հայ ֆիդայիներ և իրենց իրավունք են վերապահում վարվել նրանց հետ ինչպես խուլիգանների ու ավազակների հետ[130]։ Իսկ Յավեր փաշան դրան ավելացնում էր, որ իրանական իշխանությունների ներկայացուցիչներին և զորքերի հրամանատարներին ինքը չի կարող ճանաչել որպես կառավարության կողմից լիազորվածների, այլ նրանց համարում է շահի դեմ ընդդիմադիր ձգտումներ արտահայտող էնջումենների ներկայացուցիչներ[131]։

Առանձնակի դաժանությամբ Թուրքական զորքերը ջախջախում էին հեղափոխական էնջումենների ու սահմանադրության կողմնակից այլ կազմակերպությունների[132]։ Օկուպացված շրջանների

---

126 «Объезд оккупированных Турцией...», стр. 3.

127 *М. Ардатов*, Турецко-персидский пограничный конфликт, стр. 16.

128 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, лл. 266 об—267.

129 «Тифлисский листок», 1907, 18 августа.

130 *«Երկրի ձայնը» (շարաթաթերթ), Բ տարի, 18 նոյեմբերի, 1907 թ.։*

131 «Объезд оккупированных Турцией...», стр. 123.

132 «Русские ведомости», 1907, 20 сентября, № 240.

բնակչության ռեակցիոն տարրերին, բոնատիրության կողմնակից խաներին ու ֆեոդալներին նրանք գրգռում էին սահմանադրության կողմնակիցների դեմ, կազմակերպում մասսայական ձերբակալություններ, սպանություններ և այլն[133]։ Իսկ Թեհրանում Թուրքական դեսպանությունը ազատ ապաստան էր տալիս քաղաքում անկարգությունների ու հակահեղափոխական խռովությունների կազմակերպիչներին և առհասարակ բոլոր հակահեղափոխական տարրերին[134]։

Իրանական տերիտորիայում զավթումներ կատարելու և հակահեղափոխական ինտերվենցիան իրագործելու գործում Թուրքական զորքերին մեծագույն աջակցություն էին ցույց տալիս քրդական բեյերն ու աղալարները, որոնք կատաղի ատելությամբ էին լցված դեպի հեղափոխական շարժումը։ Բացի այն, որ իրենց դինված ջոկատներով նրանք պայքարում էին հեղափոխական շարժման դեմ, Թուրքական գործակալության դրդմամբ անընդհատ դիմումներ էին կատարում Վանի վալիին, խնդրելով զորքեր ուղարկել «իրանական բռնություններից իրենց ազատելու համար»[135]։ Օգտվելով դրանից Աբդուլ Համիդը հրամայեց 6-րդ բանակային կորպուսի հրամանատարին գրավել Սերդեշտը[136]։ Նույն կերպ գրավվեց Բանեն, Զահրիքն ու Սոմայը։ Միայն Բանեի շրջակայքում 142 քրդական գյուղեր բացահայտորեն հայտարարեցին, որ այսուհետև չեն ճանաչելու իրանական իշխանություններին և որպես սուննիթներ իրենց համարում են սուլթանի հպատակներ[137]։ Իսկ մամաշ, փիրան, մանգուր[138] և այլ ցեղերի առաջնորդները կապեր հաստատելով Սոուջբուլաղի շրջանի արևելյան և հյուսիսարևելյան մասերի խաների հետ հայտարարեցին, որ Ջաղաթու գետից արևելք ընկած բոլոր հողերը այսուհետև անցնում են Թուրքերին[139]։

---

133 دکتر مهدی ملکزاده، مشر. نشر. جلد ۴، ص ۱۷۹

134 «Тифлисский листок», 1906, 11 июля.

135 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 34, л. 193.

136 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 32, л. 44.

137 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 124, лл. 321—322.

138 Սոուջբուլաղի շրջանում Թուրքական քաղաքականության ամենաակտիվ իրագործողն էր մանգուր ցեղի առաջնորդ Բայազեդ կամ Բայիզ աղան։

139 *Д. М. Беляев,* Очерк северо-восточной части Персидского Курдистана. («ИШКВО», № 30, Тифлис, 1911, стр. 7).

Քրդական ֆեոդալների աջակցության շնորհիվ մի շարք խոշոր շրջաններ Թուրքերին հաջողվում էր գրավել մեկ-երկու տասնյակ զինվորներով։ Օրինակ, 1907 թ. աշնանը Դեշտեբիլի ամբողջ շրջանը նրանք գրավեցին 60 ասկյարներով, իսկ Ուշնուն ընդամենը 15 զինվորով[140]։

Թուրքական հրամանատարությունը հանձնարարում էր պրոթուրքական տրամադրություններ ունեցող քրդական ցեղապետներին կողոպուտի և ավերածության ենթարկել դեռևս չլավված բնակավայրերը, որից հետո թուրքական իշխանությունները առաջարկում էին բնակիչներին վերադարձնել նրանցից կողոպտված դույքը, ազատել հարկերից և տալ մի շարք արտոնություններ, պայմանով, որ նրանք ընդունեն Օսմանյան կայսրության հովանավորությունը (դեֆակտո թուրքական հպատակություն)։ Այդպես 1907 թ. ամռանը թուրքերն ամրապնդվեցին Ուրմիայի նահանգի Թերգևեր, Դեշտ և Մերգևեր գավառներում, որտեղ նրանց հատկապես մեծ ծառայություն մատուցեց քրդական Բեյզադե ցեղը[141]։ Տեղական բնակչության նկատմամբ բռնություններ գործադրելու քաղաքականությունը հետապնդում էր նաև այն նպատակը, որպեսզի վարկաբեկվի իրանական պետության հեղինակությունը և, ընդհակառակը, օկուպացված շրջանների բնակչությունը համոզվի, որ այսուհետև այդ վայրերի դրության տերը ոչ թե շահական կառավարությունն է, այլ օսմանյան Թուրքիան։

Այսպիսով, Իրանի նկատմամբ իրագործելով հակահեղափոխական ինտերվենցիա, Օսմանյան կայսրությունը Անգլիայի ու ցարական Ռուսաստանի հետ համատեղ հանդես էր գալիս իրանական ժողովրդի ազգային-ազատագրական, հակաֆեոդալական ու հակաիմպերիալիստական շարժումը խեղդողի դերում, ընդ որում, Իրանում հակահեղափոխական ինտերվենցիային օսմանյան Թուրքիան դիմեց ավելի վաղ, քան Անգլիան և ցարական Ռուսաստանը։ Իրանական պատմաբան Մեհդի Մալեքզադեն այդ առթիվ գրում է, որ թուրքական զորքերը, որոնք հանդես էին գալիս իրանական ռեակ-

---

[140] «Тифлисский листок», 1907, 24 октября.

[141] АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, л. 53.

ցիայի կողմում, իրանական սահմանադրությանը հասցրին մեծագույն հարված[142]։

Դեռևս 1907 թ. ամռանը սուլթանական կառավարությունը Իրանում զավթած իր տերիտորիաները հայտարարում էր Թուրքիայի անբաժանելի մասը։ Այդ առթիվ ռուսական դեսպանորդը Իրանից հայտնում էր արտաքին գործերի մինիստրությանը, որ «Թեհրանում Թուրքական ռազմական կցորդ Ջամիլ բեյը բացահայտորեն, չքաշվելով նույնիսկ օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների ներկայությունից, հայտարարում է, որ այլևս Թուրքիայի և Պարսկաստանի միջև ոչ մի սահմանային բյուրիմացություն գոյություն չունի, որովհետև համաձայն Ստամբուլից դեսպանատան ստացած ցուցումների, օսմանյան զորքերի գրաված բոլոր հողերը կազմում են Թուրքիայի տիրապետությունները»[143]։

Այս բոլորը, իհարկե, չէր կարող Իրանում առաջ չբերել համընդհանուր տագնապ։ Թուրքական ինտերվենցիան զրգռել էր երկրի հասարակական միտքը։ Սահմանագլխից ստացվող տագնապալի լուրերի հետևանքով Արևմտյան Ադրբեջանի բնակչությունը գտնվում էր խուճապի մեջ։ Հազարավոր մարդիկ, մանավանդ ասորիները և հայերը, լքելով իրենց բնակավայրերը, հապճեպ հեռանում էին դեպի հյուսիս և արևելք[144]։ Շահական կառավարությունը ոչ մի միջոցառում չէր ձեռնարկում Թուրքական ոտնձգությունների դեմ։ Գարտվիզը այդ բացատրում էր նրանով, որ «Մոհամմեդ Ալի շահը և կառավարական գործիչները ամբողջապես զբաղված են ներքին իրադարձություններով և իրենց ողջ ուժերն ու ուշադրությունը կենտրոնացնելով կուսակցական տարաձայնությունների և վեճերի վրա, դաժան պայքար մղելով իրենց իշխանության պահպանման համար, իսպառ կորցրել են պատկերացումը բարձրագույն պետական շահերի վերաբերյալ։ Այն, ինչ տեղի է ունենում այդ պայքարի շրջանակներից դուրս, նրանց համար չունի ոչ մի նշանակություն»[145]։ Դա վկայում էր այն մասին, որ շահական կառավարությունը, որն ամբողջապես զբաղված էր երկրում հեղափոխությունը

---

142 دکتر مهدی ملکزاده، جلد ۳، ص ۳۶، նշվ. աշխ.

143 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, лл. 167 об—168.

144 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, л. 53.

145 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, лл. 166—167.

ճնշելու և իր իշխանությունը փրկելու հոգսով, բացարձակ անտարբերություն էր ցուցաբերում արտաքին սպառնալիքի նկատմամբ։ Ընդհակառակը, մայրաքաղաքում շարունակվում էին պատվել լուրեր, թե շահի և սուլթանի միջև կայացվել է դաղտնի համաձայնություն համատեղ ուժերով հեղափոխությունը ճնշելու վերաբերյալ։ Այդ կասկածներն ամրապնդվում էին նրանով, որ շահը կտրականապես հրաժարվում էր մայրաքաղաքից զորքեր տեղափոխել սահման։ Ընդհակառակը, նա ձգտում էր ռազմական բախումների թատերաբեմից հանել զորքերն ու տեղափոխել Թեհրան, հեղափոխական ֆիդայիների ու էնջումենների դեմ պայքարելու համար։ Ավելին, Թեհրան էր կանչվում բախտիարական հեծելազորի մի մասը, Թալիշի ցեղերից բաղկացած հեծելազորը և Թավրիզից ութ հարյուր հեծյալներ։ Շահը պատրաստվում էր նաև քրդերից, բախտիարներից և ասորիներից կազմակերպել հատուկ ջոկատներ և դրանք կենտրոնացնել մայրաքաղաքում[146]։

Թուրքական ագրեսիայի նկատմամբ միանդամայն անտարբեր վերաբերմունք էին ցուցաբերում նաև սահմանամերձ գոտու շահական իշխանությունները։ Ճիշտ է, որոշ աստիճանավորներ, որոնց սպառնում էր կալվածքների կորցնելու վտանգը, հուսալով, որ կառավարությունը կօգնի, զինված ջոկատներով մեկնեցին օկուպացված շրջանները թշնամու դեմ կռվելու մտադրությամբ, սակայն չստանալով այդ օգնությունը, աստիճանաբար ցրվեցին իրենց տները, որպեսզի դեթ պաշտպանեն սեփական ունեցվածքը[147]։ Մայրաքաղաքում շահական կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչները և նրանց հետ կապված Մեջլիսի որոշ պատգամավորներ վկայակոչելով Իրանի ռազմական թուլությունը և ներքին անկայուն վիճակը ուղղակի հայտարարում էին, որ Իրանը ի վիճակի չէ դիմադրել Թուրքիային։ 1907 թ. դեկտեմբերի 12-ին նույնիսկ ընդունվեց մի որոշում, որտեղ ասվում էր, որ ներկա պայմաններում անհրաժեշտ է զորքեր չուղարկել սահման, որպեսզի Թուրքական կառավարությունը չմտածի, թե շահական կառավարությունը մտադիր է ուժ գործադրել Թուրքական զորքերի գրաված տերիտորիաների

---

146 روزنامهٔ «مجلس», ۱۴ دسامبر ۱۹۰۷ տե՛ս նաև *М. С. Иванов*, Иранская революция 1905—1911 г. г. стр. 123.

147 *М. Ардатов*, Турецко-персидский пограничный конфликт, стр. 19.

մաքրման համար, մի հանգամանք, որը հավասարազոր կլիներ պատերազմ հայտարարելուն[148]։

Մեջլիսի հայրենասիրական տրամադրություններ ունեցող ներկայացուցիչները մեղադրում էին կառավարությանը, որ արտաքին գործերի մինիստրությունը և Ստամբուլում իրանական դեսպանը ցուցաբերում են հանցավոր անտարբերություն Իրանի տերիտորիալ ամբողջականության և ինքնուրույնության դեմ ուղղված ոտնձգությունների նկատմամբ։ Իսկապես, Նելիդովի վկայությամբ իրանական դեսպանի բանակցությունները Ստամբուլում բացարձակապես չէին կրում պետական բնույթ, սահմանափակվելով լոկ սահմանամերձ շրջաններում տեղի ունեցող մասնակի, ոչ կարևոր, երկրորդական նշանակություն ունեցող հարցերի շուրջը, վեճով[149]։ Ճիշտ է, իրանական որոշ դիվանագետներ փորձում էին բողոքել օսմանյան կառավարության զավթողական քաղաքականության դեմ, որակելով այն որպես միջազգային հարաբերությունների ամենատարրական կանոնների խախտում, սակայն շահական կառավարության բռնած վերոհիշյալ դիրքի հետևանքով այդ բողոքները մնում էին անարձագանք։ Օրինակ, Բեռլինում իրանական դեսպանի պաշտոնակատար Հովհաննես խան Մասեհյանը «Տագեբլատ» թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ հայտարարում է, որ «եթե Բ. Դուռը շուտով ետ չկանչի իր զորքերը, ապա գործը կարող է հասնել պատերազմի հայտարարության»[150]։ Սակայն իրանական ներկայացուցչի այս հայտարարությունը դժգոհությամբ ընդունվեց շահական արտաքին գործերի մինիստրության կողմից։

1907 թ. աշնանը իրանական ատիճանավորներից մեկը՝ Մոհթեշամ-ուս-Սալթանեն նշանակվեց Թուրքիայի հետ սահմանային կոնֆլիկտը հետաքննող հանձնաժողովի գլխավոր կոմիսար։ Այս նշանակումը ինքնին վկայում էր այն մասին, որ շահը և նրա կառավարությունը լրջորեն չեն վերաբերվում Թուրքական ագրեսիայի հարցին, որովհետև վերոհիշյալ ատիճանավորը, ռուսական դեսպանորդի վկայությամբ, միանգամայն մակերեսորեն էր ծանոթ իրեն հանձնարարված գործին։ Բացի այդ, կառավարությունը նրան

148 Նույն տեղում, էջ 19։

149 АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 39, лл. 172—172 об.

150 «Մշակ», 7 հոկտեմբերի, 1907 թ.։

չէր տվել ոչ հրահանգներ, և ոչ էլ աշխարհագրական քարտեզներ ու սահմանային հարցի հետ առնչվող այլ փաստաթղթեր[151]։ Բավական է ասել, որ հանձնաժողովի անդամներից ոչ ոք ի վիճակի չէր քարտեզներ գծել, առավել ևս դրանք կարդալ և մեկնաբանել։ Դրությունից ելք գտնելու համար Մոհթեշամ-ուս-Սալթանեն Թավրիզում վարձում է մի ոմն լուսանկարիչ Ստեփանյանի, որին և հանձնարարվում է գծել սահմանային քարտեզը[152]։

Թուրքական զավթիչների նկատմամբ շահական կառավարության վարած հանցավոր ու դավաճանական քաղաքականության հետևանքով մթնոլորտն Իրանում գնալով ավելի ու ավելի էր շիկանում։ Մայրաքաղաքում և մի շարք քաղաքներում հեղափոխական շրջանների նախաձեռնությամբ կազմակերպվում էին բողոքի ցույցեր[153]։ Շահական կառավարությանը ցուցարարները մեղադրում էին թուրքական ինտերվենցիային ուղղակի աջակցություն ցույց տալու մեջ։ Որպես փաստարկ բերվում էր նաև այն, որ սահմանամերձ շրջանների ցեղերից թուրքերի դեմ պայքարելու համար ջոկատներ կազմակերպելու փոխարեն շահական արքունիքը հրահրում է քրդերի, շահսևենների, զարադաղցիների ավազակային բանդաներին կողոպտել ու վայրագություններ կատարել Ուրմիայի, Սոուջբուլաղի, Խոյի և այլ շրջաններում, որտեղ ծավալվում էր թուրքական ագրեսիան։ Իրանական պատմաբան Մեհդի Մալեքզադեն այդ առթիվ նշում է, որ Ադրբեջանը և Քրդստանը վերածելով իր կողմնակից ցեղերի ասպատակությունների թատերաբեմի, շահը ցանկանում էր այդ իրադարձությունների, ինչպես նաև թուրքական արշավանքի ողջ մեղքը բարդել սահմանադրության վրա[154]։

Մեջլիսում տեղի էին ունենում փոթորկալից նիստեր, որոնց սովորաբար ներկա էին լինում ժողովրդի բազմաթիվ ներկայացուցիչներ։ Իրանական պառլամենտի ձախ պատգամավորները, որոնք ժողովրդի դեմոկրատական խավերի ներկայացուցիչներն էին, բացահայտորեն մեղադրում էին կառավարությանը միտումնավոր անգործության մեջ, և նույնիսկ այն բանում, որ կառավարությունը

---

151 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, лл. 202—204.

152 «Тифлисский листок», 1907, 8 декабря.

153 «Մշակ», 15 դեկտեմբերի, 1907 թ.։

154 دکتر مهدی ملکزاده، جلد ۳، نشر. مش. ص ۳۷

ինքն է հրավիրել թուրքական զորքերին, որպեսզի նրանց օգնությամբ ճնշի սահմանադրական շարժումն Իրանում[155]։ Մեջլիսում և մայրաքաղաքի հեղափոխական շրջաններում նրանք սկսեցին ագիտացիա մղել, որ թուրքական ինտերվենցիան կանխելու համար բնավ հիմքեր չկան հույսեր կապելու Անգլիայի ու Ռուսաստանի միջնորդության հետ, որի վրա պնդում է կառավարությունը[156], այլ հասել է ժամանակը, որ պարսիկները իրենք լուծեն իրենց հարցերը և սեփական ուժերով պաշտպանեն երկրի տերիտորիալ անձեռնմխելիությունը[157]։ 1907 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Մեջլիսի նիստերից մեկի ժամանակ մուշտեհիդ աղա Սեյիդ Աբդուլլան կրակոտ ճառ է արտասանում հայտարարելով, որ եթե կառավարությունը շարունակի իր պարտվողական քաղաքականությունը, ապա ինքը կշրջի երկրում և ամենուրեք սրբազան պատերազմի կոչ կանի թուրքերի դեմ[158]։ Նման կոչերը ջերմ պաշտպանություն էին գտնում նաև ժողովրդի կողմից։ Աշխատավորական խավերի բազմաթիվ ներկայացուցիչներ պատրաստակամություն էին հայտնում զենք վերցնել հայրենիքի պաշտպանության համար։ 1907 թ. օգոստոսին Սպահանի բնակչությունն ու Քերմանշահի նահանգի մի շարք ցեղեր նույնիսկ առաջարկեցին սահման ուղարկել 25 հազարանոց ժողովրդական աշխարհազոր Թուրքական Արաբստան ներխուժելու համար, որպեսզի սուլթանական կառավարությունը ստիպված լիներ իր զորքերը դուրս բերել հյուսիսում զավթած տերիտորիաներից։ Սակայն կառավարությունն ու Մեջլիսը մերժեցին այդ առաջարկը[159]։

Ի տարբերություն Մեջլիսի ձախ պատգամավորների, աջերը, որոնք հանդիսանում էին ֆեոդալական ազնվականության, հողատերերի, խոշոր առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներ և կապված էին շահական արքունիքի և օտարերկրյա կապիտալի հետ, պաշտպանում էին կառավարության վարած քաղաքականությունը «թուրքական հարցում»։ Իրենց հերթին նրանք մեղադրում

155 «Մեծ օրը Մեջլիսում», «Մշակ», 5 դեկտեմբերի, 1907 թ.։

156 «Թուրք-պարսկական կոնֆլիկտի մասին պաշտոնական բացատրություն», «Մշակ», 27 հոկտեմբերի, 1907 թ.։

157 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, л. 190.

158 Նույն տեղում, թ. 126 հ.։

159 Նույն տեղում, թ. 185 հ.։

էին ձախերին նրանում, որ Մեջլիսում նրանց ընդդիմադիր գործունեության հետևանքով կառավարությունը զուրկ է ֆինանսական միջոցներից և բանակից, որի հետևանքով և Մեջլիսը իրավունք չունի կառավարությունից պահանջելու վճռական միջոցառումներ թուրքական ագրեսիայի դեմ, որ նման պայմաններում կառավարությանը մնացել է միայն մեկ ելք՝ ապավինել Ռուսաստանի և Անգլիայի օգնությանը և դիմել նրանց միջնորդությանը[160]։

Իրանում հատկապես մեծ զայրույթ առաջացրեց այն լուրը, որ Աբդուլ Համիդի հրամանով Թուրքիայում բնակվող գինվորական ծառայության հասակի բոլոր իրանցի երիտասարդները հավաքագրվում են բանակ և ստիպում են նրանց թուրքական բանակի կազմում մասնակցել Իրանի դեմ մղվող ռազմական գործողություններին[161]։

* * *

1907 թ. գարնանից եվրոպական դիվանագիտությունը սկսեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել իրանա-թուրքական կոնֆլիկտի նկատմամբ։ Դա պայմանավորված էր նրանով, որ արդեն նկատվում էին անգլո-ռուսական մերձեցման առաջին նշանները և թուրք-իրանական հարաբերությունները ձեռք էին բերում նոր քաղաքական բովանդակություն։

Դեռևս 1906 թ. վերջերին Անգլիայի ու Ռուսաստանի մերձավոր և միջինարևելյան քաղաքականության մեջ նկատվեց որոշ շրջադարձ։ Երկու պետությունների կառավարող շրջանների մոտ նկատվեց փոխադարձ համաձայնությամբ Իրանը միմյանց միջև «ազդեցության գոտիների» բաժանելու միտում։ «Գերմանական վտանգը» և իրանական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բուռն վերելքը արագացնում էին այդ գործարքի կնքումը։

Այդ հարցում հատկապես մեծ նախաձեռնություն էր ցուցաբերում Անգլիան, որովհետև վերջին մի քանի տարիների ընթացքում Գերմանիան ոչ միայն հասցրել էր նրան դուրս մղել Թուրքիայից և այն վերածել գերմանական ձեռնարկատերերի, բանկիրների և առևտրական ֆիրմաների ինտենսիվ գործունեության ոլորտի,

---

[160] АВПР, ф. "Персидский стол.", 1907, д. 914, лл. 188—189, տե՛ս նաև دکتر مهدی ملکزاده նշվ. աշխ., հ. 3, էջ 35—36։

[161] Նույն տեղում, էջ 94։

այլև ակտիվորեն աշխատում էր քաղաքական շարժում հրահրել Անգլիայի մահմեդական բնակչություն ունեցող գաղութներում, որը ի վերջո կարող էր ուժասպառ անել բրիտանական կայսրությանը։ Վերջապես Գերմանիայի օրեցօր աճող ձգտումը դեպի Ասիա, մասնավորապես Իրան, որը տիրապետող դիրք էր գրավում Հնդկաստանից Եվրոպա տանող բոլոր ճանապարհների վրա և հատկապես Բաղդադի երկաթուղու շինարարությունը՝ սաստիկ դիպչում էին Անգլիայի շահերին։

Բրիտանական կառավարությանը մեծ անհանգստություն պատճառեց գերմանական քաղաքականության ակտիվացումը հատկապես Պարսից ծոցի շրջանում։ Օգտագործելով Թուրքիայի վրա ունեցած իր ազդեցությունը, Գերմանիային հաջողվեց ստանալ նոմինալ ձևով Թուրքիային պատկանող Ֆարուրի կղզում ծովային կայան կառուցելու իրավունք։ Կայզերի հրամանով գերմանական նավատորմը տենդորեն նախապատրաստվում էր ռազմական ցույցի Պարսից ծոցի թուրքական ջրերում։ Պանգերմանական մամուլը իր հերթին պահանջում էր «իրավահավասար» վիճակ Պարսից ծոցում, հակառակ դեպքում սպառնալով զենքի դիմել իրենց «իրավունքները» պաշտպանելու համար։

Այս բոլորը ստիպեց անգլիական կառավարող շրջաններին արմատապես վերանայել իրենց քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ։ Ֆորին Օֆիսը առաջ քաշեց անգլո-ռուսական համաձայնագրով Իրանը ազդեցության գոտիների բաժանելու գաղափարը։ 1906 թ. մայիսին անգլիական դեսպան Ա. Նիկոլսոնը ժամանեց Պետերբուրգ, որից հետո սկսվեցին Իրանի և, առհասարակ, Միջին Արևելքի վերաբերյալ համաձայնագիր կնքելու բանակցությունները։

Դիմելով այդ քայլին, ցարական դիվանագիտությունը միաժամանակ գտնում էր, որ անհրաժեշտ է շտապել հարաբերությունները կենտրոնական պետությունների հետ և Գերմանիայի ու Անգլիայի միջև հնարավոր պատերազմի դեպքում ունենալ չեղոքություն պահպանելու հնարավորություն[162]։ Այդ քաղաքական գիծը կենսագործելու նպատակով 1906 թ. հոկտեմբերին Իզվոլսկին մեկնեց

[162] «История дипломатии», т. II, стр. 608.

Բեռլին։ Այստեղ նա աշխատում էր համոզել կանցլեր Ֆոն Բյուլովին, որ Անգլիայի հետ բանակցությունները բնավ ուղղված չեն Գերմանիայի դեմ և առհասարակ չեն շոշափում ընդհանուր քաղաքական հարցեր։ Ռուսական արտաքին գործերի մինիստրը Բեռլինում ցանկանում էր ձեռք բերել նաև այնպիսի համաձայնություն, որն ապահովեր ռուսական շահերն Իրանում գերմանական ոտնձգություններից։ Այդ նպատակով Իզվոլսկին առաջարկեց կնքել ռուս-գերմանական հատուկ համաձայնագիր Իրանի և Բաղդադի երկաթուղու վերաբերյալ։ Գերմանական կողմը անմիջապես տվեց իր համաձայնությունը[163]։ 1907 թ. փետրվարի 20-ին, հակառակ Անգլիայի ցանկության, Իզվոլսկին Պետերբուրգում գերմանական դեսպանին հանձնեց ռուս-գերմանական համաձայնագրի ռուսական նախագիծը, որտեղ Գերմանիայից պահանջվում էր իրանական սահմանի մոտ և Իրանի տերիտորիայում չկառուցել Բաղդադի երկաթուղու ճյուղավորումներ, Հյուսիսային Իրանում չպահանջել կոնցեսիաներ, պաշտոնապես հայտարարել, որ Գերմանիան Իրանում չունի քաղաքական շահեր և ճանաչում է Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերի առկայությունը Հյուսիսային Իրանում։ Այս բոլորի փոխարեն Ռուսաստանը խոստանում էր արգելքներ չհարուցել Բաղդադի երկաթուղու շինարարության հարցում[164]։

Գերմանիան, սակայն, այս նախագծի որոշ «ուղղումների» պատրվակի տակ ներկայացրեց սեփական նախագիծ, որտեղ ոչ միայն չէր հրաժարվում Իրանում երկաթուղիներ կառուցելու իր պլաններից, այլև կոնկրետ առաջարկ էր անում Թեհրանից մինչև Բաղդադի մայրուղին երկաթուղային գիծ կառուցելու վերաբերյալ[165]։ Ցարական կառավարությունը մերժեց այդ առաջարկությունը։

Բանակցությունների ձախողումից հետո Գերմանիան կրկին գրոհեց Իրանում անգլո-ռուսական տնտեսական և քաղաքական դիրքերի դեմ։ Այդ գործում բացառիկ եռանդ էր դրսևորում ինքը՝

---

163 *Paul Butterfield*, The diplomacy of the Bagdad Railway 1890—1914, Göttingen, 1932, p. 31.

164 „Die Grosse Politik", Bd. XXII, t. I, № 7364, s. s. 38—41; Bd. XXV t. I, № 8649, s. s. 231—234; № 8580, s. s. 123—124.

165 Ibid, № 8588, s. s. 137—141; *Paul Butterfield*. Նշվ. աշխ. էջ 33։

կայզերը, որը Օստեն-Սակենի բնորոշմամբ «նման գործերում հակված էր դեպի գերմանական ազդեցիկ ֆինանսական և արդյունաբերական գործիչները»[166]։ Ծանոթանալով Իրանում գերմանական դեսպանորդ Շտեմրիխի զեկուցագրի հետ՝ Թեհրանում գերմանական բանկ բաց անելու անհրաժեշտության մասին, կայզերը ոգևորվեց այդ գաղափարով և կարգադրեց առանց հապաղելու զբաղվել այդ գործով։

1907 թ. ապրիլին Թեհրան ժամանեց գերմանական խոշոր ֆինանսիստ, «Գերմանական արևելյան բանկի» դիրեկտոր Հերբերտ Գուտմանը։ Վերջինս հենվելով 1906 թ. հուլիսի 1-ի գերմանա-իրանական գաղտնի կոնվենցիայի վրա, իր բանկի անունից դիմեց շահին՝ խնդրելով Թեհրանում գերմանական բանկ բաց անելու թույլտվություն տալ։ Իր ներկայացրած նախագծում Գուտմանը պահանջում էր գերմանական բանկին իրավունք տալ 60 տարի ժամկետով Իրանում կատարել բանկային գործողություններ, նահանգական քաղաքներում բաց անել բանկի բաժանմունքներ։ Բանկը իրավունք էր ստանալու Թեհրանում և Թավրիզում ձեռք բերել հողամասեր, Իրանի տարբեր քաղաքներում հիմնել առևտրական, արդյունաբերական ձեռնարկություններ և ֆինանսական հիմնարկություններ։ Գերմանացիները պահանջում էին բանկն ու նրա բաժանմունքներն աղատել ամեն տեսակի հարկերից ու տուրքերից, իրենց կողմից ներմուծված ապրանքների համար չգանձել մաքսատուրքեր, բանկին իրավունք տալ կատարել իրանական գանձարանի բոլոր տեսակի վճարումները արտասահմանում, կտրել իրանական արծաթյա դրամ, բանկին տալ ամբողջ Իրանի հանքային հանածոների հետախուզման մենաշնորհային իրավունք։ Գուտմանը պահանջում էր նաև հատուկ հողային բանկեր կազմակերպելու, ոռոգման աշխատանքներ կատարելու, ջրային ուժերի շահագործման և ջրմուղի սիստեմներ կառուցելու կոնցեսիաներ։ Գերմանական նախագծերում նախատեսվում էր նաև Պարսից ծոցում բաց անել առևտրական դեպո (Բանդար-Բուշիրում) և միաժամանակ կանոնավոր հաղորդակցությամբ Պարսից ծոցի նավահանգիստները կապել գերմանական ջրերի հետ։ Այնուհետև գերմանացիները ձգտում էին երկաթուղային ճանապարհով Թեհրանը կապել իրանա-թուրքական

[166] АВПР, ф. «Канцелярия МИД», д. 17, л. 251 об.

սահմանի հետ, իբր թե հեշտացնելու համար ուխտագնացությունը դեպի շիիթների սրբազան քաղաքներ՝ Քարբալա և Նաջաֆ, սակայն, իրականում հետապնդելով տնտեսական, քաղաքական և ռազմագիտական նպատակներ։ Ընդ որում, ըստ նախնական նախագծերի, այդ ճանապարհը անցնելու էր Քերմանշահի և նավթաբեր շրջանի վրայով դեպի Բաղդադի երկաթուղու հետ միացման կետը։ Մի այլ գծով Գերմանիան մտադիր էր Թեհրանը կապել Պարսից ծոցի հետ[167]։

Իր այս պլանները իրագործելու համար Գերմանիան հենվում էր Մեջլիսի գերմանոֆիլ խմբի վրա, որին հարել էին բարձր պետական պաշտոններ զբաղեցնող այնպիսի ազդեցիկ քաղաքական դեմքեր, ինչպես զաջարական արքայազն Զել-էս-Սոլթանը, Սալար-էդ-Դոուլեն, առաջին Մեջլիսի նախագահներ Սանի-էդ-Դոուլեն և էհ-թեշամ-էս-Սալթանեն, լուսավորության մինիստր Մոխբեր-էս-Սալթանեն, Ալա-էլ-Մոլքը, ներքին գործերի մինիստրի տեղակալ Մոհ-թեշամ-էս-Սալթանեն, արդարադատության մինիստր Մոայեդ-էս-Սալթանեն և շատ ուրիշներ, որոնք Անգլիայի և Ռուսաստանի դեմ պայքարում ցանկանում էին օգտագործել Գերմանիային[168]։ Գերմանոֆիլ պատգամավորները աշխատում էին համոզել Մեջլիսում Գուտմանի կոնցեսիայի հակառակորդներին, որ այդ կոնցեսիան մերժելու դեպքում Գերմանիան կարող է խղել իր դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ, իսկ դա կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ, մանավանդ որ Գերմանիան հնարավորություն ունի գրգռիչ ազդեցություն գործել Թուրքիայի վրա սահմանային կոնֆլիկտի հարցում[169]։

Ի վերջո անգլո-ռուսական ճնշման տակ շահական կառավարությունը ստիպված էր մերժել Գուտմանի կոնցեսիան։ Այսպիսով, իրանական ֆինանսների վրա հսկողություն սահմանելու և Իրանը տնտեսապես իրեն ենթարկելու գերմանական այս փորձը ավարտվեց լրիվ անհաջողությամբ։ Գերմանական կառավարող շրջանն-

---

[167] АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, лл. 230—232; ЦГИАЛ, ф. 560, д. 359,, лл. 15—17, 59, 62—64, 67—69, 77—79, 94—95; «ИШКВО», 1907, № 19, 1-я треть, стр. 57.

[168] АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, л. 210 об.

[169] Նույն տեղում, թթ. 228—228 հ.։

բում եկան այն համոզման, որ խիստ դժվար է հակառակ Ռուսաստանի և Անգլիայի կամքի Իրանում ձեռք բերել տնտեսական և քաղաքական արտոնություններ։ Մյուս կողմից անգլո-ռուսական բանակցությունների հաջող ընթացքը ստիպում էր Գերմանիային միանգամայն զգաստորեն գնահատել անգլո-ռուսական Անտանտի ստեղծման ապագա հետևանքները։ Այդ պատճառով կայսերական արտաքին գործերի մինիստրությունում մշակվեց անգլո-ռուսական մերձեցումը խոչընդոտելու և Ռուսաստանի հետ գերմանա-ռուսական հարաբերությունների վիճելի հարցերի վերաբերյալ համաձայնության գալու գիծ։ 1907 թ. հունիսի 18-ին Գերմանիան դիմում է Պետերբուրգի կաբինետին հետևյալ առաջարկությամբ. Գերմանական կառավարությունը պարտավորվում է ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի ձևով, իր հպատակների միջոցով, փորձեր չկատարել Հյուսիսային Իրանում երկաթուղային, խճուղային կամ հեռագրական կոնցեսիաներ ստանալու ուղղությամբ, պայմանով, որ Ռուսաստանը դադարեցնի իր դիմադրությունը Բաղդադի երկաթուղու շինարարության հարցում և իրանական տերիտորիայում հոգա Թեհրան—Խանեկին երկաթուղային գիծը կառուցելու մասին, որը Թուրք-իրանական սահմանի մոտ կմիանա Բաղդադի երկաթուղու Սեդիջե—Խանեկին ապագա գծի հետ։ Գերմանիան նաև երաշխիք էր տալիս, որ Թուրքիայի և Իրանի հաղորդակցության ճանապարհների միջև չի սահմանվի տրանզիտային մաքսատուրքեր, զիգբենցիալ տարիֆներ և գերմանական առևտուրը Իրանում կօգտվի լրիվ ազատությունից[170]։

Սակայն գերմանական այս առաջարկությունը անպատասխան թողնվեց Պետերբուրգի կողմից, այն դիտվելով շատ հեռուն գնացող մի առաջարկություն։

Վիլհելմ II-ի դիվանագիտությանը անհաջողություն էր սպասում նաև այլ կողմից։ Ռուսաստանի ճնշման տակ շահը ստիպված էր մերժել Թեհրանում գերմանական միսիայի համար պնդումները թուրք-իրանական կոնֆլիկտի լուծման հարցում գերմանական միջնորդությունը ընդունելու վերաբերյալ[171]։ Համոզվելով, որ «միջ-

---

170 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 17, л. 251.

171 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 912, л. 210.(Դարտվիգի տեղեկությունների համաձայն Գերմանիան նույնիսկ առաջարկել էր շահին Իրանում

նորդի» դերը ոչինչ չի տալու իրեն, Գերմանիան վերջնականապես որոշեց դեն նետել «հաշտարարի» իր քաղաքականությունը և Թուրքիային հրահրել ակտիվ գործողությունների Իրանի դեմ։ Այնուհետև Իրանում աշխատող ռուսական դիվանագետները բերում էին բազմաթիվ փաստեր, որ Թուրք-իրանական վեճում Գերմանիան ծպտված ձևով սկսել է խաղալ գրգռիչ դեր[172]։ Թեհրանում Դարտվիգին փոխարինած Պոխհամմերը 1907 թ. հուլիսին հաղորդում է, որ իրանական կառավարող շրջաններում և Մեջլիսում տիրապետում է այն համոզմունքը, որ Ուրմիայի վրա նախապատրաստվող Թուրքական արշավանքը խրախուսում է Գերմանիան, որը ցանկանում է «վրեժ լուծել պարսիկներից բանկային կոնցեսիան սկզբնական ծավալով տալուց հրաժարվելու համար»[173]։

1907 թ. օգոստոսի 31-ին կնքվեց անգլո-ռուսական համաձայնագիրը Իրանը, Աֆղանստանը և Տիբեթը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ։ Այսպիսով գերմանական վտանգը և ազգային-ազատագրական շարժման վերելքը Իրանում պայմաններ ստեղծեցին երկու վաղեմի մրցակիցների՝ Անգլիայի և Ռուսաստանի համագործակցության համար։ Երկու պետությունները պարտավորվում էին փոխադարձ աջակցությամբ խափանել իրենց «ազդեցության շրջանակում» ամեն մի օտար ոտնձգություն։

Անդրադառնալով 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի հարցին Վ. Ի. Լենինը այն բնութագրում է որպես պատերազմի նախապատրաստություն Գերմանիայի դեմ. «...Բաժանում են Պարսկաստանը, Աֆղանստանը, Տիբեթը (պատրաստվում են պատերազմի Գերմանիայի դեմ)»[174]։

Բնական է, որ այս համաձայնագրի կնքումը անտարբերությամբ չէր կարող ընդունվել Գերմանիայի քաղաքական շրջանների կողմից։

Անգլո-ռուսական համաձայնագիրը դայրույթի փոթորիկ առաջ

երկաթուղային շինարարության կոնցեսիա տալու դիմաց ֆինանսավորել շահնշահական բանկը և Թուրքիայի հետ սահմանային վեճը լուծել հօգուտ Իրանի։ (Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 310, л. 136).

172 АВПР, ф. «Персидский стол», д. 908, лл. 207—209.

173 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, лл. 21—22 об.

174 *В. И. Ленин*, Тетради по империализму, соч., т. 28, стр. 702.

բերեց գերմանական կառավարող շրջաններում, որոնք այն գնահատեցին որպես անմիջականորեն Գերմանիայի դեմ ուղղված ակտ[175]։ Կառավարությանը մոտ կանգնած մամուլը անցավ վճռական հակահարձակման, պահանջելով Գերմանիային հանձնել այդ համաձայնագրով նախատեսված, այսպես կոչված, «չեզոք գոտին», որը պարունակում էր այնպիսի ավետյաց հողեր, ինչպիսիք էին Թուրք-իրանական սահմանի մոտ գտնվող նավթաբեր շրջանը, Իրանի միակ նավարկելի գետի՝ Կարունի ավազանը, ամբողջ Պարսից ծոցի առափնյա շրջանը Բանդար-Բուշիր նավահանգստով և Ֆարսի մեծ մասը Շիրազ քաղաքով։

Գերմանական գործերի հավատարմատար բարոն Բիխահոֆենը Իտալիայի և Ավստրիայի մասնակցությամբ բուռն կամպանիա ծավալեց Իրանում, մեղադրելով Ռուսաստանին և Անգլիային Իրանը բաժանելու ձգտման մեջ։ Նրան հանձնարարվել էր նաև կազմակերպել պետական հեղաշրջում ու տապալել Գերմանիայի համար անցանկալի կառավարությանը և Մոհամմեդ Ալի շահին, որը Ռուսաստանի և Անգլիայի հլու կամակատարն էր։ Զինովևի 1907 թ. հոկտեմբերի 1-ի և 8-ի հաղորդագրություններից տեղեկանում ենք, որ հենվելով Մեջլիսի գերմանոֆիլ խմբի վրա Բիխահոֆենը Իրանում նախապատրաստում էր պետական հեղաշրջում և այն իրագործելու համար Գերմանիան աշխատում էր ներգրավել նաև սուլթանին[176]։ Մի այլ հեռագրով Զինովևը հաղորդում էր Իզվոլսկուն, որ շահի եղբայր Սալար-ուդ-Դոուլեն Իրանում գերմանական դեսպանորդի միջոցով խոստացել է հօգուտ Թուրքիայի լուծել սահմանային հարցը, եթե թուրքերը օգնեն նրան գահընկեց անելու շահին[177]։ Ըստ երևույթին գերմանական գործերի հավատարմատարն այն աստիճան համոզված էր այդ հեղաշրջման հաջողության մեջ, որ հավատացնում էր Թեհրանում հոլանդական դեսպանորդին, որ շուտով Բեռլինի փողոցներում թերթերը կազդարարեն անգլո-ռուսական համաձայնագրի ոչնչացման մասին[178]։ Հեղաշրջումը նախա-

---

175 *Dr. Afschar*, նշվ. աշխ., էջ 248։

176 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 17, л. 252; *А. К. Фукс*, նշվ. աշխ., էջ 124։

177 ЦГВИА, ф. 2000, д. 310, лл. 176—178.

178 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 914, лл. 335 об—336.

պատրաստելու նպատակով Բիխտհոֆենը մասնակցում է Մեջլիսի գաղտնի նիստին, որին ներկա էին միայն գերմանոֆիլ պատգամավորները էհթեշամ-էս-Սալթանեի գլխավորությամբ։ Նիստում Բիխտհոֆենը համոզում էր նաև բոյկոտի ենթարկել անգլո-ռուսական համաձայնագիրը և հույս դնել «Վիլհելմ կայզեր հզոր աջակցության վրա»[179]։ Սակայն գերմանացիներին չհաջողվեց իրագործել իրենց այդ մտադրությունը։

Իրանի ժողովուրդների ազգային զգացումներն ու հակաիմպերիալիստական տրամադրությունները Անգլիայի ու Ռուսաստանի դեմ օգտագործելու նպատակով Գերմանիան գործադրեց «Իրանը՝ իրանցիների համար» լոզունգը, Բեռլինում կազմակերպվեց «Պարսիկ ժողովրդի քաղաքական շահերի և նրա պետական անկախության պաշտպանության կոմիտե»[180] և այլն։

Բնութագրելով Իրանում գերմանական քաղաքականության բուն էությունը, Գարտվիգը գրում է. «...Իրանում, ինչպես և Թուրքիայում իրենց ներկայացնելով որպես մահմեդականների անկեղծ բարեկամ ու հովանավորող, գերմանացիները եռանդագին լուրեր են տարածում այն մասին, թե իբր Իրանում գերմանական քաղաքականության նպատակը այն է, որ պաշտպանեն նրա ինքնուրույնության և անկախության իրավունքները Ռուսաստանի և Անգլիայի ոտնձգություններից։ Որ հիշյալ երկու պետությունները տասնյակ տարիների ընթացքում մեծ ջանքեր էին գործադրում, որպեսզի Իրանը ենթարկեն իրենց բացառիկ ազդեցությանը, կասեցնելով նրա գործողությունների ազատությունը, արգելակելով նրա առաջադիմության ճանապարհը, զրկելով նրան հաղորդակցության ճանապարհների՝ կուլտուրայի և քաղաքակրթության այդ հաղորդիչների կառուցման իրավունքներից»[181]։

Գերմանական գործակալներն աշխատում էին երկրում ստեղծել այնպիսի տպավորություն, թե իբր Գերմանիան համակրում է իրանական սահմանադրական ու ազգային շարժմանը և շահագրգռված է Իրանի տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության ամրապնդման մեջ։ Իրանական ազգայնականներին իրենց կողմը

---

179 Նույն տեղում։

180 *М. С. Иванов*, Иранская революция 1905—1911 гг., стр. 223.

181 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 915, лл. 124—125 об.

գրավելու նպատակով գերմանական ներկայացուցիչները հանդես էին գալիս իրանական սահմանադրության «պաշտպանի» դերում[182]։ Գերմանական այդ քաղաքականության իմաստը բացահայտել է Գարտվիգն իր վերոհիշյալ հեռագրում։ Նա գրում էր. «Մինչև այժմ Իրանում չունենալով ոչ կոնցեսիաներ, ոչ արդյունաբերական ձեռնարկություններ, ոչ հիմնարկություններ, գերմանացիները կարող են միանգամայն անտարբեր նայել զարգացող իրադարձություններին, միաժամանակ շողոքորթելով և՛ հեղափոխական էնջումեններին, և՛ Մեջլիսին, և՛ մինիստրներին, և՛ հենց իրեն՝ շահին, սպասելով իրադարձությունների հետագա պարզեցմանը։ Նրանք այն աստիճանի հանգիստ են պահում իրենց, որ ընկալվում է որպես նրանց կողմից Իրանի ներքին գործերին ամենաչնչին չափով իսկ չմիջամտելու ապացույց»[183]։

Անգլո-ռուսական համաձայնագրի կնքվելուց հետո Գերմանիան անհամբերությամբ սպասում էր Թուրքիայի վրա այդ համաձայնագրի ունեցած ազդեցության հետևանքներին։ Պարզվեց, որ թուրքական կառավարող շրջանները ևս այդ համաձայնագիրը մեկնաբանում են որպես Օսմանյան կայսրության դեմ ուղղված միջոցառում, որի նպատակն է պատնեշ ստեղծել Իրանում Բ. Դռան քաղաքական ծրագրերի իրագործման առջև։ Հետևաբար անգլո-ռուսական համաձայնագիրը ստեղծելու էր գերմանա-թուրքական շահերի միասնություն իրանական հարցում։ Այդ կոոպերացիայի համար պայմաններ ստեղծեցին նաև հետևյալ հանգամանքները. Գերմանիան 1905—1907 թթ. ընթացքում պարտություն կրեց Իրանում կոնցեսիաներ ստանալու և ֆինանսա-տնտեսական գործունեություն ծավալելու հարցում. անգլո-ռուսական համաձայնագիրը միաժամանակ Գերմանիային զրկեց այդ երկու պետությունների հակասությունների վրա խաղալու հնարավորություններից. Ավրստրիան պատրաստվում էր անեքսիայի ենթարկել Բոսնիան և Հերցոգովինան և այդ կապակցությամբ Գերմանիան աշխատում էր Ռուսաստանի ուշադրությունը շեղել Բալկաններից, բորբոքելով Թուրք-իրանական կոնֆլիկտը։ Այդ շրջանում Օսմանյան կայսրու-

---

182 Տե՛ս «Представители Турции и Германии в Персии в роли защитников персидской конституции», «ИШКВО», № 22, стр. 34—35.

183 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 915, лл. 125—125 об.

թյունը ամբողջապես իրեն կապելու և նրան Անգլիայի ու Ռուսաստանի դեմ պայքարում օգտագործելու նպատակով գերմանական դիվանագիտությունը նույնիսկ փորձեր էր կատարում հակել Թուրքիային միանալու եռյակ դաշինքին[184]։

Օսմանյան կայսրությունը կարող էր օգտակար լինել Գերմանիային նաև այլ առումով։ Վկայակոչելով նրա ագրեսիվ-զավթողական քաղաքականությունը Իրանի նկատմամբ, Գերմանիան աշխատում էր համոզել շահական կառավարությանը, որ Ռուսաստանը և Անգլիան մինչև այժմ ոչ մի գործնական միջոցառում չեն ձեռնարկել և նպատակ էլ չունեն ձեռնարկելու Թուրքիայի դեմ։ Այդ հարցի մասին 1907 թ. հոկտեմբերին Թեհրանից ռուսական դեսպանորդը գրում էր, որ անգլո-ռուսական համաձայնագիրը ստորագրվելուց հետո Իրանի ժողովուրդը հույսը կորել է, թե Ռուսաստանը և Անգլիան իրեն կպաշտպանեն Թուրքական ագրեսիայից։ Դեսպանորդը տագնապ էր հայտնում, որ գտնվելով անելանելի վիճակում, Իրանի քաղաքական շրջանները կարող են օգնություն խնդրել Գերմանիայից և ապա Անգլիայի ու Ռուսաստանի պասսիվ դիրքը Թուրքական ագրեսիայի նկատմամբ ժողովրդին կարող է առիթ տալ մտածելու, թե գաղտնի համաձայնագրով Իրանի երրորդ հարևանին՝ Օսմանյան կայսրությանը ևս իրավունք է տրվում Իրանում ստանալ համապատասխան տերիտորիալ փոխհատուցում։ Դեսպանորդը ցանկալի էր համարում ուժեղացնել ճնշումը Ստամբուլի վրա, որը, նրա կարծիքով, մի կողմից պարսիկների աչքում լավագույն ապացույց կլիներ այն բանի, որ Ռուսաստանը և Անգլիան անկեղծորեն ցանկանում են պաշտպանել իրանական տերիտորիայի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, մյուս կողմից՝ վերջ կտար գերմանացիների ծայր աստիճանի վտանգավոր դավերին[185]։

Այսպիսով, նոր ստեղծված պայմաններում Թուրքիան կարող էր անգնահատելի ծառայություններ մատուցել Գերմանիային անգլո-ռուսական բլոկի դեմ մղած պայքարում։ Սակայն իրանական հարցում Գերմանիայի և Թուրքիայի շահերի միասնության ստեղծումը բնավ չէր նշանակում, թե Օսմանյան կայսրությունը

---

[184] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 34, лл. 312, 323.

[185] АВПР, «Персидский стол», д. 914, лл. 220—220 об.

այսուհետև դառնալու էր Գերմանիայի հլու կամակատարը և Իրանում նրա վարած քաղաքականության կույր գործիքը։ Ընդհակառակը, Թուրքիան վերոհիշյալ հարցում ոչ միայն շարունակում էր վարել միանգամայն ինքնուրույն քաղաքականություն, այլև շատ հաճախ գործում էր հակառակ Գերմանիայի «խորհուրդների»։

1907 թ. աշնանից թուրք-իրանական հարաբերություններն ստացան միջազգային կոնֆլիկտի բնույթ, որովհետև անմիջականորեն շոշափում էին ոչ միայն այդ պետությունների, այլև երկու հզոր, միմյանց նկատմամբ թշնամական բլոկների շահերը։

Գերմանական քաղաքականության շրջադարձը իրանական հարցում ցնծությամբ ընդունվեց Աբդուլ Համիդի կառավարության կողմից և ոգեշնչեց նրան ձեռնամուխ լինելու նոր զավթումների։ Այդ առթիվ «Մշակը» գրում էր. «Ներկայումս, երբ կնքվեց անգլո-ռուսական համաձայնությունը, որի մի կետն էլ Պարսկաստանի ամբողջության պահպանությունն է, «հիվանդ մարդը» անգիտակ ձևանալով, կարծեք հենց հեգնելու համար երկու հզոր պետությունների գործը, իր «հիվանդ տեղովը» արշավում է Պարսկաստանի վրա՝ գրավելով երկրներ, համաձայն հմուտ «բժշկության» (իմա Գերմանիայի—Վ. Բ.) ցուցմունքների»[186]։

Թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բայուրը ևս խոստովանում է, որ Աբդուլ Համիդի զավթողական քաղաքականությունը Իրանում վայելում էր Գերմանիայի աջակցությունը[187]։ Օգտվելով այդ աջակցությունից, Թուրքիան կրկնապատկված եռանդով ձեռնամուխ եղավ Իրանում իր ագրեսիվ քաղաքականության իրականացմանը։ 1907 թ. վերջերին թուրքական զավթումներն արդեն ընդգրկում էին Իրանական Ադրբեջանի ողջ արևմտյան մասը՝ 36-րդ զուգահեռականից մինչև 38-րդ զուգահեռականն ընկած շրջանը[188]։ Օկուպացված էր Ուշնուն, Բանեն, Մերգևերը, Թերգևերը, Բարադոսթը, Միանդոաբի շրջանը, Սոմայի և Սալմաստի շրջանների մի մասը և Ուրմիա լճից հարավ մի շարք այլ տերիտորիաներ։ Թուրքական զորքերը սպառնում էին ներխուժել նաև Ուրմիա քաղաքը։

---

186 «Մշակ», 20 հոկտեմբերի, 1907 թ.։

187 *Yusub Hikmet Bayur*, նշվ. աշխ., հ. II, մաս IV, էջ 99։

188 «Турецко-персидская пограничная спорная полоса». «Сборник главного управления Генерального штаба», вып. 58, март 1914, СПб, стр. 79.

Նրանք այնքան էին խորացել այդ ուղղությամբ, որ հարկեր էին հավաքում Ուրմիայից ընդամենը վեց մղոն հեռավորության վրա ընկած գյուղերում։ Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին նաև հարավային կամ Մուքրի Քրդստանում, որտեղ օկուպացիոն զորքերը տեղական քրդերի օգնությամբ Սոուջբուլաղից վռնդեցին իրանական նահանգապետին և քաղաքը ամբողջապես վերցրին իրենց հսկողության տակ[189]։

Արքան-ուլ-Հարբի (գլխավոր շտաբ) ռազմական գործակալը անմիջապես քարտեղահանում էր զավթած տերիտորիաները և դրանք մտցնում Օսմանյան կայսրության կազմի մեջ[190]։

Զավթումներն ընդլայնելու հետ զուգահեռ թուրքերի տակտիկական զինանոցը հարստանում էր նորանոր մեթոդներով։ Շահական կառավարությունից և տեղական իշխանություններից Ադրբեջանի և Քրդստանի բնակչության դժգոհությունը օգտագործելու հետ մեկտեղ, նրանք բորբոքում էին կրոնական հակամարտությունը սուննիների և շիիների միջև, որպեսզի այնուհետև կարգ ու կանոն հաստատելու պատրվակի տակ օկուպացիոն զորքերը միջամտեն տեղական գործերին[191]։ Արտաքին գործերի մինիստրության հրահանգով իրենց գործունեությունն ակտիվացրին նաև Իրանում գործող թուրքական հյուպատոսները, որոնք աշխատում էին Թուրքիայի կողմը հակել սուննիթ և շիիթ հոգևորականության վերնախավին և տեղական ազդեցիկ ֆեոդալներին ու խաներին։ Նույնիսկ Սեքքեզի, Սեննեի և մի շարք այլ շրջանների պանիսլամիստական տրամադրություններ ունեցող բազմաթիվ շիիթ մուշտեհիդներ սկսեցին պաշտպանել Թուրքիայի անեքսիոնիստական պլանները Իրանական Քրդստանի նկատմամբ[192]։

Թուրքիայի կողմից իրանական տերիտորիաների պլանաչափ զավթումները վերջնականապես համոզեցին ռուսական կառավարող շրջաններին, որ տվյալ դեպքում գործ են ունենալու ոչ հասարակ սահմանային միջադեպի հետ։ Ցարական դիվանագետները

---

189 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 124, лл. 444, 447; д. 126, л. 460; ф. «Персидский стол», 1907, д. 914, лл. 188—189.

190 «Тифлисский листок», 1907, 14 сентября.

191 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 1196, лл. 155, 180.

192 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 62, л. 42.

զգաստորեն գնահատեցին այն սպառնալիքը, որ թուրքական էքսպանսիան կարող էր ունենալ Ռուսաստանի համար։ Նրանք գտնում էին, որ Օսմանյան կայսրությունը սպառնալիք է ստեղծում Ռուսաստանի ստրատեգիական դիրքերին ոչ միայն Մերձավոր ու Միջին Արևելքում, այլև փորձում է սողոսկել Անդրկովկաս[193]։

Ցարական ռազմական գործիչների կարծիքով Ռուսաստանի հետ պատերազմի դեպքում Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանը օսմանյան Թուրքիայի համար ունենալու էր ստրատեգիական կարևորագույն նշանակություն։ Այնտեղից վերջինս ոչ միայն կարող էր սպառնալ Էրզրումի դեմ գործող ռուսական զորքերի հաղորդակցության գծերին, այլև ամբողջ թիկունքային հիմնարկություններին, որովհետև շրջանցելով Կարսը, թուրքական զորքերը, կարող էին Իրանի տերիտորիայի վրայով ուղղակի շարժվել Ալեքսանդրապոլի, Երևանի և Թիֆլիսի վրա[194]։ Հատկանշական է, որ այդ մասին տագնապալից հոդվածներ էր գրում նաև Կովկասի հայկական մամուլը։ Այսպես, «Մշակում» կարդում ենք. «...Կովկասարնակ մահմեդական տարրը Թուրքիայի համար մի ցանկալի ուժ է, որը կարող է մեծապես նպաստել տաճկական ռազմագիտական ծրագրերի իրագործելուն։ Եվ ահա նա հեղեղում է Կովկասի մահմեդարնակ գավառները իր լրտեսներով, Պոլսում հրատարակված հատկապես այդ նպատակի համար գրքերով և շրջիկ գրավաճառներով։ «...Հիվանդ մարդը» իր հայացքն ուղղում է դեպի այն նահանգները, որոնք զուտ մահմեդական են և կամ որոնց ճնշող մեծամասնությունը մահմեդական է։ Հմուտ բժշկությունը դարձնում է նրա ուշադրությունը Պարսկաստանի և Ատրպատականի վրա։ Գրավելով այդ մասը, այդտեղից մեծ դյուրությամբ Թուրքիան կապեր կհաստատի մանավանդ Դաղստանի հետ, իսկ պատերազմի դեպքում կկազմվի այն կարևոր ռազմագիտական օղակը ռուսական առաջխաղացող զորքերի թիկունքում, որի կենտրոնն է լինելու Կարսի բերդը, իսկ շուրջը՝ Էրզրումի և Վանի վիլայեթները, Պարսկաստանից խլված Ատրպատականի հյուսիսային մասը, Բաքվի նահանգը և Դաղստանը։ Ահա «հիվանդ մարդու» երկարակեցության համար մշակված ռազմագիտական ծրագրերը, որոնց ներշնչողը

---

193 АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 1196, л. 195.

194 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009, лл. 1—3.

Թուրքական գերման ռազմագետներն են և որոնց ծպտյալ ներկայությունը պարսկական սահմաններում առաջխաղացող Թուրքական զորքերի մեջ հաստատվեց վերջին լրագրական տեղեկություններից»[195]։

Ռուսաստանի համար ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ և այն, որ սպառնալիքի տակ էին դրվում նրա առևտրական-տնտեսական շահերը Իրանի այն շրջաններում, որոնք մտնում էին ռուսական «ազդեցության» գոտու ոլորտի մեջ և ամենասերտ կապերով կապված էին ռուսական շուկայի հետ։ Եվ վերջապես իրանական պետության վրա կախված էր նրա տերիտորիալ ամբողջականությունը կորցնելու լուրջ վտանգը, որը ավելի սպառնալից բնույթ ընդունեց այն պատճառով, որ 1907 թ. ամռանը անգլիացիների դրդմամբ Մուհամմերայի շեյխ Խազալը սկսեց փորձեր կատարել Խուզիստանը Իրանից անջատելու ուղղությամբ։ Հաղորդելով այդ մասին Բասորում (Բասրա—Վ. Բ.) ռուսական հյուպատոս Իվանովը գրում էր, որ դա կարող է սկիզբ դնել Իրանի անկմանը։ Քանի որ այդ բոլորը չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին, նա առաջարկում էր, նկատի ունենալով դաջարական պետության ծայր աստիճանի ռազմական թուլությունը, ակտիվորեն միջամտել Թուրք-իրանական հարաբերություններին՝ արգելելու համար իրանական պետության տերիտորիալ մասնատումը և նրա քաղաքական փլուզումը[196]։

Յարական դիվանագիտությունը ձգտում էր պարզել նաև այն հարցը, թե ի՞նչ պատճառներով Օսմանյան կայսրությունը իր նվաճումները սահմանափակում է Հյուսիսարևմտյան Իրանով և չի դիմում տերիտորիալ զավթումների քաղաքականության երկրի հարավարևմտյան շրջաններում։ Անդրադառնալով այդ հարցին, Բաղդադում փոխ-հյուպատոս Մաշկովը հայտնում էր այն կարծիքը, որ «եթե ռուսական սահմանից մինչև Խանեկին Թուրքիան ուժեղ է Իրանից ինչպես զորքերի քանակով, այնպես էլ որակով, ապա Խանեկինից հարավ մինչև Ֆաո գերակշռությունը անցնում է Իրանին, որը այստեղ իր տրամադրության տակ ունի ուժեղ, ռազմասեր

---

[195] Ս. Նազարեթյան, Պարսկաստանի սահմաններում Թուրքաց զորքերի առաջխաղացման ռազմագիտական նշանակությունը, «Մշակ», 20 հոկտեմբերի, 1907 թ.։

[196] АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 913, лл. 168—168 об.

բուրդ ու լուր ցեղեր, որոնց հետ բախումների ժամանակ թուրքական զորքերը մշտապես պարտություն են կրում։ Շատ հավանական է, որ ռազմական գործողությունների դեպքում նույնիսկ Բաղդադը կարող է դառնալ իրանական բրդերի և լուրերի արշավանքի հեշտ ավարը»[197]։

Այդ նույն տեսակետը զարգացնում էր նաև Բասրայում փոխհյուպատոս Իվանովը։ Ի պատասխան արտաքին գործերի մինիստրության հանձնարարության՝ թուրք-իրանական սահմանային կոնֆլիկտի կապակցությամբ տեղեկություններ հավաքել Միջագետքում Թուրքիայի և Իրանի ուժերի հարաբերակցության մասին, Իվանովը Զինովևին ուղղված 1907 թ. սեպտեմբերի 15-ի հաղորդագրության մեջ գրում էր, որ հարավային սահմաններում շեյխ Խազալը Թուրքիայի դեմ կարող է ոտքի հանել քառասուն հազարանոց բանակ, բացի դրանից Իրանը իր տրամադրության տակ ունի լուրերի հիանալի հեծելազորը, որը Փուշտիքուհի ռազմաշունչ խանի գլխավորությամբ «այս տարվա սկզբին թուրքերին տվեց դաժան դաս՝ մասամբ ոչնչացնելով, մասամբ էլ գերի վերցնելով մի ամբողջ թուրքական գումարտակ»։ «...մինչդեռ Թուրքիան չի կարող հույս դնել իր արաբների վրա ինչպես այն պատճառով, որ նրանք համարյա գլխովին շիիթներ են, այնպես էլ այն ծայրահեղ ատելության հետևանքով, որ նրանք տածում են թուրքական իշխանության նկատմամբ։ Իսկապես, թուրքական իշխանությունը ոչ միայն ոչինչ չի արել այդ շրջանի անվտանգությունն ապահովելու, նրա կուլտուրական և տնտեսական մակարդակը բարձրացնելու, բնակչության մեջ պետական ինքնագիտակցության գաղափարը սերմանելու տեսակետից, այլև օգնում է այնտեղ քաոսային վիճակը պահպանելուն»։ Այնուհետև Իվանովը շարունակում էր. «Պարսկաստանը կարող էր հեշտությամբ պատժել Թուրքիային Ուրմիայի սահմանները ներխուժելու համար և Բասրայում այդ բանը գերազանց կերպով դիտակցում են. հավանաբար դա դիտակցում են նաև Պարսկաստանում, սակայն վերջինիս պահում է այն, որ չնայած շիիթասուննիթական ողջ հակամարտությանը, Թուրքիան Իրանում վայելում է որոշ հեղինակություն որպես միակ մահմեդական երկիր,

---

197 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 6 об.

որը հակահարված է տալիս եվրոպացիներին։ Բացի այդ, Իրանը չի դիմում հակամիջոցների, որովհետև գիտակցում է, որ սահմանի մնացած մասում ինքը թույլ է Թուրքիայից»[198]։

Իհարկե այս տեսակետների մեջ կար որոշ ճշմարտություն, սակայն դրանք, այնուամենայնիվ, միակողմանի էին։ Կարևորը այն էր, որ նախ Թուրքիայի ռազմա-քաղաքական պլաններում առաջնակարգ նշանակություն ուներ ոչ թե Իրանի հարավը կամ հարավարևմուտքը, այլ Իրանական Ադրբեջանն ու Քրդստանը։ Բացի այդ, Հարավարևմտյան Իրանում ագրեսիվ քաղաքականություն վարելու դեպքում Թուրքիան անխուսափելիորեն բախման մեջ էր մտնելու նաև Անգլիայի հետ, որը խիստ անցանկալի էր նրա համար, որովհետև այդ դեպքում նա կհանդիպեր Իրանով շահագրգռված երկու հզոր պետությունների կոլեկտիվ հակահարվածին։

Սակայն ծագում է մի այլ հարց. միթե՞ գերմանական իմպերիալիզմը չէր հարկադրում Թուրքիային ագրեսիվ-զավթողական քաղաքականություն վարելու Իրանի հարավում, այսինքն այն շրջաններում, որոնց նկատմամբ նա դրսևորում էր ավելի մեծ հետաքրքրություն (Բաղդադի երկաթուղին, նավթաբեր շրջանը, Պարսից ծոցը և այլն), քան հյուսիս-արևմուտքի նկատմամբ։ Փաստերը վկայում են, որ գերմանական կառավարությունը, 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի կնքումից հետո, հետևողականորեն ճնշում էր գործադրում Թուրքիայի վրա, պահանջելով ակտիվ քաղաքականություն վարել նաև Պարսից ծոցի և Հարավարևմտյան Իրանի ուղղությամբ, բայց և միշտ հանդիպում էր Ստամբուլի դիմադրությանը կամ բախվում թուրքական դիվանագիտության անորոշ պատասխանների տակտիկային։ Կարելի է ենթադրել, որ Ֆորին-Օֆիսը հիանալի տեղյակ էր Բեռլինի նման միջոցառումներին, և այդ պատճառով աշխատում էր թուրք-իրանական կոնֆլիկտի հարցում ոչ միայն դեմ դուրս չգալ Թուրքիային, այլև առաջնորդվելով իր հակառուսական ձգտումներով գաղտնապես աջակցել նրան։ Այդ մասին են վկայում հետևյալ փաստերը։ 1907 թ. աշնանը Իրանում թուրքական ագրեսիայի ուժեղացումը ռուսական դիվանագիտական շրջաններում գնահատվեց որպես Գերմանիայի բո-

[198] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 1030, лл. 12—14.

ղոքի արտահայտություն անգլո-ռուսական համաձայնագրի դեմ[199]։ Յարական արտաքին գործերի մինիստրությունում գտնում էին, որ Բ. Դեան վրա Մեծ Բրիտանիայի հետ համատեղ դիվանագիտական ճնշման դեպքում թերևս կարելի կլինի սանձահարել Թուրքիային։ Սակայն պարզվեց, որ Անգլիայի հետ համատեղ ելույթը բացառվում է։ Ավելին, անգլիական դիվանագիտությունը շտապեց թուրք-իրանական կոնֆլիկտի բորբոքման պատճառները բարդել Ռուսաստանի և Գերմանիայի վրա։ 1907 թ. հոկտեմբերի 24-ին «Թայմսը» հանդես եկավ մի խմբագրականով, որտեղ շարադրվում էր Անգլիայի տեսակետը թուրք-իրանական հարաբերությունների վերաբերյալ։ Այնտեղ ասվում էր. «Համաձայնագիր կնքելու վերաբերյալ անգլո-ռուսական բանակցությունները... ուղղակի համընկան Իրանի և Թուրքիայի միջև փոխհարաբերությունների ճգնաժամի հետ։ Ներկայումս համաշխարհային քաղաքականության ծանրության կենտրոնը ընկած է երկաթուղիների երկու ապագա գծերի միջև. թուրք-գերմանական, որը շարունակվելով Մոսուլից, պետք է անցնի Տիգրիսի հովտով մինչև Քուվեյթ, և ռուս-պարսկական, որը անցնելու է Ջուլֆայից Արաք և ապա ուղիղ գծով Թավրիզի վրայով մինչև Պարսից ծոց (Բուշիր)։ Նախագծելով այդ երկու երկաթուղային գծերը Գերմանիան և Ռուսաստանը բնականաբար նկատի ունեին Իրանի արևմտյան մասի՝ Ուրմիա լճի շրջակայքի հարստությունները։ Այստեղից էլ այդ երկրում հիշյալ երկու պետությունների շահերի բախումը»[200]։

Այսպիսով, Լոնդոնը փաստորեն հայտարարում էր, որ ինքը թուրք-իրանական վեճի հարցում որևէ շահ չունի, հետևաբար ձեռնպահ է մնալու Ռուսաստանի հետ համագործակցելուց։ Սա վկայում էր այն մասին, որ նույնիսկ համաձայնագիր կնքելուց հետո անգլո-ռուսական հակամարտությունը շարունակում էր ուժի մեջ մնալ։ Բացահայտելով Անգլիայի վերոհիշյալ քաղաքականության մթին ծալքերը, Քերմանում ռուսական հյուպատոս Ադամովը գրում էր. «Մեծ Բրիտանիայի կառավարությունը բանակցությունների մեջ է մտել Թուրքիայի հետ Բաղդադի երկաթուղու հարցում զիջումներ

199 *Տե՛ս* «Тифлисский листок», 1907, 9 ноября.

200 *М. Ардатов,* Турецко-персидский пограничный конфликт, стр. 1—3.

ստանալու վերաբերյալ, փոխարենը խոստանալով հրաժարվել սահմանային վեճին միջամտելուց...»[201]։

Հարավային Իրանում գործողությունների ազատություն ստանալու, այդ շրջանում գերմանա-թուրքական ակտիվ բաղաքականության հնարավորությունը ի չիք դարձնելու և Իրանում իր մրցակցի՝ Ռուսաստանի դիրքերը թուլացնելու նպատակով Անգլիան նույնիսկ Թուրքիային գրգռում էր Իրանի և Ռուսաստանի դեմ։ «Թայմսը», օրինակ, գրում էր, որ Թուրքիան այլևս չի վախենում Ռուսաստանից Ճապոնիայի հետ նրա վերջին պատերազմից հետո և շատ հավանական է, որ նա վստահ է իր հաղթանակին Ռուսաստանի հետ պատերազմի դեպքում, քանի որ Անգլիան զբաղված է իր սեփական դժվարություններով Հնդկաստանում և Եգիպտոսում, իսկ Գերմանիան միանգամայն բարյացակամորեն կվերաբերվի մի փաստի, որը հնարավորություն չի տա իրագործվելու Ջուլֆա-Բուշիր գիծը»[202]։

Անգլիական այս բաղաքականությունը ռուսական կառավարությանը դրեց մեծ դժվարության առջև։ 1907 թ. նոյեմբերի 30-ին վերջինս գումարեց հատուկ նիստ քննարկելու համար թուրքական ագրեսիայի հարցը Իրանում։ Նիստում նախագահում էր մինիստրների խորհրդի նախագահ և ներքին գործերի մինիստր Ա. Պ. Ստոլիպինը։ Ներկա էին նաև արտաքին գործերի մինիստր Ա. Իզվոլսկին, ֆինանսների մինիստր Վ. Կոկովցովը, ինչպես նաև ծովային և ռազմական մինիստրները, գլխավոր շտաբի պետը և այլ բարձրաստիճան անձինք։

Իր ելույթում արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ «Թուրքերն օգտվեցին Պարսկաստանի ներկայիս թուլությունից իրենց վաղեմի մտադրություններն իրագործելու համար և աստիճանաբար գավթում են Ուրմիա լճից արևմուտք և հարավ ընկած անվիճելիորեն պարսիկներին պատկանող հողերը։ Այդ գավթումները, գլխավոր շտաբի կարծիքով, մեզ համար ծայրահեղ վտանգավոր են զուտ ստրատեգիական նկատառումներով, սակայն մյուս կողմից դրանք մեզ համար ահռչ ու անձեռնտու են այն առումով, որ պարսիկները ամբողջապես գտնվում են Թուրքիայի կողմից

[201] «Турецко-персидская пограничная спорная полоса», стр. 79.

[202] *М. Ардатов*, Турецко-персидский пограничный конфликт, стр. 5.

դրսևորվող եռանդի ազդեցության տակ, իսկ մեր կողմից տեսնում են կամ օգնելու անզորություն, կամ, լավագույն դեպքում, անտարբերություն։ Այսպիսի վիճակը...,—եզրակացնում էր Իզվոլսկին,— իհարկե չի նպաստում մեր հեղինակության ամրապնդմանը»[203]։

Խորհրդակցությունում որոշվեց կառավարությունից պահանջել որոշ եռանդ և վճռականություն ցուցաբերել Իրանում թուրքական ագրեսիայի նկատմամբ։ Խոր վերլուծության ենթարկելով Իրանում և Անդրկովկասի սահմանների մոտ ստեղծված իրադրությունը, ռուսական կառավարող շրջանները որոշեցին փոխել իրենց վերաբերմունքը թուրք-իրանական կոնֆլիկտի նկատմամբ։ Ռուսաստանի միջազգային և ներքին դրությունը զգալիորեն ամրապնդվել էր և նա արդեն կարող էր ակտիվ քաղաքականություն վարել Մերձավոր և Միջին Արևելքում։

Բ. Դոան վրա ճնշում գործադրելու նպատակով ցարական կառավարությունը ի թիվս այլ միջոցների, առաջ քաշեց նաև Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու հարցը։ Թուրքիայում ռուսական հյուպատոսները ամեն առիթով բարյացակամ վերաբերմունք էին ցույց տալիս դեպի հայերը և բողոքում Բ. Դոանը՝ Մուշի, Բաղեշի և այլ շրջանների արևմտահայ ազգաբնակչության կրած հալածանքների ու հարստահարությունների դեմ։ Այս շրջանում Ռուսաստանի կողմից հայկական հարցի բարձրացումը ըստ երևույթին հետապնդում էր երկու հիմնական նպատակ՝ 1) ռուս-թուրքական պատերազմի դեպքում ապահովել արևմտահայության աջակցությունը, 2) «Հայկական հարցը» ճոճելով Բ. Դոան առջև Թուրքիային դուրս քշել Իրանից[204]։

1907 թ. վերջերին Իրանում հասունանում էին նոր իրադարձություններ։ Նոյեմբերի սկզբից շահը սկսեց Թեհրանում կենտրոնացնել զորքեր։ Շահական արքունիքի սադրանքով ռեակցիոն ուժերը ակտիվացան նաև նահանգներում։ Երկրում նախապատրաստվում էր հակահեղափոխական հեղաշրջում։ Սակայն ժողովրդական շարժման ճնշման տակ մինիստրների կաբինետը ստիպված էր հրաժարական տալ։ Ուժերի հարաբերակցությունը շահի օգտին չէր և վեր-

---

203 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 47, л. 110.

204 Տ. Ջավեն, Ինչ է կատարվում Պարսկաստանում, «Երկրի ձայնը» (շաբաթաթերթ), Բ. տարի, հոկտեմբերի 23, 1907 թ.։

ջինս ստիպված էր միաժամանակ հրաժարվել հակահեղափոխական հեղաշրջում կատարելու իր մտադրությունից։ Երկրում ծայր առավ համընդհանուր գայրույթի պոռթկում շահի և նրա կառավարության նենգ քաղաքականության դեմ։ Թավրիզի էնջումենը նույնիսկ կոչ էր անում տապալել շահին և ընտրել նոր շահ[205]։ Այս պայմաններում արքունիքին անհրաժեշտ էր ինչ-որ ձևով շեղել ժողովրդի ուշադրությունը ներքին հարցերից։ Որոշվեց այն բևեռել Թուրքական վտանգի վրա, մանավանդ, որ կառավարության դավաճանական քաղաքականությունը այդ հարցում հեղափոխական շրջանների կողմից օգտագործվում էր շահին վարկաբեկելու համար։ Մյուս կողմից երկրի հասարակական կարծիքը զրգռված էր սահմանագլխից եկող աննպաստ լուրերի հետևանքով։ Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Ֆարման Ֆարմայի արշավանքը դեպի Սոուջբուլաղ՝ Թուրքական զորքերի առաջխաղացումը կասեցնելու մտադրությամբ, ավարտվել էր կատարյալ ձախողմամբ։ Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատար Ահմեդ Ֆազիլ փաշան բրդական մամաշ, փիրան, մանգուր, շամսադինլու, մուբրի, դեհբորբի, բեյլագան և այլ ցեղերի ջոկատների օգնությամբ 1907 թ. վերջին ջախջախեց Ֆարման Ֆարմայի զորքերը և գրավեց Սոուջբուլաղը[206]։ Շահական իշխանությունները խուճապահար թողնում էին Սոուջբուլաղի և Միանդոաբի շրջանները։ Այդ առթիվ կովկասյան մամուլը գրում էր, որ այդպիսի խուճապի հետևանքով Թուրքերը կվերցնեն ոչ միայն Սոուջբուլաղը, այլև ամբողջ Քրդստանը[207]։ Թուրքական գործակալությունը, որը քրդական գյուղերում կոչ էր անում ապստամբել իրանական կառավարության դեմ, ամենուրեք հայտարարում էր, որ շուտով Սոուջբուլաղի ողջ նահանգը մինչև Ջաղաթու գետը ներառյալ կմիացվի Թուրքիային[208]։ Իր հերթին Ֆար-

---

[205] «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», вып. 1, СПб., 1911, стр. 50.

[206] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 37, лл. 211, 215. «Մշակ», 23 փետրվարի, 1908 թ..

[207] «Тифлисский листок», 1907, 8 декабря.

[208] АВПР, ф. «Персидский стол, Б.», 1910—1912 гг., д. 59, л. 7; *Д. М. Беляев*, Очерк северо-восточной части Персидского Курдистана, стр. 8, 11.

ման Ցարման ներքին գործերի մինիստրին հասցեագրած իր բազում աղերսական հեռագրերում նախազգուշացնում էր, որ «Ուրմիան և Սոուջբուլաղը գտնվում են Իրանից անջատվելու վտանգի տակ, իսկ Միանդոաբը գրավելուց հետո, կարելի է վստահ լինել, որ Թուրքական զորքերը չեն հապաղի ժամանել նաև Թավրիզ»[209]:

Այս լուրերը իսկապես ծայրահեղորեն զրգռել էին երկրի բոլոր հայրենասերներին: Մեջլիսում ձախ պատգամավորները մերկացնում էին կառավարությանը, հայտարարելով, որ վերջինս երկրի զինված ուժերը օգտագործում է ոչ թե արտաքին թշնամիների, այլ էնջումենների ու պառլամենտի դեմ: Մայրաքաղաքում տեղի էին ունենում ցույցեր. ժողովուրդը պահանջում էր, որպեսզի կառավարությունը բոլոր մարտունակ զորքերը, այդ թվում նաև հակահեղափոխական ուժերի ապավեն կազակական բրիգադը, ուղարկի սահման[210]: *Իսկ Թավրիզի էնջումենը անընդհատ հեռագրեր էր ուղարկում կառավարությանը, պահանջելով, որ շտապ միջոցներ ձեռնարկվեն Թուրքական ագրեսիայի դեմ, սպառնալով, հակառակ դեպքում ողջ Ադրբեջանում մերկացնել շահի դավաճանական քաղաքականությունը*[211]:

Այս պայմաններում շահական կառավարությունը դիմեց խորամանկ քաղաքական մանյովրի: 1908 թ. հունվարի 18-ի Մեջլիսի նիստում շահի անունից հայտարարվեց, որ հրամայված է զարադաղյան և շահսևենյան ցեղերի հեծյալներին անմիջապես մեկնել սահման: Այնուհետև «Մեջլիս» թերթում հրապարակվեց Թավրիզի էնջումենին ուղղված շահի հեռագիրը, որտեղ ասվում էր. «...մենք պատրաստ ենք մեր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով պաշտպանել Իրանի ազատությունն ու անկախությունը: Թուրքական արշավանքը դայրույթի տեղիք է տալիս ողջ պարսիկ ժողովրդի մոտ: Մենք դա շատ լավ գիտենք և հույս ունենք աստծո օգնությամբ և մեր առաքինի ժողովրդի աջակցությամբ ետ մղել այն և պայքարել մինչև արյան վերջին կաթիլը»[212]:

---

209 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 47, л. 5.

210 «ИШКВО», № 21, Тифлис, 1908, стр. 66—67, № 22, Тифлис, 1908, стр. 74.

211 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 47, л. 5 об.

212 روزنامهٔ «مجلس»، ۱۹۰۸، ۲۱ ژانویه، نمرهٔ ۲۹

Քանի որ այս խոստումները Բերահավատությամբ ընդունվեցին հեղափոխական շրջանների և հատկապես Թավրիզի էնջումենի կողմից, շահական կառավարությունը ստիպված էր դիմել որոշ «գործնական» քայլերի։ Սահման ուղարկվեցին ոչ մեծ քանակությամբ անկանոն զորքեր, որոնք, սակայն, ճանապարհներին ցրվեցին և այդպես էլ չհասան ռազմական գործողությունների թատերաբեմ[213]։ Բացի այդ, Քերմանշահի ժամանակավոր նահանգապետ Զահիր-ուլ-Մուլքին հրամայվեց արշավանք կազմակերպել Քասրի-Շիրինի շրջանը, որտեղ սպասվում էին Թուրքիայի կողմից ագրեսիվ գործողություններ։ Սակայն այդ ծիծաղելի արշավանքի հետևանքով, որին մասնակցում էին ընդամենը 50 հեծյալներ և մի գունդ, որի տրամադրության տակ կար ոչ ավելի քան մեկ հնացած թնդանոթ, տեղական բնակչությունը ավելի խոր թշնամանքով լցվեց շահական կառավարության նկատմամբ։ Խուսափելով թուրքական զինված ուժերի հետ բախումից Զահիր-ուլ-Մուլքը իր «զբոսանքի» օգնությամբ ձեռնամուխ եղավ տեղական բնակչությունից մալիաթի գանձմանը և անխնա կողոպուտի[214]։

Այս իրադարձությունները և հատկապես թուրքական զորքերի կողմից Սոուջբուլաղի գրավումը, որը սպառնալիքի տակ էր դնում Ռուսաստանի առևտրական[215], քաղաքական և ստրատեգիական դիրքերը Իրանական Քրդստանում, ցարական կառավարության կողմից դիտվեց որպես Իրանում Օսմանյան կայսրության քաղաքական ոտնձգությունների ընդլայնման մի նոր փաստ։ Որոշվեց Ստամբուլում ռուսական դեսպանի միջոցով խիստ բողոք ներկայացնել սուլթանին[216]։ Դա ունեցավ իր ազդեցությունը։ Ճիշտ է, Բ. Դուրը փորձում էր արդարանալ, որ Ահմեդ Ֆազիլ փաշան Սոուջ-

---

[213] «ИШКВО», № 22, Тифлис, 1908, стр. 75—76.

[214] «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», вып. 1, стр. 114.

[215] Ռուսաստանի համար Սոուջբուլաղն ուներ հսկայական առևտրական նշանակություն, որովհետև նա Ուրմիա, Համադան և Թուրքիա, հատկապես Ռևանդուզ տանող քարավանային ճանապարհների հանգուցակետն էր։ Տե՛ս П. Я. Максимович-Васильковский, Поездка в Персию. «Известия Кавказского отделения императорского Русского географического общества», 1904, т. XVI, № 4, стр. 235.

[216] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 97.

քուլաղը գրավել է առանց կառավարության հրամանի, ինքնագլուխ, սակայն, ի վերջո ռուսական դեսպանի համառ պնդումների հետևանքով ստիպված էր հրամայել, որ թուրքական զորքերը դուրս բերվեն Սոուջբուլաղից։ 1908 թ. փետրվարի 24-ին Ֆարման Ֆարմայի ուղարկած ջոկատը Իման Ղալի միրզայի հրամանատարությամբ մտավ Սոուջբուլաղ։

Թուրքական քաղաքականության այս պարտությունը Մուքրի Քրդստանում ծանր տպավորություն գործեց տեղական բնակչության վրա և առաջին ուժգին հարվածը հասցրեց թուրքերի նկատմամբ քրդական ավագանու տածած համակրանքին. կասկածի տակ դրվեցին այն բոլոր խոստումները, որ օկուպացիոն իշխանությունները արել էին քրդական ֆեոդալներին։ Ավելին, Սոուջբուլաղի 21-օրյա օկուպացիայի ընթացքում տեղական բնակչությունը համոզվեց, որ թուրքական ասկյարները, որոնք նրանց պատկերացմամբ հանդիսանում էին իրենց հոգևոր առաջնորդ սուլթան-խալիֆի բարեպաշտ գինվորները, ոչ միայն վատ սուննիթներ են, այլև ուղղակի վատ մահմեդականներ, որովհետև դավանակից բնակչության նկատմամբ իրենց պահում էին ինչպես հաղթողը հաղթվողի հետ[217]։

Սասանված հեղինակությունը վերականգնելու և մանավանդ զավթումներին նոր թափ հաղորդելու նպատակով Օսմանյան կայսրությունը սկսեց տենդորեն զորքեր կենտրոնացնել իրանական սահմանների մոտ։ 1908 թ. հունվարի 31-ին Թուրքիայում Ռուսաստանի ռազմական գործակալ, գնդապետ Խոլմսենը հաղորդում էր, որ Օսմանյան կայսրության բարձրագույն գինվորական հանձնաժողովը հարց է առաջ քաշել մոբիլիզացիայի ենթարկել 6-րդ կորպուսի ռեդիֆի (ռեզերվային բանակ) 20 դիմարտակներ և դրանք ուղարկել Փեսվե[218]։ Փետրվարին Լահիջանի շրջանում և Ուրմիա լճից արևմուտք ընկած շրջաններում, հատկապես Բաշկալայում և Սերայում կենտրոնացվեցին 17 դիմարտակ, 3 հեծելավաշտ և 3 մարտկոց։ 6 ուժեղացված դիմարտակներ ուղարկվեցին նաև Խանեկինի ուղղությամբ։ Մոբիլիզացվում էին ոչ միայն հինգերորդ սիրիական և վեցերորդ Բաղդադի կորպուսների ռեդիֆային զորամասերը, նիզամը (մշտական բանակ) և համիդիե գնդերը, այլև

---

[217] Д. М. Беляев, նշվ. աշխ., էջ 10։

[218] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1014, лл. 59—60.

Կովկասի դեմ կանգնած չորրորդ բանակային կորպուսի զորքերը[219]։ Գերմանիան առատորեն մատակարարում էր այս զորքերին Կրուպպի նորագույն սիստեմի թնդանոթներ և զենքի այլ տեսակներ[220]։

Ռուսական հյուպատոսները և ռազմական գործակալները ուղղակի հեղեղում էին իրենց կառավարությանը տագնապալից հեռագրերով և ծածկագրված նամակներով։ Նրանցից շատերը (օրինակ, Բաղդադում ռուսական փոխ-հյուպատոս Մաշկովը) տեղեկացնում էր, որ ամենուրեք խոսակցություններ են գնում մոտ ժամանակներում Իրանի դեմ պատերազմ հայտարարելու մասին[221]։

Իր ռազմական նախապատրաստությունները Ռուսաստանի և Անգլիայի մոտ արդարացնելու նպատակով օսմանյան կառավարությունը հայտարարում էր նրանց դեսպաններին, թե իբր արևելյան վիլայեթներում հայերը պատրաստվում են ապստամբության և կառավարությունը ստիպված է միջոցներ ձեռնարկել դրա դեմ[222]։ Իսկ Պետերբուրգում թուրքական դեսպան Հուսնի փաշան ի պատասխան Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության պահանջի՝ բացատրել զորքերի այդ կենտրոնացումների պատճառները, հայտարարեց, որ այն բացարձակապես պայմանավորված է հայկական և քրդական «ավազակախմբերի» դեմ պայքարի անհրաժեշտությամբ[223]։ Այս հայտարարությունները հիմնավորելու համար Վանում, Մուշում, Բիթլիսում, Էրզրումում և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում կառավարությունը սկսեց կազմակերպել հայ բնակչության հալածանքներ, ձերբակալություններ և մասնակի ջարդեր[224]։ Տեղական մահմեդական բնակչության շրջանում իշխանությունները լուրեր էին տարածում, որ հայերը նախապատրաստվում են համընդհանուր ապստամբության և որ հայ հեղափոխականները նշանակալից ուժեր ունեն նաև Իրանում և Ռու-

---

219 Նույն տեղում, թթ. 6, 12, 16, 18—19։ Տե՛ս նաև „Сборник дипломатических документов, касающихся событий в Персии", вып. 1, стр. 114.

220 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 96.

221 Նույն տեղում, թ. 117-117 հ. 1, տե՛ս նաև *Колос*, Готовится ли Турция к войне?, „Тифлисский листок", 1908, 28 марта.

222 «Тифлисский листок», 4 мая 1908.

223 АВПР, ф. «Политархив», 1908, д. 86, лл. 21—24.

224 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, лл. 174—175, 176 об.

սաստանում[225]։ Անդրադառնալով այս իրադարձություններին, Վանում ռուսական փոխ-հյուպատոս Տերմենը իր 1908 թ. մարտի 24-ի հաղորդագրության մեջ գրում էր Ստամբուլի դեսպանին, որ, այսպես կոչված, «հայկական վտանգի» ուռճացումը պատրվակ էր իրանական սահմանների մոտ զորքերի ուժեղացման համար, իսկ հայերի նկատմամբ վարած քաղաքականության նպատակն էր ապահովել թիկունքը բուն Իրանում ագրեսիվ գործողություններ ծավալելու համար։ «...Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը պարզական սահմանում,— գրում էր Տերմենը,— պահանջում էր թիկունքի ապահովում»[226]։

Չսահմանափակվելով բուն Թուրքիայում հայերի հալածանքներով, թուրքական էմիսարները Իրանական Ադրբեջանում և Քրդստանում ևս սկսեցին հրահրել հայ և ասորի բնակչության ջարդեր։ Այսպես, 1908 թ. մայիսի 3-ին թուրքական իշխանությունների դրդմամբ քրդերը հարձակում գործեցին Ուրմիայից 25 մղոն հեռավորության վրա ընկած երեք ասորական և հայկական գյուղերի վրա և կազմակերպեցին ահավոր կոտորած։ Ի պատասխան իրանական կառավարության բողոքների, Թահիր փաշան հայտարարեց, որ «մարդասիրության զգացումից ելնելով Բ. Դուռը պատրաստ է Ուրմիա մտցնել շորս դումարտակ և այնտեղ սահմանել կարգ ու. կանոն»[227]։ Ուրմիայի փոխ-հյուպատոս բարոն Չերկասովի տեղեկությունների համաձայն, զգալով թուրքական զորքերի մոտալուտ գալստյան վտանգը, հայերը տենդագին շտապողականությամբ կազմակերպում էին ինքնապաշտպանության ջոկատներ՝ դիմադրություն ցույց տալու համար[228]։

Թուրքիան նախապատրաստում էր հայկական ջարդեր ոչ միայն Իրանում, այլև Անդրկովկասում, հատկապես այդ նպատակով աշխատելով կապեր հաստատել Անդրկովկասի և Իրանի մահմեդական հոգևորականության հետ, որը ի վիճակի էր բորբոքելու խավար ամբոխի կրոնական ֆանատիզմը։ 1908 թ. սկզբներին Անդրկովկասում հայ-ադրբեջանական բախումների ժամանակ, Ստամ-

---

225 Նույն տեղում։

226 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, л. 184 об.

227 «Тифлисский листок», 1908, 14 июня.

228 ЦГИА Груз. ССР, ф. 15 д. 67, л. 104 об.

բուլից Անդրկովկաս մեկնեց իսլամական մի միսիա, որի մեջ կային մեծ քանակությամբ զադիներ, դերվիշներ և քարոզիչ գործակալներ։ Կովկասի ռազմական շրջանի շտաբի կարծիքով նրանց հանձնարարված էր Ռուսաստանի պատերազմի դեպքում Թուրքիայի հետ նախապատրաստել Կովկասի մահմեդական բնակչության ապստամբություն[229]։

Վերոհիշյալ միսիայի առթիվ «Голос Москвы» թերթը գրում էր, որ ակամայից այն տպավորությունն է ստեղծվում, որ «Իրանի հորիզոնում ևս հավաքվում են ամպրոպաբեր ամպեր»[230]։ Այդ մասին տաղնապի առաջին ազդանշանները տվեցին կովկասահայ թերթերը, որոնք իրանահայերին կոչ էին անում բոլոր պարագաներում լինել զուսպ ու հավասարակշռված և չդառնալ թուրքական գործակալության սադրանքների զոհը։ «Тифлисский листок-ը», օրինակ, գրում էր. «Պարսկաստանը ներկայումս վեր է ածվել թուրքական էմիսարների գործունեության ասպարեզի, որոնք հրահանգներ են ստանում Յելդզ-Քյոշքից։ Նրանք տենդորեն աշխատում են ոչ միայն Թեհրանում, Թավրիզում և ընդհանրապես Պարսկաստանի կենտրոնական քաղաքներում, այլև նրա հեռավոր անկյուններում։ Նրանց նպատակն է այդ երկիրը հասցնել լրիվ հյուծման ու ներքին քայքայման, որպեսզի վերջ ի վերջո ստիպեն նրան զլուխ խոնարհել սուլթանի քաղաքական գերիշխանության առջև։ Առանց որևէ հակոզության, իրենց տրամադրության տակ ունենալով մեծ քանակությամբ օսմանյան ոսկի, թուրքական գործակալները անընդհատ դավեր են նյութում։ Որպեսզի վնաս հասցնեն սահմանադրությանը և նրան հնարավորություն չտան ամրապնդվելու և արմատներ գցելու ժողովրդի ինքնագիտակցության մեջ, նրանք ամեն կերպ աշխատում են իրենց գործակալների օգնությամբ թշնամանք սերմանել Պարսկաստանում գործող քաղաքական կուսակցությունների միջև, բորբոքել նրանց կրքերը, իհարկե, բոլոր դեպքերում պաշտպանելով և հովանավորելով երկրի ռեակցիոն տարրերին։ Այդ ուղղությամբ նրանք ձեռք են բերում փայլուն արդյունքներ։ Սակայն առայժմ նրանց չի հաջողվում անվստահություն ներշնչել հայերի, նրանց կուսակցությունների նկատմամբ և նրանց ու տեղական

229 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1014, л. 34 об.

230 «Голос Москвы», 1908 г., 16 февраля.

մահմեդականների միջև հրահրել տարաձայնություններ և փոխադարձ թշնամանք։ Վերջերս Թավրիզում տեղի ունեցավ մի փոքր բախում հայերի և տեղական մահմեդականների միջև։ Այդ փաստը, որն ուներ զուտ պրովոկացիոն բնույթ, Թավրիզի պրոգրեսիվ տարրերի շրջանում առաջ բերեց խորը զայրույթ և արդեն հրապարակված է մի կոչ, որը բոլորին հորդորում է եղբայրական համերաշխության»[231]։

Միաժամանակ թուրքական գործակալությունը Իրանի սահմանամերձ նահանգների մահմեդական բնակչության շրջանում ագիտացիա էր մղում, որ նրանք չճանաչեն իրանական կառավարության իշխանությունը, հալածանքների ենթարկեն տեղական այլադավան բնակչությանը, հրահրեն խառնակություններ և այլն, որպեսզի այնուհետև «կարգ ու կանոնը վերականգնելու» պատրվակի տակ թուրքական զորքերը հնարավորություն ունենան գավթելու նոր տերիտորիաներ[232]։

Ցարական մի շարք գործիչներ այն տեսակետին էին, որ Թուրքիայի քայքայիչ գործունեության ակտիվացումը Իրանում և մասնավորապես զորքերի մոբիլիզացիան ու կենտրոնացումները իրանական սահմանների մոտ առաջին հերթին ուղղված են Ռուսաստանի դեմ, որ Թուրքիան պատրաստվում է հակահարված տալ Ռուսաստանին, եթե վերջինս փորձի ակտիվորեն միջամտել թուրք-իրանական հարաբերություններին։ Այս տեսակետը եռանդուն պաշտպանում էր հատկապես Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, պահանջելով ձեռնարկել վճռական միջոցառումներ ընդհուպ մինչև Կովկասի ռազմական շրջանի զորքերի մոբիլիզացիան։ Սակայն արտաքին գործերի մինիստրությունը մերժեց այդ առաջարկը, սահմանափակվելով լոկ Բ. Դոան առջև դեսպան Զինովևի դիվանագիտական առաջադրություններով։ Արտաքին գործերի մինիստր Ա. Պ. Իզվոլսկին այդ առաջադրությունների անհետևանք մնալու դեպքում միանգամայն արդյունավետ միջոցառում էր համարում անգլո-ռուսական համատեղ դիվանագիտական ելույթը, որը նրա

---

231 *Дервиш*, Турецкие эмиссары в Персии, «Тифлисский листок», 1908 г. 27 января.

232 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 104 об; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1014, л. 60 об.

կարծիքով կարող էր ստիպել Թուրքիային հրաժարվել ռազմական նախապատրաստություններից և վերջ տալ Իրանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականությանը[233]։ Թուրք-իրանական հարաբերությունների հարցում Անգլիայի հետ համագործակցելու ցարական կառավարության քաղաքականության այս շրջադարձը պայմանավորված էր 1907 թ. վերջերին Իրանում թուրքական ինտերվենցիայի նկատմամբ անգլիական քաղաքականության մեջ տեղի ունեցած էական փոփոխությամբ։ Բրիտանական կառավարությունը եկավ այն համոզման, որ Օսմանյան կայսրության զավթողական քաղաքականությունը, վերջին հաշվով, ծառայում է գերմանական շահերին։ Որ Գերմանիան Թուրքիայի օգնությամբ ոչ միայն կարող է ամրապնդել իր դիրքերը Անգլիայի «կենսական» շահերի գոտում (Հարավարևմտյան Իրան, Միջագետք և այլն), այլև ուղղակի թափանցել Պարսից ծոց։ Ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ և այն, որ Գերմանիան դեռ շարունակում էր փորձեր անել Ռուսաստանին Անտանտից պոկելու ուղղությամբ, իսկ Անգլիայի շեշտված պասսիվ դիրքը թուրք-իրանական հարաբերությունների նկատմամբ բացահայտ դժգոհության տեղիք էր տալիս Ռուսաստանի կառավարող շրջաններում և ռուսական հասարակական կարծիքի առջև։

Ելնելով այս նկատառումներից, 1907 թ. վերջին Ցորին Օֆիսը հանձնարարեց Ստամբուլում իր դեսպան Օ'Կոնորին ռուսական դեսպանի հետ համատեղ ճնշում գործադրել Բ. Դռան վրա։ Անգլո-ռուսական կոլեկտիվ ելույթը սուլթանական կառավարությանը դրեց դժվարին վիճակի առջև։ Ի վերջո մեծ վեզիրը ստիպված խոստացավ չփոփոխել թուրք-իրանական սահմանների նախկին վիճակը (ստատուս-քվոն) և չփորձել իրանական քրդերին գրավելու Թուրքիայի կողմը[234]։

Թեև այս խոստումները չկատարվեցին, սակայն էականը այն էր, որ թուրքական կառավարող շրջաններում հասկացան, որ այսուհետև Ռուսաստանից բացի իրանական հարցում իրենք գործ են ունենալու նաև Անգլիայի հետ և հանդիպելու են անգլո-ռուսական կոլեկտիվ դիմադրությանը։

---

[233] АВПР, ф. «Политархив», 1907, д. 79, лл. 73—74.

[234] АВПР, ф. «Персидский стол», 1907, д. 1196, л. 279.

* * *

1908 թ. հունվարի 13-ին Թուրք-իրանական սահմանային հանձնաժողովը Ուրմիայում կրկին վերսկսեց իր աշխատանքները։ Այս նոր հանձնաժողովը ևս պատգամավորների տարաձայնությունների և գլխավորապես Թուրքական կոմիսար Թահիր փաշայի բռնած անհաշտ ու ագրեսիվ դիրքի պատճառով չավեց և ոչ մի դրական արդյունք[235]։ Վերջինս չբավականանալով նույնիսկ Դերվիշ փաշայի «հին սահմանով» և 1869—1870 թթ. պաշտոնական քարտեզի սահմաններով պահանջ ներկայացրեց Սուլդուզի, Սոուջբուլաղի, Սաքքըզի և Հորհորեյի նկատմամբ[236]։ Առհասարակ Թահիր փաշայի վարքագիծը վկայում էր, որ նա բանակցությունների էր եկել ոչ թե սահմանային կոնֆլիկտի վերաբերյալ ինչ-որ համաձայնության գալու նպատակով, այլ թուրքական զավթումները արդարացնելու, ժամանակ շահելու և նոր զավթումներ կատարելու մտադրությամբ։

Բանակցությունների ընթացքում ավելի զարդացնելով իր պահանջները, Թահիր փաշան սկսեց պահանջել այն բոլոր հողերը, որոնք ընկած էին հյուսիսային լայնության 30—40°-ի միջև, այսինքն ողջ Իրանական Քրդստանը։ Այդ մասին ոչ երկիմաստ ասվում էր նաև իրանական կառավարությանը ներկայացված 1908 թ. փետրվարի 2-ի թուրքական հուշագրում[237]։

Հանձնաժողովի անդամներին փաստի առջև կանգնեցնելու նպատակով թուրքական զորքերը բանակցությունների ընթացքում գրավեցին նոր տերիտորիաներ[238]։ Իզվոլսկին կրկին ստիպված էր հանձնարարելու Զինովևին, որպեսզի նա Բ. Դոնից վճռականորեն պահանջի թույլ չտալ թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը իրանական տերիտորիայում[239]։ Սակայն համոզվելով, որ մեծ վեզիրի հավաստիացումները գործնական կենսագործում չեն ստանում, այլ ընդհակառակը, զավթումները գնալով ընդլայնում են ավե-

---

235 АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 37, л. 232.

236 «Турецко-персидская пограничная спорная полоса», стр. 80.

237 АВПР, ф. «Миссия в Персии», 1907—1908 гг., д. 86, л. 28.

(Իսկ 1908 թ. հունիսի 24-ի հուշագրում ուղղակի նշվում էր, որ «Քրդստանը (Իրանական—Վ. Բ.) կազմում է Օսմանյան կայսրության մի մասը»։

238 *Տե՛ս* АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1198, л. 22.

239 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 657, л. 16.

լի ու ավելի սիստեմատիկ բնույթ, ցարական կառավարությունը զումարեց հատուկ նիստ, որի կենտրոնական հարցերից մեկը Իրանում թուրքական ինտերվենցիան էր։ 1908 թ. հունվարի 21-ի այդ նիստում Իզվոլսկին հայտարարեց, որ Թուրքիայի գործողություններն Իրանում ոչ միայն սպառնում են Ռուսաստանի ստրատեգիական շահերին, այլև կարող են միանգամայն բացասաբար անդրադառնալ նրա հեղինակության վրա Մերձավոր Արևելքում։ Խորհրդակցությունում նույն ոգով ելույթներ ունեցան նաև ռազմական մինիստրի օգնական գեներալ-լեյտենանտ Պոլիվանովը, գլխավոր շտաբի պետ Պալիցինը, ֆինանսների մինիստր Կոկովցովը և այլն։ Սակայն նրանց ելույթների ոգին միանգամայն անհարիր էր վերջում ընդունած որոշմանը։ Վերջացնելով խորհրդակցությունը, մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը կտրուկ հայտարարեց, որ «ներկայումս արտաքին գործերի մինիստրը վճռական քաղաքականություն վարելու համար չի կարող հույս դնել ոչ մի աջակցության վրա։ Ռուսաստանի նոր մոբիլիզացիան, հեղափոխությանը, որից մենք նոր ենք սկսել դուրս գալ, կհաղորդեր նոր ուժեր.... Այլ քաղաքականություն, բացի խիստ պաշտպանողականից, ներկա ժամանակամիջոցում կլիներ աննորմալ կառավարության զառանցանք, և այն իր հետ կբերեր վտանգ դինաստիայի համար»[240]։

Եվ այսպես, ցարական Ռուսաստանի վիճակը, որը ցնցված էր հեղափոխությամբ, անհնար էր դարձնում ցարիզմի ավանտյուրաները Մերձավոր և Միջին Արևելքում։ Դրանով էլ հենց պայմանավորված էին ռուսական դիվանագիտության անհաջողությունները։ Խորհրդակցությունում որոշվեց, որ Ռուսաստանը պետք է թուրքիրանական կոնֆլիկտի հարցում գրավի ծայրահեղ զգույշ դիրք և ոչ մի դեպքում չկատարի զորքերի մոբիլիզացիա[241]։

Այս ոգով հրահանգներ ուղարկվեցին Իրանում և Թուրքիայում գտնվող բոլոր ներկայացուցիչներին։ Ելնելով այդ դիրեկտիվից ռուսական հյուպատոսներն աշխատում էին համոզել շահական կառավարությանը միջոցներ ձեռնարկել հակաթուրքական տրամադրություններ ունեցող քրդական ցեղերի նկատմամբ, որպեսզի վերջիններս տեղիք չտան Թուրքիայի հետ «սահմանային նոր թյուրի-

---

[240] «Вестник НКИД», 1919, № 1.

[241] АВПР, ф. «Секретный архив», 1908, д. 266/267, лл. 11—20.

մացությունների»[242]։ Այդ նույն դիրեկտիվի հետևանքով ռուսական հյուպատոսները մերժում էին թուրքերից դժգոհ քրդերի խնդրանքը՝ իրենց ռուսական հովանավորության տակ վերցնելու վերաբերյալ[243]։

Անշուշտ ցարական կառավարության նման անվճռական քաղաքականությունը թուրքերին ոգեշնչելու էր նոր զավթումների։ Եվ իսկապես, Ուրմիայում սահմանային հանձնաժողովի գործունեության ընթացքում, հատկապես 1908 թ. մայիս-հուլիս ամիսներին, թուրքական զորքերը գրավեցին համարյա ամբողջ Արևմտյան Իրանական Ադրբեջանը, հասնելով մինչև Ուրմիա լճի ափը, իսկ հյուսիսում փորձելով դուրս գալ Խոյի հարթավայրը, որտեղից ճանապարհ էր բացվում դեպի Երևանի նահանգը[244]։ Թուրքական զորքերի գործողություններին զուգահեռ քրդական ջոկատները ևս (հատկապես զերզա և մամաշ ցեղերից բաղկացած ջոկատները) սկսեցին գործել ավելի վճռականորեն, ընդլայնելով թուրքական զավթումների գոտին։ Շատ հաճախ կանոնավոր զորքերն ու քրդական ջոկատները գործում էին համատեղ։ Այսպես, 1908 թ. մայիսի վերջին Սալմաստի, Սոմայի և Բարանդուզի շրջաններում ավերվեցին ու ամայացվեցին բազմաթիվ գյուղեր[245]։

Առհասարակ, պետք է ասել, որ ոչ մի ժամանակ ասպատակությունները ու կողոպուտը և «դեհալեթի»[246] պրակտիկան չէին

---

242 АВПР, ф. «Миссия в Персии», 1908, д. 81, л. 21.

243 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1198, лл. 280, 413—415.

244 ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 6862, л. 89.

245 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1197, лл. 331, 346.

246 «Դեհալեթը» դիմում էր, որը ներկայացվում էր առանձին անձի կամ ամբողջ համայնքի կողմից, որտեղ ասվում էր, որ դժգոհ լինելով իրենց ներկա վիճակից, խնդրում են Օսմանյան կայսրությանը ընդունել իրենց թուրքական հպատակության տակ և հովանավորել։ Մեծ մասամբ դեհալեթները նախորդում էին զավթումներին և այդպիսով թուրքական զորքերը համարյա միշտ հանդես էին գալիս օգնություն հայցող բնակչության հովանավորողի դերում։ Շատ հաճախ ընտանիքի մեկ անդամը, որը վատ հարաբերություններ մեջ էր ընտանիքի մյուս անդամների հետ, դեհալեթ էր տալիս թուրքերին նրանց բարյացակամ վերաբերմունքը շահելու, կամ հողակտորներ և նույնիսկ գյուղեր ձեռք բերելու միտումով։ Տեղական խաները ամբողջ շրջաններ էին տալիս թուրքերին այն հույսով, որ փոխարենը կստանան ինչ-որ առավելություններ մյուս խաների նկատմամբ։

հասել այնպիսի չափերի, որքան 1908 թ. դարնանը և ամռանը։ Թուրքական գործակալությունը բացահայտորեն հորդորում էր իրանական քրդերին չենթարկվել շահական իշխանություններին, ընդունել թուրքական հովանավորություն և հարկեր վճարել միայն սուլթանական կառավարությանը[247]։ Օկուպացիոն իշխանություններն աշխատում էին քրդական արշավանքներին տալ իրանական տիրապետության դեմ ցեղերի մասսայական շարժման բնույթ։ Դա հնարավորություն էր տալիս նրանց հայտարարելու, որ թուրքական զորքերը հայտնվել են անվիճելի իրանական տերիտորիայում բացառապես դավանակից քուրդ սուննիթների իրավունքները պաշտպանելու նպատակով, որոնք բազմիցս դիմում են Թուրքիային օգնության աղերսով։

Չնայած Մեջլիսի եռանդուն դիմումներին[248], շահական կառավարությունը ոչ մի միջոցառում չձեռնարկեց պրոթուրքական տրամադրություններ ունեցող իրանահպատակ քրդերին իր կողմը գրավելու ուղղությամբ։ Ընդհակառակը, չցանկանալով խորամուխ լինել նրանց դժգոհության և պրոթուրքական տրամադրությունների բուն պատճառների մեջ, կառավարությունը նրանց «հնազանդեցնելու» մտադրությամբ հաճախ կազմակերպում էր պատժիչ արշավանքներ, որոնք տալիս էին միանգամայն հակառակ արդյունք։

Թուրքիայի հետ իրանական քրդերի մերձեցումը, ինչպես նաև այն, որ զավթիչները ընդլայնում էին իրենց զավթումների դռտին ոչ միայն անմիջականորեն, այլև քրդերի օգնությամբ, մեծագույն տագնապ էր ներշնչում Իրանի հեղափոխական շրջաններին։ Էնջումենները որոշեցին բացատրական լայն աշխատանք ծավալել քրդական ցեղերի շրջանում։ Այդ նպատակով հեղափոխականները հատկապես դիմում էին հայերին, խնդրելով շփվել քուրդ բնակչության հետ, բացատրել իրերի իսկական վիճակը և համոզել նրանց ետ կանգնելու Թուրքիայի ագրեսիվ մտադրություններին գործիք հանդիսանալուց[249]։ Նրանց խորին համոզմամբ այս առաքելության

---

[247] АВПР, ф. «Персидский стол», 1908 г., д. 656, л. 22.
[248] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1908, д. 3546, л. 176.
[249] *Дервиш*, Персия и Турция, «Тифлисский листок», 1908, 17 января.

հաջողության դեպքում մեծապես կշտամբվեր թուրքական կառավարող շրջանների ախորժակը իրանական տերիտորիաների նկատմամբ։

Սակայն այս ագիտացիան չուներ հաջողության ոչ մի դրավական, որովհետև այն հանդիպելու էր թուրքական օկուպացիոն իշխանությունների ու նրանց գործակալության կատաղի դիմադրությանը և Թուրքիայի հետ բազմաթիվ թելերով կապված քրդական վերնախավի թշնամական վերաբերմունքին։ Բացի այդ, այն աջակցություն չէր գտնելու և իսկապես չգտավ նաև իրանական իշխանությունների կողմից, որոնք «խոովարար քրդերի» հետ խոսելու միակ լեզուն համարում էին զենքը։ Հատկանշական է, որ թուրքական օկուպացիայից դժգոհ տեղական բնակչությունը, այդ թվում նաև քրդերը, տեղյակ լինելով իր հպատակների նկատմամբ շահական կառավարության այդ դիրքորոշմանը և գիտակցելով, որ նա անզոր է կամ չի ցանկանում միջամտել սահմանամերձ գոտում ծավալվող իրադարձություններին, հեռագրերով օգնության աղերս էր ուղարկում ոչ թե կառավարությանը, այլ Մեջլիսին և հեղափոխական էնջումեններին[250]։

Ուրմիայում սահմանային հանձնաժողովի գործունեության ձախողումը ռուսական կառավարող շրջաններին դրեց դժվարին վիճակի առջև։ Ռուսական բուրժուազիան, ֆինանսա-արդյունաբերական շրջանները և այլն, որոնք Իրանում ունեին մեծագույն շահեր, վրճռականորեն պահանջում էին կառավարությունից շտապ և արմատական միջոցառումներ ձեռնարկել ռուսական կապիտալի շահերը Իրանում թուրքական և գերմանական ոտնձգություններից պաշտպանելու համար։ Արտահայտելով ռուսական բուրժուազիայի այդ ձգտումները, Պետական դումայի 1908 թ. ապրիլի 4-ի նիստում կադետական կուսակցության լիդեր Միլյուկովը հայտարարում է, որ Օսմանյան կայսրության կողմից Իրանական Ադրբեջանի օկուպացիան կարող է Ռուսաստանին առմիշտ կտրել Պարսից ծոցից։ «Թեև այստեղ,—շարունակում է Միլյուկովը,—մեր մարդասիրական զգացումները կարող են ավելի քիչ տուժել, քան Բալկանյան թե-

---

250 АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 175, л. 66.

բակղզում, սակայն, այնուամենայնիվ, այստեղ ես ոչ պակաս չափով մեզ համակում է առողջ եսասիրության զգացումը»[251]։ Պետական դումայի մեկ այլ նիստում Գուչկովը իր հերթին անում է հետևյալ հայտարարությունը. «Անձամբ ես գործերի վիճակը Մերձավոր Արևելքում համարում եմ չափազանց լուրջ։ Մենք յուրաքանչյուր րոպե պետք է պատրաստ լինենք ամեն կարգի անակնկալների... Պահը լուրջ է, նրա նկատմամբ պետք է վերաբերվել մեծագույն ուշադրությամբ։ Մենք չպետք է թույլ տանք վերջին պատերազմի սխալների կրկնությունը, երբ միանգամայն անպատրաստ էինք ռազմական գործողություններ սկսելու համար։ Դրանից խուսափելու համար, պետք է հենց այժմյանից նախապատրաստել մեր ռազմական ուժերը. պետք է հոգալ նաև մեր երկաթուղիները և հատկապես Կովկասի և Անդրկովկասի երկաթուղիները պատշաճ վիճակի բերելու մասին։ Ես մտադիր եմ վերջին հարցը հարուցել պետական պաշտպանության հանձնաժողովի առջև հենց առաջին իսկ նիստում...»[252]։

Իրանում Թուրքիայի քաղաքականությանը բաջատեղյակ ռուս դիվանագետները ևս այն կարծիքին էին, որ դա Ռուսաստանի համար առաջնակարգ քաղաքական նշանակություն ունեցող հարց է, որովհետև, Վ. Մինորսկու արտահայտությամբ, Թուրք-իրանական հարցը աստիճանաբար վեր էր աճվել ռուս-թուրքական հարաբերությունների հարցի[253]։

Մյուս կողմից սահմանային հանձնաժողովի աշխատանքների ձախողումը և առհասարակ Ռուսաստանի պասսիվ դիրքը Թուրքիայի ոտնձգությունների նկատմամբ առաջ բերեց ոչ միայն ռուսական հասարակական կարծիքի բացահայտ դժգոհությունը, այլև ուղղակի հարված հասցրեց Ռուսաստանի հեղինակությանը Իրանում, որտեղ դա մեկնաբանվեց որպես Ռուսաստանի թուլություն։

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, ցարական կառավարությունը որոշեց դիմել ավելի կոնկրետ գործնական բայլե-

---

251 «Тифлисский листок», 1908, 5 апреля.

252 «Тифлисский листок», 1908, 16 февраля.

253 *В. Ф. Минорский*, Турецко-персидское разграничение, Пг., 1916, стр. 7.

բի։ 1908 թ. գարնանը Ուրմիայի նախկին փոխ-հյուպատոս բարոն Զերկասովին և գնդապետ Թումանսկուն հանձնարարվեց մեկնել Թուրքիայի զավթած տերիտորիաները և պարզել այնտեղ ստեղծված վիճակը, ինչպես նաև խորամուխ լինել Օսմանյան կայսրության զավթողական քաղաքականության վերջնական նպատակի մեջ։

Ցարական ռազմական շրջաններին հետաքրքրում էր նաև Թուրքիայի՝ Իրանի և Ռուսաստանի դեմ պատերազմի նախապատրաստության վերաբերյալ լուրերի հավաստիության հարցը։ Այդ նպատակով 1908 թ. հունիսին կովկասյան հրամանատարությունը էրզրում և էրզինջան գործուղեց երկու բարձրաստիճան զինվորականների՝ 16-րդ գրենադերական մենգրելական գնդի հրամանատար Ավերյանովին և գնդապետ Մաքսիմովին[254]։ Թուրքական չորրորդ բանակային կորպուսի հրամանատար Զեքի փաշայի և այլ զինվորականների հետ հանդիպումներից, ինչպես նաև սահմանային շրջաններում ուղևորություններից հետո Ավերյանովը և Մաքսիմովը հանգեցին այն եզրակացության, որ Թուրքիան մտադիր է ամրանալ Իրանի իր զավթած շրջաններում, որը սպառնալիք կլինի ոչ միայն ողջ Իրանական Ադրբեջանի, այլև Անդրկովկասի համար[255]։

Ռուսաստանը որոշեց կտրուկ ելույթ ունենալ։ 1908 թ. հունիսի 6-ին Իզվոլսկին հանձնարարեց Ստամբուլում իր դեսպանին վճռականորեն հայտարարել մեծ վեզիրին, որ իր կառավարությունը չի կարող պասսիվ դիտորդի դերում լինել վիճելի գոտու սահմաններից դուրս օսմանյան զորքերի շարժման և քրդերի մշտապես աճող ասպատակությունների նկատմամբ, մանավանդ որ դրանք սկսում են տարածվել նաև Ռուսաստանի հարևան Սալմաստի շրջանի վրա։ Որ ռուսական սահմանների մոտ թուրքական զորքերի հարձակողական շարժումը կարող է բարդացնել Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները և ավելի դժվարացնել թուրք-իրանական սահմանա-

---

254 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 66, лл. 1—14.

255 Նույն տեղում, տե՛ս նաև АВПР, ф. „Канцелярия МИД", 1908", д. 155, т. I, л. 59.

յին հարցի լուծումը։ Արտաքին գործերի մինիստրը խնդրում էր ավելացնել, որ այդ շարժումը չդադարեցնելու դեպքում համապատասխան ռազմական նախապատրաստություններ կձեռնարկվեն նաև Կովկասյան սահմաններում[256]։

Այս ոգով հունիսի 9-ին ռուսական դեսպանը եռանդուն առաջադրություն կատարեց մեծ վեզիրի և արտաքին գործերի մինիստրի առջև։ Նրա դեմարշը պաշտպանեց նաև Ստամբուլում Բրիտանական գործերի հավատարմատար Բարկլեյը, որին նախապես հանձնարարված էր իրանական հարցում իր գործողությունները համաձայնեցնել ռուսական դեսպանի հետ[257]։ Միաժամանակ նախնական պայմանավորվածության համաձայն Ստամբուլում իրանական դեսպանը Բ. Դոանը ներկայացրեց նոտա, որտեղ պահանջվում էր անհապաղ զորքերը ետ քաշել զավթված շրջաններից և դադարեցնել քրդական արշավանքները[258]։

Այս կոլեկտիվ ելույթը Թուրքական կառավարող շրջանների վրա թողեց որոշակի տպավորություն, մանավանդ որ, ի տարբերություն նախորդ դիվանագիտական ելույթների, Ռուսաստանը և Անգլիան այս անգամ պահանջում էին անմիջապես դիմել գործնական քայլերի։ Հրավիրվեց մինիստրների խորհրդի արտակարգ նիստ, որտեղ ընդունվեց հետևյալ որոշումը. հրամայել Թահիր փաշային զորքերը ետ քաշել մինչև վիճելի գոտու սահմանները, թույլ չտալ Օսմանյան կայսրության քրդերին անցնելու իրանական տերիտորիան և չօգտագործել քրդական զանգվածներին որպես Իրանի նկատմամբ Թուրքիայի հարձակողական քաղաքականության գործիք[259]։ Մի քանի օր անց Թուրքական զորքերը իսկապես դուրս բերվեցին անվիճելիորեն Իրանին պատկանող տերիտորիայից և տեղակայվեցին վիճելի գոտու սահմաններում։ Միաժամանակ դադարեցվեցին զորքերի խոշոր կենտրոնացումները Իրանի ու Ռուսաստանի սահմանամերձ շրջաններում։

---

256 ЦГВИА, ф. 2000, д. 1033, л. 121; АВПР, ф. «Канцелярия МИД». 1908, д. 37, лл. 279—279 об.

257 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1197, л. 339; АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 37, л. 242.

258 «Тифлисский листок», 1908, 13 июня.

259 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1197, л. 348.

Թուրքական կառավարության այս ժամանակավոր նահանջը կարելի էր բացատրել հետևյալ հանգամանքներով։ 1908 թ. հունիսին Թուրքիան գտնվում էր ներքին քաղաքական սուր ճգնաժամի վիճակում։ Մակեդոնիայում և կայսրության մյուս շրջաններում ծավալվող ազգային-ազատագրական շարժումները գնալով ընդունում էին սպառնալից բնույթ։ Երիտթուրքերը իրենց գործունեության ասպարեզը արտասահմանից տեղափոխել էին բուն Թուրքիա։ Հեղափոխական խմբակումները համակել էին նույնիսկ բանակը։ Մայր աստիճանի վտանգավոր իրադրություն էր ստեղծվել նաև կայսրության միջազգային դրության մեջ։ Ավստրո-Հունգարիան պատրաստվում էր զավթել Մակեդոնիան։ Ռևելում անգլիական թագավորն ու ռուսական ցարը բանակցություններ էին վարում «մակեդոնական հարցը» իրենց օգտին լուծելու համար։ Մեծ լարվածության էին հասել նաև անգլո-թուրքական հարաբերությունները։ Ինչպես նշվեց, դեռևս 1907 թ. գարնանը Գերմանիան Թուրքիայից թույլտվություն էր խնդրել Պարսից ծոցի Ֆարուրի կղզում ծովային կայան կառուցելու համար։ Թուրքիան տվեց սկզբունքային համաձայնություն։ Իր այդ հաջողությունը ամրապնդելու և ցույց տալու համար, որ Պարսից ծոցի ջրերում Գերմանիան պահանջում է «իրավահավասարություն» և որ այն ձեռք կբերի ուժով, 1908 թ. սկզբներին Բեռլինը սկսեց նախապատրաստություններ տեսնել Պարսից ծոցի օսմանյան ջրերը մի ամբողջ ռազմական նավատորմ ուղարկելու համար։ Բնականաբար Անգլիան չէր կարող հանդուրժել այդ բանը։ Արտաքին գործերի մինիստր Գրեյը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որ «որևէ մեկի փորձը Պարսից ծոցում ծովային կայան կամ ամրացված նավահանգիստ ստեղծելու ուղղությամբ կհանդիպի Անգլիայի վճռական դիմադրությանը»։ Գրեյը միաժամանակ հայտնեց Լոնդոնում թուրքական դործերի հավատարմատարին, որ այսուհետև Անգլիան չի ճանաչելու Օսմանյան կայսրության ոչ մի իրավունք Ֆարուրի, Աբու-Մուս և մի շարք այլ կղզիների նկատմամբ։ Շուտով Անգլիան զորքեր մտցրեց Քուվեյթ, նպատակ ունենալով Քուվեյթի շեյխ Մուբարեք-էս-Սաբահին պարտադրել ստորագրելու պայմանագիր, որով Քուվեյթը պետք է անցներ անգլիական հովանավորության տակ։ Ի վիճակի չլինելով դի-

մագրավել բրիտանական կառավարության այս քայլերին, սուլթանը դիմեց Վիլհելմ II-ին խնդրելով օգնություն։ Սակայն վերջինս անորոշ պատասխան տվեց։ Ավելին, որոշ ժամանակ անց գերմանական արտաքին գործերի մինիստրը հայտարարեց Բեռլինում թուրքական դեսպանին, որ Գերմանիան չի պաշտպանի թուրքերին Օմանի ծոցում մի կղզու համար նրա ունեցած վեճում Անգլիայի հետ[260]։ Ինչպես տեսնում ենք, Գերմանիան վրեժ էր լուծում Ստամբուլից նրա պասսիվ քաղաքականության համար Իրանի հարավ-արևմուտքում և Պարսից ծոցի շրջանում։

Այսպիսով, թեև սուլթանական կառավարությունը իր համար ստեղծված ներքին և արտաքին քաղաքական անբարենպաստ իրադրության պատճառով ստիպված էր սահմանափակել իր ագրեսիվ ախորժակը Իրանի նկատմամբ, բայց փաստերը վկայում են, որ նա մտադիր չէր վերջնականապես հրաժարվել զավթումների այն քաղաքականությունից, որը լոկ այս կամ այն անհատի կամ խմբավորման ցանկությունը չէր, այլ նախապես մշակված և թուրքական կառավարող շրջանների կողմից պետական քաղաքականության մակարդակի հասցված գիծ էր։

Արտաքին զավթողական այդ քաղաքականությունը սուլթանական կառավարությունը հաջողությամբ առաջ էր տանում օգտվելով մեծ պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններից և մասնավորապես անգլո-ռուսական հակամարտությունից։ Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության ղեկավարները իրենց անձնական փորձով արդեն համոզվել էին, որ Անգլիան իրանական հարցում Ռուսաստանի նկատմամբ վարում է երկակի, ոչ անկեղծ քաղաքականություն։ Որ եթե Թուրքիայի ագրեսիվ քաղաքականության սլաքը բացառապես ուղղված լինի Ռուսաստանի ազդեցության գոտու և ռուսական շահերի դեմ, Անգլիան ոչ միայն ցույց չի տա որևէ դիմադրություն, այլև նույնիսկ կցուցաբերի գաղտնի աջակցություն։ Փորձը ցույց էր տալիս, որ Անգլիան թուրք-իրանական հարաբերությունների հարցում Ռուսաստանի հետ համատեղ հանդես էր գալիս միայն այն դեպքում, երբ Օսմանյան կայ-

---

260. *Ա. Կ. Ֆուքս, նշվ. աշխ., էջ 113—114։*

սրությունը վրա ցանկանում էր ճնշում գործադրել իր շահերի հետ կապված ամենաբազմապիսի հարցերում և կամ, երբ անհրաժեշտ էր լինում կանխել Մերձավոր Արևելքում գերմանական իմպերիալիզմի քաղաքական կոմբինացիաներն ու հարված հասցնել իր ախոյանին։

Վերոհիշյալ հանգամանքները պարզորոշ գիտակցում էին նաև Թուրքիայում և Իրանում աշխատող ռուսական դիվանագետներից շատերը։ Օրինակ, Ստամբուլում դեսպան Նելիդովը արտաքին գործերի մինիստրությանն ուղղված հաղորդագրություններում իր պարտքն էր համարում նախազգուշացնել, որ բրիտանական կառավարությունը Ռուսաստանի նկատմամբ վարում է ոչ անկեղծ քաղաքականություն։ 1908 թ. հուլիսի 5/18 Բույուկդերեից ուղարկած գաղտնի հաղորդագրության մեջ նա գրում էր, որ կասկածով է վերաբերվում Բ. Դոան մոտ Թուրք-իրանական կոնֆլիկտի հարցում Ռուսաստանի դիվանագիտական ելույթները պաշտպանելու ուղղությամբ Անգլիայի անկեղծությանը։ Որ Ստամբուլում անգլիական դեսպանի առանձին արտահայտություններից երևվում է, որ Մեծ Բրիտանիային այդ հարցը ըստ էության չի հետաքրքրում, որի հետևանքով և միջնորդ պետությունների ելույթները Թուրքական կառավարության վրա չեն թողնում երկու պետությունների համատեղ ելույթի ցանկալի տպավորություն[261]։ Նելիդովին հաջողվում է ձեռք բերել նաև մեծ վեզիրի անունով գրված սուլթանի առաջին քարտուղար Թահսին փաշայի գաղտնագիր նամակը, որի մեջ ուղղակիորեն բացատրվում էր Անգլիայի վերոհիշյալ քաղաքականության պատճառները։ Նամակում ասվում էր. «Վերջերս արքունիքում ստացված տարբեր հաղորդումներից պարզվում է, որ Թուրքական զորքերի կողմից պարսկական սահմանին կից տերիտորիաների գրավման հարցը ոչ մի դեպքում չի հարուցի Թուրքական կառավարության համար անցանկալի օտարերկրյա միջամտություն, որովհետև ըստ Անգլիայի քաղաքականության, քանի որ այդ շրջաններում ինքը ի վիճակի չէ զարգացնելու իր շահերը, նրա համար գերադասելի է, որ վիճելի շրջանները գտնվեն ոչ թե Ռու-

[261] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 39, л. 172.

սաստանի, այլ մեր (Թուրքիայի) ազդեցության ներքո»։ Դրան ավելացվում էր, որ ելնելով Անգլիայի վերոհիշյալ քաղաքականությունից, սուլթանը հրամայել է ռազմական և ֆինանսական մինիստրություններին ժամանակ չկորցնել ավելորդ և գործին օգուտ չբերող գրագրությամբ զբաղվելու վրա և ամեն կերպ նպաստել իրանական սահմանում զինվորական իշխանությունների այն պահանջներին, որոնք վերաբերում են Իրանում թուրքական զորքերի մատակարարման և անհրաժեշտության դեպքում ուժեղացման հարցին»[262]։

Այսպիսով, անգլիական կառավարությունը ուղղակի հասկացնում էր Բ. Դոանը, որ Թուրքիայի սահմանամերձ իրանական տերիտորիաներում ինքը գերադասում է տեսնել թուրքերին և ոչ թե ռուսներին։ Անգլիան ոչ միայն գաղտնապես հրահրում էր Թուրքիային զավթումներ կատարելու իր մրցակցի ազդեցության գոտում, այլև պահանջում էր արագացնել և հնարավորին չափ կարճ ժամկետում ավարտել այդ գործը։ Այդ էր վկայում Լոնդոնում թուրքական դեսպանի հունիսի 30-ի (հուլիսի 13-ի) հեռագիրը այն մասին, որ Անգլիայի արտաքին գործերի պետական բարտուղարը հաղորդել է իրեն Մեծ Բրիտանիայի կառավարության խորհուրդը, որ Թուրքիան հնարավորին չափ շուտ ավարտի իր «թյուրիմացությունները» Իրանի հետ՝ կանխելու համար օտար միջամտությունը, որը անկասկած տեղի կունենա, եթե սահմանում շարունակվի ներկա վիճակը[263]։

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ թեև խոսքով սուլթանական կառավարության մոտ Անգլիան պաշտպանում էր Ռուսաստանի ելույթները Իրանում Թուրքիայի ագրեսիվ գործողությունները դադարեցնելու վերաբերյալ, սակայն գործնականում նա գաղտնապես հրահրում էր Թուրքիային շարունակել այդ քաղաքական գիծը։ Բրիտանական կառավարության այս քաղաքականության հետևանքով, Ստամբուլը, անվիճելի իրանական տերիտորիաներից իր զորքերը դուրս բերելուց ընդամենը մի քանի օր հետո, կրկին ակտիվացրեց Իրանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականության գիծը։ 1908 թ. հուլիսի 2-ին օսմանյան կառավարությունը

---

262 АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 39, л. 185.

263 Նույն տեղում, թ. 193։

ուլտիմատիվ բնույթի հուշագիր ներկայացրեց շահական կառավարությանը, որտեղ պահանջներ էին ներկայացվում Սուլդուզի, Սոուջբուլաղի, Բանեի, Սաքքըզի և մի շարք այլ վայրերի նկատմամբ, որոնք հայտարարվում էին որպես Օսմանյան կայսրությանը պատկանող տերիտորիաներ[264]։ Միաժամանակ 6-րդ բանակային կորպուսի հրամանատարին հրամայվեց Բանեի, Սերդեշտի, Վեղնեի, Լահիջանի, Մերգևերի, Թերգևերի և մի շարք այլ շրջաններում կազմակերպել իրանական քրդերից համալրված համիդիե գնդեր[265]։ Հուլիսի 10-ին Բ. Դուռը Իրանում գործող թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատար Մեհմեդ Ֆաղիլ փաշային հայտնեց սուլթանի հրամանը՝ օգտվելով Ուրմիայի շրջանում հեղափոխականների և միապետության կողմնակիցների միջև բորբոքված պայքարից և դրա հետևանքով ստեղծված խառնակ վիճակից, զորքերը Փեսվեից շարժել դեպի Ուրմիա։ Միաժամանակ Թուրքական արտաքին գործերի մինիստրին հանձնարարվեց Ստամբուլում իրանական դեսպանին հայտարարել, որ Ուշնուն իր շրջակայքով կազմում է Օսմանյան կայսրության անբաժանելի մասը։ Հուլիսի 15/28-ին սուլթանի առաջին քարտուղարը հաղորդեց մեծ վեզիրին, որ սուլթանը կարգադրել է Թահիր փաշային պնդել բոլոր զավթված տերիտորիաների նկատմամբ Թուրքիայի «սրբազան» իրավունքների վրա և չհամաձայնվել «զիջելու թեկուզև մեկ թիզ հող»[266]։ Այս ոգով արտաքին գործերի մինիստրությունը 1908 թ. հուլիսի 30-ին շահական կառավարությանը ներկայացրեց նաև մի հուշագիր, որտեղ հավակնություններ էին ներկայացվում Դեշտերիլի, Ուշնուի, Բարանդուզի մի մասի, Մերգևերի, Դեշտի (Բերդեսուր), Թերգևերի, Բարադոսթի, Էնզելի, Սոմայի, Սուլդուզի, Սոուջբուլաղի, Սերդեշտի, Սաքքըզի, Բանեի, Հորհորեի, Զահրիքի, Ջերդմանի, Դիրեքի, Հուրեքի, Ռեգավեի շրջանների և Մակուի խանության նկատմամբ[267]։

---

264 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1198, л. 298.

265 АВПР, ф. «Миссия в Персии», 1908, д. 85, л. 6; ф. «Канцелярия МИД», 1908, д. 39, л. 172 об.

266 АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 39, л. 193.

267 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1198, л. 326; ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 7696, л. 94.

Այսպիսով, օգտվելով Մերձավոր և Միջին Արևելքում մեծ պետությունների հակասություններից, Օսմանյան կայսրությունը XX դ. առաջին տասնամյակում հնարավորություն ստացավ Իրանի նկատմամբ կիրառել ագրեսիվ-գավթողական քաղաքականություն։ Թուրքիայի նվաճողական քաղաքականությանը նպաստում էր նաև այն, որ Անգլիան և Ռուսաստանը, որոնք շահագրգռված էին իրանական հեղափոխության ջախջախման հարցում սուլթանական ռեակցիայի ուժերը օգտագործելու մեջ, ոչ միայն վճռական միջոցառումներ չէին ձեռնարկում թուրքական ագրեսիան վնասազերծելու ուղղությամբ, այլև, ըստ էության, խրախուսում էին Թուրքիայի կողմից իրականացվող հակահեղափոխական ինտերվենցիան։ Մյուս կողմից սուլթանական ռեակցիայի դաշինքը գերմանական իմպերիալիզմի հետ, որն աշխատում էր Օսմանյան կայսրության օգնությամբ խարխլել իր մրցակիցների դիրքերը Մերձավոր և Միջին Արևելքում և հատկապես թափանցել Իրան, այն կարևոր գործոնն էր, որը ոգեշնչում էր Թուրքիայի ագրեսիվ միլիտարիստական շրջաններին համարձակ և միանգամայն ինքնուրույն ձեռնամուխ լինել ակտիվ նվաճողական քաղաքականության իր արևելյան հարևանի՝ դաշտարական Իրանի դեմ։ Վերջինիս ռազմա-տնտեսական թուլությունը, իմպերիալիստական պետություններից կախյալ վիճակը և հեղափոխության հետևանքով ստեղծված ներքին անկայուն դրությունը հույս էր ներշնչում թուրքական կառավարող շրջաններին, որ նրա նկատմամբ ծավալվող գավթողական քաղաքականությունը չի հանդիպի լուրջ դիմադրության և հակահարվածի։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԷՔՍՊԱՆՍԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ

1908 թ. հուլիսին երիտթուրքական հեղաշրջման հետևանքով խորտակվեց սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնակալական ռեժիմը և Թուրքիայում հաստատվեցին սահմանադրական կարգեր։ Կայսրության ճնշված ժողովուրդները ցնծության մեջ էին։ Երիտթուրքերը խոստանում էին սահմանադրությունից բխող դեմոկրատական իրավունքներ և եղբայրություն ու համերաշխություն երկրի բոլոր քրիստոնյա և մահմեդական ազգությունների միջև։ Սակայն երիտթուրքական կուսակցության քաղաքական ծրագիրը կտրուկ փոփոխության ենթարկվեց, հենց որ իշխանությունն անցավ նրանց ձեռքը։

Նախ ներքին քաղաքականության բնագավառում «Իթթիհադ վե Թերաքքի» կուսակցության ծրագիրը դրսևորեց զուտ շովինիստական և նեղ ազգայնական ձգտումներ։ Պարզվեց, որ իթթիհադը ոչ միայն մտադիր չէ հաշվի նստելու կայսրության զանազան ժողովուրդների ազգային իղձերի հետ, այլև առհասարակ հրաժարվում է ճանաչել Օսմանյան կայսրությունում ոչ թուրք ազգերի առկայությունը։ Ասիմիլյատորական օսմանիզմը վերածվեց երիտթուրքերի պաշտոնական գաղափարախոսության։

1908 թ. հոկտեմբերի 17-ի հաղորդագրությունում Ստամբուլում ռուսական ռազմական գործակալ գնդապետ Խոլմսենը գրում էր. «Մահմեդականների և քրիստոնյաների եղբայրացումը փոխարինվեց ավելի մեծ անվստահությամբ, քան գոյություն ուներ նախկինում։ Մի խոսքով հուլիսյան հեղափոխությունից անմիջապես հե-

տու համընդհանուր ցնծությունն ու լավատեսական տրամադրությունը փոխարինվեց ճնշված, ծայրահեղ նյարդային տրամադրությամբ»[1]։

Ներքին քաղաքականության բնագավառում երիտթուրքերի վարած ռեակցիոն շովինիստական գիծը շուտով տեղի տվեց ճնշված ժողովուրդների բուռն ելույթների։ 1908 թ. ամռանը Դերսիմում կրկին սկսվեց զզլբաշ քրդերի ապստամբություն[2]։ Հուզումներ էին տեղի ունենում նաև Էրզրումի, Դիարբեքիրի, Սվասի և այլ վիլայեթներում, որտեղ հուսախաբ եղած բնակչությունը իր բացահայտ դժգոհությունն էր արտահայտում նոր ռեժիմի նկատմամբ[3]։ Երիտթուրքական իշխանությունների դեմ հզոր ապստամբություններ սկսվեցին նաև Իրաքում, հատկապես Բաղդադի և Քիրքուքի շրջաններում և Մոսուլի վիլայեթում[4]։

Ուժեղացան նաև արաբական թերակղզում (Եմենում, Ասիրում, Նեդջում) ծայր առած քաղաքական անջատողական շարժումները։ Սոցիալական և քաղաքական բնույթի այդ շարժումները ճնշելու համար երիտթուրքերը դիմեցին զենքի։ Իսկ այն մակերեսային ռեֆորմները, որոնք կատարեցին նրանք իշխանությունը գրավելուց հետո, բացառապես հետապնդում էին պետության ռազմական հզորությունը ամրապնդելու նպատակներ և ուղղված չէին կայսրության ժողովուրդների ազգային և սոցիալական լուծը թեթևացնելու գործին։

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականության հարցերին, ապա այստեղ ևս երիտթուրքերը ամբողջապես որդեգրեցին իրենց նախորդի ծրագրերը։ Հրապարակ նետելով մեծապետական օսմանիզմի և ռասիստական պանթուրքիզմի իրենց հորինած դոկտրինաները, նրանք լայնորեն շրջանառության մեջ դրեցին նաև Աբդուլ Համիդից ժառանգություն մնացած պանիսլամիզմի կրոնա-քաղաքական գաղափարախոսությունը[5]։ Այս բոլոր գաղափարական ուղ-

---

[1] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1017, л. 91.

[2] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 6862, л. 12 об.

[3] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 100, лл. 3, 7—8.

[4] ЦГВИА, ф. 2000, д. 1015, лл. 139—140.

[5] *Տե՛ս Е. Ф. Лудшувейт*, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., М., 1966.

զությունների զուգակցումը իթթիհադի արտաքին քաղաքականությանը հաղորդում էր շեշտված շովինիստական և մոլի ռազմաշունչ ոգի։ «Երկու դաղափարախոսությունների՝ քաղաքական պանթուրքիզմի և կրոնական պանիսլամիզմի յուրօրինակ զուգորդումը,— գրում է ժամանակակից անգլիական պատմաբան Վ. Գոտլիբը,— բնորոշ էր թուրքական իմպերիալիզմին»[6]։

Թուրքիայում Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումը զուգադիպեց Իրանում ծավալվող բուռն իրադարձությունների հետ։ 1908 թ. հունիսի 23-ին տեղի էր ունեցել հակահեղափոխական հեղաշրջում։ Մոհամմեդ Ալի շահը ցրել էր առաջին Մեջլիսը, մայրաքաղաքի հեղափոխական էնջումենները և այլն։ Սահմանադրության կողմնակիցները ենթարկվում էին անողոք հալածանքների։ Այսպիսի պայմաններում հարևան երկրում բռնապետական վարչակարգի տապալումը բնականաբար մեծ արձագանք էր ունենալու Իրանի հեղափոխական շրջաններում։ Ենթադրվում էր, որ Թուրքիայում սահմանադրական կարգերի հաղթանակը զգալիորեն կնպաստի նաև Իրանում հեղափոխական ուժերի ակտիվացմանը։ Հուլիսի 20-ին ռուսական դեսպանորդ Գարտվիգը Թեհրանից հաղորդում էր, որ Թուրքիայում սահմանադրություն ընդունելու լուրը ուժեղ տպավորություն գործեց իրանական մայրաքաղաքի հասարակական շրջանների վրա և «կենդանացրեց Պարսկաստանում սահմանադրական կարգերի պահպանման հույսը»[7]։ Պատահական չէ, որ հուլիսի վերջին, սահմանադրության ավելի քան 150 կողմնակիցներ բեստ նստեցին թուրքական դեսպանատան ամառային շենքում, պահանջելով վերականգնել սահմանադրությունը[8]։ Ոգևորությունը հատկապես մեծ էր Իրանական Ադրբեջանում, որտեղ նույնիսկ լուրեր տարածվեցին, որ շուտով երիտթուրքական կառավարության զորքերը օգնության ձեռք կմեկնեն ռեակցիայի դեմ մարտնչող Թավրիզի հեղափոխականներին[9]։ Թուրքիայում վտա-

---

[6] *В. В. Готлиб*, Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, стр. 39.

[7] «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», вып. 1, стр. 244.

[8] Նույն տեղում, էջ 245։

[9] دکتر مهدی ملکزاده նշվ. աշխ., հ. 5, էջ 33։

բանդիության մեջ գտնվող իրանական հեղափոխական կազմակերպությունները ևս անմիջապես ակտիվացրին իրենց գործունեությունը, աշխատելով սերտ կապերի մեջ մտնել երիտթուրքերի հետ։ Հատուկ ուղերձով նրանք դիմեցին Ստամբուլի կոմիտեին, խնդրելով օգնություն ցույց տալ իրանական հեղափոխությանը[10]։ Իրենց հերթին երիտթուրքերը ևս սկսեցին եռանդուն աշխատանք ծավալել իրանական հեղափոխականների համակրանքը շահելու և հնարավորության դեպքում առանձին գործիչների իրենց հետ կապելու ուղղությամբ։ Այդ նպատակով 1908 թ. հուլիսի վերջին Թավրիզ ժամանեցին երիտթուրքական մի քանի գործիչներ, որոնք սկսեցին ագիտացիա մղել այն մասին, որ երկու հարևան մահմեդական պետությունները պետք է միավորվեն «ազատամիտ սահմանադրության հովանու ներքո»[11]։

Օսմանյան նոր կառավարության վերաբերմունքը դեպի իրանական հեղափոխությունը պաշտոնապես հայտարարելու և, իհարկե, իրանական հեղափոխականների համակրանքը շահելու նպատակով երիտթուրքերը հրապարակեցին հատուկ դիմում՝ ուղղված իրանական ժողովրդին[12], իսկ թուրքական Մեջլիսի նախագահներ Ահմեդ Ռիզան և Սեյիդ փաշան հեռագրեցին Մոհամմեդ Ալի շահին, որտեղ հայտարարվում էր, որ «օսմանյան ժողովուրդը համակրանք է տածում իրանական հեղափոխության նկատմամբ»[13]։ Նման հայտարարությունների հետևանքով իրանական հասարակական կարծիքը հանգեց նաև այն եզրակացության, որ Թուրքիայի նոր սահմանադրական կառավարությունը, որը «օգնության ու համագործակցության» ձեռք է մեկնում ներքին ռեակցիայի և իմպերիալիստական պետությունների դեմ մարտնչող իրանական ժողովրդին, մտադիր չէ շարունակել սուլթան Աբդուլ Համիդի ագրեսիվ զավթողական քաղաքականությանը։

Հարկ է նշել, սակայն, որ երիտթուրքական կուսակցության իրականացրած վերնախավային հեղափոխությունը մեկուսացած էր

---

10 Նույն տեղում, էջ 118։

11 «Մշակ», 31 հուլիսի 1908 թ., էջ 1։

12 «Երիտասարդ թուրքերը և Պարսկաստանը», «Մշակ», 15 օգոստոսի 1908 թ., էջ 2։

13 دکتر مهدی ملکزاده նշվ. աշխ., հ. 5, էջ 119։

Արևելքում մյուս հեղափոխական շարժումներից։ Այս իսկ տեսակետից նա մեծապես տարբերվում էր նաև 1905—1911 թթ. իրանական հեղափոխությունից։ Բացահայտելով երիտթուրքական հեղափոխության վերնախավային բնույթը, Վ. Ի. Լենինը նշում էր. «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի ռևոլյուցիաները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու թուրքական ռևոլյուցիաներն էլ բուրժուական համարել։ Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ ռևոլյուցիաներից և ոչ մեկի մեջ»[14]։

Իթթիհադի հետադրբրությունը Իրանում հեղափոխական շարժման նկատմամբ բացառապես հետապնդում էր տակտիկական նպատակներ։

Թուրքական նոր կառավարության վերաբերմունքի հարցը դեպի Իրանը խորապես հետաքրքրում էր նաև ցարական դիվանագիտությանը։ Այդ հարցում օսմանյան կառավարության տրամադրությունները շոշափելու նպատակով 1908 թ. օգոստոսին Զինովևը զրույց ունեցավ մեծ վեզիր Քյամիլ փաշայի և արտաքին գործերի մինիստր Թևֆիկ փաշայի հետ, պահանջելով թուրքական զորքերը անհապաղ դուրս բերել իրանական տերիտորիայից։ Մեծ վեզիրն ու արտաքին գործերի մինիստրը հայտարարեցին ռուսական դեսպանին, որ «իրենք հավանություն չեն տալիս Պարսկաստանի նկատմամբ իրենց նախորդների գործելակերպին և մտադիր են կարգադրել սահմանային զինվորական իշխանություններին մարել անվիճելիորեն Պարսկաստանին պատկանող բոլոր վայրերը, իսկ ինչ վերաբերում է վիճելի վայրերին, ապա այդ կապակցությամբ նախատեսում են կամ անմիջական համաձայնության գալ շահական կառավարության հետ և կամ դիմել Ռուսաստանի և Անգլիայի միջնորդությանը»[15]։

1908 թ. օգոստոսի 19-ին մեծ վեզիրը պաշտոնապես հայտնեց Ստամբուլում իրանական դեսպանին, որ սուլթանի կողմից հաս-

---

[14] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 25, էջ 537։

[15] АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1198, л. 244.

տասվել է մինիստրների խորհրդի որոշումը Թուրքական զորքերը մինչև վիճելի գոտին ետ քաշելու և սահմանային հարցի վերաբերյալ բանակցություններ սկսելու մասին[16]։ Նույն իմաստով հայտարարություն արվեց նաև անգլիական և ռուսական դեսպաններին։ Սեպտեմբերի սկզբին սկսվեց զորքերի էվակուացիան[17]։ Օկուպացիոն զորքերի հրամանատարներ Իզզեթ փաշան և Յավեր փաշան իրենց ջոկատներով վերադարձան Թուրքիա։

Թվում էր, թե, իսկապես, երիտթուրքերը վերջնականապես որոշել են հրաժարվել Իրանի նկատմամբ Աբդուլ Համիդի վարած քաղաքականությունից և այսպիսով թուրք-իրանական հարաբերությունները ստանում են սկզբունքային նոր բովանդակություն։ Սակայն փաստերը վկայում են, որ Օսմանյան կայսրության կողմից իր արևելյան հարևանի նկատմամբ ագրեսիվ նկրտումների ժամանակավոր դադարեցումը ուներ խորը քաղաքական պատճառներ։ Երիտթուրքական հեղաշրջումից հետո Թուրքիան ապրում էր ներքին խորը ճգնաժամ։ Բացահայտ ռեակցիոն և շովինիստական քաղաքականության հետևանքով իթթիհադի սոցիալական բազան դնալով նեղանում էր։ Կայսրության տարբեր շրջաններում երիտթուրքերից հուսախաբված ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը ապրում էր բուռն վերելք։ Միանգամայն վտանգավոր վիճակ էր ստեղծվել նաև Թուրքիայի միջազգային հարաբերությունների բնագավառում։ Ավստրո-Հունգարիան պատրաստվում էր անեքսիայի ենթարկել Բոսնիան և Հերցոգովինան։ Այդ նպատակով նա բանակցությունների մեջ էր մտել եվրոպական մի շարք պետությունների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ[18]։ 1908 թ. հոկտեմբերի 5-ին ավստրիական կայսրը հրապարակեց հրամանագիր, որտեղ հայտարարում էր իր գերիշխանության տարածման մասին Բոսնիայի և Հերցոգովինայի վրա։ Ավստրո-հունգարական իմպերիալիզմի դիվանագիտությունը Օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրելու նպատակով աշխատում էր հրահրել թուրք-բուլղարական կոնֆլիկտ։

---

[16] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 36, л. 333.

[17] ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 6862, л. 20; АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, л. 54.

[18] «История дипломатии», т. II, стр. 649—658.

Բնականաբար այս պայմաններում երիտթուրքերին ձեռնտու չէր անմիջապես ձեռնամուխ լինել Արևելքում ագրեսիվ քաղաքականության կուրսի շարունակմանը, մանավանդ որ դա անխուսափելիորեն կսրեր հարաբերությունները Ռուսաստանի հետ և տեղի կտար անցանկալի միջազգային տարաձայնությունների։

Փաստերը, սակայն, վկայում էին, որ դա միայն ժամանակավոր նահանջ էր և թուրքական ռեակցիան բնավ մտադիր չէր հրաժարվել Իրանական Ադրբեջանի և Քրդստանի նկատմամբ ունեցած մեծապետական-զավթողական հավակնություններից։ Եվրոպական քաղաքական շրջանների կարծիքով «վերածնված և բարեփոխված Թուրքիան անխուսափելիորեն հայացքը կուղղի դեպի Արևելք։ Իր հարևանին կուլ տալը կհեշտանա նրանով, որ նա իր եվրոպական տիրույթներում, որոնք անջատվում են նրանից ինչպես հասած պտուղը ծառից, միշտ կգտնի բավարար չափով նյութ եվրոպական պետությունների հետ ամեն տեսակի գործարքների և փոխհատուցումների համար։ Պարսկաստանը կարող է խուսափել այդ վտանգից միայն եվրոպական կենսաձևի հետ շփվելու միջոցով»[19]։

Շուտով պարզվեց, որ Ստամբուլը մտադիր չէ իր զորքերը ամբողջապես դուրս բերել անվիճելիորեն Իրանին պատկանող տերիտորիաներից։ Թուրքական զորքերը շարունակում էին օկուպացված պահել Բարանդուզը, Էնզելը, Զահրիքը, Սոմայը և մի շարք այլ վայրեր, որտեղ շարունակվում էր տեղական բնակչությունից հարկերի և տուրքերի գանձումը[20]։ Մեկնելուց առաջ թուրքական սպաները կանչում էին իրենց հետ համագործակցող քրդական բեգերին և տալիս մանրամասն հրահանգներ՝ նրանց գործունեության հետագա խնդիրների մասին։ Մասնավորապես կարգադրվում էր անվերապահորեն ենթարկվել տեղերում գաղտնապես թողնված թուրքական սպաներին և ոչ մի դեպքում թույլ չտալ, որպեսզի «պարսիկները հայտնվեն «թուրքական տերիտորիայում»։ Իսկ հայտնվելու դեպքում պարտադրվում էր անխնա խփել նրանց»[21]։

---

[19] «Турецкий сборник» (К событиям на Ближнем Востоке), СПб., 1909, стр. 55—56.

[20] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 36, лл. 333—334.

[21] АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, лл. 54—55.

Եվ իսկապես, որոշ կետերից Թուրքական զորքերի հեռանալուց հետո, երբ իրանական իշխանությունները փորձեցին վերականգնել իրենց տիրապետությունը այդ տերիտորիաներում, հանդիպեցին Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարության կողմից հրահանգավորված քրդական ցեղապետների կատաղի դիմադրությանը։ Այդ պատճառով որոշ վայրերում (Բարանդուզի, Էնզելի, Սալմաստի և այլ շրջաններում) տեղի էին ունենում դինված բախումներ իրանական կառավարական զորքերի և քրդական ջոկատների միջև[22]։

Այնուհետև Ստամբուլը ստիպանաբար սկսեց հող նախապատրաստել Իրանի ներքին գործերին միջամտելու համար։ 1908 թ. սեպտեմբերի 13-ին մինիստրների խորհրդի արտակարգ նիստում, որին մասնակցում էին մեծ վեզիրը, ռազմական, ֆինանսների և ներքին գործերի մինիստրները, որոշվեց հայտարարել շահական կառավարությանը, որ եթե Թավրիզում հեղափոխական ֆիդայիների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով Թուրքահպատակները վնասներ կրեն, ապա անհապաղ Թավրիզ կուղարկվեն Թուրքական զորքեր[23]։ Միաժամանակ Իրանում գործող երիտԹուրքական գործակալությունը սկսեց հեղափոխական շրջաններին առաջարկել «Նոր Թուրքիայի» ծառայությունները Մոհամմեդ Ալի շահի և ռեակցիայի դեմ պայքարելու համար[24]։

Ցարական մի շարք դիվանագետներ այն հաստատ համոզմունքն էին հայտնում, որ Անգլիան շարունակում է գաղտնապես Թուրքիային ակտիվ գործողությունների հրահրել Իրանի դեմ, նպատակ ունենալով շահել Թուրքական նոր կառավարության համակրանքը, լարվածության վիճակում պահել ռուս-Թուրքական հարաբերությունները և Թուրքիայի օգնությամբ ջլատել ու զերոյի հավասարեցնել Իրանում իր մրցակցի ազդեցությունը։ Հարկ է նշել, որ երիտԹուրքական հեղաշրջումից հետո Անգլիային հաջողվեց վերականգնել իր խարխլված ազդեցությունը Ստամբուլում։ Օսմանյան

---

22 Նույն տեղում, թ. 57։

23 «Тифлисский листок», 1908, 17 сентября.

24 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, л. 13 об.

կայսրությունում Մեծ Բրիտանիայի դիրքերը ավելի կայունացնելու նպատակով անգլիական կառավարող շրջանները նույնիսկ հրաժարվեցին Ռուսաստանի հետ կնքած Ռևելի համաձայնագրից[25] և առհասարակ սկսեցին բուռն հակում դրսևորել թուրքական շահերը պաշտպանելու ուղղությամբ։

Զինովևը 1908 թ. հոկտեմբերին տեղեկացնում էր արտաքին գործերի մինիստրությանը. «Թուրք-պարսկական սահմանային վեճին վերաբերող հարցերում անգլիական կառավարության բողարկված գործունեությունը, Թուրքիայի շահերի նկատմամբ Անգլիայի կողմնակալ վերաբերմունքը սկսեց ավելի նշմարելի կերպով դրսևորվել այն ժամանակից, երբ այդ երկրում կատարված հեղաշրջման հետևանքով Անգլիային հաջողվեց վերականգնել իր ազդեցությունը Կ. Պոլսում»[26]։ Մեկ այլ հաղորդագրությունում (հոկտեմբերի 18/31-ի) Զինովևը հաղորդում էր, որ իրանական «զավթված շրջաններում զորքերը թողնելու որոշումը թուրքական կառավարությունն ընդունել է անգլիական դեսպանի խորհրդով, որը գաղտնաբար հայտնել է մեծ վեզիրին, թե նշված վայրերի վերջնական մաքրումը կարող է մեկնաբանվել որպես Պարսկաստանում լիբերալ շարժման նկատմամբ Թուրքիայի անտարբեր վերաբերմունքի դրսևորում, մի հանգամանք, որը վնաս հասցնելով Թուրքիայի հմայքին, կզրկեր նրան Պարսկաստանի գործերի ընթացքին անմիջականորեն միջամտելու հնարավորությունից այն դեպքում, եթե դա պահանջվեր հանգամանքների բերումով և կամ եթե իրադարձությունները առաջ բերեին այլ արտաքին միջամտություն»[27]։ Սրանից կարելի էր անել հետևյալ եզրակացությունները. Անգլիան խրախուսում էր Իրանում Թուրքիայի դավթումների քաղաքականությունը, նա հրավիրում էր Օսմանյան կայսրությանը շարունակել հակահեղափոխական ինտերվենցիան, ձգտում էր իրագործել ուրիշի ձեռքերով իրանական հեղափոխությունը ճնշելու քաղաքականություն, թուրքերին հրահրում էր զործուն մասնակցություն ցուցա-

---

[25] *А. А. Алимов,* Революция 1908 г. в Турции. Сб. «Пробуждение Азии, 1905 г., и революции на Востоке», Л., 1935, стр. 54.

[26] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 36, л. 333.

[27] Նույն տեղում, թ. 334 հ.։

բերել «Իրանի ճակատագրի» լուծմանը այն դեպքում, եթե Ռուսաստանը ձեռնարկեր Իրանական Ադրբեջանի օկուպացիան կամ նրա անեքսիան։

Ի լրացումն այս տեղեկությունների Զինովևը հաղորդում էր արտաքին գործերի մինիստրությանը, որ Լոնդոնում Թուրքական դեսպան Ռիֆաաթ փաշան հանդիպում է ունեցել արտաքին գործերի պետական քարտուղար Էդուարդ Գրեյի հետ, որը հիշեցրել է անգլիական կառավարության կողմից Բ. Դոանը տրված խորհուրդը՝ ուշադիր հետևել Պարսկաստանում իրադարձությունների ընթացքին, դրան ավելացնելով, որ որքան էլ տագնապալից լինի գործերի վիճակը Բալկաններում, այնուամենայնիվ Թուրքական կառավարության շահերը պարտադրում են նրան իրանական սահմանում, մասնավորապես Ուրմիայի մոտ, ձեռնարկել որոշ ռազմական միջոցառումներ։ Զինովևը դրան ավելացնում էր, որ միաժամանակ Ստամբուլում անգլիական դեսպանը իր քարտուղարի միջոցով հասկացրել է մեծ վեզիրին, որ Թուրքական կառավարությանը անհրաժեշտ է անհապաղ հոգ տանել չորրորդ բանակային կորպուսի զորքերի մոբիլիզացիան իրագործելու համար, որովհետև իրանական և Թուրքական սահմանների մոտ ռուսական կառավարության կողմից ձեռնարկած միջոցառումների պատճառով կարող է ամեն րոպե անհրաժեշտություն ստեղծվել այդ կորպուսի զորքերի կենտրոնացման համար[28]։

Սակայն նախքան այս խորհուրդներին հետևելը, խորհրդակցելով ռազմական մինիստրի հետ, մեծ վեզիրը անհրաժեշտ համարեց կարգադրել չորրորդ կորպուսի հրամանատարին շտապ կարգով տեղեկություններ հավաքել Թուրքիայի սահմաններում ռուսական կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին։ Նույնանման հրահանգներ տրվեցին նաև Կովկասում Թուրքական հյուպատոսներին։ Բ. Դոան կասկածամտությունը Անգլիայի խորհուրդների նկատմամբ ներվայնացնում էր Լոնդոնի կաբինետին։ Գրեյը կրկին դիմեց Ռիֆաաթ փաշային խնդրելով տեղեկացնել Բ. Դոանը, որ Լոնդոնի կաբինետի կարծիքով «Թուրքիան պարտավոր է, չշեղելով

---

[28] Նույն տեղում, թ. 334հ—335հ, 377—378։

իր ուշադրությունը անմիջականորեն նրան հետաքրքրող հարցերից, շարունակել զգոն հետևել Պարսկաստանում իրադարձությունների ընթացքին և պարսկական սահմանում իրագործել ռազմական միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են մահմեդական մեծ պետության իր նշանակությունը պահպանելու համար, որն ընդ որում օգտվում է Անգլիայի համակրանքից»[29]։

Իր այս քաղաքական գիծը կենսագործելու նպատակով Բրիտանական կառավարությունը որոշեց դիմել որոշ «զոհողությունների», որոնք, ըստ էության, դարձյալ ծառայելու էին անգլիական շահերին։ Ինչպես հայտնի է, Աբդուլ Համիդի տիրապետության շրջանում Անգլիայի համար Թուրքիայի վրա ճնշում գործադրելու առավել հուսալի միջոցներից մեկը նրա միջամտությունն էր Պարսից ծոցի ավազանի թուրքական հպատակության տակ գտնվող արաբական ցեղերի գործերին։ Սակայն երիտթուրքական հեղաշրջումից և մանավանդ իր անգլոֆիլական ձգտումներով հայտնի Քյամիլ փաշային մեծ վեզիրի պաշտոնում նշանակվելուց հետո, անգլիական կառավարությունը անհրաժեշտ համարեց արմատապես փոխել իր վերաբերմունքը հիշյալ հարցի նկատմամբ։ Բ. Դոանը հայտարարվեց, որ Անգլիան մտադիր է այսուհետև ձեռնպահ մնալ արաբների գործերին միջամտելուց։ Այդ առթիվ էդուարդ Գրեյը պաշտոնապես հայտարարեց Լոնդոնում թուրքական դեսպան Ռիֆաաթ փաշային, որ ի ապացույց իր հաստատ և կայուն մտադրության՝ Պարսից ծոցում անգլիական քաղաքականությունը Թուրքիայի շահերի հետ համաձայնեցնելու վերաբերյալ, անգլիական կառավարությունը խնդրում է Բ. Դոանը իր վրա վերցնել Ֆաոյի և Մոհամմերայի հարակից ջրերում կարգը պահպանելու հոգսը։ Ավելի առաջ գնալով Գրեյը խորհուրդ էր տալիս Թուրքիային լավագույն հարաբերություններ պահպանել իրանական պետությունից անջատվողական ձգտումներ դրսևորող Մոհամմերայի կառավարիչ շեյխ Խազալի հետ և խրախուսել նրան Իրանի հետ կապերը խզելու համար[30]։

Ինչպես տեսնում ենք Անգլիան իր այս քայլով մի կողմից աշ-

---

[29] Նույն տեղում, թ. 377—378։

[30] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 37, лл. 149—150 об.

խատում էր ձեռք բերել Թուրքական կառավարության համակրանքը, մյուս կողմից՝ հրավիրում էր նրան իր հետ համագործակցած պաշտպանել շահական կառավարության դեմ ուղղված իրանական ֆեոդալների սեպարատիստական շարժումները։

Հատկանշական է, որ այդ շրջանում, Անգլիայի հետ միաժամանակ և նրանից անկախ, ելնելով սեփական նկատառումներից, Թուրքիային Ռուսաստանի դեմ ակտիվորեն տրամադրում էր նաև Գերմանիան։ Զինովևը իր 1908 թ. նոյեմբերի 24-ի (դեկտեմբերի 6-ի) նամակում հայտնում էր, որ Բեռլինում Թուրքական դեսպանը հեռագրել է Բ. Դուանը, թե գերմանական կառավարությունը խնդրել է նախազգուշացնել Թուրքական կառավարությանը, որ համաձայն ձեռք բերած հավաստի տեղեկությունների, Թուրքիային սպառնում է անխուսափելի վտանգ Ռուսաստանի կողմից և այդ պատճառով Թուրքական կառավարությունը պարտավոր է անհապաղ պատրաստություն տեսնել 4-րդ կորպուսը մոբիլիզացնելու համար[31]։

Գերմանական իմպերիալիզմը միաժամանակ Թուրքիային հրահրում էր նոր զավթումների Իրանում, նպատակ ունենալով նրա օգնությամբ թափանցել Ադրբեջան և Իրանական Քրդստան, այդ շրջաններում գերմանական կապիտալի շահերը ապահովելու և Ռուսաստանի հետ ապագա պատերազմի դեպքում ստրատեգիական կարևոր դիրքեր ձեռք բերելու համար։ Զինովևը տեղեկացնում էր իր կառավարությանը, որ գերմանական արտաքին գործերի պետական քարտուղար ֆոն Շյոնը հայտարարել է Բեռլինում Թուրքական դեսպան Օսման Նիզամի փաշային, որ Թուրքերը պետք է ավելացնեն Ուրմիայում գտնվող իրենց զորքերի թիվը այնտեղ կարգը պահպանելու և գերմանական հպատակների անվտանգությունը ապահովելու համար։ Բ. Դուռը հանձնարարել էր Օսման Նիզամի փաշային հայտնել ֆոն Շյոնին, որ «մոտ ժամանակներս Ուրմիա կուղարկվեն ևս երկու գումարտակ»[32]։ Անգլո-գերմանական «նախազգուշացումների» և «խորհուրդների» հետևանքով Թուրքական կառավարությունը հրամայեց Էրզրումի վիլայեթի զինվորական և քաղաքացիական իշխանություններին ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցառումները մոբիլիզացիայի նախապատրաստվելու համար։

---

[31] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 36, лл. 388—388 об.

[32] АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 4.

Ինչպես տեսնում ենք Անգլիան և Գերմանիան, թեև նրանցից յուրաքանչյուրը Ռուսաստանի հետ իրենց քաղաքական հարաբերություններում գտնվում էին միանգամայն տարբեր բևեռներում, ըստ էության, դրսևորում էին ջանքերի միասնություն Մերձավոր և Միջին Արևելքում ցարիզմի դիրքերը թուլացնելու համար:

Իրենց արտաքին քաղաքականության բնագավառում դրսևորելով մեծագույն երկյուղ անգլո-ռուսական մերձեցման նկատմամբ, երիտթուրքական կառավարող շրջանները շատ շուտով տնտեսապես և քաղաքականապես սկսեցին կողմնորոշվել դեպի իմպերիալիստական Գերմանիան: Խոսելով թուրք-գերմանական համագործակցության պատճառների մասին Վ. Գոտլիբը նշում է. «Երիտթուրքերի պանիսլամիստական ձգտումները և մի շարք այլ հանգամանքներ օսմանյան կառավարությանը կապում էին Բեռլինի հետ»[33]: Այդ համագործակցությունը հատկապես սկսեց դրսևորվել Իրանում, որի նկատմամբ երկու պետություններն էլ ունեին իմպերիալիստական գավթողական նպատակներ և հետևաբար նրանց գործելակերպի ու քաղաքականության մեջ նկատվելու էր շահերի կատարյալ միասնություն:

1908 թ. աշնանը գերմանական հետախուզությունը թուրքական գործակալության հետ համատեղ Իրանական Ադրբեջանում և Քրդստանում եռանդուն գործունեություն ծավալեց տեղական բնակչության մեջ հակառուսական տրամադրություններ բորբոքելու և այդ շրջանների վերաբերյալ ռազմա-քաղաքական հետախուզական տվյալներ հավաքելու ուղղությամբ[34]:

Թավրիզում և, առհասարակ, Իրանական Ադրբեջանում ակտիվ գործունեություն էին ծավալել թուրքական սպաներ Իբրահիմ փաշան և Մահմուդ բեյը և Հյուսիսային Իրանում գերմանական հետախուզության պարագլուխ Շյոնեմանը: Վերջինիս օգնելու նպատակով Թավրիզ ժամանեցին նաև քաղաքական հետախույզներ կապիտան Գոտֆրիդ Շտիվերը և Սամբուլում գերմանական դեսպանատան բարտուղար Անդերսը[35]:

---

[33] *В. В. Готлиб*, նշվ. աշխ., էջ 42:

[34] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 253.

[35] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 37, лл. 300, 306; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 67, л. 253.

Կովկասի ռազմական շրջանի շտաբի ուղյալներով Թուրքական կառավարությունը պատրաստվում էր իրանական մի շարք քաղաքների, ինչպես նաև Թիֆլիսի, Կարսի և Բաթումի իր հյուպատոսություններին կից Թուրքական առևտրական գործակալների անվան տակ նշանակել բարձրագույն կրթություն ունեցող սպաների՝ գաղտնի հետախուզական ծառայություն կատարելու համար[36]։ Գերմանա-Թուրքական գործակալությունը Իրանական Ադրբեջանում հեղափոխական ագիտացիայի հետ միաժամանակ պրոպագանդում էր նաև պանիսլամիստական գաղափարներ։ Սակայն, ի տարբերություն Աբդուլ Համիդի կողմից խթանվող պանիսլամիզմի, իթթիհադի պանիսլամիստական քարոզչությունը կրում էր առավելապես ոչ թե կրոնական ֆանատիզմի բնույթ, այլ քաղաքական, ազատագրական, մասնավորապես մահմեդական պետություններին զինելու միտում՝ ընդդեմ «իսլամի թշնամիների» և առաջին հերթին՝ ընդդեմ Ռուսաստանի։ Երիտթուրքերի մարտընչող նացիոնալիզմի և հարձակողական ռևանշիզմի գաղափարախոսության ներկայացուցիչներից մեկը՝ Ջելալ Նուրին իր «Իսլամի միավորումը» գրքում անդրադառնալով պանիսլամիզմին խոստովանում է, որ իր կուսակցությանը հետաքրքրում է ոչ թե պանիսլամիզմի կրոնական կողմը, այլ քաղաքական, որ իսլամի բարոյը հետապնդում է միասնական մահմեդական ազգերի ստեղծումը, որոնց թիվը հասնում է շուրջ 300 միլիոնի[37]։

Թուրքիայի պանիսլամիստական գործակալները, որոնց մեծ մասը իթթիհադական սպաներ էին, բուռն գործունեություն ծավալեցին Անատոլիի պետությունների ազդեցության տակ գտնվող երկրներում։ Ստամբուլից Զաբիրովը հաղորդում էր, որ «Երիտթուրքական ռազմական ապստամբությունից հետո որոշ քանակությամբ սպաներ ուղարկվեցին Աֆղանստան, Պարսկաստան և Մարոկկո՝ մահմեդական գործի բարելավմանը նպաստելու համար»[38]։

1908 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ Թավրիզում հակահեղափոխական շարժումը բուռն վերելք էր ապրում, Թուրքական գործակալները գերմանական հետախուզության հետ հա-

---

[36] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 57, лл. 1—4.

[37] *Jelal Nuri*, ittihadi islam, istanbul, 1331, s. s. 11—13.

[38] АВПР, ф. «Политархив», 1909, д. 1035, л. 64.

մատեղ Ադրբեջանում լայն ագիտացիա ծավալեցին, կոչ անելով կազմակերպել համընդհանուր ապստամբություն ինքնավարություն ձեռք բերելու նպատակով։ Նրանց կողմից նույնիսկ մշակված էր ապստամբության մանրամասն պլան, որն իրագործելու համար կազմակերպվում էին հատուկ գաղտնի կոմիտեներ, էնջումեններին մատակարարվում էր զենք ու զինամթերք և այլն[39]։ Թավրիզի թուրքական հյուպատոսը խոստանում էր, որ Թուրքիան կհովանավորի Ադրբեջանին և նրան ցույց կտա ամեն տեսակի աջակցություն[40]։ Իսկ Թեհրանում թուրքական դեսպանատունը ճնշում էր գործադրում շահական կառավարության վրա պահանջելով թույլատրել Թավրիզ մացնել «ազգային պահակախումբ», իբր թե թուրքական հյուպատոսությունը և թուրքահպատակներին պաշտպանելու համար[41]։

Իրանական Ադրբեջանի նկատմամբ իր բազաբական ծրագրերը կենսագործելու նպատակով երիտթուրքական կենտրոնական կոմիտեն և օսմանյան կառավարությունը աշխատում էին օգտագործել նաև Ստամբուլում, Տրապիզոնում, Էրզրումում և այլ վայրերում գտնվող իրանական էնջումեններին։ Վերջիններիս հանձնարարվում էր համոզել Թավրիզի հեղափոխականներին, որ Ադրբեջանի միակ փրկությունը թուրքական հովանավորություն ընդունելն է։ Էնջումենների անդամների մի մասը հավաքագրված լինելով թուրքական հետախուզական մարմինների կողմից և կամ միամտորեն հավատալով «Ադրբեջանի փրկության» վերաբերյալ խոստումներին» կատարում էին իրենց տրվող համապատասխան ցուցումները։ Ստամբուլից ռուսական դեսպանը այդ առթիվ հաղորդում էր արտաքին գործերի մինիստրությանը, որ մայրաքաղաքում գործող «Սաադաթ Իրանիան» կոչված էնջումենը[42], ինչպես նաև տեղի իրանական բազմամարդ գաղութը «մշտական կապերի մեջ է գտնվում երիտթուրքական կոմիտեի անդամների հետ, նրանից ստանում է խոր-

---

39 «Автономия Азербайджана», «Тифлисский листок», 1908, 11 октября.

40 ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 7696, лл. 110—111.

41 Նույն տեղում, թ. 112։

42 Այս էնջումենը կազմակերպվել էր երիտթուրքական հեղաշրջումից հետո Ստամբուլում գտնվող իրանական հեղափոխական վտարանդիների կողմից։

հուրդներ և դրանք հաղորդում Ադրբեջանում իր համախոհներին ի ղեկավարություն»[43]։

Թավրիզի պաշտպանության ճգնաժամային օրերին, երբ կառավարական զորքերը և ռեակցիոն խանների բանդաները շրջապատել էին հեղափոխական Թավրիզը և սպառնում էին հաշվեհարդար տեսնել նրա պաշտպանների հետ, վերջիններիս մի մասի մոտ, հուսալքության հետևանքով, ավելի ու ավելի էր մասսայականություն գտնում Թուրքիայի հովանավորության տակ Ադրբեջանի ինքնավարության հռչակման գաղափարը[44]։ Թավրիզում թուրքական գլխավոր հյուպատոս Աբդուլ Քերիմ բեյը պատրաստակամություն էր հայտնում բոլոր բնակիչներին Թուրքիայի հովանավորության տակ վերցնել և նրանց թուրքական անձնագիր բաժանել[45]։ Քողարկվելով հեղափոխական լոզունգներով և իրենց ձևացնելով որպես իրանական սահմանադրության պաշտպաններ[46], թուրքերն ու նրանց թիկունքում կանգնած գերմանացիները փորձում էին միջամտել Թավրիզի հեղափոխականների և շահական բանդաների միջև մղվող պայքարին, առաջարկում էին էնջումեններին իրենց օգնությունը՝ քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու գործում։

Զբավարարվելով Ադրբեջանի ինքնավարության վերաբերյալ ագիտացիայով, թուրքական գործակալությունը ուղղակի պրոպագանդա ծավալեց Իրանական Ադրբեջանը Օսմանյան կայսրությանը միացնելու օգտին[47]։

Իթթիհադի գործակալները կենտրոնական կոմիտեից հրահանգ ունեին ամեն գնով շահել Թավրիզի հեղափոխականների փառաբանված առաջնորդներ Սաթթար խանի և Բաղիր խանի անձնական համակրանքը, իսկ հնարավորության դեպքում նրանց ուղղակի

---

[43] АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 37, лл. 73—74.

[44] «Մշակ», 14 նոյեմբերի 1908 թ., էջ 2։

[45] ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 353, лл. 55—56, 232 об.

[46] «Представители Турции и Германии в Персии в роли защитников персидской конституции». «ИШКВО», № 22, Тифлис, 1908, 1-я треть. стр. 34—35.

[47] *М. С. Иванов,* Иранская революция 1905—1911 гг., стр. 329—330. նաև «Մշակ», 12 նոյեմբերի, 1908 թ., էջ 2։

դարձնել Իրանական Ադրբեջանում թուրքական բաղաքականությունը ծառայեցնելու գործիքներ։ Այդ նպատակով օսմանյան կառավարության հանձնարարությամբ 1908 թ. հոկտեմբերի 31-ին Թավրիզում թուրքական գլխավոր հյուպատոսը Սաթթար խանին պարգևատրեց «խիզախության համար» շքանշանով[48]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, օսմանյան Թուրքիան և իմպերիալիստական Գերմանիան աշխատում էին իրանական ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական ու հակաֆեոդալական շարժումն օգտագործել Իրանի նկատմամբ իրենց քաղաքական ծրագրերն իրագործելու համար։

Սակայն իրանական հեղափոխականների օգնությամբ Ադրբեջանը անեքսիայի ենթարկելու երիտթուրքերի մշակած ծրագիրը կատարյալ ձախողման մատնվեց, որովհետև ժողովուրդն ու հեղափոխական շրջանները միանգամայն անվստահությամբ ու կասկածանքով վերաբերվեցին թուրքական գործակալության ամբոխավարական հայտարարություններին։

1908 թ. աշնանը Թուրքիան ակտիվ գործունեություն ծավալեց նաև սահմանամերձ իրանական տերիտորիաներում։ Երիտթուրքական գործակալությունը սկսեց ամենուրեք լուրեր տարածել, թե իբր Իրանը արդեն բաժանված է Անգլիայի, Ռուսաստանի և Թուրքիայի միջև, ընդ որում, մինչև Ջաղաթու գետն ընկած տերիտորիաներն անցել են Ռուսաստանին, նրանից հարավ՝ Անգլիային, իսկ Ջաղաթուից արևմուտք՝ Թուրքիային[49]։ Այս լուրերը ոչ միայն ուղղակի ակնարկ էին վերոհիշյալ պետությունների միջև Իրանի բաժանման անհրաժեշտության մասին, այլև նպատակ ունեին հավատ ներշնչել թուրքերին աջակցող տեղական բնակչությանը, որ իրենց թուրքասիրական վարքագծի համար նրանք պատասխանատու չեն լինելու ո՛չ Իրանի, և ո՛չ էլ Անգլիայի ու Ռուսաստանի առջև։

Օսմանյան կառավարությունը եռանդուն փորձեր էր կատարում նաև սահմանամերձ իրանական տերիտորիաները տնտեսապես նվաճելու ուղղությամբ։ 1908 թ. օգոստոսին օսմանյան «Գետապյուբլիկ» ընկերության վերատեսուչ Լոդոֆեոիդիսը ուղարկվեց

---

[48] ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 355, л. 165.

[49] *Дм. Беляев*, նշվ. աշխ., էջ 11։

Ուրմիա, լճից աղի հանույթի և նրա շահագործման հնարավորությունների հետ ծանոթանալու համար։ Այնուհետև, «Թուրք մասնագետների» անվան տակ Ուրմիայի շրջանը սկսեցին ժամանել գերմանացի ինժեներներ և արդյունաբերողներ, որոնք ծանոթանում էին այդ նահանգի «հնարավորությունների» հետ[50]։ Բացի այդ. Ուրմիա լճի մոտ Ջեբել-Քենդի գյուղում Թուրքական իշխանությունները կազմակերպեցին մաքսատուն[51]։ Այդ միջոցառումը բացի զուտ տնտեսական նկատառումներից նպատակ ուներ նաև շեշտել, որ զավթված շրջանները Թուրքական տերիտորիաներ են, որտեղից «դեպի Իրան» ապրանքներ արտահանելու համար, միջպետական տնտեսական հարաբերություններում ընդունված կարգի համաձայն, անհրաժեշտ է վճարել մաքսատուրք։ Ուրմիայում փոխ-հյուպատոս Ա. Միլլերը այդ առթիվ գրում էր, որ «Թուրքական տերիտորիա» հայտարարված Սուլդուզից, Դոլից և Բարանդուզից այլ վայրեր ապրանքներ տեղափոխելիս Ջեբել-Քենդիի մաքսատանը Թուրքերը կանոնավոր կերպով գանձում են մաքսատուրքեր։ Ընդ որում, մաքսատան հարկացուցակներում ուղղակի նշվում էր, որ «Թուրքիայից Պարսկաստան տեղափոխվող բոլոր ապրանքները ենթակա են մաքսատուրքի վճարման»[52]։

Գնահատելով այս երևույթը Ա. Միլլերը գրում էր Թեհրանում ռուսական դեսպանորդ Սաբլինին. «...Թուրքերը վերադառնում են իրենց «մինչ սահմանադրական» շրջանի քաղաքականությանը»[53]։ Մի այլ հաղորդագրության մեջ նա նշում էր. «Թուրքիայի վարքագիծը Ուրմիայի շրջանում ավելորդ անգամ հաստատում է, որ նոր երիտթուրքական կառավարությունը ևս պարսկական սահմանային հարցում ամբողջապես շարունակում է սուլթանի նախկին քաղաքականությունը, որը հիմնված էր ուժի, խաբեության, ուխտադրժության, ենթադրության և այն ներքին խառնակությունների վրա, որի մեջ ներկայումս գտնվում է Պարսկաստանը»[54]։

---

50 «Մշակ», 6 օգոստոսի, 1908 թ., էջ 2։

51 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, л. 140.

52 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 52—53.

53 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, л. 140.

54 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 50—52.

1908 թ. իրենց ձեռքը վերցնելով իշխանությունը երիտթուրքերը հանդես եկան Ասիական Թուրքիայում երկաթուղային շինարարության լայն ծրագրով։

Դա վկայում էր այն մասին, որ նախ նրանք ցանկանում են ազատվել Փոքր Ասիայի հյուսիսում երկաթուղային շինարարության վերաբերյալ 1900 թ. մարտի 31-ին Ռուսաստանի դրած արգելքից և ապա ձգտում են ամրապնդել իրենց ստրատեգիական դիրքերը Ռուսաստանի և Իրանի սահմանների մոտ։ Մանրամասն ծանոթանալով երկաթուղային շինարարության այդ նախագծերի հետ Ստամբուլում ռուսական ռազմական գործակալը նշում էր, որ դրանց նպատակն է «փոխել ուժերի հարաբերությունը մեր Կովկասյան ճակատում հօգուտ Թուրքերի»[55]։ Միանգամայն պարզ է, որ ֆինանսական ծանր ճգնաժամի մեջ գտնվող Թուրքական կառավարությունը ի վիճակի չէր սեփական միջոցներով իրագործել իր այդ ծրագրերը։ Այդ պատճառով նա դիմեց ֆրանսիական, ամերիկյան և օտարերկրյա մի շարք այլ սինդիկատների, առաջարկելով խոշոր կոնցեսիաներ[56]։ Սակայն երկաթուղային շինարարության այդ ծրագրերը, հատկապես նրանք, որոնք մոտենալու էին ռուսական և իրանական սահմաններին, գլխավորապես ոգեշնչվում էին գերմանական իմպերիալիզմի կողմից, որը Բաղդադի երկաթուղու շինարարության հարցում անգլո-ռուսական գիմադրությունը հաղթահարելու նպատակով աշխատում էր այդ հսկա մագիստրալի առանձին ճյուղավորումների շինարարությունը ներկայացնել որպես զուտ Թուրքական նախաձեռնություն։ Պատահական չէ, որ երկաթուղային շինարարության իր ծրագրերում Թուրքական կառավարությունը առաջին պլան էր մղում հատկապես Զուբեյր—Պարսից ծոց և Սադիջե—Խանեկին գծերը[57], որոնց շինարարության վերաբերյալ գերմանական նախագծերը հանդիպել էին անգլո-ռուսական կատաղի դիմադրությանը։ Սակայն միանգամայն սխալ կլիներ եզրակացնել, որ

---

[55] *А. Попов,* Железнодорожное строительство держав в Малой Азии, «Новый Восток», 1925, № 7, стр. 139.

[56] *Նույն տեղում, էջ 141։*

[57] «Вооруженные силы Турции». Изд. Главного управления Ген. штаба, СПб., 1910, стр. 162—163; АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 31, л. 10.

օսմանյան կառավարությունը և թուրքական պառլամենտը, որտեղ քննարկվում էին երկաթուղային շինարարության վերոհիշյալ նախագծերը, ցանկանում էին լոկ ընդառաջել գերմանական իմպերիալիզմի երկաթուղային քաղաքականությանը Մերձավոր Արևելքում։ Փաստերն անառարկելիորեն վկայում են, որ թուրքական կառավարող շրջանները, որոնց որդեգրած ռազմաշունչ քաղաքականության կուրսը անխուսափելիորեն մղում էր նրանց արտաքին զավթումների, չէին կարող անտեսել սեփական հսկողության տակ գտնվող ստրատեգիական նշանակություն ունեցող երկաթուղիների ստեղծման հարցը։ Ի դեպ, ռուսական դիվանագետների կարծիքով, «Օսմանյան կայսրության տերիտորիալ ամբողջականությունը պաշտպանելու պատրվակի տակ երիտթուրքերի առաջ քաշած հզոր բանակ ու նավատորմ ստեղծելու լոզունգի ետևում ևս թաքնված էին ագրեսիվ նպատակներ և փայլուն ռազմական ապագայի մասին իղձեր»[58]։

1909 թ. սկզբից երիտթուրքական կառավարությունը գնալով ավելի ու ավելի էր հակվում Գերմանիայի կողմը։ Դրան նպաստող հանգամանքներից էր այն, որ անգլոֆիլ Քյամիլ փաշայի կաբինետը փոխարինվեց գերմանոֆիլ Հիլմի փաշայի կառավարությամբ։ Գերմանական ազդեցության ուժեղացումը առաջին հերթին դրսևորվեց թուրքական բանակի վրա։ 1909 թ. ամռանը գերմանական ռազմական միսիան գեներալ ֆոն դեր Գոլցի գլխավորությամբ ժամանեց Ստամբուլ, որից հետո տենդորեն սկսվեց թուրքական բանակի գերմանիզացիայի պրոցեսը։ Նույն թվականի օգոստոսին Վիլհելմ կայզեր հրամանով գեներալ Մահմուդ Շևքեթ փաշան (հետագայում ռազմական մինիստր) ժամանեց Գերմանիա՝ գերմանական բանակի մեծ զորախաղերը դիտելու[59]։ Գերմանական ռազմական շրջանները, ըստ երևույթին, որոշել էին իրենց բանակի մարտական հատկանիշները ցուցադրելով տպավորություն գործել թուրքական գեներալի վրա։

Շուտով հայտնի դարձավ, որ ֆոն դեր Գոլցի պահանջով թուր-

---

[58] ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 3818, л. 92 об.—93.

[59] Նույն տեղում։

քական կառավարությունը որոշել է կրկնապատկել չորրորդ զորաբանակի կազմը[60]։

Թեև Գերմանիայի ազդեցության ուժեղացումը Թուրքիայի վրա և վերջինիս ռազմական հզորության մեծացման փորձերը ներվային վիճակ էին ստեղծում «Եռյակ համաձայնության» երկրների կառավարող շրջաններում, բայց և նրանց միջև գոյություն ունեցող անլուծելի հակասությունները թույլ չէին տալիս համատեղ ելույթ ունենալ այդ վտանգի դեմ։ Ավելին, Թուրքիան նույնիսկ աջակցություն էր գտել Ֆրանսիայի կողմից, որը հետապնդելով իր կապիտալիստների նեղ տնտեսական շահերը բազմաթիվ փոխառություններով ու վարկերով ուժեղացնում էր թուրքական կառավարությանը։

Թուրքիայում ավելի ու ավելի հաճախակի էին լսվում ռևանշի կոչեր «մի շարք ստորացումների համար», ու տենչանքներ Իրանը, Կովկասը զավթելու և Սև ծովում թուրքական տիրապետություն հաստատելու վերաբերյալ։ Դա նկատվում էր նաև մամուլի հաճախակի և ծայրահեղ ելույթներում[61], որը սիստեմատիկորեն ատելություն էր բորբոքում հատկապես Ռուսաստանի դեմ։ «Եռյակ դաշինքի» երկրները իրենց հերթին Թուրքիային մղում էին դեպի Ասիա, հատկապես Իրան, ենթադրելով, որ նրա դեմ ռազմական ելույթը անխուսափելիորեն կհանգեցներ Ռուսաստանի հետ ռազմական կոնֆլիկտի[62]։ Թուրքիան իր նետն ուղղում էր նաև Անգլիայի դեմ, հավակնություններ ներկայացնելով Պարսից ծոցի առափնյա տերիտորիաների նկատմամբ ընդհուպ մինչև Բահրենյան կղզիները, որտեղ սկսվում էին անգլիական հովանավորության տակ գտնվող Մասկաթի իմամի տիրապետությունները[63]։ «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեն առաջարկում էր Պարսից ծոցի վերաբերյալ Թուրքիայի ու Անգլիայի միջև բոլոր վիճելի հարցերը հանձնել միջնորդ դատարանի քննությանը՝ նախապես ստանալով Բեռլինի խոստումը նրան աջակցություն ցույց տալու վերաբերյալ[64]։ Այսպի-

---

60 Նույն տեղում, թ. 116։

61 «Красный архив», т. 44, стр. 35.

62 ЦГВИА, ф. 2000 с., д. 3818, л. 92 об.

63 *М. Ардатов,* Германизация турецкой армии. «ИШКВО», № 28, Тифлис, 1910, стр. 63—64.

64 Նույն տեղում, էջ 113։

սով անգլո-թուրքական հարաբերությունների ժամանակավոր ջերմացումը, որը նկատվում էր երիտթուրքական հեղաշրջումից անմիջապես հետո, կրկին փոխարինվեց փոխադարձ սառնությամբ: Էդուարդ Գրեյը հրավիրելով Լոնդոնում թուրքական դեսպան Ռիֆաթ փաշային հայտարարում է, որ Քյամիլ փաշայի փոխարինումը Հիլմի փաշայով, որը հայտնի է իր գերմանոֆիլ ձգտումներով, անգլիական կառավարության կողմից մեկնաբանվում է որպես մարտահրավեր: Եվ որ այդ պատճառով Թուրքիան «այլևս չպետք է հույս դնի ոչ Անգլիայի, ոչ էլ նրա բարեկամների վրա»[65]:

1909 թ. սկզբներին Օսմանյան կայսրությունը ակտիվացրեց իր բաղաքականությունը Իրանի նկատմամբ: Երիտթուրքական կուսակցությունը բուռն պրոպագանդա ծավալեց այն մասին, որ թուրքական կառավարությունը որոշել է վճռականորեն հանդես գալ իրանական հեղափոխական շարժումը պաշտպանելու դիրքերում[66]: Իթթիհադի գործակալությունը ամենուրեք շեփորում էր, որ թուրքական սահմանային իշխանությունները Ստամբուլից հրաման են ստացել ամեն կերպ նպաստել Իրանում սահմանադրական ռեժիմի հաղթանակին[67]: Խոսելով այն մասին, թե ինչ քաղաքական նպատակներ են հետապնդում երիտթուրքերը սերտաղ անելով իրանական հեղափոխական շարժման հետ, Ուրմիայի փոխ-հյուպատոս Միլլերը նկատում էր. «Երիտթուրքերը հայտնվել են այստեղ, ոչ թե պարսիկ սահմանադրականներին աջակցություն ցույց տալու համար, այլ սահմանամերձ շրջաններում հեղափոխական շարժմանը տիրապետելու և այն բացառապես իրենց կառավարության շահերի հունով ուղղելու նպատակով»[68]: Ի դեպ, նույն տեսակետին էր նաև անգլիական փոխ-հյուպատոս կապիտան Դիկսոնը[69]: Կովկասի ռազմական շրջանի հետախուզական բաժնի տեղեկությունների համաձայն, իրանական հեղափոխության համար «մարտնչող» թուրքական սպաները մեծ մասամբ խավարամիտ, կասկածելի անցյալ

---

65 Նույն տեղում:

66 АВПР, ф. «Персидский стол», 1909 г., д. 661, л. 26.

67 Նույն տեղում, թ. 20:

68 Նույն տեղում, թթ. 96, 117, 141:

69 Նույն տեղում:

ունեցող, թուրքական սահմանադրության հակառակորդ և սուլթան Աբդուլ Համիդի կողմնակից մարդիկ էին, որոնք մասնակցել էին սուլթանի կողմից կազմակերպված հայկական ջարդերին և այլն[70]։

Բոլոր փաստերից երևում էր, որ Իրանում հեղափոխական շարժմանը զարկ տալու պատրվակի տակ երիտթուրքական կոմիտեն առաջին հերթին նախապատրաստում էր իր կողմից նախապես ծրագրած ապստամբությունը՝ Ադրբեջանը Իրանի կազմից անջատելու և այն Թուրքիային միացնելու պլանը իրականացնելու համար։ Հենց այդ նպատակով 1909 թ. սկզբին Սալոնիկից էրզրում ժամանեցին և այնուհետև մեկնեցին Իրան երիտթուրքական Սալոնիկի կոմիտեի անդամներ, բանակի սպաներ քոլ-աղասի Խալիլ բեյը, մյուլազիմ-ավվալ Յակուբ էֆենդին, մյուլազիմ-սանի Հիլմի էֆենդին և Նաջի բեյը[71]։ Միաժամանակ էրզրումի ռազմական շտաբում տեղի էր ունենում այն զինվորականների ցուցակագրում, որոնք ցանկություն էին հայտնում որպես կամավորներ մեկնել Իրան[72]։ Սրանց վրա խնդիր էր դրված նպաստել Ադրբեջանի հեղափոխականների ռազմական ջանքերի ակտիվացմանը, որպեսզի նրանք ի վիճակի լինեն ջախջախելու շահական զորքերին և Իրանական Ադրբեջանը հայտարարեն ինքնավար, որը երիտթուրքերի ծրագրերի համաձայն պետք է միանար իր «արյունակից» ժողովրդի հետ։ Այս ուղղությամբ տարվող քաղաքական աշխատանքը արդյունավետ դարձնելու համար երիտթուրքերը Թավրիզում նույնիսկ ստեղծեցին իրենց կոմիտեի մասնաճյուղ[73]։

Ստամբուլում ռուսական դեսպանը այն միտքն էր առաջ քաշում, որ Ադրբեջանում պարսկական ազատագրական ջոկատների տակտիկական հաջողությունները մասամբ պետք է բացատրել նաև նրանով, որ նրանցում գործում են այնպիսի սպաներ, ինչպիսիք են Նաջի բեյը և նրա կոլեգաները, որոնք ստացել են հիմնավոր ռազմական կրթություն[74]։ 1909 թ. փետրվարին հատուկ առաքե-

---

70 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, л. 260 об.

71 Նույն տեղում, թ. 205։

72 Նույն տեղում։

73 «Մշակ», 28 ապրիլի 1909 թ.։

74 АВПР, ф. «Политархив», 1909, д. 1035, л. 63.

յությամբ Իրանական Ադրբեջանի արևմտյան շրջանները ժամանեց նաև Թուրքական օկուպացիոն զորքերի սպաներից մեկը, որը հեղափոխական գործիչների հետ զրույցների ընթացքում աշխատում էր շեշտել, որ իր կառավարությունը պատրաստ է անհրաժեշտության դեպքում լայն հովանավորություն ցույց տալ հեղափոխական շրջաններին։ Ի միջի այլոց, նրա այդ ագիտացիան ուղեկցվում էր Դիլմանի, Սալմաստի և մի շարք այլ շրջանների բնակչությանը Թուրքական անձնագրերի վաճառքով, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում էր 14 զրան[75]։ Ցսահմանափակվելով զուտ քաղաքական պրոպագանդայով, երիտԹուրքական գործակալությունը մարտանենգությամբ մեծ քանակությամբ զենք էր ներմուծում Իրանական Ադրբեջան և վաճառում տեղական բնակչությանը[76]։

Թուրքիան սկսեց ակտիվորեն միջամտել նաև Թեհրանում ծավալվող իրադարձություններին։ Մեծ աշխուժություն էր ցուցաբերում նաև Թուրքական դեսպանատունը[77], ապաստան տալով ոչ միայն հեղափոխականներին, այլև իշխանությունների կողմից հալածվող բրեական տարրերին և զանազան խառնակիչների։ Թուրքական գործերի հավատարմատար Սադրեդդին բեյը խրախուսում էր դեսպանատանը ապաստանած ռեակցիոներ Սադր-ուլ-Ուլմի կոչերը՝ ուղղված բռչվոր ցեղերի առաջնորդներին, որոնց նա հրավիրում էր զինված ջոկատներով շարժվել դեպի Թեհրան[78]։ Սադրեդդին բեյը միաժամանակ հեռագրեր էր ուղարկում Ստամբուլ, առաջարկելով զորքերը պատրաստ պահել Թեհրանի վրա արշավելու համար, եթե «դեսպանատունը կարիք ունենա պաշտպանության»[79]։

Թուրքական ինտերվենցիայի այս սպառնալիքները ըստ երևույթին այն ասպիճանի ռեալ էին, որ Իզվոլսկին ստիպված էր հեռագրել Ստամբուլ, որպեսզի ռուսական դեսպանը Բ. Դոան ուշա-

---

[75] АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 46.

[76] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 199, лл. 3—3 об; АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 58.

[77] Տե՛ս „White Book, Persia" (1909), № 2, p. 26.

[78] «Մշակ», 13 մարտի 1909 թ.։

[79] «Մշակ», 18 մարտի 1909 թ.։

գրությունը հրավիրի Թեհրանում թուրքական դեսպանատան գործնակերպի վրա, որը, ինչպես նշվում էր հեռագրում, «չի համապատասխանում օտտոմանյան կառավարության մեզ տրված այն հավաստիացումներին, որ նա չի խառնվելու Պարսկաստանի ներքին գործերին»։ Այնուհետև Իզվոլսկին կարգադրում էր Ստամբուլից պահանջել, որպեսզի թույլ չտան Սադրեդդին բեյին ագիտացիոն գործունեություն ծավալել Թեհրանի թուրքական դեսպանատանը բնստ նստած հեղափոխականների շրջանում[80]։

1909 թ. գարնանը երիտթուրքական կենտրոնական կոմիտեն որոշեց Իրանում տարվող իր քաղաքական աշխատանքներում լայնորեն օգտագործել նաև դաշնակցական կուսակցությանը։ Վերջինս 1908 թ. հոկտեմբերից, երբ Թավրիզում հեղափոխական շարժումն ապրում էր բուռն վերելք, որոշեց մասնակցություն ցուցաբերել իրանական հեղափոխությանը[81]։ Կովկասի ռազմական շրջանի հետախուզական բաժնի հաղորդագրությունում ասվում էր, որ 1909 թ. մարտի 5-ին «դաշնակների պարագլուխ Վռամյանը, Նաջի բեյը և իրանական հեղափոխական Սեյիդ բեյը հանդիպել են Վանում, որպեսզի քննարկեն իրանական գործողությունների ծրագիրը»[82]։ Այդ նույն հաղորդագրությունում նշվում էր, որ դաշնակցական կուսակցությունը միջոցներ է փնտրում օգնելու իրանական հեղափոխական շարժմանը, որովհետև նա ենթադրում է, որ եթե հեղափոխությունը Իրանում կրի անհաջողություն, ապա Թուրքիայում ռեակցիոն տարրերը կուժեղանան և թուրքական սահմանադրությունը կարող է տապալվել[83]։

Այսպիսով միամտորեն հավատալով երիտթուրքերին և իրենց քաղաքական կարճատեսության հետևանքով խորամուխ չլինելով Իրանում նրանց հետապնդած նպատակների մեջ, դաշնակցությու-

---

[80] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, оп. 470, д. 37, л. 4.

[81] *Триа,* Персидская революция и русский социал-демократический отряд ее. В кн.: *М. Павлович* и *С. Иранский,* Персия в борьбе за независимость, М., 1925, стр. 111. *տե՛ս նաև* АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, лл. 88—88 об.

[82] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, лл. 239—239 об.

[83] *Նույն տեղում, թ., 261։*

նը որոշեց Իրանում գործել իթթիհադի հետ համատեղ։ 1909 թ. մարտին խմբապետ Սմբատը և նաջի բեյը իրենց ջոկատներով ժամանեցին Սալմաստ[84]։ Այնուհետև նրանց հետևեցին մի շարք այլ ջոկատներ։

Բնութագրելով դաշնակցական կուսակցության նման բաղաքական դիծը, Անդրանիկը նշում է. «Կ. Պոլսեն հարձակումի ազդանշան մը տրվեցավ «ցարիզմի» դեմ։ Դաշնակցական թերթերը կպոռային «անկցի Ռուսաստան, կեցցե ազատ և հեղափոխական Թուրքիա»։ Այնուհետև նա շարունակում է. «Դաշնակցությունը փոխվեցավ հազար ուղղության։ Օր մը ռուսասեր էր, մյուս օր ռուսատյաց, օր մը թուրքերու թշնամին էր, մյուս օրը անոնց բարեկամ. օր մը անգլիասեր էր, մյուս օրը կպոռար «անկցի Անգլիա», օր մը Պարսկաստանի բարեկամն էր, մյուս օրը կկռվեր անոր դեմ»[85]։

Եթե Օսմանյան կայսրության համար խիստ անցանկալի էր միապետության կողմնակիցների շուտափույթ հաղթանակը Իրանում, որը անմիջապես կամրապնդեր Ռուսաստանի և Անգլիայի դիրքերը այդ երկրում և խոշընդոտ կհանդիսանար թուրքական միջամտությանը նրա ներքին գործերին և զավթումների բաղաբականության հետագա ընդլայնմանը, ապա նրա համար անցանկալի էր լինելու նաև հեղափոխության հաղթանակը Իրանում, որի հետևանքով Օսմանյան կայսրության առջև կստեղծվեր կուռ ու ամուր պատնեշ զավթումներ կատարելու ճանապարհին։

Հետևաբար երիտթուրքերը «պաշտպանում» էին հեղափոխական շարժումն Իրանում այնքանով, որքանով որ անհրաժեշտ էր պահպանել երկրի բաղաբական անկայուն վիճակը գործողությունների ազատություն ստանալու համար։

«Երիտթուրքերի տիրապետության շրջանում թուրքական ռեակցիան,—իրավացիորեն նկատում է Մ. Ս. Լազարևը,—հանդես էր գալիս հարևան Իրանում հեղափոխական շարժման դեմ ոչ միայն իր տածած թշնամանքի պատճառով դեպի դեմոկրատիան ընդհանրապես և Իրանում տեղի ունեցող իրադարձությունների հեղափո-

---

[84] «Մշակ», 2 ապրիլի 1909 թ.։

[85] Ժենեռալ Անդրանիկ, Հայկական առանձին հարվածող զորամասեր, Պոսթոն, 1921, էջ 228—229։

խականացնող ազդեցությունը չեզոքացնելու ձգտման պատճառով, այլև այն պատճառով, որ իրանական հեղափոխության հաջողության դեպքում Իրանական Քրդստանի նկատմամբ Թուրքական զավթողական պլանների իրականացումը կհանդիպեր ավելի մեծ դժվարությունների։ Թուրքական զավթիչների մոտ առանձնակի ատելություն էր առաջ բերում Իրանական Քրդստանում և Ադրբեջանում հեղափոխական էնջումենների գործունեությունը՝ այդ շրջաններում կարգ ու կանոն հաստատելու և ոտից գլուխ փտած շահական վարչության դեմ պայքարելու գործում[86]։

Իրենց «իրանական հեղափոխության դաշնակից» հորջորջոգ երիտթուրքերը ոչ միայն չէին ցանկանում նպաստել իրանական ժողովրդի ազատագրական շարժմանը, այլև աշխատում էին ձախողել ու ջախջախել այն։

1908 թ. վերջերին «Իթթիհադ վե Թերաքքի» կուսակցությունը Իրանում արդեն դիմել էր բացահայտ հակահեղափոխական ինտերվենցիայի, դրանով իսկ շարունակելով սուլթան Աբդուլ Համիդի ռեակցիոն քաղաքական դիծը։ Ռուսական հյուպատոսները տեղեկացնում էին, որ Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը ոչ միայն հակահեղափոխական պայքար է ծավալել «պարսկական ազատության մարտիկների» դեմ, այլև աշխատում է տեղայնացնել ֆիդայիների հեղափոխական գործունեությունը և թույլ չտալ նրա տարածումը մյուս, մասնավորապես Թուրքական զորքերի կողմից գրավված շրջաններում[87]։ Որ հակասահմանադրական տրամադրություններ ունեցող ռեակցիոներները և խաները, որոնք ակտիվորեն հանդես են գալիս հեղափոխության դեմ, Թուրքական զորքերին հրավիրում են իրենց շրջանները[88]։

1908 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ Ադրբեջանում ռեակցիոն խաները կատաղի պայքար էին մղում հեղափոխական էնջումենների դեմ, Թուրքական օկուպացիոն իշխանությունները ոչ միայն աջակցություն ցույց չէին տալիս էնջումեններին, այլև բացահայտորեն ռեակցիոներներին վերցնում էին իրենց հովանավորության

---

[86] *М. С. Лазарев*, նշվ. աշխ., էջ 182։

[87] АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, л. 136.

[88] АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 15—16.

տակ։ Նույնիսկ հեղափոխականների դեմ պայքարում ջախջախված ռեակցիոն բանդաների պարագլուխները ապաստան էին գտնում Խոյի Թուրքական գլխավոր հյուպատոսությունում[89]։ Խուսափելով վերջնական ջախջախումից, նրանք վերստին հնարավորություն էին ստանում զինվել և շարունակել պայքարը սահմանադրականների դեմ։ Ռուսական հյուպատոսների հաղորդագրություններում բերվում էին բազմաթիվ փաստեր նաև այն մասին, որ Թուրքական հյուպատոսները երաշխավորությամբ ազատում են հեղափոխականների կողմից ձերբակալված ռեակցիոն խաներին[90]։ Նրանք ընդունում էին Թուրքական հպատակություն, ձեռք բերում Թուրքական անձնագրեր, դրանով իսկ խուսափում պատժից և հնարավորություն ստանում շարունակելու զինված պայքարը հեղափոխության դեմ[91]։ Այսպես, օրինակ, Սաքքըզի ռեակցիոն խանները, որոնք Սեյֆ-էդ-Դին խանի գլխավորությամբ ջախջախել էին տեղի հեղափոխական էնջումենը և գաղանորեն դատաստան տեսել նրա անդամների հետ, անմիջապես Թուրքական իշխանություններին տվեցին դեհալեթ և խուսափեցին հատուցումից[92]։ Օկուպացիոն զորքերի հրամանատարությունը ակտիվորեն միջամտում էր հատկապես Սալմաստի շրջանում ծավալված հեղափոխական շարժմանը։ Օգտվելով այնտեղ բորբոքված պայքարից, Թուրքական զորքերը պատրաստվում էին լրիվ օկուպացնել այդ շրջանը։ 1908 թ. նոյեմբերի 20-ին Ստամբուլից ներքին գործերի մինիստրը հեռագրում էր Վանի վալիին. «Դուք պետք է ձեռնարկեք անհրաժեշտ միջոցառումներ և պատրաստեք բավարար քանակությամբ զորքեր, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանց ուղարկեք Սալմաստի կողմը»[93]։

1909 թ., երբ Արևմտյան Ադրբեջանում պայքարը հեղափոխականների և հակահեղափոխության միջև ընդունեց ավելի թեժ բնույթ, Թուրքական զորքերը բացահայտորեն սկսեցին հանդես գալ

---

89 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, лл. 113—114.

90 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 96.

91 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, л. 118.

92 «Объезд оккупированных...», стр. 36; *Дм. Беляев*, նշվ. աշխ., էջ 17։

93 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, лл. 219—219 об.

ռեակցիայի կողմում, միաժամանակ մասնակցելով հեղափոխական էնջումենների ջախջախման օպերացիաներին։ Այսպես, նրանք գրավեցին ջախջախեցին Խոյի հեղափոխական էնջումենի առաջնորդ Հայդար խան Ամու-օղլիի և Դիլմանի էնջումենի նախագահ Սայիդուլ-Մեմալիքի ջոկատները և ցրեցին տեղի էնջումենները։ Այնուհետև նրանք օկուպացրին Դիլմանը և հայտարարեցին, որ հեղափոխական էնջումենը լուծարքի է ենթարկվում, իսկ քաղաքի իշխանությունը անցնում է թուրքական նահանգապետին[94]։ Մայիս-հունիս ամիսներին հեղափոխական ֆիդայիների և ասկյարների միջև արյունահեղ բախումներ տեղի ունեցան Դիլմանի, Ուրմիայի և Սալմաստի շրջակայքում[95]։ Ընդ որում, թուրքական հրամանատարությունը լայն աջակցություն էր ցույց տալիս Ռահիմ խան Զելեբիանլուի բանդաներին հաշվեհարդար տեսնելու Ուրմիայի շրջանի ֆիդայիների հետ[96]։ Ավելին, էնջումենները ջախջախելու և հեղափոխական տրամադրություններ ունեցող տեղական բնակչությանը ահաբեկելու նպատակով թուրքական իշխանությունները ստիպեցին շեքքաք և մի շարք այլ քրդական ցեղերի, որոնք սարսափելի ավերածության ու կողոպուտի ենթարկեցին Խոյի և Սալմաստի շրջակա գյուղերն ու նրանց բնակիչներին[97]։ Ստամբուլի էմիսարները ներշնչում էին քրդական ցեղապետներին, որ եթե նրանք չընդունեն օսմանյան հպատակություն և չօժանդակեն «թուրքական» գործին, ապա անխուսափելիորեն կենթարկվեն հեղափոխականների հալածանքներին[98]։

Այս ագիտացիայի հետևանքով քրդական բնակչությունը մասսայաբար դեհալեթ էր տալիս թուրքերին[99], դրանով իսկ հնարավորություն տալով նրանց իրենց բնակավայրերը հայտարարելու «թուրքական տերիտորիա»[100]։

---

94 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 169.

95 Նույն տեղում, թթ. 158, 167—170; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, лл. 62—63.

96 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 121, 123—124.

97 Նույն տեղում, թ. 116։

98 Նույն տեղում, թ. 109։

99 Նույն տեղում, թթ. 123—124։

100 Նույն տեղում, թ. 110։

Բոլոր օկուպացիոն ջոկատների հրամանատարները Ստամբուլից հրաման էին ստացել սուննիթների պաշտպանության պատրվակի տակ Իրանական Ադրբեջանում և Քրդստանում գրավել նոր տերիտորիաներ, անկախ նրանից, դրանք բնակեցված են սուննիթներով, թե՞ շիիթներով։ Թուրքական սպաները հայտարարում էին, որ եթե կուսակցությունների փոխադարձ պայքարի հետևանքով սահմանամերձ տերիտորիաներում ստեղծվի անիշխանության վիճակ, ապա իրենք զորքեր կմտցնեն այդ շրջանները կարգ ու կանոնը վերականգնելու համար[101]։ Ավելի կոնկրետացնելով այս հայտարարությունները, նրանք ակնարկում էին իրանական իշխանություններին, որ «Ուրմիայում անկարգություններ ծագելու դեպքում հնարավոր է, որ այնտեղ մտցվեն թուրքական զորքեր»[102]։

Հարավային (Մուքրի) Քրդստանում օկուպացիոն զորքերը առանձնակի եռանդով աշխատում էին ջախջախել Սոուջբուլաղի էնջումենը, որը Ղազի Ֆաթթահի գլխավորությամբ համառ պայքար էր մղում թուրքերի դեմ։ Սոուջբուլաղի շրջակայքում ընդհուպ մինչև 1910 թ. գարնանը կատաղի մարտեր էին գնում ասկյարների և հեղափոխական ջոկատների միջև[103]։

Ստամբուլը մեծ ակտիվություն էր դրսևորում նաև Մակուի խանությունում ծավալված հեղափոխական շարժմանը միջամտելու գործում։ Ի վիճակի չլինելով սեփական ուժերով հաշվեհարդար տեսնել խանությունում ծայր առած հեղափոխական շարժման հետ, Մակուի սարդար Էղբալ-ուս-Սալթանեն հրավիրեց թուրքական զորքեր, որոնք տեղական ռեակցիոն բանդաների հետ ջախջախեցին ֆիդայիներին և կազմակերպեցին հեղափոխականներին համակրող տեղական բնակչության զարհուրելի կոտորած[104]։

Թուրքական հրամանատարությունը գործուն աջակցություն էր ցույց տալիս նաև ռեակցիոն այն տարրերին, որոնք հեղափոխական

---

101 АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, лл. 138—139.

102 Նույն տեղում։

103 «Тифлисский листок», 1910, 21 мая.

104 دکتر مهدی ملکزاده Նշվ. աշխ., հ. 3, էջ 32. ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, лл. 105—106.

էնջումենների դեմ պայքարելու նպատակով ստեղծում էին իրենց հետադիմական կրոնական տիպի էնջումենները[105]։

Հարավային Ադրբեջանը իրանական պետության կազմից անջատելու և Թուրքիային միացնելու միտումով երիտթուրքական գործակալությունը պրովոկացիոն ագիտացիա էր մղում, թե իբր Թեհրանի սահմանադրական կառավարությունը որոշել է բնաջնջման քաղաքականություն վարել ադրբեջանցիների և առհասարակ Իրանի թուրքալեզու ժողովուրդների նկատմամբ։ Թուրքական պատմաբան Ռեշիդ Սաֆֆեթը ուղղակի գրում է, որ 1908 թ.-ից սկսած «Իրանի սահմանադրությունը բացահայտորեն պայքարել է այս հսկա զանգվածի դեմ»[106]։ «Այն ուժերը,—շարունակում է նա,— որոնք 1906 թ.-ից մինչև 1913 թ. կառավարության կողմից զինվել և ուղարկվել էին Ադրբեջանի ժողովրդի դեմ, բաղկացած էին բախտիարներից և Եփրեմ խանի հայերից։ Թնդանոթներով և գնդացիրներով զինված այս ուժերը երևակայական ապստամբությունները ճնշելու պատրվակի տակ կործանել են Ադրբեջանը, հրդեհել հարյուրավոր գյուղեր, կոտորել կին և երեխա, հազարավոր թուրքեր, նենգորեն պաշարել ու սպանել հազարավոր երիտասարդների, որոնք գտնվում էին համարյա անզեն վիճակում։ Ես ինքս ականատես եմ եղել այս ոճրագործություններին։ Թրքության ամենամեծ սպանդանոցներից մեկը և իրանական սահմանադրության գոհը եղել է թշվառ Իրանական Ադրբեջանը»[107]։ Այնուհետև նա նշում է, որ Իրանական Ադրբեջանի բնակչության արթնացող ազգային ինքնագիտակցությունը մթագնելու համար «իրանցիները ուրիշ ելք չգտան, բայց եթե «կոտորածի միջոցով բնաջնջել Իրանի թուրք տարրին՝ ադրբեջանցիներին, կաշկայցիներին և այլն»[108]։

Երիտթուրքական կառավարության նման պրոպագանդան հետապնդում էր նաև Իրանի թուրքալեզու ժողովուրդներին հեղափոխության դեմ ոտքի հանելու և իրանական ժողովուրդներին պառակտելու ու միմյանց հետ գժտեցնելու նպատակը։

---

105 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 15—16.

106 *Reşit Saffet*, Türklük ve Türkçülük izleri, I inci Kitap, Ankara 1930, s. 161.

107 Նույն տեղում, էջ 162—163։

108 Նույն տեղում, էջ 164—165։

Իրանի հեղափոխական շարժման մեծ թվով գործիչների համար միանգամայն պարզ էր, որ քողարկվելով հեղափոխական լոզունգներով երիթուրքական կառավարությունը իրագործում է հակահեղափոխական ինտերվենցիա և երկրի քաղաքական ճգնաժամը աշխատում է օգտագործել իր նվաճողական նպատակների իրագործման համար։ Այդ պատճառով թուրքական ինտերվենցիայի դեմ զինված պայքար մղելու հետ միաժամանակ նրանք առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր էին համարում շարքային հեղափոխականներին և բնակչության լայն զանգվածներին պարզաբանել թուրքական քաղաքականության բուն էությունը[109]։ Սահմանադրական ուղղության մի շարք թերթեր (օրինակ Խոյում հրատարակվող «Մուրաֆաթ» («Հատուցում») թերթը և այլն) սիստեմատիկորեն հրապարակում էին հակաթուրքական ոգով գրված հոդվածներ։ Շատ հաճախ անկարող լինելով դիմադրավել թուրքերին, հեղափոխական էնջումենները դիմում էին ռուսական իշխանություններին, խնդրելով կասեցնել իրանական տերիտորիայում օտարերկրյա զավթիչների ոտնձգությունները[110]։

Հատկանշական է, որ կռահելով թուրքական կառավարության գաղտնի մտադրությունները Իրանում, Ստամբուլում գտնվող իրանական հեղափոխականները ևս ստիպված էին սկսում էին հեռանալ երիթուրքերից և հրաժարվում էին համագործակցել նրանց հետ։ Այսպես, երբ Դիլմանից դեհալեթ ուղարկեցին Ստամբուլի իրանական էնջումենի հասցեով այն Բ. Դռանը հանձնելու համար, էնջումենը հրաժարվեց այն հանձնել, դիլմանցիների արարքը դնահատելով որպես «ոչ հայրենասիրական գործ»[111]։

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «երիթուրքական կառավարության զորքերը օկուպացված շրջաններում ջախջախեցին ամեն մի հեղափոխական շարժում»[112]։ Երիթուրքական կառավարությունը, ինչպես և Անգլիայի և ցարական Ռուսաստանի իմպերիալիստական շրջանները նույնպես թշնամաբար էին վերաբերվում

---

109 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 103—104.

110 Նույն տեղում, թ. 75։

111 Նույն տեղում, թթ. 2—3։

112 «История дипломатии», т. II, стр. 693.

Իրանում դեմոկրատական, հակաֆեոդալական շարժմանը։ Իսկ Թուրքիան աշխատում էր օգտվել նաև հակաիմպերիալիստական շարժումից՝ գործի դնելով պանիսլամիզմի լոզունգները։ Ցարիզմն ու բրիտանական իմպերիալիզմը, որոնք սպասում էին հարմար մոմենտի իրանական հեղափոխությունը զենքի օգնությամբ ջախջախելու համար, բացարձակապես ոչ մի արգելք չհարուցեցին Թուրքիայի կողմից իրականացվող հակահեղափոխական ինտերվենցիայի դեմ։ Նրանց այդ պասսիվությունը անշուշտ վկայում էր այն մասին, որ այս երեք պետությունների միջև գոյություն ուներ ներքին համաձայնություն համատեղ ուժերով խեղդելու հեղափոխական շարժումն Իրանում։

* * *

Ինչպես հայտնի է, 1909 թ. ապրիլին ահաբեկվելով Իրանում ծավալվող հեղափոխական իրադարձությունների հուժկու թափից, ցարական Ռուսաստանն ու Անգլիան որոշեցին դիմել հակահեղափոխական զինված ինտերվենցիայի։

Անգլիական իմպերիալիստները, որոնք արդեն հասցրել էին Իրանի հարավում խեղդել հեղափոխական շարժումը, աշխատում էին Իրանական Ադրբեջանում այն ջախջախել ցարիզմի օգնությամբ։ Այդ պատճառով բրիտանական կառավարությունը ճնշում էր գործադրում Պետերբուրգի վրա, պահանջելով արագացնել զորքերի ուղարկումը Թավրիզ[113]։

1909 թ. ապրիլի 12/25 ցարական օկուպացիոն զորքերը գեներալ Սնարսկու գլխավորությամբ Ջուլֆայում անցան սահմանը և շուտով մոտեցան Թավրիզին[114]։ Ռուսական կաղակների մուտքը Թավրիզ վերջ տվեց ապստամբությանը։

Այսպիսով ռուսական ցարիզմը անգլիական իմպերիալիստների հետ համագործակցված դիմեց հակահեղափոխական ինտերվենցիայի՝ նպատակ ունենալով ջախջախել Թավրիզի ապստամբությունը և առհասարակ հեղափոխական շարժումն Ադրբեջանում,

---

[113] *М. С. Иванов,* Иранская революция 1905—1911 гг., стр. 365.

[114] «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии, вып. II, стр. 140, 153, 155.

փրկել Մոհամմեդ Ալի շահի և ռեակցիոն ֆեոդալական դաջարական կլիկի իշխանությունը։ Ռուսական զորքերի ուղարկումը Թավրիզ նպատակ ուներ նաև խափանել Ադրբեջանի զավթման թուրքերմանական պլանների իրագործումը և թույլ չտալ, որ Գերմանիան և Թուրքիան մոտ ապագայում այդ նահանգն օգտագործեն որպես ռազմական հենակետ Անդրկովկասի վրա հարձակվելու համար[115]։

Այս իրադարձությունները, որոնք տեղի ունեցան գլխապտույտ արագությամբ, ցնցող տպավորություն գործեցին Գերմանիայի և Թուրքիայի վրա։ Երկու պետությունների կառավարությունները անմիջապես հասկացան, որ Ռուսաստանը և Անգլիան Իրանում պատնեշ են ստեղծում իրենց առջև։ Թուրքական կառավարող շրջաններում ռուսական զորքերի մուտքը Թավրիզ մեկնաբանվեց որպես առաջին հերթին Թուրքիայի դեմ ուղղված միջոցառում։ Բ. Դուռը դգաստ կերպով գնահատեց այն սպառնալիքը, որ ստեղծվում էր Իրանում իր ագրեսիվ ծրագրերի ծավալման ճանապարհին։ Որոշվեց դիմել ակտիվ քայլերի։ Առաջինը գրոհի նետվեց Գերմանիան։ Օգտվելով Ադրբեջանի բնակչության հակառուսական տրամադրությունների ուժեղացումից, նա ծավալեց բուռն ագիտացիա այն մասին, որ ցարիզմը ցանկանում է աննեքսիայի ենթարկել Ադրբեջանը և միացնել Ռուսաստանին[116]։ Բեռլինում անմիջապես կազմակերպվեց այսպես կոչված «Պարսիկ ժողովրդի շահերի պաշտպանության կոմիտե», որը հայտարարեց, թե Իրանի գրավումը որևէ մեկի կողմից անխուսափելիորեն կհարուցի միջազգային կոնֆլիկտ»[117]։ Գերմանական մամուլը կատաղի կամպանիա ծավալեց Իրանում անգլո-ռուսական բաղաքականության դեմ, միաժամանակ հորդորելով Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը ավելի եռանդուն բաղաքականություն վարել Իրանում, շեշտելով, որ Գերմանիան չափազանց շահագրգռված է այդ երկրի ճակատագրով[118]։

---

115 *М. С. Иванов*, Иранская революция 1905—1911 гг., стр. 370.

116 *Տե՛ս Միլլերի 1909 թ. ապրիլի 26-ի թվակիր հեռագիրը. А. К. Фукс, նշվ. աշխ., էջ 126։*

117 «Тифлисский листок», 1909, 17 июня.

118 «Тифлисский листок», 1910, 12 октября.

Թուրքական և գերմանական կառավարությունները որոշեցին մշակել համատեղ գործողությունների ծրագիր։ Այդ նպատակով 1909 թ. մայիսի 30-ին Բ. Դուռը դիմեց Բեռլինի կաբինետին, առաջարկելով հանձնարարել Թեհրանում իր ներկայացուցչին թուրքական գործերի հավատարմատարի հետ քննարկել Իրանում ստեղծված դրությունը պարզելու համար, թե ապագայում երկու կառավարությունները ինչպիսի քաղաքական գիծ են անցկացնելու այդ երկրում։ Մի քանի օր անց Բեռլինում թուրքական դեսպան Օսման Նիզամի փաշան արդեն հաղորդում էր Բ. Դռանը, որ հեռագրով Թեհրանում գերմանական ներկայացուցչին են հաղորդվել իր ցանկությանը համապատասխան հրահանգներ[119]։

Թեև մեզ չհաջողվեց ձեռք բերել այդ հանդիպման արդյունքների մասին վկայող որևէ փաստաթուղթ, բայց կասկածից վեր է, որ որոշվելու էր ավելի ուժեղացնել թուրք-գերմանական համագործակցությունը Իրանում անգլո-ռուսական դիրքերի վրա գրոհելու համար։ Դրա փայլուն վկայությունն է հանդիսանում Թուրքիայի և Գերմանիայի հետագա գործողությունները Իրանում։

Նախ այս երկու պետությունները կոոպերացնելով իրենց գործողությունները աշխատում էին օգտագործել Թավրիզի հեղափոխականների հակառուսական տրամադրությունները Ադրբեջանում Ռուսաստանի դեմ շարժում հրահրելու համար։ Թավրիզում թուրքական գլխավոր հյուպատոսը իր գերմանական կոլեգայի՝ Շյունեմանի հետ բորբոքում էր տեղական բնակչությանը ռուսների դեմ, հայտարարելով, որ նրանք զավթողական նպատակներ են հետապնդում Ադրբեջանում, աշխատելով փոխհատուցում ստանալ Բոսնիայի և Հերցոգովինայի համար[120]։ Երիտթուրքական գործակալությունը Թավրիզում ագիտացիա էր մղում, որ «իրենք իրենց հայրենիքը դուրս են բերել ազատության ուղի առանց օտար միջամտության», խորհուրդ տալով նույն կերպ վարվել նաև Թավրիզում[121]։

---

119 АВПР, ф. «Канцелярия МИД», 1908, д. 39, л. 98; ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 7696, л. 182.

120 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 924, лл. 113—114, 263.

121 Նույն տեղում, թթ. 263—265։

Գերմանացիները և թուրքերը Ատրպատականում խաղում էին մեկ «Արևելքին ցույց տրվող գերմանական ավանդական հովանավորության», մեկ «մահմեդական միասնության» պանիսլամիստական գաղափարների վրա, որոնց ընդհանուր քաղաքական իմաստն այն էր, որ անհրաժեշտ է միավորվել և պայքարել ռուսների ու անգլիացիների դեմ։ Երիտթուրքական ագիտատորները ամենուրեք կոչ էին անում շիիթներին և սուննիթներին հիշել, որ նրանք «հավատի եղբայրներ են, որ այսուհետև միշտ պետք է գործեն համատեղ, որովհետև ողջ մահմեդական աշխարհը պայքարում է ազատության համար, հետևաբար պետք է համաթակ դուրս գալ իսլամի և մահմեդականների բոլոր այն թշնամիների դեմ, որոնք կկանգնեն իրենց ճանապարհին»[122]։

1909 թ. երիտթուրքական կառավարությունը առաջ քաշեց նաև, այսպես կոչված, միջազգային մահմեդական պառլամենտ ստեղծելու նախագիծը, որի տակ դարձյալ թաքնված էր Թուրքիայի գերիշխանության տակ մահմեդականներին միավորելու նպատակը։ «Հավատի միասնության» այդ կոչերը լայն արձագանք էին գտնում նաև իրանական պանիսլամիստների շրջանում։ Մայրաքաղաքի և նահանգական քաղաքների մի շարք թերթերում սկսեցին տպագրվել մեծ քանակությամբ հոդվածներ երկու հարևան երկրների մահմեդական ժողովուրդների միավորման հնարավորության մասին։ Ընդ որում, Թուրքիայի հետ կապված «Մոզաֆֆերի» ամսագրի խմբագիր, իրանական պանիսլամիստական շրջաններում հայտնի գործիչ Միրզա-աղա-Շիրազին առաջ էր քաշում Մեքքայում միջազգային մահմեդական պառլամենտի հիմնադրման մի առաջարկ, որը ըստ նրա միավորելու էր Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր մահմեդականներին[123]։

Երիտթուրքական ագիտատորները աշխատում էին ցույց տալ, որ իրանական գործերը ընդհանրապես, և Ռուսաստանի կողմից Ադրբեջանի օկուպացիան մասնավորապես, ունեն համամուսուլմանական նշանակություն[124]։ Թուրքիան և Գերմանիան ճարպկորեն

---

[122] АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 170.

[123] «Проект интернационального мусульманского парламента» («ИШКВО», № 25, Тифлис, 1909, стр. 92).

[124] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 35, л. 251.

օգտագործում էին նաև Քարբալայի և Նաջաֆի իրանական մուշտեհիդների հակառուսական տրամադրությունները, մինչև իսկ հորդորելով նրանց ռուսների դեմ հայտարարել «սրբազան պատերազմ» (ջիհադ) սկզբում Կովկասում և ապա Իրանում[125]։ Զարիքովը Ստամբուլից հաղորդում էր, որ իր տեղեկությունների համաձայն Քարբալայում և Նաջաֆում ակտիվ հակառուսական գործունեության էին լծվել այնպիսի ազդեցիկ շիիթական մուշտեհիդներ, ինչպիսիք են Քյազիմ-Խորասանին, Աբդուլլա-Մազանդերանին և Շարիաթ-Խորասանին, որոնց կողմից Ռուսաստանի դեմ ուղղված ջիհադի կոչերը լայնորեն տարածվում են թուրքական ուլեմաների կողմից[126]։ Երիտթուրքերը մեծ բանակությամբ էմիսարներ սկսեցին ուղարկել նաև Կովկաս՝ տեղի մահմեդական բնակչության շրջանում ապրստամբություն հրահրելու համար[127]։

Թուրքական կառավարությունը աշխատում էր ռուսների դեմ պայքարի հանել ոչ միայն իրանական հեղափոխականներին և առհասարակ բոլոր հայրենասերներին, այլ պանիսլամիստներին, ֆանատիկ տրամադրություններ ունեցող կույր ու խավար ամբոխին։ Փորձ կատարվեց այդ նպատակի համար ներգրավել նույնիսկ իրենց՝ Իրանի շահնշահին և նրա կառավարությանը։ Թեհրանում թուրքական գործերի հավատարմատար Սադրեդդին-բեյը այդ իմաստով հատուկ նոտա ներկայացրեց շահական արտաքին գործերի մինիստրին՝ «մահմեդական միասնության և հարևանության մասին», որտեղ քննադատվում էր նաև ցարական գեներալ Սնարսկու գործելակերպը Իրանում[128]։

Իրանական բանակի ռազմական մարտունակությունը բարձրացնելու անվան տակ Թեհրանում գերմանական գործերի հավատարմատար կոմս Կվադտը աշխատում էր համոզել շահին, որ նա հրավիրի գերմանացի ռազմական խորհրդականներ, որոնք ըստ նրա «ավելի էժան կնստեն պարսկական կառավարության վրա, բան չափազանց թանկ արժեցող լյախովները և խաբաները»[129]։

---

125 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, лл. 21—23 об.

126 ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 7696, л. 207.

127 АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 35, л. 253 об.

128 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 924, лл. 114 об, 266.

129 Նույն տեղում, թ. 268։

Սաբլինը հաղորդում էր, որ «պատրաստվում են Թեհրան ժամանել մի քանի գերմանական հրահանգիչներ, այդ թվում նաև թուրքական բանակի նախկին գերմանական հրահանգիչներ, որոնք այժմ մեկնում են Ստամբուլից»[130]։ Այս կապակցությամբ Թեհրանում ռուսական դեսպանորդը նախազգուշացնում էր Իզվոլսկուն, որ «անհրաժեշտ է լրջորեն հաշվի նստել գերմանա-թուրքական դավերի հետ»[131]։

Թուրք-գերմանական գործակալությունը սկսեց ամենուրեք լուրեր տարածել, որ չհանդուրժելով Ադրբեջանի օկուպացումը ռուսների կողմից, թուրքական կառավարությունը մտադիր է դիմել վճռական գործողությունների։ Խոյում թուրքական հյուպատոս Հյուսեին Խամի բեյը ամեն առիթով հայտարարում էր, որ եթե ռուսները շուտափույթ իրենց զորքերը դուրս չբերեն Ադրբեջանից, իր կառավարությունը սահմանամերձ շրջանները կուղարկի մի ամբողջ բանակ[132]։ Իսկ Վանի զորամասերի սպաների մեջ խոսակցություն էր գնում այն մասին, որ եթե Ռուսաստանը փորձի գրավել Ադրբեջանը, ապա նա գործ կունենա Թուրքիայի հետ[133]։

Երիտթուրքական կառավարությանը լուրջ մտահոգություն էին պատճառում այն կասկածները, որ Ռուսաստանը պատրաստվում է անեքսիայի ենթարկել Իրանական Ադրբեջանը և այն միացնել Կովկասյան Ադրբեջանի հետ։ Այդ պատճառով 1909 թ. ամռանը Թուրքիան կրկին ակտիվորեն սկսեց պրոպագանդել Իրանական Ադրբեջանի ինքնավարության գաղափարը, շեշտը դնելով գլխավորապես այն բանի վրա, որ տեղի ժողովուրդները ծագումով թուրքեր են և պետք է լինեն Թուրքիայի հետ։ Այդ քարոզը, որն ուղեկցվում էր հեղափոխական լոզունգներով, մեծ արձագանք էր գտնում նահանգում։ Ավելին, Ադրբեջանի հեղափոխական գործիչների մի մասը ռուսական զորքերի կողմից նահանգի օկուպացումը համարելով «հեղափոխության վախճան» և ընկնելով հուսահատության գիրկը ենթադրում էր, որ Ռուսաստանին երկրամասից դուրս

---

130 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 26 об.—27.

131 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 924, л. 265.

132 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 148.

133 ЦГВИА, ф. 2000, д. 1002, л. 229.

քշելու համար գոյություն ունի միայն մեկ ելք, այն է հենվել Իրանական Ադրբեջանում նրա հակառակորդների և մրցակիցների՝ այսինքն Թուրքիայի և Գերմանիայի վրա։ Առաջնորդվելով նշված տեսակետներով, Ադրբեջանի նահանգական էնջումենը 1909 թ. ամռանը առաջարկեց մի նախագիծ, ըստ որի Ադրբեջանը պետք է վերածվեր Իրանի «արտոնյալ նահանգի» երիտթուրքական կառավարության հովանավորության ներքո[134]։ Մի շարք քաղաքականապես կարևոր հեղափոխականներ նույնիսկ հույս ունեին, որ Թուրքիայի օգնությամբ իրանական ժողովրդին կհաջողվի ոչ միայն երկրում սահմանել սահմանադրական կարգեր, այլև ապագայում Իրանին վերադարձնել Անդրկովկասի այն տերիտորիաները, որոնք նախկինում պատկանել են նրան[135]։

Թուրքական կառավարությունը բացահայտ հասկացնում էր Անգլիային և Ռուսաստանին, որ Իրանում ինքը պահանջում է նրանց հետ «հավասար իրավունքներ»։ Այլ կերպ ասած, հարց էր դրվում Իրանի բաժանման գործում մասնակից դարձնել նաև Թուրքիային։ Այս իսկ տեսակետից հատկանշական է Թավրիզում թուրքական գլխավոր հյուպատոս Մեհմեդ Ալի բեյի հայտարարությունը «Русское слово» թերթի թղթակցին։ Նրա կարծիքով Սաթթար խանի բեստը Թավրիզի թուրքական հյուպատոսությունում (ռուսական զորքերի մուտք գործելուց հետո Թավրիզ—Վ. Բ.) ապացուցում է, թե «ինչպիսի քաղաքական սխալ է թույլ տրվել Ռուսաստանի և Անգլիայի կողմից, Թուրքիային չներգրավելով Պարսկաստանի մասին իրենց համաձայնագրի մեջ»[136]։

Մեկնաբանելով Մեհմեդ Ալի բեյի հայտարարությունը, Թեհրանում ռուսական դեսպանորդ Սաբլինը գրում էր Իզվոլսկուն. «Երեք տարի առաջ գերմանացիները քաղաքական սխալ էին համարում իրենց չընդգրկելը Մարոկկոյի վերաբերյալ Անգլիայի և Ֆրանսիայի համաձայնության մեջ։ Այդ պատճառով ես սխալված չեմ լինի, եթե ենթադրեմ, որ թուրքական գլխավոր հյուպատոսի կող-

---

134 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 540, л. 53.

135 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 26—27.

136 АВПР, ф. «Персидский стол», д. 924, л. 266.

մից մեր թղթակցին արած հայտարարության վրա ինչ-որ աննկատելի տեղում գրված է «Made in Germany» գրությունը»[137]։

Այդ կապակցությամբ Զինովևին ուղղված իր 1909 թ. հունիսի 11-ի հեռագրում Իզվոլսկին գրում էր, որ կառավարությունը լրջորեն անհանգստացած է Թավրիզի դեպքերով և գտնում է, որ «անհրաժեշտ է վերջ տալ թուրքական դիվանագիտության այդօրինակ գործունեությանը»։ Մինիստրը խնդրում էր դեսպանից եռանդուն առաջադրություն կատարել Բ. Դրան առջև[138]։ Իսկ մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը Կովկասի փոխարքային ուղղված 1909 թ. մայիսի 26-ի գաղտնագրված հեռագրում հայտնում էր, որ Թավրիզում թուրքական հյուպատոսական ներկայացուցչի ակտիվ ելույթը պատճառ է հանդիսացել հրավիրելու մինիստրների խորհրդի արտակարգ խորհրդակցություն, որտեղ որոշվել է, որ Թուրքիայի ակտիվ գործունեությունը Ադրբեջանում միանգամայն անցանկալի ու վտանգավոր է Ռուսաստանի համար։ Հեռագրում այնուհետև Ստոլիպինը ցուցում էր տալիս Վորոնցով-Դաշկովին, որ անհրաժեշտ է խափանել թուրքական ներկայացուցչի կապը Թավրիզի հեղափոխության առաջնորդներ Սաթթար խանի և Բաղիր խանի հետ, մանավանդ թույլ չտալ, որ նրանք բեստ նստեն թուրքական հյուպատոսությունում[139]։

Ստամբուլում Զինովևը անմիջապես դեմարշ կատարեց Բ. Դրան առջև։ Մեծ վեզիրի և արտաքին գործերի մինիստրի հետ բացատրվելու ժամանակ նա կտրուկ պահանջեց, որ թուրքական կառավարությունը վերջ տա ինչպես Թավրիզի իր գլխավոր հյուպա-

---

137 Նույն տեղում, թթ. 267—268։

138 АВПР, ф. «Канцелярия МИД», 1909 г., д. 37, лл. 18—19.

139 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 198, л. 16. (Վախենալով ռուսների կողմից ձերբակալումից, Սաթթար խանը և Բաղիր խանը դիմեցին անգլիական հյուպատոսությանը, խնդրելով ապաստան։ Սակայն անգլիական հյուպատոսության դռները փակվեցին նրանց առջև։ Դրանից հետո միայն, մայիսի 16(29)-ին նրանք բեստ նստեցին թուրքական հյուպատոսությունում, որտեղից սակայն շատ շուտով դուրս եկան, զգալով, որ Թուրքիան աշխատում է իրենց ներկայությունը հյուպատոսությունում ծառայեցնել իր քաղաքական շահերի օգտին։ Տե՛ս ЦГВИА, ф. 2000 с. оп. 1, д. 7696, л. 178; „The Times" 1909 թ., 30 մայիսի)։

տոսի, այնպես էլ Թեհրանում Թուրքական գործերի հավատարմատարի «այդօրինակ գործելակերպին»։

Թուրքական ղեկավարները, ինչպես միշտ, այս անգամ ևս գերադասեցին ճակատամարտ չտալ Ռուսաստանի դիվանագիտական ելույթին և ձևացրին, թե իրենք ոչ մի տեղեկություն չունեն Իրանում տեղի ունեցող այդ «դեպքերի» մասին։ Ռիֆաաթ փաշան հանդիսատացրեց Զինովևին, որ արդեն մի քանի օր առաջ կարգադրված է գլխավոր հյուպատոսին «ճշտակատարությամբ ձեռնպահ մնալ պարսկական խռովություններին միջամտելուց»։ Դրան նա ավելացրեց, որ շուտով Թավրիզի գլխավոր հյուպատոսը կփոխարինվի ուրիշ անձով։ Սակայն զրույցի ընթացքում, այնուամենայնիվ, Ռիֆաաթ փաշան խայթելով նշեց, որ իրեն բնավ հայտնի չէր, որ ռուսական հյուպատակները քաղաքական ապաստան են փնտրում Թավրիզի Թուրքական հյուպատոսությունում[140]։ Դրանով իսկ նա անշուշտ ցանկանում էր շեշտել, որ Թուրքիայի հեղինակության մեծացումը Իրանական Ադրբեջանում հետևանք է Ռուսաստանի «գործելակերպի»։

Շուտով Ռուսաստանի քաղաքական շրջաններում հայտնի դարձավ, որ երիտթուրքական կոմիտեն որոշել է Ստամբուլ հրավիրել Թավրիզի հեղափոխության առաջնորդներին, նրանց միջոցով Իրանական Ադրբեջանում հակառուսական շարժումն ուժեղացնելու նպատակով։ 1909 թ. հուլիսին Թավրիզ ժամանեց Բաթումում Թուրքական փոխ-հյուպատոս Ռեմզի բեյը, որին հանձնարարված էր համոզել զեթ Սաթթար խանին մեկնել Ստամբուլ[141]։ Պարսկական կառավարությունը, որին միանգամայն ձեռնտու էր Սաթթարի մեկուզ և ժամանակավոր հեռացումը Ադրբեջանից, արգելքներ չհարուցեց Թուրքիայի վերոհիշյալ նպատակի դեմ։ Այդ առթիվ Իզվոլսկին հեռագրում էր Վորոնցով-Դաշկովին, որ շուտով Կովկասի վրայով Թուրքիա է մեկնելու Թավրիզում գլխավոր հյուպատոս Մեհմեդ Ալի բեյը։ Նրա հետ պատրաստվում են մեկնել նաև Ադրբեջանի հեղափոխական առաջնորդներ Սաթթարն ու Բաղիրը, որոնց առջև չպետք է հարուցել որևէ արգելքներ[142]։

---

140 ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 7696, л. 193.

141 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 540, л. 78.

142 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, л. 88.

Սակայն Ստամբուլի համար միանգամայն անսպասելի պարզվեց, որ Սաթթար խանը և Բաղիր խանը կտրուկ հրաժարվում են մեկնել Թուրքիա։ Թեև Թեհրանում գերմանական և իտալական դեսպանությունների ներկայացուցիչները ևս փորձեցին համոզել նրանց, որ իրանական հեղափոխության շահերը պահանջում են համագործակցել երիտթուրքերի հետ[143], սակայն այդ փորձերը ևս ձախողվեցին։

Ինչպես երևում է, Թավրիզի թուրքական հյուպատոսությունում հեղափոխականների բնաջնջումը այն խարուսիկ պատրանքն էր ստեղծել թուրքական դիվանագետների մոտ, որ այսուհետև այլ ելք չունենալով, հեղափոխության առաջնորդները ապավինելու են իրենց։ Մինչդեռ Սաթթար խանը, Բաղիր խանը և նրանց զինակիցները թուրքական հյուպատոսությունից ապաստան խնդրեցին միայն այն պատճառով, որպեսզի հնարավորություն ունենան շարունակել հեղափոխական ագիտացիան ցարիզմի կողմից Ադրբեջանի օկուպացման դեմ, մանավանդ որ թուրքական հյուպատոսությունը դրա համար պատրաստ էր ստեղծելու բոլոր հնարավորությունները։ Հետևաբար միանգամայն ակնհայտ դարձավ, որ հեղափոխությանը անձնվիրորեն նվիրված մարտիկները չեն ցանկանում գործիք դառնալ երիտթուրքական կառավարությանը։

Թավրիզում իր դիվանագիտության ձախողումից հետո Ստամբուլը որոշեց ակտիվացնել զավթումների քաղաքականության գիծը Հյուսիսարևմտյան Իրանում։ Թուրքական մամուլը հասկացնում էր Ռուսաստանին, որ Բ. Դուռը որոշել է իր զորքերը դուրս չբերել իրանական տերիտորիայից, մինչև որ վերջին ռուսական զինվորը չհեռանա այնտեղից։ Ադրբեջանում ռուսական աճող ակտիվությանը դիմադրավելու և Ռուսաստանի համար թուրքական սպառնալիքը ուժեղացնելու նպատակով գերմանական դիվանագիտությունը իր հերթին հնչում էր գործադրում թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս զորքերի նոր համալրումներ ուղարկի Իրան և կրկնապատկի Կովկասի դեմ կանգնած չորրորդ կորպուսի կազմը։ Այդ առթիվ 1909 թ. մայիսի 15-ի № 89 դաշնի հաղորդագրության մեջ Ջինովևը գրում էր. «...գերմանական կառա-

---

[143] «Тифлисский листок», 1910, 5 августа.

վարությունը արդեն քանիցս Բ. Դռան ուշադրությունը հրավիրում է Թուրքական 4-րդ կորպուսում բարեփոխություններ կատարելու անհրաժեշտության վրա՝ այն կրկնապատկելու իմաստով։ Ինչպես երևում է Բեռլինում Թուրքական դեսպանի մայիսի 12-ի իմ ձեռք բերած գաղտնի հեռագրից, գերմանական արտաքին գործերի պետական քարտուղարը Օսման Նիզամի փաշայից ցանկացել է իմանալ, թե Թուրքական կառավարությունը մտադի՞ր է արդյոք հետևել Գերմանիայի խորհուրդներին։ Թուրքական դեսպանին հանձնարարված է եղել հաղորդել Բեռլինի կաբինետին, որ օսմանյան կառավարությունը չի հապաղի զբաղվել հիշյալ հարցի քննարկմամբ, և, որ ընդհատված բանակցությունները կվերսկսվեն, հենց որ Թուրքական դեսպանության մայոր էնվեր բեյը, որը ներկայումս գտնվում է Կ. Պոլսում, վերադառնա Բեռլին»[144]։

1909 թ. հունիսի 3-ի թվակիր գաղտնի հեռագրով Զինովևը հաղորդում էր այդ բանակցությունների արդյունքների մասին։ Նա հայտնում էր, որ Բեռլինում Թուրքական դեսպան Օսման Նիզամի փաշան մայիսի 27-ի հեռագրով տեղեկացրել է Բ. Դռանը, որ գերմանական արտաքին գործերի պետական քարտուղար ֆոն Շյոնը արել է հետևյալ հայտարարությունը. «Թուրքական զորքերը, որոնք ուղարկվել են Ուրմիա այնտեղ կարգը պահպանելու և, իմիջիայլոց, գերմանական հպատակների անվտանգությունը ապահովելու համար, չափազանց քիչ են։ Պարսկական բնակչությունը, որ ծայրահեղ վրդովված է Պարսկաստանի տերիտորիան ռուսական ջոկատի մուտք գործելու պատճառով, համառորեն պահանջում է Ուրմիայի շրջանը գրավել Թուրքական զումարտակների ավելի նշանակալից թվով և, որ գերմանական կառավարությունը նախկինի պես խորհուրդ է տալիս Բ. Դռանը անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ»։ Զինովևը նշում էր, որ Թուրքական դեսպանին արդեն հանձնարարված է հայտարարել ֆոն Շյոնին, որ կառավարությունը առաջարկել է ռազմական մինիստրին մոտակա վայրերից Ուրմիա ուղարկել Թուրքական ևս երկու լրացուցիչ զումարտակ[145]։

---

[144] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 187, л. 35.

[145] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 39, л. 98; ЦГВИА, ф. 2000 с., оп. 1, д. 7696, лл. 182—183.

Միաժամանակ Բեռլինը հանձնարարեց Պետերբուրգում իր դեսպանին նույն քաղաքում Թուրքական դիվանագիտական ներկայացուցչի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ Հյուսիսային Իրանի օկուպացիան ռուսական զորքերի կողմից, սարսափելի հետևանքներ կարող է ունենալ Թուրքիայի համար: Հետևաբար Թուրքական կառավարությանը անհրաժեշտ է լրջորեն վերաբերվել Իրանում ծավալվող իրադարձություններին: Իսկ Ստամբուլում գերմանական դեսպանը կարգադրություն էր ստացել Բեռլինից ներշնչել Բ. Դոանը, որ Իրանի գործերին Ռուսաստանի միջամտության պատճառով Թուրքական կառավարությանը անհրաժեշտ է դիմել ավելի եռանդուն միջոցառումների՝ հանուն Իրանում իր շահերի պաշտպանության[146]:

Իրանում Թուրքիայի քաղաքականության ակտիվացման վերաբերյալ Անգլիայի տրամադրությունները ևս շոշափելու նպատակով Բ. Դուը 1909 թ. մայիսին բանակցությունների մեջ մտավ բրիտանական կառավարության հետ: Լոնդոնում Թուրքական գործերի հավատարմատարին հանձնարարվեց պարզել, թե որքանով է իրական Թուրքական կառավարությանը հասած այն լուրը, որ Ռուսաստանի կողմից Իրանում ձեռնարկված ռազմական միջոցառումները անհանգստացնում են անգլիական կառավարությանը և որ վերջինս համակրանքով կվերաբերվեր Թուրքիայի միջամտությանը, որը կարող էր ծառայել որպես հակակշիռ Իրանական Ադրբեջանում Ռուսաստանի աճող ազդեցությանը: Թուրքական գործերի հավատարմատարի 1909 թ. մայիսի 30-ի պատասխան հեռագրում հայտնվում էր, որ անգլիական արտաքին գործերի պետական քարտուղարի օգնականը հայտարարել է իրեն, որ անգլիական կառավարությունը պատճառներ չի տեսնում Ռուսաստանի կողմից Պարսկաստանում ձեռնարկված ռազմական միջոցառումների առթիվ անհանգստանալու համար, քանի դեռ այդ միջոցառումները կրում են ժամանակավոր բնույթ: «... Որ ներկա մոմենտին Լոնդոնի կաբինետը աշխատում է իր համար պարզել գործերի իրական վիճակը, և վերջին ժամանակներս թեև նա մի բանի անգամ մտադիր է

---

146 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7696, л. 183.

եղել խորհուրդ տալ Բ. Դոանը անտարբերությամբ չվերաբերվել Պարսկաստանի վիճակին, բայց չի արել այդ բացառապես այն պատճառով, որ երկյուղ է կրել, թե տեղական թուրքական իշխանությունները անընդունակ կգտնվեն ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական միջոցառումների բնագավառում գործը առաջ տանել նրբանկատորեն»: Ֆորին Օֆիսի ղեկավարի օգնականը այս բոլորին ավելացնում էր, որ «ներկա հանգամանքներում Մեծ Բրիտանիայի կառավարությունը հնարավոր չի համարում Բ. Դոանը խոստանալ իր օգնությունը այն դեպքի համար, եթե նրա միջամտությունը Պարսկաստանի գործերին առաջ բերի բարդություններ Թուրքիայի և Ռուսաստանի միջև»[147]:

Անգլիական արտաքին գործերի մինիստրության ներկայացուցչի այս պատասխանը Բ. Դոան կողմից ընկալվեց իր իսկական իմաստով, այն է՝ բրիտանական կառավարությունը ոչ միայն համաձայն է Իրանում Թուրքիայի ակտիվ քաղաքականության կուրսի ընդլայնմանը, այլև ուղղակի կոչ է անում արագացնել դրա իրագործումը, եթե այն ուղղված է բացառապես Ռուսաստանի դեմ: Սա անշուշտ թեավորելու էր թուրքական կառավարությանը: Վերոհիշյալ հեռագիրը ստանալու հաջորդ օրը, մայիսի 31-ին, Ռիֆաաթ փաշան անմիջապես հեռագրեց Լոնդոն, որտեղ անգլիական կառավարությունից ներողություն խնդրելով, որ իր կառավարությունը ի վիճակի չէ անմիջապես լայն գործողություններ ծավալել Իրանում, բացատրում էր դրա պատճառները. «Վերջին ժամանակներս թուրքական կառավարությունը որոշել էր ավելի եռանդուն դիրք գրավել Պարսկաստանի նկատմամբ և հանձնարարել էր 4-րդ կորպուսի հրամանատարին Ուրմիայի շրջան ուղարկել բավարար քանակությամբ զորքեր: Սակայն, ինչպես հաղորդում է հիշյալ հրամանատարը ռազմական մինիստրությանը, հնարավոր չեղավ մոբիլիզացնել այն հետևակային գունդը, որը ենթադրվում էր ուղարկել Ուրմիա. մյուս կողմից գործերի վիճակը հայկական բնակչություն ունեցող կենտրոններում թույլ չի տալիս թուլացնել Մուշում, Բիթ-

---

[147] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 39, лл. 98—98 об.

լիսում և Վանում տեղավորված զորքերին[148]։ Այդ պատճառով ներկայումս որոշված է Ուրմիա ուղարկել միայն երկրորդ կորպուսի երկու գումարտակ»[149]։ Այնուհետև արտաքին գործերի մինիստրը հեռագրով կարգադրում էր Լոնդոնում իր ներկայացուցչին. «Հաղորդեցեք այս բոլոր մանրամասնությունները բրիտանական կառավարությանը և հենվելով Ձեր խոսակցության վրա անգլիական պետական քարտուղարի օգնականի հետ, պարզորոշ հասկացրեք նրան, որ պարսկական հարցում Բ. Դուռը ցանկանում է իր գործելակերպը համապատասխանեցնել Անգլիայի հայացքների հետ»[150]։

Ցարական դիվանագետները Անգլիայի դաշնակցային անպեղծ այս վարքագծի մասին բերում էին նաև այլ փաստարկներ։ Նրանք, օրինակ, գտնում էին, որ Բուշիրից անգլիական օկուպացիոն զորքերի հապճեպ դուրս բերումը տարօրինակ ձևով համընկավ ռուսական զորքերի Թավրիզ մուտք գործելու հետ, որի հետևանքով «պարսիկների» զայրույթը ուղղվեց բացառապես Ռուսաստանի դեմ»։ Նրանց տրամադրության տակ հավաստի աղբյուրներից քաղված տեղեկություններ կային նաև այն մասին, որ Քարբալայում անգլիական հյուպատոսը տեղի իրանական բարձր հոգևորականությանը զրգռում է ռուսների դեմ[151]։ Սա ևս ավելորդ անգամ վկայում էր այն մասին, որ Մեծ Բրիտանիան ոչ միայն հարվածի տակ էր դնում Ռուսաստանին, այլև ակտիվորեն նախապատրաստում էր այդ հարվածը։ Անգլիական կառավարող շրջանները թեև շահագրգռված էին ռուսական զորքերի կողմից Հյուսի-

---

[148] Թուրքական կառավարությունը աշխատում էր անգլիացիներից թաքցնել այն փաստը, որ չորրորդ բանակային կորպուսում տեղի էին ունենում զինվորական հուզումներ, որը հնարավորություն չէր տալիս զորքերի խոշոր համալրումներ ուղարկել Իրան։ Տե՛ս Թուրքական արտաքին գործերի մինիստրի մայիսի 26-ի (հունիսի 8-ի) հեռագիրը Օսման Նիզամի փաշային և էրզրումում գլխավոր հյուպատոս Ակրյաբինի մայիսի 1-ի հաղորդագրությունը։ ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7696, лл. 183 об.—184.

[149] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 39, лл. 98 об.—99; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7696, лл. 182 об.—183.

[150] Նույն տեղում։

[151] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 39, лл. 251—251 об.

սային Իրանում հեղափոխական շարժումը ճնշելու մեջ, բայց և վախենում էին, որ Ռուսաստանը այլևս դուրս չի գա իր օկուպացրած տերիտորիաներից և հավանական է, որ անեքսիայի ենթարկի Իրանական Ադրբեջանը։ Լոնդոնի կաբինետի կարծիքով Ռուսաստանի այդ մտադրությունը խափանելու գործում լավագույն ծառայություն կարող էր մատուցել Թուրքիան։ Կառավարական շրջանների հետ սերտորեն կապված անգլիական «Դեյլի նյուս» լրագիրը, օրինակ, գրում էր, որ «Ռուսաստանի կողմից Իրանական Ադրբեջանի գրավումը այն հետևանքը կունենա, որ Թուրքերը զորքեր կուղարկեն Թավրիզ։ Այդ պատճառով Անգլիան,—եզրակացնում էր հոդվածագիրը,—պետք է խորհուրդ տա Ռուսաստանին չխառնվել իրանական գործերին»[152]։

Համոզվելով, որ իրանական գործերում իր ակտիվ բազմականությունը ոչ միայն չի հանդիպի անգլիական դիմադրությանը, այլ ավելին, կարժանանա բրիտանական կառավարության խրախուսանքին, Ստամբուլը որոշեց գործել ավելի վճռական։ Ուրմիայի նահանգն ուղարկված վերոհիշյալ երկու գումարտակներից բացի 1909 թ. հունիսին այնտեղ ուղարկվեցին լրացուցիչ զորքեր։ Իրանական տերիտորիա զորքեր մտցնելու համար Թուրքական կառավարությունը լայնորեն օգտագործում էր նաև հյուպատոսական պահակախմբերի ուժեղացման պատրվակը[153]։ Ընդ որում, հատուկ շեշտվում էր, որ այդ ջոկատների վրա խնդիր է դրված նաև Թուրքահպատակ սուննիթ գյուղացիներին (խոսքը «դեհալեթ» տված անձանց մասին է—Վ. Բ.) պաշտպանել ֆիդայիներից և անիշխանության հետևանքով ստեղծված անապահով վիճակից[154]։

Սակայն զավթումներ կատարելիս նախկինի պես հիմնական շեշտը դրվում էր իրանական բրդերի վրա։ Երիտթուրքական կառավարությունը իր էմիսարների միջոցով բուռն ագիտացիա ծավալեց նրանց շրջանում աշխատելով համոզել բրդական ավագանուն, որ հեղափոխության հետևանքով թուլացած Իրանը այլևս ի վիճակի

---

152 «Մշակ», 10 ապրիլի 1909 թ.։

153 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 540, лл. 84—85.

154 АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 35, л. 271; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, л. 63.

չէ պահելու Քրդստանը, որը անխուսափելիորեն անցնելու է Թուրքիային[155]։ Երիտթուրքերը հույս ունեին իրանական քրդերի օգնությամբ ոչ միայն իրագործել Օսմանյան կայսրության դերիշխանության տակ ողջ Քրդստանի միավորման գաղափարը, այլև Իրանական Ադրբեջանը յուրացնելու ծրագիրը[156]։

Թուրքերի օգտին գործող քրդական բեկերի ու աղալարների ջոկատները Ուրմիայի, Սալմաստի և այլ շրջանների առևտրաանտեսական կյանքը անդամալուծելու և այդ շրջանների հետ ռուսական առևտուրը կասեցնելու նպատակով անողոքաբար կողոպտում էին ենթարկում առևտրական քարավանները, ահաբեկում շրջակա բնակչությանը և այլն։ Հատկապես աշքի ընկավ շերքաբ ցեղի առաջնորդներից Օմեր աղան, որը իր վարքագիծը արդարացնում էր նրանով, որ «Պարսկաստանը միանգամայն մեռած երկիր է, որը այլևս երբեք ի վիճակի չի լինելու պաշտպանվել որևէ մեկից։ Մինչդեռ Թուրքերը կանգնած են այն շրջաններում, որտեղ գտնվում են իր կալվածքները և հրամայում են իրեն գործել պարսիկների դեմ»[157]։

1909 թ. մայիսին Թուրքական օկուպացիոն իշխանությունների հրահանգով իրանական մամաշ և մանգուր ցեղերից բաղկացած ավելի բան երկու հազար քրդական հեծյալներ Համդն-Սուլեյմանի և Բայազիդ աղայի գլխավորությամբ ներխուժեցին Սոուջբուլաղի շրջանը, նպատակ ունենալով գրավել Սոուջբուլաղի և Մարաղայի միջև ընկած ողջ տերիտորիան մինչև Միանդոաբ, իսկ հաջողության դեպքում փորձել գավթել նաև Ուրմիան[158]։ Մայիսի 15-ին Կովկասի փոխարքային գրած հաղորդագրությունում փոխ-հյուպատոս Միլլերը նախազգուշացնում էր, որ Ուրմիայի վրա կախված է մեծագույն սպառնալիք, որ քրդերի հետ համատեղ ծպտված գործում են նաև բազմաթիվ թուրքական զինվորներ[159]։

---

155 *Дм. Беляев, նշվ. աշխ., էջ 11։*

156 АВПР, ф. «Посольство в Константинополе, 1910, д. 1599, лл. 109—110.

157 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 19—20.

158 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, лл. 47—47 об.

159 АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 177, лл. 44, 59.

Իսկապես, կարճ ժամանակամիջոցում քրդական ջոկատների օգնությամբ թուրքական զորքերին հաջողվեց գրավել Միանդոաբը, Սուլդուզի շրջանի դեռևս չգրավված կետը, Խոյը, Դիլմանը, Կուշչին և մի շարք այլ տերիտորիաներ և ընդհուպ մոտենալ Ուրմիային։ Ճիշտ է, Մարաղայի նահանգապետ Շոջա-էդ-Դոուլեի զինված հակահարվածի հետևանքով թուրք-քրդական ջոկատները ստիպված էին հեռանալ Միանդոաբից ու Սոուջբուլաղից[160] և թուրքերին չհաջողվեց հաստատվել Մուբրի Քրդստանում, սակայն դրանից հետո նրանք կրկնապատկեցին իրենց ակտիվությունը Ուրմիայի ուղղությամբ։ Այն զավթելու գործը հեշտացնելու նպատակով թուրքական հրամանատարությունը ուժեղացրեց թուրքոֆիլական ագիտացիան և անկարգությունների հրահրումը Ուրմիայում և նրա շրջակայքում[161]։ Քրդական ջոկատներին հրահանգված էր ահաբեկել, անխընա կողոպտել ու ավերել Քրդստանի և Ատրպատականի «անհնազանդ» բնակչությանը։ Սոուջբուլաղի նահանգապետ Իմամ Ղուլի միրզան և Ատրպատականի հայկական գաղութի եկեղեցական ներկայացուցիչները թախանձագին դիմումներ էին կատարում ռուսական իշխանություններին, խնդրելով պաշտպանել տեղական քրիստոնյա և մահմեդական բնակչությանը կոտորածից[162]։ Հաղորդելով այն մասին, որ քրդական ֆեոդալները հատուկ նախանձախընդրությամբ ու եռանդով կողոպուտի ու հալածանքների են ենթարկում հայ ազգաբնակչությանը Միլլերը գրում էր. «Հայերը Պարսկական Ադրբեջանում չեն թաքցնում իրենց ռուսոֆիլությունը և այն հույսը, որ Ռուսաստանը վերջ ի վերջո կմիջամտի պարսկական գործերին»[163]։

Օգտվելով այս ահաբեկումների հետևանքով Ուրմիայի շրջանի բնակչության ընդհանուր ընկճված տրամադրությունից, թուրքական իշխանությունները մասնայաբար սկսեցին հավաքել դեհալեթներ, վաճառել անձնագրեր, դրոշներ և թուրքական պետականության այլ ատրիբուտներ։ Այն վայրերում, որտեղ բնակչությունը

---

160 Նույն տեղում, թ. 44—45, 59—60։

161 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, лл. 62 об.—63.

162 Նույն տեղում, թ. 48։

163 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 611, л. 12.

հրաժարվում էր ընդունել թուրքական հպատակություն, անմիջապես հայտնվում էին քրդական և թուրքական զինված ջոկատները և գործադրում բռնություններ[164]։

Այս տեսակետից իր «ձեռներեցությամբ» հատկապես աչքի էր ընկնում Բարանդուզի բինբաշի Սուլեյման Վեհբի բեյը, որը Խերքի ցեղի առաջնորդ Քերիմ խանի հետ սարսափելի ջարդերի ու ավերածությունների միջոցով հավաքագրում էր «թուրքահպատակներ»[165]։ Այդ ուղղությամբ թուրքերին մեծագույն ծառայություններ էր մատուցում նաև ոմն Պիտեր Էլլոու, որի մութ անցյալի մասին Իրանական Քրդստանում շրջում էին զանազան լեգենդներ։

Բնականաբար, ոչ մի այլ ելք չունենալով գյուղացիները վերջ ի վերջո ստիպված ընդունում էին թուրքական հպատակություն, որից հետո ասկյարները անմիջապես մուտք էին գործում նրանց գյուղերը։ Ուրմիայի ռուսական փոխ-հյուպատոսը տագնապով հաղորդում էր, որ թուրքական իշխանություններին հաջողվել է զավթված շրջաններում ստեղծել թուրքահպատակների զգալի թիվ, իսկ «Ուրմիայի համարյա ողջ շրջանը դեհալեթ է տվել թուրքերին»[166]։

1909 թ. հունիսի սկզբին Բ. Դուռը դիմեց ցարական կառավարությանը, առաջարկելով Ուրմիայից դուրս բերել ռուսական ջոկատը, իբր թե խուսափելու համար նրա հավանական բախումներից թուրքական զորքերի հետ։ Միաժամանակ Պետերբուրգում դեսպան Թուրհան փաշան առաջարկեց Իզվոլսկուն թույլ տալ թուրքական զորքերի պաշտպանության տակ վերցնել Ուրմիայի ռուսական հյուպատոսությունը և այդ նահանգի ռուսահպատակներին[167]։ Սա արդեն բացահայտ առաջարկություն էր Ուրմիան զիջել Թուրքիային։ Թեև ռուսական արտաքին գործերի մինիստրը կտրուկ մերժեց այն, սակայն նրա և կառավարության կողմից այնուամենայնիվ վճռական միջոցառումներ չձեռնարկվեցին Օսմանյան կայսրության ախորժակը սահմանափակելու ուղղությամբ։

---

164 Նույն տեղում, թ. 138։

165 Նույն տեղում, թ. 49—51։

166 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, л. 138.

167 АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 37, лл. 21—21 об.

Ցարական կառավարության այս անվճռական քաղաքականությունը հարված էր դնում նաև տեղական ժողովուրդների, այդ թվում նաև քրդերի նկատմամբ տարվող քաղաքականությունը։ Թուրքական զորքերի կողմից Իրանական Քրդստանի տերիտորիաների օկուպացումը և տեղական բնակչության նկատմամբ բռնությունների քաղաքականությունը առաջ էին բերել քրդական մի շարք ցեղերի դժգոհությունը, որոնք թուրքական օկուպացիայի մեջ տեսնում էին նաև իրենց նախկին ազատությունների սահմանափակում։ Անընդհատ Թավրիզ և Թեհրան էին ուղարկվում նամակներ ու հեռագրեր. իրանական իշխանություններից պահանջվում էր միջոցներ ձեռնարկել ինչպես իրագործվող բռնությունների, այնպես էլ իրանական տերիտորիաների զավթումների դեմ։ 1909 թ. մայիսին Միլլերը հաղորդում էր, որ ուրմիացիների հսկայական մեծամասնությունը ցանկանում է, որ թուրքական զորքերը հեռանան իրենց շրջանից[168]։ Սակայն կենտրոնական կառավարությունը և շահական իշխանությունները անպատասխան էին թողնում այս դիմումները։ Լավագույն դեպքում նրանք կազմակերպում էին դիմադրության առաջին փորձեր, որոնք որպես կանոն լրիվ ձախողվում էին։ Այսպես, երբ 1909 թ. վերջին Մոհթեշամ-ուս-Սալթանեն փորձեց Սուլդուզից դուրս վռնդել թուրքական զորքերին, վերջիններս Դոլի շրջանում իրենց կողմնակից քրդական ջոկատների հետ շրջապատեցին և գլխովին ջախջախեցին իրանական ջոկատներին[169]։

Համոզված լինելով, որ շահական կառավարությունը և նրա տեղական մարմինները անկարող են պաշտպանել իրենց, թուրքական օկուպացիայից դժգոհ բնակչությունը սովորաբար դիմում էր ռուսական իշխանություններին։ Այսպես, դեռևս 1908 թ. ամռանը Թերգևերի, Մերգևերի, Բարադոսթի, Դեշտի, Ուշնուի և մի շարք այլ շրջանների քրդական բնակչությունը և ցեղապետների մի մասը դիմեցին Ուրմիայի ռուսական փոխ-հյուպատոսին խնդրելով հովանավորություն։ Նույնանման դիմումներ բազմիցս կատարվում էին նաև հետագայում։ Սակայն այդ խնդրանքները մերժվում էին ռուսական հյուպատոսների կողմից, որովհետև ցարական արտաքին

168 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, л. 146.

169 Նույն տեղում, թ. 276—277։

գործերի մինիստրությունը հրահանգել էր նրանց ոչ մի դեպքում առիթ չտալ Թուրքիայի հետ հարաբերությունները սրելուն[170]։ Ռուսաստանի խորհրդով շահական իշխանությունները ևս հորդորում էին իրենց հավատարիմ քրդական ցեղերին հանգիստ լինել և չհարուցել ոչ մի թյուրիմացություն[171]։

Ռուսաստանի այս քաղաքականությունը անշուշտ բացասական ազդեցություն էր գործելու հակաթուրքական տրամադրություններ ունեցող քրդական զանգվածների վրա։ Իսկ թուրքական գործակալությունը ռուսական դիվանագիտական գործիչների այդօրինակ վարքագիծը մեկնաբանում էր որպես ցայտուն վկայություն այն բանի, որ Ռուսաստանը ձեռականորեն ճանաչում է Արևմտյան Իրանում Օսմանյան կայսրության տերիտորիալ նվաճումները։

* * *

Ինչպես հայտնի է Թավրիզի ապստամբությունից հետո Իրանում հեղափոխական պայքարի կենտրոնը տեղափոխվեց հյուսիս՝ Գիլյանի նահանգը և հարավ՝ Սպահան։ Այստեղ բախտիարական խաները Սամսամ-էս-Սալթանեի և նրա եղբայր Սարդար-Ասադի գլխավորությամբ պատրաստվում էին արշավանք կազմակերպել Թեհրան՝ Մոհամմեդ Ալի շահին տապալելու համար։ Անգլիական իմպերիալիստական շրջանները ամեն կերպ աջակցում էին բախտիարների շարժմանը, որովհետև նախ Ռուսաստանի հետ կապված Մոհամմեդ Ալի շահի տապալումը հնարավորություն կտեղծեր Իրանում թուլացնել իր մրցակցի դիրքերը և ապա բախտիարների օգնությամբ, որոնք կապերի մեջ էին անգլիացիների հետ, ուժեղացնել իր ազդեցությունը ողջ Իրանում։

1909 թ. հունիսին բախտիարական ջոկատները Սպահանից շարժվեցին մայրաքաղաքի վրա։

Երիտթուրքական կառավարությունը օգտվեց Իրանում սրված ներքին քաղաքական պայքարից։ Ծպտվելով որպես հոգևորական ուլեմաներ, թուրքական սպաները թափանցում էին իրանական հե-

---

[170] АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 1198, лл. 413—414.

[171] АВПР, ф. «Миссия в Персии», 1908, д. 81, лл. 20—21 об.

զափոխականների շարքերը, աշխատելով մտնել բախտիարական ջոկատների մեջ։ Զարիքովին, օրինակ, հաջողվել էր պարզել, որ Սալոնիկի կենտրոնական երիտթուրքական կոմիտեի ղեկավարներից մեկը՝ Նաջի բեյը ծպտված գտնվում է Թեհրան արշավող բախտիարների ջոկատում, իսկ երկու այլ սպաներ՝ Սադիկ բեյը և Նազիֆ բեյը գործում են այլ վայրերում[172]։

Նպաստելով Մոհամմեդ Ալի շահի դեմ ուղղված բախտիարների շարժմանը, երիտթուրքական կառավարությունը ըստ երևույթին հետապնդում էր հետևյալ նպատակները. 1) աջակցել Ռուսաստանի կողմնակից Մոհամմեդ Ալի շահի տապալմանը. 2) ազդեցություն ձեռք բերել Իրանի հարավի ցեղերի շրջանում, որոնք ծրագրել էին իրենց անբաժան տիրապետությունը հաստատել ողջ Իրանի նկատմամբ այսպես կոչված «քոչվորական միապետություն» («սուլթանաթե աշայերի») ստեղծելու ճանապարհով[173], 3) և իհարկե ոնկլամել իրենց որպես իրանական հեղափոխության ջերմ համակիրներ։ Միանգամայն հասկանալի է, որ թուրքական կառավարությունը մտադիր էր նաև օգտվել Իրանում լարված քաղաքական իրադրությունից, այդ երկրի ներքին գործերին առավել ակտիվորեն միջամտելու համար։

1909 թ. հուլիսին Մոհամմեդ Ալի շահը գահընկեց եղավ։ Ղաջարական գահին նստեց նրա 14-ամյա որդին՝ Սուլթան Ահմեդը։ Ստամբուլը անմիջապես սկսեց մեծագույն ճիգեր գործադրել մերձենալու համար ինչպես շահական նոր կառավարության, այնպես էլ սահմանադրական շրջանների հետ։ 1909 թ. սեպտեմբերին Իրանում դեսպան նշանակվեց «Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության անդամ Խասիբ բեյը, որին հանձնարարված էր հատկապես սերտ կապեր հաստատել Մեջլիսի և սահմանադրության կողմնակից քաղաքական գործիչների հետ։

1909 թ. կազմակերպվեց «Իրանական դեմոկրատական կուսակցությունը», որին թվում էր, որ Իրանում Ռուսաստանի և Անգլիայի դեմ պայքարող յուրաքանչյուր պետություն հանդիսանում

---

172 АВПР, ф. «Политархив», 1909, д. 1035, л. 64.

173 *М. С. Иванов*, Иранская революция 1905—1911 гг., стр. 379.

է իրանական հեղափոխության անկեղծ կողմնակից[174]։ Թեհրանի թուրքական դեսպանատունը իրանական դեմոկրատներին սկսեց խոստանալ ամեն տեսակի օգնություն Ռուսաստանի դեմ նրանց մղած պայքարում[175]։ Երիտթուրքական կառավարության հրահանգով խասիբ բեյը եռանդուն փորձեր սկսեց կատարել նաև իրանական նոր կառավարության հետ մերձենալու ուղղությամբ։ Այս քաղաքական գծի հաջողության գրավականն այն էր, որ Իրանի նոր կառավարությունը, ուր խոշոր դեր էին կատարում բախտիարական խաներ Սեփահդարը և Սարդար-Ասադը, բացարձակապես ոչինչ չձեռնարկեց թուրքական ագրեսիայի և Իրանի ներքին գործերին Թուրքիայի միջամտության դեմ։ Առհասարակ այս կառավարության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ չէր նկատվում ոչ մի արմատական փոփոխություն և հեղափոխական գիծ[176]։

Իրանում փոխված քաղաքական իրավիճակը մի կողմից և երկրի ներքին գործերին Օսմանյան կայսրության միջամտության ակտիվացումը և դավթումների քաղաքականության ընդլայնումը մյուս կողմից, Ռուսաստանի մերձավոր և միջինարևելյան քաղաքականության համար ստեղծում էին նոր, լուրջ բարդություններ։ Այդ պատճառով Թուրքիայում և Իրանում աշխատող ռուսական դիվանագիտական և դինվորական գործիչների մեծագույն մասը կառավարությանը կոչ էր անում հրաժարվել պասսիվ դիրքից և ակտիվորեն միջամտել իրադարձություններին։ Ընդ որում, իրենց բազմաթիվ հաղորդագրություններում, ծածկագրված նամակներում և հեռագրերում նրանք մեկ առ մեկ նշում էին, թե ինչպիսի ծանր հետևանքներ կարող է ունենալ Ռուսաստանի անգործունյա քաղաքականությունը թուրքական աճող ակտիվության նկատմամբ։ Նրանց փաստարկումները հիմնականում հանգում էին հետևյալին. Իրանական Ադրբեջանում և Քրդստանում Օսմանյան կայսրությունը

---

174 *Т. С. Короткова,* Иран накануне первой мировой войны. Доклады и сообщения исторического факультета Московского Государственного университета, вып. 8, 1948, стр. 12.

175 «Сводка сведений...», № 3, Тифлис, 1911, стр. 1—2.

176 *М. С. Иванов,* Иранская революция 1905—1911 гг., стр. 394.

ձեռք կբերի հարմարավետ ռազմա-ստրատեգիական դիրքեր. անպայման կաշխատի այդ շրջաններում հարված հասցնել Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերին. իրանական քրդերի ենթարկումը թուրքական ազդեցությանը Ռուսաստանի համար կարող է ունենալ խիստ բացասական հետևանքներ, որովհետև այն կարող է ձախողել քրդերի նկատմամբ տարվող քաղաքականությունը, ի չիք դարձնել նշված վայրերում ռուսական կապիտալի տնտեսական գործունեության ընդլայնման հեռանկարը, և հնարավորություն ստեղծել Գերմանիայի ու Թուրքիայի համար առհասարակ սպառնալիքի տակ դնելու Ռուսաստանի ներկայությունը ողջ Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում[177]։

Իսկ Ստամբուլից ռուսական դիվանագետները հավաստիացնում էին իրենց կառավարությանը, որ թուրքական մայրաքաղաքում տիրող մթնոլորտը այնպիսին է, որ դժվար է հույս դնել Իրանի նկատմամբ «Թուրքիայի գործողությունների բանական դիրքի վրա»[178]։ Եզրակացությունը մեկ էր, անհրաժեշտ է Օսմանյան կայսրությանը հնարավորություն չտալ իրագործելու իր վերոհիշյալ ծրագրերը։ Սակայն Պետերբուրգում դարձյալ գտնում էին, որ անժամանակ ու վտանգավոր է Թուրքիայի դեմ կտրուկ միջոցառումների դիմելը։ Որոշվեց միայն տեղայնացնել թուրքական զավթումները որոշակի շրջաններում։ Միաժամանակ Իրանում ռուսական դեսպանորդին և հյուպատոսական ներկայացուցիչներին խստիվ կարգադրվեց կանխել ռուսական ջոկատների բախումները թուրքական զորքերի հետ և ոչ մի դեպքում չփորձել դրավել այն շրջանները, որտեղ արդեն առկա են թուրքական զորքեր։ Բացի այդ, ցարական կառավարությունը որոշեց վերսկսել իր դեմարշները Բ. Դռան առջև[179], հույս ունենալով դիվանագիտական ճանապարհով հասնելու որոշակի հաջողության։

---

[177] АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 140—141; *Дм. Беляев, նշվ. աշխ., էջ 18*; ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 24.

[178] АВПР, ф. «Канцелярия МИД», 1909, д. 661, л. 148.

[179] АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 663, л. 4.

* * *

Բանակի վերակազմակերպման հետ միաժամանակ, 1908 թ. աշնանից երիտթուրքական կառավարությունը ներքին քաղաքականության բնագավառում փորձեց թուլացնել քրդական շեյխերի ու աղալարների դիրքերը և ամրապնդել կառավարության ուժն ու ազդեցությունը քրդական մասսաների վրա։ Այդ նպատակով որոշվեց նախ լրջորեն զբաղվել քրդական համիդիե գնդերի հարցով։ Դեռևս երիտթուրքական հեղաշրջումից անմիջապես հետո թուրքական զինվորական շրջաններում սկսեցին խոսել համիդիե գնդերի ցրման մասին, վկայակոչելով այն հանգամանքը, որ խաղաղ ժամանակ նրանք միայն ահաբեկում են քաղաքացիական բնակչությանը, իսկ պատերազմի ժամանակ բերում են կասկածելի օգուտ։ Առաջարկվում էր, վաշկատուն ցեղերին ներգրավել զինվորական ծառայության ընդհանուր հիմունքներով՝ բանակի հեծելազորային զորամասերում։ 1909 թ. կառավարությունը ձեռնամուխ եղավ իր այդ ծրագրի իրագործմանը՝ լուրջ դժգոհություն առաջ բերելով քրդերի շրջանում[180]։ Միաժամանակ թուրքական իշխանությունները սկսեցին հետապնդել, դատի տալ և բանտարկել քրդական այն ցեղապետներին, որոնք զբաղվում էին կողոպուտով և ասպատակություններով[181]։

Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջումից հետո քրդական բեյերի ու աղալարների այն կանխատեսությունը, որ Թուրքիայում քաղաքական նոր ռեժիմի ստեղծումը կահմանափակի իրենց իրավունքները[182], միանգամայն արդարացավ։

Քրդերի դեմ հակակշիռ ստեղծելու և նրանց դիրքերը թուլացնելու նպատակով կառավարությունը սկսեց քրդական ֆեոդալների՝ հայերից բռնագրավված հողերը վերադարձնել նախկին տերերին։ Ստամբուլը նաև ցուցում տվեց իր տեղական իշխանություններին

---

[180] «Об отношениях курдов в Азиатской Турции к турецкому правительству». «Сборник Главного управления Генерального штаба», вып. II, СПб., февраль, 1910 г., стр. 61.

[181] АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 544, лл. 1—1 об.

[182] „British documents on the origins of the war 1898—1914", vol. 5, p. 254.

հայ բնակչության շրջանում ամեն կերպ ձեռք բերել ժողովրդականություն և դրանով իսկ ոչ միայն հակազդել քրդերին, այլև խորտակել հայերի հավատը Ռուսաստանի նկատմամբ[183]։

Երիտթուրքական կառավարության քաղաքական այս գիծը հատկապես քրդական վերնախավի շրջանում առաջ բերեց խորը դժգոհություն[184]։ Թուրքական Քրդստանում և Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջաններում 1909 թ. ամեն բոպե սպասվում էր քրդական ապստամբության պոռթկում։ Համիդիե հեծելազորի մասնակի զինաթափումը և ոչ մահմեդականների զինակոչման օրենքի ընդունումը, որը հետապնդում էր քրդական անկանոն հեծելազորի ազդեցության և նշանակության նվազեցման նպատակ, վերջնականապես կատաղեցրին քրդական ցեղային ավագանուն։

Հնարավորություն չունենալով բացահայտորեն դուրս գալ կառավարության դեմ, երիտթուրքերի «քրդական» քաղաքականությունից դժգոհ Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթների բազմաթիվ ցեղապետներ իրենց աշիրեթներով սկսեցին անցնել Իրան։ Այսպես վարվեցին հայդերանլի ցեղի առաջնորդներ Հյուսեին փաշան, Էմին փաշան, Հաջի Թեյմուր փաշան, Մեհմեդ Սադրկը և խոշոր քրդական ֆեոդալ Քոռ Հյուսեին փաշան[185]։

Քրդական ազդեցիկ ցեղապետների տեղափոխությունը Իրան երիտթուրքերի դեմ թշնամաբար տրամադրեց Թուրքիայի քրդական բնակչության մեծամասնությանը[186]։ Բիթլիսում փոխ-հյուպատոս Շիրբովը հայտնում էր, որ ըստ իր ստացած լուրերի, քրդերը որոշել են մասսայաբար տեղափոխվել Իրան և իրանական սահմանամերձ շրջանները, որպեսզի համախմբվելով հետագայում աջակցություն ցույց տան Թուրքիայում ռեակցիոն շարժմանը[187]։ Նրանք

---

183 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, лл. 51, 113.

184 АВПР, ф. «Политархив», 1910, д. 1039, л. 59.

185 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, лл. 23, 83, 86; АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 149, лл. 16, 17; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 80—82.

186 «Сборник Главного управления Ген. штаба», вып. 11, СПб., февраль 1910, стр. 63—64.

187 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 544, л. 10 об.

իհարկե հետապնդում էին նաև այն նպատակը, որպեսզի ստիպեն Թուրքական կառավարությանը հրաժարվել իրենց նկատմամբ տարվող ռեպրեսիվ քաղաքականությունից։ Այդ ճնշումը ուժեղացնելու նպատակով Իրան տեղափոխված քրդական ցեղապետները նույնիսկ սկսեցին որոնել ռուսական հովանավորությունը։ Կովկասի փոխարքային ուղղված նամակում նրանք առաջարկում էին Թուրքիայում բարձրացնել քրդերի համընդհանուր ապստամբություն և Ռուսաստանի ազդեցությանը ենթարկել ողջ Քրդստանը[188]։ Միաժամանակ նրանք դիմեցին Մակուի սարդարին, խնդրելով միջնորդել ռուսական իշխանությունների մոտ իրենց ռուսական հպատակության տակ վերցնելու մասին։ «Աբդուլ Համիդի նախկին հավատարիմ ծառաները՝ Թուրքական քրդերը, որոնք պատրաստ էին նրա առաջին իսկ հրամանով նետվել Անդրկովկասի վրա, ի դեմս իրենց առաջնորդներ Հյուսեին փաշայի, Ամիր խանի և Հաջի Թեյմուր խանի դիմեցին (Մակուի) սարդար Մուրթեզա Կուլի խանին, խնդրելով նրա միջնորդությունը իրենց ռուսական հպատակության տակ ընդունելու համար»[189], ոչ առանց իրոնիայի հայտնում էր Ադրբեջանի գլխավոր հյուպատոսության քարտուղար Գոլուբինովը։

Դա միանգամայն համապատասխանում էր Մակուի սարդարի շահերին, որովհետև նրա հավերժական թշնամիները, որոնց անընդհատ հարձակումները անհանգստացնում էին իրեն, դիմում էին նրա օգնությանը խոստանալով այսուհետև ընդմիշտ հավատարիմ լինել իրեն։ 1910 թ. փետրվարին սարդարը մեկնեց Երևան, այդ հարցի կապակցությամբ ռուսական իշխանությունների հետ բանակցություններ վարելու համար։ Սակայն կովկասյան իշխանությունները մերժեցին նրա առաջարկը պատճառաբանելով, որ Ռուսաստանի կողմից քրդերին հովանավորելը կարող է տեղի տալ անցանկալի միջազգային բարդությունների, որովհետև դա կհանդիսանար ուղղակի միջամտություն Թուրքիայի ներքին գործերին[190]։

---

188 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 149, лл. 15—17.

189 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, л. 78.

190 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, лл. 78—79; АВПР, ф. «Посольство в Константинополе», 1907—1913 гг., д. 3572, лл. 11—12.

Մերժելով քրդերի առաջարկը, ըստ երևույթին, Ռուսաստանը ոչ միայն աշխատում էր խուսափել Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների սրումից, այլև վախենում էր, որ իր ակտիվ ելույթը Քրդստանում Անգլիայի և Գերմանիայի կողմից կհանդիպի վճռական հակահարվածի։

Չնայած քրդերի պահանջի նկատմամբ Ռուսաստանի բռնած բացասական դիրքին, երիտթուրքական կառավարությունը անմիջապես լուրեր տարածեց, թե Ռուսաստանն է հրահրում քրդերին տեղափոխվել Իրան, որպեսզի այնտեղից քրդական առաջնորդները կազմակերպեն «ռեակցիոն շարժում սահմանադրական օսմանյան կառավարության դեմ»[191]։ Վանի գինվորական շրջաններում, սակայն, վախենում էին, որ փախած քրդերը սահմանի մոտ կստեղծեն մշտական անհանգիստ տարր, որը սպառնալիք կստեղծի այդ շրջանների անվտանգության համար։ Անշուշտ այդ ենթադրություններն ունեին ռեալ հիմքեր, որովհետև Իրան տեղափոխված քրդերը աստիճանաբար դրսևորում էին թուրքական կառավարությունից վրեժ լուծելու և նրա դեմ ակտիվորեն պայքարելու տենդենցներ։ Հյուսեին փաշան իր ցեղակիցների միջոցով Թուրքիայում մղում էր հակակառավարական պրոպագանդա՝ Էրզրումի վիլայեթի գլխավոր քրդական ցեղերին համախմբելով հակասահմանադրական միության մեջ, որն իր տրամադրության տակ ուներ մեծ քանակությամբ զենք և դրամական միջոցներ[192]։ Բացի այդ, Հայդերանլի աշիրեթի առաջնորդները հորդորում էին Մակուի սարդարին համատեղ ուժերով գրավել Արտաղա (Կաղա Բերկրի) հարուստ հովիտը, պատճառաբանելով, որ այն միշտ էլ պատկանել է Իրանին և բռնի ու անօրինական ճանապարհով միացվել է Թուրքիային[193]։ Վերջինիս առանձնապես անհանգստացնում էր այն, որ թուրքական և իրանական քրդերի միջև նկատվում էր մեծ համախմբվածություն։ Նրանց նախկին սուր թշնամանքը փոխարինվում էր փոխադարձ մերձեցման առաջին քայլերով։ Այն պահից, երբ երիտթուրքական կառավարու-

---

[191] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 6.

[192] АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, лл. 118—119, 123.

[193] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 34.

թյունը ձեռնամուխ եղավ համիդիե հեծելազորը ցրելուն և իր տիրապետության տակ գտնվող քրդերի արտոնություններն ու իրավունքները սահմանափակելուն, սահմանային բախումները իրանական և թուրքական քրդերի միջև միանգամայն դադարեցին[194]։ Դա իր մեջ պարունակում էր մեծագույն սպառնալիք. Թուրքիայում նախագրյալներ էին ստեղծվում քրդական համընդհանուր ապըստամբության բռնկման համար։ Բացի այդ, Ստամբուլը զրկվում էր իրանական քրդերին իր զավթողական քաղաքականության նպատակներին ծառայեցնելու հնարավորությունից և առհասարակ սպառնալիքի տակ էր դրվում Իրանի նկատմամբ Թուրքական քաղաքականության ապագա հաջողությունը։

Վախենալով, որ մյուս ցեղապետները ևս կհետևեն Իրան փախչողների օրինակին, Վանի գեներալ-նահանգապետ Բեքիր Սամի բեյը կառավարության համաձայնությամբ զորքերի նոր համալրում ուղարկեց թուրք-իրանական սահմանը, ընդ որում, իր այդ քայլը պատճառաբանելով նրանով, որ Ռուսաստանը ուժեղացրել է իր զորամասերը Իրանում[195]։ Թուրքական զորքերի նոր կենտրոնացումը սահմանի մոտ Վանի ռուսական փոխ-հյուպատոսը մեկնաբանում էր նրանով, որ Բ. Դուռը նոր քայլ է կատարում զավթումներ կատարելու և նախկինում զավթած տերիտորիաները ամրապնդելու ուղղությամբ[196]։

Արևմտահայաստանի հայ բնակչությունը աստիճանաբար համոզվում էր, որ հայ-քրդական հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքի հարցում Ստամբուլը անընդհատ տատանվում և անորոշ քաղաքականություն է վարում։ Հայերի հավատը երիտթուրքական կառավարության նկատմամբ վերջնականապես խորտակվեց 1909 թ. մայիսին՝ Ադանայում կազմակերպած հայկական ջարդի հետևանքով։ Այն համոզմունքը, որ Արևմտյան Հայաստանում ևս դրությունը ծայր աստիճանի լարված է և ամեն րոպե կարող են սկսվել հայ-քրդական կոտորածներ, ստիպում էր հայ գործիչնե-

---

194 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, лл. 54—54 об.

195 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, лл. 36—37.

196 Նույն տեղում, թթ. 24, 34։

բին դիմումներ անել կառավարությանը, պահանջելով վճռականորեն միջամտել հայ-քրդական հարաբերություններին։ Վանից թուրքական պառլամենտի պատգամավոր Վահան Փափազյանը, օրինակ, քրդական հարցի վերաբերյալ ներքին գործերի մինիստրությանը ներկայացրեց մանրամասն զեկուցագիր, որի մեջ առաջարկում էր անհապաղ ձեռնարկել մի շարք միջոցառումներ, որոնք, ըստ իրեն, հույժ անհրաժեշտ էին քրդերին կառավարական իշխանությանը ենթարկելու համար։ Մասնավորապես նա նշում էր, որ անհրաժեշտ է ավելացնել զորքերի թիվը Վանի վիլայեթում և թուրքիրանական սահմանի շրջանում, քրդերի նկատմամբ կիրառել ավազակախմբերի վերաբերյալ նոր օրենքը, իրանական կառավարությունից պահանջել անհապաղ վտարել Մակուում թաքնված քրդական ցեղապետներին և նրանց հնձյալ ջոկատներին, իսկ Թուրքիա վերադառնալուց հետո ցրել նրանց և բնակեցնել կայսրության տարբեր շրջաններում որպես հասարակ զինվորներ[197]։

Սակայն երիտթուրքական կառավարության համար դժվար էր ընդառաջել այդ ցանկություններին և մինչև վերջ տանել ծրագրված քաղաքականությունը, մանավանդ որ քրդերը իթթիհադի արտաքին քաղաքական պլաններում խաղալու էին առաջնակարգ դեր։ Բ. Դոան տագնապները քրդական հարցի նկատմամբ ավելի խորացան, երբ լուրեր տարածվեցին, որ Շամդինանի շեյխ Աբդուլ Ղադերը, որը այդ շրջանում հանդիսանում էր քրդական ցեղապետների հակակառավարական ընդդիմադիր շարժման պարագլուխը, ձգտում է միավորել բոլոր քրդական ցեղերին Օսմանյան կառավարության դեմ ելույթ ունենալու համար։ Նույնիսկ տեղեկություններ կային, որ այդ նպատակով նա դաղտնի կապերի մեջ է մտել Մակուի սարդարի և Իրան տեղափոխված քրդական ցեղային ավագանու հետ, ինչպես նաև փորձում է համաձայնության գալ հայերի և Իրաքի ու Ջեբել Դրուզի արաբների հետ երիտթուրքական կառավարության դեմ համատեղ ելույթ ունենալու համար[198]։

Այս տեղեկությունները անշուշտ չէին կարող չանհանգստաց-

---

[197] ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, лл. 51, 86—87.

[198] Նույն տեղում, թթ. 112—113։

նել թուրք կառավարող շրջաններին։ Երիտթուրքական կառավարության մի շարք ականավոր գործիչներ սկսեցին կառավարությունից պահանջել զիջումներ քրդական հարցում։ Բ. Դոան վրա ճնշում էին գործադրում հատկապես էքստրեմիստական տրամադրություններ ունեցող գործիչները, որոնց կարծիքով քրդերի նկատմամբ կտրուկ քաղաքականությունը կառավարությունից կվաներ նաև Իրանի պրոթուրքական տրամադրություններ ունեցող քրդական ցեղերին, որոնք միավորվելով Թուրքիայից տեղափոխված աշիրեթների հետ կարող էին զինված դիմադրություն ցույց տալ իրանական տերիտորիայում Օսմանյան կայսրության քաղաքական ոտնձգություններին։ Բացի այդ, նրանց կարծիքով, Թուրքիայի և Իրանի քրդերի միավորումը պարունակում էր մեծագույն վտանգ այն առումով, որ ողջ Քրդստանում կարող էր բռնկել հակակառավարական հզոր շարժում։

Հաշվի առնելով այս բոլորը, երիտթուրքական կառավարությունը որոշեց հրաժարվել քրդական հարցի վերաբերյալ իր իսկ ընդունած քաղաքական գծից։ 1910 թ. մարտին ներքին գործերի մինիստրը հրաման արձակեց ագրարային հարցի լուծման հետաձգման մասին, մինչև «դրա համար նպաստավոր մոմենտի ստեղծումը»[199]։ Այնուհետև կառավարությունը հայերի հաշվին կոմպրոմիսի մեջ մտավ քրդական աղալարների հետ և սկսեց քուրդ ֆեոդալներին սիրաշահելու և հողային ու այլ հարցերում նրանց պաշտպանելու քաղաքականություն վարել։ Այն խոստումները, որոնք տրվում էին հայերին, սին ու պատիր դուրս եկան։ Թուրքական կառավարող շրջանները փաստորեն հրաժարվեցին երկրի արևելյան նահանգներում ագրարային հարցի կարգավորումից և դրանով իսկ հարթեցին «քրդական հարցը»։ Բոլոր Իրան տեղափոխված քրդերին կառավարությունը խոստացավ վերադարձի դեպքում ներումն շնորհել, հակառակ դեպքում սպառնալով զրկել նրանց աստիճաններից ու տիտղոսներից և բռնագրավել ողջ շարժական ու անշարժ գույքը[200]։ Քրդերը հասկացան, որ կառավարությունը զիջումների է

---

199 Նույն տեղում, թթ. 112—113, 133։

200 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, лл. 351—351 об.

գնում և այդ պատճառով 1910 թ. դարձանից իրենց աշիրեթներով վերադարձան Թուրքիա[201]։

Իթթիհադը զիջումների գնաց նաև համիդիե գնդերի հարցում։ Նրան, այնուամենայնիվ, չհաջողվեց ցրել այդ գնդերը և քրդերին ներգրավել ծառայության՝ կանոնավոր բանակի շարքերում։ Այս ուղղությամբ միակ փոփոխությունը համիդիե գնդերի վերանվանումն էր «աշիրեթ խաֆիֆ սուվարի ալայլարի» («Քոչվորների թեթև հեծելազորային գնդեր»)[202], որոնց էությունը, սակայն, նույնն էր։

Վերադարձից հետո քրդական աղալարները ավելի դաժան հալածանքների էին ենթարկում հայերին[203]։ Այս անգամ արդեն Թուրքական իշխանություններն էին օգնում նրանց հայերից հողերը նա գրավելու համար։ Արևմտյան Հայաստանից Ստամբուլ էին թռչում տագնապալից հեռագրեր հայերի նկատմամբ կիրառվող բռնությունների վերաբերյալ։ Վանից Ս. Օլֆերևը հաղորդում էր, որ ամենուրեք հայերին սպառնում է մեծագույն վտանգ[204]։

Այսպիսով երիտթուրքական կառավարության փորձերը՝ քրդերին ինչ-որ չափով կառավարական իշխանությանը ենթարկելու ուղղությամբ, ավարտվեցին ձախողմամբ։ Սակայն դա Թուրքական կառավարող շրջաններին հնարավորություն տվեց հետաձգել քրդական հակակառավարական ապստամբության հնարավորությունը և քրդական զանգվածներին վերստին ներքաշել իր գավթումների ռազմաշունչ քաղաքականության հորձանուտը։

Ինչ վերաբերում է նշված ժամանակաշրջանում քրդական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականությանը, պետք է նշել, որ ցարական դիվանագիտությունը ի վիճակի չեղավ օգտագործել նրանց դժգոհությունը Թուրքիայի «նոր սահմանադրական կառա-

---

201 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1910, д. 1599, лл. 42, 43—50; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, лл. 331, 337; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, л. 6.

202 ЦГВИА, ф. 2000, д. 397, лл. 73—74.

203 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1910, д. 1599, лл. 40—43, 50—51.

204 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 133.

վարությունից»։ Թեև կովկասյան իշխանությունները և ցարական արտաքին գործերի մինիստրության մի շարք բարձրաստիճան չինովնիկներ (այդ թվում նաև արտաքին գործերի մինիստրության կառավարիչ, հետագայում արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը) գտնում էին, որ անհրաժեշտ է Թուրքիայում սկսված քրդական շարժումը օգտագործել թեկուզև իրանական հարցում Ստամբուլի վրա ճնշում գործադրելու համար[205], սակայն այդ առաջարկությունները այդպես էլ գործնական իրականացում չստացան։

Թուրքական կառավարող շրջանները հույս ունեին արտաքին զավթումների ընդլայնման միջոցով շեղել ժողովրդի ուշադրությունը երկրի ներքին ճգնաժամից և ինչ-որ չափով ամրապնդել իրենց խարխուլ դիրքերը։ «Եթե ներքին քաղաքականության գործերում,— գրում էր Վանում փոխ-հյուպատոս Ս. Օլֆերևը,—թուրքական իշխանությունները դուրս չեն գալիս մշտական տատանումներից, ապա պարսկական հողում իրենց ոտնձգությունների բնագավառում նրանք գործում են համառորեն և պլանաչափ»[206]։

Մինչև 1910 թ. գարունը թուրքական օկուպացիոն զորքերին հաջողվեց գրավել իրանական մի շարք նոր տերիտորիաներ[207]։ Հատկապես նրանք աշխատում էին ավարտել Ուրմիայի շրջանի փաստական անեքսիան այն հաշվով, որ Ուրմիա լիճը իր շրջակա տերիտորիաներով մտնի թուրքական տիրապետությունների մեջ[208]։ «Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի հրահանգով թուրքական և իրանական քրդստան մեկնեցին իթթիհադի մի շարք ականավոր գործիչներ, քրդական ցեղապետներին հորդորելու, որպեսզի նրանք իրենց զինված ջոկատներով աջակցեն Իրանում Ստամբուլի «ռազմական ջանքերին»[209]։ Միա-

---

[205] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 85—86; ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 52.

[206] ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 52.

[207] ЦГВИА, ф. 2000, д. 3778, л. 308 об; АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 111.

[208] АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 20—20 об, 29, 30; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, лл. 228 об.

[209] ЦГИА Груз. ССР, ф. 71, д. 58, лл. 60—64, 66—66 об.

ժամանակ թուրքական հյուպատոսներին հրահանգվեց սերտ կապեր հաստատել Իրանի քրդական ավագանու հետ և տալ նրանց գործունեության համապատասխան ծրագիր[210]։ Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի երևան դան Ստամբուլի այս գործունեության հետևանքները։ Իրանական Քրդստանում սկսվեց շահական կառավարության և Ռուսաստանի դեմ ուղղված իսկական պարտիզանական բնույթի պատերազմ։ Քրդական ջոկատները հարձակումներ էին գործում առևտրական քարավանների վրա, անդամալուծում էին թուրքերի դեռևս չգավթած շրջանների տնտեսական կյանքը, ոչնչացնում էին հեռագրական գծերը, ավերում ու բարուքանդ էին անում ամբողջ գյուղեր՝ աշխատելով սարսափի մթնոլորտ ստեղծել տեղական բնակչության շրջանում և կորզել խնդրագրեր թուրքական հովանավորության մասին։ Հատկապես սարսափելի տեսորի ենթարկվեց Ուրմիայի շրջանի ասորական բնակչությունը[211], որի հետևանքով զգալի քանակությամբ ասորիներ գաղտնի հեռացան արտասահման, հատկապես ԱՄՆ, իսկ տեղում մնացածները կամ ընդունեցին մահմեդականություն և դեհալեթ տվեցին թուրքական իշխանություններին, և կամ անդադրում դիմումներ էին կատարում ռուսական հյուպատոսներին, խնդրելով պաշտպանել իրենց կյանքը, պատիվն ու ունեցվածքը[212]։

Իրանական իշխանությունները ուղղակի անզոր էին որևէ արդյունավետ միջոցառում ձեռնարկել քրդերի մղած պարտիզանական պատերազմի դեմ, մանավանդ որ անհաջողության դեպքում քրդական ջոկատները թաքնվում էին օկուպացված շրջաններում, որտեղ իրանական զորքերին արգելված էր մուտք գործել[213]։

1910 թ. ամռանը թուրքական զորքերը ներխուժեցին նաև Մա-

---

210 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 667, л. 90.

211 Քրդական ջոկատների կողոպուտներից ու հալածանքներից պաշտպանվելու համար դեռևս 1908 թ. վերջերին Ուրմիայում ասորական մտավորականությունը որոշեց հիմնել «Սիրիական գյուղերը կողոպտիչներից պաշտպանելու խալդեական միություն» անունով կազմակերպությունը։ Տե՛ս АВПР, ф. «Персидский стол», 1908, д. 656, л. 120.

212 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 59 об.; ЦГВИА, ф. 2000, д. 3778, лл. 329—329 об; «Тифлисский листок», 1910, 14 августа.

213 «Մշակ», 2 նոյեմբերի 1910 թ., էջ 2։

կուի խանություն, դրսևորելով Ռուսաստանի հարևանության մեջ գտնվող այդ փոքրիկ կիսաանկախ խանությունը անեքսիայի ենթարկելու ձգտում։ Թեև ցարական արտաքին գործերի մինիստրությունը հայտարարեց Բ. Դոանը, որ թուրքական զորքերի գործողությունները Մակուի խանության սահմաններում կդիտվի որպես Ռուսաստանի դեմ ուղղված ոչ բարեկամական ակտ[214], սակայն այդ առաջադրությունը ոչ մի տպավորություն չգործեց Ստամբուլի վրա։ Ընդհակառակը, սահմանային նիֆտոն գյուղը գրավելուց հետո, թուրքական զորքերը հարձակողական գործողություններ սկսեցին Յարիմ-Քայի և Բուլաղ-Բաշիի ուղղությամբ[215], այսինքն՝ սկսեցին խորանալ դեպի խանության կենտրոնական շրջանները։ Երիտթուրքերը լուրեր էին տարածում, թե իբր Ռուսաստանի, Անգլիայի և Թուրքիայի միջև կնքվել է գաղտնի համաձայնություն Իրանը բաժանելու մասին և Թուրքիային բաժին է ընկել սահմանամերձ իրանական տերիտորիաները, այդ թվում նաև Մակուի խանությունը[216]։ Այդ լուրերը հաստատանման դարձնելու համար վկայակոչվում էր այն փաստը, որ Ռուսաստանը մերժեց սարդարի՝ Թուրքիայից փախած քրդերին ռուսական հովանավորության տակ վերցնելու առաջարկը և ոչ մի միջոցառում չի ձեռնարկում ծավալվող թուրքական ագրեսիայի դեմ[217]։

Ռուսաստանի համար սարատեգիական առաջնակարգ նշանակություն ունեցող Մակուի խանությունում գրությունը առավել վտանգավոր բնույթ էր ստանում. Մակուի սարդար Մուրթեզա Ղոլի խանը դրսևորում էր Թուրքիային մերձենալու և նրա հետ համագործակցելու բացահայտ տենդենցներ։ Այդ հայտնի ռեակցիոնները, որն իր խանությունում և հարևան շրջաններում հանդես էր գալիս որպես հեղափոխականների արյունոտ դահիճ, ցանկանում էր օգտվել թուրքական զորքերի ծառայություններից իր խանությունում հեղափոխական շարժումը խպառ արմատախիլ անելու համար։ Եվ

---

214 «Турецко-персидская пограничная спорная полоса», стр. 81.

215 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, л. 81 об.

216 Նույն տեղում, թ. 134—14։

217 Նույն տեղում։

ապա սարդարը մշտական երկյուղ էր կրում, որ Ռուսաստանը վերջիվերջո կարող է զավթել իր խանությունը և զրկել իրեն սարդարի իր «պապենական» իրավունքներից։ Իրենց հերթին թուրքական իշխանությունները, որոնք ուշի-ուշով հետևում էին սարդարի քաղաքական տրամադրությունների մակընթացություններին և տեղատվություններին, առաջնորդվելով իրանական առավել ռեակցիոն և հակահեղափոխական տրամադրություններ ունեցող ֆեոդալներին իրենց կողմը գրավելու տակտիկայով, ակտիվորեն փնտրում էին Մակուի սարդարի հետ առավել լայն համագործակցության ելքեր։ Այդ նպատակով նրանք նախապես երաշխիք տվեցին Մուրթեզա Ղոլի խանին, որ խանությունում թույլ չեն տա հեղափոխականների գործունեությունը[218]։ Վանի վալիի հանձնարարությամբ 13 և 14-րդ համիդիե գնդերի հրամանատար Մուհամմեդ Սիդիկ բեյը ժամանեց Մակու և սարդարին հրավիրեց Վան «բարեկամական բանակցություններ» վարելու համար։ Ռուսական իշխանություններին թեև հաջողվեց ստիպել սարդարին չմեկնել Վան[219], սակայն նրանք ի վիճակի չեղան խզել սարդարի գաղտնի կապերը Թուրքիայի հետ։

Թուրքական զորքերի շարժումը դեպի Մակու Ռուսաստանի դեմ ուղղված մարտահրավերի սպառնալիք էր, մանավանդ որ Գերմանիան գաղտնապես աջակցում էր այդ խանությունը Թուրքիային միացնելու երիտթուրքական կառավարության ջանքերին։ Այդ ուղղությամբ հատկապես ակտիվորեն գործում էր Թեհրանում գերմանական միսիայի ռազմական կցորդ կապիտան ֆոն Կաննիցը, որը անձամբ հաճախակի այցելություններ էր կատարում սարդարին[220]։

Տագնապի առաջին աղդանշանը տվեցին կովկասյան իշխանությունները։ Նրանց նախաձեռնությամբ արտաքին գործերի մինիստրությունը հանձնարարեց Գոլուբինովին մեկնել Մակուի խանություն պարզելու համար նրա ներքին քաղաքական վիճակը և խանությանը սպառնացող թուրքական վտանգի բնույթը։ Իր պաշտոնական զեկուցագրում Գոլուբինովը անում էր հետևյալ եզրակացու-

---

218 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, л. 6.

219 Նույն տեղում, թթ. 6—7։

220 Նույն տեղում, թ. 8։

թյունները. 1) Եթե Ռուսաստանը չկասեցնի թուրքերի հարձակողական գործողությունները Սուլդուզից և Սալմաստից հյուսիս, դեպի Մակուի խանություն, հեռու չի լինի այն պահը, երբ Արարատը կդադարի սահման ծառայել երեք պետությունների միջև և նրա ստորոտում ռուս-իրանական սահմանը կփոխարինվի թուրք-ռուսական սահմանով։ 2) Սահմանների այդպիսի փոփոխությունը բացասաբար կազդի Ռուսաստանի ստրատեգիական և քաղաքական դիրքերի վրա։ 3) Սահմանային հարցում Ռուսաստանի յուրաքանչյուր թողտվություն կործանարար ազդեցություն կունենա ռուսական հեղինակության վրա Իրանում։ 4) Ռուսաստանի քաղաքական շահերը պահանջում են Մակուի և Թուրքիայի սահմանում պահպանել ստատուս-քվոն[221]։

Իր զեկուցագիրը Գոլուբինովը ավարտում էր հետևյալ կերպ. «Եթե ներքին խառնաշփոթություններից հյուծվող պարսկական կառավարությունը ի վիճակի չէ իր տերիտորիան պաշտպանել թուրքական ոտնձգություններից, ապա Ռուսաստանը պետք է հայտարարի Թուրքիային՝ «ձեռքերդ հեռու Պարսկաստանից»։ Որքան շուտ և վճռականորեն ասվի այդ խոսքը, այնքան քիչ կտուժեն Ռուսաստանի քաղաքական շահերը Միջին Արևելքում»[222]։

Ռուսական արտաքին գործերի մինիստրությունը հանձնարարեց Ստամբուլում իր դեսպանին սպառնալից առաջադրություն կատարել Բ. Դռան առջև։ Իր 1910 թ. հուլիսի 25-ի նամակով Չարիքովը հայտնում էր. «Այսօր արտաքին գործերի մինիստրին հանձնեցի մի խիստ հուշագիր Մակուի մասին։ Կարծես մինիստրը հասկացավ, որ չի կարելի ձեռք տալ այդ խանությանը։ Նա հայտարարեց ինձ, որ կառավարությունը ոչ մի այնպիսի բան թույլ չի տա, որը մեր կողմից մեկնաբանվի որպես թշնամական արարք Թուրքիայի կողմից[223]։

Այսպիսով, Մակուի խանության վերաբերյալ Ռուսաստանի դիվանագիտական ճնշման արդյունքը միանգամայն դրական էր։ Ժա-

---

221 Նույն տեղում, թթ. 81հ, 83հ, 84։

222 Նույն տեղում, թ. 84։

223 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 38, л. 52.

մանակավորապես դադարեցվեց Թուրքերի հարձակողական շարժումը ինչպես Մակուի, այնպես էլ Ավաջիկի խանության ուղղությամբ։ Թուրքական կառավարության այս նահանջը կարելի է բացատրել թերևս նրանով, որ Ստամբուլում համոզվեցին, որ Ռուսաստանը երբեք չի հանդուրժի այդ խանության օկուպացումը։ Ամենայն հավանականությամբ Թուրքական դիվանագիտությանը հայտնի էր նաև, որ ռուսական քաղաքական գործիչների զգալի մասը, այդ թվում նաև Ստամբուլում ռուսական դեսպանը, առաջարկում էին կառավարությանը Մակուի խանությունում Թուրքական զորքերի գործողություններին հակազդել ռազմական միջոցառումներով, ընդհուպ մինչև խանության ժամանակավոր օկուպացիան[224]։

Յարական կառավարող շրջաններում այս հաջողությունը գնահատվեց որպես քաղաքական կարևոր նշանակություն ունեցող հաղթանակ։ Ռուսական դիվանագետները գտնում էին, որ հիմքեր կան կարծելու, որ Ռուսաստանի միջամտությունը իրանական տերիտորիայի անձեռնմխելիությունը պաշտպանելու հարցում անպայման արձագանք կգտնի նաև Թեհրանում և «կնպաստի Ռուսաստանի նկատմամբ անբարյացակամորեն տրամադրված քաղաքական շրջաններում բարեկամներ ձեռք բերելուն»[225]։

Սակայն այդ հաջողությունը ամրապնդելու համար անհրաժեշտ էր ուժեղացնել Ռուսաստանի ազդեցությունը Մակուի սարդարի վրա և ամենակարևորը՝ Մակուում անհապաղ հիմնել ռուսական փոխ-հյուպատոսություն[226]։

Դեսպան Զարիքովը գտնում էր, որ Օսմանյան կայսրության ներքին քաղաքական իրավիճակը և բարդ միջազգային դրությունը հնարավորություն են տալիս Ռուսաստանին ավելի կտրուկ հարվածել Իրանում Թուրքիայի վարած քաղաքականությանը։ Արտաքին գործերի մինիստրին ուղղված հեռագրերում նա նշում էր. «Ինձ թվում է, որ Արևմուտքում Թուրքիայի այժմյան դժվարությունները (խոսքը վերաբերում է Կրետական ճգնաժամին—Վ. Բ.) բարե-

---

224 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 34, лл. 95—96.
225 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, лл. 31 об—32.
226 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 337.

նպաստ իրադրություն են ստեղծում Ուրմիայի հարցում Բ. Դոան վրա ազդելու համար»[227]։

Սակայն դեսպանի առաջարկությունները այս անգամ ևս չարժանացան արտաքին գործերի մինիստրության լուրջ ուշադրությանը, և ցարական դիվանագիտությունը ապաշնորհ կերպով ձեռքից բաց թողեց բարենպաստ մոմենտի ընձեռած հնարավորությունը։

Մակուի խանությունը գավթելու փորձերը ձախողման մատնվելուց հետո Թուրքիան վերստին ակտիվացրեց իր գործողությունները Ուրմիայի ուղղությամբ։ Մեկնաբանելով այդ փաստը, Ստամբուլում իրանական դեսպան Միրզա Ռիզա խանը, որը սերտ հարաբերությունների մեջ էր Զարիքովի հետ, այն տեսակետն էր հայտնում, թե դա հետևանք է այն բանի, որ թուրքական կառավարությունը համարյա համոզված է, որ «Պետերբուրգի կաբինետը չի պաշտպանի Իրանին», որովհետև Թեհրանի քաղաքական շրջաններում առկա են հակառուսական ուժեղ տրամադրություններ[228]։

Դեսպանի այս հայտարարությունից կարելի էր եզրակացնել, որ թուրքական կառավարող շրջաններում պարզորոշ գիտակցում էին, որ Պետերբուրգը աշխատում է օգտագործել թուրքական ագրեսիայի հարցը իրանական կառավարության և հատկապես Մեջլիսի ու հեղափոխական շրջանների վրա ճնշում գործադրելու նպատակով։

Իր ղեկավարությանը հաղորդելով շահական դեսպանի վերոհիշյալ տեսակետը, Զարիքովը կարծիք էր հայտնում, որ չի կարելի անտարբեր դիրք գրավել Ուրմիայի շրջանում թուրքիայի անօրինական գործողությունների նկատմամբ, որ դա Ռուսաստանի շահերի տեսակետից միանգամայն վտանգավոր երևույթ է։ Ընդհակառակը, այդ իրադարձություններին միջամտելը, դեսպանի կարծիքով, հնարավորություն կտար նաև Իրանում շահելու քաղաքական կապիտալ, որովհետև նախ Ռուսաստանը ավելորդ անգամ կապացուցեր, որ վճռականորեն պաշտպանում է Իրանի տերիտորիալ ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը և ապա կհամոզեր

---

227 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, лл. 289 об.—290.

228 АВПР, ф. «Политархив», 1910, д. 1038, лл. 98—99.

պարսիկներին, որ ռուսները ոչ միայն չեն ցանկանում նվաճել, օկուպացնել կամ մասնատել Իրանը, այլ ընդհակառակը, հոգ են տանում նրա անձեռնմխելիությունը պաշտպանելու համար։

Այս տեսակետը պաշտպանում էին նաև ցարական մի շարք այլ դիվանագետներ, որոնք առավել հավաստի ինֆորմացիա ունեին Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական իրադրության մասին։ Օրինակ, Ս. Օլֆերևի կարծիքով Թուրքերի կողմից իրանական տերիտորիայի գրավումը քրդերի շրջանում անպայման կբարձրացներ Թուրքիայի հեղինակությունը, որը դժվար թե համապատասխաներ Իրանում Ռուսաստանի ուղղակի շահերին, որովհետև «հայկական և քրդական հարցերը, նրանցից յուրաքանչյուրը առանձին վերցրած և իրար հետ փոխկապակցության մեջ Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար ունեն առաջնակարգ նշանակություն»[229]։

1910 թ. ամռանը թուրքական զորքերը հսկողություն սահմանեցին Թավրիզ, Քերմանշահ և Ուրմիա տանող բոլոր ճանապարհների վրա և առևտրական քարավաններից սկսեցին գանձել ծանր մաքսատուրքեր և հարկեր։ Դա անշուշտ տնտեսական լուրջ հարված էր հասցնում իրանական վարչությանը, զրկելով նրան եկամտի կայուն աղբյուրներից։ Ավելին, վարչական իշխանությունը իրանական աստիճանավորների ձեռքից խլելու նպատակով, թուրքերը իրենց տեղական դրածոներից սկսեցին նշանակել նահանգապետներ[230]։ Բացի այդ, մի շարք օկուպացված քաղաքներում թուրքական հրամանատարության կողմից նշանակվեցին զինվորական գայմագամներ (պարետներ)[231]։

Այդ պատճառով 1910 թ. հոկտեմբեր-նոյեմբերին սահմանակից շրջաններում թուրքական զորքերի և իրանական վարչության ջոկատների միջև սկսվեցին արյունալի ընդհարումներ[232]։ Մոհթեշամ-ուս-Սալթանեին փոխարինած Ուրմիայի նոր նահանգապետ

---

229 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, лл. 53—54.

230 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 298, лл. 6—7, 15; ф. 521, д. 492, л. 6.

231 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 2 об.

232 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 298, л. 7.

էջլալ-օլ-Մոլքը իր շուրջը համախմբելով ասորիներին, հայերին, ադրբեջանցիներին, կարափափախներին և առհասարակ հակաթուրքական տրամադրություններ ունեցող տեղական ողջ բնակչությանը կազմակերպեց դիմադրության ուժեղ շարժում թուրքական զավթիչների դեմ[233]։ Միաժամանակ օկուպանտների դեմ ուժգին պայքար ծավալեցին տեղական հեղափոխական ֆիդայիները։ Այդ առթիվ կովկասյան մամուլի թղթակիցները գրում էին. «Ֆիդայիների գործունեությունը թուրքական ռեժիմից դժգոհ բոլոր տարրերին համախմբելու ուղղությամբ դառնում է ավելի ուավելի ակնառու։ Վերջերս ֆիդայիի կողմից Ուրմիայում թուրքական հյուպատոսի դեմ կատարած մահափորձը հանդիսանում է ընդհանուր դժգոհության արդյունք։ Ասորիներին, և ընդհանրապես լեռնային ռազմաշունչ ցեղերին, ֆիդայիները առատորեն մատակարարում են զենքով, որը բերվում է Քերմանշահի և Բենդեր-Աբբասի վրայով»[234]։ Անդրադառնալով այդ իրադարձություններին, 1910 թ. նոյեմբերին Ստամբուլից Զարիքովը հեռագրում էր արտաքին գործերի մինիստրությանը. «Պարսկաստանի և Թուրքիայի միջև ներկայումս սկսվել է սուր զինված պայքար թուրքերի կողմից օկուպացված հողերի համար»[235]։

Կովկասի ռազմական շրջանի շտաբի հետախուզական բաժնի տեղեկությունների համաձայն 1910 թ. աշնանը և ձմռանը, թուրքական և իրանական զորքերի միջև արյունահեղ այդ ընդհարումների ժամանակ թուրքերը ունեին զգալի մարդկային կորուստներ, որը նրանք բացատրում էին նրանով, թե իբր այդ ընդհարումների ժամանակ իրենք գործ են ունեցել պարսկական սարբազների հագուստ հագած ռուսական զորքերի հետ[236]։ Ուրմիայում թուրքական գործի հաջողության համար ստեղծվել էր բավականին լուրջ վիճակ։ Այդ պատճառով Ստամբուլը դիմեց վճռական քայլերի։ Նախ մեծ վեզիրը հրամայեց Իրան ուղարկել 3000-անոց մի ջոկատ և

---

233 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 2—3, 93, 96—97, 111—112.

234 «Тифлисский листок», 1910, 31 декабря.

235 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, л. 518.

236 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, л. 132.

բացի այդ Բաղդադից, Բիթլիսից, Վանից և Մուշից սահմանի երկայնքով կենտրոնացվեցին ավելի քան 20 տարբեր լրացուցիչ զորքեր[237]։ Այնուհետև թուրքական կառավարությունը որոշեց իրանական քրդերի շրջանում բորբոքել հակակառավարական ուժգին շարժում և նրանց օգտագործել թուրքերի դեմ պայքարող բնակչությանը ահաբեկելու և Քրդստանի սուննիթ բնակչությունից մեծ և ուժեղ բանակ կազմակերպելու համար[238]։ Այդ նպատակով այս անգամ առաջին պլանի վրա քաշվեց Շամդինանի շեյխ Աբդուլ Ղադերը։ Վերջինս երիտթուրքական հեղաշրջումից հետո սկզբնական շրջանում հանդիսանալով քրդական հակակառավարական օպոզիցիայի պարագլուխը, շուտով անցավ երիտթուրքերի կողմը և սկսեց ծառայել նրանց։ Իրանական քրդերի շրջանում հակակառավարական շարժում ծավալելու և պրոթուրքական ագիտացիա մղելու համար նա Ստամբուլից ստացավ խոշոր գումար և ժամանեց իրանական Քրդստան։ Օգտագործելով քրդերի շրջանում ունեցած իր մեծ հեղինակությունը և շրջանառության մեջ դնելով թուրքական ոսկիները, Աբդուլ Ղադերին հաջողվեց Ուրմիայի քրդերի մեծամասնությանը տրամադրել իրանական կառավարության դեմ[239]։ Նրա ջանքերով թուրքերի կողմն անցավ ամբողջ բեկզադե ցեղը, շեքքաքների մի մասը և այլն[240]։ Շամդինանի շեյխի հանձնարարությամբ Պիտեր Էլլոուն Ուրմիայի շրջանում սկսեց զբաղվել իրանական կալվածատերերի հողերի գնումով, որպեսզի դրանք հռչակվեն «թուրքական տերիտորիաներ»։ Նրանք, ովքեր հրաժարվում էին վաճառել իրենց հողերը, ենթարկվում էին հալածանքների, իսկ նրանց կալվածքները կողոպտվում և այրվում էին։ Ուրմիայի թուրքական հյուպատոսությունը հայտարարեց, որ բոլոր ցանկացողները հյուպատոսությունից կարող են ստանալ ազգային թուրքական անձնագիր[241]։ Սա ուղղակի կոչ էր այն մասին, որ հալածանքներից փրկվելու միակ ելքը թուրքական քաղաքացիություն ընդունելն է։

---

237 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 298, лл. 7, 15.

238 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 30.

239 АВПР, ф. «Миссия в Персии», 1910, д. 60, лл. 10—11; ф. «Политархив», 1910, д. 1038, л. 77; ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, лл. 336—337.

240 ЦГВИА, ф. 2000, д. 60, л. 310.

241 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 22.

Ստամբուլը որոշեց նաև ճնշում գործադրել շահական կառավարության վրա, որպեսզի վերջինս աղդի Ուրմիայի դիմադրության շարժման մասնակիցների վրա, թուրքական զորքերի դեմ պայքարը դադարեցնելու համար։ Այդ նպատակով շահական կառավարությանը ներկայացվեց վերջնագիր, որի մեջ ասվում էր, որ եթե մեկ ամսվա ընթացքում չդադարեցվեն Ուրմիայի շրջանում սկսված «խառնակությունները» և չբավարարվեն թուրքահպատակների պահանջները, ապա Բ. Դուռը կհրամայի հալածանքներ սկսել Թուրքիայում բնակվող երեք հարյուր հազար իրանահպատակների նկատմամբ[242]։ Այս վերջնագիրը ավելի ազդու դարձնելու համար թուրքական կառավարությունը արգելեց պարսիկներին ուխտագնացություն կատարել Օսմանյան կայսրության տերիտորիայում գտնվող շիիթների սրբազան վայրերը՝ Քարբալա և Նաջաֆ[243]։

Թեև ի պատասխան այս վերջնագրի շահական կառավարությունը ֆետվան բողոք հայտնեց Թուրքիայի «ոչնչով չարդարացվող անօրինական գործողությունների դեմ» հայտարարելով, որ այդ «խառնակությունների» ողջ պատասխանատվությունը ընկնում է օսմանյան կառավարության վրա, բայց և ոչ մի օգնություն չցուցաբերեց Ուրմիայի շրջանում սկսված հակաթուրքական շարժմանը։ Իսկ Ռուսաստանը սահմանափակվեց նրանով, որ Ստամբուլում իր դեսպանի միջոցով բացատրություն պահանջեց Բ. Դռնից։ Ռիֆաաթ փաշան պատասխանեց Զարիբովին, որ թուրքական զորքերը ետ կկանչվեն Ուրմիայի նահանգից միայն այն ժամանակ, երբ տեղական իրանական իշխանությունները ի վիճակի լինեն այնտեղ ապահովել կարգ ու կանոնը[244]։

1910 թ. երիտթուրքական կառավարությունը կրկին Անգլիայի և Ռուսաստանի առջև հարց բարձրացրեց Իրանում «հավասար իրավունքներ» ունենալու, այլ կերպ ասած՝ Թուրքիային ևս Իրանի բաժանման մեջ մասնակից դարձնելու վերաբերյալ։

Վանի վալի Բեքիր Սամի բեյը, օրինակ, ռուսական հյուպա-

---

242 «Тифлисский листок», 1910, 19 сентября.

243 Նույն տեղում, 12 հոկտեմբերի 1910 թ.։

244 АВПР, ф. «Политархив», 1910, д. 1038, лл. 99—100.

տոսի հետ զրույցների ժամանակ «պլատոնական մտքեր էր արտահայտում Պարսկաստանի բաժանման անհրաժեշտության մասին. Ռուսաստանի, Անգլիայի և Թուրքիայի միջև»[245]։ Ս. Օլֆերևին ոչինչ չէր մնում, եթե ոչ հիշեցնել, որ Իրանի «տերիտորիալ անձեռնմխելիությունը երաշխավորված է 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով»[246]։ Այս շրջանում թուրքական մամուլում մեծ քանակությամբ հոդվածներ էին տպագրվում Իրանի վերաբերյալ, որոնցում փորձեր էին արվում ապացուցելու, որ Թուրքիայի համար իրանական հարցը կյանքի ու մահու հարց է[247]։ «Չպետք է մոռանալ,— գրում էր, օրինակ, «Թանին» լրագիրը,— որ օսմանյան դրոշակը մի ժամանակ ծածանվում էր Թավրիզի վրա, որ Ատրպատականի միլիոնավոր բնակիչները նույն թուրքերն են և արյունով, և կրոնով, և լեզվով»[248]։

Ռուսական քաղաքական շրջաններում գտնում էին, որ Իրանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության ակտիվացման հարցում գոյություն ուներ ներքին համաձայնություն երիտթուրքական կառավարության և Գերմանիայի միջև։ Դա հիմնավորվում էր բազմաթիվ փաստարկներով։ Նախ, որ առանց Գերմանիայի աջակցության Թուրքիան չէր համարձակվի Իրանի դեմ սկսել այդքան լայն կամպանիա։ Այդ հարցի առթիվ գրված զեկուցագրերից մեկում ասվում էր. «Չնայած Բալկանյան թերակղզում և Կրետե կղզում Թուրքիայի ապրած ծանր քաղաքական վիճակին, եվրոպական կոնցերտում այդ թույլ պետությունը իր գերմանական հովանավորողի հավանությամբ Արևմուտքում իր կորուստների դիմաց իրեն վարձատրում է Արևելքում նոր զավթումներով»[249]։ Ցարական զինվորական շրջաններին հայտնի էր, որ Գերմանիայի արևելյան սահմանների մոտ Ռուսաստանի զինված ուժերը թուլացնելու և առհասարակ ապագա ռուս-գերմանական պատերազմի դեպքում ռուսական ուժերը Եվրոպայից շեղելու նպատակով գերմանական կառավարու-

---

245 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 259.

246 «Турецко-персидская пограничная спорная полоса», стр. 80.

247 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, лл. 53—54.

248 «Մշակ», 26 հոկտեմբերի 1910 թ., էջ 2։

249 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, лл. 83 об.—84.

թյունը աշխատում է Ռուսաստանի համար լուրջ սպառնալիք ստեղծել Կովկասում և Իրանում։ Այդ պատճառով նա հետևողականորեն պահանջում էր Բ. Դռնից ավելացնել զորքերի թիվը կայսրության արևելյան վիլայեթներում և հատկապես Արևմտյան Հայաստանի ռազմական թատերաբեմում։ Ընդառաջելով այդ պահանջներին, թուրքական ռազմական մինիստրությունը 1910 թ. կրկնապատկեց չորրորդ բանակային կորպուսի սվինների թիվը, 1911 թ. աշնանը այն հասցնելով մոտ 70 հազարի[250]։ Միաժամանակ ուժեղացվեցին թուրք-իրանական սահմանների մոտ կենտրոնացված զինված ուժերը։ 1910 թ. հոկտեմբերի 14/27-ի գաղտնի հեռագրում Զարիֆովը Ստամբուլից հաղորդում էր, որ իրանական գործերում Ռուսաստանի նկատմամբ թշնամական քաղաքականության նախաձեռնությունը գալիս է Գերմանիայի ազդեցության տակ գտնվող ռազմական մինիստր Մահմուդ Շևքեթ փաշայից[251]։

1910 թ. վերջերին Թուրքիայում կրկին սկսեցին լուրեր պտտվել Ռուսաստանի հետ մոտալուտ պատերազմի մասին։ Ընդ որում, շեշտվում էր, որ կոնֆլիկտը բորբոքվելու է Իրանի համար։ Երիտթուրքական կենտրոնական կոմիտեն հենց ինքն էր ընթացք տալիս այդ լուրերին[252]։ Թուրքական կառավարությունը աշխատում էր Ռուսաստանի հետ ռազմական բախման դեպքում նրա դեմ ուժի հանել նաև Աֆղանստանին։ Դեռևս 1909 թ. թուրքական սպաները ռազմական-հրահանգչական գործունեություն էին ծավալել աֆղանական բանակում[253]։ Իսկ 1910 թ. ապրիլին Քաբուլ ժամանեցին երիտթուրքական չորս էմիսարներ, որոնք զբաղվել էին Աֆղանստան Ռուսաստանի դեմ պրոպագանդա ծավալելու համար։ Նրանց հանձնարարված էր նաև առաջարկել աֆղանական կառավարությանը Թուրքիայի հետ կնքել սրբազան դաշինք Ռուսաստանի դեմ[254]։

---

250 «Военный сборник», СПб., 1911, № 12, стр. 91; «ИШКВО», 1910, № 28, стр. 73.

251 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, л. 447.

252 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 298, л. 15.

253 ЦГВИА, ф. 2000, д. 1020, л. 32.

254 ЦГВИА, ф. 2000, д. 3778, лл. 440 об.—441.

Թուրքական կառավարող շրջաններում ավելի ու ավելի հաճախակի էր խոսվում Իրանի վերաբերյալ հատուկ գերմանա-թուրքական համաձայնագիր կնքելու մասին։ Կառավարական շրջանների հետ կապված պաշտոնական մամուլը այդ մասին գրում էր միանգամայն բացահայտ։ Այսպես, 1910 թ. հուլիսի 24-ի համարում «Le Jeune Turc» թերթը հրապարակեց մի հոդված «Պարսկական հարցը և Թուրքիան» վերնագրով, որտեղ Ռուսաստանի հասցեին արվում էին չարամիտ հարձակումներ և կոչ էր արվում իրանական գործերի վերաբերյալ հատուկ համաձայնագիր կնքել Գերմանիայի հետ[255]։

Լոնդոնի կաբինետի դիմումը Թեհրանի կառավարությանը, որտեղ պահանջվում էր եռամսյա ժամկետում վերականգնել Հարավային Իրանի առևտրական հանապարհների անվտանգությունը, Թուրքիայում ընկալվեց որպես վերջնագիր Իրանի բաժանման վերաբերյալ։ Ստամբուլում սկսվեցին ազմկալի բողոքի ցույցեր[256]։ Հեռագրերի տարափ սկսեցին տեղալ Վիլհելմ II-ի անունով, որոնցում խնդրվում էր «փրկել» Իրանը Անգլիայից և Ռուսաստանից։

Երիտթուրքերի կազմակերպած այդպիսի միտինգներում և ցույցերում բուռն հառերով հանդես էր գալիս նաև հայտնի պանթուրքիստ, ռուսահպատակ Աղաևը[257]։ Ռուսաստանի շուրջը բոլոր կողմերից կրակե օղակ ստեղծելու նպատակով թուրքական կառավարությունը որոշեց ավելի նպատակասլաց օգտագործել պանիսլամիզմի գենը։ Բաղդադում ռուսական փոխհյուպատոս Օրլովը հայտնում էր Չարիքովին, որ թուրքական իշխանությունների հրահանգով Նաջաֆի արաբական մուշտեհիդները համոզում են իրանական ամենաազդեցիկ մուշտեհիդ Սեյիդ Քյազիմ Յեզդիին Իրանում ծավալել հակառուսական ագիտացիա և հրապարակել մահմեդականների միավորման մասին հատուկ ֆեթվա։ Թեև Սեյիդ Քյազիմը հրաժարվեց կատարել այդ պահանջը, սակայն, գտնվեցին մուշտեհիդներ, որոնք մեղանչելով իրականության դեմ և դավա-

---

255 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, лл. 285—286.

256 *E. Browne*. The Press and Poetry of Modern Persia, pp. 326—327

257 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, лл. 447—447 об.

ճանելով իրենց ազգային շահերին շահական կառավարությանը և Մեջլիսին հեռագրում էին. «Մահմեդականների միավորումը արդեն տեղի է ունեցել և եթե ձեզ ինչ-որ բան անհրաժեշտ է երկրում վերափոխություններ անց կացնելու համար, դիմեցե՛ք Թուրքական կառավարությանը և նա կօգնի ձեզ։ Անհավատներից մեր փրկությունը բոլոր մահմեդականների միավորման մեջ է»[258]։

Գերմանական իմպերիալիզմը մեծագույն եռանդով և հետևողականությամբ շարունակում էր խրախուսել Թուրքիայի ելույթները Անտանտի՝ իր հակառակորդների դեմ։

Իրանում անգլո-ռուսական դիրքերի դեմ (հատկապես այդ պետությունների կողմից Իրանի հարավային և հյուսիսային շրջանների օկուպացումից հետո) կատաղի կամպանիա էր ծավալել պանգերմանական մամուլը։ Նա արտաքին գործերի մինիստրությանը հրավիրում էր ավելի եռանդուն քաղաքականություն, հիմնավորելով այդ նրանով, որ Գերմանիան չափազանց շահագրգռված է Իրանի ճակատագրով։ Ավստրո-հունգարական մամուլը ավելի էր բորբոքում գերմանա-թուրքական միլիտարիստական շրջանների կրքերը, հայտարարելով, որ Գերմանիան և Թուրքիան չեն կարող անտարբեր մնալ Իրանի բաժանմանը Անգլիայի և Ռուսաստանի կողմից[259]։

1910 թ. Գերմանիան Իրանում նետվեց նոր գրոհի։ Թուրքիան դրա նկատմամբ դրսևորեց կատարյալ համերաշխություն։ Պետք է նշել, որ 1910 թ. Իրանում Գերմանիայի և Թուրքիայի քաղաքականության կոոպերացումը իր մասշտաբներով ու թափով հասավ աննախընթաց չափերի։ 1910 թ. թուրքերի օգնությամբ գերմանացիները ձեռնամուխ եղան իրանական սպաների ռազմական ուսուցմանը։ Սպաների մի մասը մեկնեց սովորելու Ստամբուլի ռազմական դպրոցներում, իսկ Թեհրանում գերմանացիները հիմնադրեցին բարձրագույն ռազմա-ուսումնական հաստատություն[260]։ Գերմանիան կրկին փորձեց Իրանում ձեռք բերել ֆինանսա-տնտեսական

---

258 АВПР, ф. «Политархив», 1910, д. 1039, лл. 199, 203.

259 «Тифлисский листок», 1910, 12 октября.

260 «Русское слово», 1910, 8 апреля.

նվաճումներ և հնարավորության դեպքում այդ ասպարեզում դուրս մղել իր մրցակիցներին։ Գերմանական իմպերիալիզմը հատկապես լայն հարձակում ծավալեց Հյուսիսային Իրանում։ 1909 թ. այնտեղ սկսեց գործել «Մոսսիգ և Շյունեման» ընկերությունը, որը գերմանական «Լևանտյան գծի» բաժանմունքներից մեկն էր։ Հիշյալ ընկերությունը հաջողությամբ դուրս մղեց «պարսկական փոխադրամիջոցների ռուսական բյուրոյին», որն օգտվում էր իրանական ապրանքների փոխադրման մենաշնորհային իրավունքից, և Իրանում սկսեց տարածել մեծ բանակությամբ գերմանական ապրանքներ[261]։ Նույն թվականին իրանական ներքին գործերի մինիստրությունից, այսպես կոչված, «Իրանա-գերմանական ընկերությունը» ստացավ Ուրմիա լճի շահագործման կոնցեսիան։

Գերմանացիները Թավրիզում կառուցեցին նաև մեխանիկական ալրաղաց, կոճակի գործարան, կաորեր, սայլեր, դանակաղ գյուղատնտեսական գործիքներ պատրաստող արհեստանոց և բազմաթիվ այլ ձեռնարկություններ[262]։ Դեռևս 1910 թ. սկզբին գերմանական գործակալությունը համոզում էր իրանական կառավարական շրջաններին մերժել փոխառության վերաբերյալ անգլո-ռուսական առաջարկությունը և փոխառության պայմանագիր կնքել Գերմանիայում։ Այդ նպատակով 1910 թ. մարտին Թեհրան ժամանեց «Դեյչե բանկի» ներկայացուցիչ Սայիդ Ռյութեն, որը սկսեց բանակցություններ վարել գերմանական փոխառության վերաբերյալ։ Ռյութեի միջոցով «Դեյչե բանկը» իրանական կառավարությանը ներկայացնում էր նաև մի շարք կոնցեսիաների պահանջներ։ Մասնավորապես առաջարկում էր Գերմանիային տրամադրել Խանեկին—Թեհրան երկաթուղագծի շինարարության կոնցեսիան, որը Իրանը կապելու էր Բաղդադի երկաթուղու հետ, ինչպես նաև նավթի և այլ հանածոների շահագործման կոնցեսիաներ։ Թուրքիան անմիջապես աջակցություն ցույց տվեց գերմանական այս նախաձեռնությանը։ Թուրքական գործակալությունը Թեհրանի շուկայում և հա-

---

261 *А. Хащаб*, Экономическое положение современной Персии и ее торговля с прочими странами. «Мир ислама», СПб., 1912, т. I, № 2, стр. 171.

262 «Մշակ», 16 հունվարի, 1910 թ.։

սարակական այլ վայրերում սկսեց լուրեր տարածել «գերմանացիների օգտակար գործունեության մասին», ձրի բաժանել թուրքական թերթեր, որոնք աշխատում էին համոզել ընթերցողին, որ Իրանի միակ փրկիչը Գերմանիան է։ «Դեմոկրատական» կուսակցության օրգանները անմիջապես արձագանքեցին դրանց՝ հանդես գալով գերմանական բանկի արած առաջարկությունների օգտին։ «Իրանն նոսուն», օրինակ, ցանկություն էր հայտնում, որ Իրանի բոլոր կոնցեսիաները տրվեն գերմանացիներին[263]։ «Շարք» և «Մեջլիս» թերթերը գերմանական մամուլից արտատպում էին հոդվածներ, որոնցում նշվում էր, որ Իրանի ինքնուրույնության փայլուն ապացույց կարող է լինել այն, որ հակառակ Ռուսաստանի և Անգլիայի արգելքների նա Գերմանիային տրամադրի երկաթուղային կոնցեսիաներ[264]։

1910 թ. հուլիսին իրանական ռազմական մինիստրության պաշտոնական օրգան «Թամադդունը» հայտարարեց, որ «նորաստեղծ կաբինետը իր առջև նպատակ է դրել Իրանի մերձեցումը Գերմանիայի հետ»[265]։ Մեջլիսում ևս դեմոկրատները հանդես էին գալիս շուտափույթ կերպով գերմանիայի հետ մերձենալու, նրան երկաթուղային կոնցեսիաներ տրամադրելու և «Դեյչե բանկի» հետ փոխատվություն կնքելու օգտին։ Սակայն Անգլիայի և Ռուսաստանի հակազդեցության հետևանքով այս անգամ ևս չհաջողվեց Իրանում ձեռք բերել կոնցեսիաներ։ Մեջլիսը ստիպված սահմանափակվեց նրանով, որ որպես փոխհատուցում Գերմանիային իրավունք տրվեց առանց մաքսատուրքեր վճարելու Իրան ներմուծել գերմանական մերենաներ Թավրիզի երկաթե իրերի և արդուզարդի ապրանքների սարքավորման համար[266]։

Սակայն այս անհաջողությունը չվհատեցրեց գերմանական իմպերիալիզմին, մանավանդ, որ Թուրքիայի հետ համագործակցությունը նրան խոստանում էր փայլուն հեռանկարներ։

---

263 «Русское слово», 1910, 13 мая.

264 «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», СПб., 1912, вып. IV, 1910.

265 Նույն տեղում, вып. V, 1910.

266 *Т. С. Короткова,* Иран накануне первой мировой войны, стр. 13—14.

Բացի նրանից, որ Թուրքիան Ուրմիայի շրջանում իր վարած քաղաքականությամբ հարված էր հասցնում Ռուսաստանի տնտեսական շահերին և նպաստում գերմանական գործունեության ծավալմանը, նա ձեռնարկում էր մի շարք այլ միջոցառումներ, որոնք ուղղակի ծառայում էին նաև գերմանական շահերին։ Այսպես, ռուսական դիվանագետների կարծիքով, Թուրքիան աշխատում էր փակել ռուսական ապրանքների մուտքը Ուրմիայի շրջան հօգուտ գերմանական ապրանքների[267] և այդ պատճառով Գերմանիան աջակցում էր նրան ակտիվացնելու իր զավթումների քաղաքականությունը իր համար առաջնակարգ տնտեսական նշանակություն ունեցող այդ նահանգում[268]։ Բացի այդ, թուրքական դիվանագետները բանակցություններ էին վարում Ուրմիա լճի սեփականատեր արքայազն Իմամ Ղոլի միրզայի հետ հօգուտ լճի վրա նավադնացություն սահմանելու վերաբերյալ գերմանական կոնցեսիայի[269], ընդ որում, իմանալով, որ այդ կոնցեսիան աշխատում է վերցնել Ռուսաստանը։

Գերմանիան փորձում էր նաև Թուրքիայի օգնությամբ ողջ իրանական առևտուրը թեքել դեպի Տրապիզոն, շրջանցելով Բաթումը և Պարսից ծոցը[270]։ Այդ ծրագրի իրագործումը նա բնականաբար կապում էր Բաղդադի երկաթուղու և նրա ճյուղավորումների շինարարության հետ։ Գերմանական այս պլանները միանգամայն համապատասխանում էին Օսմանյան կայսրության շահերին և այդ պատճառով 1910 թ. երկու պետություններն էլ սկսեցին ավելի հաճախակի խոսել Թուրքիան Իրանի հետ կապող երկաթուղային շինարարության իրենց պլանների մասին։ Գերմանական և թուրքական մամուլը անմիջապես նետվեցին գրոհի անգլո-ռուսական բլոկի դեմ։ «Պոստը» գրում էր, որ Իրանում անգլիական քաղաքականությունը ձգտում է Մեծ Բրիտանիայի հզորության հրեշավոր ընդլայնման և «անկախ» Բաղդադի երկաթուղու ստեղծման գերմանա-թուրքական

---

267 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 4, 30.

268 АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, л. 518.

269 «Մշակ», 18 ապրիլի 1910 թ., էջ 3։

270 А. К. Фукс, Նշվ. աշխ., էջ 112։

պլանի ոչնչացման[271]։ Իսկ Թուրքական մամուլում հրապարակվող բազմաթիվ հոդվածներում այն միտքն էր առաջ քաշվում, թե նախագծվող ռուսական Ջուլֆա—Թավրիզ—Թեհրան երկաթուղային գծի հետ մրցակցելու համար Թուրքիան պետք է անհապաղ կառուցի Սամսուն—Սիվաս—Էրզրում—Բայազետ—Թավրիզ—Թեհրան գիծը[272]։ Խոսվում էր նաև Թուրքիան Իրանի հետ կապող խճուղային ճանապարհների շինարարության հույժ անհրաժեշտության մասին, որոնցից իր տնտեսական և ռազմական նշանակությամբ առավել կարևորը համարվում էր Վան—Ուրմիա ճանապարհը[273]։

Այս ծրագրերը չէին կարող չանհանգստացնել Ռուսաստանին, մանավանդ որ դրանց իրականացման գործում Գերմանիայից բացի ընդգրկված էր նաև Ֆրանսիան, որը Մերձավոր և Միջին Արևելքում տնտեսական նվաճումների համար ոչ մի խտրություն չէր դնում միջոցների մեջ, ընդհուպ մինչև այն, որ անտեսելով իր դաշնակցային պարտավորությունները Անտանտի նկատմամբ, գործարքների մեջ էր մտնում Գերմանիայի հետ, և ամենագործուն մասնակցություն ցուցաբերում Փոքր Ասիայում երկաթուղային շինարարության և ռուս-թուրքական սահմաններին մոտեցող խճուղային ճանապարհների շինարարության գործին, որոնք անմիջականորեն հարված տակ էին դնում Ռուսաստանի շահերը Մերձավոր Արևելքում։

1910 թ. Ֆրանսիան ևս սկսեց փորձեր կատարել Թուրքիայի օգնությամբ Իրանում գործեր ծավալելու ուղղությամբ, հատկապես աշխատելով ներխուժել ռուսական ազդեցության գոտու ոլորտները։ Այդ նպատակով ֆրանսիական կառավարող շրջանները սկսեցին ուշի-ուշով հետևել Իրանում Թուրքիայի զավթողական քաղաքականության ընթացքին։ 1910 թ. գարնանը Վանից ռուսական փոխհյուպատոսը տեղեկացնում էր իր կառավարությանը, որ իր ձեռքի տակ եղած փաստաթղթերից և արժանահավատ այլ սկզբնաղբյուրներից քաղած տեղեկությունների համաձայն Ֆրանսիայի արտաքին

---

271 «Тифлисский листок», 1910, 12 октября.

272 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 308.

273 Նույն տեղում, թ. 289։

գործերի մինիստրությունը հանձնարարել է Վանում իր փոխ-հյուպատոսին՝ անհրաժեշտ տեղեկություններ տալ թուրքերի գործունեության մասին Իրանում[274]։ Այնուհետև Ս. Օլֆերևը հայտնում էր, որ ֆրանսիական կապիտալը հատկապես մեծ հետաքրքրություն է դրսևորում Արևելյան Անատոլիայի և Իրանի առևտրի նկատմամբ, մտադիր է ավտոմոբիլային խճուղային ճանապարհ կառուցել Տրապիզոնից Ադիլջևազ, որի հետևանքով, ըստ նախնական հաշվումների, մի քանի անգամ կմեծանա Տրապիզոնի և Էրզրումի վրայով արևմտաևրոպական ապրանքների հոսքը դեպի Իրան։ Հաղորդագրության մեջ մասնավորապես նշվում էր, որ թուրքերը արդեն ձեռնամուխ են եղել ֆրանսիական կապիտալի օգնությամբ կառուցելու Վան—Ուրմիա հեռագրական գիծ և խճուղային ճանապարհ, որոնք Թուրքիայի համար ունենալու են կարևոր ստրատեգիական նշանակություն[275]։ Այնուհետև ասվում էր, որ երիտթուրքական կառավարությունը վերոհիշյալ ծրագրերի իրագործումը համարում է առաջնակարգ քաղաքական նշանակություն ունեցող գործ, իսկ Ֆրանսիան շահագրգռված է դրանցում առևտրական-քաղաքական տեսակետից[276]։

Այդ ծրագրերը խափանելու նպատակով փոխ-հյուպատոսը առաջարկում էր շտապ բարեկարգել Էջմիածին—Բայազետ—Վան խճուղին, արգելելու համար Տրապիզոնի վրայով Արևմտյան Հայաստանի և Իրանական Ադրբեջանի շուկաների հեղեղմանը արևմտաևրոպական ապրանքներով։ Նրա կարծիքով այդ միջոցառումը կամրապնդեր նաև Արևմտյան Հայաստանի բարոյական կապը Ռուսաստանի հետ[277]։

1911 թ. աշնանը, հայտնի դարձավ, որ ֆրանսիացիները հետաքրքրություն են ցուցաբերում նաև թուրք-իրանական սահմանամերձ շրջանների հանքային հանածոների նկատմամբ։ Դրանց շահագործման կոնցեսիան ձեռք բերելու նպատակով Շամդինան[278]

---

274 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 206.

275 Նույն տեղում, թ. 289։

276 Նույն տեղում, թթ. 159, 288։

277 Նույն տեղում, թթ. 289։

278 Շամդինանը գտնվում էր Վանի վիլայեթի հարավ-արևելյան մասում և սահմանակցում էր Իրանին։

ժամանեց «ֆրանսիական օտտոմանյան սինդիկատի» ներկայացուցիչ, ինժեներ Հրաչյա Մարալը, որը սկսեց բանակցություններ վարել տեղական շեյխերի հետ[279]։ Թուրքական մինիստրների խորհուրդը որոշեց Շամդինանը վերածել առանձին «մութեսարիֆլիքի» և նրան միացնել Իրանից զավթված հարևան տերիտորիաները[280]։

Այս կապակցությամբ Կովկասի ռազմական շրջանի շտաբի տեղեկագիրը գրում էր. «Վաղուց արդեն հայտնի է, որ Քրդստանում և Թուրքահայաստանում մենք չենք կարող հույս դնել մեր նկատմամբ եվրոպական պետությունների անկեղծ վերաբերմունքի վրա։ Նրանք բոլորը այդ վայրերում հետապնդում են իրենց ծածուկ նպատակները և նախանձով լի են Ռուսաստանի ամենափոքր իսկ հաջողությունների նկատմամբ։ Նույնիսկ ֆրանսիացիները՝ մեր դաշնակիցները, աշխատում են արգելք հանդիսանալ մեր ազդեցության տարածմանը Քրդստանում։ Չի կարելի կասկածել նրանում, որ թուրքերի հաջողությունները Ադրբեջանում շատ ավելի են արժանանում ֆրանսիացիների, գերմանացիների և անգլիացիների համակրանքին, քան այնտեղ մեր ազդեցության ուժեղացումը։ Թուրքերից չեն վախենում, բայց Ռուսաստանի հզորության մեծացումը Քրդստանում մի մղձավանջ է նույնիսկ մեր դաշնակիցների համար։ Այդ ճշմարտության հետ մենք պետք է հաշվի նստենք և Մերձավոր Արևելքի նշված վայրերում աշխատենք կրկնապատկված եռանդով, բացառապես հույս դնելով սեփական ուժերի վրա»[281]։

Վանի փոխ-հյուպատոս Ս. Օլֆերևը արտաքին գործերի մինիստրությանը գրած իր հաղորդագրություններից մեկում մեկնաբանելով դեպի Արևելք շարժվելու Թուրքիայի բուռն ձգտման պատճառները, գտնում էր, որ Ռուսաստանը պետք է պատրաստ լինի կասեցնելու ոչ միայն Թուրքիայի, այլև իր բոլոր հակառակորդների

---

[279] «Сводка сведений... за время с 1-го марта по 1-е апреля 1912 г.», № 19—20, Тифлис, 1912, стр. 4—5.

[280] «Сводка сведений...», 1911, № 3, стр. 5.

[281] «Сводка сведений...», 1912, № 19—20, стр. 2—3.

շարժումը դեպի այն շրջանները, որտեղ նա ունի առաջնակարգ տնտեսական և քաղաքական շահեր։ «Ոչ ոք չի կարող երաշխավորել,—գրում էր փոխ-հյուպատոսը,—որ ոչ հեռու ապագայում Արարատի ստորոտը, որտեղից իջնում են ճանապարհները դեպի Ռուսաստան և Իրան, Թուրքիայի համար ձեռք կբերի ավելի մեծ նշանակություն, քան ամբողջ Մակեդոնիան, որովհետև ամեն ինչ վկայում է այն մասին, որ Թուրքական կայսրության ծանրության կենտրոնը անխուսափելիորեն Արևմուտքից տեղափոխվում է Արևելք։ Միջագետքը, Փոքր Ասիան, Սիրիան, Պաղեստինը պետք է ընդգրկվեն համաշխարհային կյանքի ընդհանուր շրջանառության մեջ։ Դա պատմության հերթական խնդիրն է և այն կիրագործվի»[282]։ Որպես Ռուսաստանի կողմից հակազդող գործոն նա առաջարկում էր շտապ կարգով կառուցել Համադան—Քերմանշահ—Խանեկին երկաթուղին, որը ըստ նրա, հսկայական նշանակություն կունենար Ռուսաստանի առևտրական և քաղաքական ազդեցության ամրապնդման գործում ոչ միայն Իրանում, այլև Օսմանյան կայսրությունում, և հնարավորություն կտար մի կողմից նվաճել նոր շուկաներ, իսկ մյուս կողմից շեղել եվրոպական կապիտալիստների ուշադրությունը Բաղդադի երկաթուղուց[283]։ Ինչպես տեսնում ենք, ցարական դիվանագետը ակնարկում էր այն մասին, որ անհրաժեշտ է անհաղթահարելի պատնեշ կառուցել ոչ միայն գերմանական եղեկիիլի, այլև «բարեկամ» եվրոպական պետությունների դեմ։

* * *

Դեռևս 1909 թ. Թուրքիան ձեռնամուխ եղավ Իրանում օկուպացված տերիտորիաների ամրացման գործին։ Կազմակերպվեց քաղաքացիական վարչություն, որի նպատակն էր ոչ միայն տնտեսական ու քաղաքական տեսակետից յուրացնել այդ տերիտորիաները, այլև շեշտել, որ դրանք այլևս դուրս են եկել շահական կառավարության իրավասությունից։ Օկուպացիոն իշխանությունները սկսեցին բնակչությունից դանձել հողային հարկ, կազմակերպել

282 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 57.

283 Նույն տեղում, թթ. 61, 308։

տեղական վարչության օրգաններ[284], փոստային հաղորդակցություն, նամակագրության գրաքննություն, մի շարք վայրերում հիմնեցին մաքսատներ[285], տեղական խաներից ու կալվածատերերից վարձակալությամբ վերցրին հողեր, անց կացրին բնակչության մարդահամար և այլն։

Բ. Դուրը ծրագրեց զավթված շրջաններում սովորական օկուպացիոն զորամասերը փոխարինել հատուկ սահմանապահ զորքերով («սերհեդ-բյուլյաքաթի»), որոնք անմիջականորեն ենթարկվելու էին սահմանային կոմիսարներին։ Վ. Մինորսկին ենթադրում էր, որ այդ ռեֆորմը նպատակ ունի մեկընդմիշտ վերացնել ակնարկներն այն մասին, որ դրանք օկուպացիայի ենթարկված շրջաններ են և հնարավորություն ստեղծել դրանք Օսմանյան կայսրության մեկ ընդհանուր սահմանի մեջ մտցնելու համար[286]։

1909 թ. նոյեմբերին Վանի նոր կուսակալ (վալի) Բեքիր Սամի բեյը ուղևորություն կատարեց դեպի զավթված շրջանները, կամ նրա արտահայտությամբ «Վանի վիլայեթի նոր սահմանները», այդ շրջաններից հատուկ վարչական միավոր կազմակերպելու համար, որը անմիջականորեն ենթարկվելու էր Ստամբուլին[287]։

Տեղում ծանոթանալով իրավիճակի հետ, վալին կառավարությանը ներկայացրեց ընդարձակ զեկուցագիր՝ անելով մի շարք կոնկրետ առաջարկություններ օկուպացված տերիտորիաների յուրացման գործը արագացնելու վերաբերյալ։ Մասնավորապես նա գտնում էր, որ անհրաժեշտ է անհապաղ փոխել օկուպացիոն զորքերի կազմը, որոնք, նրա արտահայտությամբ, «մինչև վերջին զինվորը գտնվում են սարսափելի բարոյալքված վիճակում և հետևաբար պիտանի չեն այդքան լուրջ քաղաքական միսիայի իրագործման համար, չհաշված այն, որ իրենց վարքագծով նրանք երբեք չեն կարողանա տեղական բնակչության շրջանում բարյացակամ վերաբերմունք ստեղծել Թուրքիայի նկատմամբ»[288]։

---

284 АВПР, ф. «Политархив», 1910, д. 1038, л. 100.

285 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 540, л. 10.

286 «Объезд оккупированных...», стр. 109, 110.

287 АВПР, ф. «Персидский стол», 1909, д. 661, лл. 240—241.

288 Նույն տեղում, թթ. 267—268։

Ստամբուլը անմիջապես ընդառաջեց Բեքիր Սամի բեյի առաջարկությանը։ Թուրքական օկուպացիոն զորամասերը փոխարինվեցին նոր զորքերով, ընդ որում, նշանակալից չափով ավելի բան նախկինում[289]։ Այնուհետև Չիարիքում, Ուշնուում, Սուլդուզում և մի շարք այլ վայրերում հիմնվեցին գայմագամություններ, որոնց վրա դրված էր հիշյալ շրջանների վարչական կառավարման պարտականությունը[290]։ Որպես կանոն գայմագամի պաշտոնում նշանակվում էին սպաները («իդարեի մեմուրի»)։

Ձավթած տերիտորիաները սկզբում անվանեցին «նևահիյե ջեդիդե» (նոր գավառներ), կամ «նևահիյե շարկիե» (արևելյան գավառներ), դրանով իսկ այդ շրջանները հայտարարելով Օսմանյան կայսրության մի մասը։ Սակայն քանի որ «Նևահիյե ջեդիդե» անվանումը հակասում էր Ստամբուլի պնդումներին, թե իբր այդ նահանգները պատմականորեն միշտ էլ պատկանել են Թուրքիային, հիշյալ շրջանները վերանվանվեցին «Նևահիյե մաալումե» (հայտնի գավառներ)[291]։ Այսպես կոչված «հայտնի գավառները» վարչական տեսակետից բաժանվեցին երկու մասի, որոնք համապատասխանաբար գտնվում էին Էրբյանի հարբի (գլխավոր շտաբ) երկու սպաների՝ փոխգնդապետ Բեհջեթ բեյի և գնդապետ Ահմեդ Ռեֆիկ բեյի իրավասության տակ, որոնք կրում էին սահմանային կոմիսարի տիտղոս։ Նրանցից առաջինի կենտրոնը գտնվում էր Վանում, երկրորդինը՝ Մոսուլում։ Բեհջեթ բեյի իրավասության տակ գտնվող շրջանը իր մեջ ընդգրկում էր Չիարիքից մինչև Ուշնու ընկած տերիտորիան, իսկ Ռեֆիկ բեյի տեղամասը տարածվում էր Սուլդուզից մինչև Բանե։

Օկուպացված տերիտորիայի հյուսիսային կեսը գրավված էր չորրորդ բանակային կորպուսի զորքերով և բաժանվում էր երեք գայմագամությունների՝ Չիարիք, Մավանա և Ուշնու։ Հարավային կեսը օկուպացված էր 6-րդ բանակային կորպուսի կողմից և բաղկացած էր Սուլդուզ, Սերդեշտ և Բանե գայմագամություններից։ Օկուպացիոն զորքերի սպաները օգտվում էին որոշակի վարչական

---

289 Նույն տեղում, էջ. 274—275։

290 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, лл. 3—3 об., 18, 24.

291 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1020, л. 35.

իրավունքներից. օրինակ, գայմագամների բացակայության ժամանակ նրանց փոխարինում էին սպաները[292] և այլն։

Հետագայում Թուրքական կառավարության հատուկ որոշմամբ օկուպացված շրջանները հայտարարվեցին Վանի վիլայեթի մեջ մտնող տերիտորիաներ և սկսեցին տալ նույնիսկ պատգամավորներ Թուրքական պառլամենտի համար[293]։ Սակայն այդ տերիտորիաների նկատմամբ վարչական որոշումները կայացվում էին ոչ թե Վանի վալիի, այլ անմիջականորեն Ստամբուլի կողմից[294]։ Սա անշուշտ վկայում էր այն մասին, որ Իրանից գավթված տերիտորիաների յուրացումը կատարվում էր պետական քաղաքականության մակարդակով։

Տեղական բնակչությանը իրանական պետությունից կտրելու և Թուրքիայի կողմը հակելու նպատակով Ստամբուլը որոշեց անց կացնել մի շարք միջոցառումներ։ Նախ, քաղաքացիական վարչության օրգանները սկսեցին խոստանալ գյուղացիներին յոթ տարի ժամկետով հարկեր չգանձել նրանցից[295]։ 1910 թ. հունիսին հայտարարվեց, որ Ստամբուլից ստացված հրամանի համաձայն աղնամայի (անասունների համար գանձվող հարկ) և աշարի (տասանորդ) գանձումը «նևահիյե ջեդիդե» շրջաններում վերանում է։ Կառավարությունը կարգադրեց ամեն ինչ անել տեղական բնակչության համակրանքը շահելու համար[296]։ Այդ առթիվ Ուրմիայի ռուսական փոխ-հյուպատոսը գրում էր. «Թուրքերը ագիտացիա են մղում, թե մի քանի տարում վերացվում է հարկերի գանձումը բնակչության այն հատվածներից, որոնք համաձայն են ամբողջապես անցնել իրենց հպատակության տակ»։ Նրա կարծիքով, թեև այդ միջոցառումը կրում էր փորձնական բնույթ, սակայն, այն կարող էր ունենալ մեծ հաջողություն, որովհետև տեղական բնակչությունը,

---

292 «Объезд оккупированных...», стр. 110.

293 «Сводка сведений... за время с 1-го марта по 1-ое апреля 1912 г.», Тифлис, 1912, № 19—20, стр. 12.

294 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 205.

295 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 138 об; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 85.

296 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 216.

որը «ամենօրյա ակնառու օրինակներից ավելի ու ավելի է համոզվում պարսկական կառավարության անզորության մեջ և այն բանում, որ գնալով թուրքերի ազդեցությունը քրդերի նկատմամբ ուժեղանում է, բնական է, որ վերջիվերջո կգերադասի անցնել ավելի ուժեղների կողմը, որոնք ցանկության դեպքում ի վիճակի կլինեն պաշտպանել իրենց ոչ միայն ամենաահարկու թշնամուց՝ քրդերից, այլև պարսկական կառավարությունից»[297]։

Իրենց համար կայուն սոցիալական հենարան ստեղծելու նպատակով թուրքական իշխանությունները սկսեցին խարխլել նաև իրանական պետության հետ կապված տեղական կալվածատերերի դիրքերը, դուրս մղել նրանց և ընդհակառակը, թուրքահպատակ կամ թուրքոֆիլ քրդական ավագանուց ստեղծել հողատերերի նոր դասակարգ։ Դա կատարվում էր իրանական կալվածատերերի կալվածքները վարձակալելու կամ բռնագրավելու միջոցով[298]։ «...Անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ,—գրում էր Ուրմիայի ռուսական փոխհյուպատոսը,—և թուրքերի կողմից առաջարկվող խոշոր կանխիկ գումարները ստիպում են կալվածատերերին համաձայնվել նման գործարքների հետ, թեև նրանք համոզված են, որ կալվածքները վարձակալությամբ թուրքերին տալը հավասարազոր է նրանց լրիվ կորստին։ Հողատերերը իրավացիորեն գտնում են, որ ավելի լավ է իրենց կալվածքների համար ստանալ նրանց արժեքի տասներորդ մասը, քան դրանք տալ ձրի»[299]։ Նույնիսկ այնպիսի խոշոր հողատեր-կալվածատերեր, ինչպես Աղա-խան Միր Փենջը, Նասիր-ուդ-Դոուլեն, Հաջի Մուսթեշար Լեշքերը և Սալար Մոդաֆֆարը, որոնք սկզբնական շրջանում հրաժարվում էին թուրքերի հետ ունենալ որևէ առնչություն, վերջ ի վերջո ստիպված էին հետևվել մեծամասնության օրինակին և իրենց կալվածքները դնել թուրքական «հովանավորության տակ»։ Ընդ որում, տեղական իրանական իշխանությունները, որոնք տեղյակ էին այդ բոլորին, աչք

---

297 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 70 об—71.

298 Նույն տեղում, թթ. 82—86, „Объезд оккупированных...", стр. 19; ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 7719, л. 75 об.

299 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, лл. 139—139 об.

էին փակում իրանական պետության համար այդ վտանգավոր երևույթների նկատմամբ[300]։ Այն կալվածատերերի հանդեպ, որոնք հրաժարվում էին իրենց կալվածքները «վարձով» տալ թուրքերին, վերջիններս կիրառում էին ռեպրեսիվ քաղաքականություն։ Թուրքական իշխանությունները հրահրում էին նրանց ռայաթներին ապստամբել, հրաժարվել հարկեր մուծելուց և այլն[301]։ Հողատ գանձարանի բռնագրավվում էին նաև շահի կամ արքայազների կողմից տեղական խաներին նվիրատվության կարգով տրված կալվածքները։ Խաները հայտարարվում էին իրենց անշարժ գույքի օրինական սեփականատերեր միայն այն դեպքում, եթե ներկայացնեին համապատասխան փաստաթղթեր այն մասին, որ իրենց պատկանող հողերն ու գյուղերը գնված են, այլ ոչ թե նվիրված[302]։ Այդ հանապարհով թուրքական քաղաքացիական վարչությունը ունեզրկում էր շահական կառավարությանը նվիրված ֆեոդալներին ու աստիճանավորներին և նրանց զրկում ունեցած ազդեցությունից։

Ինչ վերաբերում է թուրքական հովանավորություն ընդունած կամ թուրքերին «դեհալեթ» տված ֆեոդալներին, ապա նրանց հողային տիրույթները հայտարարվում էին Օսմանյան կայսրության տերիտորիաներ։ Այլ կերպ ասած տվյալ տերիտորիայի նկատմամբ իրանական պետության իրավունքները արհեստականորեն փոխարինվում էին հողային սեփականատիրոջ իրավունքներով։ Այդ սկզբունքով, թուրքոֆիլ քրդական մի շարք շեյխերի և խոշոր ֆեոդալների (օրինակ Շամդինանի շեյխ Աբդուլ Ղադերի) ընդարձակ տիրույթները հայտարարվեցին թուրքական տերիտորիաներ[303]։ Հիշյալ սկզբունքի օգնությամբ նոր տերիտորիաներ ձեռք բերելու նպատակով թուրքական իշխանությունները խրախուսում էին քրդական ֆեոդալներին «վարձակալել» կամ բռնագրավել նորանոր հողեր։ Այս տեսակետից թուրքերին հատկապես խոշոր ծառայություններ էր մատուցում երիտթուրքական կառավարության հետ կապ-

---

300 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 65 об, 138 об.

301 Նույն տեղում, թ. 110։

302 Նույն տեղում, թ. 28։

303 Նույն տեղում։

ված, սենատոր Աբդուլ Ղադերը։ Քաջ գիտակցելով, որ միայն շնորհիվ Թուրքիայի զավթողական քաղաքականության ինքը կարող է նոր ստանալ իր այն ժառանգական կալվածքները, որոնք բռնագրավել էր շահական կառավարությունը իր հոր՝ շեյխ Օբեյդուլլայի Իրանական Քրդստան կատարած արշավանքից հետո, Աբդուլ Ղադերը Մերգևերում, Դեշթում, Թերգևերում, Բարադոստում և այլ վայրերում սեփական զինված ջոկատների օգնությամբ ուղղակի զավթում կամ հարկադրում էր իրեն «վարձով» տալ մեծ քանակությամբ գյուղեր և կալվածքներ։

Օկուպացված տերիտորիաներում Թուրքական քաղաքականությունը բազմապիսի միջոցներով սահմանափակում էր շիիթ հողատերերի իրավունքները (օրինակ Սուլդուզի, Բարանդուզի, Սալմաստի շրջաններում) և ընդհակառակը, ընդլայնում էր սուննիթների իրավունքներն ու արտոնությունները։ Խրախուսվում էր սուննիթ կալվածատերերի կողմից շիիթների հողերը զավթելու քաղաքականությունը և վերջիններս իրենց կալվածքները պահպանելու նպատակով ստիպված էին ընդունել սուննիզմը և դառնալ թուրքահպատակներ[304]։ Դիֆերենցված քաղաքականություն էր կիրառվում նաև բուն սուննիթների նկատմամբ։ Միանգամայն այլ էր վերաբերմունքը փոքր և աննշան քրդական աշիրեթապետների և խոշոր ցեղերի բեյերի ու աղալարների նկատմամբ։ Առաջինների հետ թուրքական իշխանությունները համարյա հաշվի չէին նստում։ Սակայն դժվար չէր հասկանալ, որ այն կիսաանկախ վիճակը, որից օգտվում էին քրդական ազդեցիկ կլանների առաջնորդները իրանական իշխանության պայմաններում, միանգամայն ձեռնտու է նրանց և որ այդ ցեղապետները գերադասում են առավել թույլ իրանական ռեժիմը, որը ապահովում է նրանց հինավուրց արտոնությունները։ Այդ պատճառով իշխանություններն աշխատում էին միևնույն ցեղից առաջ քաշել նոր ցեղապետների և առհասարակ հներին փոխարինել այնպիսի մարդկանցով, որոնք իրենց բարձրացումով պարտական լինեին թուրքերին, հետևաբար և հնազանդ լինեին նրանց[305]։

---

[304] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 537, лл. 2—2 об; «Объезд оккупированных...», стр. 23, 114.

[305] «Объезд оккупированных...», стр. 117.

Քաղաքացիական վարչության օրգաններն ամենուրեք պրոպագանդում էին, թե իրենք ցանկանում են ոչնչացնել խոշոր հողատերերի արտոնությունները, իրավահավասարություն ստեղծել աղայի ու ռայաթի միջև, թեթևացնել նստակյաց գյուղացիության վիճակը և այլն։ Այս դեմագոգիան ճշմարտանման դարձնելու համար նրանք ժամանակավորապես թեթևացնում էին հարկերը[306], գյուղացիներին հատկացնում որոշ հողակտորներ, որպեսզի վերջիններս ընկնեն իրենց «ազատարարների» գիրկը և հին կարգերին վերադառնալու միտքը նույնիսկ զզվանք առաջացնի նրանց մոտ։ Ավելի առաջ տանելով իրենց սոցիալական դեմագոգիան, նրանք հայտարարում էին, թե անկեղծորեն ցանկանում են տեղական բնակչությանը ազատել հողատերերի դեսպոտիզմից և իրենց առաջնակարգ խնդիրն է «ազատագրել» նաև սահմանամերձ շրջանների իրանական մյուս տերիտորիաները։ Ի դեպ Բանեի գայմագամ Սուլեյման բեյը այդ անվանում էր «քրդերին սահմանադրական ոգով դաստիարակելու ծրագիր»[307]։ Այս կարգի «տեսությունները» ոչ միայն իրավական տեսակետից արդարացի էին հռչակում իրանական տերիտորիաների զավթումները, այլև զավթիչների գլխին դնում էին «ազատարարի» լուսապսակ։

Հարկ է նշել, որ օկուպացված շրջանների գյուղացիությանը հարկերից ազատելու վերաբերյալ թուրքական պրոպագանդան սկզբնական շրջանում ունեցավ որոշակի հաջողություն։ Դա պայմանավորված էր նրանով, որ շահական իշխանությունների կողմից գյուղացիության անլուր շահագործումը և տեղական նահանգապետների կամայականությունները գյուղացիությանը հասցրել էին ծայրահեղ հուսահատության։ Ուրմիայից ռուսական փոխհյուպատոսը 1910 թ. գարնանը հաղորդում էր, որ Ուրմիայի համար ճգնաժամային օրերին, երբ նրա վրա կախված էր թուրքական օկուպա-

---

306 Վ. Մինորսկին գրում էր, որ զավթած շրջաններում գանձարան մուծվող հողային հարկը տասանորդն էր։ Սակայն թուրքական իշխանությունները հրապարակեցին հրաման, ըստ որի բնակչությանը յոթ տարի ժամանակով, ազատվում էր ամեն տեսակի հարկեր մուծելու պարտականությունից։ Տե՛ս „Объезд оккупированных...", стр. 111.

307 Նույն տեղում, էջ 41։

ցիայի սպառնալիքը, տեղի նահանգապետ Մոհթեշամ-ուս-Սալթանեն կատարում է «հարկային փորձեր»։ Նրա կարգադրությամբ մտցվել է նոր հարկ, որը վաղուց վերացված է Իրանում։ Ուրմիա քաղաքի բոլոր յոթը դարբասների մոտ դրված են հոբումեթի (բաղաքապետարանի) մարդիկ, որոնք քաղաք մտնող բոլոր անասունների տերերից գանձում են յուրաքանչյուրից չորս շահի և բացի այդ 10 շահի յուրաքանչյուր հակից։ «Այսպիսով,—շարունակում էր փոխհյուպատոսը,—վերականգնված է ներքին մաքսերի («բահդարի») սիստեմը»[308]։ Բացի այդ, Մոհթեշամ-ուս-Սալթանեն յուրաքանչյուր նորածինի և մահացածի հարաղատներից գանձում էր 5 ղրան[309]։ Ինչ վերաբերում է Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Մոխբիր-էս-Սալթանեին, ապա վերջինս, զբաղված լինելով հիմնականում նրանով, որ հարստանա Թավրիզում սկսված հացի սպեկուլյացիայից, ոչ մի միջոցառում չէր ձեռնարկում թուրքերի ղավթած տերիտորիաները յուրացնելու դեմ[310]։

Որոշ շրջաններում, որտեղ զավթիչները դեռևս չէին հասցրել քիչ թե շատ կայուն հիմնավորվել, անհնազանդ բնակչության նկատմամբ գործադրում էին բռնությունների քաղաքականություն, որպեսզի նրանց ստիպեն ընդունել թուրքական հովանավորությունն ու «նոր կարգերը»։ Այդպիսի անլուր հալածանքների էին ենթարկվում, օրինակ, Սուլդուզի շրջանի կարապափախները, որոնք հրաժարվում էին հավատարմության թուղթ («մաղբաթա») տալ թուրքերին[311]։

Տեղական բնակչության համախմբվածությունը խաթարելու և հակաթուրքական ելույթները բացառելու նպատակով օկուպացիոն իշխանությունները կիրառում էին ազգամիջյան և միջցեղային հարաբերությունների սրման քաղաքականությունը։ Հակաթուրքական հուզումների մասին ժամանակին տեղեկություններ ստանալու և դրանք շուտափույթ ճնշելու նպատակով անցկացվեցին մի շարք

---

308 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 35 об.

309 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7722, л. 12.

310 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 98.

311 «Объезд оккупированных...», стр. 23—24; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, лл. 76—76 об.

հեռագրական և հեռախոսային գծեր, մասնավորապես՝ Վան—Ուրմիա, Մոսուլ—Կալա-Փասովա—Սուլդուզ, Մոսուլ—Լահիջան, որոնք օկուպացված շրջանները կապում էին թուրքական բանակների տեղակայման կենտրոնների հետ[312]։

Թուրքական իշխանությունների օկուպացրած տերիտորիայում չէր կիրառվում ընդհանուր օսմանյան օրենսգիրքը։ Բացառությամբ Սուլդուզի, ոչ մի շրջանում չէին մտցվել հատուկ տեղական օրենքներ։ Բնակչության միջև ծագած վեճերը կարգավորվում էին Թուրքիայից ժամանած քուրդ մոլլաների, մուֆթիների և զաղիների միջոցով, որոնք բացի իրենց վերոհիշյալ ֆունկցիայից զբաղվում էին նաև թուրքոֆիլական քաղաքական պրոպագանդայով։ Լուրջ քրեական և քաղաքական գործերի դեպքում ամբաստանյալները ուղարկվում էին Վան կամ Քիրքուք[313]։

Փորձ արվեց մի շարք վայրերում ստեղծել նաև հյուպատոսական դատարաններ։ 1911 թ. ամռանը թուրքական կառավարությունը փորձեց Թավրիզ և Քերմանշահ ուղարկել հյուպատոս-դատավորների, նրանց հանձնարարելով քննության ենթարկել թուրքահպատակների, ինչպես նաև իրանական և օտար հպատակների քաղաքացիական և քրեական գործերը[314]։ Դա Իրանում էքստերիտորիալության իրավունք ձեռք բերելու բացահայտ ակտ էր, և այդ պատճառով կատաղի դիմադրության հանդիպեց ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի կողմից։

Իրանական Ադրբեջանի օկուպացված տերիտորիաներում թուրքական իշխանությունները կոչ էին անում դատական վեճեր ծագելու դեպքում դիմել ոչ թե իրանական, այլ թուրքական դատարաններին։ Այդ առթիվ Վանի վալի Բեքիր Սամի բեյը նույնիսկ հայտարարում է ռուսական փոխ-հյուպատոսին, որ «ինքը Ադրբեջանի բնակչության վրա նայում է որպես թուրքահպատակների և առաջարկում է նրանց անմիջականորեն դիմել թուրքական դատարաններին»[315]։

---

312 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 159; АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 2 об, 101 об.

313 «Объезд оккупированных...», стр. 111.

314 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 163.

315 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 65.

Օկուպացված շրջանների համար թուրքական իշխանությունները մշակեցին նաև մաքսային քաղաքականության սիստեմ, որն ուղղված էր գլխավորապես Ռուսաստանի դեմ, որովհետև այդ շրջաններում նա ուներ խոշոր առևտուր։ Այդ քաղաքականությունից մեծապես տուժեց հատկապես ռուսահպատակ խոշոր վաճառական Զաքարիա Նազարբեկովի առևտրական տունը[316]։

«Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն զավթված շրջանները յուրացնելու գործում առաջնակարգ տեղ էր հատկացնում կրոնա-գաղափարական ներգործության միջոցներին։ Առաջին հերթին իթթիհադը հսկողություն սահմանեց զավթված շրջանների բոլոր դպրոցների վրա[317], հետևելով որպեսզի երեխաները դաստիարակվեն «Օսմանյան մեծ կայսրությանը» նվիրվածության գաղափարներով։ Ստամբուլի հրահանգով գյուղերում բացվում էին դպրոցներ, որ թուրքահպատակների նոր սերունդը 12-ից մինչև 18 տարեկան հասակում հաճախի դպրոց։ Ընդ որում, այդ դպրոցների ծախսերը հոգալու էին օկուպացված գյուղերի բնակիչները (յուրաքանչյուր աշակերտից կես տարվա համար գանձվում էր 2 թուման), որը, ըստ էության, մի նոր, թեպետև անուղղակի, հարկային լուծ էր։ Վերոհիշյալ դպրոցներում դասավանդումը կատարվում էր բացառապես թուրքերեն լեզվով, տեղական մոլլաների միջոցով և թուրք հրահանգիչների հսկողության տակ[318]։

Ուրմիայից հյուսիս ընկած ասորական Գավիլյան և Ջեմալաբադ գյուղերում թուրքերը 12-ից մինչև 14 տարեկան ասորի երեխաներին բռնի ուղարկեցին այդ գյուղերում բացված դպրոցները, նպատակ ունենալով դաստիարակել նրանց զուտ թուրքական ոգով և ապա նրանց դարձնել թուրքական զինվորներ[319]։

Մի շարք շրջաններում բացվեցին սուննիթական մզկիթներ, որտեղ թուրքական մոլլաները զբաղվում էին ոչ այնքան կրոնական

---

316 Նույն տեղում, թթ. 38—39։

317 «Объезд оккупированных...», стр. 65.

318 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 3.

319 «Православная Урмия в годы персидских смут», Киев, 1911, стр. 4.

բարոզով, որքան պանիսլամիստական գաղափարներ քարոզելով։ Նրանք տեղական բնակչությանը սիստեմատիկորեն հորդորում էին նաև հարգել ու հնազանդվել «նոր կարգերին»[320]։

Թուրքերի գաղափարական դիվերսիան առաջ բերեց տեղական շիիթական բնակչության խորը դժգոհությունը։ Ժողովուրդը հատկապես պահանջում էր դպրոցներում դասավանդումը անցկացնել ոչ թե իր համար օտար ու անհասկանալի թուրքերեն լեզվով, այլ պարսկերենով, հարգել տեղական սովորույթներն ու ավանդույթները և այլն։ Այդ դժգոհության բացահայտ արտահայտություններից մեկն էր այն, որ գյուղացիները հրաժարվում էին իրենց երեխաներին ուղարկել թուրքական դպրոցներ, որի հետևանքով և երիտթուրքերի «դպրոցաշինարարության փորձերը ի վերջո ձախողման մատնվեցին»[321]։

Առհասարակ թուրքական կառավարության «նոր օրենքները», զինվորների ու սպաների կամայականություններն ու բռնությունները տեղական բնակչության շրջանում առաջ բերեցին խորը դժգոհություն։ 1911 թ. սեպտեմբերին Գոլուբինովը գրում էր, որ «սահմանային գոտու բնակիչները, որոնք իրենց վրա կրել են հին և նոր թուրքական ռեժիմի լուծը, ատում են թուրքերին»[322]։ Տեղական բնակչությունը համոզվեց, որ օսմանյան լուծը անհամեմատ ավելի ծանր է, քան շահական կառավարության շահագործման ողջ սիստեմը։ Թուրքական վարչությունը հատկապես բարբարոսական շահագործման սկսեց ենթարկել իրանական գյուղացիությանը։ Ռուսական և անգլիական սահմանային հանձնաժողովի անդամներ Մինորսկին և Շիպլեն օկուպացված շրջաններում շրջագայելով և հանդամանորեն ծանոթանալով տեղական բնակչության սոցիալական վիճակի հետ գրում էին. «... Մենք համոզվեցինք, որ թուրքերի կառավարումը ժողովրդականություն չի վայելում նրանց նոր հպատակների շրջանում... Նոր ռեժիմի նկատմամբ տիրապետող տրամադրությունը, առանձնապես ֆեոդալ-հողատերերի

---

320 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 3 об.

321 «Тифлисский листок», 1911, 5 января.

322 АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, л. 21 об.; АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 28 об.

և նրանց մերձավորների շրջանում, հանդիսանում է ընդհանուր դժգոհությունը... Թուրքական զորքերի ներկայությունը, որի ծանրությունը գլխավորապես ընկնում է գյուղացիների վրա, հանդիսանում է բազում բողոքների պատճառ»[323]։

Թեև օկուպացիոն իշխանությունները հրապարակեցին հրաման՝ յոթը տարի ժամկետով բնակչությանը հողային և անասունների համար գանձվող հարկերից ազատելու վերաբերյալ, սակայն գործնականում չիրագործեցին լայնորեն ռեկլամված այդ հրամանը։ Արդեն 1910 թ. նրանք ձեռնամուխ եղան մալիաթի գանձմանը[324]։ Ռոդովի հողերից ստացված հացահատիկի բերքից թուրքական վարչությունը գանձում էր բերքի չորրորդ մասը և ստիպում էր կալվածատերերին հատկացնել 1/5 մասը, իսկ շոռոգվող հողերից ստացված բերքից գանձում էր ամբողջ բերքի 1/10 մասը և նույնքան էլ ստիպում էր հատկացնել կալվածատերերին։ Բացի այդ, օկուպացիոն իշխանությունները հարկեր էին գանձում բեռնակիր և մանր ու խոշոր եղջերավոր անասուններից, մրգատու այգիների, խանութների տերերից, տնատերերից և այլն։ Ընդ որում, հարկահավաքման գործը կանոնավորապես իրագործելու համար կազմվեցին հարկատուների մանրամասն ցուցակներ և ստեղծվեցին հնձյալ ժանդարմների ջոկատներ, որոնց անհրաժեշտության դեպքում օգնում էին օկուպացիոն զորքերը[325]։

Բացի վերոհիշյալ հարկերից, թուրքական հարկային վարչությունը օկուպացված շրջանների բնակչությունից սկսեց գանձել միաժամանակյա գումարներ («իյանե») իբր թե զանազան շինարարական աշխատանքների համար, որոնք, սակայն, իրականում կամ յուրացվում էին իշխանությունների կողմից, և կամ ծախսվում օկուպացիոն զորքերի կարիքների համար։ Ընդ որում, իյանեի չափը գնալով անընդհատ մեծանում էր։ Բնակչությունից վերցվում էր նաև որոշակի քանակությամբ ցորեն՝ զորանոցների կառուցման, թուրքական նավատորմի համար և նույնիսկ այն անձանց համար,

---

323 «Объезд оккупированных...», стр. 119—128.

324 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7722, л. 33 об.

325 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 28, 45.

ովքեր տուժել էին Ստամբուլի հրդեհից[326]։ Տեղական բնակչությունը պարտավոր էր նաև ձրի կերակրել թուրքական հեծելազորայիններին և սպաներին, նրանց տրամադրել կացարան և այլն[327]։ Քաղաքացիական իշխանություններն ու զինվորականությունը պաշտոնապես սահմանված վերոհիշյալ հարկերից բացի տարբեր պատրվակներով կատարում էր բռնագանձումներ, բնակչության նկատմամբ թույլ տալիս բռնություններ և կամայականություններ[328]։

Օկուպացված իրանական տերիտորիաներից Թուրքիա էր արտահանվում մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ, անասուններ և տեղական արտադրության բազմապիսի ապրանքներ[329]։

Թուրքերի տիրապետության օրոք մեծ չափերի հասավ նաև կաշառակերությունը, որը, ըստ էության, միակ միջոցն էր զինվորների ու սպաների բռնություններից ու կամայականություններից ինչ-որ չափով զերծ մնալու համար։

Ներիտթուրքական կառավարության կողմից Իրանի օկուպացված շրջաններում մտցված «նոր կարգերի» հետևանքով գյուղերը արագորեն բայքայվում էին, դադարում էր հաղորդակցությունը տարբեր շրջանների միջև և առևտուրը լրիվ անկում էր ապրում. աճում էին առաջին անհրաժեշտության ապրանքների գները, բնակչությունը լրիվ սնանկանում էր։

Սոցիալական ճնշմանը թուրքական իշխանությունները ավելացրին նաև ազգային խտրականությունն ու ճնշումը։

Այսպիսով, անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից, օկուպացված շրջանների աշխատավոր բնակչությունը և շահական կառավարության հետ կապված ֆեոդալ-կալվածատերերը դժգոհ էին թուրքական «նոր կարգերից»։ Ամենուրեք ծայր էին առնում հակաթուրքական գյուղացիական հուզումներ։ Հատկապես մեծ հուզումների տեղիք տվեց այն լուրը, որ թուրքական իշխա-

---

326 «Объезд оккупированных...», стр. 113.

327 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 110 об.

328 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 308.

329 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, л. 110.

նությունները պատրաստվում են 1911 թ. սկզբներից, զինակոչման տարիքի հասած ողջ արական բնակչությանը, անկախ նրանց ազգությունից և դավանանքից, ներգրավել թուրքական բանակի շարքերը և ուղարկել ծառայության Օսմանյան կայսրության ներքին շրջանները[330]։

Թուրքական իշխանությունները օկուպացված շրջանների բնակչության հուզումները ճնշում էին զինված ուժի օգնությամբ՝ գործադրելով մասսայական ահաբեկումների և արյունոտ ջարդությունների տակտիկան[331]։ Իսկ հակաթուրքական ելույթների կազմակերպիչներին կամ ոչնչացնում էին վարձու մարդասպանները, և կամ անմիջապես ձերբակալում ու աքսորում Միջագետք և Օսմանյան կայսրության այլ շրջաններ[332]։

Դժգոհությունը թուրքական տիրապետությունից համակեց նույնիսկ քրդական ցեղային ավագանուն և խոշոր ֆեոդալներին, որոնց թուրքական վարչությունը զրկում էր իրանական պետականության պայմաններում իրենց վայելած ավանդական իրավունքներից, արտոնություններից, ինքնուրույնությունից և սեփական հողային տիրույթներից հարկեր հավաքելու ազատությունից։ Քրդական ֆեոդալները դիմումներ էին կատարում ռուսական իշխանություններին, խնդրելով նրանց հովանավորությունը։ Քրդերի լուռ տրտունջը և պասսիվ բողոքը երբեմն վերածվում էր բացահայտ զինված ելույթների։ 1910 թ. ամռանը թուրքական լծի դեմ զինված ելույթ ունեցան Սոմայի քրդերը։ Վ. Մինորսկին գրում էր, որ Սոմայի ամենաազդեցիկ քուրդ ցեղապետները, հատկապես շերքաք ցեղի ֆենակ ճյուղի առաջնորդ Թեմիր աղա Ջանգոն, դելյան ճյուղի առաջնորդ Մամեդ Շերիֆը, բարդար ճյուղի առաջնորդ Իսմայիլ աղա Խասին կտրուկ հրաժարվեցին ստորագրել «մազբաթա» և բնավ չեն ցանկանում հաշտվել իրենց վրա թուրքերի տիրապետության մտքի հետ[333]։

---

330 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7722, л. 34.

331 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 49 об; АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, лл. 45, 46.

332 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7722, л. 35 об.

333 «Объезд оккупированных...», стр. 12.

1911 թ. գարնանը Ուրմիայի փոխ-հյուպատոս Գոլուբինովը տեղեկացնում էր իր ղեկավարությանը, որ շեքքաք ցեղի քրդերի ապստամբությունը գնալով լուրջ բնույթ է ընդունում։ «Էնզելի շրջանի (Կուլունջիի, Ջեմալաբադի և Քյագրիզի) բոլոր թուրքական զորքերը կանչված են Ղոթուրի շրջանը[334] քրդերին զսպելու համար։ Ընդհանրապես քրդերի մեծամասնության մոտ նկատվում է դժգոհություն թուրքական ռեժիմի դեմ։ Քրդերը բացահայտ ասում են, որ իրենք չեն ցանկանում ճանաչել ոչ թուրքական և ոչ էլ պարսկական կառավարություններին և ձգտում են լրիվ ինքնավարության»[335]։

Շեքքաքների, իսկ այնուհետև նաև բեկզադե ցեղի հակաթուրքական զինված շարժումը այն ստիպեցրեց թուրքական իշխանություններին, որ մի շարք վայրերում նրանք ձեռնամուխ եղան ամրություններ կառուցելուն, որպեսզի քրդերի ապստամբության դեպքում իրենց համար ապահովեն նահանջի ճանապարհ։ «Եթե թուրքերը զբաղված չլիներին Արաբիայի և Մակեդոնիայի ապստամբություններով և ներքին դժվարություններով,— գրում էր Գոլուբինովը 1911 թ. մայիսին,— նրանց համար հեշտ կլիներ հաշիվ տեսնել քրդերի հետ, քան այժմ, երբ նրանք ստիպված են շոյել քրդական բեկերին նվերներով, որոնք ոչ միշտ են հասնում իրենց նպատակին։ Եթե դրան ավելացվի այն, որ Վանի կորպուսի զինվորների համարյա հիսուն տոկոսը կազմում են նույն քրդերը, ապա հասկանալի կլինի, թե ինչու վերջին ժամանակներս թուրքերը անպատիժ են թողնում իրենց բացահայտ թշնամի շեքքաքներին և բեկզադինցիներին»։ Վերջում փոխ-հյուպատոսը ավելացնում էր, որ «մեզ ձեռնտու է թեկուզ բարոյապես պաշտպանել քրդերի թշնամական վերաբերմունքը թուրքերի հանդեպ»[336]։

Շեքքաքների շարժումը ղեկավարում էր նույն ցեղի առաջնորդ և Ղոթուրի կառավարիչ Իսմայիլ աղա Սիմկոն։ Թուրքական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ Ղոթուրի խանությունը զավ-

---

[334] Շեքքաք ցեղի քրդերի բնակության հիմնական վայրը։

[335] АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, лл. 35—36.

[336] Նույն տեղում, թ. 53։

թելու և շեքքաքներին խաղաղեցնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է իրենց կողմը գրավել Սիմկոյին, որը, ի դեպ, իր ցեղի շրջանում վայելում էր խիզախ և թուրքերի նկատմամբ անհաշտ դիրքավորում ունեցող առաջնորդի հեղինակություն։ Սիմկոյի համակրանքը շահելու համար թուրքական իշխանությունները նրան խոստացան նշանակել Ղոթուրի, Չիարիքի և Սոմայի ցմահ կառավարիչ, փոխարենը պահանջելով իրենց հանձնել Ղոթուրը։ Այդ առթիվ Սիմկոյին ուղղված Մահմուդիեի գայմագամ Մեհմեդ Զեքիի նամակում ասվում էր, որ այս պահանջը մերժելու դեպքում Սիմկոն անպայման կոչնշացվի, եթե նույնիսկ փորձի փախչել մինչև «Թավրիզի դարբասները»[337]։ Կռահելով, որ իրենց նպատակին հասնելուց հետո թուրքական իշխանությունները հաշվեհարդար կտեսնեն իր հետ, Սիմկոն դիմեց իրանական կառավարությանը, խնդրելով զենքով և դրամով օգնել իրեն Ղոթուրը թուրքիայի ոտնձգություններից պաշտպանելու համար[338]։ Ստանալով ոչ մի օգնություն, նա նույնպիսի առաջարկով դիմեց ռուսներին, հավաստիացնելով, որ ինքը իր ջոկատներով ի վիճակի է Ղոթուրի շրջանում ապահովել իրանական տերիտորիաների անձեռնմխելիությունը[339]։

Թուրքերի վիճակը առավել բարդացավ 1911 թ. ամռանը, երբ կատաղի պայքար սկսվեց Աբդուլ Ղադերի և նրա ազգական Շամդինանի սեյիդ Թահայի միջև։ Աբդուլ Ղադերը, որին Թուրքիան աջակցում էր, զինված պայքար սկսեց սեյիդ Թահայի ընդարձակ ծխախոտային պլանտացիաները զավթելու համար[340]։ Քրդական այն ցեղերը, որոնք հանդես էին գալիս Թուրքիայի դեմ, ի վերջո միավորվեցին Աբդուլ Ղադերի դեմ, հայտարարելով, որ իրանական տիրապետությունը գերադասում են թուրքականից[341]։

Այսպիսով, արդեն 1911 թ. առաջին կեսին Իրանական Քրդստանում և Ադրբեջանում հակաթուրքական շարժման ակտիվացման հետևանքով սպառնալիքի տակ էին դրվում օկուպացված

---

337 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3842, лл. 14—14 об.

338 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 666, л. 111.

339 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 1204, л. 19.

340 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 143.

341 АВПР, ф. «Миссия в Персии», 1911, д. 133, лл. 45—46.

տերիտորիաները իրանական պետության կազմից անջատելու և Թուրքիային միացնելու երիտթուրքական կառավարության պլանները։

Հատկանշական է, որ իրանական մամուլում ևս երևացին հոդվածներ, որոնցում համարձակ քննադատության էին ենթարկվում թուրքերի զավթողական քաղաքականությունը և օկուպացված տերիտորիաներում նրանց անօրինական գործողությունները։ Այսպես, «Թավրիզ» թերթի 1911 թ. 61-րդ համարում հրապարակված հոդվածում խստորեն դատապարտվում էր Իրանի նկատմամբ Թուրքիայի «ոչնչով չարդարացվող զավթումների քաղաքականությունը» և բերվում էին բազմաթիվ փաստեր այն մասին, որ «անվիճելի պարսկական տերիտորիայում թուրքական զինվորական և քաղաքացիական իշխանությունները տեր ու տնօրինություն են անում, ինչպես իրենց տանը»[342]։

Իրանական մամուլի այս ելույթներին ձայնակցեց նաև Ստամբուլում հրապարակվող իրանական էմիգրանտական «Շեմս» թերթը, որը սերտ կապերի մեջ էր «Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի հետ։ 1911 թ. մարտի 16-ի № 15-ում «Շեմսը» պահանջում էր թուրքական զորքերը անհապաղ դուրս բերել իրանական տերիտորիայից, որովհետև «պարսիկ ժողովուրդն ու պարսկական կառավարությունը այլևս ի վիճակի չեն հանդուրժել արտաքին միջամտությունն ու օկուպացիան»[343]։

Գնալով ուժեղանում էր նաև հեղափոխական ֆիդայիների դժգոհությունը երիտթուրքական կառավարության ագրեսիվ քաղաքականության ու զինվորական և քաղաքացիական իշխանությունների բռնությունների նկատմամբ։ Ֆիդայիները սկսեցին հաճախակի կազմակերպել տեռորիստական ակտեր թուրքական օկուպացիոն իշխանությունների առավել խոշոր աստիճանավորների դեմ։ 1911 թ. հունվարին Խոյում ֆիդայիները նույնիսկ մահափորձ կազմակերպեցին տեղի թուրքական շահբենդերի (հյուպատոս) դեմ[344]։

---

342 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, лл. 39, 76, 78, 96.

343 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 31, лл. 173—173 об.

344 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 28 об.

Երիտթուրքական կառավարության արկածախնդրական արտաքին քաղաքականությունը դժգոհություն էր առաջացրել նաև բուն Թուրքիայում։ Նույնիսկ կառավարող շրջանների և զինվորական գործիչների առանձին ներկայացուցիչներ սկսեցին սուր քննադատության ենթարկել այդ քաղաքականությունը։ Այսպես, պառլամենտի նիստերից մեկի ժամանակ արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ հանդես գալով ընդարձակ ճառով, արմատական հայացքների տեր պատգամավոր Ռիզա Թեֆվիկը հայտարարում է. «Մեր կառավարությունը Եվրոպայի ընդհանուր ծաղրի առարկան է։ Նա չունի տրամաբանություն և զուրկ է գործողությունների հիմքից։ Նա անընդհատ նետվում է տարբեր կողմեր, մերթ ցանկանում է վերցնել Կրետեն, մերթ Պարսկաստանի մի մասը»[345]։

Գլխավոր շտաբի գնդապետ Ֆուադ բեյը, բացահայտ քննադատության էր ենթարկում թուրքական կառավարության «իրանական» քաղաքականությունը։ «Ես շատ գոհ կլինեմ,—հայտարարում է նա,—եթե Թուրքիային չհաջողվի զավթել վիճելի գոտին, որից մենք ոչ մի օգուտ չենք կարող ստանալ։ Մեկնելով այնտեղ, մեր զինվորները վատ վարչության մեղքով մատնվում են քաղցի և բարոյալքվում են... Այնտեղ չկան ոչ դատարաններ, ոչ դատավորներ և ոչ էլ վարչական սիստեմ։ Ամեն ինչ կատարվում է կամայականորեն, առաջ բերելով բնակչության բողոքները և տեղի տալով զանազան միջադեպերի... Ես համոզված եմ, որ վերջիվերջո մեզ թույլ չեն տա կուլ տալու այդ պատառը»[346]։

Իրանական քաղաքականության բնագավառում դժգոհության այս շարժումը ստիպեց Թուրքիայի կառավարող շրջաններին շուտափույթ մշակել քաղաքական նոր տակտիկա։ Այն առանձնապես անհրաժեշտ էր, որովհետև Իրանական Քրդստանում օրըստօրե ուժեղանում էին ռուսասիրական տրամադրությունները և ընդհակառակը, քրդերը նկատելիորեն դուրս էին գալիս Թուրքիայի ազդեցության տակից։ Մյուս կողմից իրանական հեղափոխական շրջանները, որոնց վրա իթթիհադը աշխատում էր հենվել, այլևս ոչ միայն

---

[345] «Тифлисский листок», 1910, 23 ноября.

[346] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 98—99 об.

չէին ցանկանում համագործակցել երիտթուրքերի հետ միապետության դեմ մղած իրենց պայքարում, այլև բացահայտորեն պայքարի էին դուրս գալիս նրանց դեմ։

1910 թ. վերջերից սկսած Իրանի նկատմամբ թուրքական քաղաքականության մեջ նկատվեց որոշակի փոփոխություն։ Որոշվեց ինչ գնով էլ լինի մերձենալ տեղական բնակչության հետ, շահել նրա համակրանքը և ատելությունը ուղղել բացառապես Ռուսաստանի դեմ։ Այդ առթիվ 1911 թ. հունվարի 20-ի դաղտնի զեկուցագրում Ուրմիայի փոխ-հյուպատոսության պահակախմբի պետ Իվանովը Թավրիզի ջոկատի հրամանատարին գրում էր. «Վերջերս թուրքերը փոխել են իրենց տակտիկան պարսիկների նկատմամբ։ Այժմ նրանք զանազան խոստումներով և բարյացակամ վերաբերմունքով աշխատում են նրանց գրավել իրենց կողմը։ Պարսկական տերիտորիայում գտնվող բոլոր սպաներին ու զինվորներին հրամայված է քաղաքավարի լինել պարսկահպատակների հետ և բնակչության նկատմամբ ունենալ մեղմ վերաբերմունք։ Այն սպաները, որոնք աչքի էին ընկել պարսկական բնակչության նկատմամբ իրենց բռնություններով և կոպիտ վերաբերմունքով, կանչվում են Թուրքիա և փոխարինվում են նոր, առավելապես երիտթուրքական սպաներով, որոնք սերտ կապերի մեջ են մտնում երիտպարսիկների հետ։ Ընդ որում, ինչպես նրանք, այնպես էլ դաղտնի թուրքական ագիտատորները հայտարարում են, որ թուրքերը չեն պատրաստվում զավթել Ուրմիայի շրջանը և եթե նրանց զորքերը դրտնվում են այնտեղ, ապա բացառապես որպես հակակշիռ ռուսներին և անգլիացիներին և որ լավ կլիներ, որպեսզի թուրքերն ու պարսիկները միավորվելով վոնդեին ատելի գյավուրներին Պարսկաստանի սահմաններից»[347]։

Նույնանման հրահանգներ ստացել էին նաև թուրքական հյուպատոսները, որոնք անմիջապես սկսեցին մերձենալ շահական ատրճանավորների և տեղական հասարակայնության ներկայացուցիչների հետ[348]։ Մի շարք վայրերում (օրինակ՝ Համադանում և

---

347 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 28.

348 Նույն տեղում։ Տե՛ս նաև „Тифлисский листок", 1911, 23 января.

այլն) թուրքերը բացեցին նոր հյուպատոսություններ, իսկ հին հյուպատոսները փոխարինվում էին իրանական գործերում առավել հմուտ դիվանագետներով[349]։ «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեի կարգադրությամբ երիտթուրքական սպաները ակտիվորեն մասնակցում էին երիտպարսիկների ժողովներին, աշխատելով նրանց մոտ ուժեղացնել հակառուսական տրամադրությունները։ Նրանց վստահությունը շահելու նպատակով հավաստիացվում էր, որ շուտով «թուրք-իրանական սահմանային վեճը Ստամբուլում կստանա իր վերջնական լուծումը»[350]։ Վանից անընդհատ պրոպագանդիստներ էին ուղարկվում Իրանի տարբեր շրջանները, որոնք հորդորում էին բնակչությանը «զինվել ուղղափառ Իրանը անհավատ պետությունների ոտնձգություններից պաշտպանելու համար»[351]։ Իրանական բնակչության շրջանում հակառուսական ագիտացիա մղելու գործի մեջ ներգրավվեցին նաև Կովկասից և Ռուսաստանից Թուրքիա տեղափոխված պանիսլամիստական հայտնի գործիչներ Ահմեդ Աղաևը, Կարաբեկովը և ուրիշներ։ Օլֆերևի տեղեկությունների համաձայն նրանք Իրանի «բնակչության շրջանում հարուցում են թշնամական բնազդներ Ռուսաստանի դեմ, աշխատում են քրդերի միավորման և Իրանական Քրդստանը թուրքական ազդեցության ոլորտի մեջ մտցնելու վրա»։ Այդ նպատակների, ինչպես նաև իրանական քրդերի առաջնորդներին կաշառելու համար ծախսվում էին այն փողերը, որոնք բաց էին թողնված համիդիենների վերակազմակերպման համար[352]։

Իր հերթին թուրքական պաշտոնական ու կիսապաշտոնական մամուլը, հատկապես «Ժյոն թյուրքը», «Սիրաթի-Մյուսթեքիմը», «Թաարյուֆի մյուսլիմինը», «Հիքմեթը», «Թանինը» և այլն սիստեմատիկորեն սկսեցին վարել պանիսլամիստական պրոպագանդա և հակառուսական բուռն ագիտացիա[353]։ Այսպես. 1911 թ. հոկտեմ-

---

349 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 163.

350 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 29.

351 «Մշակ», 8 մարտի 1911 թ.։

352 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1910, д. 1598, лл. 5—6. Ցիտված է ըստ М. С. Лазарев, Նշվ. աշխ., էջ 181, 183։

353 Տե՛ս «Մշակ», 8 մարտի 1911 թ.։

բերի 14-ի համարում «Թանինը» հրապարակեց «Թուրքերի միակ դաշնակիցները» վերնագրով մի հոդված, որտեղ ասվում էր, որ իրանա-թուրքական դաշինքի կնքումը ուղղակի կենսական անհրաժեշտություն է երկու հարևան պետությունների համար։ Սակայն, ի վիճակի չլինելով լուծյամբ անցնել Իրանի նկատմամբ Թուրքիայի նվաճողական քաղաքականության փաստի կողքով, թերթը գրում էր, որ Թուրքիան Իրանում լոկ նպատակ ունի սահմանամերձ «ամայի» հողերում մտցնել կուլտուրա և կարգուկանոն, հետևաբար պետք չէ ուշադրություն դարձնել երկու պետությունների միջև թշնամական քաղաքականության վերաբերյալ հեքիաթների և Օսմանյան կայսրության կողմից իր արևելյան հարևանի հողերի զավթման մասին թշնամական բարբաջանքների վրա[354]։

Հատկանշական է, որ թուրքական թերթերին սկսեցին արձագանքել նաև պանիսլամիստական ուղղության և հակառուսական ոգով տոգորված որոշ իրանական թերթեր։ Թավրիզի «Շաֆրաղ» թերթում, օրինակ, պարբերաբար սկսեցին հրապարակվել հոդվածներ «իսլամի միասնության» մասին, որոնցում կոչ էր արվում Թավրիզից զենքի ուժով վտարել ռուսական ջոկատին։

Թուրքիայի հակառուսական քարոզչությունը արժանանում էր նաև իրանական կառավարող շրջանների հավանությանը։ Հնարավորություն չունենալով բացահայտորեն դրսևորել իրենց դժգոհությունը ռուսական զորքերի կողմից Ադրբեջանի մի շարք վայրերի օկուպացման և Իրանի ներքին գործերին Ռուսաստանի եռանդուն միջամտության դեմ, շահական կառավարությունն ու ազգայնական շրջաններն աշխատում էին օգտագործել Թուրքիայի հակառուսական ելույթները, հույս ունենալով, որ Թուրքիայի օգնությամբ հնարավոր կլինի ստիպել Ռուսաստանին զորքերը դուրս բերել Իրանից։ Իսկ հեղափոխական շրջանները, առաջնորդվելով «իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» սկզբունքով, նույնպես համակրանքով վերաբերվեցին Իրանում Թուրքիայի ծավալած հակառուսական բուռն ագիտացիային։ Սկսեցին պատվել նաև համառ լուրեր, որ իբր շահական կառավարության և Թուրքիայի միջև կնքվել

---

354 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, л. 535.

է գաղտնի պայմանագիր՝ ուղղված Ռուսաստանի դեմ։ 1911 թ. գարնանը Միլլերը Թավրիզից հաղորդում էր, որ Ադրբեջանում, հատկապես Թավրիզում, ամենուրեք ագիտացիա է մղվում հօգուտ թուրք-իրանական դաշինքի[355]։ Իսկ Գոլուբինովը նույնիսկ ենթադրում էր, որ այդ դաշինքը արդեն կնքված է. «Ինձ հետ զրույցի ժամանակ էջլալ-օլ-Մոլքը (Ուրմիայի նահանգապետը—Վ. Բ.) հայտնեց,—գրում էր նա,—որ դեռևս երեք շաբաթ առաջ նա իր կառավարությունից հրահանգ է ստացել բոլոր դեպքերում գործել թուրքական հյուպատոսի հետ համատեղ։ Այդ հայտարարությունը հաստատում է իմ կողմից նախապես հայտնած այն կարծիքը, որ պարսկական և թուրքական կառավարությունների միջև կնքվել է համաձայնագիր, որը հիմնված է պանիսլամիզմի վրա և ուղղված է Պարսկաստանում ռուսական ազդեցության դեմ»[356]։

Իրանում իր մրցակցին թուրք-իրանական համաձայնագրի մղձավանջով ահաբեկելու նպատակով անգլիական դիվանագիտությունը գաղտնապես խրախուսում էր եթե ոչ այդ համաձայնագրի կնքումը, համենայն դեպս նրա մասին խոսակցությունները։ Անգլիական պատմաբան է. Բրոունը ևս պրովոկացիոն խորհուրդ էր տալիս Իրանին՝ թուրքիայի հետ կնքել պաշտպանողական դաշինք ուղղված Ռուսաստանի դեմ, Իրանի մայրաքաղաքը տեղափոխել Սպահան և այլն[357]։

Մինորսկին ենթադրում էր, որ հետևելով այդ խորհուրդներին Բրոունի մերձավոր բարեկամներից մեկը, «դեմոկրատական կուսակցության» ղեկավար Թաղի Զադեն ժամանել է Ուրմիա, որից հետո մեկնել է Թուրքիա[358]։ Ուրմիայում նա համոզում էր տեղի նահանգապետին, որ թուրքերը Իրանի համար այնքան էլ վտանգավոր չեն որքան եվրոպացիները, որոնք սպառնում են բաժանել այն[359]։

---

[355] АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 49.

[356] АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 35 об.

[357] *E. Browne*, The Persian Revolution of 1905—1909, Cambridge, 1910 pp. 349—350.

[358] «Записка, составленная В. Минорским, о мерах противодействия турецким захватам в Персии». ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 258 об.

[359] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 150.

Այս բոլորը վկայում է, որ Ռուսաստանի դեմ պայքարի ելնելու վերաբերյալ թուրքական պանիսլամիստական պրոպագանդան Իրանում ուներ ակնհայտ հաջողություններ։ Որպես ապացույց Միլլերը հաղորդում էր, որ Ադրբեջանում հակառուսական տրամադրություններ ունեցող բազմաթիվ շահական աստիճանավորներ գտնում են, որ թուրքերի ներկայությունը զավթված տերիտորիաներում իրենից ոչ մի վտանգ չի ներկայացնում Ադրբեջանի տերիտորիալ ամբողջականության համար և ընդհակառակը, իրանա-թուրքական համաձայնագրի կնքումը երաշխիք կհանդիսանա այնտեղից ռուսների հեռացման համար[360]։ Իսկ «Դեմոկրատական կուսակցության» թերթերը, որոնք խիստ թշնամական ելույթներ էին ունենում Ռուսաստանի դեմ («Իրանե Նու») Թուրքիայի կողմից համարյա ամբողջ Ուրմիայի նահանգի անեքսիան համարում էին «հասարակ սահմանային թյուրիմացություն»[361]։ Նույն գիծն էին վարում նաև կառավարությանը մոտ կանգնած Թեհրանի մամուլի մի շարք օրգաններ։

Օրինակ «L'indépendence Persane» թերթը բանավեճի մեջ մտնելով ռուսական «Новое время» լրագրի հետ, որն իր հոդվածներում բացահայտում էր Թուրքիայի ագրեսիվ քաղաքականության հետևանքները Իրանի համար, մեղադրում էր նրան «երկու հարևան, բարեկամ ու դավանակից երկրների միջև փոխադարձ թշնամանք, անվստահություն և երկպառակություն սերմանելու մեջ»[362]։

Սակայն այս տեսակետից առավել բնորոշ է Մեջլիսի 1911 թ. փետրվարի 12-ի նիստում Իրանի արտաքին քաղաքականության հարցերին նվիրված շահական արտաքին գործերի մինիստրի արտասանած ճառը։ Մասնավորապես կանգ առնելով իրանա-թուրքական հարաբերությունների վրա, մինիստրը հայտարարում է, որ «Թուրքիայի հետ հարաբերություններում միակ քաղաքական դիսոնանսը սահմանային թյուրիմացություններն են»։ Դրան նա ավե-

---

360 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 21.

361 «Тифлисский листок», 1911, 1 марта.

362 «Тифлисский листок», 1911, 1 февраля.

լացնում է, որ «չի կասկածում, որ շուտով սահմանների որոշման հարցը կստանա արդարացի և կողմերին բավարարող լուծում»[363]։

Կասկածից վեր է, որ արտաքին գործերի մինիստրի այս պաշտոնական լավատեսությունը գալիս էր նրանից, որ իրանական կառավարող շրջանները արդեն որոշակի համաձայնության էին եկել Թուրքիայի հետ Ռուսաստանի դեմ համատեղ պայքարելու հարցում։ Բացահայտելով այդ համաձայնության հետապնդած նպատակները, Գոլուբինովը նկատում էր. «Երիտթուրքերը հասկացան, որ Պարսկաստանում ավելի հաջող գործողությունների համար նրանց անհրաժեշտ է հենվել ոչ միայն զենքի ուժի վրա, այլ կրոնի միասնության վրա։ Նրանք հարթեցին Իրանի և Թուրանի դարավոր կրոնական տարաձայնությունը և նշանակալիորեն խարխլեցին քրիստոնյա Ռուսաստանի հեղինակությունը»։ Ինչ վերաբերում է Իրանին, ապա Գոլուբինովի կարծիքով նա գանում էր, որ «ավելի լավ է ենթարկվել թեկուզև օտարերկրյա մահմեդական պետականությանը, քան տանել գյավուրների միջամտությունը»[364]։

Ճիշտ է, Ուրմիայի փոխ-հյուպատոսը չափազանցնում էր Իրանի և Թուրքիայի տարաձայնությունների հարթեցման աստիճանը, բայց և միանգամայն իրավացի էր, նկատելով, որ Թուրքիայի կողմից Ռուսաստանի հեղինակությանը հասցված է շոշափելի հարված։

Բորբոքելով պանիսլամիզմը՝ բոլոր մահմեդականների քաղաքական ներդաշնակության այդ գաղափարը և մահմեդական զանգվածների կրոնական ֆանատիզմը ուղղելով Ռուսաստանի և մասամբ նաև Անգլիայի դեմ, երիտթուրքական կառավարությունը հույս ուներ օգտագործել այն ոչ միայն իր զավթողական նպատակների համար, այլև իր անհնազանդ մուսուլման հպատակների (հատկապես արաբների և քրդերի) ուշադրությունը նրանց հուզող ներքին հրատապ հարցերից շեղելու համար։ Դա չափազանց լուրջ ու կարևոր խնդիր էր, որովհետև Բ. Դուռը տեղեկություններ ուներ, որ որոշակի քայլեր են կատարվում արաբների և քրդերի միջև հա-

---

363 Նույն տեղում, 1911 թ., 1 մարտի։

364 АВПР, ф. «Персидский стол Б.», 1912—1915 гг., д. 142, л. 21 об.

կակառավարական միասնական ճակատ ստեղծելու և համատեղ ապստամբություն բարձրացնելու ուղղությամբ։ 1911 թ. գարնանը Արաբիայում ապստամբած Իմամ Յահյան քրդերի մոտ էր ուղարկել իր ներկայացուցչին, որը հակակառավարական ապստամբության վերաբերյալ բանակցություններ էր վարում սկզբում Բայազեդի շրջանի, ապա նաև Մուշի շրջակայքի ազդեցիկ քրդական ցեղապետների հետ։ Այդ բանակցությունների հետևանքը եղել էր այն, որ քրդերը խոստացել էին աջակցել Իմամ Յահյային։ Ճիշտ է, թուրքական իշխանություններին հաջողվեց բացահայտել դավադրությունը և ձերբակալել մասնակիցներին[365], բայց բացառված չէին այսպիսի փորձերի կրկնվելը։ Հետևաբար երիտթուրքական կառավարության համար առաջնակարգ քաղաքական նշանակություն ունեցող խնդիր էր Օսմանյան կայսրության բնակչության մոտ կուտակված ողջ մաղձը ուղղել «մահմեդականության թշնամիների» Ռուսաստանի և Անգլիայի դեմ։

Իր այս նպատակներին հասնելու համար երիտթուրքական կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ։ Նախ, նրա նախաձեռնությամբ Թեհրանում գումարվեց «մահմեդական ժողովուրդների ներկայացուցիչների խորհրդակցություն», որին մասնակցում էին Թուրքիայի, Աֆղանստանի, Բուխարայի, Իրանի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչներ։ Թեհրանում ռուսական դեսպանորդը հաղորդում էր, որ այդ խորհրդակցությունում «Թուրքիային հատկացվում է ղեկավար դեր»։ Այնուհետև նա գրում էր. «Հենվելով Թուրքիայի վրա, ամբողջ մահմեդական աշխարհը պետք է ոտքի կանգնի և տրորի ու ոչնչացնի Ռուսաստանին ու Եվրոպային,—այսպիսին է խորհրդակցության մասնակիցների երազանքը։ Այստեղից եզրակացություն, որ Թուրքիային չպետք է ոչնչով խանգարել, հետևաբար չպետք է բողոքել նաև Պարսկաստանում նրա զավթումների դեմ»[366]։

Իրանական ժողովրդին Ռուսաստանի դեմ ոտքի հանելու և պանիսլամիստական պրոպագանդա ծավալելու գործում Ստամբու-

---

365 ЦГВИА, ф. 2000, д. 3778, л. 433.

366 Նույն տեղում, թ. 433հ։

լին կրկին խոշոր ծառայություններ կարող էին մատուցել Նաջաֆի և Քարբալայի իրանական մուշտեհիդները։ Այդ պատճառով կենտրոնը հանձնարարեց «Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության Բաղդադի կոմիտեին նշված վայրերի Իրանական բարձր հոգևորականությանը հրահրել Իրանում հակառուսական բուռն ագիտացիա սկսելու համար։ Երիտթուրքական կառավարության հրահանգով գնդապետ Զիա բեյը հատուկ առաքելությամբ մեկնեց Բաղդադ և այնուհետև Նաջաֆ և Քարբալա։ Մուշտեհիդներ Աբդուլլա Մազանդարանին և Մոհամմեդ Քյազիմ Խորասանին հրապարակեցին հատուկ ֆեթվա «իսլամի թշնամիների» դեմ, որտեղ ասվում էր, որ շիիզմի և սուննիզմի միջև կրոնական տեսակետից ոչ մի էական տարբերություն չկա, որ շիիթներն ու սուննիթները պետք է թողնեն իրենց տարաձայնությունները և սերտորեն համագործակցեն միմյանց հետ[367]։ Այնուհետև ֆեթվայում կոչ էր արվում բոյկոտի ենթարկել ռուսական ապրանքները և միասնություն հաստատել սուննիթների և շիիթների միջև։ Միաժամանակ առաջարկվում էր իրանական կառավարությանը դաշինք կնքել Թուրքիայի հետ Իրանի «աղատության և անկախության դեմ երկու պետությունների (Ռուսաստանի և Անգլիայի—Վ. Բ.) ոտնձգություններին հակահարված տալու համար»[368]։ Մոսուլի փոխհյուպատոս Կիրսանովի տեղեկությունների համաձայն մուշտեհիդները պատրաստվում էին նույնիսկ սրբազան պատերազմ հայտարարել Ռուսաստանի դեմ սկզբում Կովկասի ռուսահպատակ շիիթների շրջանում, իսկ ապա նաև Իրանում[369]։

Մուշտեհիդների այս էնցիկլիկան առանց հետևանքի չմնաց։ Բազմաթիվ իրանական վաճառականներ դադարեցրին շաքարի, մանուֆակտուրայի և այլ ապրանքների ներմուծումը Ռուսաստանից[370], մի շարք խաներ թուրքական իշխանություններին տվեցին գրավոր հավաստիացում, որ իրենք գոհ են Իրանում թուրքական

---

367 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, лл. 40—40 об.

368 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 30.

369 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, лл. 21—21 об, 22.

370 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 41; д. 672, лл. 27—27 об.

զորքերի ներկայությունից[371]։ Քաղաքական տեսակետից սուննիթների և շիիթների հաշտեցման և նրանց միավորման անհրաժեշտության մասին մուշտեհիդների ագիտացիան մեծ արձագանք գտավ նաև Իրանի պանիսլամիստական շրջաններում և բարձր հոգևորականության մեջ։ Շիիթական և սուննիթական աղանդների հոգևոր առաջնորդները փոխադարձ համաձայնությունից հետո հայտարարեցին, որ իրենք կօգտագործեն իրենց ազդեցությունը Իրանի, Թուրքիայի և նրանց հպատակների միավորման համար, որպեսզի հնարավոր լինի ապահովել այդ երկու մահմեդական պետությունների սահմանների ամբողջականությունն ու պետական անկախությունը։ Համատեղ որոշման մեջ նշվում էր, որ իսլամի հինգ աղանդների հետևորդների (սուննիթական չորս ուղղությունների՝ խանիֆիդների, խանբալիդների, շաֆիիդների և մալեքիդների մի կողմից և շիիթների՝ մյուս կողմից) միջև մշտական թշնամանքը հանգիստացել է Իրանի և Թուրքիայի թուլության պատճառ և սպառնում է ամբողջ մահմեդական աշխարհին կործանումով։ Այնուհետև երկու աղանդների ներկայացուցիչները հայտարարում էին, որ իրենք պարտավորվում են ամեն կերպ նպաստել Թուրքիայի և Իրանի վերջնական դաշինքին[372]։

Թեև ռուսական դիտորդները գտնում էին, որ շիիթների և սուննիթների միավորման գաղափարը անիրականանալի է, որովհետև «անհնարին է ոչնչացնել այն տարբերությունները, որ բաժանում են նրանց դարեր ի վեր», սակայն նախազգուշացնում էին, որ այդ երկու աղանդների միավորման շարժումը անխուսափելիորեն կնպաստի պանիսլամիզմի տարածմանը։ Հենց դրանով էլ նրանք բացատրում էին այդ գաղափարի պրոպագանդման բնագավառում Թուրքիայի դրսևորած եռանդը[373]։

Եվ իսկապես, փաստերը վկայում են, որ մահմեդական կրոնի միմյանց նկատմամբ թշնամական այդ երկու աղանդների միավոր-

---

371 Նույն տեղում, գ. 549, թ. 50։

372 *Л. В. Евдокимов,* Панисламизм и пантюркизм. «Военный сборник», СПб., 1911, № 12, стр. 91—92.

373 *К. Смирнов,* Примирение суннитов с шиитами. «Кавказский военный переводчик», 1911, № 4; ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 511, л. 40 об.

ման գաղափարը լայն արձագանք չգտավ Իրանում։ Մասնավորապես այն ոչ մի տպավորություն չգործեց օկուպացված շրջանների բնակչության վրա։ Ուրմիայի մուշտեհիդ միրզա Մեսիհը նույնիսկ հայտարարեց, որ թուրքերը ցանկանում են օգտագործել բնակչության կրոնական զգացումները, որպեսզի իրենց զորքերը մտցնեն Ուրմիա քաղաքը, որ, հետևաբար, չպետք է վստահել նրանց և այլն[374]։ «Կրոնի միասնության» այդ փորձերը, ընդհակառակն, առաջ բերեց բնակչության աշխատավոր խավերի, ցածր շիիթական հոգևորականության և հողատերերի դժգոհությունը, որոնք կոլեկտիվ բողոք ներկայացրին Իրանում Թուրքիայի զավթողական քաղաքականության դեմ[375]։

Սակայն, այնուհանդերձ, Թուրքիան կարողացավ Իրանի պանիսլամիստական շրջաններում ձեռք բերել զգալի թվով կողմնակիցներ և օգտագործել նրանց իր քաղաքական նպատակների համար։ Երիտթուրքական կառավարությունը կարողացավ նաև միաժամանակ շահական կառավարության ազգայնական շրջանների ուշադրությունը շեղել թուրքական ագրեսիայից և այն ուղղել բացառապես Ռուսաստանի կողմը։ Միանգամայն սխալ դուրս եկան նաև իրանական քաղաքական այն գործիչների հաշիվները, որոնք ենթադրում էին, որ Թուրքիային կարելի է օգտագործել որպես հակակշիռ ուժ Ռուսաստանի դեմ։ Ընդհակառակը, Թուրքիան սկսեց իր իրանական քաղաքականությունը առաջ տանել ավելի համարձակ ու հետևողականորեն։

Մարսելով ամբողջ Ուրմիայի շրջանը, Օսմանյան կայսրությունը տենդորեն նախապատրաստվում էր անեքսիայի ենթարկել ողջ Իրանական Ադրբեջանը։ 1911 թ. գարնանը Ուրմիայի ռուսական փոխ-հյուպատոսին հաջողվում է ձեռք բերել Ստամբուլից գրված մի պաշտոնական նամակ, որը պարունակում էր հետաքրքիր տեղեկություններ թուրքերի մտադրությունների մասին Ադրբեջանի նկատմամբ։ Հենվելով այդ նամակի վրա փոխ-հյուպատոսը հաղորդում էր հետևյալը.

---

374 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 151.

375 «Тифлисский листок», 1911, 27 февраля.

«Թուրքերի պլանի մեջ է մտնում այդ նահանգի անեքսիան մինչև Զենջան քաղաքը ներառյալ։ Այդ նպատակով բացի թուրքական կառավարության ռազմական նախապատրաստություններից, «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեն Ադրբեջանի բոլոր քաղաքներն է ուղարկել իր գործակալներին, որոնց հրահանգված է բաց անել օսմաններեն լեզվի դասավանդումով դպրոցներ, շիիթական բնակչության մեջ պրոպագանդել պանիսլամիզմի գաղափարները և ամեն կերպ աշխատել գրավել ադրբեջանական շիիթների համակրանքը։ Այդ գործակալները արդեն գտնվում են Թավրիզում, Սալմաստում, Խոյում և Ուրմիայում»[376]։ Հիշյալ վայրերում տենդագին հետախուզական գործունեություն էին ծավալել նաև թուրքական գլխավոր շտաբի սպաները, որոնց հանձնարարված էր պարզել Թավրիզի և Զուլֆայի շրջաններում ռուսական զորքերի թիվը և ուսումնասիրել հիշյալ շրջաններում թուրքական զորքերի ապագա տեղաբաշխման հնարավորությունները[377]։ Առկա էին նաև ուշագրավ տեղեկություններ այն մասին, որ թուրքական պառլամենտի կողմից գաղտնի ռազմական նպատակների համար կատարված երեք միլիոն ֆունտ հատկացման նպատակն է խաթարել Ռուսաստանի ազդեցությունը Հյուսիս-արևմտյան Իրանում[378]։

Ռուսական հյուպատոսները և դիվանագիտական գործիչները Իրանից և Թուրքիայից տագնապով հաղորդում էին, որ ամենուրեք համառ լուրեր են շրջում մոտակա թուրք-ռուսական պատերազմի մասին։ Ս. Միլլերը, օրինակ, գրում էր. «1911 թ. սկզբին թուրքական սահմանային կոմիսար, գլխավոր շտաբի գնդապետ Ռեֆիկ բեյի Թավրիզ ժամանելուց հետո վերսկսվեցին լուրերը ընթացիկ տարվա գարնանը Ադրբեջանի համար ռուս-թուրքական պատերազմի մասին»[379]։ 1911 թ. փետրվարին Ս. Օլֆերևը Վանից հեռագրում էր, որ ռազմական մինիստրի հրամանով Վանում սկսվել է բոլոր պահեստայինների ցուցակների ստուգումը։ Որոշված է նաև ավելացնել օկուպացիոն զորքերի թիվը Իրանում[380]։ Բայազեդից Ակի-

---

376 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, лл. 27—27 об.

377 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 152.

378 Նույն տեղում, թթ. 151հ—152։

379 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, лл. 20—21, 24, 29.

380 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 20.

մովիշը հաստատում էր այդ տեղեկությունները, ավելացնելով, որ թուրքական բանակի հայ զինվորները հայտնում են իրեն, որ պատերազմի դեպքում Թուրքիան մտադիր է Խարաբաջարի կիրճով Մակուի խանություն ուղարկել քրդական ջոկատներ, որոնք այնուհետև կներխուժեն Երևանի նահանգը[381]։ Սուլդուզի քրդերից թուրքերը կազմակերպում էին համիդիե ջոկատների նման հեծելազոր, իսկ տեղական կարապապախներին, որոնց համակրանքը Ռուսաստանի կողմն էր, զինաթափ էին անում[382]։ Տվյալներ կային նույնիսկ այն մասին, որ Թուրքիան պատրաստվում է անակնկալ վերցնել Թավրիզը, այնտեղից դուրս մղել ռուսներին և իրականացնել Ադրբեջանի անեքսիան[383]։ Թուրքական գործակալությունը և հատկապես զինվորներն ու սպաները ամենուրեք հայտարարում էին, որ իրենք բնավ չեն վախենում ռուսներից և պատրաստ են առաջին իսկ հարմար առիթի դեպքում չափել իրենց ուժերը նրանց հետ։ Որ ռուսների համար դժվար կլինի կռվել Թուրքիայի հետ, որովհետև Իրանում և Կովկասում մահմեդական բնակչության համակրանքը նրա կողմն է[384]։

Դեպի Թավրիզ զորքերի արագ տեղափոխության համար թուրքական կառավարող շրջաններում սկսեցին արտահայտվել Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ ճանապարհի վրա ավտոմոբիլային երթևեկություն կազմակերպելու մասին։ Այդ առթիվ ռուսական դեսպանորդին գրած իր 1911 թ. մարտի 29-ի հաղորդագրության մեջ Ա. Միլլերը գրում էր, որ թուրք-իրանական սահմանից մինչև Թավրիզ հասնող ճանապարհի վրա ավտոմոբիլային շարժում կազմակերպելու գործը կարող է իրականացվել միայն օտարերկրյա, ամենայն հավանականությամբ գերմանական ընկերության աջակցությամբ[385]։ Սա ուղղակի ակնարկ էր այն մասին, որ Գերմանիան լայն օգնություն է ցույց տալիս Թուրքիային։ Այդ մասին էր վկայում նաև Ստամբուլի տենդագին գործունեությունը Ադրբեջանը

381 АВПР, ф. «Политархив», 1907—1914, оп. 482, д. 380, лл. 49—49 об.

382 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 269 об.

383 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, лл. 29, 58—59.

384 Նույն տեղում, թ. 50։

385 Նույն տեղում, թթ. 31—32, 72—74։

տնտեսական տեսակետից ևս յուրացնելու ուղղությամբ։ Այս նպատակով Թուրքիան 1911 թ. գարնանը Թավրիզում բացեց «Օտտոմանյան առևտրական պալատը»[386]։ Ուրմիայի թուրքական հյուպատոսությունում ապրիլի 21-ին տեղի ունեցավ խորհրդակցություն, որին ներկա էին Խոյի և Սոուջբուլաղի հյուպատոսներ Սաադուլլա բեյը և Ռիֆաաթ բեյը, Չիարի-կալայի գայմագամ Զիա բեյը և այլ պաշտոնական անձինք, որոնք արտահայտվում էին Ադրբեջանի բնական հարստությունների, այդ թվում նաև Ուրմիա լճի աղի շահագործման գործը «թուրքական ձեռքը» վերցնելու անհրաժեշտության մասին[387]։

Վերոհիշյալ իրադարձությունները և լուրերը չէին կարող չանհանգստացնել ռուսական կառավարող շրջաններին։

1911 թ. մարտի 1-ին տեղի ունեցավ ռուսական արտաքին գործերի և ռազմական մինիստրությունների հատուկ խորհրդակցություն, որի օրակարգում կար միայն մեկ հարց՝ թուրքական զավթումների և Թուրքիայի քաղաքականության հարցը Իրանում։ Խորհրդակցության սկզբում բնութագրելով թուրքական զավթումների հետևանքով Իրանի արևմտյան սահմանում ստեղծված վիճակը, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության մերձավորարևելյան գործերի առաջին դեպարտամենտի վարիչ Կլեմմը հայտարարեց. «Թուրքերն աստիճանաբար շարժվում են դեպի Արևելք և դատելով մեր ունեցած տեղեկություններից, ներկայումս նրանց ձեռքին է գտնվում նախկին թուրք-պարսկական փաստական սահմանի և Ուրմիայի լճի միջև ընկած տերիտորիայի մի մասը։ Մենք մինչև այժմ սահմանափակվել ենք բողոքներով, որոնք, սակայն, չեն հասել իրենց նպատակին... Թուրքերի բացահայտ համառության մեջ չի կարելի չնկատել միանգամայն որոշակի նպատակներ և նախօրոք ծրագրված պլանի իրականացման ձգտումներ։ Այդ պատճառով ժամանակն է քննարկել, որքանով է առկա իրադրությունը դիպչում մեր շահերին և մասնավորապես. 1) ինչ չափով է վտանգ ստեղծվում մեր սահմանի համար, 2) ինչքանով մեզ համար

---

[386] АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, лл. 47, 48, 119.
[387] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, л. 269.

վտանգավոր կարող է լինել Թուրքական տիրապետության տակ բոլոր քրդերի միավորումը. 3) մինչև ուր մենք կարող ենք թույլ տալ Թուրքական սահմանի ընդարձակումը Արևելքում. 4) ինչպիսի միջոցառումներ է մեզ անհրաժեշտ ձեռնարկել մեր շահերը պաշտպանելու համար»։

Մտքերի փոխանակության ժամանակ հանգամանալից կանգ առնելով Թուրքական զավթումների ռազմագիտական նշանակության վրա, գեներալ-մայոր Ավերյանովը մասնավորապես նշեց, որ Ռուսաստանի ռազմական շրջաններում արդեն ձևավորվել է որոշակի տեսակետ Թուրքական զավթումների անմիջական վտանգի մասին։ Նրա կարծիքով ռազմագիտական նշանակության տեսակետից Թուրք-իրանական սահմանը կարելի է բաժանել երեք գոտիների. 1) Արարատից մինչև Դիլմանի զուգահեռականը, որտեղ անհրաժեշտ է ամեն գնով պահպանել մինչև 1905 թ. գոյություն ունեցած ստատուս-քվոն. 2) Դիլմանից մինչև Բանե, որտեղ անհրաժեշտ է հսկողության տակ պահել մի շարք ճանապարհներ և 3) Բանեից հարավ ընկած գոտին, որը թեև էականորեն չի ազդում Ռուսաստանի օպերատիվ խնդիրների վրա, սակայն այդ գոտու զավթումը Թուրքերի կողմից կունենա ռազմա-քաղաքական նշանակություն, այն է Օսմանյան կայսրությունը կուժեղանա թույլ Իրանի հաշվին։ Ավերյանովի կարծիքով եթե Թուրքերին թույլ տրվի հսկողություն սահմանել մի շարք առաջնակարգ նշանակություն ունեցող ճանապարհների վրա, ապա նրանք հեշտությամբ կկարողանան Բաղդադի 6-րդ կորպուսի ուժերը նետել դեպի Դիլման, սպառնալով Նախիջևանին և Երևանին։ Խոսելով քննարկվող հարցի քաղաքական նշանակության մասին գեներալը շեշտում է, որ ռուս-Թուրքական պատերազմի դեպքում Թուրքիայի կողմից Իրանի չեզոքության խախտումը անշուշտ կներկայացնի մի այնպիսի ակտ, որին անտարբեր չեն կարող մնալ նաև մյուս պետությունները։

Խորհրդակցության ժամանակ հատկապես մտքերի աշխույժ փոխանակություն ծավալվեց քրդական հարցի շուրջը, որը դիտվում էր որպես Թուրք-իրանական հարաբերությունների ամենակարևոր հարցերից մեկը։ Ավերյանովը, որի հեղինակությունը, որպես քրդական հարցի լավագույն գիտակի, ճանաչում էր գտել ռուսական ռազ-

մական և քաղաքական շրջաններում, հայտարարեց, որ «քրդերի միավորումը, որը կարող է գլուխ գալ թուրքական զավթումների հետևանքով, նույնպես ձեռնտու չէ մեզ և մեզ համար ցանկալի է ամեն կերպ նպաստել նրանց տարանջատմանը»։

Գնդապետ Տոմիլովը հայտնեց այն կարծիքը, որ Ռուսաստանի համար նպատակահարմար է իր կողմը գրավել իրանական քրդերի առավել ուժեղ և ազդեցիկ աշիրեթներին։ Կլեմմը առարկեց, նկատելով, որ դժվար թե հաջողվի կաշառել քրդերին, որովհետև նախ և առաջ նրանք փնտրում են փաստական հովանավորություն։ Նա կանգ առավ այն հարցի վրա, թե ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով կարելի է ազդել Թուրքիայի վրա։ Նրա կարծիքով թուրքերի կողմից գրավված գիրքերը նրանց տալիս են այնպիսի էական օգուտներ, որ դժվար թե հնարավոր լինի բարոյական ճնշման միջոցով նրանցից սպասել կամավոր զիջումներ։ Հաջողության գրավական ունենալու համար պետք է գործել ավելի եռանդուն և հնարավորության դեպքում անգլիացիների հետ համատեղ։ Անգլիայի դիվանագիտական աջակցությունը պետք է օգտագործել հենց այժմ «քանի նրա համար կարևոր է ճնշում գործադրել Թուրքիայի վրա իր օգտին լուծելու համար Բաղդադի ճանապարհի վերջին հատվածի հարցը»։ Կլեմմը հատուկ շեշտում էր, որ Անգլիան Ռուսաստանի հետ կգնա այնքան ժամանակ, ինչքան ձեռնտու կլինի իրեն և «նրա գործողությունները ուղղակի կախվածության մեջ կլինեն նրանից, թե կհաջողվի, արդյոք, Գերմանիային ինքնուրույն կերպով համաձայնության մեջ մտնել Թուրքիայի հետ երկաթուղու հարցում»։

Ինչ վերաբերում է Ռուսաստանի կողմից Թուրքիայի նկատմամբ կիրառվելիք ակտիվ գործողություններին, մերձավորարևելյան բաժնի տնօրենը առաջարկում էր հետևյալը. 1) կազմակերպել ռուսական և անգլիական ներկայացուցիչների համատեղ այց վիճելի գոտում. 2) խոյում բաց անել փոխ-հյուպատոսություն. 3) այդ երկու միջոցառումների անարդյունք մնալու դեպքում դիմել կովկասյան իշխանությունների ծրագրած քայլին՝ Արևմտյան Ադրբեջանի մի շարք կետերի ռուսական զորքերի կողմից գրավմանը։

Հակադրվելով այս տեսակետին, գեներալ Խոլմսենը և փոխգնդապետ Էնկելը նշում են, որ սահմանային վեճի սրումը Ռուսաս-

տանին կարող է հասցնել ռազմական բախման Թուրքիայի հետ, մինչդեռ այդ հարցը Ռուսաստանի համար իր էությամբ երկրորդական է և չարժե նրա համար դիմել ռիսկի։ Բացի այդ, ռուսական զորքերի կողմից Խոյի և Մարաղայի գրավումը կարող է վատթարացնել Ռուսաստանի հարաբերությունները Իրանի հետ, որը միանգամայն անցանկալի է։ Նրանք եզրակացնում էին, որ ամենակարևորը սահմանային վեճի և սահմանների ստատուս-քվոյի վերականգնման հարցն է։ Կլեմմը դրան պատասխանում է, որ ինչպես էլ լուծվի սահմանային հարցը, թուրքերը միշտ էլ հնարավորություն կունենան հաշվի չնստելով միջազգային իրավունքի հետ ներխուժել Իրան։

Կողմերի այս վեճում պաշտպանելով Կլեմմի տեսակետները Ավերյանովը հայտարարում է, որ ոչ մի դեպքում Ռուսաստանը չի կարող զոհել Կովկասում և Ադրբեջանում իր ունեցած ռեալ շահերը։ «Թուրքերը թափանցում են մեր անվիճելի ազդեցության գոտին, նրանք սպառնում են Ադրբեջանի նշանակալից մասին, որի հետ մենք կապված ենք քաղաքականապես, տնտեսապես և ռազմագիտական տեսակետից»։

Խորհրդակցության արդյունքները Կլեմմը հանրագումարի բերեց հետևյալ դրույթներով.

1. Ուրմիայի շրջանում և Արևմտյան Ադրբեջանում թուրքական զավթումները Ռուսաստանի համար ներկայացնում են որոշակի վտանգ, որովհետև կաշկանդում են Երևանյան ջոկատի օպերատիվ գործողությունները և որոշ հանգամանքներում կարող են ուղղակի սպառնալիք հանդիսանալ Անդրկովկասի համար։

2. Ռուսաստանին անցանկալի է բրդերի միավորումը։ Ընդհակառակն, անհրաժեշտ է ազդել իրանական քրդերի վրա և շեղել նրանց Թուրքիայից։

3. Թուրքերի վրա անհրաժեշտ է գործադրել դիվանագիտական ճնշում Անգլիայի հետ համատեղ։

4. Թեհրանում և առհասարակ Իրանում անհրաժեշտ է մամուլի միջոցով բորբոքել իրանական հայրենասիրությունը թուրքական զավթումների նկատմամբ։

5. Դիվանագիտական ներգործության անարդյունք մնալու դեպ-

քում անհրաժեշտ է ռազմական ուժով զբաղվել Խոյը և մի շարք այլ վայրեր։

Այնուհետև նշվում էր, որ եթե նույնիսկ թուրքերը ևս մղվեն մինչև 1905 թ. գոյություն ունեցած սահմանը, Ռուսաստանը ի վիճակի չի լինի պատերազմի դեպքում արգելք հանդիսանալ թուրքերի կողմից Իրանի շեղոքության խախտմանը։ Այդ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել Իրանական Ադրբեջանի հյուսիսում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման համար. կարևորագույն միջոցառում կհանդիսանար երկաթուղու անհապաղ անցկացումը մինչև Թավրիզ և Խոյ, պարսկական կազակական բրիգադի համալրումը նոր ուժերով և այլն[388]։

Վերոհիշյալ միջոցառումները իրականացնելու համար ռուսական քաղաքական շրջաններում առաջարկվում էին տարբեր ուղիներ։ Նախ նշվում էր, որ Ստամբուլի վրա դիվանագիտական ճնշում գործադրելու համար խիստ անհրաժեշտ է օգտագործել նաև Անգլիային, օգտվելով այն առիթից, որ վերջինս այդ ժամանակ եռանդագին աշխատում էր խափանել Բաղդադի երկաթուղու վերջին տեղամասի՝ Բաղդադ—Պարսից ծոց գծի շինարարության գերմանական ծրագիրը, և հետևաբար իր հերթին շահագրգռված էր Ռուսաստանի դիվանագիտական աջակցության մեջ։

Սակայն մյուս կողմից Ստամբուլում Անգլիայի հետ համատեղ դիվանագիտական ելույթը դժվարանում էր նրանով, որ բրիտանական կառավարությունը Ռուսաստանից պահանջում էր այդ «ծառայության» դիմաց զորքերը դուրս բերել Իրանից։ Ստոլիպինին ուղղված 1911 թ. փետրվարի 11-ի իր գաղտնի նամակում ցարական արտաքին գործերի մինիստրը գրում էր. «Մեր բազմաթիվ բողոքները Կ. Պոլսում, ինչպես միանձնյա, այնպես էլ Անգլիայի հետ համատեղ, առայժմ չեն տվել ցանկալի արդյունքներ։ Դա բացատրվում է մասամբ նրանով, որ Մեծ Բրիտանական կառավարության մեր նկատմամբ ցուցաբերած աջակցությունը մինչև այժմ, ըստ երևույթին, չի կրել բավարար չափով եռանդուն բնույթ,

---

[388] ЦГА ВМФ СССР, ф. 418, оп. 1, д. 3911, лл. 1—9; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 60, лл. 162—168.

քանի որ Լոնդոնի կաբինետը այդ հարցում իրեն համարում էր նշանակալիորեն կաշկանդված Պարսկաստանում մեր զորքերի ներկայության պատճառով։ Բազմիցս նշելով այդ հանգամանքը, արտաքին գործերի պետական քարտուղարը միաժամանակ հասկացնում է, որ մենք կարող ենք հույս դնել Անգլիայի առավել գործնական աջակցության վրա, հենց որ ձեռնամուխ լինենք մեր ջոկատների դուրս բերմանը պարսկական սահմաններից»[389]։

Մի շարք ռուսական գործիչներ (օրինակ, Գոլուբինովը և այլն) այն կարծիքին էին, որ անհրաժեշտ է նախապես մեծ քանակությամբ զորքեր կենտրոնացնել Ջուլֆայում, պատճառաբանելով, որ հակառակ դեպքում Թավրիզի ջոկատը կարող է հեշտությամբ կտրվել իր թիկունքից և ջախջախվել Թուրքական զորքերի կողմից[390]։ Զարիքովը գտնում էր, որ անհրաժեշտ է կարճ ժամկետում որոշել Թուրք-իրանական սահմանը և այն ամրապնդել հատուկ պայմանագրով։ Ներատովին գրած 1911 թ. մարտի 22-ի (ապրիլի 4-ի) նամակում դեսպանը վերոհիշյալ տեսակետը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Ինձ հայտնի է, որ Կ. Պոլսում գոյություն ունի մի ամբողջ քաղաքական խմբավորում, որը ցանկանում է բաց վիճակում թողնել Թուրք-պարսկական սահմանի մասին հարցը այն նկատառումով, որպեսզի օգտվելով պարսկական որևէ ներքին ճգնաժամից կամ Ռուսաստանի ուշադրության ժամանակավոր շեղումից մի այլ կողմ, Թուրքիայի ներկայիս սահմանները զավթումների միջոցով առաջ շարժվի դեպի արևելք»[391]։

Մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինին ուղղած նամակում, Կովկասի փոխարքան շարադրում էր իր տեսակետները Իրանում Թուրքիայի զավթումների ստրատեգիական, քաղաքական և առևտրա-տնտեսական նշանակության մասին, մասնավորապես ցարական կաբինետի ղեկավարի ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ անցած վեց տարիների ընթացքում Իրանի օկուպացված շրջաններում Թուրքիան փաստորեն ստեղծել է ռազմական

---

389 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7719, лл. 147—147 об.

390 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 18.

391 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 31, лл. 166—166 об.

հենակետ և Ռուսաստանի հետ պատերազմի դեպքում, արհամարհելով իրանական չեզոքությունը, նա այնտեղից կշարժվի դեպի հյուսիս, իր հետ տանելով բազմաթիվ քրդական ոնդեր։ Իսկ կոալիցիոն պատերազմի դեպքում թուրքական զորքերը Ադրբեջանի վրայով կներխուժեն ռուսական սահմանները, իրենց ետևից հրապուրելով Մակուի քրդերին և Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված շահսևեններին ու զարադաղցիներին։ Ապա ապստամբեցնելով Ելիզավետպոլի, Երևանի և Բաքվի նահանգների մահմեդական բնակչությանը, Նախիջևանից շարժվելով դեպի Շուշի և Եվլախ կկտրեն Ռուսաստանի գլխավոր կոմունիկացիան՝ Թիֆլիս—Բաքու երկաթուղային գիծը, դրանով իսկ Կարս—Էրզրումում օպերացիոն ուղղության վրա ռուսական բանակին դնելով անելանելի վիճակի մեջ[392]։

1911 թ. մարտի 1-ի հատուկ խորհրդակցության որոշման համաձայն, նույն ամսի 28-ին Ստամբուլում ռուսական և անգլիական դեսպաններ Զարիբովը և Լաուդերը արտաքին գործերի մինիստր Ռիֆաաթ փաշային նույնանման հայտարարություն արեցին այն մասին, որ կողմերը ցանկանում են կազմակերպել հյուպատոսների անձնական ուղևորություն Ուրմիա և Ադրբեջանի մի շարք այլ մարզեր «ծանոթանալու համար այն վայրերի իրադրության հետ, որտեղից ստացվում են այնքան հակասական տեղեկություններ»[393]։

Սակայն 1911 թ. դարնան վերջերին Իրանում ստեղծված քաղաքական իրադրությունը (ռեակցիոներների գործունեության ակտիվացումը ամբողջ երկրում և լիբերալների կառավարության ձերբակալումը՝ ճնշել դեմոկրատական շարժումը) հույս ներշնչեց թուրքերին, որ այն հնարավորություն կընձեռի ամրապնդել իրենց դիրքերը, կատարել նոր զավթումներ և հաջողությամբ դիմադրել ռուսանգլիական համատեղ ճնշմանը։

«Ուրմիայի շրջանում սկսված պայքարը Մոհամմեդ Ալիի կողմնակիցների և ֆիդայիների միջև,—գրում էր Գոլուբինովը,—որը

---

392 Տե՛ս Վորոնցով-Դաշկովի 1911 թ. մարտի 16-ի № 1563 նամակը ուղղված Ստոլիպինին, ЦГВИА, ф. 2000с, оп 1, д. 7719, лл. 180—181.

393 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 23.

համապատասխանում է Թուրքիայի շահերին, նրան հնարավորություն է տալիս ավարտել Ուրմիայի շրջանի զավթումը մինչև լճի հյուսիս-արևմտյան ափը (հարավ-արևմտյան ափը արդեն գտնվում էր օկուպացիայի գոտում) և միաժամանակ խոյում ապահովել գերակշռող դիրքեր»[394]։

Թեհրանի վրա նախկին շահ Մոհամմեդ Ալիի արշավանք նախապատրաստելուն զուգընթաց արևմուտքում ելույթի պատրաստություններ էր տեսնում նաև նրա եղբայր «դիվահար արքայազն» Սալար-ուդ-Դոուլեն։ Թուրքերը վերջինիս հետ կապում էին չափազանց մեծ հույսեր։ Բավական է ասել, որ հակահեղափոխական խռովության նախապատրաստությունները նա տեսնում էր Թուրքիայում։ Ամբողջ 1910 թ. ձմռանը գտնվելով Ստամբուլում նա կապեր էր հաստատում երիտթուրքական կառավարության հետ։ Թավրիզում հրատարակվող հայկական «Առավոտ» թերթի տվյալներով Ստամբուլում նա գործարար կապերի մեջ էր «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեի և երիտթուրքական կուսակցության ականավոր գործիչների հետ[395]։ Ս. Օլֆերևի տեղեկություններով, որը նա քաղել էր Վանում դաշնակցական կազմակերպության ղեկավար Իշխանից, Սալարի Թուրքիայում գտնվելու ժամանակ երիտթուրքական կոմիտեի անդամները նրան հատկացրել են դրամ և հանձնարարել պրոթուրքական ագիտացիա մղել իրանական քրդերի շրջանում[396]։

Սալար-ուդ-Դոուլեի հակահեղափոխական խռովությունը հաղթանակով պսակելու համար թուրքերը այդ գործի մեջ ներգրավեցին նաև Աբդուլ Ղադերին, որը ստանձնելու էր Սալարի բանակի ընդհանուր հրամանատարությունը[397]։ Երիտթուրքերի հետ կնքած համաձայնագրի համաձայն, խռովության հաջողության դեպքում Թավրիզում Սալարը իրեն հայտարարելու էր Իրանի շահ և ընդունելու էր Թուրքիայի հովանավորությունը։ Հետագայում ծրագրված

---

394 АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 21—21 об.

395 «Առավոտ», 2 հունիսի 1911 թ.։

396 М. С. Лазарев, նշվ. աշխ., էջ 182—183։

397 «Մշակ», 25 մայիսի 1911 թ., էջ 2։

էր նաև արշավանք կազմակերպել դեպի Թեհրան՝ կառավարությունը տապալելու և Իրանում բացարձակ միապետությունը վերականգնելու նպատակով[398]։

Միանգամայն հասկանալի էր, որ «խռովարար արքայազնի» հետ կապված ծրագրի իրագործման դեպքում Թուրքիան հնարավորություն կստանար իր անբաժան տիրապետությունը հաստատել Իրանական Քրդստանում և Ադրբեջանում։ Մյուս կողմից՝ թուրքերի աջակցությունը այս խռովությանը մեկ անգամ ևս դրսևորում էին Իրանի նկատմամբ երիտթուրքական կառավարության հակահեղափոխական ձգտումները, որովհետև Սալար-ուդ-Դոուլեն հանդես էր գալիս նախկին շահ Մոհամմեդ Ալիի հետ համատեղ, որը փորձում էր Իրանում հակահեղափոխական հեղաշրջում կատարել։

Համոզված լինելով, որ Ռուսաստանը և Անգլիան անխուսափելիորեն արգելք կհանդիսանան իր այս լայնահուն պլանների իրագործմանը, Սալար-ուդ-Դոուլեն մեծ հույսեր էր կապում նաև Գերմանիայի աջակցության հետ։

Հարավային (Իրաքյան) Քրդստանի ջաֆ և զենգենե ցեղերից հավաքագրելով որոշ քանակությամբ զորքեր, 1911 թ. ապրիլին Սալար-ուդ-Դոուլեն թուրքական զինվորական և քաղաքացիական իշխանությունների ուղեկցությամբ մեկնեց Իրանական Քրդստանի հյուսիս-արևմտյան շրջանները (Սուլդուզ, Սոուջբուլաղ և այլն), որտեղ հանդիպելով մի շարք ազդեցիկ ցեղապետերի հետ, հորդորում էր նրանց մտնել իր «բանակի» շարքերը։ «Նախկին շահի եղբոր՝ Սալար-ուդ-Դոուլեի հայտնվելը Սուլդուզում և Սոուջբուլաղում,—գրում էր Միլլերը Թավրիզից 1911 թ. ապրիլի 20-ին,— Ադրբեջանում օսմանյան կառավարության հարձակողական քաղաքականության նոր վկայությունն է»[399]։ Թուրքերի օգնությամբ Սալարին հաջողվեց իր կողմը գրավել Սուլդուզի և Սոուջբուլաղի զերզն, մամաշ, մանգուր և մուքրի ցեղերի քրդերին, «որոնք պատրաստ են նրա առաջին իսկ կոչով Մարաղայի վրայով շարժվել դեպի Թավրիզ, իրենց շարքերում ունենալով տասը հազար զինված հեծյալ-

---

[398] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 372, л. 34.

[399] АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 96.

ներ թուրք հրահանգիչների ղեկավարությամբ»[400]։ Այնուհետև նրա կողմն անցավ նաև Իրանական Քրդստանում բնակվող արաբական «Շեյխ Իդրիս» ցեղը, որը հայտնի էր իր հակումներով դեպի պանիսլամիզմն ու Թուրքիան։ Նրան ակտիվորեն օգնում էր նաև իր անները՝ լուրերի ռազմաշունչ ցեղի ազդեցիկ առաջնորդ Ֆեյլի Նազար խանը[401]։ Տեղեկություններ կային, որ բացի սենատոր Աբդուլ Ղադերից Սալարին օգնելու էր նաև Սուլդուզի թուրքական գայմագամ Մուստաֆա փաշան, իսկ բանակի փաստական ղեկավարությունը գտնվելու էր բրդական տարազ հագած, ծպտյալ վիճակում գործող թուրքական սպաների ձեռքում[402]։

1911 թ. հուլիսին Սալար-ուդ-Դոուլեն Մոհամմեդ Ալիին հայտարարելով Իրանի շահ, իսկ իրեն՝ Քրդստանի օրինական կառավարիչ, սկսեց նախապատրաստվել նախկին շահի հետ միաժամանակյա արշավանք կատարելու համար դեպի Թեհրան[403]։

Այսպիսով, 1907 թ. գարնանը շահական գահը գրավելու համար իր եղբոր՝ Մոհամմեդ Ալի շահի դեմ կազմակերպած անհաջող ելույթից ընդամենը չորս տարի հետո ձախողակ հավակնորդը հանդես էր գալիս միանգամայն նոր դերով՝ որպես պանիսլամիզմի խնդիրները արմատավորող Ստամբուլի քաղաքական շրջանների գործակալ։ Պատահական չէ, որ Թեհրանում վախենում էին, որ նրա հայտնվելը Ուրմիայում, որը արդեն փաստորեն միացված էր Թուրքիային, հանդիսանում է այդ նահանգի անեքսիայի նախերգանքը, որի օրինականացումը ժամանակավորապես հետաձգվում էր Ալբանիայում և Չեռնոգորիայում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով։

1911 թ. հուլիսի վերջին Սալար-ուդ-Դոուլեն գրավեց Քերմանշահը, ապա նաև Համադանը, Նեհավենդը և Արևմտյան Իրանի մի շարք այլ քաղաքներ։ Սակայն այնուհետև նրա համար սկսվեցին

---

400 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, лл. 67—67 об.

401 «Առավոտ», 2 հունիսի 1911 թ.։

402 «Մշակ», 21 մայիսի 1911 թ., էջ 1։

403 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 1202, л. 437; «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», вып. VII, стр. 93, 104.

անհաջողությունները։ Նախկին շահի, նրա եղբոր, ինչպես նաև Մարաղայի նահանգապետ Սամադ խան Շոջա-էդ-Դոուլեի հակահեղափոխական ելույթը երկրում առաջ բերեց համընդհանուր ժողովրդական զայրույթ։ Ամենուրեք կազմակերպվեցին զինված կամավորական ջոկատներ, որոնք պատրաստ էին ձախողել բացարձակ միապետության վերականգնման փորձերը։ Քրդերը և լուրերը աստիճանաբար լքեցին Սալարին և ցրվեցին իրենց յայլաղները։ Իրանական Քրդստանի ցեղերի մեծ մասը հրաժարվեց աջակցել նրան նաև այն պատճառով, որ, ըստ երևույթին, նրանք կռահեցին, որ Սալարը իր հետ բերում է թուրքական լուծ[404]։

Շուտով հեղափոխական ուժերը Եփրեմ Դավիդյանցի և Բահադուր Ջանգի գլխավորությամբ մայրաքաղաքից 80 վերստ հեռավորության վրա ջախջախիչ հարված հասցրին Սալար-ուդ-Դոուլեի զորքերին[405]։ Վերջինս ստիպված էր փախչել դեպի Իրանական Քրդստանի հարավային շրջանները, որպեսզի հավաքագրի նոր ուժեր և կրկին փորձի իրականացնել իր ծրագրերը[406]։

Մոհամմեդ Ալի շահի և Սալար-ուդ-Դոուլեի հակահեղափոխական խռովության ջախջախումից հետո, որի հետ թուրքերը կապել էին մեծ հույսեր, Ստամբուլում որոշվեց կարուկ շրջադարձ կատարել խռովարար արքայազնի նկատմամբ։ Այլևս վտանգավոր էր բացահայտ և գաղտնի աջակցություն ցույց տալ հակահեղափոխական ուժերին, որովհետև այդ քաղաքականությունը կործանիչ հարված կարող էր հասցնել Թուրքիայի հեղինակությանը ողջ Իրանում։ Որոշվեց խզել կապերը Սալարի հետ։ Ստամբուլից ցուցում տրվեց Իրանի թուրքական հյուպատոսներին «ձեռնպահ մնալ Սալար-ուդ-Դոուլեին հովանավորելուց»[407]։ Միաժամանակ թուրքական գործակալությունը սկսեց տարածել, թե Սալարը դիմել է թուրքական զին-

---

404 М. С. Лазарев, Նշվ. աշխ., էջ 184։

405 Այդ հաղթանակի առթիվ շահական կառավարությունը Եփրեմ Դավիդյանցին նշանակեց տարեկան 3600 թուման ցմահ թոշակ։ „Тифлисский листок", 1911г. 4 октября.

406 «Сборник дипломатических документов...», вып. VII, стр. 159—160. 162, 167.

407 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 95.

վորական իշխանություններին, աջակցություն խնդրել, սակայն մերժում է ստացել։ Իրականում նա կրկին ապաստան էր գտել Թուրքիայում[408], որի կառավարող շրջանները նրան պահում էին ռեզերվում ապագայում օգտագործելու համար։

Նոր իրադրությունը ստիպեց Ստամբուլին փոխել դիմակը և մինչև հակահեղափոխական ուժերի նոր ակտիվացումը հանդես գալ Իրանում հեղափոխության ու սահմանադրության ջատագովի դեմքով։ Այդ նպատակով, մասնավորապես, կրկին ջրի երես բարձրացվեց շեյխ Աբդուլ Ղադերը, որի մասին Ուրմիայում հրատարակվող «Ֆարվարդին» թերթի 1911 թ. օգոստոսի 14-ի համարում ասվում էր, որ նա Մոհամմեդ Ալի շահի դեմ զինված պայքար մղելու համար Ուրմիայի սահմանադրական իշխանություններին առաջարկել է իր ծառայությունները[409]։ Իրականում Թուրքական սենատորի այդ առաջարկությունը, որը անշուշտ թելադրված էր Ստամբուլի կողմից, հետապնդում էր Ուրմիայում անարխիան ուժեղացնելու նպատակներ, որը հնարավորություն կտար Թուրքիային հաջողությամբ շարունակել զավթողական քաղաքականությունը։ Կովկասյան ռազմական շրջանի շտաբը հետևյալ կերպ էր բնորոշում Ստամբուլի այդ տակտիկան. «Թուրքերը լեն ցանկանում, որ Պարսկաստանը խաղաղվի։ Նրանք գիտեն, որ այդ երկրում անիշխանությանը վերջ տրվելուց հետո այլևս հնարավոր չի լինի մեքենայություններ և դավեր նյութել Ռուսաստանի և Պարսկաստանի դեմ։ Թուրքիային հարկավոր է, որ Պարսկաստանում տիրի անիշխանությունը, որպեսզի նա հաջողությամբ շարունակի իր ագրեսիվ քաղաքականությունը Ադրբեջանում։ Իսկապես, այդ տեսակետից նրանք հասել են համեմատաբար փայլուն արդյունքների՝ շնորհիվ մեր ավելորդ լավատեսության և վստահության։ Թուրքերը Պարսկաստանում վարում են ծայրահեղ խորամանկ քաղաքականություն։ Եվրոպային հավաստիացնելով իրենց բարի ցանկություններում, մատնացույց անելով Ռուսաստանի գործողությունները Պարսկաս-

---

408 ملك‌الشعرا بهار، تاريخ مختصر احزاب سياسى انقراض قاجاريه، جلد اول، تهران، ۱۳۲۳، ص ۷

409 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, лл. 134—137 об, 141.

տանում, եվրոպացիների աչքում իրենց ի ցույց դնելով որպես տուժածներ, իսկ պարսիկների աչքում իսլամի անշահախնդիր հովանավորող ու պաշտպան,—թուրքերը չափազանց ճարպկորեն և առանց ավելորդ խոսակցությունների զավթեցին Ադրբեջանի մի մասը»[410]։

1911 թ. երբ Անգլիան ու Ռուսաստանը զբաղված էին Իրանում հեղափոխությունը ճնշելու հարցով, մասամբ նաև մարոկկոյական կոնֆլիկտով, թուրքերը շարունակում էին զավթումները և աննկատելիորեն ամրապնդվում իրանական տերիտորիայում։ Այս զավթումների հետևանքով ստեղծված սահմանը արդեն ուներ ռազմական կարևոր նշանակություն։ Թուրքական զորքերը երեք կողմերից շրջապատեցին Սալմաստը, թողնելով միայն Թավրիզ տանող մի նեղ ճանապարհ, որը ամբողջությամբ գտնվում էր թուրքոֆիլ քրդերի հսկողության տակ։ Փաստորեն Թավրիզի և Սալմաստի միջև կտրված էր հաղորդակցությունը։ Փակված էին նաև Սալմաստից խոյ տանող երկու գլխավոր ճանապարհները։ Ռուսական հյուպատոսների կարծիքով թուրքական հրամանատարությունը ձեռնպահ էր մնում Ուրմիան զավթելուց, վախենալով, որ դա Ռուսաստանի կողմից կդիտվի որպես cusus belli[411]։ Բարանդուզ գետի աջ ափի գրավումը արգելակում էր Ուրմիայի և Դոլի միջև հաղորդակցությանը, իսկ Ուշնուի և Սուլդուզի օկուպացիան միանգամայն կտրում էր Ուրմիա լճի արևմտյան ափը Իրանական Քրդստանից։ Հարձակողական շարժման շնորհիվ թուրքական զորքերը ազատ մուտք ունեցան նաև դեպի Խոյ (Եզդիկանի վրայով), իսկ Ջաղաթու գետի մոտ իրենց նախատեսած սահմանին հասնելու դեպքում տիրապետող դիրքեր ձեռք կբերեին նաև հարավից դեպի Թավրիզ տանող բոլոր ճանապարհների նկատմամբ։ Թեև Ուրմիայի և Սալմաստի հարուստ և ընդարձակ հարթավայրերի զգալի մասը դեռևս գտնվում էին Իրանի ձեռքում, սակայն սեպի պես ցցված լինելով զավթված տերիտորիաների միջև, նրանք համարյա լրիվ գտնվում էին թուրքական հսկողության տակ։ Բացի այդ, օկուպացիոն իշ-

---

410 «Сводка сведений...», Тифлис, 1912, № 19—20. стр. 13.

411 «Сводка сведений...», 1911, № 3, стр. 33—34.

խանությունների տրամադրության տակ էին գլխավոր լեռնանցքների մեծ մասը, որոնք նրանց առջև բաց էին անում Իրանում խորանալու հնարավորություններ։

Տիրապետող դիրքեր ձեռք բերելով մի շարք կարևոր հաղորդակցական գծերի նկատմամբ, թուրքական հրամանատարությունը հնարավորություն էր ստանում անհրաժեշտության դեպքում միավորել բանակային չորրորդ և վեցերորդ կորպուսները՝ համատեղ ռազմական գործողություններ վարելու համար[412]։ Իսկ այն հանգամանքը, որ թուրքերի ձեռքում գտնվում էին մի շարք հարուստ և բարեբեր դաշտավայրեր (օրինակ Սուլդուզի, Ուշնուի և այլն), նրանց հնարավորություն էր տալիս տեղում ունենալ սննդամթերքների հարուստ պաշարներ, հետևաբար նաև հնարավորություններ իրանական տերիտորիայում նշանակալից ռազմական ուժեր պահելու համար։

Այսպիսով, Իրանական Քրդստանում և Արևմտյան Ադրբեջանում իրանական տիրապետությունները վեր էին ածվել միանգամայն առանձին միավորների, որոնք զուրկ էին միավորող այն ուժից, որը կարող էր նրանց ընդունակ դարձնել դիմադրելու թուրքերին։ 1911 թ. ամռանը զավթումների գոտին ընդհանուր առմամբ համընկնում էին և նույնիսկ գերազանցում այն պահանջներին, որոնք շարադրված էին Դերվիշ փաշայի քաղաքական զեկուցագրում[413]։ Այլ կերպ ասած, թուրքերը արդեն հասել էին այն սահմաններին, որոնք նրանց կողմից ներկայացվում էին իբրև իրենց պատմական սահմաններ[414]։ Օկուպացված շրջանների ընդհանուր տարածությունը, ըստ Վ. Մինորսկու տվյալների, նշված ժամանակաշրջանում կազմում էր. հյուսիսից հարավ (երկայնքով) մոտ 300 կմ, իսկ արևելքից արևմուտք (լայնքով) 20—30 կմ, այն դեպքում,—գրում էր Վ. Մինորսկին,—երբ Բելգիայի տերիտորիան հավասար է 29,500 քառ. կմ»[415]։

---

412 «Объезд оккупированных...», стр. 124.

413 «Объезд оккупированных...», стр. 122—123.

414 «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878—1917», серия II, т. 19, ч. I, М., 1939, стр. 259. Հետագայում МОЭИ.

415 «Объезд оккупированных...», стр. 107.

Խոսելով այդ զավթումների նշանակության մասին, Գոլուբինովը նշում էր. «... հաշվի չնստելով ոչ մի բարոյական օրենսգրքի հետ, թուրքերը Իրանի այդ մասում իրենց համար ստեղծել են այնպիսի ռազմական և քաղաքական առավելություններ, որոնց կարող էին նախանձել նույնիսկ Պարսկաստանում տիրող երկու մեծ պետությունները»[416]։ Պետերբուրգի քաղաքական շրջաններում ևս գտնում էին, որ Թուրքիան այնքան հիմնավոր է հաստատվել Արևմտյան Իրանում, որ նրան այնտեղից կարելի կլինի դուրս մղել ոչ թե «գրասենյակային թանաքի հեղեղներով, այլ արագաձիգ թընդանոթներով ու գնդացիրներով»[417]։

Բոլոր նշաններից երևում էր, որ Ռուսաստանը վճռել է իրանական հեղափոխությունը Անգլիայի հետ համատեղ ճնշելուց հետո չսահմանափակվել լոկ Բ. Դրան առջև դիվանագիտական առաջադրություններով, այլ գործել ավելի վճռականորեն։ Դրանից գերմանական կառավարող շրջաններն եկան այն համոզման, որ Իրանում թուրքական հետագա զավթումների հետևանքով իր շահերն այնտեղ ապահովելու համար Ռուսաստանը ամբողջապես օկուպացիայի կենթարկի Արևմտյան Իրանը, այնտեղից դուրս կմղի թուրքերին և փաստորեն ի չիք կդարձնի Գերմանիայի՝ Իրանական Ադրբեջանում և Քրդստանում հիմնավորվելու փորձերը։ Այդ պատճառով Գերմանիան առաջարկեց Ռուսաստանին բանակցություններ սկսել «Իրանական գործերի» վերաբերյալ։ 1910 թ. հոկտեմբերի 28-ին գումարվեց ցարական կառավարության հատուկ նիստ, որտեղ որոշվեց համաձայնություն տալ գերմանական առաջարկությանը[418]։ Պետերբուրգի այս որոշումը պայմանավորված էր նրանով, որ իրանական հեղափոխության, ինչպես նաև Գերմանիայի ու Թուրքիայի ակտիվ քաղաքականության հետևանքով անգլո-ռուսական բլոկի դիրքերը Իրանում նշանակալիորեն թուլացել էին և ընդհակառակը Գերմանիային հաջողվել էր պարտադրել իր մրցակիցներին բազմաթիվ հարցերում իրեն ճանաչել որպես Իրանում հավասար իրավունքներ ունեցող կողմ։ Իր այդ հաջողությամբ Գեր-

---

416 АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, л. 21 об.

417 «Тифлисский листок», 1911, 28 июля.

418 Տե՛ս «Красный архив», 1933, т. 3 (58), стр. 52—57.

մանիան պարտական էր նաև Անգլիային։ Դեռևս 1909 թ. վերջերին այս երկու պետությունները համաձայնության եկան Բաղդադի երկաթուղու հարցում։ Այդ առթիվ Ստամբուլի ռուսական դեսպանին ուղղված 1909 թ. նոյեմբերի 10-ի իր հեռագրում Իզվոլսկին հաղորդում էր, որ Գերմանիան Անգլիային է հանձնում Բաղդադից մինչև Պարսից ծոց երկաթուղու կոնցեսիայի բոլոր իրավունքները, պայմանով, որ Անգլիան հրաժարվի ձեռնարկությանն այն մասի մասնակցությունից, որը վերաբերում է Բաղդադից հյուսիս ընկած գծին[419]։

Անգլո-գերմանական այս մերձեցումից հետո Անգլիան, Գերմանիայի պահանջով, առաջարկեց Ռուսաստանին Իրանի վերաբերյալ անգլո-ռուսական կոնվենցիային վերաբերող բոլոր հարցերում խորհրդակցել գերմանական կառավարության հետ[420]։

Ցարական կառավարության համար ստեղծված այս ծայրահեղ անբարենպաստ պայմաններում Պետերբուրգի կաբինետը որոշեց անհապաղ բանակցությունների մեջ մտնել Գերմանիայի հետ, բանի դեռ Անգլիան ինքը համաձայնություն չի կնքել նրա հետ ի հաշիվ Ռուսաստանի։

1910 թ. նոյեմբերին Պոտսդամում Նիկոլայ II-ի և Վիլհելմ II-ի միջև սկսվեցին բանակցություններ։ Իրականում այդ բանակցությունները դուրս էին գալիս Իրանում ռուս-գերմանական փոխադարձ բախումները վերացնելու շրջանակներից։ Գերմանական կառավարությունն առաջարկում էր կնքել ընդհանուր քաղաքական դաշինք Ռուսաստանի և Գերմանիայի միջև։ Գտնվելով դժվարին կացության մեջ ցարական կառավարությունը տատանվում էր վճռականորեն մերժել այդ առաջարկը։ Բանակցությունների ժամանակ ռուսական արտաքին գործերի մինիստր Սազոնովը հայտարարեց, որ Գերմանիան Իրանի ռուսական գոտում չպետք է ունենա երկաթուղային, խճուղային և հեռագրական կոնցեսիաներ։ Այդ պայմանը ընդունելու դեպքում Ռուսաստանը այլևս արգելք չի հա-

---

419 А. К. Фукс, նշվ. աշխ., էջ 128։

420 Նույն տեղում, տե՛ս նաև Իզվոլսկու 1910 թ. մարտի 10-ի № 380 հեռագիրը Լոնդոնի ռուսական դեսպանին։

բուցի Բաղդադի երկաթուղու շինարարությանը։ Նա կընդառաջի գերմանական ցանկություններին և ռուսական սահմաններից մինչև Թեհրան նախագծվող երկաթուղին կառուցելուց հետո, երկաթուղային ճանապարհով Թեհրանը կմիացնի Խանեկինի՝ այսինքն Բաղդադի մագիստրալի հետ։ Ռուսաստանը չի սահմանափակի գերմանական առևտուրն Իրանում։ Դրա փոխարեն Սազոնովը պահանջում էր, որ Գերմանիան պարտավորվի ռուսական գոտում Խանեկինից հյուսիս չպահանջել Իրանի հետ միացող Բաղդադի երկաթուղու այլ ճյուղավորումներ կառուցելու իրավունքներ[421]։

Պոտսդամում Վիլհելմ II-ի, արտաքին գործերի մինիստր Կիդերլեն-Վեխտերի, կանցլեր Բետման Հոլվեգի և Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովի պաշտոնական զրույցի ժամանակ բացի վերոհիշյալ հարցերից քննարկվեցին նաև իրանական գործերի վերաբերյալ կողմերին հետաքրքրող հույժ հրատապ և կարևոր մի շարք հարցեր, մասնավորապես պանիսլամիզմի և Իրանում թուրքական զավթումների հարցերը[422]։ Այդ առթիվ Նիկոլայ II-ին ներկայացրած իր զեկուցագրում Ռուսաստանի արտաքին գործերի զեկավարը գրում էր. «...Ես աշխատեցի նորին գերազանցության ուշադրությունը հրավիրել Ռուսաստանի շահերի տեսակետից վտանգավոր պանիսլամիստական քարոզչության զարգացման վրա, որը գալիս է Կ. Պոլսից և աստիճանաբար ընդգրկում է այն բոլոր երկրները, որտեղ ապրում է մահմեդական բնակչություն։ ... Նոր «բեռլինյան» խալիֆաթի երևան գալը,—նկատեցի ես,— չի կարող չանհանգստացնել Ռուսաստանին, որն ունի ավելի քան 20 միլիոն մահմեդական հպատակներ»[423]։

Զրույցի ընթացքում Սազոնովը պահանջեց նաև, որպեսզի գերմանական կառավարությունը ճնշում գործադրի Թուրքիայի վրա, Իրանում զավթումները դադարեցնելու համար։ Վիլհելմ II-ն այդ

---

421 „Die Grosse Politik", Bd. XXVII, t. 11, No. 10152—10155, ss. 835—842.

422 МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, 1938, стр. 33.

423 «Доклады бывшего министра иностранных дел С .Д. Сазонова Николаю Романову, 1910—1912 гг.», «Красный архив», 1923, № 3, стр. 6.

«անսպասելի» պահանջից զարմացած, հայտարարեց, որ Գերմանիան ոչ մի առնչություն չունի դրա հետ։ Սակայն, ի վերջո, ռուսական կառավարության համառ պնդումների ճնշման տակ, գերմանական կողմը համաձայնվեց համաձայնագրի մեջ մտցնել մի կետ, որի մեջ ասվում էր. «Քանի որ երկու պետությունները (Գերմանիան և Ռուսաստանը—Վ. Բ.) շահագրգռված են Իրանի անձեռնմխելիությունը պահպանելու և այդ երկրում կարգ ու կանոնը վերականգնելու գործում, նրանք պարտավորվում են այդ երկրում չխախտել որևէ պետության, և հատկապես Թուրքիայի զավթողական ձգտումները»[424]։

Հիշյալ կետը ռուսական դիվանագիտական շրջաններում դիտվեց որպես բանակցությունների ընթացքում ձեռք բերված կարևոր հաջողություն, մանավանդ որ դրանից անմիջապես հետո Կիդերլեն-Վեխտերը հայտարարեց Սազոնովին, որ Թուրք-իրանական հարաբերությունների հարցում գերմանական դիվանագիտությունը որոշել է որդեգրել նոր քաղաքականություն։ Մասնավորապես գերմանական արտաքին գործերի ղեկավարը հայտնեց, որ Գերմանիան նպատակ չունի խրախուսել Թուրքերին և պաշտպանել նրանց տերիտորիալ հավակնությունները Իրանի նկատմամբ։ Ավելին, նա առաջարկեց նույնիսկ Իրանը պաշտպանել Թուրքական ոտնձգություններից[425]։ Գերմանական ղեկավարների այս հայտարարությունները խորին գոհունակությամբ ընդունվեցին Նիկոլայ II-ի կողմից[426]։

Միանգամայն հասկանալի է, որ նման հայտարարությունների միջոցով Գերմանիան աշխատում էր Թուրքիայի հաշվին հասնել իր հիմնական նպատակին, այն է՝ Ռուսաստանի հետ կնքել ընդհանուր քաղաքական դաշինք, կտրել նրան Անտանտից և ստիպել, որ ճանաչի Իրանում իր քաղաքական իրավունքներն ու տնտեսական իրավահավասարության սկզբունքը։ Ցույց տալու համար, որ Թուր-

---

424 Նույն տեղում, էջ 10։

425 „Die Grosse Politik", Bd. XXVII, t. 11, No. 10159 - s.s. 846—848

426 «Доклады бывшего министра...», «Красный архив», 1923, № 3, стр. 8.

թիայի նկատմամբ իր «որդեգրած» քաղաքականության ուղղությամբ կատարում է նաև գործնական քայլեր, Բեռլինը հանձնարարեց Ստամբուլում դեսպան Մարշալլ ֆոն Բիբերշտեյնին հայտնել Բ. Դոանը, որ գերմանական կառավարությունը հավանություն չի տալիս Իրանում թուրքական ագրեսիային[427]։ Այնուհետև Զարիքովի հետ զրույցի ժամանակ շոշափելով թուրք-իրանական հարաբերությունների հարցը գերմանական դեսպանը հայտարարում է, որ իրանական տերիտորիաների օկուպացիան ներկայիս թուրքական կառավարության համար հանդիսանում է սուլթան Աբդուլ Համիդի ժառանգությունը։ Այդ պատճառով ինքը պարտք է համարել բացատրել թուրքական կառավարությանը, որ Իրանում զավթումներ կատարելու քաղաքականությունը միանգամայն սխալ ու վնասակար է և որ գերմանական կառավարությունը հույս ունի, որ թուրքերը դուրս կգան այն կետերից, որոնք գտնվում են անվիճելի իրանական սահմաններում[428]։ Զարիքովի կարծիքով Մարշալլ ֆոն Բիբերշտեյնի այս հայտարարությունը նպատակ ուներ հավաստելու, որ գործնականում Գերմանիան իրագործում է իր խոստումը ազդել Բ. Դոան վրա, որպեսզի վերջինս դուրս բերի իր զորքերը իրանական տերիտորիայի այն բոլոր կետերից, որտեղ թուրքերի ներկայությունը Ռուսաստանի համար համարվում է անցանկալի[429]։ Զարիքովը Ստամբուլից հաղորդում էր նաև, որ տեղի գերմանական «Osmanischer Lloyd» թերթի էջերում միանգամայն դադարեցին Ռուսաստանի հասցեին չարամիտ ու թշնամական հոդվածներ հրապարակվելը[430]։

Ըստ երևույթին, գերմանական արտաքին գործերի մինիստրությունը Ստամբուլում իր դեսպանի միջոցով հասկացրել էր թուրքական կառավարությանը լուրջ նշանակություն չտալ վերոհիշյալ հայտարարություններին և օգնել իրեն հաջողությամբ ավարտելու

---

427 АВПР, ф. «Персидский стол», 1910, д. 1200, л. 331.

428 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, лл. 274—274 об; ф. 2000 с, оп. 1, д. 7719, лл. 114—115.

429 Տե՛ս Զարիքովի 1910թ. դեկտեմբերի 19-ի նամակը։ АВПР, ф. „Канцелярия МИД", 1910, д. 33, л. 545.

430 МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, 1938, стр. 33.

Ռուսաստանի հետ սկսած բանակցությունները։ Այդ մասին վկայում են նաև հետևյալ փաստերը։ Նախ, թուրքական թերթերը ևս անմիջապես դադարեցրին Ռուսաստանի դեմ սիստեմատիկ հարձակումները, թուրքական կառավարությունը արգելեց նախապես ծրագրված պանիսլամիստների կոնգրեսի գումարումը Ստամբուլում և շեյխ-ուլ-իսլամին կարգադրեց, որպեսզի նա ազդի պանիսլամիստական կոմիտեի վրա՝ միառժամանակ Իրան և Ռուսաստան գործակալներ չուղարկելու համար[431]։ Բացի այդ Զարիքովը հաղորդում էր, որ թուրք-իրանական հարաբերությունների հարցում թուրքական կողմից նկատվում է որոշ էվոլյուցիա հաշտվողական իմաստով։ «Այդ էվոլյուցիան, ի միջի այլոց, ես վերագրում եմ թուրքերի այն աճող համոզմունքին, որ Գերմանիան չի պաշտպանի նրանց ոտնձգությունները Պարսկաստանի տիրապետությունների ամբողջականության նկատմամբ, որոնք մտնում են այդ երկրում մեր տնտեսական ազդեցության ոլորտի մեջ»[432]։ Մի այլ հաղորդագրությունում նա նշում էր հետևյալը. «Վերջին ժամանակներս նկատվող թուրքական կառավարության ավելի զուսպ գործելակերպը պարսկական սահմանում, ամենայն հավանականությամբ կապված է գերմանական կառավարության կողմից հյուսիսային Պարսկաստանում Ռուսաստանի հատուկ շահերի և ազդեցության իրավունքի ճանաչման հետ...»։ Այնուհետև Զարիքովը շարունակում էր, որ գնսպանատան ձեռք բերած գաղտնի մի փաստաթուղթ հաստատում է, որ ռազմական մինիստր Մահմուդ Շևքեթ փաշան, որը բացառապես գտնվում է գերմանական ազդեցության տակ, հոգ է տանում, որպեսզի Թուրքիան խուսափի իրանական տերիտորիաների նոր զավթումներից։ Իսկ մեծ վեզիրը պառլամենտում հայտարարել է, որ թուրքերի կողմից իրանական տերիտորիայում որոշ կետերի գրավումը բնավ հավասարազոր չէ այդ կետերը որպես թուրքիային միացված մասեր ճանաչելու և որ առաջիկա սահմանազատման ժամանակ գործը պետք է վճռվի Իրանի անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը հարգելու հիմքի վրա[433]։

---

[431] АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 34, лл. 471—472.

[432] МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, стр. 33.

[433] АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 33, л. 540.

Հաղորդելով այս բոլորի մասին, Զարիքովը, սակայն, նշում էր, որ այդ բոլորը կատարվում է տակտիկական նկատառումներով, ինչպես Գերմանիայի, այնպես էլ Թուրքիայի կողմից։ Կասկած հայտնելով իրանական հարցում այդ երկու պետությունների անկեղծ քաղաքականության վերաբերյալ, դեսպանը բերում էր այն փաստարկը, որ նման կարգի հայտարարություններից հետո Թուրքիան իրանական սահմանի մոտ է ուղարկել երեք հազար նոր զորքեր և ոչ առանց բարոն Մարշալի հավանության[434]։

Հետագա իրադարձությունները հաստատեցին Զարիքովի կասկածները։

Պոտսդամի բանակցությունների վերջում ոչ մի պաշտոնական գրավոր համաձայնագիր չկնքվեց։ Կողմերը սահմանափակվեցին միայն բանավոր զրույցներով։ Նոյեմբերի 15-ին ի զարգացումն Պոտսդամի բանակցությունների, գերմանական կառավարությունը Պետերբուրգում իր դեսպան Պուրտալեսին ուղարկեց ռուս-գերմանական համաձայնագրի մի նախագիծ։ Այդ նախագծում Բեռլինի կաբինետը մտցրել էր նաև մի շարք կետեր, որոնց նպատակն էր ստիպել Ռուսաստանին՝ ճանաչելու Գերմանիայի քաղաքական իրավունքներն Իրանում։ Մասնավորապես Գերմանիան առաջարկում էր, որպեսզի կողմերը պարտավորվեն հարգել Իրանի ամբողջականությունն ու անկախությունը[435]։ Դա գերմանական կառավարությանը կտար ձայնի իրավունք Իրանի քաղաքական գործերում և այդ երկրի հետ Ռուսաստանի հարաբերություններին միջամտելու հնարավորություն այն պատրվակով, որ Ռուսաստանի այս կամ այն քայլը կարող է ազդել Իրանի ամբողջականության կամ անկախության վրա։ Ռուսաստանին շահագրգռելու համար, Գերմանիան առաջարկում էր նաև համատեղ պաշտպանել Իրանի տերիտորիալ ամբողջականությունը թուրքական ոտնձգություններից[436]։

Ցարական կառավարությունը բնականաբար չէր կարող համա-

---

[434] АВПР, ф. «Канцелярия МИД», 1910, д. 34, лл. 471—472.

[435] Տե՛ս արտաքին գործերի մինիստրության ժամանակավոր կառավարիչ Ներատովի զեկուցագիրը Նիկոլայ II-ին (МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, стр. 171).

[436] „Die Grosse Politik", Bd. XXVII, t. II, No. 10159, s.s. 846—848.

ձայնել Գերմանիայի առաջին առաջարկի հետ, մանավանդ որ դա, փաստորեն, կնշանակեր անգլո-ռուսական համաձայնագրի խզում։ Այդ պատճառով, իր հերթին նա ներկայացրեց համաձայնագրի մի հականախագիծ, Նիկոլայ II-ի՝ «Հավանություն եմ տալիս» մակագրությամբ[437]։

Ի վերջո, 1911 թ. օգոստոսի 19-ին Պետերբուրգում կողմերի միջև ստորագրվեց հատուկ համաձայնագիր, որը հայտնի է Պոտսդամյան անունով, որովհետև նրա պայմանները մշակվել էին հիշյալ վայրում։ Պայմանագրի ներածականում նշվում էր, որ Գերմանիան ճանաչում է Ռուսաստանի հատուկ շահերը Իրանում, 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով սահմանված ռուսական ազդեցության գոտին, և պարտավորվում է Իրանում հետապնդել բացառապես առևտրական նպատակներ[438]։ Ըստ համաձայնագրի, Գերմանիան պարտավորվում էր սահմանափակել իր գործունեությունը Հյուսիսային Իրանում, մասնավորապես ռուսական ազդեցության գոտու շրջանակներում չպահանջել երկաթուղային, խճուղային ճանապարհների, հեռագրական գծերի և այլ կոնցեսիաներ, իսկ Ռուսաստանը պարտավորվում էր այլևս չխոչընդոտել Բաղդադի երկաթուղու կառուցմանը և իր կողմից Իրանում կառուցել երկաթուղային գիծ, որը Թեհրանը կապեր Խանեկինի՝ այսինքն Բաղդադի երկաթուղու հետ[439]։ Ցարական կառավարությունը ստացավ նաև Գերմանիայի բանավոր և խիստ գաղտնի խոստումը չկառուցել Բաղդադի երկաթուղու ճյուղեր Արևելյան Անատոլիայում։ Գերմանիան պարտավորվեց նաև Խանեկինից հյուսիս, Բաղդադի մագիստրալից, ռուսական և իրանական սահմանների ուղղությամբ չկառուցել ոչ մի գիծ և շաջակցել ուրիշներին նման երկաթուղիներ կառուցելու[440]։ Ռուսաստանի այս պահանջը ուղղված էր գլխավորապես երիտթուրքական կառավարության դեմ, որը, ինչպես նշվեց,

---

437 МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, стр. 174—175.

438 *Dr. Afschar*. La politique europeene en Perse..., pp. 248—249; *Paul Butterfield*, Նշվ. աշխ., էջ 34—35։

439 *J. C. Hurewitz*, Diplomacy in the Near and Middle East. A documentary Record: 1535—1914, vol. 1, pp. 267—268.

440 *Paul Butterfield*, Նշվ. աշխ., էջ 35—36։

դեռևս 1909 թ. մշակել էր Թուրքիայում երկաթուղային շինարարության մեծ պլան, որը նախատեսում էր Անատոլիայում գոյություն ունեցող գծերը շարունակել դեպի արևելք՝ Ռուսաստանի և Իրանի սահմանները, դեպի հարավ-արևելք՝ Բաղդադի ուղղությամբ և ապա դեպի Պարսից ծոց[441]։

Ամբողջությամբ վերցրած Պոտսդամի համաձայնագիրը իրենից ներկայացնում էր ցարական Ռուսաստանի նահանջը գերմանական իմպերիալիզմի առջև։ Ռուսաստանը խոշոր զիջում էր անում Գերմանիային, պաշտոնապես ճանաչելով Իրանում բաց դռների սկզբունքը, և Գերմանիայի առջև լայնորեն բաց էր անում Հյուսիսային Իրանի դռները։ Ցարական կառավարությունը Պոտսդամում փաստորեն ընդունեց դեռևս 1907 թ. Գերմանիայի կողմից իրեն ներկայացրած այն պահանջները, որոնք ընդամենը չորս տարի առաջ Պետերբուրգի կաբինետի կողմից դիտվեցին որպես Ռուսաստանի արժանապատվությունը ոտնահարող առաջարկություններ։ Պատահական չէ, որ ռուս-գերմանական համաձայնագրի հրապարակումը զոհունակությամբ ընդունվեց գերմանական բուրժուական և, նույնիսկ, պանգերմանական մամուլի կողմից[442]։ Այդ համաձայնագիրը միաժամանակ «նոյակ դաշինքի» և «նոյակ համաձայնության» պետությունների միջև ներքին դաշնակցային կարգապահության խախտման առավել բնորոշ օրինակներից մեկն էր, որովհետև առանց հաշվի առնելու Անտանտի գծով իր դաշնակիցների կարծիքը, Ռուսաստանը բանակցություններ մեջ մտավ Թրշնամական բլոկի գլխավոր պետության հետ։

Սակայն, չնայած գերմանական կառավարության Պոտսդամում ձեռք բերած ակներև հաջողություններին, վերջինիս չհաջողվեց իրագործել իր ամենանվիրական բաղձանքը՝ Ռուսաստանի հետ կնքել ընդհանուր քաղաքական դաշինք, կտրել նրան Անտանտից և գրավել իր կողմը կամ ծայրահեղ դեպքում չեզոքացնել ու մեկուսացնել նրան։

---

441 *А. Д. Новичев*, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 158.

442 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 18, лл. 175—176.

Հասկանալի է, որ այս համաձայնագիրը ուղղակի դիպչում էր Ռուսաստանի դաշնակիցների և առաջին հերթին՝ Անգլիայի շահերին։ Պատահական չէր, որ անգլիական կառավարող շրջանները լարված ուշադրությամբ հետևում էին բանակցությունների ընթացքին։

Վախենալով, որ Ռուսաստանի դեմ կարուկ ելույթի դեպքում վերջինս կարող է ավելի մերձենալ Գերմանիայի հետ, անգլիական կառավարությունն աշխատում էր հանդիսատես ձևանալ և համոզել իր երկրի հասարակական կարծիքին, թե իբր Պոտսդամյան բանակցությունները և Պետերբուրգի համաձայնագիրը առանձնապես ոչ մի էական նշանակություն չունեն։ Այս հարցի վերաբերյալ համայնքների պալատում հանդես գալով ընդարձակ ճառով, Էդուարդ Գրեյը հայտարարեց, որ Պոտսդամում Ռուսաստանի և Գերմանիայի բարեկամական մտքերի փոխանակությունը ամենևին չազդեց ռուսական կառավարության նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի վերաբերմունքի վրա[443]։ Սակայն իրականում Անգլիայի իմպերիալիստական շրջանները լրջորեն անհանգստացած էին Պոտսդամյան բանակցություններով։ Բենկենդորֆը Լոնդոնից հայտնում էր իր կառավարությանը, որ Խանեկինը երկաթուղու միջոցով Թեհրանի հետ կապելու վերաբերյալ Գերմանիային տրված Ռուսաստանի համաձայնությունը Անգլիան դիտում է որպես գերմանական շահերին ընդառաջ գնալու միջոցառում, ի վնաս անգլիական շահերի, որոնք սեղմվում են հարավում և Եփրատի հովտում, այն էլ առավել մեծ չափերով, քան դա կարող է հայտնի լինել ուրիշներին։ Այդ պատճառով Անգլիան չի կարող համաձայնվել, որ Իրանի հարավը բաց մնա Գերմանիայի առջև[444]։

Անգլիական մամուլը խիստ քննադատության ենթարկեց Ֆորին Օֆիսին և նրա ղեկավարին։ «Դեյլի մեյլ» թերթը հրապարակեց «Արտաքին գործերի մինիստրության թուլությունը» վերնագրով մի առաջնորդող, որտեղ հայտարարում էր, որ եթե «Պարսից ծոցի շրջանում Բրիտանական կայսրության շահերը պետք է մնան ան-

---

443 «Тифлисский листок», 1911, 3 марта.

444 МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, стр. 162.

պաշտպան, ապա անհրաժեշտ է վերջ դնել Անգլիայի արտաքին գործերի մինիստրության թույլ և անորոշ քաղաքականությանը»[445]։

Բրիտանական կապիտալը Իրանում երկաթուղային շինարարության ռուս-գերմանական նախագծերին հակադրում էր իր հականախագծերը, այն է՝ կառուցել Տրապիզոն—Թավրիզ երկաթուղային գիծը և Բաթումը հայտարարել ազատ նավահանգիստ, մի բան, որ հնարավորություն կտար Անգլիային ընդլայնել իր առևտրական կապերը Իրանի, հատկապես նրա հյուսիսի հետ։ Այդպիսի հականախագծերից մեկում ասվում էր, որ Ռուսաստանը առարկում է Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ երկաթուղու դեմ, վկայակոչելով ռազմագիտական տեսակետից նրա վնասակարությունը Ռուսաստանի հարավի ապահովության համար։ «Սակայն միջազգային շահերը չեն կարող հաշտվել «ռազմագիտական պատճառների հետ,—ճշում էր անգլիական կապիտալը,—քանի որ այդ պատճառները հանդիսանում են միջազգային երկաթուղային ճանապարհի եկամուտների կողոպտման համար լոկ օրինական արդարացում։ Եթե Տրապիզոն—Թավրիզ գիծը չկառուցվի և Բաթումը չհայտարարվի ազատ նավահանգիստ, իրանական երկաթուղային ճանապարհի շահերը էապես կտուժեն և այն կծառայի միայն Ռուսաստանի շահերին»[446]։

Հատկանշական է, որ այս անգամ արդեն Գերմանիայի փոխարեն Անգլիան էր հանդես գալիս որպես իրանական երկաթուղիների ինտերնացիոնալիզացման կողմնակից, հայտարարելով, որ «իրանական ճանապարհը միջազգային է և այդ պատճառով նրա բարեկարգման բոլոր հարցերը պետք է քննարկվեն և դիտվեն միջազգային տեսանկյունից»[447]։

Անտանտի մյուս դաշնակիցը՝ Ֆրանսիան ևս չէր կարող անտարբեր վերաբերվել ռուս-գերմանական բանակցություններին։

---

[445] «Тифлисский листок», 1911, 8 марта.

[446] «Великий железнодорожный путь из Европы в Индию». По протоколу заседания 8 февраля 1911 г. Лондонского Среднеазиатского общества. («Сборник Главного управления Генерального штаба», вып. XXVII, август, 1911, СПб., стр. 75).

[447] Նույն տեղում։

Հաշվի առնելով այդ հանգամանքը, համաձայնագիրը կնքելու նախօրեին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը հանձնարարել էր Փարիզում իր դեսպան Իզվոլսկուն պրոֆիլակտիկ միջոցառումներ ձեռնարկել ընդդեմ ֆրանսիական մամուլի և քաղաքական այն շրջանների, որոնք հավանական է, հանդես կգային ռուսական քաղաքականության դեմ անվստահություն բորբոքողների դերում[448]։ Հավանաբար դրությունը այն աստիճանի սպառնալից էր, որ Իզվոլսկին Փարիզից խնդրում էր ֆինանսների մինիստր Կոկովցովից մի կլորիկ գումար ֆրանսիական մամուլի գործիչներին կաշառելու համար[449]։

Անգլիան և Ֆրանսիան, որոնք Պետերբուրգի համաձայնագիրը դնահատեցին որպես Ռուսաստանի կողմից դաշալքություն և դաշնակցային պարտավորության կոպիտ խախտում[450], սկսեցին կասկածով վերաբերվել ցարական արտաքին գործերի մինիստրության քաղաքականությանը, ենթադրելով, որ վերջինս ցանկանում է Անտանտի իր դաշնակիցների հաշվին գործարքի մեջ մտնել Գերմանիայի հետ։ Այդ պատճառով նրանք համառորեն պնդում էին իրենց տեղյակ պահել համաձայնագրի գաղտնի կետերի հետ, որոնք առհասարակ գոյություն չունեին[451]։

Սակայն Պետերբուրգի համաձայնագիրը առավել բուռն դժգոհության տեղիք տվեց Թուրքիայում։ Ստամբուլը հրապարակայնորեն Գերմանիային մեղադրեց ուխտադրժության մեջ[452]։ Թեև Ֆարշալ ֆոն Բիբերշտեյնը փորձեց համոզել մեծ վեզիրին, որ համաձայնագիրը ոչնչով չի վտանգում Թուրքիայի շահերը[453], սակայն այդ փորձը չտվեց ցանկալի արդյունքներ։ Թուրքական կառավարող շրջանները զգում էին, որ Օսմանյան կայսրությանը վերաբերող հարցերում «բարեկամ» Գերմանիան համաձայնության մեջ է մտնում երրորդ պետության հետ[454], վաճառելով թուրքական շահերը

---

448 МОЭИ, серия II, т. XVIII, ч. I, стр. 372, 394.

449 Նույն տեղում, էջ 357։

450 *Paul Butterfield*, նշվ. աշխ., էջ 36։

451 *Dr. Afschar*, նշվ. աշխ., էջ 251։

452 *Paul Butterfield*, նշվ. աշխ., էջ 27։

453 *Dr. Afschar*, նշվ. աշխ., էջ 249։

454 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 31, л. 3.

և համաձայնվելով, որ թուրքական տերիտորիայի հսկայական մասը շարունակի դատապարտված մնալ ճանապարհներից զուրկ լինելու[455]։ Թուրքական կառավարությունը կռահում էր, որ Գերմանիան թուլացրեց իր օպոզիցիան Ռուսաստանի ազդեցության աճի դեմ կայսրության արևելյան մասերում, որովհետև համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Ռուսաստանը անխուսափելիորեն կփորձեր ընդլայնել Արևելյան Անատոլիայում երկաթուղային շինարարության արգելքի մասին 1900 թ. պայմանագիրը[456]։

Եվ վերջապես թուրքական կառավարող շրջանները խորապես դժգոհ էին, որ Գերմանիան փորձում է յուրացնել Իրանում թուրքական քաղաքականության ձեռք բերած հաջողության պտուղները։

Բրիտանական կառավարող շրջանները առիթը պատեհ համարելով սկսեցին բորբոքել Թուրքիայի դժգոհությունը Գերմանիայի և Ռուսաստանի դեմ։ Անգլիական մամուլը հատկապես աշխատում էր խոցել թուրքական կառավարության ինքնասիրությունը, միաժամանակ խորհուրդ տալով նրան վճռականորեն հանդես գալ Պոտսդամի համաձայնագրի և նրա ստորագրողների դեմ։ «Իվնինգ թայմսը», օրինակ, իր համարներից մեկում գրում էր, որ թուրքերը սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ և Քյամիլ փաշայի կաբինետի անկումից հետո իրենց քաղաքականությունը հիմնում էին Գերմանիայի անվերապահ օգնության ու աջակցության վրա։ Սակայն պոտսդամյան հանդիպումը ցույց տվեց, որ թեև գերմանական աջակցությունը գոյություն ունի, սակայն այն պայմանական է, որովհետև կարող է ցուցաբերվել միայն այն սահմաններում, երբ օտտոմանյան շահերը համընկնում են գերմանական շահերի հետ[457]։

Զգալով, որ Թուրքիայում սկսված դժգոհությունը կարող է սպառնալիքի տակ դնել թուրք-գերմանական «բարեկամական» հարաբերությունները, արտաքին գործերի մինիստր Ռիֆաաթ փաշան պատգամավորների պալատի նիստում հանդես եկավ հետևյալ

---

455 *Л. Д. Новичев,* Очерки экономики Турции до мировой войны, стр. 157.

456 *Paul Butterfield,* նշվ. աշխ., էջ 37։

457 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 31, лл. 35—36.

հայտարարությամբ. «Եթե Գերմանիան ճանաչում է Ռուսաստանի հատուկ շահերը Հյուսիսային Պարսկաստանում, դա չի նշանակում, որ նրա կողմից ժխտվում են Թուրքիայի կարևորագույն շահերը այդ նույն երկրում»[458]։ Մարշալլ ֆոն Բիբերշտեյնին ուղղված ռուսական դեսպանորդի այն հարցին, թե ինչ պետք է հասկանալ Իրանում թուրքական շահերի տակ, գերմանական դեսպանը պատասխանում է, որ իրեն հայտնի չէ, թե Իրանում ինչպիսի թուրքական շահերի մասին է խոսքը։ «Թուրքերը,—շարունակում է նա,—հակված են Պարսկաստանում տեղի ունեցող ամեն ինչին նայել որպես իրենց շահերի հետ կապված երևույթների. սակայն այդպիսի անորոշ մեծությունները (խոսքը Թուրքիայի մասին է—Վ. Բ.) չեն կարող հաշվի առնվել։ Ընդհանրապես,—ավելացնում է նա,—կարիք չկա մեծ նշանակություն տալ թուրքական արտաքին գործերի մինիստրի ամեն մի ճառասացությանը, որն, ըստ էության, աշխատում էր միայն ինչ-որ ձևով հանգստացնել հասարակական կարծիքը, որը գրգռված էր ձեզ հետ մեր համաձայնագրի մասին զանազան լուրերով և առանձնապես նրա մասին «Իվնինգ Թայմսի» չափազանցեցված և իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով»[459]։

Այսպիսով, եթե գերմանական դիվանագիտությունը աշխատում էր համոզել Ռուսաստանին, որ ինքը բնավ մտադիր չէ հաշվի նստել իրանական հարցի վերաբերյալ թուրքական կարծիքի հետ, այդ նույն կերպ վարվեց նաև թուրքական դիվանագիտությունը Գերմանիայի հանդեպ։ Բ. Դուռը որոշեց հասկացնել ցարական կառավարությանը, որ անկախ Իրանի նկատմամբ գերմանական քաղաքական գծից, Թուրքիան իրեն իրավասու է համարում մասնակցություն ցուցաբերել Իրանին վերաբերող բոլոր կարևոր հարցերի լուծմանը։ Այդ բանը հանձնարարվեց անել Պետերբուրգում դեսպան Թուրհան փաշային։ Վերջինս 1911 թ. սեպտեմբերին արտաքին գործերի մինիստրության ժամանակավոր կառավարիչ Նեբրատովի հետ գրույցի ժամանակ վերապահում անելով, որ իբր

---

458 Նույն տեղում, թ. 185։

459 Նույն տեղում, թթ. 19—195։

ինքը կառավարության կողմից լիազորված չէ պաշտոնական հայտարարություն անելու, ասում է, որ «Թուրքական կառավարությունը լրիվ ընդունում է Պարսկաստանի անկախության և ամբողջականության սկզբունքը»։ Քանի որ Ռուսաստանի շահերի համար միանգամայն անհարիր էր թույլ տալ Թուրքիային մասնակցելու Իրանին վերաբերող հարցերի լուծմանը, Ներատովը պատասխանում է դեսպանին, թե նկատի ունենալով, որ նա պաշտոնական հայտարարություն չի անում իրեն, ինքը այդ խոսակցության վրա նայում է որպես մասնավոր զրույցի և ոչ մի պատասխան չի տա նրան, թեև ուրախ է դեսպանից լսելու այդ հայտարարությունը[460]։

Տեսնելով, որ այս առաջարկությունը չծառայեց իր նպատակին, Բ. Դուրը որոշեց խոսել ավելի պարզ, խոսակցությանը տալով պաշտոնական բնույթ։ Ներկայանալով Ներատովին, Թուրհան փաշան այս անգամ հայտարարում է, որ Թուրքական կառավարությունը Պետերբուրգի համաձայնագրի մեջ տեսնում է իր սուվերեն իրավունքների խախտում[461]։

Այսպիսով Թուրքիան հայտարարում էր, որ նախ ինքը բնավ մտադիր չէ հաշտվել Ռուսաստանի և Գերմանիայի կողմից իր «սուվերեն իրավունքները» խախտելու փորձերի հետ և ապա անկախ նրանց քաղաքական պլաններից վարելու է իր շահերին համապատասխան ինքնուրույն քաղաքականություն։

Թուրքական կառավարող շրջանների դժգոհությունը Գերմանիայի «ոչ բարեկամական» վարքագծի նկատմամբ չէր կարող չանհանգստացնել վերջինիս, մանավանդ որ պետերբուրգյան համաձայնագրի կնքումից հետո Բաղդադի երկաթուղին ավելի ուժգին իր վրա սևեռեց Գերմանիայի ֆինանսական և քաղաքական շրջանների ուշադրությունը։ Գերմանական կառավարող շրջաններում հիանալի հասկանում էին, որ Բաղդադի երկաթուղու շինարարության հետ կապված տնտեսական և քաղաքական ծրագրերն իրագործելու գործը մեծապես կախված է նաև Թուրքիայից[462]։ Այդ պատճառով Գերմանիային բնավ ձեռնտու չէր սրել հարաբերությունները Թուրքիա-

---

460 МОЭИ, серия II, т. XVIII, ч. II, М., 1939, стр. 41.

461 МОЭИ, серия II, т. XIX, ч. I, М., 1939, стр. 41.

462 АВПР, ф. «Канцелярия МИД», 1907, д. 17, л. 61.

յի հետ։ Հետևաբար անհրաժեշտ էր հանգստացնել նրան և ապահովեցնել, որ ինքը մտադիր չէ ոտնահարել Օսմանյան կայսրության շահերը։ Ելնելով այս նկատառումից գերմանական դիվանագիտությունը սկսեց համոզել Բ. Դոանը, որ սկզբունքորեն բավարարված են Թուրքիայի «սուվերեն իրավունքները» ապագա խանեկին—Բաղդադ գծի նկատմամբ[463]։ Այնուհետև եռանդուն փորձեր կատարվեցին Թուրքիայի դժգոհությունը պետերբուրգյան համաձայնագրից բացառապես ուղղելու Ռուսաստանի կողմը, մեղադրելով նրան այն բանում, որ նա մերժեց խանեկինից հյուսիս միակցող գծերի կառուցման առաջարկը, որը ավելի ցանկալի կլիներ Թուրքիայի համար[464]։

Թուրք-գերմանական հարաբերությունների հետագա «ջերմությունը» վկայում է, որ Ստամբուլում հասկացան Պետերբուրգի համաձայնագրի և առհասարակ գերմանա-ռուսական հարաբերությունների բուն էությունը և որոշ չափով հանգստացան, թեև այդ իրադարձությունը երիտթուրքական կառավարության վրա թողեց տհաճ նստվածք։

Ինչ վերաբերում է Իրանին, ապա այստեղ ևս ռուս-գերմանական համաձայնագրի արձագանքները անբարենպաստ էին Գերմանիայի համար։ Այն վկայում էր, որ վերջինս դիտում է Իրանը որպես շահագործման օբյեկտ և Անգլիայի ու Ռուսաստանի հետ իր քաղաքական խաղերում որպես մանրուն դրամ[465]։ «Իրանեն նոու» թերթը, օրինակ, հիասթափությամբ գրում էր, որ «Գերմանիան Պարսկաստանում վայելում էր մեծ ժողովրդականություն, սակայն, պոտսդամյան հանդիպումից հետո պարզ դարձավ, որ պարսիկները կարող են հույս դնել միայն իրենց վրա»[466]։

* * *

Ինչպես նշվեց, 1911 թ. դարնանից ռուսական կառավարող շրջաններում գտնում էին, որ արդեն հասունացել է թուրք-իրանա-

---

463 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 32, л. 91 об.

464 АВПР, ф. «Канцелярия МИД», 1911, д. 31, л. 4.

465 *Т. С. Короткова,* Иран накануне первой мировой войны, стр. 14.

466 «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», вып. VI, 1910.

կան հարաբերություններին վճռականորեն միջամտելու անհրաժեշտությունը։ Թուրքական զավթումների հարցի բոլոր ծալքերը պարզորոշ պատկերացնելու և զավթումների չափերի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ձեռք բերելու նպատակով ցարական կառավարությունը Բ. Դոնից պահանջեց իր և անգլիական ներկայացուցիչներին թույլ տալ մեկնել թուրքական զորքերի օկուպացրած շրջանները՝ տեղում գործին ծանոթանալու համար։ Երկար քաշքշուկից հետո վերջապես Զարիբովը և Լաուդերը ստացան թուրքական կառավարության համաձայնությունը։ Կազմվեց հանձնաժողով, որի մեջ մտան Թեհրանում ռուսական միսիայի դրագոման Վ. Մինորսկին և Թավրիզում անգլիական հյուպատոս Շիպլեն։

Հանձնաժողովի անդամներին Թեհրանում ռուսական և անգլիական դեսպանորդների կողմից տրվեց համատեղ հրահանգ հետևյալ բովանդակությամբ. «Ձեր ուղևորության նպատակն է ուսումնասիրել և տեղեկացնել երկու միսիաներին թուրքական զավթումների ծավալի, զավթված վայրերում թուրքական վարչության տարածման չափի, թուրքերի նկատմամբ խաղաղ բնակչության վերաբերմունքի և վերջապես «դեհալեթների» մասին։ Ձեր խնդիրների մեջ է մտնում հավաքել այնպիսի տեղեկություններ, որոնք կարողանային որոշել թուրքական զավթումների վերջնական նպատակը, ինչպես նաև ձեռք բերել այլ կարգի տվյալներ, որոնք օգտակար լիներին այն դեպքի համար, եթե սահմանային վեճի հարցը փոխանցվեր միջնորդ դատարանի քննարկմանը, ընդ որում, հատկապես ցանկալի է, որ հնարավոր լիներ պարզել 1905 թ. փաստական սահմանը»[467]։

Մինորսկին իր կառավարությունից ստացել էր նաև հատուկ հանձնարարություն Իրանական Քրդստանի և մասնավորապես սահմանամերձ շրջանների վերաբերյալ աշխարհագրական-քաղաքական և տնտեսական բնույթի տեղեկություններ հավաքելու, սահմա-

---

[467] «Донесение кол. асс. Минорского на имя императорского посланника в Тегеране», Тавриз, 3 ноября 1911 г., «Материалы по изучению Востока», вып. 2, Пг., 1915, стр. 128—129.

նամերձ շրջանների բնակչության ցեղային կազմը որոշելու, պարզելու քրդական ցեղերի փոխհարաբերությունները, կարևորագույն աշիրեթների առաջնորդների գործունեությունը, ուսումնասիրելու ռազմական նշանակություն ունեցող ճանապարհները, կապեր հաստատելու առանձին ազդեցիկ ցեղերի ու ցեղապետների հետ և այլն։ Այս բոլորի մասին սահմանային հանձնաժողովի աշխատանքներն ավարտելուց հետո նա ներկայացրեց հանգամանալից զեկուցագիր, որը իրենից չափազանց մեծ արժեք էր ներկայացնում ռուսական քաղաքական և ռազմական շրջանների համար։

Ամենայն հավանականությամբ բրիտանական կառավարությունից նույնպիսի հանձնարարություններ ստացել էր նաև Շիպլեն։ Այդ մասին է վկայում նրա սեեռուն հետաքրքրությունը այն բոլոր հարցերի նկատմամբ, որոնցով հետաքրքրվում էր Մինորսկին։

Սահմանային հանձնաժողովի գործունեությունը տևեց 1911 թ. հունիսի 8-ից մինչև սեպտեմբերի 16-ը։ Իրանական Քրդստանի ամենախոր շրջաններում հանձնաժողովն անցավ ավելի քան 1500 վերստ տարածություն։

Ուղևորության ժամանակ թուրքերը ամեն կերպ աշխատում էին ռուսական և անգլիական ներկայացուցիչներին ցուցադրել զավթված շրջանների բնակչության «գոհունակությունը» թուրքական իշխանություններից։ Այդ նպատակով օկուպացիոն իշխանությունների ճնշման տակ տեղական բնակիչները և թուրքոֆիլական հակումներ ունեցող քրդերը ռուսական և անգլիական ներկայացուցիչներին էին հանձնում թուրքերի կողմից նախապես գրված կոլեկտիվ դիմումներ և այլն[468]։

1911 թ. սեպտեմբերի վերջերից սկսած Թուրքիան կրկին ուժեղացրեց զորքերի կենտրոնացումը իրանական սահմանների մոտ։ Այդ առթիվ Գոլուբինովը գրում էր, որ «...անգլո-ռուսական հանձնաժողովի ուղևորությունը օկուպացիայի ենթարկված շերտում ոչ մի ազդեցություն չգործեց թուրքերի զավթողական քաղաքականության վրա։ Ընդհակառակը, թուրքերը աշխատում են տարածել ազ-

---

[468] «Объезд оккупированных...», стр. 13, 21.

դեցությունը նույնիսկ այն վայրերում, որոնք մինչև այժմ չէին մտնում նրանց զավթումների մոտակա գոտու մեջ[469]։

1911 թ. սեպտեմբերին սկսվեց իտալո-թուրքական պատերազմը, որը լուրջ բարդություններ ստեղծեց Թուրքիայի համար թե ներքին և թե արտաքին քաղաքականության բնագավառում։ 1911 թ. «Հյուրրիեթ վե իթթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցության՝ հակաիթթիհադական այդ ընդդիմադիր ճակատի գործունեության ակտիվացումը առանց այն էլ սասանում էր երիտթուրքերի իշխանության հիմքերը։ Դրան գալիս էր ավելացնելու այն, որ իտալո-թուրքական պատերազմի նախօրյակին թուրքական զորքերը ծանր մարտեր էին մղում Եմենում և Ասիրում Իմամ Յահյայի, Սեյիդ Իդրիսի և Զեյդիտյան շեյխերի ինքնավարական շարժման դեմ։

Իտալիայի հանկարծակի հարձակումը Թուրքիայի վրա սպառնում էր կայսրության ներսում և դրսում կառավարության հեղինակության վերջնական անկումով և կարող էր տեղիք տալ ճնշված ժողովուրդների ազատագրական շարժման նոր վերելքի[470]։

Իտալո-թուրքական պատերազմը, ալբանական ապստամբությունը, Եմենի, Ասիրի ապստամբությունները, Իրանի և Թուրքիայի սահմանագլխում սկիզբ առած քրդական շարժումները ճնշելու համար ձեռնարկված ռազմական միջոցառումները, ինչպես նաև Իրանում ագրեսիվ քաղաքականություն վարելը երկրի ֆինանսները հասցրել էին ծայրահեղ լարման։

Կայսրության բնակչության վիճակը անշեղորեն վատթարանում էր։ Բացահայտ դժգոհության նշաններ էին նկատվում ոչ միայն ժողովրդի և ընդդիմադիր խմբավորումների շրջանում, այլև պետական քաղաքական գործիչների մոտ։ Պատահական չէ, որ կառավարող շրջանների որոշ մասը, ելնելով Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության ճգնաժամից, առաջարկում էր կար-

---

469 АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 20 об.—21.

470 Այս նկատառումները թեև ստիպեցին երիտթուրքերին Իմամ Յահյայի հետ փնտրել հաշտություն, բայց դա ոչնչով չփոխեց վիճակը (ЦГИА Груз. ССР ф. 521. д. 511, л. 14; д. 549, лл. 58—58об).

գավորել Թուրք-իրանական հարաբերությունները և նույնիսկ մերձենալ Ռուսաստանի հետ։ Իտալիայի վճռական ելույթից հետո ի պաշտպանություն Տրիպոլիում իր «հատուկ շահերի», Թուրքական պառլամենտական մեծամասնության օրգան «Թանինում» Միդհատ փաշայի որդին՝ Հուսեին Ջահիդ բեյը, որը առհասարակ հայտնի էր իր ռուսաֆոբ հայացքներով, հրապարակեց մի հոդված, որի մեջ հատուկ կանգ էր առնում նաև իրանական գործերի վրա։ Մասնավորապես նա գտնում էր, որ լրիվ հնարավոր է վերացնել այդ հողի վրա Ռուսաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող «թյուրիմացությունները» նրանց կողմից Իրանի ամբողջականությունը ճանաչելու հիմքի վրա։ Այս հայտարարությունը կարելի էր մեկնաբանել որպես Թուրքիայի քաղաքական շրջանների որոշ մասի համաձայնություն՝ Ռուսաստանի հետ իրանական գործերում ընդհանուր լեզու գտնելու վերաբերյալ։ Հուսեին Ջահիդ բեյը առաջ էր քաշում հետևյալ պայմանը.

«Մենք ընդունում ենք, որ Ռուսաստանը հատուկ շահեր ունի Հյուսիսային Պարսկաստանում։ Իր կողմից Ռուսաստանը ևս երաշխիքներ կտա մեզ, որ այդ հատուկ շահերը ապագայում չեն ընդունի այնպիսի ձևեր, որոնք անհամատեղելի լինեն Պարսկաստանի անկախության հետ»[471]։ Ինչպես երևում է, իր այս տեսակետի մեջ Հուսեին Ջահիդ բեյը մենակ չէր։ Այդ մասին է վկայում թեկուզ այն, որ Իրանում լուրեր տարածվեցին, թե շուտով Թուրքական զորքերը դուրս են բերվելու օկուպացված տերիտորիաներից[472]։

Սակայն ողջախոհ քաղաքականություն վարելու վերոհիշյալ խորհուրդները ոչ մի արձագանք չգտան իթթիհադական կառավարության մոտ։ Ընդհակառակը, որոշվեց Աֆրիկայում տերիտորիալ կորուստները փոխհատուցել Իրանում նոր զավթումներով։ Սեպտեմբերի 26-ին Զարիքովը այդ մասին Ներատովին հայտնում էր հետևյալը. «Այսօր ինձ հաղորդեցին, որ Տրիպոլիի փոխարեն Թուրքերը մտադիր են փոխհատուցում որոնել Ուրմիայի կողմում»[473]։ «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեն իր պրո-

---

[471] МОЭИ, серия II, т. XVIII, ч. II, стр. 263.

[472] АВПР, ф. «Персидский стол Б.», 1912—1915, д. 142, л. 36.

[473] МОЭИ, серия II, т. XVIII, ч. II, стр. 31.

պագանդիստների միջոցով համոզում էր ժողովրդին, որ Տրիպոլիի վերաբերյալ հարցը Թուրքիայի համար հանդիսանում է միայն ազգային ինքնասիրության հարց։ Որ դա կենսական նշանակություն ունեցող խնդիր չէ, որովհետև աֆրիկյան այդ նահանգի կորուստը չի սպառնում Թուրքիայի գոյությանը, ընդհակառակը, դրանից նա դառնում է ավելի ուժեղ։

Վանի իթթիհադականների ակումբում հանդես գալով ճառով, երիտթուրքական կուսակցության անդամ սպաներից մեկը հայտարարում է. «Մեր ապագան Փոքր Ասիայում է։ Մենք պետք է փընտրենք նոր նվաճումներ և փոխհատուցումներ Արևելքում, Արաբատի և Պարսկաստանի կողմում։ Թուրքիայի քաղաքականությունը պետք է կայանա նրանում, որպեսզի Փոքր Ասիայում ստեղծվի հզոր ռազմական պետություն. այն ժամանակ Կ. Պոլիսը ընդմիշտ կմնա մեր ձեռքերում, իսկ մեր տիրապետությունները ինքնըստինքյան կընդլայնվեն Արևելքում։ Մեր կողմից Ադրբեջանի խաղաղ նվաճումը արդեն սկսված է ... Դրանք միայն առաջին քայլերն են։ Եթե ռուսներին, մեր այդ դարավոր թշնամիներին, ներկայումս հաջողվի կանգնեցնել մեր շարժումը դեպի Իրան, ապա այդ դեպքում ապագան կպատկանի Ռուսաստանին և ոչ թե Թուրքիային։ Այդ պատճառով մեր կողմից Պարսկաստանը մաքրելու վերաբերյալ ռուսական պահանջները սիրալիր լսում են Կ. Պոլսում, սակայն, նրանց հետ, ըստ էության, ոչ-ոք չի ցանկանում հաշվի նստել։ Կառավարությունը աշխատում է միայն զանազան խոստումների, սիրալիրությունների և Թուրքիայի թուլության վկայակոչումների օգնությամբ ժամանակ շահել։ Մինչև այժմ դա փայլուն կերպով հաջողվում էր, ռուսական դիվանագիտությունը հեշտությամբ ենթարկվում էր մեր հավաստիացումներին և ի վնաս իրեն ձգձգում վեճը թուրք-պարսկական սահմանի վերաբերյալ։ Այժմ միանգամայն հարմար է շարունակել այդ քաղաքականությունը... Անարխիան Պարսկաստանում, մահմեդական զանգվածների զարթոնքը Ռուսաստանում, սուննիթական աշխարհի մերձեցումը շիիթականի հետ և վերջապես Արևելքում Ռուսաստանի երկչոտ ու տատանվող քաղաքականությունը մեզ իրավունք է տալիս համարելու, որ երիտթուրքերի վիթխարի պլանները Պարսկաստանի և Կովկասի նկատմամբ ուտոպիա

չեն, այլ դա երազանք է, որի իրագործումը միանգամայն հնարավոր է, պայմանով, որ հմտորեն իրագործվեն մեր կողմից կանխամտածած պլանները։ Ամբողջ հարցը այժմ կայանում է միայն հին սիստեմով գործելու կարողության մեջ, այն է՝ ձգձգել Թուրքպարսկական սահմանային վեճի լուծումը և շքաշվել տալ լայն խոստումներ ու նույնիսկ գրավոր հավաստիացումներ։ Այդ ընթացքում, երբ դեռ Պարսկաստանում կշարունակվի անարխիան, իսկ Ռուսաստանը, գտնվելով խաղաղության փնտրտուկների մեջ, կերազի պարսկական հարցի լուծման մասին, Թուրքիան կկարողանա ամրապնդել արդեն զավթած հիանալի ստրատեգիական կետերը, որտեղ խաչաձևում են կարևորագույն ճանապարհները իրենց եզակի լեռնանցքներով և բնական ամուր դիրքերով։ Դիրքերի ամրապնդման աշխատանքները այդ ողջ ժամանակամիջոցում դաղտնի տարվել են և տարվում են գլխավոր շտաբում գերմանական ռազմագետների օգնությամբ մշակված պլանի համաձայն։ Մեր զինվորական շրջանները ենթադրում են, որ այդ բոլոր աշխատանքները կավարտվեն 3—4 տարուց, այսինքն հենց այն ժամանակ, երբ համաձայն նոր վերակազմակերպման, անատոլիական կորպուսները լրիվ կհամալրվեն և կհագեցվեն անհրաժեշտ ամեն ինչով։ Միայն այն ժամանակ հաջողության բոլոր երաշխիքները կլինեն մեր կողմում և Ռուսաստանը չի կարողանա փակել մեր ճանապարհը դեպի Պարսկաստանի խորքը։ Այսպիսով, Ադրբեջանը իր թուրքական ու քրդական տարրերով, կարևոր ստրատեգիական կետերով Թուրքիային միացնելու գործը մեզ համար այլևս չի ներկայացնի անհաղթահարելի դժվարություն... Եթե Թուրքիայի տրամադրության տակ լինի բավարար ժամանակ և եթե Ռուսաստանը ներկայումս ակտիվորեն չմիջամտի Պարսկաստանի գործերին, ապա շուտով ռուսների վիճակը կխարխլվի ոչ միայն Պարսկաստանում, այլև Կովկասում»[474]։ Իրանի և Կովկասի նկատմամբ երիտթուրքական կառավարության ծրագրերի այս անսքող շարադրանքում միանգամայն պարզորոշ երևում է, որ Թուրքիան պատրաստվում էր էլ ավելի ընդլայնել իր նվաճողական քաղաքականությունը Արևելքում։ Գեր-

[474] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 251—252.

մանական իմպերիալիզմը խրախուսում էր իթթիհադի վերոհիշյալ պլանները, առաջնորդվելով հետևյալ քաղաքական նկատառումներով։ Նախ, իտալո-թուրքական պատերազմը Գերմանիային դրեց շափազանց ծանր կացության մեջ, լուրջ դժվարություններ ստեղծելով Եվրոպայում և Մերձավոր Արևելքում նրա արտաքին քաղաքական կուրսի իրականացման բնագավառում։ Իր խոստումներին հակառակ Իտալիայի դեմ հանդես գալը կնշանակեր իր իսկ ձեռքով մղել նրան Անտանտի գիրկը։ Իսկ Հյուսիսային Աֆրիկայում իտալական ագրեսիայի բացահայտ պաշտպանությունը կնշանակեր հարվածի տակ դնել Գերմանիայի քաղաքական և տնտեսական այն դիրքերը, որոնք այնքան դժվարությամբ ձեռք էին բերվել Թուրքիայում և առհասարակ Մերձավոր Արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի հետ մրցակցային անհաշտ պայքարում[475]։ Գտնվելով դաշնակից Իտալիայի և «բարեկամ ու եղբայր» թուրքական սուլթանի միջև, Վիլհելմ կայզերը, գերմանական թերթերից մեկի հաջող արտահայտությամբ, «իր շախմատային խաղում անխուսափելիորեն պետք է կորցնի կամ սպիտակ, կամ սև փղին»[476]։

Այնուհետև պատերազմը սպառնում էր թուլացնել Թուրքիային, հանձինս որի գերմանական իմպերիալիզմը տեսնում էր օժանդակ ռազմական ուժ իր հակառակորդների դեմ։ Բացի այս բոլորից «Նոյյակ դաշինքի» անդամ երկրի՝ Իտալիայի ելույթը Օսմանյան կայսրության դեմ սպառնալիքի տակ դրեց Գերմանիայի հեղինակությունը բուն Թուրքիայում։ Այստեղ սկսվեցին լուրջ դժգոհություններ։ «Թուրքիան Գերմանիայի համար,— գրում էր երիտթուրքական կուսակցության գործիչ Մեշադ էֆենդին,— հանդիսանում է միայն շահագործման առարկա և գործիք... Կայզերը գալիս է սուլթանի մոտ և ասում. «Ես քո եղբայրն եմ», ինչպես նույն խոսքերով գալիս էր Մարոկկոյի սուլթանի մոտ։ Նա վաճառեց Մարոկկոյի «եղբորը» սիսեռի ապուրի գնով։ Նույնը կլինի նաև Թուրքիայի հետ»[477]։

Անտանտի երկրների ամամուլը իր հերթին բորբոքում էր Թուր-

---

475 „Die Grosse Politik", Bd. XXX, No. 1, ss. 100—101.

476 «Война Италии с Турцией», вып. I, СПб., 1912, стр. 10.

477 Նույն տեղում, էջ 11։

քիայի հասարակական կարծիքը Գերմանիայի դեմ։ Մասնավորապես թերթերը գրում էին, որ Գերմանիայի՝ Փոքր Ասիայում նախատեսած ստրատեգիական ճանապարհների շինարարության պլանները, ինչպես նաև Թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Ուրմիայի և Խոյի շրջանները, որը սպառնում է լուրջ բարդություններ ստեղծել Ռուսաստանի հետ, ձեռնտու է բացառապես Գերմանիային, իսկ Թուրքիայի օգուտը վերին աստիճանի կասկածելի է[478]։

Բնական է, որ գտնվելով այսպիսի դժվարին կացության մեջ Գերմանիան աշխատելու էր ինչ-որ չափով արդարացնել իրեն թուրքական կառավարող շրջանների մոտ, որպեսզի առաջիկայում ևս հնարավորություն ունենար օգտագործել նրանց իր քաղաքական կոմբինացիաներում։ 1911 թ. սեպտեմբերի 18-ին Թուրքիայում ռուսական ռազմական գործակալ գեներալ-մայոր Խոլմսենը հաղորդում էր գլխավոր շտաբի պետին, որ Ստամբուլում գերմանական դեսպանը խորհուրդ է տվել թուրքերին զինվել համբերությամբ և Աֆրիկայում ունեցած կորուստները փոխհատուցել Իրանի հաշվին[479]։ Մի այլ հաղորդագրության մեջ Խոլմսենը գրում էր, որ Թուրքիան անպայման կընդունի գերմանական այդ առաջարկը, որովհետև նա գիտակցում է, որ Կովկասն ու Հյուսիսային Իրանը զավթելու պլանները կարող են իրականացվել միայն «Եռյակ դաշինքի» աջակցությամբ։ «Հետևաբար,—եզրակացնում էր նա,—ողբալով Տրիպոլիի կորուստը, շուտով Թուրքիան կրկին կվերադառնա «Եռյակ դաշինքի» գիրկը»[480]։

Իսկապես, ստանալով Գերմանիայի օգնության հավաստիացումները, Թուրքիան Իրանում սկսեց գործել ավելի վճռականորեն։ 1911 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում թուրքական հրամանատարությունը Ուրմիայի և Խոյի շրջաններում կազմակերպեց հակառուսական մի շարք պրովոկացիոն ելույթներ։ Հոկտեմբերի 28-ին Ջամալաբադ գյուղի մոտ թուրքական ջոկատը կոպ-

---

478 Նույն տեղում։

479 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3819, л. 118.

480 Նույն տեղում, թ. 116։

տորեն կանգնեցրեց և ստուգման ենթարկեց ռուսական հոգևոր միսիայի անդամ Գրիգորիին և նրան ուղեկցող կազակներին։ Նույն ամսին քրդական ջոկատները, որոնց մեջ գտնվում էին նաև թուրքական զինվորներ, հարձակում գործեցին Ուրմիայից խոյ վերադարձող ռուսական սպա Բիշերախովի ջոկատի վրա[481]։

Մյուս կողմից Իրանում թուրքական գործակալության մղած պանիսլամիստական պրոպագանդան ավելի էր բորբոքում երկրում տիրող հակառուսական տրամադրությունները։ Իրանական մամուլում տպագրվող հոդվածներում և ցույցերի ժամանակ արտասանած ճառերում առաջ էր քաշվում այն միտքը, որ իտալո-թուրքական պատերազմը լոկ տեղական բնույթի կոնֆլիկտ չէ երկու պետությունների միջև, այլ այն ունի առավել կարևոր իմաստ։ Որ դա պայքար է քրիստոնեության ու իսլամի միջև։ Հետևաբար մահմեդական բոլոր պետություններին անհրաժեշտ է միավորվել ընդհանուր թշնամու դեմ։ Իրանը, որպես մահմեդական երկիր, կարող է չկասկածել, որ Թուրքիայից հետո կգա իր հերթը կուլ գնալու և ստրկական կախման մեջ ընկնելու քրիստոնեական պետություններից։ Հետևաբար նա չի կարող լրիվ համերաշխության մեջ չլինել իր հարևան Թուրքիայի հետ, անկախ նույնիսկ նրանից, որ նա Արևմտյան Իրանում սիստեմատիկորեն վարում է տերիտորիալ զավթումների քաղաքականություն[482]։

Բնական է, որ «Թուրք-իրանական համերաշխության» պանիսլամիստական կոչը իր սուր ծայրով ուղղված էր Ռուսաստանի դեմ։ Այդ պատճառով ռուսական գործիչները կառավարությունից պահանջում էին շտապ կարգով ձեռնարկել հակամիջոցներ։ Վորոնցով-Դաշկովը, օրինակ, Ներատովին ուղղված նամակում հետևյալ կերպ էր բնութագրում Հյուսիս-արևմտյան Իրանում գոյություն ունեցող իրավիճակը. «... Մեր անվճռական քաղաքականությունը Կ. Պոլսում և Պարսկաստանում հասցրեց թուրքերի կողմից մեր կազակական պահակախմբի վրա հանդուգն հարձակման։ Ես համարյա վստահ եմ, որ նման բախումներ տեղի կունենան նաև ապա-

---

481 МОЭИ, серия II, т. XIX, ч. I, стр. 34—35, 81.

482 «Тифлисский листок», 1911, 15 октября.

գայում, և մեզ մնում է կամ թուրքերին ճանաչել որպես Ուրմիայի նահանգի տերեր, կամ հանուն Արևելքում Ռուսաստանի հեղինակության և հզորության պահպանման ստիպել նրանց մաքրել իրենց շպատականող պարսկական տերիտորիան»։ Փոխարքան պաշտպանում էր Ուրմիայի փոխ-հյուպատոս Պրեոբրաժենսկու առաջարկը Խոյ—Սալմաստ—Ուրմիայի շրջանները զորքեր ուղարկելու վերաբերյալ։ «Ես համոզված եմ,—գրում էր նա,—որ առանց մեր վճռական ելույթի և պարսկական տերիտորիայի հիշյալ մասի փաստական գրավման թուրքերի շարժումը ընդհուպ կմոտենա մեր սահմաններին»[483]։ Զարիքովը նույնպես պաշտպանեց այս առաջարկը, գտնելով, որ «ջոկատի ուղարկումը Խոյի շրջանը ծայրահեղորեն ցանկալի ու ժամանակին է»[484]։

Այսպիսով համոզվելով, որ դիվանագիտական առաջադրությունները Ստամբուլում ստեղծում են միայն երկար ու միանգամայն անարդյունք քաշքշուկ, ցարական կառավարությունը որոշեց Խոյ ուղարկել ռուսական մի ջոկատ։ Սա վկայում էր այն մասին, որ Պետերբուրգը որոշել է Բ. Դոան հետ խոսել ավելի կտրուկ լեզվով։ Բացի «իրանական գործերից» դա թերևս պայմանավորված էր նրանով, որ 1911 թ. աշնանը ռուս-թուրքական հարաբերությունները հասել էին ծայրահեղ լարվածության։ Զախողվել էին նեղուցների ռեժիմի մասին ռուս-թուրքական բանակցությունները, Բոսֆորում թուրքերը ստեղծել էին ականային արգելափակոցներ, Անդրբկովկասի սահմանների մոտ կենտրոնացվել էին զորքեր և այլն։

Սակայն «վճռական» քայլին դիմելուց առաջ ցարական կառավարող շրջանները հարկ համարեցին ստանալ բրիտանական կառավարության համաձայնությունը։ Լոնդոնում դեսպան Բենկենդորֆին հանձնարարվեց այդ իմաստով հատուկ զրույց ունենալ Էդուարդ Գրեյի հետ։ Վերջինս հայտարարում է դեսպանին, որ ինքը ռուսական կառավարության կողմից նախապատրաստվող այդ միջոցառումներին չի տալիս առանձին քաղաքական նշանակություն, որովհետև հասկանում է, որ դրանք կոչված են թուրքական վանդը ի չիք դարձնելու անհրաժեշտությամբ[485]։

---

483 МОЭИ, серия II, т. XIX, ч. I, стр. 81—82.

484 Նույն տեղում։

485 Նույն տեղում, էջ 100։

Անգլիական կառավարության համաձայնությունը ստանալուց հետո 1911 թ. հոկտեմբերին ռուսական ջոկատը մուտք գործեց Խոյ[486]։

Դա չափազանց ճնշող տպավորություն գործեց Ստամբուլի վրա։ Վախենալով, որ այդ իրադարձությունը, ինչպես նաև Տրիպոլիտանական պատերազմի թատերաբեմից ստացվող աննպաստ լուրերը կարող են տեղիք տալ Իրանի օկուպացված շրջանների բնակչության ապստամբության, երիտթուրքական կառավարությունը այդ շրջաններում լայնորեն սկսեց կիրառել ահաբեկումների տակտիկան։ Առավել անհանդիստ գյուղերում կախվում էին թուրքական դրոշներ, իսկ սպայությունը ամենուր հայտարարում էր, որ «մեր դրոշները կարմիր են և մենք դրանք կախում ենք ի նշան այն բանի, որ այստեղից կհեռանանք միայն այն ժամանակ, երբ կթափենք արյուն»[487]։

1911 թ. աշնանը Իրանում հասունանում էին նոր իրադարձություններ։ Նախկին շահի ավանտյուրայի ձախողումը համոզեց Ռուսաստանին և Անգլիային, որ իրանական ներքին ռեակցիան անընդունակ է հեղափոխությունը ճնշել սեփական ուժերով։ Որոշվեց այն իրագործել Անգլիայի և ցարական Ռուսաստանի զինված ուժերի միջոցով, որոնք մինչ այդ արդեն օկուպացրել էին իրանական մի շարք տերիտորիաներ։ 1911 թ. հոկտեմբերին երկրի հարավում՝ Բուշիրում տենդորեն կենտրոնացվում էին անգլիական զորքերի նոր միավորումներ, որոնք այնուհետև շարժվեցին Շիրազ և հարավիրանական այլ քաղաքներ։ Ռուսաստանը ևս սկսեց նոր զորքեր ուղարկել Հյուսիսային Իրան։ 1911 թ. նոյեմբերի 16/29-ին ցարական կառավարությունը ուլտիմատիվ կերպով պահանջեց, որպեսզի շահական կառավարությունը անհապաղ պաշտոնաթող անի ամերիկյան ֆինանսական խորհրդական Մորգան Շուստերին[488], որը հետևողականորեն վարում էր Ռուսաստանի և Անգլիայի տնտեսական և քաղաքական դիրքերը Իրանում սահմանափակելու քա-

---

486 «Сводка сведений...», № 9—10, Тифлис, 1912, стр. 17.

487 Նույն տեղում, էջ 17—18։

488 «Сборник дипломатических документов...», вып. VII, стр. 266—267.

դաքականություն։ Բրիտանական կառավարությունը պաշտպանեց այդ վերջնագիրը։ Երկրում հակաիմպերիալիստական պայքարի ալիքի ուժեղացման ազդեցության տակ Մեջլիսը մերժեց ռուսական վերջնագիրը։

Ցարական կառավարությունը անմիջապես Իրանական Ադրբեջան, Գիլյան և Խորասան ուղարկեց խոշոր զորամիավորումներ, որոնք ջախջախեցին կամավորական ջոկատների դիմադրությունը և ճնշեցին հեղափոխությունը երկրի հյուսիսում։ Միաժամանակ անգլիական զորքերը օկուպացրին երկրի ողջ հարավը։ Իսկ մինչ այդ Թուրքական զորքերը արդեն ջախջախել էին հեղափոխական շարժումը Իրանական Քրդստանում և Ադրբեջանի հյուսիս-արևմտյան շրջաններում։ Շուտով իրանական հեղափոխության դեմ դուրս եկավ նաև իրանական ներքին ռեակցիան։ 1911 թ. դեկտեմբերին կատարվեց հակահեղափոխական հեղաշրջում և իրանական հեղափոխությունը ճնշվեց։

Այսպիսով, Անգլիայի, ցարական Ռուսաստանի, օսմանյան Թուրքիայի և իրանական ֆեոդալական ռեակցիայի համատեղ հարվածների հետևանքով իրանական ժողովրդի ազատագրական, դեմոկրատական շարժումը պարտություն կրեց։

Անգլիական և ռուսական զորքերի կողմից Հարավային և Հյուսիսային Իրանի օկուպացիան, որը տեղի ունեցավ գլխապտույտ արագությամբ, առաջին պահ շփոթության մեջ գցեց Թուրքական կառավարող շրջաններին։ Այդ իրադարձությունը Ստամբուլի կողմից ընկալվեց որպես Իրանը բաժանելու լուրջ միջոցառում։ Համենայնդեպս արդեն ակնհայտ էր, որ Ռուսաստանն ու Անգլիան այսուհետև չեն հանդուրժի Թուրքական զավթումները Իրանում։ Այդ պատճառով երիտԹուրքական կառավարությունը որոշեց անմիջապես նետվել գրոհի։ 1911 թ. հոկտեմբերին նախապատրաստական աշխատանքներ էին գնում Միանդոաբը գրավելու համար, որտեղից ճանապարհ կբացվեր դեպի Թավրիզ։ Նոյեմբերին ռուսական հյուպատոսները հայտնում էին, որ Թուրքերի կողմից օկուպացրած շրջաններում անընդհատ տեղի են ունենում զորքերի տեղաշարժեր, ստեղծվում են ռազմական հենակետեր, ուժեղացվում են հյուպատոսական պահակախմբերի կազմը և նույնիսկ Թուրքիայում անց է

կացվում պահեստայինների մասնակի մոբիլիզացիա[489]։ Թեհրանում թուրքական պաշտոնական ներկայացուցիչները Բ. Դոան այդ միջոցառումները մեկնաբանում էին նրանով, որ Թուրքիայի միակ նպատակն է «ռուսներին ետ քշել դեպի Կովկաս»[490]։

Սոուջբուլաղը գրավելուց հետո օկուպացիոն զորքերը սկսեցին ընդլայնել իրենց զավթումների գոտին Մուրրի Քրդստանում, Կուշչիի, Էնզելի, Սալմաստի և Խոյի շրջաններում, ինչպես նաև սկսեցին սպառնալ Մակուի խանությանը[491]։ Ռազմական մինիստրի հրամանով շտապ կարգով Վանից զենք, ռազմամթերք և կրուպպի նորագույն տեսակի թնդանոթներ էին ուղարկվում Իրան[492]։ Էրզրումի գլխավոր հյուպատոս Շտրիտտերը նոյեմբերին տեղեկացնում էր Սազոնովին, որ «թուրքերն աշխատում են պարսկական սահմանն ուղարկել առավել ընդունակ և եռանդուն սպաներին և վարչական աստիճանավորներին»[493]։ Իսկ դեկտեմբերին Օլֆերևը ահազանգում էր, որ Թուրքիայում կրկին համառ լուրեր են շրջում Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմի անխուսափելիության մասին[494]։ Ստամբուլում պանթուրքիստական մամուլը սկսեց մղել ռազմաշունչ պրոպագանդա։ Նացիոնալիստական «Թյուրք յուրդու» ամսագրում հայտնի պանթուրքիստներ Յուսուֆ Ակչուրինը (Ակչուրա օղլի Յուսուֆ), Իսմայիլ միրզա Գասպրինսկին, Ահմեդ Աղաևը, Փարվուսը, Մեհմեդ Էմինը, Ահմեդ Հիքմեթը, Իզզեթ Ալևին, Ռիզա Թեֆվիկը, Նեջիբ Ասիմը, Ջելալ Նուրին և այլն սկսեցին հանդես գալ Իրանի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով, ուր առաջ էին քաշում Իրանի, Կովկասի, Միջին Ասիայի և Ռուսաստանի թուրքական ժողովուրդների միավորման գաղափարը[495]։ Ռասուլզադե Մեհմեդ

---

489 МОЭИ, серия II, т. XIX, ч. II, стр. 29.

490 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 549, л. 53.

491 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 540, л. 13; АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, л. 35 об; АВПР, ф. «Персидский стол Б», 1911, д. 94, л. 5 об; АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, лл. 159—159 об.

492 АВПР, ф. «Персидский стол», 1911, д. 672, л. 172.

493 МОЭИ, серия II, т. XIX, ч. I, стр. 209.

494 Նույն տեղում, էջ 208։

495 Տե՛ս «Мир ислама», т. II, вып. I, СПб., 1913, стр. 20.

էմինը, օրինակ, հրապարակեց «Իրանական Թուրքերը» վերնագրով մի հոդված, որտեղ պանթուրքիզմի դիրքերից շոշափվում էին ադրբեջանցիների սոցիալական և քաղաքական վիճակի հարցերը[496]։

1911 թ. վերջերին Թուրքերը ակտիվորեն սկսեցին միջամտել Թավրիզում տեղի ունեցող իրադարձություններին։ Այդ միջամտության համար պատրվակ ծառայեց Թավրիզի ֆիդայիների հարձակումը քաղաքում և նրա շրջակայքում տեղավորված ռուսական ջոկատի վրա։ Վորոնցով-Դաշկովը տեղեկություններ ուներ, որ այդ գործին խառնված էր նաև Թուրքիան, որը իր գործակալների միջոցով հրահրում էր ֆիդայիներին անակնկալ հարձակումով ոչնչացնել Թավրիզի ռուսական ջոկատը[497]։ 1911 թ. դեկտեմբերի 31-ի հաղորդագրությունում Զարիքովը Ստամբուլից հայտնում էր Սազոնովին, որ թուրքական արտաքին գործերի մինիստր Ասիմ բեյը պաշտոնապես հայտարարել է իրեն, որ Թավրիզի «խառնակությունները»[498] Օսմանյան կայսրության մահմեդականների շրջանում առաջ է բերել լուրջ անհանգստություն։ «Գործը բարդանում է այն մտավախությամբ,— ավելացրել է նա,— որ ռուսական օկուպացիան դառնում է մշտական»...[499]։

Ասիմ բեյի այս հայտարարությունը վրդովեցուցիչ ներգործություն ունեցավ Սազոնովի վրա։ «Թուրքական արտաքին գործերի մինիստրի արած հայտարարությունը,— գրում էր նա Զարիքովին,— վկայում է այն մասին, որ Թուրքերը ոչ միայն ցանկանում են նախկինի պես ձայնի իրավունք ձեռք բերել իրանական գործերում, այլև ճնշում գործադրել մեզ վրա։ Ոչ այս, ոչ այն մենք իհարկե չենք կարող թույլ տալ»։ Մինիստրը հրահանգում էր Ասիմ բեյի հայտարարությունը առհասարակ թողնել անպատասխան, իսկ կրկնվելու դեպքում վճռականորեն պատասխանել, որ Թավրիզի «խառնակության» վերացումը բացառապես վերաբերում է Ռուսաստանին, որը իրեն իրավունք է վերապահում այդ հարցում գործել

496 Նույն տեղում, հ. I, № 4, 1912, էջ 643։

497 МОЭИ, серия II, т. XIX, ч. I, стр. 264.

498 Խոսքը վերաբերում է 1911 թ. դեկտեմբերին Թավրիզի հեղափոխականների նկատմամբ ռուսական զորքերի պատժիչ գործողություններին։

499 МОЭИ, серия II, т. XIX, ч. II, стр. 1.

սեփական հայեցողությամբ։ «Ինչ վերաբերում է մեր ջոկատների գտնվելուն Պարսկաստանում,—շարունակում էր Ռուսաստանի արտաքին գործերի ղեկավարը,—ապա այդ մասին դուք կարող եք հայտնել նրան, որ այն առաջվա պես չի կրում օկուպացիայի բնույթ, որովհետև մեր զորքերը, ի տարբերություն Թուրքականի, Ուրմիայում իրենց համար չեն յուրացնում վարչական ֆունկցիաներ և համաձայն արդեն արված մեր հայտարարության, նշված ջոկատները ետ կկանչվեն, երբ մենք դա համարենք հնարավոր»[500]։

Ցարական արտաքին գործերի մինիստրի այս խիստ ու կտրուկ տոնը համարյա ոչ մի ազդեցություն չունեցավ Բ. Դոան վրա։ Ընդհակառակը, վերջինս դրան պատասխանեց հակառուսական նոր գործողություններով։ 1911 թ. վերջին Խոյի շրջանի Շաբանլու գյուղի մոտ հարձակում կազմակերպվեց Բիչերախովի վրա։ Կազակների վրա այդ հարձակումը կազմակերպել էր Ուրմիայի հյուպատոս Սաադի բեյը[501]։ Միաժամանակ Թուրքիայի Դյավեր շրջանի քրդերը Խաբրի բեյի գլխավորությամբ իրանական Սիր գյուղի մոտ հարձակում գործեցին Ուրմիայի ռուսական փոխ-հյուպատոսության պահակախմբի վրա[502]։ Թուրքական զինվորները ճանապարհներին անընդհատ կանգնեցնում էին ռուսական դիվանագիտական գործիչներին, հայտարարելով, որ իրենք թույլ չեն տա «Թուրքական» տերիտորիայում ճանապարհորդել ռուսական դրոշի տակ[503]։

Թուրքական հրամանատարությունն առանձնակի եռանդով աշխատում էր քրդական ջոկատների օգնությամբ անդամալուծել օկուպացված շրջանների ռուսական առևտուրը։ Այդ քաղաքականության հետևանքով քարավանային հաղորդակցությունը մի շարք առևտրական կենտրոնների միջև համարյա դադարեց, իսկ Ուրմիայի շրջանում քրդական կողոպուտներն ընդունեցին ուղղակի համաձարակային բնույթ։ Օգտվելով դրանից, Բ. Դուռը առաջարկեց Ռուսաստանին օկուպացված գոտում ռուսահպատակների և նրանց առև-

---

500 Նույն տեղում։

501 АВПР, ф. «Персидский стол Б», 1911, д. 94, лл. 19—21.

502 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 540, лл. 8—14.

503 АВПР, ф. «Персидский стол Б», 1911, д. 94, л. 23 об.

տրրական քարավանների պաշտպանության գործը հանձնել թուրքական զինված ուժերին[504]։ Միանգամայն ակնհայտ էր, որ առևտրական ճանապարհների վրա կազակների կողմից հսկողություն սահմանելը խոչընդոտ էր հանդիսանում թուրքերի քաղաքական տակտիկայի իրագործմանը, որի էությունն այն էր, որ մահացու հարված հասցնեն Հյուսիս-արևմտյան Իրանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դիրքերին։ Այդ պատճառով Պետերբուրգը մերժեց Բ. Դուան վերոհիշյալ առաջարկը։ Սազոնովը հայտարարեց, որ Ռուսաստանը ի վիճակի է միջոցներ ձեռնարկել իր առևտրական շահերը պաշտպանելու համար[505]։

1911 թ. աշնանը և ձմռանը գերմանական գործակալությունը ամենաակտիվ ձևով աջակցում էր Իրանական Ադրբեջանում և Քրդստանում թուրքական կառավարության վարած հակառուսական քաղաքականությանը։ 1911 թ. դեկտեմբերին Ռուսաստանի և Անգլիայի կողմից շահական կառավարությանը վերջնագիր ներկայացնելուց հետո գերմանական դիվանագիտությունը որոշեց օգտվել պատեհ առիթից վերականգնելու համար Պետերբուրգի համաձայնագրի հետևանքով սասանված իր հեղինակությունը Իրանում։ Զգտելով դարձյալ շեշտել Գերմանիայի վարած, իբր թե անշահախնդիր, քաղաքականության և անգլո-ռուսական սպառնալիքների ու վերջնագրերի քաղաքականության միջև եղած տարբերությունը, Բեռլինի «Kreuzzeitung» թերթը հրապարակեց Իրանին նվիրված հատուկ հոդված, որտեղ հայտարարում էր, որ Ռուսաստանի և Անգլիայի քաղաքականությունը այդ երկրում վիրավորում է գերմանացիների բարոյական զգացումները[506]։ Իրենց հակառուսական գործունեությունը գերմանացիները ավելի մեծ մասշտաբներով ծավալեցին իրանական հեղափոխության ջախջախումից հետո։ 1911 թ. դեկտեմբերի 28-ի հեռագրում ցարական արտաքին գործերի մինիստրության Միջին Արևելքի բաժնի վարիչ Կլեմմը տեղեկացնում էր Կովկասի փոխարքայությանը կից սահմանային

---

504 МОЭИ, серия II, т. XIX, ч. I, стр. 194.

505 Նույն տեղում։

506 «Русское слово», 1911, 10 ноября.

հարաբերությունների չինովնիկ Կոխանովսկուն, որ Թավրիզում գերմանական գործակալ Շյունեմանը իր հայրենակից Խագի հետ մտադիր է շրջագայություն կատարել Իրանական Ադրբեջանի մի շարք վայրերում տեղական բնակչության շրջանում հակառուսական պրոպագանդա մղելու և Թուրքերի համար հետախուզական տեղեկություններ հավաքելու համար[507]։

* * *

1905—1911 ԹԹ. իրանական հեղափոխության պարտությունից հետո ավելի ուժեղացավ Իրանի կախումը իմպերիալիստական Անգլիայից և ցարական Ռուսաստանից։ 1912 Թ. փետրվարին շահական կառավարությունը հայտարարեց, որ պաշտոնապես ճանաչում է 1907 Թ. անգլո-ռուսական համաձայնագիրը և Անգլիայից ու Ռուսաստանից ստացավ նոր փոխառություններ։ Հետևաբար, այսուհետև, Թուրքիան հարկադրված էր գործել կրկնապատկված եռանդով, որպեսզի հնարավորին չափ շուտ ավարտի Իրանական Ադրբեջանի և Քրդստանի օկուպացիան։ Դրանով իթթիհադը հույս ուներ շեղել Օսմանյան կայսրության ժողովուրդների ուշադրությունը ներքին դժվարություններից և իտալո-Թուրքական պատերազմի ճակատներում կրած մշտական անհաջողություններից, ինչպես նաև հաղթահարել ներքին օպոզիցիայի՝ «Ազատություն և Համաձայնություն» («Հյուրրիեթ վե Իթթիլյաֆ») կուսակցության ձգտումը իշխանության ղեկի մոտից հեռացնելու երիտԹուրքերին։

1912 Թ. փետրվարին Սալար-ուդ-Դոուլեի նոր խռովությունը որոշակի հույսեր տվեց Թուրքիային դիմադրավել Ռուսաստանի և Անգլիայի ճնշմանը և զավթումների քաղաքականության բնագավառում դուրս գալ ճգնաժամային այն վիճակից, որ ստեղծվել էր Իրանական Ադրբեջանի և Քրդստանի տերիտորիաների մի մասը ռուսական զորքերի կողմից օկուպացվելու հետևանքով։

1912 Թ. սկզբին իր շուրջը համախմբելով Իրանի հարավ-արևմտյան շրջանների մի շարք ցեղերի, հատկապես քրդական բենիարդալյան ուժեղ և ռազմատենչ ցեղին, Սալար-ուդ-Դոուլեն կրկին

---

[507] МОЭИ, серия II, т. XIX, ч. 1, стр. 309.

ապստամբեց կենտրոնական կառավարության դեմ։ Փետրվարի 22-ին նա սրարշավ գրավեց Քերմանշահը, իսկ այնուհետև նաև Սեննեն[508]։ Կարճ ժամանակամիջոցում Սալարին հաջողվեց իր ազդեցությանը ենթարկել Քերմանշահի, Քրդստանի և Լուրիստանի նահանգները։ Այս նոր խռովության սկսվելու առաջին իսկ օրերից Պետերբուրգում և Լոնդոնում իրավացի կասկածներ կային, որ այդ խռովությանը գաղտնապես աջակցում է Ստամբուլը[509]։ Այդ կասկածները հիմնավորվում էին նրանով, որ նախկին խռովության ջախջախումից հետո Սալարը երբեք ի վիճակի չէր լինի այդքան կարճ ժամանակամիջոցում հայթայթել դրամական միջոցներ և մեծ քանակությամբ զենք ու զինամթերք՝ թվով բավականին պատկառելի բանակ ստեղծելու համար։ Այդ պատճառով Ռուսաստանը և Անգլիան պահանջեցին թուրքական կառավարությունից չմիջամտել իրադարձություններին և զորքեր չուղարկել Սալարին օգնության։ Միաժամանակ նրանք ճնշում գործադրեցին շահական կառավարության վրա, որպեսզի վերջինս եռանդուն միջոցառումներ ձեռնարկի Հարավ-արևմտյան Իրանում խռովությունը անհապաղ ճնշելու համար, խոստանալով իրենց օգնությունը[510]։

Սակայն պարզվեց, որ Թուրքիան մտադիր չէ հետևելու Ռուսաստանի և Անգլիայի «խորհուրդներին»։ Նա իրանական սահմանների մոտ, Սուլեյմանիեի շրջանում սկսեց կենտրոնացնել զորքեր, Քերմանշահ—Համադանի շրջանում գրավեց մի շարք վայրեր, Սեննեում իր հյուպատոսությունը պաշտպանելու պատրվակի տակ այնտեղ մտցրեց զորքեր և այլն[511]։ Այս շրջանում թուրքերի զավթողական քաղաքականության մեջ նորը այն էր, որ նրանք մեծագույն ձգտում էին դրսևորում հատկապես Քերմանշահը գրավելու ուղղությամբ։ Դա նշանակում էր, որ զավթումների դոտին Թուրքիան ցանկանում էր շարժել դեպի հարավ՝ «չեզոք գոտու» ուղղությամբ։

---

508 «Сводка сведений...», Тифлис, 1912, № 19—20, стр. 34.

509 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1911—1913, д. 3556, лл. 36, 40.

510 Նույն տեղում, թթ. 40—42, 65։

511 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 1066, л. 126.

Մարտ ամսին Թուրքական հեծելազորայինները Քասրի-Շիրինի մոտ փորձեցին անցնել իրանական սահմանը, սակայն կանգնեցվեցին Սալարի քրդական ջոկատների կողմից։ Տեղեկանալով այդ մասին, Քերմանշահում հյուպատոս Սուադ Սեդդադ բեյը այդ հեծելազորայիններին ներկայացրեց որպես Թուրքական հյուպատոսական դատարանի նախագահ էմին բեյի անձնական պահակախումբ և խնդրեց Սալարին թույլատրել անցնել սահմանը ու ժամանել Քերմանշահ[512]։ Սակայն տեղի ունեցավ անսպասելին։ Արբայաղնը ամենավճռական ձևով պահանջեց, որպեսզի Թուրքական զինվորները հեռանան սահմաններից[513]։ Միաժամանակ նա հրամայեց իր ջոկատներին սահմանն անցնելու դեպքում Թուրքերին դիմավորել մարտով։ Ավելին, նա դիմեց ռուսական կառավարությանը խնդրելով, որ վերջինս արգելի Թուրքերին իրականացնելու Հարավ-արևմտյան Իրանի օկուպացիան[514]։

Սալար-ուդ-Դոուլեի անսպասելի քայլի պատճառը այն էր, որ, ըստ երևույթին, նա վախենում էր, որ Թուրքերը Հարավ-արևմտյան Իրանը օկուպացնելուց հետո իրեն դուրս կմղեն այնտեղից՝ խափանելով այդ վայրերում սեփական «պետություն» ստեղծելու նրա տենչանքը։ Ամենայն հավանականությամբ արբայաղնը ցանկանում էր նաև վրեժ լուծել Թուրքիայից՝ նախկին խռովության ժամանակ իրեն լքելու համար։ Հավանաբար, ոչ երկրորդական նշանակություն ուներ նաև այն, որ Սալարը քաջ գիտակցում էր, որ Ռուսաստանը և Անգլիան չեն կարող անտարբեր մնալ Թուրքերի ագրեսիվ գործողությունների նկատմամբ 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով նախատեսված չեզոք գոտու շրջանում։

1912 թ. մարտին Քասրի-Շիրինի շրջանում Սալարի ջոկատների և Թուրքական հեծելազորայինների միջև տեղի ունեցան մի շարք զինված բախումներ[515], որոնք զգալիորեն թուլացրին խռովարարների «բանակը»։ Դա հեշտացրեց Սալար-ուդ-Դոուլեի նոր խռովության ջախջախման գործը։ 1912 թ. մայիսի 19-ին Եփրեմ Դա-

---

512 «Сводка сведений...», Тифлис, 1912, № 19—20, стр. 31—32.

513 Նույն տեղում։

514 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 166, л. 126.

515 «Сводка сведений...», № 19—20, стр. 32.

վիդյանցին[516] և Ֆարման Ֆարմային հաջողվեց կործանիչ հարված հասցնել արքայազնի առաջապահ զորքերին, իսկ մայիսի 29-ին գրավել Քերմանշահը։ Սալարի բանակը ցրվեց, իսկ ինքը ստիպված եղավ կրկին փախչել Թուրքիա[517]։

Սակայն այս անհաջողությունը չվհատեցրեց Ստամբուլին։ Վերջինս կրկնապատկված եռանդով ձեռնամուխ եղավ Իրանում հարձակողական նոր կամպանիայի։ Վանի վիլայեթում կրկին անցկացվեց ռեդիֆների և համիդիեների զորահավաք[518]։ Մի շարք վայրերում, ինչպես օրինակ Բաշկալայում, Ջիարի Կալայում, Դիլմանում, Եզդիկյանում, Սիլյաբում, Վարդանում և այլն ռուսական խոյի ջոկատի դեմ դիմաց կենտրոնացվեցին թուրքական զորքեր[519]։ Բոլոր թուրքոֆիլ քրդական ցեղապետներին կարգադրվեց մեկնել Նաղադե պարտիզանական պատերազմ մղելու վերաբերյալ անհրաժեշտ հրահանգներ ստանալու համար։ Միաժամանակ նրանց հայտարարվեց, որ Փասվեում, Սերդեշթում և Բանեում կազմակերպված են ռազմամթերքների պահեստներ, որտեղից նրանք կարող են ստանալ անհրաժեշտ քանակությամբ զենք և փամփուշտներ։ Կարգադրվեց կազմ ու պատրաստ սպասել հրամանի՝ կենտրոնանալու համար այն վայրերում, որոնք կնշի թուրքական հրամանատարությունը[520]։ Աշիրեթային քրդերից տենդորեն կազմակերպվում էին կամավորական ջոկատներ, որոնց կենտրոնացման հիմնական վայրերն էին հանդիսանալու Ջիարի Կալան, Ռեմավանը և Բալաքուշը։ Կամավորներին տրվում էր ռոճիկ։ Մավանայում, Ուրմիայում, Էնզելում, Սուլդուզում, Բարանդուզում, Ուշնուում և օկուպացիայի ենթարկված մի շարք այլ շրջաններում թուրքական իշխանությունները կազմակերպեցին բնակչության մարդահամար[521],

---

516 Այդ ճակատամարտում Եփրեմ Դավիդյանցը սպանվեց և կառավարությունը Համադանի ջոկատի հրամանատար նշանակեց Եփրեմ խանի տեղակալ Քեռիին։ ИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 546, л. 48.

517 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1911—1913, д. 3566, лл. 76—82, 85.

518 АВПР, ф. «Персидский стол Б», 1912, д. 99, лл. 6—7.

519 Там же.

520 АВПР, ф. «Персидский стол Б», 1910—1912, д. 59, лл. 31—34.

521 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 365, лл. 18—19.

որը հետապնդում էր ինչպես հարկային, այնպես էլ քաղաքական և ռազմական նպատակներ։ Մասնավորապես, Թուրքիան նպատակ ուներ հավաքագրել զինակոչիկներ, նրանցից կանոնավոր կամ ծայրահեղ դեպքում աշխարհազորային տիպի զորամասեր ստեղծելու համար, որոնց կարելի կլիներ օգտագործել ինչպես բուն Իրանում, այնպես էլ Տրիպոլիտանական պատերազմի ռազմաճակատներում[522]։ Բացի այդ, անցկացնելով մարդահամար, Թուրքիան ցանկանում էր շեշտել, որ օկուպացված շրջանները այլևս դուրս են եկել շահական կառավարության իրավասությունից և դրանց նկատմամբ ինքը ունի լիիրավ իրավունքներ։ Մարդահամարը հաջողությամբ անցկացնելու համար Ստամբուլը Իրան ուղարկեց սահմանային կոմիսար, գլխավոր շտաբի գնդապետ Բեհջեթ բեյին, երկրորդ բանակային կորպուսի հրամանատար Ջաբիր փաշային և ներքին գործերի մինիստրության վարչական տեսուչ Ալի Սեյիդ բեյին[523]։ Գեներալ (Ֆերիկ) Ֆազիլ փաշան հատուկ ուղերձով դիմեց մամաշ ցեղի առաջնորդ Համզե աղային, որի մեջ ասվում էր. «Ես այժմ զբաղված եմ արաբներից և քրդերից 100 հազարանոց բանակ կազմելով, որոնց թվում հաշվում եմ 20 հազար մարդ մամաշ, մանդուր և փիրան ցեղերից։ Նախազգուշացնում եմ ձեզ, որպեսզի իմ վան ժամանելու օրը բոլորդ պատրաստ լինեք իսլամի պաշտպանության համար»[524]։

1912 թ. մայիսին Ուրմիայի շրջանի Թազաքենդ գյուղի մոտ քրդերը անակնկալ հարձակում գործեցին ռուս զինվորների վրա։ Այդ գործողությանը մասնակցում էին նաև քրդական տարազ հագած թուրք զինվորները[525]։ Իր զեկուցագրում պորուչիկ Իվանովը գրում էր, որ այդ օպերացիան հետապնդում էր երկու հիմնական նպատակ. նախ «խայտառակել ռուսական զենքի փառքը ողջ Քրդստանի աչքում» և ապա փորձել, թե քրդերից և ֆիդայիներից կազմակերպված պարտիզանական ջոկատները որքանով են պիտանի ռազմական գոր-

---

522 Նույն տեղում, թ. 32։

523 МОЭИ, серия II, т. XIX, ч. II, стр. 322; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 365, л. 32.

524 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 365, л. 33.

525 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 366, лл. 13—15.

ծողություններ վարելու համար[526]։ Մայիսի 9-ին Ուրմիայի մոտ գտնվող Կանի-Կուզան գյուղի մոտ հարձակում կազմակերպվեց ռուսական հյուպատոսական պահակախմբի վրա։ Այն կազմակերպել էր Ուրմիայի թուրքական հյուպատոսը։ Անկախ այդ հարձակման ելքից շահելու էին թուրքերը, որովհետև քրդերի հաջողության դեպքում ընկնելու էր ռուսական զենքի հեղինակությունը, իսկ պարտության դեպքում Ուրմիայի շրջանի քրդերը ռուսական զինվորական իշխանությունների կողմից այլևս չէին կարող սպասել գթառատ վերաբերմունք և ստիպված կլինեին այսուհետև ընդմիշտ լինել թուրքերի հետ ընդդեմ ռուսների։

Գնալով քրդական հարձակումներն ընդունում էին սիստեմատիկ բնույթ։ Խանթախթի գյուղի մոտ հարձակում կազմակերպվեց գլխավոր շտաբի կապիտան Կիսլիի ջոկատի վրա։ Խոյի շրջանում հարձակման ենթարկվեց Նիկիտինի ջոկատը և այլն։ Միաժամանակ թուրքական օկուպացիոն իշխանությունները սիստեմատիկորեն կազմակերպում էին պատժիչ էքսպեդիցիաներ Ռուսաստանի կողմնակից քրդական ցեղապետների կալվածների դեմ, որպեսզի ահաբեկեն նրանց և ստիպեն անցնել իրենց կողմը։ Առանձնակի կատաղությամբ նրանք պայքարում էին շեքքաք ցեղի առաջնորդներ Իսմայիլ աղա Սիմկոյի, Իսմայիլ աղա Քարդարի, Օմար աղայի, Թեմիր Ջանգոյի և այլոց դեմ[527], որոնք փնտրում էին ռուսական հովանավորությունը։

Ստամբուլն աշխատում էր համոզել Վանի անգլիական և ֆրանսիական փոխ-հյուպատոսներին, որ Սիմկոն գործում է բացառապես ռուսների թելադրանքով և հանդիսանում է Սևրայի շրջակայքում կողոպուտների նախաձեռնողը։ Անգլիական փոխ-հյուպատոս կապիտան Սիլը այդ առթիվ նույնիսկ խոսակցություն ունեցավ ռուսական փոխ-հյուպատոսի հետ։ Օլֆերևը զարմանք հայտնեց, որ կապիտան Սիլը այնքան քիչ տեղեկություններ ունի իր հյուպատոսական իրավասության շրջանում տեղի ունեցող իրա-

---

[526] Նույն տեղում։

[527] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 366, лл. 85, 87; ф. 521, д. 572, лл. 1—2, 8—9.

դարձությունների վերաբերյալ և բացատրեց նրան, որ «Սիմկո բեկը Թուրքիայի համողված թշնամին է և թուրքերը կցանկանային, որպեսզի ռուսները պատժեն Սիմկոյին և դրանով իսկ նրան զինեն իրենց դեմ»[528]։

Թուրքական կառավարությունը ճնշում էր գործադրում նաև շահական կառավարության վրա, որպեսզի վերջինս ձեռնպահ մնա Սիմկոյին օգնելուց։ Թեհրանում թուրքական դեսպանորդը 1912 թ. մայիսին բողոք ներկայացրեց իրանական արտաքին գործերի մինիստրին, շահական կառավարությանը անվանելով երիտասարդ, որովհետև նա «միաժամանակ համաձայնություն է տալիս ստեղծել սահմանապատիչ հանձնաժողով, իսկ մյուս կողմից Սիմկոյին զենք է մատակարարում և խրախուսում է նրան թշնամական գործողություններ ծավալել Թուրքիայի դեմ»։ Նոտայում Թեհրանը մեղադրվում էր նաև նրանում, որ նա «գործում է Ռուսաստանի թելադրանքով»։ Այդ մասին տեղեկացնելով Պոկլևսկի-Կոզելլին, շահական արտաքին գործերի մինիստրը թախանձագին խնդրում էր նրան ազդել ռուսական հյուպատոսների վրա, որպեսզի նրանք թուրքերի դեմ չգրգռեն տեղական բեկերին ու իրանական ասորիանավորներին և դրանով իսկ նոր առիթներ չտան հետագա զավթումների համար[529]։

Շուտով պարզվեց, որ Սիմկոյին պատժելու պատրվակի տակ թուրքիան զորքեր և հրետանի է ուղարկում Ղոթուրի ուղղությամբ՝ այն գրավելու համար[530]։ Հաշվի առնելով այդ վայրի կարևորագույն ստրատեգիական նշանակությունը, Ռուսաստանը և Անգլիան որոշեցին անհապաղ հանդես գալ։ 1912 թ. հունիսի 1-ին Բ. Դոանը ներկայացվեց նոտա, որի մեջ խիստ տոնով շեշտվում էր, որ ռազմական գործողություններ ծավալելով Ղոթուրի շրջանում, Թուրքիան խախտում է Բեռլինի դաշնագիրը։ Միաժամանակ Սազոնովը նախազգուշացրեց Պետերբուրգում դեսպան Թուրհան փաշային, որ Ղոթուրի շրջանում թուրքերի հետագա գործողությունները կստի-

---

528 «Сводка сведений...», Тифлис, 1912, № 23—24, стр. 7—8.
529 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 365, лл. 73—74.
530 «Сводка сведений...», № 23—24, стр. 6.

պեն ռուսական կառավարությունը սեփական շահերի պաշտպանության համար ձեռնարկել անհրաժեշտ հակամիջոցներ[531]։ Իր հերթին շահական կառավարությունը հրամայեց, որպեսզի անհապաղ Սիմկոյին տրամադրվի զենք ու զինամթերք, իսկ Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Շոջա-էդ-Դոուլեին տվեց գործողությունների ազատություն թուրքական հարձակողական շարժումը Ղոթուրի վրա արգելակելու նպատակով[532]։

Ղոթուրի շրջանում կրելով անհաջողություն, Թուրքիան իր ուշադրությունը կենտրոնացրեց սահմանի ծայր հյուսիսում գտնվող Մակուի և Ավաջիքի խանությունների վրա։ Այստեղ թուրքական գործակալությունը ծավալեց բուռն հակառուսական ագիտացիա։ Բայազետի փոխ-հյուպատոս Ակիմովիչը տեղեկացնում էր, որ թուրքական պրոպագանդայի հետևանքով Մակուի սարդարը կորցրել է իր ազդեցությունը հպատակ քրդերի վրա[533]։ Մակուում թուրքերը աշխատում էին դաշինք ստեղծել մի կողմից ջելլալի և միլլան ցեղերի քրդերի, մյուս կողմից տեղի ադրբեջանական բնակչության միջև՝ նրանց Ռուսաստանի դեմ ոտքի հանելու համար։ Սակայն այդ փորձերը հաջողություն չունեցան, որովհետև ադրբեջանցիները կրկին հրաժարվեցին ծառայել թուրքերին[534]։

Ստամբուլի հրահանգով թուրքական գործակալությունը սկսեց Ռուսաստանի դեմ գրգռել նաև Ադրբեջանի շահսևեն թուրքական ցեղերին[535]։ Շահսևենյան խոջաբեկլյու, սերդարլյու, արալյու, հաջիխոջելլյու և մի շարք այլ ցեղեր պանթուրքիստական պրոպագանդայի ազդեցության տակ սկսեցին միավորվել և հարձակումներ գործել ռուսական զորքերի վրա։ Ռուսների դեմ նրանց պայքարը կազմակերպելու համար Թուրքիայից Ղարադաղ ժամանեցին ռազ-

---

[531] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1911—1912, д. 3558, л. 46.

[532] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 365, лл. 73—74.

[533] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 366, л. 118.

[534] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 572, лл. 2—3.

[535] «Մշակ», 25 հուլիսի 1912 թ., էջ 2։

մական հրահանգիչներ[536]։ Գլխավոր շտաբի գեներալ-մայոր իշխան Վաղբոլսկին 1912 թ. հունիսին Իրանից հաղորդում էր, որ շահսևվենները արշավանքի են նախապատրաստվում դեպի Մուղանի տափաստանը. անհաջողության դեպքում նրանք մտադիր են ընդմիշտ տեղափոխվել Թուրքիա[537]։

Ստամբուլը կարևոր նշանակություն էր տալիս նաև իրանական ֆիդայիներից պարտիզանական ջոկատներ կազմակերպելու գործին։ Այդ նպատակով հատկապես օգտագործվում էին հեղափոխության ջախջախումից հետո Թուրքիա փախած ֆիդայիները, որոնք հույս ունեին թուրքական զորքերի օգնությամբ ռուսներին և անգլիացիներին դուրս քշել Իրանից։ Ֆիդայիներին հանձնարարված էր զինել Իրանի բնակչությանը, կապեր հաստատել հակառուսական տրամադրություններ ունեցող բոլոր ուժերի, հատկապես շահսևվենների հետ, և համատեղ ուժերով պայքարել ռուսների դեմ[538]։

Սակայն, չնայած այս ակներև հաջողություններին, 1912 թ. դարնանը և ամռանը Իրանում թուրքերի համար ստեղծվել էին նաև լուրջ դժվարություններ։ Օկուպացիայի ենթարկված շրջանների բնակչության շրջանում հալածանքների, բռնությունների ու կամայականությունների քաղաքականությունը առաջ էր բերում մասսայական հակաթուրքական շարժում։

Թուրքերի դեմ պայքարի էին դուրս գալիս ոչ միայն նրանք, ովքեր հենց սկզբից դժկամությամբ էին կրում օտար լուծը, այլև թուրքոֆիլական տրամադրություններ ունեցող քրդական բազմաթիվ ցեղեր։ 1912 թ. ապրիլին Գոլուբինովը Ուրմիայից հայտնում էր, որ «վերջին ժամանակներս քրդերի շրջանում նկատվում է ծայրահեղ դժգոհություն թուրքերից, հատկապես Սուլդուզում, որտեղ թուրքերը շարունակում են բռնի ցուցակագրել գյուղերը»[539]։ Դժգոհության այդ շարժմանը հատկապես մեծ զարկ հաղորդեց օկուպացիոն իշխանությունների կազմակերպած բնակչության մարդահա-

---

536 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7707, л. 187; «Тифлисский листок», 1912, 7 июня.

537 ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 546, лл. 61—62.

538 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 366, лл. 3—4.

539 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 365, л. 42.

մարը, որը ինչպես նշվել է վերևում, հետապնդում էր ֆիսկալ և ռազմա-քաղաքական նպատակներ։ Այդ միջոցառումը, որը սովորաբար անց էր կացվում բռնի ճանապարհով, ողջ Իրանական Քրդստանում տեղի ավեց խորը դժգոհության և հուզումների։ Աշիրեթային քրդերը դրա մեջ տեսնում էին իրենց արտոնությունների դեմ ուղղված ոտնձգություն[540], իսկ նստակյաց բնակչությունը (ռայաթներ) այն ընդունեց որպես առանց այն էլ ծանր հարկային լծի ուժեղացում։ Այդ պատճառով քրդական զանգվածները սկսեցին ուժգին դիմադրություն ցույց տալ Թուրքերին, որը հաճախ վեր էր ածվում զինված ապստամբության։ Այսպես, փիրան, մանգուր և մամաշ ցեղերի քրդերը, որոնք մինչ այդ նեցուկ էին հանդիսանում Թուրքերին, իրենց առաջնորդներ Բայիզ (Բայազեդ) աղայի, Մոհամմեդ Նազեի և Համզե Սուլեյմանի գլխավորությամբ հայտարարեցին, որ զենքը ձեռքներին կդիմադրեն Թուրքերին։ Սակայն տեսնելով, որ այդ սպառնալիքը աղդեցություն չգործեց, նրանք կազմեցին 3000-ոց մի ջոկատ և հարձակվեցին Փեսվեռում մարդահամարը անց կացնող զորամասի վրա և վռնդեցին այնտեղից[541]։ 1912 թ. ամռանը Թուրքերի դեմ քրդական զանգվածների զինված ելույթներ սկսվեցին նաև Սուլդուզի, Ուշնուի, Լահիջանի և մի շարք այլ շրջաններում։ Այդ շարժմանը ակտիվորեն մասնակցում էին նաև կարափափախները և տեղական քրիստոնյա բնակչությունը։

Ստամբուլի համար առանձնապես տհաճ երևույթ էր այն, որ իրանական քրդերի հակաթուրքական ելույթները միահյուսվում էին Թուրքիայում բնակվող քրդական ցեղերի հակակառավարական շարժման հետ։ Երիտթուրքական կառավարության տագնապներն ավելի էին ուժեղանում այն պատճառով, որ Իրանական Քրդստանում Աբդուրրեզակը հանդես էր եկել Իրանում և Թուրքիայում բոլոր հակաթուրքական ուժերի միավորման և քրդերի համընդհանուր ապստամբություն բարձրացնելու վերաբերյալ մի սպառնալից ծրագրով։ Նույնիսկ տեղեկություններ կային, որ այդ կապակցությամբ իրանական և թուրքական քրդերի մեջ տեղի են ունենում գործա-

---

540 Նույն տեղում։

541 Նույն տեղում, թ. 31։

բար հանդիպումներ[542]։ Բ. Դոանը հայտնի էր նաև, որ Ռուսաստանը աշալրջորեն հետևում է քրդերի տրամադրություններին, աշխատելով ավելի խորացնել նրանց դժգոհությունը Թուրքական կառավարության նկատմամբ[543]։

Այսպիսով բուն կայսրությունում և Իրանում ծայր առած քրդերի հակաթուրքական շարժումը լուրջ վտանգի տակ էր դնում երիտթուրքական կառավարության քաղաքական ծրագրերն Իրանում։ Այդ պատճառով, որպես առաջին քայլ, Ստամբուլը որոշեց ետ կանգնել օկուպացված շրջաններում մարդահամար անց կացնելու մտադրությունից։ 1912 թ. ամռանը հրամայվեց անհապաղ դադարեցնել մարդահամարը, աշխատել վերականգնել քրդերի համակրանքը Թուրքիայի նկատմամբ և ընդհակառակը գրգռել նրանց Ռուսաստանի դեմ[544]։ Թուրքական իշխանությունները իրանական մի շարք ազդեցիկ ցեղապետների առատորեն սկսեցին պարգևատրել ամենաբարձր շքանշաններով[545], Իրանից ետ կանչեցին սահմանային կոմիսար Բեհջեթ բեյին և Խոյում փոխ-հյուպատոս Սաադուլլա բեյին, որոնք աչքի էին ընկնում օկուպացված շրջանների բնակչության նկատմամբ իրենց «կոպիտ վերաբերմունքով»[546] և այլն։

Վախենալով քրդերի համընդհանուր հակակառավարական շարժումից, երիտթուրքական կառավարությունը վերանայեց նաև իր քաղաքականությունը Թուրքիայի քրդերի նկատմամբ, աշխատելով սիրաշահել նրանց։ Այդ նոր քաղաքականության իմաստն այն էր, որ կառավարությունը չզրկվի Իրանում իր ռազմա-քաղաքական նպատակների համար քրդերին օգտագործելու հնարավորությունից և նրանց ծառայեցնի որպես թնդանոթի միս տրիպոլիտանական պատերազմի ճակատներում։

Քրդերին իր կողմը գրավելու նպատակով կառավարությունը

---

542 АВПР, ф. «Посольство в Константинополе», 1911—1913, д. 3556, л. 106.

543 МОЭИ, серия II, т. XIX, ч. II, стр. 493.

544 ЦГВИА, ф. 2000, д. 60, л. 630.

545 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 365, л. 33.

546 «Сводка сведений...», Тифлис, 1912, № 23—24, стр. 22—23.

դիմից հին ու փորձված մեթոդի՝ սկսեց սրել թշնամանքը նրանց ու հայերի միջև։ Կրկին առաջ քաշվեց «վիճելի» հողերի հարցը։ Վանի, Էրզրումի և մի շարք այլ վիլայեթներում սկսվեցին հայերի մասնակի ջարդեր։ Երիտթուրքերը ոչ միայն չէին փորձում կանխել այդ ջարդերը, այլև ուժգին սեթևեթում էին ջարդարար ֆեոդալների հետ[547]։ Սկսվեց հայ և ասորի բնակչության խուճապահար փախուստ դեպի Իրան[548]։

Թուրքական կառավարող շրջանների այս բոլոր հնարանքները, սակայն, չէին տալիս ցանկալի արդյունքներ։ Իրանի օկուպացված գոտու բնակչության շրջանում ուժեղանում էր հակաթուրքական շարժումը, ինչպես նաև Ռուսաստանի ազդեցության ու կշռի մեծացումը ի հաշիվ Թուրքիայի։ Այդ առթիվ ռուսական գործիչները գրում էին, որ նախկինում Թուրքերի հետ կապված քրդերի մոտ «նկատվում է շրջադարձ Ռուսաստանի կողմից հովանավորվող Պարսկաստանի կողմը։ Նրանք խիստ հետաքրքրվում են, թե արդյոք ռուսները կվերցնեն քրդերին իրենց հովանավորության տակ թե ոչ»[549]։

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ 1912 թ. ամռանը Թուրքիայի «իրանական» քաղաքականությունը ընկել էր փակուղու մեջ։ Դա, անշուշտ, հանդիսանում էր երիտթուրքական կառավարության ռեակցիոն ներքին քաղաքականության և արկածախնդրական արտաքին քաղաքականության ճգնաժամի ցայտուն դրսևորումներից մեկը։

* * *

1912 թ. հուլիսին երիտթուրքերի հակառակորդ «Հյուրրիեթ վե իթթիֆյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունը իթթիհադականներին հեռացրեց իշխանությունից և կառավարման ղեկը վերցրեց իր ձեռքը։

Ռուսաստանը հույս ուներ, որ Թուրք-իրանական հարաբերու-

---

547 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 363, лл. 14—15.

548 «Сводка сведений...», Тифлис, 1912, № 23—24, стр. 11.

549 Նույն տեղում, էջ 31։

թյունների հարցում այս նոր կառավարությունը կվարի միանգամայն նոր քաղաքականություն։ Ղազի Մուհթար փաշայի կաբինետի արտաքին գործերի մինիստր Գաբրիել Նորատունկյանի մոտ 1912 թ. հուլիսին տեղի ունեցած առաջին դիվանագիտական ընդունելության ժամանակ Չարիքովը նրան հայտարարում է, որ «ներկայումս միայն երկու հարց են մթագնում մեր փոխադարձ հարաբերությունները. պարսկական սահմանի մոտ Թուրքիայի գործելակերպը և անատոլիական երկաթուղիների հարցը»[550]։ Սակայն Չարիքովին, այնուամենայնիվ, այս ընդունելության ժամանակ չհաջողվեց պարզել թուրքական նոր կառավարության տեսակետը իրանական հարցի վերաբերյալ։ Շուտով Չարիքովը ետ կանչվեց Պետերբուրգ և նրա փոխարեն Ստամբուլում դեսպանի պաշտոնում նշանակվեց Գիրսը։ Դա թուրքական մայրաքաղաքում ընկալվեց որպես Ռուսաստանի քաղաքականության շրջադարձ դեպի սպառնալիքների ու ճնշման կուրսը։ 1912 թ. օգոստոսի 9-ին նոր դեսպանը Գաբրիել Նորատունկյանին ներկայացրեց նոտա, որտեղ թուրքական կառավարությունից պահանջում էր անհապաղ դադարեցնել զավթումների քաղաքականությունը Իրանում։ Նոտայի արդյունքների մասին Գիրսը Սազոնովին հայտնում էր. «Թեև Նորատունկյանը անձամբ բարենպաստ արտահայտվեց 1848 թ. ստատուս-քվոն վերականգնելու մեր առաջարկի մասին, սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նրա անձնական դիրքը չի կարելի կայուն համարել. հետևաբար վերջնական համաձայնությունը կախված է Մինիստրների խորհրդից»[551]։ Գիրսի հետ վարած բանակցությունների ժամանակ Նորատունկյանը հասկացնում էր դեսպանին, թե որպեսզի Թուրքիան զիջումներ անի իրանական հարցում, «անհրաժեշտ է, որ Ռուսաստանի կողմից արվեն տնտեսական բնույթի փոխհատուցումներ»[552]։ Այսպիսով թուրքական արտաքին գործերի մինիստրը սեփական նախաձեռնությամբ փաստորեն ներկայացնում էր կոմպրոմիսային համաձայնության մի նախագիծ։

---

550 АВПР, ф. «Политархив», 1912, д. 1104, лл. 354—355.

551 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 33, л. 27.

552 Նույն տեղում։

Սակայն Մինիստրների խորհուրդը չբաժանեց արտաքին գործերի մինիստրի այս տեսակետը։ Ընդհակառակը, չնայած Թուրքիայի ապրած ներքին դժվարություններին և պատերազմում կրած ռազմական խոշոր պարտություններին, իթթիլյաֆիստական կուսակցությունը Իրանում վարած իր քաղաքականությամբ ապացուցեց, որ իթթիհադի նման նա էլ է տոգորված հարձակողական նացիոնալիզմով։ Դա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ Թուրքիայի ագրեսիվ զավթողական քաղաքականությունը բխում էր նրա տիրապետող դասակարգերի բուն էությունից։

Բնորոշ է նաև այն, որ մինչև իշխանության գլուխ անցնելը իթթիլյաֆիստները ևս երիտթուրքերին վարկաբեկելու նպատակով քննադատում էին նրանց քաղաքականությունը Իրանում։ Իթթիհադականների մոտ բարձր ծառայության մեջ գտնվող մի շարք ծպտված իթթիլյաֆիստներ նույնիսկ ռուսական իշխանությունների մոտ մերկացրին Իրանում գործող այսպես կոչված «գաղտնի Թուրքական կառավարության» գործունեությունը[553]։ Ապրիլին. 1912 թ. մայիսին Օլֆերևի հետ զրույցի ժամանակ երիտթուրքական կոմիտեի ծպտված հակառակորդներից մեկը, երրորդ տեսչության պետ Մուշիր Օսման փաշան ամենաանսքող ձևով քննադատության ենթարկելով կոմիտեի գործունեությունը անում է մի անսպասելի հայտարարություն, որը ուղղակի ապշեցնում է Վանի ռուսական փոխ-հյուպատոսին. «Չհավատաք Թուրքիայի քրիստոնյաների և մահմեդականների միջև եղբայրության ու հավասարության մասին մոդայիկ խոսքերին։ Մենք դեռևս չենք հասել դրան։ Կրոնը մեր կյանքում գրավում է առաջին տեղը։ Ես չեմ խոսում Սալոնիկից այնպիսի պարոնների մասին, ինչպիսին Ջավիդ բեյն ու մյուսներն են։ Դրանք Թուրքիայի նկատմամբ սիրո անվան տակ և իբր հանուն նոր գաղափարների, հոգ են տանում բացառապես այն մասին, որպեսզի իրենց ձեռքում պահեն իշխանությունը և հարստանան ժողովրդի հաշվին։ Մենք գտնվում ենք քաղաքական հեղաշրջման նախօրյակին։ Թուրքական զանգվածը ծայրահեղ համբերատար է, բայց բանն այն է, որ յուրաքանչյուր Թուրքի ներսում կուտակվել է

553 «Сводка сведений...», № 23—24, Тифлис, 1912, стр. 1—2.

այնքան շատ դյուրավառ նյութ և ծանր վիրավորանք, որ մոտ ապագայում կարելի է սպասել ժողովրդական զայրույթի լուրջ բռնկման։ Մենք նախ մահմեդականներ ենք և ապա թուրքեր։ Մեր գործունեությունը պետք է գնահատել այդ տեսանկյունից, իսկ ազատության, եղբայրության և հավասարության մասին բոլոր գեղեցիկ բառերը թողնել նրանց, ովքեր չգիտեն Թուրքիան կամ ավելի ճիշտ, որոնք գիտեն միայն Կ. Պոլիսը նրա աշխարհաքաղաքացի հրեաներով»[554]։

Իշխանության գլուխը իր ձեռքը վերցնելուց հետո անգլոֆիլ իթթիլյաֆիստական կառավարությունը անմիջապես գործարքներ սկսեց Լոնդոնի կաբինետի հետ՝ ի հաշիվ Իրանի և Ռուսաստանի։ Այսպես, 1912 թ. ամռանը անգլո-թուրքական բանակցությունների հետևանքով կազմվեց Շաթթ-էլ-Արաբ գետի մասին համաձայնագրի նախագիծ, որի մասին Գիրսը գրում էր. «Այսպիսով Անգլիայի նոր նյութի մասին կրկին մեզ հաղորդվում է որպես կատարված փաստի մասին»։ Սակայն դա հարցի մի կողմն էր։ Կարևորն այն էր, որ Անգլիան այդ կոնվենցիայի շնորհիվ ստանում էր Շաթթ-էլ-Արաբի նկատմամբ փաստական հսկողության իրավունք։ Դրա հետևանքով էապես փոխվում էր նաև Կարուն գետի միջազգային ստատուսը։ Այլ կերպ ասած, Անգլիան փաստորեն իր ազդեցության գոտու մեջ էր ընդգրկում Իրանի ողջ հարավ-արևմտյան մասը՝ Ռուսաստանի հաշվին ընդարձակելով 1907 թ. համաձայնագրով իրեն հատկացված գոտին[555]։ Բացի այդ, իրենց շահերը Իրանի հարավում ապահովելու համար, անգլիացիները իթթիլյաֆիստական կառավարությանը խոստանում էին զանազան զիջումներ ռուսական գոտում։ Այսպես, Մոհամմերայի ստատուս-քվոյի փոխարեն Լոնդոնը խոստացավ որոշակի զիջումներ հաջողեցնել Զոհաբի շրջանում։

Գիրսին հայտնի էր դարձել, որ Ֆորին Օֆիսը մտադիր է Թուրքիայի հետ իր բանակցություններն ավարտել մինչև իրանա-թուրքական սահմանային վեճի հարցը Հաագայի միջազգային տրիբու-

---

554 Նույն տեղում, թ. 3—4։

555 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 33, лл. 142—143.

նալ փոխադրելը, որը բոլորովին ձեռնտու չէր Ռուսաստանին[556]։ Ցարական դիվանագիտությանը առանձնապես վրդովից այն լուրը, ըստ որի բրիտանական կառավարությունը պատրաստվում էր ճրնշում գործադրել շահական կառավարության և Մոհամմերայի շեյխի վրա, որպեսզի նրանք ճանաչեն Թուրքիայի գերիշխանությունը Շաթթ-էլ-Արաբի ամբողջ հոսանքի նկատմամբ[557]։

Անդրադառնալով բրիտանական կառավարության վերոհիշյալ գործելակերպին, որը, ի դեպ, ռուսական դիվանագիտությունը գնահատեց որպես «դաշնակցային պարտքի» խախտում, արտաքին գործերի մինիստրության ժամանակավոր կառավարիչ Ներատովին գրած գաղտնի հաղորդագրություններից մեկում Գիրսը պահանջում էր ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք արգելեին Անգլիային Իրանի և Ռուսաստանի հաշվին Թուրքիայի հետ գործարքների մեջ մտնել։ «Ցանկալի կլիներ,—գրում էր Գիրսը,—որպեսզի Անգլիայի կողմից ձեռք բերվող առավելությունները չգնվեին Պարսկաստանի հաշվին զիջումների գնով, մանավանդ այնպիսի շրջաններում, որոնք հարակից են ռուսական ազդեցության գոտուն կամ ուղղակի մտնում են նրա մեջ»[558]։

Այս բոլորից Պետերբուրգը դեռ ուշքի չէր եկել, երբ բրիտանական կառավարությունը նրան կարծիք հայտնեց, որ թուրք-իրանական սահմանային վեճը լուծելու համար, ըստ երևույթին, անհրաժեշտ է, որ Իրանը դատարկի Զոհաբի տերիտորիան և դուրս գա այնտեղից[559]։

Անգլիական կառավարության այս քաղաքականությունը ուղղակի թեավորեց իթթիլյաֆիստական կառավարությանը և մղեց նրան դեպի Իրան։ 1912 թ. օգոստոսին Թուրքիան պատրաստվում էր օկուպացնելու Զոհաբը և զորքեր մտցնելու Քերմանշահի նահանգը։ Այդ մտադրությունը իրագործելու համար Բ. Դուրը սկսեց

---

556 Նույն տեղում, թ. 143 (տե՛ս Գիրսի 1912 թ. օգոստոսի 3/16-ի № 573 գաղտնի հեռագիրը)։

557 МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 28.

558 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 33, лл. 142—142 об.

559 МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 51—52, 66 (տե՛ս Ներատովի 1912թ. օգոստոսի 10-ի հեռագիրը Գիրսին)։

որոնել տարբեր պատրվակներ։ Վերջապես հայտարարվեց շահական կառավարությանը, որ, եթե 15 օրվա ընթացքում չվերականգնվի առևտրական քարավանների շարժումը Խանեկին—Քերմանշահ ճանապարհի վրա, Թուրքիան «ստիպված կլինի զորքեր մտցնել Քերմանշահի նահանգը»։ Այս հայտարարությունը Թեհրանում մեծ տագնապ առաջացրեց։ Կառավարությունը կարգադրեց Ֆարման Ֆարմային անհապաղ ձեռնարկել միջոցառումներ Խանեկին—Քերմանշահ ճանապարհի վրա կողոպուտները դադարեցնելու և առևտրական շարժումը վերականգնելու համար, որպեսզի պատրվակ չտրվի Թուրքիային զավթել Իրանի համար խոշոր ռազմագիտական նշանակություն ունեցող վերոհիշյալ տերիտորիաները[560]։ Սակայն, չնայած դրան, սեպտեմբերին Թուրքական գլխավոր շտաբը 12-րդ կորպուսի կազմից մի ուժեղ ջոկատ ուղարկեց Ուրմիայի շրջան։ Զորքեր ուղարկվեցին նաև Զոհաբ, Մերգևեր[561], ինչպես նաև Մակուի և Ավաջիքի խանությունների ուղղությամբ[562]։

Գիրսը գտնում էր, որ հակառակ իր ներքին ծանր վիճակին թբիլիսիֆիստական կառավարությունը դիմում է այդ քայլին, որպեսզի բացառի սահմանային հարցում Ռուսաստանի ճնշումը Բ. Դռան վրա[563]։ Դրան հակազդելու նպատակով նա առաջարկում էր ուժեղացնել Խոյի ռուսական ջոկատը և թույլ չտալ Թուրքերին վերոհիշյալ շրջաններում ձեռք բերել զորքերի քանակական գերակշռություն[564]։ Գոլուբինովը պաշտպանեց դեսպանի առաջարկը, ավելացնելով, որ անհրաժեշտ է անհապաղ գրավել Զինդեշտը, Գավրլյանը, Բարանդուզը և Դիզլ-Թեքեն Թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը կանխելու համար[565]։ Իսկ Խոյի փոխ-հյուպատոս Զիրկովը դիմեց Թիֆլիսի իշխանություններին, որպեսզի ամենակարճ ժամկետում Մակուում նշանակվի արտաքին գործերի մինիստրության ներկայացուցիչ, որն իր տրամադրության տակ ունենա բավարար

---

560 Նույն տեղում։

561 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 33, л. 221.

562 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 363, лл. 24, 35.

563 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 33, л. 185.

564 МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 159.

565 ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 363, л. 7.

չափով զինված ուժեր՝ Ռուսաստանի հարևան խանությունում Թուրքական զորքերի զավթումները խափանելու համար։ Իր հերթին փոխարքան կառավարությունից կտրուկ պահանջում էր անհապաղ զորքեր ուղարկել Մակու[566]։ Սակայն արտաքին գործերի մինիստրությունում առարկեցին այդ պահանջի դեմ։ Վորոնցով-Դաշկովին ուղղված 1912 թ. սեպտեմբերի 21-ի գաղտնագրված հեռագրում Ներատովը գրում էր. «Ներկա պայմաններում մեր կողմից Մակուի դրավումը անխուսափելիորեն կմեկնաբանվի որպես սպառնալիք Թուրքիայի հասցեին, որը բոլորովին չէր համապատասխանի մեր խաղաղասիրական քաղաքականությանը Բալկանյան հարցում։ Այդ պատճառով շարունակում ենք պնդել ներկայումս Մակուն դրավելու անժամանակ լինելու մասին»[567]։ Իր այդ դիրեկտիվը ավելի ծանրակշիռ դարձնելու համար Ներատովը վկայակոչում էր նաև Մինիստրների խորհրդի նախագահին, հայտնելով, որ նա ևս անհրաժեշտ է համարում ձեռնպահ մնալ վճռական գործողություններից դիմելուց, մինչև իրադարձությունների մեջ որոշ պարզություն մտնելը[568]։ Սա, անշուշտ, վկայում էր այն մասին, որ Պետերբուրգը շարունակում էր իր անվճռական ու վարանոտ դիրքը Իրանում Թուրքիայի նվաճողական քաղաքականության նկատմամբ։ Գիրսին ուղղված հեռագրում արտաքին գործերի մինիստրության ավագ խորհրդական Արգիրոպուլոն հայտնում էր, որ Իրանում ռուսական զինվորական իշխանություններին խորհուրդ է տրվելու ամեն կերպ խուսափել Թուրքերի հետ բախումներից։ Հեռագրում միաժամանակ կարդացվում էր սահմանափակվել Բ. Դոան առջև դիվանագիտական առաջադրությամբ, հատկապես նրա ուշադրությունը դարձնելով զորքերի նոր համալրումների ուղարկման փաստի վրա Ուրմիայի շրջան[569]։ Այդ հրահանգի համաձայն սեպտեմբերի 17-ին Գիրսը նոտա ներկայացրեց Գարրիել Նորատունկյանին, պահանջելով Ուրմիայից, Մերգևերից և այլն անհապաղ դուրս բերել նոր ուղարկված ջոկատները[570]։ Հաջորդ օրը Նորատունկյանի հետ զրույ-

---

566 МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 367.

567 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 363, л. 19.

568 *Նույն տեղում, թ. 20։*

569 МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 188.

570 АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 33, л. 208.

ցի ժամանակ, Թուրքական արտաքին գործերի մինիստրի վրա կրկնակի ճնշում գործադրելու նպատակով, Դիրսը սնփական նախաձեռնությամբ պահանջեց, որպեսզի ռուսական կառավարության 1912 թ. օգոստոսի 9-ի նոտայի համաձայն Բ. Դուռը շուտափույթ լուծի նաև Թուրք-իրանական սահմանային հարցը։ Գաբրիել Նորատունկյանը պատասխանում է, որ Մինիստրների խորհուրդը դեռևս չի հասցրել քննարկել այդ հարցը և խոստանում է քննարկումից անմիջապես հետո հայտնել արդյունքների մասին։ Դրան նա ավելացնում է, որ հարցը Ռուսաստանի ցանկացած իմաստով լուծելու համար խնդրում է ռուսական կառավարության օգնությունը։ Զարգացնելով այդ միտքը Թուրքական արտաքին գործերի մինիստրը հայտնում է, որ ինքը վերոհիշյալ հարցի լուծման գրավականը տեսնում է տնտեսական զիջումների մեջ։ Կոնկրետ նա պահանջում է, որ մեծ պետությունները համաեվրոպական իրավունքի հիմունքներով առևտրական պայմանագրեր կնքեն Թուրքիայի հետ, նրան տան տնտեսական ազատ գործունեության հնարավորություն, որը մինիստրի արտահայտությամբ «այնքան անհրաժեշտ է Թուրքիայի հետագա գործունեության համար»։ Այնուհետև նա շարունակում է, որ Եռյակ դաշինքի երկրները՝ Ավստրո-Հունգարիան, Գերմանիան և Իտալիան այդ առթիվ Թուրքիայի հետ եկել են, կամ համարյա եկել են որոշակի համաձայնության՝ կնքելով մի շարք պայմանագրեր. հետևաբար մնում է ստանալ միայն Եռյակ համաձայնության երկրների սկզբունքային համաձայնությունը։ Թուրքիան չափազանց պարտավորված կլիներ Ռուսաստանին, եթե վերջինս ընդառաջեր նրա այդ ցանկությանը։

Գիրսը պատասխանում է, որ մինիստրի հայտարարության բովանդակությունը կհայտնի ուր հարկն է, սակայն, անձամբ ինքը չի կարող համաձայնվել այն բանի հետ, որ Թուրքիայի տնտեսական գործունեության ազատության հարցը կապվում է Թուրք-իրանական սահմանային հարցի հետ[571]։

Այսպիսով, Թուրքական արտաքին գործերի մինիստրը, ամենայն հավանականությամբ ոչ առանց Մինիստրների խորհրդի հա-

---

[571] МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 228.

մաձայնության, որոշել էր իրանական հարցը առիթ ծառայեցնել Եոյակ համաձայնության երկրներից, և առաջին հերթին՝ Ռուսաստանից, տնտեսական օգուտներ կորզելու համար։ Ընդ որում, այդ նպատակին հասնելու համար Բ. Դուռը աշխատում էր օգտվել Անտանտի երկրների հակասություններից։ Գիրսը, օրինակ, հաղորդում էր Ներատովին, որ Թուրքիայում ֆրանսիական ներկայացուցիչները արդեն փորձեր են կատարում տնտեսական բնագավառում ինչ-որ համաձայնության գալ Բ. Դռան հետ, հետևաբար, զգուշացնում էր նա, Ռուսաստանի համար ձեռնտու է Թուրքիային սկզբունքորեն ընդառաջել այն պահին, երբ դեռևս հնարավոր է նրանից ստանալ օգուտներ, հակառակ դեպքում, այդ հարցի առթիվ մյուս երկրների հետ համաձայնության գալուց հետո Ռուսաստանը ակամայից ստիպված կլինի տալ իր համաձայնությունը, միանգամայն «էժան վաճառելով այն և չստանալով ոչ մի բարոյական օգուտ»[572]։

Մյուս կողմից, Ռուսաստանի վարանոտ քաղաքականությունը Թուրքիայի հանդեպ և Իրանում անգլո-ռուսական հակամարտությունը հնարավորություն էին տալիս իթթիլյաֆիստական կառավարությանը «իրանական հարցում» գործել ավելի համարձակորեն։ Ստամբուլին հաջողվեց ռուսների դեմ պայքարի մեջ ներքաշել իրանական քրդերին, որոնք երիտթուրքական կառավարության տապալումից հետո միաժամանակ խաղաղվել էին։ Իթթիլյաֆիստական կառավարության հյուպատոսները քրդական ֆեոդալներին տվեցին «գործողությունների լրիվ ազատություն»։ Վերջիններս իրենց ջոկատներով կրկին դուրս եկան ասպարեզ, սկսեցին քանդել հեռագրական գծերը, կողոպտել առևտրական քարավանները, հարձակվել քրիստոնյա բնակչություն ունեցող գյուղերի վրա և այլն[573]։ Գնալով հաճախակի էին դառնում նաև մի շարք ցեղերի հակառուսական զինված ելույթները։ Ռուսական ջոկատները ստիպված էին Իրանական Քրդստանում զենքի ուժով «խաղաղեցնել» քրդերին։

Իթթիլյաֆիստական կառավարությունը ձախողեց նաև իրանա-թուրքական սահմանային հանձնաժողովի աշխատանքները,

---

572 Նույն տեղում, էջ 227—228։

573 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 363, л. 4.

որոնք սկսվել էին դեռևս 1912 թ. մարտի 12-ին Ստամբուլում։ Բ. Դուռը միտումնավոր օբստրուկցիայի էր ենթարկում սահմանային հանձնաժողովի աշխատանքները[574], որպեսզի գործը հանձնվի Հաղայի միջազգային տրիբունալի քննարկմանը։ Դա առաջին հերթին հարված էր հասցնում Ռուսաստանի շահերին, որովհետև թուրքական զավթումների գոտին ընդգրկում էր 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով բաժանված ռուսական ազդեցության շրջանները։ Այդ պատճառով 1912 թ. սեպտեմբերի 24-ին Սազոնովը Գրեյին ուղղեց մի հուշագիր, որի մեջ մասնավորապես ասվում էր. «Եթե Թուրքիային հաջողվի անեքսիայի ենթարկել ներկայիս իր օկուպացրած վայրերը Խոյի, Սալմաստի, Ուրմիայի, Սուլդուզի և Սոուջբուլաղի շրջաններում, ապա Ռուսաստանը ստիպված կլինի օկուպացնել Ադրբեջանի մի մասը, մասնավորապես՝ Մակուի, Ղոթուրի, Խոյի շրջանները և հնարավոր է նույնիսկ, Մարաղան, մինչև որ Պարսկաստանը իր տրամադրության տակ ունենա բավարար չափով զինված ուժեր, որպեսզի պաշտպանի իր տիրապետությունները թուրքական ագրեսիայից և ապահովի իր շեզոքությունը»[575]։

Այս հուշագիրը լրջորեն անհանգստացրեց Ֆորին Օֆիսի ղեկավարներին, որովհետև նրանց կարծիքով դա առիթ կհանդիսանար, որ Ռուսաստանը անեքսիայի ենթարկի ողջ Իրանական Ադրբեջանը։ Այդ պատճառով պատասխան հուշագրում Գրեյը համոզում էր, որ թուրքերը հակված են զիջումներ կատարելու, հետևաբար անհրաժեշտություն չկա դիմել նման քայլերի[576]։ Միաժամանակ բրիտանական կառավարությունը սկսեց ճնշում գործադրել իթթիլյաֆիստական կառավարության վրա, պահանջելով սահմանափակել իր ախորժակը Իրանում։

Գերմանիան ուշի-ուշով հետևում էր թուրքական նոր կառավարության քաղաքականությանը Իրանում, միևնույն ժամանակ շարունակելով ռազմա-հետախուզական տեղեկությունների հավա-

---

574 «Материалы по изучению Востока», вып. II, стр. 135.

575 МОЭИ, серия II, т. XX, ч. II, стр. 254.

576 „British documents on the origins of the war", 1898—1914, vol. 9, p. 1, p. 768.

քումը Իրանի և Անդրկովկասի վերաբերյալ։ Իրանական Քրդստանում և Ադրբեջանում 1912 թ. ամռանը ակտիվ հետախուզական գործունեություն էին ծավալել հատկապես գերմանական զլխավոր շտաբի սպաներ կոմս ֆոն Վեստարնը և Էռնստ Լանգենն։ Սրանք մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Թուրքիայից իրանական սահմանը տանող ճանապարհների և Իրանից Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս գնացող ստրատեգիական հաղորդակցական գծերի նկատմամբ[577]։ Հատկանշական է, որ Իրանական Քրդստանում սրանց հայտնվելուց հետո այնտեղ տեղի ունեցան մի շարք քրդական ելույթներ ռուսական զորքերի դեմ[578]։ Դա անշուշտ վկայում էր այն մասին, որ գերմանական հետախուզությանը հանձնարարված էր Իրանում Ռուսաստանի դեմ հրահրել շարժում միանգամայն ինքնուրույն կերպով, առանց Թուրքիայի աջակցության, որովհետև անգլոֆիլ իթթիլյաֆիստական կառավարությունը հակված էր Իրանում համագործակցել բացառապես Մեծ Բրիտանիայի հետ։ Սակայն, մյուս կողմից պետք է նշել, որ Գերմանիայի վերոհիշյալ քաղաքականությունը հնարավորություններ էր ստեղծում գերմանական կառավարության և իթթիլյաֆիստների համագործակցության համար ավյալ հարցում շահերի միասնության հիմքի վրա։

* * *

1912 թ. հոկտեմբերի 15-ին Իտալիայի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց գաղտնի նախնական պայմանագիր, իսկ երեք օր անց Լոզանում ստորագրվեց խաղաղության պայմանագիր, որով Թուրքիան կորցնում էր Տրիպոլիտանիան և Կիրենաիկան։

Իտալո-թուրքական խաղաղության պայմանագրի ստորագրման օրը, 1912 թ. հոկտեմբերի 18-ին սկսվեց Բալկանյան պատերազմը։ Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան և Չեռնոգորիան զինված պայքարի դուրս եկան Օսմանյան կայսրությունից անջատվելու և լրիվ քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելու համար։

---

577 ЦГИА Груз. ССР, ф. 366, л. 12.

578 Նույն տեղում, թթ. 14—16։

Թուրքիայի համար ստեղծվեց արտաքին քաղաքական չափազանց ծանր վիճակ։ Ալբանիայում տեղի ունեցած համընդհանուր ապըստամբության հետևանքով երկրում տապալվեց դարավոր թուրքական լուծը։ Աֆրիկայում կայսրությունը կորցրեց իր վերջին տերիտորիաները, բալկանյան ռազմաճակատներում թուրքական զորքերը կրում էին ծանր պարտություններ։

Ստամբուլի կառավարող շրջանները ենթադրում էին, որ օգտվելով Թուրքիայի ճգնաժամային վիճակից Ռուսաստանը կհարձակվի նրա վրա, որպեսզի հեշտացնի բալկանյան պետությունների գործը, թուրքական զորքերին դուրս քշի Իրանից և հնարավորության դեպքում գրավի Արևմտյան Հայաստանը։ Այդ պատճառով որոշվեց ինչ գնով էլ լինի կարգավորել վիճելի հարցերը Ռուսաստանի հետ, որպեսզի պատրվակ չտրվի նրան դիմելու վերոհիշյալ քայլին։ Ստամբուլում հիանալի գիտակցում էին, որ այդ նպատակին հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է զորքերը դուրս բերել Իրանից։ Դա անշուշտ մեծ զոհողություն էր թուրքական կառավարող շրջանների համար, սակայն ստեղծված պայմաններում նրանք այլ ելք չունեին։

1912 թ. հոկտեմբերի 11-ին Գաբրիել Նորատունկյանը հայտարարեց Գիրսին, որ կառավարությունը որոշել է Իրանից դուրս բերել իր զորքերը։ Ընդ որում, մինիստրը ավելացրեց, որ հենց որ իրանական կառավարությունը պատրաստ լինի թուրքերից ընդունել գրավված շրջանները, վերջիններս անմիջապես դուրս կգան այնտեղից։ Հայտնելով այդ մասին արտաքին գործերի մինիստրությանը, Գիրսը գտնում էր, որ անհրաժեշտ է ներշնչել շահական կառավարությանը, որպեսզի հնարավորին չափ շուտ պաշտոնական հայտարարություն անի վերոհիշյալ բովանդակությամբ[579]։

Հոկտեմբերի 17-ին Պետերբուրգում թուրքական դեսպան Թուրհան փաշան պաշտոնապես հայտարարեց Սազոնովին, որ իր կառավարությունը որոշել է զորքերը դուրս բերել «վիճելի» գոտուց մինչև սահմանային այն գիծը, որը գոյություն ուներ 1905 թ.։ Դեսպանը միաժամանակ հույս էր հայտնում, որ Ռուսաստանը «վի-

---

[579] АВПР, ф. «Канцелярия МИД», 1912, д. 34, л. 229.

ճելի» տերիտորիայի նկատմամբ չի ձեռնարկի արտակարգ ոչ մի միջոցառում[580], այլ կերպ ասած, չի օկուպացնի այդ տերիտորիան։

Նախքան Իրանից իր զորքերի դուրս բերումը իթթիլյաֆիստական կառավարությունը, այնուամենայնիվ, փորձեց մի շարք զիջումներ կորզել շահական կառավարությունից, այն հաշվով, որ ապագայում ևս հնարավորություն ունենա միջամտել իրանական գործերին։ Այդ նպատակով 1912 թ. հոկտեմբերի 19-ին Թեհրանում Թուրքական դեսպանը նոտա ներկայացրեց շահական կառավարությանը, որի մեջ դրվում էին հետևյալ պահանջները.

1. Էվակուացիայի ենթարկված շրջանները չպետք է գրավվեն օտարերկրյա զորքերի (իմա Ռուսաստանի—Վ. Բ.) կողմից։

2. Շահական կառավարությունը պետք է ներումն շնորհի այն բոլոր իրանահպատակներին, որոնք աջակցություն էին ցույց տալիս Թուրքերին։

3. Էվակուացված շրջաններում շահական կառավարությունը պետք է երաշխավորի Թուրքահպատակ սուննիթ բնակչության կյանքի և գույքի ապահովումը։

Նոտայում միանգամայն պարզ նշվում էր, որ Բ. Դուռը հնարավոր չի համարում հրաժարվել հատուկ հետաքրքրություն դրսևորելուց իրանական այն տերիտորիաների նկատմամբ, որտեղից էվակուացվելու են իր զորքերը։ Այնուհետև ասվում էր, որ չնայած ներկա մոմենտին կայսրության ապրած ցնցումներին, Թուրքական կառավարությունը իրեն իրավունք և ուժ է վերապահում չխզել կապերը Իրանի հետ ունեցած տնտեսական և քաղաքական այն շահերից, որոնք ստիպեցին Թուրքերին իրագործել դեպի Արևելք շարժվելու իրենց ծրագիրը[581]։ Նոտայի վերջում շեշտվում էր, որ վերոհիշյալ պահանջները չընդունելու դեպքում Բ. Դուռը հնարավոր չի համարում իր զորքերը դուրս բերել Իրանից։

Խոսելով Թուրքական կառավարության նոտայի մասին, Խոյի

---

[580] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1913, д. 3567, л. 18.

[581] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 363, лл. 86—89; «Сводка сведений...», № 40, Тифлис, 1913, стр. 1.

փոխ-հյուպատոս Չիրկովը նկատում էր. «Նման պայմանների բավարարումը հավասարազոր կլիներ թեկուզև անուղղակիորեն ճանաչել Թուրքիայի՝ Հյուսիս-արևմտյան Իրանի ներքին գործերին մասնակցելու իրավունքը, որը կհակասեր մեր ուղղակի շահերին, որոնք կենում են Անգլիայի հետ կնքած մեր համաձայնագրերից, չխոսելով արդեն այն մասին, որ մեզ համար հնարավոր չէ թույլ տալ Թուրքիային ինչ-որ ձևով մասնակցել Ադրբեջանի և պարսկական այդ նահանգի ժողովրդի ճակատագրի տնօրինման գործին։ Ընչին չափով իսկ չեմ կասկածում նրանում, որ Ռուսաստանը թույլ չի տա պարսկական իշխանությունների նախանձախնդիր վերաբերմունքը բնակչության մեկ մասի նկատմամբ, ի վնաս մյուսի գույքային շահերի»[582]։ Այնուհետև Չիրկովը պնդում էր, որ Թուրքիայի զավթած հողերը ետ վերադարձնելու համար Ռուսաստանը ավել է մեծ զոհողություններ, հետևաբար «այս դժբախտությունների մեղավորների հետ վարվելու իրավունքը վերապահվում է ռուսներին, այլ ոչ թե շահական կառավարությանը և նրա նահանգական օրգաններին, որոնք լրիվ դրսևորեցին իրենց պետական անզորությունը»[583]։

Սակայն ցարական դիվանագետների առարկությունները թուրքական նոտայի պայմանների վերաբերյալ չընդունվեցին թեհրանի կողմից։ Շահական կառավարությունը անվերապահորեն ընդունեց Ստամբուլի ներկայացրած բոլոր պայմանները, որից հետո սկսվեց թուրքական զորքերի էվակուացիան։

Իրանական տերիտորիայից հեռանալիս օկուպացիոն իշխանությունները աշխատում էին քրդերին գրգռել ռուսների դեմ, համոզելով նրանց, որ վերջիններս ավերածության կենթարկեն իրենց բնակավայրերը։ Սակայն այդ պրոպագանդան հաջողություն չունեցավ։ Ընդհակառակը, թուրքական զորքերի հեռացումը Իրանից վերին աստիճանի վարկաբեկեց Օսմանյան կայսրությանը տեղական բնակչության, հատկապես քրդերի աչքում։ Վերջիններս մինչև իսկ հրաժարվեցին թուրքական զորքերին տրամադրել փոխադրա-

---

582 ЦГНА Груз. ССР, ф. 15, д. 363, лл. 82—83.

583 Նույն տեղում։

միջոցներ[584]։ Օկուպացիոն իշխանությունները նույնիսկ վախենում էին, որ Իրանում իրենց դեմ կռվի քրդերի համընդհանուր ապըստամբություն Իսմայիլ աղա Սիմկոյի և Սեյիդ Թահայի գլխավորությամբ[585]։

Վիճելի գոտու բնակչության աչքում Ռուսաստանը հանդիսանում էր դրության տերը և այդ պատճառով քրդական մի շարք ցեղեր՝ բեկզադե, խարբի, զերզա, մամաշ և այլն, իրենց հնազանդությունը հայտնեցին ռուսներին և իրանական կառավարությանը[586]։

Բ. Դեան վճիռը իրանական տերիտորիայից զորքերի դուրս բերման մասին չափազանց մեծ դժգոհությամբ ընդունեցին Թուրքական սահմանային իշխանությունները, զավթումների քաղաքականության ականավոր գործիչները և էքսարեմիստական տրամադրություններ ունեցող զինվորականությունը։ Ընդ որում, երիտթուրքական գործիչները աշխատում էին այս միջադեպը առիթ ծառայեցնել իթթիլյաֆիստներին վարկաբեկելու համար։ Այսպես, երիտթուրքական կաբինետի ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը Ջաբիր փաշայի հետ զրույցի ընթացքում սպառնալից տոնով հայտարարում է. «Թեկուզ միայն վիճելի գոտուց զորքերի հեռացման ցանկալի լինելու մասին մաքի համար ձեզ պետք է աքսորել Արաբիա։ Եթե կաբինետը խանգարի մինչև վերջ հասցնել մեր գործը Պարսկաստանում, ժողովուրդը կդատի մինիստրներին որպես դավաճանների։ Պարսկաստանը շատ ավելի կարևոր է մեզ համար, քան ողջ եվրոպական Թուրքիան»[587]։

Երիտթուրքական մի այլ գործիչ, Ուրմիայի նախկին հյուպատոս Սաադի բեյը խոյում ռուսական հյուպատոս Զիրկովի հետ զրույցի ժամանակ բացահայտորեն դրսևորելով իր դժգոհությունը իթթիլյաֆիստական կառավարության նկատմամբ հայտարարում է. «Պարսկաստանից նահանջելը ավելի ամոթալի է, քան Մալոնիկի կապիտուլյացիան։ Ռումելիում մեր գործը վաղուց պարտված էր և

584 «Сводка сведений...», 1912, № 34, стр. 31.

585 Նույն տեղում, էջ 32։

586 «Сводка сведений...», 1912, № 39, стр. 44; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 363, л. 81.

587 «Сводка сведений...», 1913, № 37, стр. 21.

միայն մեր զեկավարների անշարժությունը այն հասցրեց խայտառակ կատաստրոֆայի, իսկ այստեղ մենք դեռ նոր էինք սկսել գործել ոչ առանց հաջողության, և արդեն ստիպված ենք փախչել։ Եթե մեր հայրենիքին երբևիցե հաջողվի հավաքել իր ուժերը մեր ապրած փորձությունից հետո, ապա ազգը, հավանական է, իր մեջ կգտնի արիություն հաշտվելու բալկանյան ջարդի հետ, սակայն նա չի ների ներկայիս կառավարությանը մեր հավատակից Պարսկաստանից նահանջելու համար»[588]։

Թուրքական կառավարությունը և հատկապես երիտթուրքական գործիչները Իրանում զավթողական քաղաքականության ձախողման պատճառը համարում էին Ռուսաստանին։ «Ամբողջ մահմեդական աշխարհը հասկանում է, որ մի կողմից մեզ նեղում է Ռուսաստանը, իսկ մյուս կողմից հարվածում են նրա զավակներն ու աշակերտները»,—հայտարարում է Սաադի բեյը Զիրկովին[589]։ Ընդհանրացնելով այդ տեսակետները վերջինս գրում էր. «Թուրքերի համար պարզ է, որ պարսկական սահմանում Թուրքիայի առջև կանգնած է ոչ թե թուլացած և պետության կերպարանքը կորցրած Իրանը, այլ Ռուսաստանը։ Այդ պատճառով դժվար թե թուրքերը չմտածեն ապագայում հաշիվ մաքրել մեզ հետ»[590]։

Թուրքական զորքերի էվակուացիան ավարտվեց 1912 թ. նոյեմբերի 10-ին[591]։

Կրկին վերականգնվեց իրանա-թուրքական սահմանի 1905 թ. գոյություն ունեցած դիծը։

Իրանական տերիտորիայից թուրքական զորքերի հեռանալուց հետո Ռուսաստանի համար առաջնակարգ նշանակություն ունեցող հարց դարձավ սահմանների պահպանության խնդիրը։ Ռուսաստանը ցանկանում էր ամուր պատնեշ ստեղծել Թուրքիայի դեմ, ապագայում սահմանամերձ գոտու անվտանգությունը ապահովելու համար։

---

588 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 363, лл. 80—81.

589 Նույն տեղում։

590 Նույն տեղում։

591 «Сводка сведений...», 1912, № 34, стр. 31.

Իրանական կառավարությունը անմիջապես հայտարարեց, որ սահմանների պահպանության գործը ամբողջապես կվերցնի իր վրա, նախկին օկուպացված տերիտորիայում կվերականգնի իր վարչությունը, բաց կանի մաքսատներ և այլն[592]։ Միանգամայն ակներև էր, որ շահական կառավարությունը երկյուղ էր տածում, որ սահմանների պաշտպանության պատրվակի տակ Ռուսաստանը կարող է օկուպացիայի ենթարկել ողջ Իրանական Ադրբեջանը և Քրդստանը։ Այդ պատճառով նա մտադիր էր կանխել Ռուսաստանի այդ փորձերը։ Սակայն հարցը այն էր, որ շահական կառավարությունը իր տրամադրության տակ չուներ հիշյալ խնդիրը իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ։ Սեփահդարը թեև կառավարությանը խոստացավ սահման ուղարկել զինված ուժեր, սակայն, նա փաստորեն բանակ չուներ և չէր կարող կարճ ժամանակամիջոցում հավաքել։ Հետագայում պարզվեց, որ նա իր խոստումը տվել էր կառավարությունից փող կորզելու միտումով։ Այսպիսով, առաջին և ամենակարևոր խնդիրը՝ իրանական զինված ուժերի կողմից սահմանները պահպանելու հարցը մնաց չլուծված։ Չհաջողվեց նաև անմիջապես բաց անել մաքսատներ, որովհետև մաքսաննենգային առևտուրը, որը խրախուսում էր Թուրքիան, չափազանց տարածված էր այդ շրջաններում և բնականաբար մաքսային ռեժիմ սահմանելու քայլը պետք է հանդիպեր ուժեղ դիմադրության։ Իրանական մաքսատների գլխավոր կառավարիչ Դյումենի փորձերը՝ մի շարք վայրերում մաքսատներ բաց անելու ուղղությամբ, վերջացան կատարյալ ձախողմամբ, իսկ ինքը՝ Դյումենն, սպանվեց անհայտ մարդասպանների ձեռքով։

Ռուսական քաղաքական շրջաններում իրանական սահմանների պաշտպանության հարցը քննարկելիս պարզվեց, որ այդ գործի համար իրանական սարբազները չէին կարող պիտանի լինել։ Մյուս կողմից՝ ցարական կառավարությունը Թուրքիայի հետ հարաբերությունները չսրելու քաղաքականությունից ելնելով անցանկալի համարեց ռուսական զորքերի թափանցումը նախկին թուր-

---

592 «Сводка сведений...», 1913, № 40, стр. 1; ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, лл. 24—25.

քական օկուպացիայի դեմին[593]։ 1912 թ. նոյեմբերի հրահանգում Սազանովը կարգադրում էր Կովկասի փոխարքային՝ չդրավել թուրքերի գաղաթված տերիտորիաները, այլ հույժ անհրաժեշտության դեպքում այդ վայրերն ուղարկել ուժեղ զորամասեր և այն էլ միայն հյուպատոսների հետ համաձայնեցնելուց հետո[594]։

Ի վերջո սահմանների պաշտպանության հարցի լուծման առավել նպատակահարմար ձև համարվեց ռուսների մոտ վստահություն վայելող և թուրքերի նկատմամբ իրենց անհաշտ դիրքավորումով հայտնի քրդական առաջնորդների ծառայությանը դիմելը։

1912 թ. վերջին Իսմայիլ աղա Սիմկոն նշանակվեց Սոմայում իրանական վարչության ներկայացուցիչ և սահմանային պահակախմբի պետ, ընդ որում, իրանական դանձարանը իր վրա էր վերցնում նրա ջոկատի պահպանության ծախսերը։ Իսկ Ղոթուրում նույնպիսի պարտականություն դրվեց Սիմկոյի եղբոր՝ Ահմեդ աղայի վրա[595]։ Նույնանման սահմանապահ ջոկատներ կազմակերպվեցին նաև թուրք-իրանական սահմանի մյուս տեղամասերում[596]։

Ռուսական իշխանությունները համոզված էին, որ սահմանապահ փոքրաթիվ և հաճախ վատ զինված քրդական ջոկատները ի վիճակի չեն թուրքական հարձակման դեպքում ցույց տալ քիչ թե շատ լուրջ դիմադրություն։ Հետևաբար նրանց դերը լինելու էր այն, որ ցույց տրվեր իրանական պետական սահմանի առկայությունը և ստիպեր թուրքերին հաշվի նստել դրա հետ։ Այդպիսի սահմանապահ ջոկատների առկայության դեպքում իրանական տերիտորիայի անձեռնմխելիության խախտումը Թուրքիայի կողմից, Ռուսաստանի կարծիքով, միանգամայն անհնարին կլիներ, որովհետև այն կդիտվեր որպես նրա տերիտորիայի անձեռնմխելիության նկատմամբ ոտնձգության փաստ[597]։

Յարական զինվորականությունը կովկասյան հրամանատարությանը առաջարկում էր նաև Իրանի սահմանամերձ շրջանների

---

593 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 101, л. 46.

594 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 363, л. 68.

595 Նույն տեղում, թ. 70։

596 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, лл. 6—8.

597 ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, л. 7.

մի շարք ապահով վայրերում ստեղծել զինապահեստներ, Թուրքական նոր ներխուժման դեպքում ռուսներին հավատարիմ տեղական բնակչությանը (հատկապես ասորիներին և հայերին) անմիջապես զենք բաժանելու համար[598]։

Օկուպացված շրջաններից Թուրքական զորքերի հեռանալուց հետո իրանական վարչությունը մտավ իր իրավունքների մեջ։ Դա արտահայտվեց միայն հատուկ եռանդով բնակչությունից մալիաթը գանձելով։ Այն գյուղերը, որոնք վերջին հինգ տարիների ընթացքում չէին վճարել պետական հարկերը, պարտավորվեցին անմիջապես վճարել։ Ռուսական հյուպատոսների վկայությամբ, իրանական կալվածատերերը աշխատում էին լրացնել Թուրքական օկուպացիայի ժամանակ կորցրածը։

Ռուսական գործիչները նախազգուշացնում էին իրենց կառավարությանը, որ իրանական իշխանությունների այդ քաղաքականությունը ոչ միայն պարարտ հող է ստեղծում Թուրքական գործակալության պանիսլամիստական պրոպագանդայի ակտիվացման համար, այլև կարող է պատրվակ ծառայել Թուրքերի համար իրենց նախկին «հպատակների» իրավունքների պաշտպանության անվան տակ կրկին օկուպացնելու իրանական սահմանամերձ տերիտորիաները։ Այդ պատճառով նրանք պահանջում էին վճռական միջոցառումներ ձեռնարկել շահական իշխանությունների «այդ կործանարար քաղաքականության դեմ», որը կարող էր վտանգի տակ դնել նաև Ռուսաստանի շահերը Իրանական Ադրբեջանում և Քրդստանում[599]։

Այս մտավախությունը, անշուշտ, վկայում էր այն մասին, որ Ռուսաստանի քաղաքական շրջաններում դեռևս վստահ չէին, որ Օսմանյան կայսրությունը վերջնականապես հաշտվել է Իրանում իր քաղաքականության պարտության հետ և առաջիկայում փորձ չի կատարի վերադարձնելու կորցրածը։ Այդ կասկածները անհիմն չէին, մանավանդ որ Ստամբուլը 1912 թ. դեկտեմբերից Իրանի

---

598 Նույն տեղում։

599 «Сводка сведений...», 1913, № 40, стр. 2—6; ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, лл. 9—10.

Թուրքոֆիլ քրդական առաջնորդներին կրկին սկսեց հրահրել տեղական քրիստոնյա բնակչության և Ռուսաստանի կողմնակից ցեղերի դեմ[600]։ Տեղեկություններ կային, որ որոշ շրջաններում թուրքական էմիսարները ագիտացիա էին մղում իրանական քրդերից Բալկանյան ռազմաճակատ կամավորներ ուղարկելու մասին, ռազմաճակատի համար հանգանակվում էին գումարներ[601], մզկիթներում տեղի էին ունենում թուրքոֆիլական հիստերիկ ելույթներ և այլն[602]։

---

[600] «Сводка сведений...», 1913, № 37, стр. 19.

[601] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, лл. 34—35.

[602] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 372, л. 162.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Բալկանյան պատերազմում Թուրքական զորքերի ծանր պարտությունը, Իրանում ագրեսիվ քաղաքականության կրախը և Թուրքիայի ներքին ճգնաժամի խորացումը վերջնականապես վարկաբեկեցին նաև իթթիլյաֆիստական կառավարությանը։ Վերջինս ստիպված էր հաշտություն խնդրել բալկանյան դաշնակիցներից։ 1912 թ. դեկտեմբերին Բուլղարիայի հետ կնքած զինադադարի հետևանքով Թուրքիան Բուլղարիային զիջեց իր եվրոպական տիրապետությունների նշանակալից մասը, ներառյալ նաև Ադրիանապոլիս քաղաքը։ Այս անգամ իթթիլյաֆիստների անհաջողություններից օգտվեցին երիտթուրքերը։ 1913 թ. հունվարի 10-ին տեղի ունեցավ պետական հեղաշրջում և իթթիհադը կրկին անցավ իշխանության գլուխ։ Էնվերն ու Թալյաթը հույս ունեին Բալկանյան պետությունների դեմ ռազմական գործողությունները վերբսկսելով ինչ-որ չափով կայունացնել իրենց վիճակը։ Սակայն այդ փորձը հաջողությամբ չպսակվեց։ Թուրքիան ստիպված էր համաձայնություն տալ խաղաղության բանակցություններ սկսելու վերաբերյալ, որոնք ավարտվեցին 1913 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված դաշնագրով, ըստ որի Օսմանյան կայսրությունը կորցնում էր համարյա իր բոլոր եվրոպական տիրապետությունները։

Երկրորդ Բալկանյան պատերազմը (1913 թ. հունիս-օգոստոս), որը բռնկվեց Բուլղարիայի և նրա նախկին դաշնակիցների միջև, առաջին պահ հույս ներշնչեց երիտթուրքերին, որ կվերականգնեն

իրենց տերիտորիալ կորուստները։ Սակայն այդ հույսը իրականացավ միայն մասնակիորեն։ Թուրքիային հաջողվեց ետ ստանալ միայն Ադրիանապոլիսը։

Հունիսի 15-ին իթթիլյաֆիստների կողմից մեծ վեզիր Մահմուդ Շևքեթ փաշայի սպանությունից հետո, իթթիհադը որոշեց այդ միջադեպը առիթ ծառայեցնել իր քաղաքական հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Նրան հաջողվեց վերջնականապես ջախջախել իթթիլյաֆիստներին և ամրապնդել իր իշխանությունը։ Թուրքիայում հաստատվեց եռապետություն՝ Էնվերի, Թալյաթի և Ջեմալի ռազմական դիկտատուրայի ռեժիմը։

Օսմանյան կայսրությունում աննախընթաց թափ ստացավ երիտթուրքերի պաշտոնական դաղափարախոսության՝ պանթուրքիզմի պրոպագանդան։ Ուժեղացվեց նաև պանիսլամիզմի քարոզչությունը։

Թուրքական կառավարող շրջանները ձգտում էին ուանշի՝ Աֆրիկայում և Բալկաններում իրենց կորցրած տերիտորիաների և Իրանում ունեցած «ամոթալի» պարտության համար։ Դեռևս մինչև Բալկանյան պատերազմի ավարտը, 1913 թ. սկզբներին երիտթուրքական կառավարությունը Իրանի սահմանների մի շարք հատվածներում սկսեց կենտրոնացնել զորքեր։ Միանգամայն ակնհայտ էր, որ պատերազմի ավարտից հետո Ստամբուլը մտադիր է վերսկսել իր դավթումների քաղաքականությունը Արևելքում։ Ցարական ռազմական և դիվանագիտական գործիչները ահազանգում էին կառավարությանը, որ Թուրքիան բնավ չի հաշտվել իրանական տերիտորիայից հեռանալու մտքի հետ։ Որ հսկայական կորուստներ ունենալով Արևմուտքում, նա անպայման տերիտորիալ փոխհատուցում է փնտրելու իր թույլ հարևանի՝ Իրանի հաշվին[1]։ Այդ միտքը Չիրկովը ձևակերպում էր հետևյալ կերպ. «...Թուրքիան դեռ ի վիճակի կլինի կենտրոնանալ Անատոլիայում, և եթե օտտոմանյան քաղաքականության ղեկավարները մոտ ապագայում հրաժարվեն կուսակցական արկածախնդրություններից, պետությունը կործանման եզրին հասցրած մոլեռանդությունից և ռազմաշունչ տենչանք-

[1] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 603, лл. 7—8, 29—30.

ներից, ապա Անդրկովկասի և Ադրբեջանի համար մենք նախկինի պես կունենանք մեր նկատմամբ թշնամի հարևան և, հավանաբար, ավելի ուժեղ ու համախմբված, որի ռուսական արդկլքներից ազատվելու և իր տերիտորիալ կորուստների համար դավանակից Բույլ Պարսկաստանի հաշվին իրեն վարձատրելու ձգտման դեմ մենք ստիպված կլինենք ձեռնարկել չափազանց լուրջ և որոշակի միջոցառումներ»[2]։

1913 թ. փետրվարից սահմանամերձ իրանական տերիտորիայում թուրքական գործակալությունը եռանդուն գործունեություն ծավալեց տեղական բնակչության շրջանում, հորդորելով նրան՝ չենթարկվել իրանական իշխանություններին և ապստամբել նրանց դեմ[3]։ Քրդական աշիրեթներին առատորեն մատակարարում էին թուրքական զենքով. զենք ու զինամթերք ձեռք բերելու նպատակով տեղերում կազմակերպվում էին հանդանակություն և այլն[4]։ Այս բոլորն ուղեկցվում էր պանիսլամիստական քարոզչության ուժեղացմամբ։ Իրանական Ադրբեջանում պանիսլամիզմի գաղափարների պրոպագանդման առավել խոշոր կենտրոն էր հանդիսանում Թավրիզի թուրքական գլխավոր հյուպատոսությունը, որտեղից պանիսլամիզմի ագիտատորները ստանում էին համապատասխան հրահանգներ[5]։

Երիտթուրքական գործակալությունը հատկապես եռանդուն գործունեություն ծավալեց իրանական հասարակայնության հեղափոխականորեն տրամադրված ղանգվածներին Ռուսաստանի դեմ ոտքի հանելու համար։ Տեղյակ լինելով, որ հեղափոխության ջախջախումից հետո Թուրքիա ու Կովկաս փախած և Իրանում ընդհատակային ֆիդայիները դեռ չեն հրաժարվել պայքարը շարունակելու մտքից, երիտթուրքերը սկսեցին «Կոստանդնուպոլսի իրանական հեղափոխական կոմիտեի» և իրենց գործակալության միջոցով Ադրբեջանում մղել ուժեղ ագիտացիա հակառուսական ապստամ-

---

[2] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 363, л. 82; д. 372, л. 24.

[3] АВПР, ф. «Персидский стол Б», 1913, д. 61, лл. 17, 48; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 372, лл. 163—164.

[4] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, л. 6.

[5] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 372, лл. 20—20 об.

բության վերաբերյալ[6]։ Իսկ Իրանական Քրդստանում նկատելով Ռուսաստանի նկատմամբ ուժեղացած համակրանքը երիտթուրքերը աշխատում էին հենց սաղմում ոչնչացնել և արգելք հանդիսանալ քրդական զանգվածների մերձեցմանը ռուսների հետ։ Այդ նպատակով թուրքական գործակալությունը թշնամական աշիրեթների միջև բորբոքում էր վաղեմի արյան վրիժառությունը, կազմակերպում զինված բախումներ, բարձրացնում ու հովանավորում էր որոշ կլանների, նրանց առաջնորդներին տալիս զանազան խոստումներ և, ընդհակառակը, նսեմացնում մյուսներին և այլն[7]։

Մուքրի Քրդստանում թուրքական գործակալները հատկապես ուժգին պայքար ծավալեցին ռուսների հովանավորությունը փնտրող կամ ռուսների հետ համագործակցող տեղական կալվածատերերի դեմ։ Սոուջբուլաղի նահանգապետության արևելյան մասի ռազմաստրատեգիական նկարագրությանը նվիրված կապիտան Մեդիոկրիտսկու 1913 թ. օգոստոսի հաշվետվության մեջ նշվում էր, օրինակ, որ տեղական կալվածատերերից շատերը, ցանկանալով պաշտպանվել առավել ուժեղ հարևանների բռնություններից, ռուսահպատակների, առավելապես հայերի հետ, կնքում են գործարքներ. վերջիններս դառնում են կալվածքի ձևական վարձակալ, իսկ կալվածքը այնուհետև անցնում է ռուսական հյուպատոսի հովանավորության տակ։ «Այդ ճանապարհով,—գրում էր նա,—մի շարք հայեր դառնում են խաներ։ Այսպես, օրինակ, ռուսահպատակ Սարկիսովը Սոուջբուլաղում կրում է խանի տիտղոս և հայտնի է Ասատուր խան անունով»[8]։ Բնական է, որ թուրքերը չէին կարող անտարբեր նայել, թե ինչպես են ամրապնդվում ռուսների դիրքերը Մուքրի Քրդստանում, որտեղ նրանք ունեին առավել ուժեղ ազդեցություն։

Դատելով ցարական դիվանագետների և զինվորականների հաղորդագրություններից, թուրքական ագիտացիան քրդական աշիրեթ-

---

[6] Նույն տեղում, թ. 20։

[7] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1913, д. 3573, л. 229; «Сводка сведений...», 1913, № 47, стр. 4—6, 8.

[8] ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 9, д. 104, л. 4.

ների շրջանում անհետևանք չէր մնում։ «Սոմայի քրդերը,—գրում էր կապիտան Տերլեցկին,—մեր քրդական քաղաքականության նկատմամբ տրամադրված են չափազանց անվստահորեն»[9]։ Նույնիսկ տեղեկություններ կային, որ գաղտնի ժողով գումարելուց հետո քրդական ցեղապետները որոշել են Սամբուլի Մեջլիս Մեհբուզանի (պատգամավորների պալատ) անունով ուղարկել մի «աղերսալից դիմում», որտեղ խնդրում էին իրենց վերցնել Թուրքական հովանավորության տակ[10]։

Սոմայի և Բարադոսթի քրդերի շրջանում նկատվող պրոթուրքական տրամադրությունների աշխուժացումը ստիպեցին Իրանում ռուսական զորքերի հրամանատարությանը 1913 թ. գարնանը պատժիչ արշավանք կազմակերպել նրանց դեմ։ Այդ ռազմական «զբոսանքը» ուժեղ տպավորություն գործեց քրդերի վրա։ Ազդեցիկ անհնազանդ խաներն ու բեկերը անձամբ ներկայացան ռուսական ջոկատի հրամանատար գնդապետ Վասիլովզորովին և զուրանի վրա երդվեցին այսուհետև հավատարիմ մնալ Ռուսաստանին և նրա դրածո Իսմայիլ աղա Սիմկոյին[11]։

Սակայն ռուսական հրամանատարությունը գտնում էր, որ այդ երդումը անկեղծ չէ, որ այն թելադրված է զինված ուժի սպառնալիքով և եթե ռուսական զորքերը շամբրանան Քրդստանում, ապա առաջին իսկ հնարավորության դեպքում քրդերը դեն կնետեն հնազանդության իրենց դիմակը։ Այստեղից պարզ էր, որ ռուսական զորքերի թվի կրճատումը Իրանում անցանկալի էր ու վտանգավոր. ընդհակառակը առաջարկվում էր ռուսական ջոկատներով օկուպացնել ողջ Իրանական Քրդստանը[12]։ Այս տեսակետը շատ կրքոտ պաշտպանում էր Իրանում գտնվող ռուսական 21-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար գեներալ-լեյտենանտ Յասենսկին, որի կարծիքով այդ միջոցառումը Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում Ռուսաստանին հնարավորություն կտար ռազմա-ստրա-

---

[9] «Сводка сведений...», 1913, № 42, стр. 33.

[10] Նույն տեղում, էջ 34։

[11] «Сводка сведений...», 1913, № 38, стр. 25, 42.

[12] Նույն տեղում, էջ 43—44։

տեղական տեսակետից առավելություն ձեռք բերել Թուրքիայի նկատմամբ[13]։

Առհասարակ և՛ Պետերբուրգում և՛ Ստամբուլում պարզորոշ գիտակցում էին, որ ստեղծված պայմաններում ամենակարևորը սահմանամերձ շրջանների քրդերի վրա ազդեցություն ձեռք բերելն է։ «...Ներկայումս քրդական հարցը հասունացել է և նրա՝ այս կամ այն ձևով լուծումից է կախված հարևան երկու մահմեդական պետությունների ճակատագիրը»,—գրում էին ռուսական պրակտիկ գործիչները 1913 թ. գարնանը։ Այդ իսկ պատճառով Թուրքիայի և Ռուսաստանի միջև սուր պայքար ծավալվեց քրդական զանգվածներին և առանձին ազդեցիկ գործիչներին իրենց կողմը գրավելու համար։ Այդ հարցը առաջնակարգ նշանակություն ուներ Թուրքիայի համար, որովհետև 1913 թ. գարնանը կայսրության արևելյան շրջաններում տեղի էին ունենում բուռն հակակառավարական քրդական ելույթներ։ Ապրիլ-մայիս ամիսներին, օրինակ, Վան—Սերայ—Բաշկալայի շրջանում արթուշ (արթոշ) և գրավիան ցեղերի քրդերը կատաղի դիմված բախումներ ունեցան կառավարական զորքերի հետ[14]։ Քրդական ազդեցիկ առաջնորդներ Աբդուրրեզակը, շեյխ Թահան, Հուսեին փաշան և ուրիշներ ուժգին պրոպագանդա էին մղում կառավարության դեմ։ Ռեզվանում, Միդիատում, Ջեզիրեում և Տիգրիսի ափերին Յուսուֆ Քյամիլ Բադրխանի գլխավորությամբ քրդերը բարձրացրին հակակառավարական ապստամբություն[15]։

Գնալով ազատագրական այդ շարժումներն ընդունում էին վտանգավոր բնույթ, որովհետև Աբդուրրեզակն ու նրա կողմնակիցները աշխատում էին այն միավորել հայ ազատագրական շարժման հետ, որպեսզի կառավարությունը հնարավորություն չունենա օգտագործել հայ-քրդական հակամարտությունը և ջլատել ու ջախջախել հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական պայքարը[16]։

---

[13] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 371, лл. 34—39.

[14] «Сводка сведений...», 1913, № 47, стр. 9; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, л. 290.

[15] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1913, д. 3573, л. 247.

[16] АВПР, ф. «Политархив», 1912—1914, д. 719, л. 310.

Թեև թուրքական իշխանությունները, հատկապես Վանի կուսակալ Ալի փաշան, փորձեցին քրդերի հակակառավարական շարժումն ուղղել հայերի դեմ և դա մասամբ հաջողվեց նրանց[17], սակայն, ընդհանուր առմամբ այդ քաղաքականությունը որոշակի արդյունքներ չտվեց։ Ջեղիրեում, Սեներթում և մի շարք այլ շրջաններում ապստամբած քրդերը հայտարարում էին, որ իրենք ձեռք չեն տալու հայերին և քրիստոնյա մյուս ժողովուրդներին, որովհետև իրենց շարժումը բացառապես ուղղված է թուրքերի դեմ[18]։

Երիտթուրքական կառավարող շրջանները լրջորեն իրենց հաշիվ էին տալիս, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ այդ շարժումները, եթե կտրուկ միջոցառումներ չձեռնարկվեն դրանց դեմ։ Բացատրական աշխատանքի միջոցով քրդերին խաղաղեցնելու համար Ստամբուլը սկսեց իր ներկայացուցիչներին ուղարկել քրդաբնակ շրջանները։ Այդ նույն առաքելությամբ Ստամբուլը Արևմտյան Հայաստան և Քրդստան գործուղեց երիտթուրքական հայտնի գործիչներ Նեջի բեյին և Ֆեյզի բեյին[19]։ Սակայն նրանց առաքելության արդյունքները ուղղակի աննշան էին։

Պետք է նշել, որ Թուրքիայում գործող քրդական ազգայնական կազմակերպությունները որոշակի ազդեցություն ունեին նաև իրանական քրդերի վրա և մեծապես նպաստում էին Իրանում քրդական նացիոնալիզմի ձևավորմանը։ 1914 թ. գարնանը, երբ քրդական հուզումներ բռնկվեցին նաև թուրք-իրանական սահմանի մոտ, ավելի քան հինգ հազար իրանական քրդեր միացան Թուրքիայում բնակվող իրենց ցեղակիցներին և սկսեցին համատեղ զինված պայքար մղել թուրքական կառավարական զորքերի դեմ[20]։ Աբդուրրեզակը և քրդական մի շարք այլ գործիչներ աշխատում էին ազատագրական պայքարում միասնություն ստեղծել ոչ միայն հայերի ու քրդերի, այլև իրանական և թուրքական քրդերի միջև։

Աբդուրրեզակի կարծիքով թուրքերի նահանջը Իրանից մեծա-

---

[17] Նույն տեղում, գ. 546, թթ. 140—141։

[18] «Сводка сведений...», 1913, № 42, стр. 40.

[19] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1913, д. 2684, лл. 89—90; 1912—1914, д. 3573, лл. 146—147.

[20] ЦГА ВМФ СССР, ф. 418, оп. 1, 1914, д. 4037, лл. 39—40.

պես սասանել էր Բ. Դան հեղինակությունը իրանական և թուրքական քրդերի շրջանում։ Օգտվելով դրանից, ինչպես նաև Բալկանյան պատերազմում Օսմանյան կայսրության կրած անհաջողություններից, Աբդուրրեզակը մտադիր էր միավորել քրդերին հանուն ինքնավար Քրդստանի ստեղծման[21] և, կամ, ծայրահեղ դեպքում Քրդստանի համար ձեռք բերել որոշ քաղաքական և տնտեսական բարենորոգումներ՝ Ռուսաստանի բարոյական և ռազմական օգնության շնորհիվ։ Ընդ որում, Աբդուրրեզակը մշակել էր քրդերի շրջանում կուլտուրական գործունեություն ծավալելու բավականին ընդարձակ ծրագիր, որը 1913 թ. սկզբներին նա ներկայացրել էր ռուսական իշխանություններին։ Այնտեղ ասվում էր, որ «Թուրքական և իրանական բռնությամբ շրջապատված քրդերը մինչև այժմ հնարավորություն չեն ունեցել շփման մեջ մտնել եվրոպական քաղաքակրթության հետ։ Պարսիկներից, որոնք երբեք չեն հոգացել ժողովրդական կրթության մասին, չի կարելի ոչինչ սպասել, իսկ թուրքերը աշխատել են մեր ցեղակիցներին պահել տգիտության խավարում։ Այդ պատճառով քրդերը մնացել են մտավոր զարգացման խղճուկ վիճակում։ Մինչդեռ այդ ժողովրդի մերձեցումը Ռուսաստանի հետ կոչնչացնի այն դարավոր արգելքը, որը նրան անջատում է քաղաքակրթությունից և մեզ հնարավորություն կտա այն ընկալել հյուսիսից»[22]։ Վերոհիշյալ կուլտուրական միջոցառումները իրագործելու համար Խոյի շրջանում կազմակերպվել էր «Գեհանդենի» («դաստիարակություն») ընկերությունը, որը որոշել էր բացանել տպարան, տարրական, ընդհանուր կրթական, արհեստագիտական և հողագործական դպրոցներ, օգտագործել ռուսական այբուբենը քրդական գրքեր ու թերթ հրատարակելու համար և առավել ընդունակ երիտասարդներին ուղարկել Ռուսաստան կրթություն ստանալու համար։ Նշված նպատակների ծախսերը հոգալու համար որոշվել էր քրդական բնակչությունից հավաքել «զաքյաթ», որը պարտադիր հարկ էր մահմեդականների համար որպես աստվածահաճո գործերի կամավոր նվիրատվություն[23]։

---

21 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, л. 290.

22 «Сводка сведений...», 1913, № 40, стр. 10.

23 Նույն տեղում, էջ 11—12։

Աբդուլլեզակի ծրագրի առթիվ Խոյի փոխ-հյուպատոս Զիրկովը գրեց ընդարձակ զեկուցագիր, որի մեջ նա այն կարծիքն էր հայտնում, որ այդ նախաձեռնությունը արժանի է ամենալուրջ ուշադրության։ Նրա կարծիքով Ռուսաստանի ամենաակտիվ նյութական և բարոյական աջակցությունը վերոհիշյալ ծրագրին հնարավորություն կտա քրդական հարցը ուղղել ցանկալի հունով։ «Մեր ազդեցությունը Պարսկական Քրդստանում արմատավորելու համար վճռական ռազմական միջոցառումների հետ համատեղ անհրաժեշտ են նաև կուլտուրական ներգործության միջոցներ»,—գրում էր Զիրկովը[24]։ «Վերջապես,—շարունակում էր նա,—հնարավոր չէ երաշխավորել, որ քրդերը ոչ հեռու ապագայում չեն գտնվի Գերմանիայի և Անգլիայի նկրտումների անմիջական ճնշման տակ, որը արմատապես կվատթարացնի մեր վիճակը այս դիրքերում, դիրքեր, որոնք սկզբի պես խրվում են տնտեսական ու կուլտուրական նվաճումների մեջ վարպետ մեր այդ երկու մրցակիցների հավասական մրցակցության շրջանի մեջ»[25]։

Այս տեսակետը պաշտպանեց նաև Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը։ Սազոնովին ուղղված նրա 1913 թ. դեկտեմբերի 9-ի գաղտնագրված հեռագրում ասվում էր, որ «...մեզանից անբավական լինելու դեպքում հնարավոր է, որ Աբդուլլեզակը դիմի գերմանական կառավարությանը, որի շահագրգռվածությունը Քրդստանում նա ճիշտ է գնահատում։ Մեզ համար Աբդուլլեզակի հանդես գալը Քրդստանում գերմանական գործակալի դերում միանգամայն անշահավետ կլիներ։ Գերմանական շահերին ծառայելուց հազիվ թե կարողանար նրան հետ պահել նույնիսկ մեր միջնորդությամբ թուրքական կառավարության հետ նրա լրիվ հաշտեցումը, քանի որ այդ ծառայությունը նրան կերաշխավորեր Գերմանիայի հովանավորությունը Թուրքիայում։ Մյուս կողմից մեզ համար չափազանց ձեռնտու կլիներ կազմակերպել պարսկական քրդերին մեզ համար ցանկալի ուղղությամբ, առավել ևս, որ պարսկական քրդերի նման կազմակերպումը անկասկած մեզ համար

[24] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 363, лл. 36, 46.
[25] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 372. лл. 129—133.

կապահովեր ապագայում Թուրքական քրդերի վրա վճռական ազդեցություն գործելու հնարավորություն»[26]։

Այսպիսով, Իրանական Քրդստանում քաղաքական իրադրությանը և քրդական զանգվածների տրամադրություններին մոտիկից ծանոթ ռուսական գործիչները գտնում էին, որ Ռուսաստանի հովանավորության տակ քրդերի միավորման համար անհրաժեշտ է դիմել ոչ թե ռևպրեսիվ միջոցառումների, այլ կուլտուրական ներգործության միջոցների[27]։ Նրանց կարծիքով դա առավել անհրաժեշտ էր Իրանական Քրդստանում Թուրքիայի ազդեցությունը վերացնելու համար։ «Եթե մենք ոչնչով չխախտենք քրդերի կրոնական սովորություններն ու պահանջները,—գրում էր Ջիրկովը,—և խրախուսենք նրանց հողային սեփականության ձևոք բերումը, միաժամանակ դրսևորելով լրիվ բարյացակամություն, լուսավորության, կենցաղի ու նրանց ֆիզիկական բարելավման նկատմամբ հոգատարություն ցույց տալու ճանապարհով, ապա այստեղի քրդերի հակումը դեպի Թուրքիան կկասեցվի բնական ճանապարհով։ Արդեն Թուրքերը լրիվ անհաջողություն են կրում տեղական աշիրեթներին արհեստականորեն իրենց կողմը գրավելու հարցում։ Ո՛չ Թուրքական փողերը, ո՛չ տեղափոխվածներին հողային սեփականություն տրամադրելը Բ. Դռանը չեն տալիս ցանկալի արդյունքներ»[28]։

Սակայն, չնայած տրված բազմաթիվ խոստումներին, Արդուրրեզակի ծրագրերը բավարար աջակցություն չստացան Ռուսաստանից և դա գլխավորապես այն պատճառով, որ ցարական կառավարող շրջանների զգալի մասը, և հատկապես զինվորականությունը, գտնում էին, որ իրանական քրդերին Ռուսաստանին ենթարկելու միակ միջոցը պետք է լինի զենքի ուժով նրանց «սանձահարելու» քաղաքականությունը։ Բացի այդ, ռուսական դիվանագետների կարծիքով, Արդուրրեզակի ծրագրերին ընթացք տալը

---

[26] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 180.

[27] «Сводка сведений...», 1913, № 40, стр. 17—18; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, л. 287.

[28] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, лл. 162—163.

միանգամայն բացասաբար կանդրադառնար ռուս-թուրքական հարաբերությունների վրա և «կվարկաբեկեր թուրք-իրանական սահմանազատման ողջ գործը»[29]։ Ոչ պակաս կարևորություն էր տրվում այն բանին, որ Աբդուրրեզակի գործունեությունը իրանական քրդերի շրջանում դժգոհություն էր առաջ բերում նաև շահական կառավարության մոտ։ Պատահական չէ, որ ոչ առանց Թեհրանի ցուցմունքի, Իրանական Քրդստանի շահական իշխանությունները, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում Թուրքիայի հավատարիմ կողմնակիցները, պրովոկացիոն նպատակներով նախազգուշացնում էին թուրքերին քրդերի շրջանում «ռուսական» լուսավորության արմատավորման հետևանքով իսլամին սպառնացող վտանգի մասին, հայտարարում էին, որ հանդանակության միջոցով հավաքված դրամը տրվելու է «Թուրքիայի հեղափոխական քրդական կոմիտեին» համաքրդական ապստամբություն բարձրացնելու նպատակով և այլն, միաժամանակ քրդական ցեղապետներին հրահրում էին ապստամբել Աբդուրրեզակի և նրա կողմնակից Սիմկոյի դեմ[30]։

Թուրքական կառավարությունը, որին խիստ անհանգստացնում էր Աբդուրրեզակի և նրա կողմնակիցների գործունեությունը Իրանական Քրդստանում, բազմաթիվ անգամ դիմել էր շահական կառավարությանը, պահանջելով նրանց արտաքսումը Իրանից[31]։ Բացի այդ Քրդստանում Ռուսաստանի ծրագրերին արգելք հանդիսանալու և քրդերի կուլտուրական շարժման առաջին փորձերը ձախողելու նպատակով, երիտթուրքական կառավարությունը առավել ռեակցիոն քրդական ցեղապետների օգնությամբ կազմակերպում էր զինված ջոկատներ Ռուսաստանի հովանավորությանը կողմնակից քրդական աշիրեթների դյուղերի վրա ավազակային արշավանքներ կազմակերպելու համար, աշխատում էր զանազան խոստումների միջոցով իրանական քրդերին հրապուրել դեպի Թուրքիա, անհնազանդ քրդական գործիչների նկատմամբ կազմակեր-

---

[29] ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 1, д. 269, л. 12.
[30] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, лл. 162—163.
[31] ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 1, д. 269, л. 12.

պում էր տեռորիստական ակտեր և այլն։ Թուրքական իշխանություններին աջակցում էին Իրանում գործող բելգիական ֆինանսական վարչության գործակալները, որոնք դաշտնի կապերով կապված էին Թուրքիայի և Գերմանիայի հետ[32]։

Աբդուլրեզակի ծրագրերի ձախողման պատճառներից մեկն էլ այն էր, որ նահանջելով իր սկզբնական մտադրություններից, կուլտուրական նպատակների համար հանդանակված դումարներով նա կազմակերպեց մի ջոկատ Վանի վիլայեթի թուրքական վարչության ատաճանավորների դեմ տեռորիստական ակտեր կազմակերպելու համար։ Սակայն այդ ջոկատը սկսեց մեծ ճանապարհների վրա ավազակություններ գործել, որը հեղինակազրկեց Աբդուլրեզակին նաև Թուրքիայում բնակվող քրդերի շրջանում։

Վերջին անգամ, Մակուի խանության միլյան ցեղի քրդերի վրա հենվելու անհաջող փորձից հետո, Աբդուլրեզակը միանգամայն հեռացավ թուրքերի դեմ քաղաքական պայքարի ասպարեզից և մեկուսացավ Խոյում, զուրկ լինելով նույնիսկ իր գոյությունը պահպանելու հնարավորություններից[33]։ Սա, անշուշտ, ակներև վկայություն էր այն մասին, որ քրդական ազգային գործիչները դեռևս ի վիճակի չէին ղեկավարելու քուրդ ժողովրդի ազգային շարժումը։

Թեև քաղաքական գործունեության ասպարեզից Աբդուլրեզակի մեկուսացումը հնարավորություն տվեց թուրքական կառավարությանը միաժամանակ հանգստանալ և ազատվել համաքրդական ապստամբության մղձավանջից, սակայն, դիտակցելով, որ քրդերի հակակառավարական նոր ելույթների հնարավորությունը բացառված չէ, Ստամբուլը որոշեց ուժեղացնել կայսրության քրդական գանգվածների մեջ տարվող աշխատանքը։ 1913 թ. որոշվեց մի շարք քրդաբնակ շրջաններում բաց անել լուսավորական հիմնարկներ, որոնք երիտթուրքերի կարծիքով մի կողմից նպաստելու էին քրդերի նկատմամբ կառավարության ազդեցության ուժեղացմանը, մյուս կողմից կոչված էին հակակշիռ ստեղծելու Ռուսաստանի նույնանման փորձերին։ Այդ առթիվ ռուս հյուպատոս-

---

[32] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 161.

[33] АВПР, ф. «Миссия в Персии», 1913, д. 69, л. 170.

ները գրում էին. «մինչև վերջին ժամանակներս քրդական հարցի նկատմամբ լրիվ արհամարհանքով վերաբերվող թուրքերը... այժմ տենդորեն ձեռնարկել են Վանի շրջանի քրդերի մեջ դպրոցներ արմատավորելու գործին։ Պատերազմի հետևանքով դատարկված թուրքական դանձարանում գտնվեց 17500 թուրքական ֆունտ՝ Վանի մոտ, Արտամետ գյուղում քրդերի համար անմիջապես դպրոցներ բաց անելու համար, որը նախատեսված է 1000 աշակերտի համար։ Բացի այդ, ֆինանսավորված է 2500 թուրքական լիրա հեռավոր քրդական գյուղերում ոչ մեծ տարրական դպրոցներ բաց անելու համար, ընդ որում, մի քանի այդպիսի ուսումնարաններ որոշված է տեղափոխել պարսկական սահմանի մոտ գտնվող գյուղերը»[34]։

Հատկանշական է նաև այն, որ գերմանացիների մոտ ևս հանկարծակի հետաքրքրություն ծնվեց քրդերի լուսավորության գործի նկատմամբ։ Անմիջապես Վան ժամանեց Մոսուլում գերմանական փոխ-հյուպատոս Գոլդշտեյնը, որն աշխատում էր համոզել քրդական ցեղապետներին, որ Բեռլինը մեծագույն ուշադրություն է ցուցաբերում քրդերի կուլտուրական մակարդակի բարձրացման գործին։ Նա խոստանում էր, որ մոտ ապագայում Վանում գերմանական հյուպատոսություն բաց անելուց հետո քուրդ երեխաների համար ոչ միայն հնարավորություն կստեղծվի հաճախել Վանի շրջանի գերմանական դպրոցները, այլև առավել ընդունակ աշակերտները կուղարկվեն Գերմանիա ձրի կրթություն ստանալու համար[35]։ Բեռլինի հրահանգով գերմանական գործիչները ձեռնամուխ եղան Իրանական Քրդստանում ևս դպրոցներ բաց անելու գործին։ Բացի Ուրմիայից և Խոյից, որտեղ նրանք արդեն ունեին դպրոցներ հայ և ասորի երեխաների համար, գերմանացիները ամերիկացիների հետ համատեղ Սոուջբուլաղում բաց արին նոր դպրոց, որը նախատեսված էր բացառապես քուրդ երեխաների համար[36]։ Քրդերի շրջանում համատեղ գործունեություն ծավալ-

---

[34] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 163.

[35] Նույն տեղում։

[36] «Сводка сведений...», 1913, № 37, стр. 24.

լու նպատակով Գոլդշտեյնը հատուկ զրույց է ունենում Վանի կուսակալի հետ, որը, ի դեպ, հայտնում է նրան, որ քրդական հարցի նկատմամբ երիտթուրքական կառավարության հայացքներում տեղի է ունեցել վճռական շրջադարձ։ Դրան նա ավելացնում է, որ իրեն հանձնարարված է անձամբ ստանձնել «Նեշրի մեարիֆ վե թեջարեթ վե սենայի» («լուսավորության, առևտրի և արդյունաբերության տարածում») կոմիտեի ղեկավարությունը և արդեն այդ կոմիտեի անդամներից կազմակերպել է քրդական կոոպերատիվ առևտրական ձեռնարկություն, որը ապրանքներ է ստանում տրապիզոնցի միլիոնատեր Նեմլի-օղլուից[37]։

Այն փաստը, որ քրդական հարցի նկատմամբ գերմանական և Թուրքական շահերը սերտորեն համընկնում էին, որովհետև երկու պետություններն էլ աշխատում էին համատեղ ջանքերով քրդերին կտրել Ռուսաստանից և տրամադրել նրա դեմ, խիստ մտահոգում էր վերջինիս քաղաքական շրջաններին։ Առավել շրջահայաց ռուսական գործիչները գտնում էին, որ անհրաժեշտ է կրկնապատկված եռանդով գործել քրդերի կուլտուրական ներգրավման համար Ռուսաստանի կողմը, որպեսզի կարելի լինի «խուսափել հանգամանքների այնպիսի զուգորդումից, որոնք հնարավորություն տային Պարսկական Քրդստանին ոչ հեռու ապագայում մեզ հետ խոսել գերմանացիների միջոցով»[38]։

Գերմանական դիվանագիտությունը միաժամանակ աշխատում էր Ռուսաստանին զրկել Թուրքիայի քրիստոնյա բնակչությանը հովանավորելու հնարավորությունից, որը, ինչպես հայտնի է, կարևոր լծակ էր Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու բնագավառում։ Բեռլինի հրահանգով 1913 թ. գերմանական գործակալությունը սկսեց եռանդուն աշխատանք ծավալել Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության՝ հատկապես հայերի շրջանում։ Այդ նպատակով Գերմանիայից Անատոլիա և Արևմտյան Հայաստան էր ուղարկվել հատուկ գաղտնի հանձնաժողով, որը հետևողականորեն անց էր կացնում ոչ պաշտոնական

---

37 Նույն տեղում, թ. 164։

38 Նույն տեղում։

մարդահամար, անեղեկություններ էր հավաքում քրիստոնյա բնակչության գույքային ունեցվածքի մասին և այլն։

Ռուսական բուրժուական «Նովոյե վրեմյա» թերթը այդ առթիվ ստորագրով նշում էր, որ գերմանացիները աշխատում են նաև միմյանց հետ հաշտեցնել քրդերին ու հայերին և նրանց վերածել իրենց նպատակներն իրագործելու գործիքի, մի հանգամանք, որը իր մեջ մեծագույն սպառնալիք է պարունակում ռուսական շահերի համար[39]։

Գերմանական այս քաղաքականությանը հակազդելու նպատակով ցարական դիվանագիտությունը կրկին առաջ քաշեց հայերին հովանավորելու անհրաժեշտության հարցը։ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Կոկովցովը Սազոնովին գրում էր, որ ոչ մի դեպքում չպետք է ձեռքից բաց թողնել հայերին հովանավորելու նախաձեռնությունը։ Նա գտնում էր նաև, որ անհրաժեշտ է Բ. Դուանը ներկայացնել կարուկ հայտարարություն, վկայակոչելով Բեռլինի համաձայնագրի հատուկ կետը՝ քրդական հարձակումներից հայերի անվտանգությունը ապահովելու մասին[40]։

Այսպիսով, համաշխարհային պատերազմի նախօրյակին հակառակորդ պետություններից յուրաքանչյուրը աշխատում էր իր կողմը գրավել պատերազմի հավանական թատերաբեմում բնակվող այն բոլոր ժողովուրդներին, որոնք իրենց ռազմա-ստրատեգիական պլաններում կարող էին խաղալ էական դեր։ Ռուսական ցարիզմը, որը լրջորեն մտահոգված էր Իրանական Ադրբեջանի և Քրդստանի պաշտպանության հոգսերով, այնուամենայնիվ, ի վիճակի չեղավ իր կողմը գրավել այդ նահանգների բնակչության մեծամասնության համակրանքը, որը և հնարավորություն տվեց Թուրքական կառավարող շրջաններին Իրանում շարունակել նախկին բռնանվաճողական քաղաքականության կուրսը։

Տեղերում աշխատող ռուսական որոշ պրակտիկ գործիչներ զգուշացնում էին արտաքին գործերի մինիստրությանը, որ Ռուսաս-

---

[39] *Аргус*, Армянский вопрос и Германия. «Новое время», 9 (22), сентября 1913.

[40] ЦГАИ Арм. ССР, ф. 113, д. 1011, л. 1.

տանի կողմից քրդական հարցի այս կամ այն ձևով լուծումից է կախված այն հարցը, թե կհամարձակվեն արդյոք Թուրքերը կրկին օգտագործել քրդերին Իրանում գավթումներ կատարելու համար թե ոչ։

Խոսում փոխ-հյուպատոս Զիրկովը, օրինակ, գտնում էր, որ «...քրդական հարցի վերաբերյալ պահանջվում է մշակել որոշակի ծրագիր, որը դեռևս նույնիսկ չի նախանշված»[41]։ Իսկ Վանում փոխ-հյուպատոս Ս. Օլֆերևը բացատրում էր իր զեկուցագրում, որ Թուրք-իրանական սահմանային հարցը չի կարելի դիտել քրդական հարցից անջատ թեկուզ այն պարզ պատճառով, որ այդ սահմանը բնակեցված է քրդերով։ Որ քրդերի այս կամ այն վերաբերմունքից՝ հանդեպ Թուրքիան, Իրանը և Ռուսաստանը, կախված կլինի սահմանային հարցի հետագա ճակատագիրը[42]։ «Թուրքերը հիանալի գիտակցում են,—գրում էր փոխ-հյուպատոսը,—որ, եթե քրդերը գտնվեն իրենց բացառիկ հովանավորության տակ, ապա Պարսկական Քրդստանը այլևս գոյություն չի ունենա։ Իսկ, եթե պարսկական քրդերը ընկնեն Ռուսաստանի ազդեցության տակ, ապա այդ ազդեցությունը կտարածվի նաև Թուրքական քրդերի վրա, որոնցից ոմանք արդեն երազում են Ռուսաստանի հովանավորության տակ ինքնավար Քրդստանի մասին»[43]։

Ռուսական հյուպատոսների այս կանխատեսումները միանգամայն արդարացան։ Թուրքիան հետևողականորեն սկսեց քրդերի ուշադրությունը շեղել Իրանի կողմը։ 1913 թ. գարնանից Թուրքական իշխանությունները սկսեցին հրահրել իրենց կողմնակից քրդական առաջնորդներին և համիդիե գնդերի հրամանատարներին, որպեսզի նրանք իրենց ջոկատներով անցնեն իրանական սահմանը և հարձակումներ գործեն քրիստոնյա բնակչություն ունեցող գյուղերի վրա[44]։ Միաժամանակ 1913 թ. մայիսին Իրանի սահմանակից շրջաններում նախապատրաստվում էր ասորիների մասսայական

---

[41] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 370, л. 285.

[42] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, л. 104.

[43] Նույն տեղում, թթ. 104—105։

[44] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 370, лл. 69—70.

կոտորած, որը սպառնում էր ազգանշան հանդիսանալու ինչպես Թուրքիայի, այնպես էլ Իրանական Քրդստանի քրիստոնյաների համատարած ջարդերի համար[45]։ Թուրքական գործակալությունը կրկնապատկված եռանդով շարունակում էր Իրանի քրդական ցեղապետներին Թուրքիայի կողմը հակելու քաղաքականությունը։ Ովքեր հրաժարվում էին համագործակցել իրենց հետ, ենթարկվում էին տեռորի[46]։ Ղոթուրի և Սոմայի շրջանում ագիտացիա էր մղվում տեղափոխվել Թուրքիա, ընդ որում, նրանց խոստանում էին իրանական սահմանի մոտ լավագույն հողամասեր և դրամական խոշոր նպաստներ։ Վանում հույս ունեին վերաբնակեցված քրդերից ստեղծել խառնակություններ մշտական գործոն Իրանական Ադրբեջանում և Քրդստանում[47]։ Այդ նույն նպատակով սահմանամերձ շրջանների մամեղի, մերդիքի և մի շարք այլ ցեղերի շրջանում բաժանվում էր զենք՝ իրանական տերիտորիայի վրա սիստեմատիկ հարձակումներ գործելու համար[48]։ Իրանական քրդերին Ռուսաստանի դեմ ոտքի հանելու նպատակով Թուրքական կառավարությունը հանձնարարել էր Հեյքարիի մութեսարիֆ Ջեզեթ բեյին և Վանի վալի Իզզեթ բեյին հատուկ առաքելությամբ շրջագայել Իրանական Քրդստանում։ Հետաքրքրականն այն է, որ այդ շրջագայությանը պատրաստվում էր մասնակցել նաև Վանի ֆրանսիական հյուպատոս Ջարդենկին։ Ռուսական հյուպատոսները դա մեկնաբանում էին նրանով, որ Ֆրանսիան մեծ հետաքրքրություն է դրսևորում Իրանական Քրդստանի նկատմամբ և այդ շրջանում Ռուսաստանի հաջողություններին վերաբերվում է մեծագույն նախանձով[49]։

Թուրքական գործակալությանը հաջողվեց նաև Իրանական Քրդստանում հավաքագրել մի շարք ականավոր շահական ատիճանավորների և խոշոր ֆեոդալների։ 1913 թ. գարնանը կազմակերպվեց «Իրանա-քրդական կոմիտե», որի խնդիրն էր պայքարել

---

[45] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, л. 279.

[46] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 370, л. 210.

[47] «Сводка сведений...», 1913, № 57, стр. 1, 13—14.

[48] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, лл. 138—139.

[49] Նույն տեղում, թ. 147։

ռուսական ազդեցության դեմ Իրանական Քրդստանում։ Հիշյալ կոմիտեի անդամներ էին հանդիսանում մի շարք ազդեցիկ հոգևորականներ, խաներ, շահական ասպիճանավորներ և այլն[50]։ Կոմիտեն գործուն աջակցություն էր ցույց տալիս Թուրքերին ռուսական ջոկատների վրա զինված հարձակումներ կազմակերպելու գործում[51] և այլն։

Երիտթուրքական կառավարության բայքայիչ գործունեությունը Իրանում ուղեկցվում էր իրանական սահմանների մոտ զորքերի կենտրոնացումներով։ 1913 թ. մայիսի սկզբին, օրինակ, Լահիջանից մինչև Բանե ընկած շրջանում կենտրոնացվեցին զգալի քանակությամբ զորքեր, որոնք սիստեմատիկորեն կազմակերպում էին սահմանային բախումներ։ Հատուկ ուշադրություն էր դարձվում սահմանների մոտ ռազմական հենակետերի ուժեղացման վրա, որտեղից Թուրքական ջոկատները պետք է թափանցեին Իրան։ 1913 թ. հուլիսին սահմանամերձ շրջանների տարբեր հատվածներում ռուսական ջոկատների և Թուրքական զորքերի միջև տեղի ունեցան զինված ընդհարումներ։ Ազրբեջանական ջոկատի շտաբում ստացվեցին տեղեկություններ Թուրքիայի կողմից մի շարք իրանական գյուղերի գրավման մասին, որտեղ բնակվում էին ռուսներին թշնամի քրդական առաջնորդներ[52]։ Օգոստոսի 27-ին Թերգևերում տեղի ունեցավ խոշոր ընդհարում։ Դա այն ասպիճանի լուրջ իրադարձություն էր, որ նույնիսկ զեկուցվեց ցարին։

Թուրքական հրամանատարությունը իրանական բնակչության շրջանում սկսեց տարածել լուրեր, որ իբր «արևելյան շրջանները» («նեահիյե շարքիե») մինչև Համադան քաղաքը անցել են Թուրքիային[53]։ Իսկ 1913 թ. հունիսին Սոուջբուլաղի Թուրքական հյուպատոս Ռիզա բեյը հայտարարեց, որ այսուհետև Իրանի արևմտյան շրջանները Սոուջբուլաղից մինչև Քերմանշահ, այսինքն՝ համարյա ողջ Իրանական Քրդստանը, անցնում է Օսմանյան կայսրությանը։

---

[50] АВПР, ф. «Персидский стол», 1913, д. 147, л. 221.
[51] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 370, лл. 311--312, 325.
[52] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7722, лл. 203—205.
[53] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 370, лл. 239, 243.

Միաժամանակ նա դիմեց Թուրքիային «միացված» սերիասերիների ազդեցիկ խաներին, պահանջելով չենթարկվել իրանական իշխանությունների հրամաններին և կարգադրություններին։ Այդ «մանիֆեստով» երիտթուրքական կառավարությունը մտադիր էր շոշափել ինչպես Իրանական Քրդստանի բնակչության քաղաքական տրամադրությունները, այնպես էլ շահական կառավարության, Ռուսաստանի ու Անգլիայի ռեակցիան։ Ընդ որում, նախապես վճռված էր անհաջողության դեպքում զոհաբերել Թեհրանի թուրքական դեսպանին՝ «ցավալի կոնֆլիկտի» ամբողջ պատասխանատվությունը գցելով նրա վրա։ Եվ իսկապես, ձախողումից հետո Ստամբուլը նա կանչեց Թեհրանում իր դեսպան Ամին բեյին և նրա փոխարեն նշանակեց Իրանում ազրեսիվ քաղաքականության ջատագով Սադդրեդդին բեյին[54]։

Աչսպիսով, միանգամայն պարզ էր, որ երիտթուրքական կառավարությունը վերստին անցնելով իշխանության դլուխ պատրաստվում էր ռևանշի, աշխատելով վերականդնել Իրանում իր ունեցած այն նվաճումները, որոնք ի չիք էին դարձել իթթիֆակիստների ապրապետության կարճատև շրջանում։ Այդ պատճառով ցարական արտաքին գործերի մինիստրությունը Ստամբուլում իր դեսպանի միջոցով վերսկսեց եռանդուն առաջադրությունները Բ. Դուռն առջև, որոնք, սակայն, անցնում էին ապարդյուն[55]։ Միաժամանակ 1913 թ. դարնանը ռուսական և անդլիական կառավարությունները ճնշում գործադրեցին թուրքական կառավարության վրա, պահանջելով հատուկ համաձայնագիր կնքել թուրք-իրանական սահմանային դծի վերաբերյալ։ Մարտին Ստամբուլը, վերջապես, տվեց իր համաձայնությունը հիշյալ հարցի առթիվ Ռուսաստանի հետ անմիջական բանակցությունների մեջ մտնելու մասին։ Սակայն անմիջապես ակներև դարձավ, որ Բ. Դուռը նպատակ ուներ հնարավորին չափ ձգձգել բանակցությունների ընթացքը և, ի վերջո, ձախողել սահմանազատման գործը։ Ռուսաստանը ընդ-

---

[54] АВПР, ф. «Канцелярия МИД», 1913, д. 96, лл. 131, 134; տե՛ս նաև «Մշակ», 2 հուլիսի 1913թ.։

[55] АВПР, ф. «Канцелярия МИД», 1913, д. 115, л. 137.

հակառակը շահագրգռված էր շուտ ավարտել սահմանազատումը և դրանով իսկ զրկել Թուրքիային Իրանի նկատմամբ տերիտորիալ ոտնձգություններ անելու հետագա հնարավորությունից։ Շահական կառավարության դիրքը այս հարցում շափազանց պասսիվ էր։ Նա միայն հանդես էր գալիս ցարական կառավարության «խորհուրդները կատարողի» դերում։

Վերջապես, բազմաթիվ նախագծերի և հականախագծերի հիման վրա կողմերը մշակեցին սահմանազատման մանրամասն պլան և 1913 թ. նոյեմբերի 4/17-ին Ստամբուլում ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսը, բրիտանական դեսպան Լուիս Մալլեն, մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան և իրանական դեսպան Էհթեշամ-օս-Սալթաննեն Ստամբուլում ստորագրեցին, այսպես կոչված, «Վերջնական արձանագրությունը»։ «Վերջնական արձանագրության» մեջ, ըստ էության, առաջին անգամ ճշտորեն որոշվում էր Թուրք-իրանական սահմանային գիծը։ Այն ստորագրելուց անմիջապես հետո չորս պետություններից յուրաքանչյուրը նշանակեց հատուկ ներկայացուցիչներ (կոմիսարներ), որոնք տեղերում պետք է անցկացնեին սահմանային գիծը։ Հանձնաժողովը իր աշխատանքները սկսեց 1914 թ. հունվարին Թուրք-իրանական սահմանի ծայր հարավից՝ Մոհամմերայից և ավարտելու էր Արարատ լեռան ստորոտում[56]։ Սահմանազատիչ հանձնաժողովը սահմանները նշելիս հիմք էր ընդունում այս կամ այն տերիտորիայի պատմական, աշխարհագրական և ազգագրական հատկանիշները։ Սակայն անհրաժեշտության դեպքում միանգամայն անտեսվում էին հիշյալ սկզբունքները և առաջին պլանի վրա էին մղվում «միջնորդ պետությունների»՝ Անգլիայի և Ռուսաստանի քաղաքական շահերը։

Հանձնաժողովի աշխատանքները սկսվելու հենց առաջին օրերից սկսեցին բացահայտորեն դրսևորվել հակասություններ Ռուսաստանի և Անգլիայի, Անգլիայի և Թուրքիայի, Թուրքիայի և Ռուսաստանի միջև։ Անգլիական քարտեզագիրներն, օրինակ, շտապ կարգով, Ռուսաստանից ծածուկ, կազմեցին Շաթթ-էլ-Արաբ գետի

---

[56] *В. Ф. Минорский,* Турецко-персидское разграничение, стр. 8—10; «Материалы по изучению Востока», вып. II, стр. 518—524.

նոր քարտեզ, որը «անգլիական» գոտու մեջ էր մտցնում մի շարք տերիտորիաներ։ Բացի այդ անգլիացիներն աշխատում էին սահմանային գիծը այնպես անց կացնել, որպեսզի իրենք ձեռք բերեն տիրապետող քաղաքական դիրքեր 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով նախատեսված չեզոք գոտում։ Իսկ Թուրքիան իր հերթին աշխատում էր ձախողել սահմանազատման աշխատանքները, քաջ գիտակցելով, որ սահմանային գծերի ճշգրիտ որոշումից հետո ինքը ընդմիշտ կզրկվի «վիճելի» տերիտորիաների պատրվակի տակ Իրանում զավթումներ կատարելու և դրանք արդարացնելու հնարավորությունից։ Այս հանգամանքը ևս գալիս էր հաստատելու ռուսական գործիչների այն մտավախությունը, որ մոտ ապագայում Օսմանյան կայսրությունը վերստին կվերադառնա Իրանում իր նվաճողական քաղաքականությանը[57]։ Այս կանխատեսումները ավելի շոշափելի կերպարանք էին ստանում այն պատճառով, որ Թուրքիայի ագրեսիվ ախորժակը Իրանի նկատմամբ հետևողականորեն զրգռում էր Գերմանիան, որի ազդեցությունը երիտթուրքական կառավարության վրա գնալով աճում էր։ «Տրիումվիրատը»՝ հանձինս ռազմական մինիստր և գլխավոր շտաբի պետ Էնվեր փաշայի, ներքին գործերի մինիստր Մեհմեդ Թալեաթ բեյի և ծովային մինիստր Ահմեդ Ջեմալ փաշայի, արդեն սերտորեն կապված էր գերմանական իմպերիալիզմի հետ։ Գերմանոֆիլությամբ վարակված էին Օսմանյան կայսրության կառավարող շրջաններն ու իթթիհադի կուսակցական ողջ վերնախավը։

1913 թ. սկզբներից Թուրքական բանակը աստիճանաբար ընկնում էր գերմանացիների հսկողության տակ։ Նույն թվականի դեկտեմբերին գեներալ Լիման ֆոն Սանդերսի Ստամբուլ ժամանելով այդ պրոցեսը ավելի արագացավ։ Արտաքին քաղաքականության

---

57 Թուրք-իրանական սահմանազատիչ հանձնաժողովը աշխատանքներն ավարտեց 1914 թ. հոկտեմբերի 15-ին, համարյա լրիվ դեմարկացիայի ենթարկելով 1600 կիլոմետր երկարությամբ սահմանը։ Սահմանազատման բարեհաջող արդյունքները 1914 թ. ընթացքում լրիվ հրատարակվեցին Հեղկաստանում։ Սակայն այս անգամ ևս վիճակված չէր վերջնականապես ճշտել հարյուրամյակներ շարունակ վեճի առարկա հանդիսացող սահմանային գիծը։ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը խափանեց ողջ գործը և փաստական սահմանը կրկին մնաց անորոշ վիճակում։

բնագավառում ևս երկու պետություններն էլ իմպերիալիստական, գավթողական ծրագրեր էին մշակում Մերձավոր ու Միջին Արևելքի, Կովկասի և ռուսական ու անգլիական տիրապետության կամ ազդեցության տակ գտնվող մի շարք այլ շրջանների նկատմամբ։

Վերջնականապես համոզվելով, որ ինքը ի վիճակի չէ պահակել Անատոլը և Ռուսաստանին կտրել Անգլիայից, հակառակ Պետերբուրգի համաձայնագրով իր վրա վերցրած պարտավորության՝ ճանաչել Ռուսաստանի «հատուկ շահերը» Իրանում, Գերմանիան սկսեց այդ երկրում վարել բացահայտ հակառուսական քաղաքականություն, ակտիվացնել իր տնտեսական ու քաղաքական գործունեությունը և ավելի վճռականորեն միջամտել թուրքիստանական հարաբերություններին։

Իրանում Ռուսաստանի դիրքերը խախտելու նպատակով գերմանացիները նախ ձեռնամուխ եղան իրանական քաղաքական շրջաններում կողմնակիցներ ձեռք բերելուն։ Համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանի վաճառականության և բուրժուական մտավորականության (մասամբ նաև ֆեոդալական դասակարգի) շրջանում սկսեց իր համար ուղի հարթել արտաքին քաղաքական նոր օրիենտացիա՝ հանդեպ Գերմանիան։ «Դա բացատրվում էր ոչ միայն այն դերով, որ խաղացին Ռուսաստանը և Անգլիան իրանական հեղափոխությունը ճնշելու գործում, այլև գերմանացիների բացառիկ ակտիվությամբ, որոնք այն ժամանակ իրենց առջև խնդիր էին դրել իրենց տիրապետությանը ենթարկել ողջ Օսմանյան կայսրությունը ընդհուպ մինչև Պարսից ծոց, ինչպես նաև Իրանը»[58]։

Թեհրանում ռուսական գործերի հավատարմատարը 1913 թ. մարտի 28-ի իր հեռագրում հայտնում էր արտաքին գործերի մինիստրությանը, որ «...այսպես կոչված, ազգայնականների կուսակցությունը ներքին գործերի մինիստր, արքայազն էյն-ուդ-Դոուլեի ղեկավարությամբ վերջերս կրկին ուժեղացրել է իր ագիտացիան հօգուտ «Պարսկաստանը պարսիկների համար» լոզունգի[59]։ Այս

---

[58] *Т. С. Короткова,* Иран накануне первой мировой войны. Московский ордена Ленина гос. ун-т им. М. В. Ломоносова. Доклады и сообщения исторического факультета, вып. 8, М., 1948, стр. 10.

[59] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 101, л. 40.

լոզունգը, որն իր սուր ծայրով ուղղված էր Անգլիայի և Ռուսաստանի դեմ, ուղղակի ծառայում էր գերմանական շահերին։

1913 թ. գերմանական հետախույզները վխտում էին Իրանական Ադրբեջանում և Քրդստանում։ Նրանք հատուկ հետաքրքրություն էին դրսևորում սահմանային գոտու նկատմամբ[60]։ Այդ գործում գերմանացիներին ակտիվորեն օգնում էին ավստրիական հետախույզները, որոնց գործողությունները ղեկավարում էր ոմն էմանուիլ Լյակյու (Լակոոն)[61]։ Ավստրո-գերմանական կոոպերացիան Իրանում հետախուզական տեղեկություններ հավաքելու բնագավառում հատկապես ուժեղացավ այն բանից հետո, երբ ավստրիացիները 1913 թ. աշնանը Թավրիզում բաց արին արտահաստիքային հյուպատոսություն[62]։

Իրանական Ադրբեջանում գերմանական հետախուզության ակտիվ գործիչներից մեկն էր նաև Պետերբուրգում գերմանական հեռագրական գործակալության ներկայացուցիչ Գեյը, որի խմբին հանձնարարված էր հատկապես հետևել Իրանական Ադրբեջանում անգլիական հետախուզության գործունեությանը[63]։ Մի այլ խմբի, որի գործունեությունը ղեկավարում էին գերմանական գլխավոր շտաբի սպաներ կոմս ֆոն Վեյստարպը և Էռնստ Լանդեն, կարգադրված էր Իրանական Քրդստանում կազմակերպել հակառուսական ելույթներ[64]։

Իրանում գերմանական հետախուզությունը սերտորեն համագործակցում էր թուրքական գաղտնի ծառայության հետ։ Գերմանա-թուրքական բայբայիչ գործունեության առավել կարևոր կենտրոններ էին թուրքական հյուպատոսությունները։ Իրանական Ադրբեջանում գերմանական հետախուզության պարագլուխ Շյունեմանը Թավրիզում թուրքական գլխավոր հյուպատոսի խորհրդականն էր։ Պատահական չէ, որ նա համառորեն պնդում էր, որպեսզի մի շարք

---

[60] «Сводка сведений...», 1913, № 42, стр. 36—37; ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 371, л. 181.

[61] ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, лл. 53—54.

[62] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 54.

[63] Նույն տեղում, թթ. 53—54։

[64] АВПР, ф. «Миссия в Персии», 1911—1912, д. 57, л. 64.

կարևոր կենտրոններում, հատկապես Մակուում, Արդեբիլում և այլն բացվեն Թուրքական հյուպատոսություններ[65]։

Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում Ռուսաստանի ազդեցությունը խարխլելու նպատակով գերմանական արտաքին գործերի մինիստրությունը Իրան գործուղեց իր խորհրդական, Մերձավոր և Միջին Արևելքի գիտակ Ռուդոլֆ Նադոլնիին[66]։ Տեղում ծանոթանալով իրավիճակի հետ և համոզվելով, որ վերոհիշյալ շրջաններում Գերմանիայի համար առավել դժվար է պայքարել Ռուսաստանի ունեցած քաղաքական ազդեցության դեմ, Նադոլնին արտաքին գործերի մինիստրությանը խորհուրդ տվեց ուժեղացնել մրցակցային պայքարը առևտրական բնագավառում։ Հենց այդ նպատակով Ուրմիայում կազմակերպվեց, այսպես կոչված, գերմանական «տեխնիկական բյուրո» Նեյմանի և ավստրիական ինժեներ Խոնեկի ղեկավարությամբ։ Հիշյալ «բյուրոյի» մասին Ուրմիայի ռուսական փոխ-հյուպատոսը գրում էր, որ «իրականում նոր հիմնարկությունը շատ քիչ ընդհանուր բան ունի տեխնիկայի հետ. նա բացառապես հետապնդում է Ուրմիայի շուկան գերմանական և ավստրիական ապրանքներով նվաճելու նպատակը»[67]։ Շյունեմանը Թեհրանում իր միսիայից խիստ հրահանգ էր ստացել Ուրմիայի շրջանը ընդգրկել իր հետաքրքրությունների շրջանակի մեջ։ Բացի այդ նահանգի ռազմական նշանակությունից, գերմանական ռազմական շրջանները այն դիտում էին որպես առաջիկա ռուս-թուրքական պատերազմի դեպքում կարևորագույն տակտիկական բանալի[68]։ Այստեղ գերմանացիները մասնավորապես լուրջ ուշադրություն էին դարձնում կալվածքներ վարձակալելու գործին, որը դիտ-

---

[65] АВПР, ф. «Посольство в Константинополе», 1913, д. 7409, л. 58; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 450 об.—451.

[66] Տե՛ս *Rudolf Nodolny*, Mein Beitrag, Wiesbaden, 1955. Հետագայում Վեյմարյան հանրապետությունում և հիտլերյան ռայխում Նադոլնին գրավում էր կարևոր դիվանագիտական պաշտոններ, այդ թվում նաև Թուրքիայում և ՍՍՀՄ-ում գեստապոյի պաշտոններ։ *М. С. Лазарев*, նշվ. աշխ., էջ 262։

[67] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 102—103.

[68] ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 28, д. 125, л. 4.

վում էր որպես ներթափանցման և ազդեցություն ձեռք բերելու կարևորագույն լծակ[69]։

Նշված նահանգում վերոհիշյալ խնդիրներն իրականացնելու գործում Շյունեմանին օգնելու էին Ուրմիայում բնակվող գերմանահպատակ Նեյմանը, ավստրիահպատակ Խոնեկը, Թավրիզում ավստրիական արտահատիքային հյուպատոս էրտելը, Աղբրեջանում գործող գերմանական «մասնագետները» և այլն[70]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիան Իրանում արդեն ուներ լուրջ տնտեսական բաղա։ 1914 թ. 1901 թ. համեմատությամբ գերմանական ապրանքների ներմուծումը Իրան աճեց ավելի քան 12,5 անգամ[71]։ Թավրիզում կազմակերպվեց առևտրական բեռների տեղափոխման և ապահովագրման խոշոր ֆիրմա, որը հաջողությամբ մրցակցում էր «Պարսկական փոխադրամիջոցների ռուսական բյուրոյի» հետ։ Նույն քաղաքում հիմնադրվեց գերմանական բաժնետիրական ընկերություն, որը զբաղվում էր գորգերի արտադրությամբ։ Ընկերության գլխավոր վարչությունը գտնվում էր Բեռլինում, իսկ բաժանմունքները ցրված էին Իրանում՝ Սուլթանաբադում, Համադանում, Քերմանում, Մեշհեդում և Շիրազում։ Բեռլինյան «Undütsch և K°» ընկերությունը 1913 թ. իր բաժանմունքը բաց արեց Թեհրանում։ Իրանում արդեն գոյություն ուներ զենք և զինամթերք արտադրող գերմանական ֆաբրիկա։ Բացի այդ, փոքրածավալ ծանրոցներով Գերմանիայից Իրան էր առաքվում մեծ քանակությամբ զենք, արդյունաբերական ապրանքներ և այլն[72]։

1913 թ. վերջին Գերմանիան նախագծեր էր մշակում նաև Հյուսիս-արևմտյան Իրանում հաղորդակցության ճանապարհներ ստեղծելու ուղղությամբ, որոնք կոչված էին գերմանական առևտրա-տնտեսական ներթափանցմանը հաղորդել նոր թափ։ Այսպես, 1913 թ. դեկտեմբերին գերմանացիները պատրաստվում էին

---

[69] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, лл. 282—282 об; МОЭИ, серия III, т. I, стр. 392—393.

[70] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 189—189 об.

[71] *Н. Н. Бобынин*, Персия, ее экономическое положение и внешняя торговля, Тифлис, 1923, стр. 234—237.

[72] МОЭИ, серия II, т. XX, док. № 636

սկսել Բանե—Սակկիզ—Սոուջբուլաղ—Ուրմիա—Թավրիզ խճուղային ճանապարհի շինարարությունը։ Միևնույն ժամանակ Բաղդադի երկաթուղու ընկերությունը որոշել էր սկսել Խանեկինի հետ կապող երկաթուղային ճյուղի շինարարությունը։ Այդ նպատակով Խանեկին ժամանեց գերմանական ինժեներների մի մեծ խումբ Մեյսներ փաշայի գլխավորությամբ[73]։

Իրանական Ադրբեջանում Շյունեմանը գործում էր այնպիսի վճռականությամբ, որ ուժի օգնությամբ գավթեց Ջուլֆա—Թավրիզ երկաթուղու ռուսական կոնցեսիոն գոտում գտնվող բարածխահանքերը և սկսեց շահագործել դրանք։ Այդ առթիվ Սազոնովը 1914 թ. հունվարի 18-ին հեռագրում էր Թեհրանում դեսպանորդ Կորոստովեցին, թե անհրաժեշտ է հասկացնել գերմանական դեսպանորդին, որ Թավրիզում գոյություն ունեն ռուսական զորքեր[74]։

Հատկանշական է, որ Գերմանիայի հետ համատեղ Թուրքիան ևս պատերազմի նախօրյակին Իրանական Ադրբեջանում ձեռնամուխ եղավ տնտեսական գործունեության ծավալման։ 1914 թ. հունվարի 11-ի հեռագրում Կորոստովեցը հայտնում էր արտաքին գործերի մինիստրությանը, որ «բացի Գերմանիայի մրցակցությունից Ադրբեջանում աճում է նաև մեկ այլ վտանգ՝ Թուրքականը»[75]։

Առևտրա-տնտեսական ներթափանցման հետ միաժամանակ գերմանական իմպերիալիզմը աշխատում էր Իրանում Ռուսաստանի հետ մրցակցել նաև քաղաքական ասպարեզում, պաշտպանելով այն տեսակետը, որ Պետերբուրգի համաձայնագրով գերմանացիների ճանաչած Ռուսաստանի բացառիկ շահերը և քաղաքական ազդեցությունը Իրանում «գեռևս իրավունք չի տալիս ռուսներին նրա վրա նայել ինչպես Բուխարայի խանության վրա»[76]։

1913 թ. դեկտեմբերի 9-ի հաղորդագրության մեջ հատուկ կանգ առնելով Հյուսիսային Իրանում գերմանացիների հետևողական ներթափանցման հարցի վրա, Թեհրանում ռուսական գործերի հավատարմատարը գրում էր. «Արդեն ստիպելով մեզ ճանաչել իր

---

[73] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 451—451 об.

[74] МОЭИ, серия III, т. 1, стр. 174.

[75] Նույն տեղում, էջ 70։

[76] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, л. 282.

շահերի առկայությունը Անատոլիայի արևելյան վիլայեթներում, Գերմանիան, ըստ երևույթին, նույն բանին կձգտի նաև Ադրբեջանում և նույնիսկ, կարող է պատահել, Կասպից ծովի շրջանում»։ Ցարական դիվանագետների կարծիքով Գերմանիայի սողոսկումը դեպի Կասպից ծով պետք է բոլոր տեսակետներից դիտվի որպես Ռուսաստանի շահերին սպառնացող վտանգ[77]։

Պետերբուրգի քաղաքական շրջաններին տագնապեցնում էր նաև այն, որ շվեդական սպաների հրամանատարության տակ գտնվող իրանական ժանդարմերիան, որի վրա մեծ ազդեցություն ունեին գերմանացիները, գնալով մշտապես աճում էր։ Շվեդական սպաները ժանդարմերիայի մեջ կատարում էին զուտ, աշխատելով ազատվել անցանկալի տարրերից։ Նրանք ժանդարմերիայից հեռացրին հատկապես հայերին, նրանց դիտելով որպես Ռուսաստանի կողմնակիցներ[78]։ Բացի այդ, շահական կառավարությունը փորձում էր Իրանի հյուսիսային շրջաններում տեղավորված ռուսական զորքերը շվեդական ժանդարմերիայով փոխարինելու ուղղությամբ[79]։

Լուրջ մտահոգություն էր պատճառում նաև այն, որ Իրանական Ադրբեջանում Ռուսաստանի աճող ազդեցությանը դիմադրելու նպատակով շահական կառավարությունը ավելի ու ավելի բացահայտ փորձեր էր կատարում Գերմանիայի ու Թուրքիայի վրա հենվելու ուղղությամբ։ Նա ցարական դիվանագիտությանը մեղադրում էր նաև Թավրիզում Մեջլիսի պատգամավորների ընտրության ձախողման մեջ և այդ պատճառով գաղտնաբար դիմեց Թեհրանում գերմանական և թուրքական ներկայացուցիչներին, խնդրելով նրանց աջակցություն։ Բնական է, որ դա ցնծությամբ պետք է ընդունվեր Ստամբուլի և Բեռլինի կողմից։ Անմիջապես հանձնարարվեց Թեհրանում թուրքական դեսպան Աթիֆ բեյին և Շյունեմանին միջոցներ մշակել «Թավրիզի ընտրությունների հաջող անցկացման համար»[80]։

---

[77] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 182 об.

[78] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 58.

[79] Նույն տեղում, թթ. 183՝—184։

[80] МОЭИ, серия III, т. I, стр. 71.

Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում գերմանա-թուրքական ազդեցությունը ի չիք դարձնելու համար ցարական դիվանագետները առաջարկում էին իրենց կառավարությանը ձեռնարկել ամենարագմապիսի անտեսական ու քաղաքական միջոցառումներ։ Հատկապես կարևոր նշանակություն էր տրվում նշված շրջանները դաղութացնելու և մասնավորապես թուրքական սահմանի մոտ ընկած տերիտորիաները ռուսական տարրերով բնակեցնելու հարցին[81]։ 1913—1914 թթ. Ռուսաստանը հետևողականորեն սկսեց վարել նշված շրջաններում դաղութացման քաղաքականություն։ Թուրքիան անմիջապես դրան պատասխանեց նույն քայլով։ Ռուսական գործիչները հաղորդում էին արտաքին գործերի մինիստրությանը, որ «թուրքական իշխանությունները մշակել են նախագիծ թուրք-պարսկական սահմանը թուրքական ծագում և սուննիթական դավանանք ունեցող այնպիսի բնակչությամբ բնակեցնելու վերաբերյալ, որոնք անցել են զինվորական ծառայությունը»[82]։

Ընդհանրացնելով վերևում շարադրվածը, պետք է նշել, որ Իրանում իմպերիալիստական Գերմանիայի և օսմանյան Թուրքիայի քաղաքականության հաջողությանը նպաստում էին մի շարք գործոններ. առաջին հերթին ֆեոդալական Իրանի հետամնացությունն ու թուլությունը, նրա ֆեոդալական շրջանների վաճառականությունը և դեմոկրատական տարրերի անհետևողականությունը, Իրանում ցարական Ռուսաստանի և Անգլիայի քաղաքականության նկատմամբ խորը դժգոհությունը և վերջապես անգլո-ռուսական հակասությունները, որոնք հեշտացնում էին գերմանա-թուրքական պլանների իրագործումը[83]։

* * *

1914 թ. սկզբներից թուրքական կառավարող շրջանները ամբողջ կայսրությունում սկսեցին բորբոքել շովինիստական և զավթողական տրամադրություններ։ Թուրքիան հետևողականորեն նախապատրաստվում էր պատերազմի Ռուսաստանի դեմ։ 1914 թ.

---

[81] ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 28, д. 125, л. 6.

[82] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, л. 259.

[83] *Т. С. Короткова*, Иран накануне первой мировой войны, стр. 15.

հունվարին Ստամբուլից Գիրսը հեռագրում էր Սազոնովին, որ Թուրքիայում «քաղաքական մթնոլորտը այն աստիճանի լարված է, որ, անկասկած, մեզ անհրաժեշտ է պատրաստվել ամեն տեսակի պատահականությունների...»։ Դեսպանը ավելացնում էր, որ անհրաժեշտ է ոչ մի բոպե չկորցնելով ուժեղացնել Ռուսաստանի մարտական պատրաստականությունը, որովհետև Մերձավոր Արևելքում իրադարձությունները կարող են ընդունել այնպիսի ընթացք, որ Ռուսաստանը ստիպված լինի հանդես գալ իր «շահերը և արժանապատվությունը պաշտպանելու համար»[84]։ Այս հեռագրի կապակցությամբ ցարական արտաքին գործերի մինիստրը անմիջապես գերգաղտնի նամակ գրեց Մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցովին, ռազմական մինիստր Սուխոմլինովին, ծովային մինիստր Գրիգորովիչին և գլխավոր շտաբի պետ Ժիլինսկուն, հայտնելով, որ ինքը պաշտպանում է դեսպանի վերոհիշյալ կարծիքը և անհրաժեշտ է համարում պատրաստ լինել այնպիսի իրադարձությունների համար, որոնք կպահանջեն Ռուսաստանի արագ և եռանդուն միջամտությունը[85]։

Ցարական կառավարությանը հատկապես անհանգստացնում էր Թուրքիայի գործունեության ակտիվացումը Իրանում։ Ռուսական ռազմական և քաղաքական գործիչները տեղեկացնում էին Պետերբուրգին և կովկասյան իշխանություններին, որ Օսմանյան կայսրության դաղտնի ծառայությունները Իրանում ծավալել են չափազանց եռանդուն աշխատանք։ Թուրքական գործակալության աշխատանքները ղեկավարում էր Թեհրանում թուրքական միսիայի ռազմական կցորդը, որը հենվում էր Օսմանյան կայսրության բազմաթիվ հյուպատոսական հիմնարկությունների վրա, որոնք ցրված էին մի շարք քաղաքներում՝ Թավրիզում, Սեննեում, Խոյում, Սալմասում, Ուրմիայում, Քերմանշահում, Սուջբուլաղում, Համադանում, Բաննում, Սաքքիզում, Ռեշտում, Շիրազում, Բուշիրում և Լենգեում։ Վերջիններս իրենց հերթին գործում էին տեղական

---

[84] МОЭИ, серия III, т. I, Л.—М., 1931, стр. 11.

[85] Նույն տեղում։

բնակչությունից հավաքագրված գործակալության միջոցով։ Թուրքական գաղտնի ծառայությունները Իրանում հաջողությամբ հավաքագրում էին գործակալություն հատկապես հակառուսական տրամադրություններ ունեցող խավերից, որոնք սովորաբար հակված էին Թուրքիայի և Գերմանիայի կողմը։ Մեծ քանակությամբ լրտեսներ հավաքագրվեցին հատկապես իրանական հոգևորականության, մանր բուրժուազիայի և մտավորականության ներկայացուցիչներից։ Գնալով ավելի սերտ բնույթ էր կրում գերմանա-թուրքական գաղտնի ծառայությունների համագործակցությունը։ Գերմանական հետախուզության աշխատանքները և նրա կոորդինացիան թուրքական լրտեսական ցանցի հետ իրագործում էր Թեհրանում գերմանական միսիայի ռազմական կցորդը։ Դիվանագիտական ներկայացուցիչներից բացի, ակտիվ հետախուզական գործունեությամբ էին զբաղվում նաև գերմանական կուլտուր-լուսավորչական հիմնարկները, գաղութարանները, առևտրական ընկերությունների ներկայացուցիչները, հատկապես «Ռոբերտ Վյոնկխաուզ» ֆիրմայի ծառայողները, որոնց հետ սերտորեն համագործակցում էին ավստրո-հունգարական հետախույզները։ Իրանական Ադրբեջանում և Քրդստանում գերմանական գործակալության գործողությունները որոշակի ծրագրով ղեկավարելու նպատակով Բեռլինը 1914 թ. սկզբներին Թավրիզում բաց արեց հյուպատոսություն, որը ղեկավարելու էր Մերձավոր և Միջին Արևելքի լավագույն գիտակ Լիտտենը[86]։ Վերջինս գերմանական արտաքին գործերի մինիստրության և հետախուզական կենտրոնի հանձնարարությունները իրագործում էր Շյունեմանի միջոցով, որը սկսել էր հանդես գալ որպես «Լոկալ-Անցեյգեր» թերթի թղթակից։

Օսմանյան կայսրությունը հատկապես հատուկ հետաքրքրություն էր դրսևորում Իրանական Ադրբեջանի նկատմամբ, որը բացի իր ռազմա-ստրատեգիական նշանակությունից, կարևոր դեր էր խաղալու երիտթուրքական կառավարող շրջանների պանթուրքիստական պլաններում։ Այստեղ քայքայիչ գործունեություն ծավա-

---

[86] МОЭИ, серия III, т. II, М.—Л., 1933, док. № 122, стр. 155.

լելու համար Ստամբուլը գործուղեց «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեի Ադրբեջանի և Արևելյան Կովկասի գործերի գլխավոր հրահանգիչ, իթթիհադի ականավոր գործիչ Էմեր Նաջի բեյին, որն ուներ հետախուզական-դիվերսիոն գործունեության մեծ փորձ[87]։

Բացի մշտական գործող լրտեսական կենտրոնից Էրզրումի ռազմական շտաբից սիստեմատիկորեն թուրքական հետախույզներ էին ուղարկվում Իրան և Անդրկովկաս[88]։

Թուրքական գործակալությունը Գերմանիայի աջակցությամբ ամենուրեք ագիտացիա էր մղում Իրանից ռուսական զորքերը դուրս բերելու մասին։ 1914 թ. հունվարի 12-ին Սպահանում ռուսական հյուպատոսության կառավարիչ Գիլդենբրանտը հեռագրում էր, որ այդ նույն քաղաքում «գերմանա-թուրքական կուսակցությունը» ագիտացիա է մղում ընդդեմ ռուսների և տեղական մամուլի, թռուցիկների, ժողովների միջոցով սրբազան պատերազմի կոչ է անում Ռուսաստանի և Անգլիայի դեմ «ի պաշտպանություն Թուրքիայի»[89]։

Գերմանիայի պետական քարտուղարի օգնական Զիմմերմանի արտահայտություններից երևում էր, որ Գերմանիան (ինչպես նաև Թուրքիան) աշխատում էին Ռուսաստանի սահմանների մոտ ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ի վիճակի լինեին նվազեցնելու նրա ռազմական հզորությունը[90]։ Այդ պատճառով թուրքական կառավարությունը ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Աֆղանստանում։ Այստեղ պատերազմի նախօրյակին գտնվում էին մի քանի թուրքական սպաներ, այդ թվում նաև գլխավոր շտաբի սպաներ Խայրի բեյը, Մահմուդ Սամի բեյը, որոնք զբաղվում էին աֆղանական բանակի վերակազմակերպման և սպաների պատրաստման գործով։ Ընդ որում, Աֆղանստանում գտնվող թուրքական սպաներն ու քաղաքացիական անձինք կապված էին երիտ-

---

[87] Doctrines et programmes des parties politique Ottomanes", Revue du Monde Musulman", vol. XXII, Paris, 1913, p. 158.

[88] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 3792, лл. 134—134 об.

[89] АВПР, ф. «Канцелярия МИД», 1914, д. 41, л. 12.

[90] МОЭИ, серия III, т. I, док. № 110, стр. 119.

աֆղանական կուսակցության հետ, որն ուներ թուրքական օրիենտացիա։

Պանիսլամիստական և պանթուրքիստական պրոպագանդայի ծավալման և դեպի Իրան լրտեսներ ուղարկելու հետ մեկտեղ Թուրքիայում լուրջ ուշադրություն էր դարձվում նաև անկանոն ջոկատների կազմակերպմանը, որոնք նախատեսվում էին լայնորեն օգտագործել թշնամու թիկունքում։ Ռուսաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելուց ոչ շատ առաջ Ստամբուլում գերմանական միսիայի սպա մայոր Գուզեն էրզրումից հաղորդում էր. «այստեղ շատ են աշխատում բնակչության և բանդաների զինման վրա։ Որքան ես գիտեմ, Թուրքիան չմիացավ ազատ ջոկատների մասին Հաագայի որոշմանը»[91]։

Ռուսաստանի հետ ապագա պատերազմում մեծագույն հույսեր կապելով քրդերի հետ, երիտթուրքական կառավարությունը որոշեց լրջորեն զբաղվել նրանցով։ Դրան առանձնապես խթան հանդիսացան հետևյալ հանգամանքները. նախ 1914 թ. գարնանը Ռուսաստանը սկսեց ստիպողաբար Իրանից դուրս բերել իր օկուպացիոն զորքերը։ Օգտվելով դրանից, թուրքական կառավարությունը իրանական սահմանների մի շարք տեղամասերում, մասնավորապես Մակուի խանության, Ուրմիայի, Սոուջբուլաղի, Ռևանդուզի, Ուշնուի ուղղությամբ սկսեց կենտրոնացնել զորքեր[92]։ Դրա համար պատրվակ ծառայեց նաև Մոսուլի վիլայեթի քրդերի ապստամբությունը։ Այն ճնշելու պատրվակով Ռևանդուզի շրջանում Թուրքիան կենտրոնացրեց մեծաթիվ զորքեր։ Միաժամանակ թուրք-գերմանական գործակալությունը անմիջապես Իրանական Քրդստանում և Ադրբեջանի քրդաբնակ շրջաններում ծավալեց բուռն թուրքոֆիլական ագիտացիա։ 1914 թ. ապրիլին Խոյում փոխ-հյուպատոս Չիրկովը հեռագրում էր Սազոնովին, որ «թուրքերի պրովոկացիոն գործունեությունը հատկապես Ուրմիայի և Մակուի քրդերի շրջանում դնալով ուժեղանում է»[93]։ Պետք է ենթադրել, որ

---

[91] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3862, л. 393.

[92] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 218, 243—244, 267—269.

[93] МОЭИ, серия III, т. I, док. № 396, стр. 522.

թուրքական ագիտացիան ուներ որոշակի հաջողություն, որովհետև ռուսական հյուպատոսները 1914 թ. ապրիլին անընդհատ հեռագրում էին Սազոնովին, որ քրդերի «կրքերը սառեցնելու համար միանգամայն ժամանակին կլիներ ձեռնարկել մի շարք ազգական զբոսանքներ դեպի հյուսիս և հարավ»[94]։

1914 թ. սկզբին շեյխ Բարզանի գլխավորությամբ ակսվեց բարզանցի քրդերի ապստամբություն։ Քրդերին միացան նաև տեղական ասորիները։ Արյունահեղ մարտերից հետո քրդական ջոկատները ջախջախվեցին և ապստամբների մնացուկները շեյխ Բարզանի հետ միասին 1914 թ. ապրիլին անցան Իրան[95]։ Իսկ 1914 թ. գարնանը քրդական խոշոր ապստամբություն բռնկեց Բաղեշի շրջանում, որը ղեկավարում էր շեյխ Սելիմը։ Թեև սկզբում ապստամբներին հաջողվեց գրավել Բաղեշը, սակայն նույն օրն ևեթ քրդական ջոկատները կառավարական զորքերի ճնշման տակ ստիպված էին թողնել քաղաքը։ Շեյխ Սելիմը դիմեց ռուսական հյուպատոսությանը խնդրելով պաշտպանություն և հովանավորություն[96]։

Բաղեշի իրադարձությունները ուժեղ տպավորություն գործեցին թուրքական կառավարող շրջանների վրա, որովհետև այդ և նման հակակառավարական ապստամբությունները նախ վկայում էին պատերազմի նախապատրաստվող Թուրքիայի թիկունքի անկայունության մասին և ապա համոզիչ կերպով ցույց էին տալիս, որ պատերազմի ընթացքում քրդական զանգվածներին որպես ռազմական ուժ օգտագործելու ծրագրերը կարող են ձախողման մատնվել։ Այդ պատճառով երիտթուրքական կառավարությունը որոշեց քրդական պրոբլեմի նկատմամբ վերաբերմունքի հարցը դարձնել հատուկ քննարկման առարկա։ 1914 թ. մարտի 22-ին գումարվեց «Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի արտակարգ նիստ, որտեղ քրդական հարցը

---

[94] МОЭИ, серия III, т. II, стр. 522.

[95] ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 149, лл. 45—50; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7722, лл. 294—295, 320.

[96] МОЭИ, серия III, т. II, док. 213, стр. 296—298; ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, лл. 489—490.

ենթարկվեց բազմակողմանի ու մանրակրկիտ քննության։ Հաշվի առնելով քրդերի ընդհանուր տրամադրությունը և նրանցում օրըստօրև աճող համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, կառավարությունը որոշեց դրամական սուբսիդիաների և զանազան պաշտոններ շնորհելու միջոցով քրդերին գրավել իր կողմը։ Մասնավորապես ցանկություն հայտնվեց կոմպրոմիսի մեջ մտնել մի շարք քրդական ազդեցիկ առաջնորդների հետ և նրանցից մի քանիսին ընտրել պառլամենտի պատգամավորներ կամ նշանակել սենատորներ[97]։

Երիտթուրքական կառավարությանը անհանգստացնում էր նաև այն, որ Իրանական Քրդստանի մի շարք քրդական ցեղապետներ ոչ միայն ցանկություն չէին դրսևորում համագործակցելու Թուրքիայի հետ, այլև զինված պայքար էին մղում թուրքական ոտնձգությունների դեմ։ Զիրկովը այդ առթիվ գրում էր, որ օրինակ Ղոթուրի բեկ Իսմայիլ աղա Սիմկոյի սահմանների պաշտպանության ուղղությամբ կատարած ծառայությունը «լուրջ արգելք է հանդիսանում թուրքական գործունեության զարգացմանը իրանական տերիտորիայում Ղոթուր—Սոմայի շրջանում։ Հետևաբար անհրաժեշտ է Սիմկոյին ցուցաբերել ոչ միայն լրիվ բարոյական աջակցություն, այլև ռազմական օգնություն»։ Ի պատասխան Զիրկովի հեռագրի արտաքին գործերի մինիստրությունը հաղորդեց, որ միանգամայն ցանկալի է համարում Սիմկոյին ցուցաբերել ոչ միայն բարոյական աջակցություն, այլև նրան տրամադրել զենք և փամփուշտներ[98]։ Տեղեկանալով այդ մասին, ներքին գործերի մինիստր Թալյաթ բեյը անմիջապես դիմեց մեծ վեզիրին, խնդրելով լուրջ առաջադրություններ կատարել ռուսական և իրանական կառավարությունների առջև, սանձահարելու համար Սիմկոյին և թույլ չտալու նրան մոտենալու թուրքական սահմանին[99]։

Երիտթուրքական կառավարությունը 1914 թ. գարնանը և ամռանը իր գործակալության միջոցով եռանդուն աշխատանք ծավա-

---

[97] Նույն տեղում, էջ 297—298։

[98] МОЭИ, серия III, т. II, стр. 297—298.

[99] Նույն տեղում։

լեց Իրանի սահմանամերձ բնակչության շրջանում։ Թուրքական հյուպատոսությունները սկսեցին պրոպագանդել իրանահպատակներին (քրդեր, հրեաներ և այլն) թուրքական հովանավորության տակ վերցնելու գաղափարը[100]։ Մի շարք քրդական ցեղեր կապերի մեջ մտան Օսմանյան կայսրության սահմանային զինվորական իշխանությունների հետ, նրանցից սկսեցին ստանալ զենք ու զինամթերք և այլն[101]։

Առանձնակի ակտիվությամբ գերմանա-թուրքական գործակալությունը աշխատում էր Մակուի խանությունում։ Դեռևս 1913 թ. Բեռլինում գտնվելու ժամանակ Մակուի սարդար Մուրթեզա կուլի խանը Իրանի նախկին ռեգենտ Նասր-ալ-Մոլքի միջնորդությամբ կապեր էր հաստատել գերմանացիների հետ[102]։ 1914 թ. նա Թուրքիայի հետ գաղտնի հարաբերությունների մեջ էր և նրա միջոցով ստանում էր գերմանական զենք և զինամթերք[103]։ Ռուսական դիվանագիտական և ռազմական գործիչները հաղորդում էին, որ Մակուի խանությունը հանդիսանում է թուրքական տենչանքների առարկա[104]։ Թուրքական և գերմանական հետախուզությունները Մակուի սարդարի անմիջական օգնությամբ էմիսարներ էին ուղարկում Թավրիզ շահսևենյան ցեղերի մոտ, որպեսզի հորդորեն նրանց ապստամբել Ռուսաստանի դեմ[105]։ Իր կառավարությանը տեղեկացնելով սարդարի երկակի խաղի և գերմանա-թուրքական գործակալության դավերի մասին Մակուի խանությունում, Ս. Օլֆերևը գրում էր, որ այդ բոլորին վերջ տալու համար անհրաժեշտ է զինված ուժի օգնությամբ սարդարին միկընդմիշտ ենթարկել Ռուսաստանի կամքին[106]։ Այդ նույն կարծիքին էր նաև Թեհրանում դեսպանորդ Կորոստովեցը։ 1914 թ. հուլիսի 5-ի իր հեռագրով նա Սարդ-

---

[100] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 359—360, 372—373.

[101] МОЭИ, серия III, т. IV, М.—Л., 1931, стр. 323.

[102] ЦГИА Груз. ССР, ф. 126, д. 16, л. 24.

[103] МОЭИ, серия III, т. II, М.—Л., 1933, стр. 143; т. III, стр. 249.

[104] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 3789, лл. 7—8.

[105] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 338—338 об.

[106] МОЭИ, серия III, т. IV, стр. 268.

նովից խնդրում էր նախազգուշացնել սարդարին, որ «հետագա ուխտադրժության դեպքում նրան սպառնում է խանության կորուստը և դաժան պատիժը»[107]։

Գերմանա-թուրքական գործակալությունը լուրջ աշխատանք էր ծավալել նաև Ուրմիայի շրջանի իրանահպատակ ասորիների շրջանում։ Գերմանական դիվանագիտությունը նույնիսկ Լիտանիի միջոցով իրանական կառավարության առջև հարց հարուցեց բողոքական ասորիների հովանավորությունը Գերմանիային հանձնելու մասին[108], որը ռուսական քաղաքական շրջանները դիտեցին որպես նոր և ավելի վճռական քայլ Գերմանիայի քաղաքական ազդեցությունը Իրանում ամրապնդելու ուղղությամբ։ Այդ առթիվ Սազոնովը հեռագրում էր Թեհրանում իր դեսպանորդին, որ գերմանական կառավարության այդ քայլը հակասում է պետերբուրգյան համաձայնագրին, ըստ որի Գերմանիան պարտավորություն էր վերցրել իր վրա Հյուսիսային Իրանում հետապնդել բացառապես տնտեսական նպատակներ։ Մինիստրը պահանջում էր դեսպանորդից այդ առումով բացատրություն պահանջել Թեհրանում գերմանական դեսպանորդից[109]։

1914 թ. գերմանա-թուրքական տնտեսական և քաղաքական գործունեության ընդլայնումը Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում նախկինի պես լուրջ մտահոգության առարկա էր Ռուսաստանի քաղաքական շրջանների համար։ Նիկոլայ II-ին հասցեագրված 1914 թ. մայիսի 25-ի զեկուցագրում Վորոնցով-Դաշկովը առաջ էր քաշում վերոհիշյալ շրջաններում գործողության ծավալուն ծրագիր։ Նրա կարծիքով նախ անհրաժեշտ էր առավել ճշտորեն և կայուն որոշել Ռուսաստանի քաղաքական խնդիրները Հյուսիսային Իրանում, որովհետև Կովկասի փոխարքայի կարծիքով, Գերմանիայի ակտիվ գործունեությունը «ի չիք է դարձնում վերջին տարիների մեր ջանքերը և հավատ չի տալիս, որ Հյուսիսային Պարսկաստանը կազմում է մեր քաղաքական ազդեցության բացա-

---

[107] Նույն տեղում, էջ 332։

[108] АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915, д. 142, лл. 279—280 об.

[109] МОЭИ, серия III, т. III, М.—Л., 1933, стр. 63—64.

ռիկ գոտին»։ Այդ պատճառով Վորոնցով-Դաշկովը ծայրահեղորեն անհրաժեշտ էր համարում միավորել ռուսական հյուպատոսների գործունեությունը մեկ ընդհանուր ծրագրի շուրջը, ավելացնել ռուսական արդյունաբերական ձեռնարկությունների թիվը, ընդլայնել առևտրափոխանակությունը, ուշադիր հետևել իրանական խանների գործունեությանը, որոնք գաղտնի հարաբերություններ են մտնում Թուրքիայի հետ, և աջակցել սահմանամերձ շրջանների քրդական ղանդվածների կուլտուրական շարժմանը։ Փոխարքայի կարծիքով «քրդերին կարելի կլիներ միավորել որպես մի ուժի, որը կարող էր դառնալ լուրջ հակակշիռ Թուրքիայի ռազմական ու քաղաքական հզորության հետագա կուտակմանը»[110]։

Ընդհանուր առմամբ ռուսական քաղաքական գործիչները դրանում էին, որ կենտրոնական իրանական կառավարության ազդեցության թուլացումը Իրանի ծայրամասերի վրա, իսկ մյուս կողմից Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Իրանում Գերմանիայի հետևողական ներթափանցումը առիթ է տալիս եզրակացնելու, որ «նրա (Իրանի—Վ. Բ.) ճակատագրի վերջնական լուծման պատմական մոմենտը համեմատաբար հեռու չէ»։ Որ այդ պայքարին կմասնակցեն երեք գլխավոր հակառակորդ պետություններ՝ Ռուսաստանը, Անգլիան և Գերմանիան[111]։

Սա նշանակում էր, որ ցարական Ռուսաստանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին արդեն ստիպված էր խոստովանել, որ Հյուսիսային Իրանը այլևս իր բացառիկ ազդեցության գոտին չէ։

Դրությունը Թուրք-իրանական սահմանների մոտ գնալով ավելի վտանգավոր ու լարված բնույթ էր կրում։ 1914 թ. գարնանը Թուրքական կառավարությունը խոշոր զումարներ հատկացրեց Թուրքիան Իրանի հետ կապող հեռախոսային գծերի և խճուղային ճանապարհների շինարարության համար[112]։

---

[110] ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 28, д. 125, лл. 15—16; МОЭИ, серия III, т. III, М.—Л., 1933, док. № 203, стр. 248—249. Ծանոթանալով Կովկասի փոխարքայի վերոհիշյալ դեկուցագրի հետ Նիկոլայ II-ը մակագրեց՝ «Համաձայն եմ»։

[111] ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, лл. 182—182 об.

[112] ЦВГИА, ф. 2000 с, оп. 1, д. 3841, лл. 184—185.

Բեռլինը և Ստամբուլը փորձեցին առաջիկա պատերազմում Ռուսաստանի դեմ ոտքի հանել նաև Կովկասի և Իրանի հայությանը։ Ստամբուլում գերմանական դեսպանատունը դիմեց պատրիարքին և հայ ազդեցիկ գործիչներին, նշելով, որ հայ ժողովրդի համար հասել է վճռական ժամը և, որ, հայերը պետք է պահեն իրենց որպես Օսմանյան կայսրության հավատարիմ քաղաքացիներ[113]։ Սակայն նման կարգի բոլոր փորձերը ավարտվեցին կատարյալ ձախողմամբ։

Ստամբուլի հրամանով թուրքական բանակային չորրորդ և վեցերորդ կորպուսների կազմից տենդորին սկսեցին ստեղծվել չեթայական խմբեր հակառակորդի թիկունքում զանազան դիվերսիաներ ու խռովություններ կազմակերպելու համար։ Օրինակ, նաջի բեյը Էրզրումի և Վանի զորքերի միջից ընտրեց երեք հազար լավագույն զինվորներ և դրանց գլուխն անցնելով ուղևորվեց Իրան[114]։ Բացի այդ, թուրքական հետախույզները ամբողջ խմբերով անցնում էին իրանական սահմանը ռազմա-քաղաքական տեղեկություններ հավաքելու և ազդեցիկ ատիճանավորներին կաշառելու մտադրությամբ[115]։ Երիտթուրքական կոմիտեի ներշնչումով Քարբալայից և Նաջաֆից իրանական բարձրագույն հոգևոր իշխանությունները նամակներ էին ուղարկում Իրան, բնակչությանը կոչ անելով սրբազան պատերազմի դուրս գալ ռուսների դեմ[116]։ Ապագա պատերազմում թիկունքն ապահովելու նպատակով, թուրքական իշխանությունների հրամանով համիդիե գնդերը սկսեցին դաժանորեն դատաստան տեսնել թուրք-իրանական սահմանամերձ շրջանների քրիստոնյա բնակչության հետ։ Միաժամանակ նրանք հարձակումներ էին գործում Ուրմիայի նահանգում տեղավորված ռուսական զորքերի վրա և ապա թաքնվում թուրքական տերիտորիայում[117]։ Թուրքերը ծրագրել էին Իրանական Ադրբեջանը մաքրել ռուսական զորքերից և քրդական ջոկատների օգնությամբ գրավել

---

113 *Մ. Էրզբերգեր*, Германия и Антанта. Мемуары, М.—Пг., 1923, стр. 80; *Ա—Դ0, Մեկ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., Երևան, 1917, էջ 74։*

114 *Ա.-Դ0, նշվ. աշխ., էջ 80։*

115 АВПР, ф. «Канцелярия МИД», 1914, д. 42, л. 143.

116 *Նույն տեղում, թ. 157։*

117 *Նույն տեղում, թթ. 148, 152*, МОЭИ, серия III, т. IV, стр. 323.

այն[118]։ Այդ նույն նպատակով թուրք-գերմանական գործակալությունը աշխատում էր կոնֆլիկտներ բորբոքել մի կողմից ազգրեջանական և իրանական, քրիստոնյա ու մահմեդական բնակչության, մյուս կողմից ռուսական օկուպացիոն զորքերի և տեղական իրանական իշխանությունների միջև։

Թուրքական այս քաղաքականությանը հակազդելու և հատկապես քրիստոնյա բնակչության ջարդերը կանխելու նպատակով հայերն ու ասորիները Իրանական Քրդստանի ցեղերի շրջանում Ստամբուլի սեյիդների և շեյխերի անունից պարսկերեն լեզվով սկսեցին տարածել կոչեր, որոնցում առաջարկվում էր Քրդստանում զինված պայքար մղել երիտթուրքերի ու գերմանացիների դեմ, և դադարեցնել հայերի ու ասորիների նկատմամբ կիրառվող հալածանքները[119]։ Սակայն այդ կոչերը կրոնական ֆանատիզմով թունավորված ցեղերի շրջանում որպես կանոն մնում էին անարձագանք։

1914 թ. օգոստոսի 1-ին պայթեց համաշխարհային պատերազմը։ Գերմանական իմպերիալիզմը որոշեց անհապաղ ռազմական դաշինքի մեջ մտնել Թուրքիայի հետ, որը ի վիճակի էր պատերազմական գործողությունների լրացուցիչ ճակատ ստեղծել Ռուսաստանի և Անգլիայի դեմ[120]։

Միաժամանակ Գերմանիան սպասում էր ռազմա-քաղաքական մեծ օգուտներ թուրքական սուլթան-խալիֆի կրոնական հեղինակությունը օգտագործելու հնարավորությունից, Անտանտի երկրների դեմ «ջիհադ» կազմակերպելու համար, երկրներ, որոնք իրենց աֆրիկյան և ասիական գաղութային տիրապետություններում ունեին հսկայական քանակությամբ մահմեդականներ[121]։ Գերմանական արտաքին գործերի մինիստրությունը պատերազմի հենց հաջորդ օրը հանձնարարեց Արևելքի երկրներում քաղաքական դավեր կազմակերպելու գործում ճանաչված «մասնագետ» բարոն Մաքս ֆոն

---

118 АВПР, ф. «Канцелярия МИД», 1914 г., д. 42, л. 155.

119 АВПР, ф. «Персидский стол Б», 1912—1915 гг., д. 142, лл. 86—87.

120 *Carl Mühlmann*, Deutschland und die Türkei 1913—1914, Berlin-Grunewald, 1929, SS. 92—94.

121 *Fritz Fischer*, Griff nach der Weltmacht. Die Kriegszielpolitik des Kaiserlichen Deutschlands 1914—1918, Düsseldorf, 1962, s. 137.

Օպենհեյմին մշակել նման գործունեության ծավալման պլան, որի մեջ կարևոր տեղ էր հատկացվելու նաև Իրանին։ 1914 թ. սեպտեմբերին Օպենհեյմը հանդես եկավ մի հուշագրով, որի մեջ նա խորհուրդ էր տալիս Մերձավոր և Միջին Արևելքում քայքայիչ գործունեություն ծավալելու համար լայնորեն օգտագործել պանիսլամիզմը ու պանթուրքիզմը։ Նա առաջարկում էր նաև առաջին հերթին խոշոր արշավախմբեր ուղարկել Իրան և Եգիպտոս Ռուսաստանի և Անգլիայի դեմ տեղական մահմեդականների պայքարը կազմակերպելու համար[122]։

Գերմանական մի այլ «մասնագետ», Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Էռնստ Յեկխը իր հերթին մշակեց Արևելքը «հեղափոխականացնելու» մի պլան, որը արժանացավ արտաքին գործերի մինիստրության հավանությանը[123]։ Իր հերթին գերմանական գլխավոր շտաբը ֆոն Մոլթկեի գլխավորությամբ տենդորեն սկսեց մշակել Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում Օսմանյան կայսրության օգնությամբ Անտանտի դեմ ապստամբություն բարձրացնելու մի ծրագիր։ Այնտեղ մասնավորապես ասվում էր, որ «հսկայական կարևորություն ունի Իրանում, Հնդկաստանում, Եգիպտոսում և Կովկասում տեղական մահմեդական բնակչության ապստամբությունը։ Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու միջոցով արտաքին գործերի մինիստրությունը ի վիճակի կլինի իրականացնել այդ դաղափարը և բորբոքել Իսլամի ֆանատիզմը[124]։

Ինչպես հայտնի է, Եվրոպայում պատերազմը սկսվելու հենց հաջորդ օրը, օգոստոսի 2-ին, Թուրքիան Գերմանիայի հետ կնքեց ռազմական դաշինք[125], թեև ձևականորեն հայտարարեց պատերազմում իր չեզոքության մասին։ Թաքնվելով այդ «չեզոքության» ետևում երիտթուրքական կառավարությունը սկսեց զորքերի համընդհանուր մոբիլիզացիա։ Ի լրացումն օգոստոսի 2-ի պայմանա-

---

122 *Fritz Fischer*, Griff..., s. 137—138.

123 *Е. Ф. Лудшувейт*, Турция в годы первой мировой войны, М., 1966, стр. 24.

124 *Fritz Fischer*, Griff..., s. 140.

125 *Carl Mühlmann*, Oberste Heeresleitung und Balkan im Weltkrieg 1914—1918, Berlin, 1942, Anlage 1, s. 275; *Տե՛ս նաև J. C. Hurewitz*, Diplomacy in the Near and Middle East, vol. 11, pp. 1—2.

գրի, Գերմանիան Օսմանյան կայսրության հետ ստորագրեց նաև հատուկ համաձայնություն Թուրքիայում գերմանական ռազմական միսիայի վիճակի մասին[126]։

Օգոստոսի 4-ին, երբ Անգլիան պատերազմ հայտարարեց Գերմանիային, վերջինս ավելի մեծ ջանքեր գործադրեց Թուրքիային հնարավորին չափ շուտ ռազմական գործողությունների մեջ ներգրավելու համար։ Այդ նպատակով Ստամբուլում գերմանական դեսպան Վանգենհայմը էնվեր փաշայի հետ գաղտնի զրույցի ժամանակ գայթակղեցուցիչ հեռանկարներ էր բացում նրա առաջ. նա իր կառավարության անունից խոստանում էր Թուրքիայի հետ միասնաբար ջախջախել Ռուսաստանին, Կովկասը հանձնել Թուրքիային, նվաճել Իրանը, բաց անել Թուրանի ճանապարհը, փշրել թուրքական միասնականության ճանապարհի վրա գոյություն ունեցող բոլոր արգելքները և այլն[127]։ Նշելով, որ պատերազմի ընթացքում Թուրքիայի հիմնական հակառակորդը լինելու է թշնամական Ռուսաստանը, Վանգենհայմը հասկացնում էր էնվեր փաշային, որ Օսմանյան կայսրության արևելյան սահմանը կդառնա ամբողջ նոյակ դաշինքի ստրատեգիական տեսակետից առավել խոցելի կետը և Ռուսաստանի հարձակման բնական տեղը[128]։

Պատրաստվելով պատերազմի մեջ մտնել գերմանական բլոկի երկրների կողմից, Օսմանյան կայսրության կառավարող շրջանները, սակայն, փայփայում էին սեփական զավթողական նպատակներ[129], որոնք բխում էին պանթուրքիզմի, թուրանիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունից։ Մասնավորապես թուրքական կառավարող շրջանները հույս ունեին Գերմանիայի օգնությամբ զավթել Կովկասը, Իրանը, Մերձվոլգյան շրջանը, Ղրիմը, Թուրքես-

---

[126] *M. Larcher*, La guerre Turque dans la guerre mondiale, Paris, 1926, p. 38.

[127] Մելան Զադե Թիֆաար, *Թուրքական յեղափոխության մութ ծայրերը, Բեյրութ, 1938, էջ 12—13։*

[128] *Ф. И. Нотович*, Дипломатическая борьба в годы первой мировой войны, т. I, М.—Л., 1947, стр. 91.

[129] *Այդ մասին մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսյան. Թուրքիան և նրա նվաճողական բաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918 թթ., Երևան, 1964։*

տանը և հաջողության դեպքում շարժվել նույնիսկ դեպի Հնդկաստան և Սինցզյան։ Երիտթուրքերի երազանքը՝ Թուրքիան բոլոր թուրքական և մահմեդական ժողովուրդների համար հեգեմոն դարձնելու վերաբերյալ, հետևյալ կերպ է ձևակերպել պանթուրքիզմի ականավոր գաղափարախոսներից մեկը՝ Թեքին Ալփը. «միավորված թուրքերը,— գրում է նա,— պետք է ստեղծեն ձգողության կենտրոն ամբողջ մահմեդական աշխարհի համար։ Եգիպտոսի, Մարոկկոյի և Թունիսի արաբները, պարսիկները, աֆղանները և այլն պետք է իրենցից ներկայացնեն մեկ միասնական ճակատ»[130]։

Իրենց նվաճողական պլաններում Օսմանյան կայսրության և Գերմանիայի կառավարող շրջանները Իրանին տալիս էին առանձնահատուկ նշանակություն։ Հենվելով պանթուրքիստական կոնցեպցիայի վրա, թուրքական միլիտարիստները իրենց առջև խնդիր էին դնում նախ և առաջ տիրանալ Հյուսիսային Իրանին, որտեղ գերակշռում էին թուրքալեզու ժողովուրդները, և այնուհետև միավորելով Իրանական և Հյուսիսային («ռուսական») Ադրբեջանը ստեղծել առանձին պետություն Օսմանյան կայսրության հովանիի տակ։ Պանթուրքիստների ծրագրերի համաձայն այդ «կենսունակ» երկրամասը դառնալու էր թուրքիզմի կարևորագույն կենտրոն։ Բացի այդ, Իրանական Ադրբեջանը ծառայելու էր որպես հենակետ Բաքվի նավթաբեր շրջանի դեմին ներխուժելու համար։ Ինչ վերաբերում է Հարավային Իրանին, որի նավթաբեր շրջանները գայթակղեցուցիչ խայծ էին Թուրքիայի և Գերմանիայի համար[131], այն պետք է դառնար առանձին պետություն։ Հետագայում Հյուսիս-իրանական և Հարավ-իրանական այդ երկու պետությունները, բան երիտթուրքերի պլանների, կարող էին կազմել ունիա, որպեսզի Առաջավոր Ասիայի պետությունների հետ համատեղ մտնեին թուրանական միավորումների՝ «Մեծ Թուրքիայի մեջ»[132]։

---

[130] *A. Toynbee*, Turkey. A past and a future, New York, 1917, pp. 34—35.

[131] *Ulrich Gehrke*, Persien in der deutschen Orientpolitik Während des Ersten Weltkriges, Bd. 1, Stuttgart, 1960, s. s. 136—138.

[132] *Joseph Pomiankowski*, Der Zusammenbruch des Ottomanischen Reiches, Zürich-Leipzig-Wien, 1928, ss. 25—29.

Թուրքիան նախատեսում էր Իրանը լրիվ իր ազդեցությանը ենթարկելուց հետո ստիպել նրան պատերազմի մեջ մտնել կենտրոնական պետությունների կողմում։ Հատկապես ծրագրված էր Իրանի տերիտորիան օգտագործել որպես գործողությունների բազա դեպի Աֆղանստան և Հնդկաստան արշավանք կազմակերպելու համար[133]։

Կարևոր նշանակություն էր տրվում նաև Իրանի սահմանակից Թուրքեստանի մարզի, մասնավորապես անդրկասպյան նահանգի թուրքմեն բնակչությանը, որոնք պանթուրքիստների կարծիքով, «լեզվով և ծագմամբ առավել մոտ էին անատոլիական թուրքերին», Ռուսաստանի դեմ ոտքի հանելու հարցին[134]։

Արտահայտվելով Էնվեր փաշայի գլխավորությամբ թուրքական ստրատեգների մշակած վերոհիշյալ ծրագրերի մասին Հինդենբուրգը իր հուշերում գրում էր. «...Պարսկաստանում և Անդրկովկասում օսմանյան պլանների իրագործումը մտնում է մեր շահերի մեջ»[135]։

Սակայն Գերմանիան իր հերթին ուներ Մերձավոր և Միջին Արևելքի նկատմամբ իր սեփական նախագծերը, որոնք, ըստ էության, հակասում էին Թուրքիայի մշակած պլաններին։ Գերմանական իմպերիալիզմը իր առջև խնդիր էր դրել Մերձավոր և Միջին Արևելքում Անտանտի դեմ հաղթանակ ձեռք բերելուց հետո վերոհիշյալ բոլոր տերիտորիաները միավորել իր գերիշխանության տակ և զրկել «դաշնակից ու բարեկամ» Թուրքիային իր բաժնից։ Այդ բանը սկսեցին կռահել նաև թուրքական կառավարող շրջանները։ Պատահական չէ, որ արդեն 1915 թ. Օսմանյան կայսրությունը մշակեց մահմեդական երեք պետությունների՝ Թուրքիայի, Իրանի և Աֆղանստանի ռեգիոնալ եռյակ դաշինքի նախագիծ՝ առանց Գերմանիայի մասնակցության։ Այդ ծրագրի հիմնական նպատակն էր բացառել Գերմանիայի վճռական դերը «արևելյան գործերում»[136]։

---

[133] *Г. Гельбрас*, Крах фашистской авантюры в Иране. «Исторический журнал», М., 1942, № 3—4, стр. 61.

[134] *Gerold von Gleich*, Vom Balkan nach Bagdad. Militärischpolitische Erinnerungen an den Orient,, Berlin, 1921, s. 101.

[135] «Воспоминания Гинденбурга», Пг., 1922, стр. 104.

[136] *Fritz Fischer*, Griff..., ss. 141—142.

Գերմանական իմպերիալիզմը անվերապահորեն հավանություն տվեց Էնվեր փաշայի մշակած պլաններին, որովհետև դրանք ռեալ չլինելով հանդերձ ի վիճակի էին ռուսական խոշոր ուժեր գամել Կովկասին, իսկ Անգլիային ստիպել զգալի քանակությամբ զորքեր պահել Սուեզի ջրանցքի գոտում[137]։

Պատրաստվելով մտնել պատերազմի մեջ, երիտթուրքական կառավարող շրջանները հույս ունեին նաև փրկել իրենց վարչակարգը և պահպանել սուլթան-խալիֆի և թուրքական բուրժուազիայի, կալվածատերերի ու հոգևորականության բլոկի տիրապետությունը սևփական ժողովրդի և բարբարոսաբար ճնշվող ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ[138]։ Թուրքական պատմաբան Էմին Ահմեդի արտահայտությամբ եռապետությանը անհրաժեշտ էր արտաքին հաջողություն, փայլուն ռազմական սխրագործություն, որպեսզի երկրում ստանար աջակցություն և միավորեր իր ուժերը[139]։

Բրիտանական և ֆրանսիական կառավարությունները հակված էին կարծելու, որ առանձին սպառնալիք չկա եվրոպական կոնֆլիկտը Մերձավոր և Միջին Արևելքում տարածվելու և Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու ուղղությամբ։ Վերջինիս ֆինանսա-տնտեսական կախվածությունը իրենցից բավարար երաշխիք էր համարվում այն բանի համար, որպեսզի Օսմանյան կայսրությունը պահպանի չեզոքություն[140]։ Այդ տեսակետից անգլիացիներին ավելի մեծ հանգստություն էր ներշնչում Իրանը, որտեղ Ռուսաստանը և Անգլիան հանդես էին գալիս որպես այդ երկրի իսկական տերեր։ Մյուս կողմից Ֆրանսիան, որին անհրաժեշտ էր, որպեսզի ռուսական զորքերի զերակշռող մասը ռազմական գործողություններ ծավալի պատերազմի եվրոպական թատերաբեմում և դրանով իսկ թեթևացնի իր վիճակը, հավաստիացնում էր Ռուսաստանին, որ Իրանը զերծ է թուրքական ներխուժման վտանգից։

Սակայն, չնայած այս կարգի բոլոր հավաստիացումներին,

---

137 *Е. Ф. Лудшувейт*, նշվ. աշխ., էջ 51։

138 նույն տեղում, էջ 24։

139 *Emin Ahmed*. Turkey in the World War, Oxford, 1930, p. 68.

140 *А. Ф. Миллер*. Вступление Турции в первую мировую войну «Изв. АН СССР, сер. ист. и философии», 1946, № 4, стр. 322.

ցարական արտաքին քաղաքականության զեկավարները և դիվանագիտությունը, որոնց քաջ հայտնի էին և՛ Թուրքիայի ագրեսիվ ռազմաշունչ ձգտումները Իրանի և Կովկասի նկատմամբ, և՛ Իրանում գոյություն ունեցող հակառուսական տրամադրությունները, գտնում էին, որ հնարավոր է, որ Օսմանյան կայսրությունը և նույնիսկ Իրանը թշնամական բլոկի կողմից ներգրավվեն ռազմական գործողությունների մեջ։ Այս տեսակետը հատկապես եռանդուն պաշտպանում էին Վորոնցով-Դաշկովը, Կովկասի ռազմական շրջանի շտաբը և Իրանական Ադրբեջանում ռուսական զորքերի հրամանատարությունը։ 1914 թ. օգոստոսի 15-ին Իրանում ռուսական զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Վորոպանովը Ջուլֆայից Կովկասյան ռազմական շրջանի զորքերի գլխավոր հրամանատարին գրում էր. «Թեև Թուրքիան դեռևս պահպանում է չեզոքություն, այնուհանդերձ նրա մտադրությունները բավականաչափ որոշակի են... Պարզ է, որ գործողությունների առաջին օբյեկտ է հանդիսանալու Ադրբեջանը, մանավանդ, որ պարսկական կառավարությունը և Մակուի սարդարը վաղօրոք կապերի մեջ են մտել Թուրքիայի և Գերմանիայի հետ, նրանց օգնությամբ ռուսներին Ադրբեջանից դուրս մղելու նպատակով»[141]։

Այս տեսակետի հետ միանգամայն համաձայն էին նաև Պետերբուրգում և պատահական չէ, որ 1914 թ. օգոստոսի 2/15 գրագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ, գեներալ Յանուշկևիչը հեռագրով հրամայեց Վորոպանովին «Թուրքերի կողմից իրանական սահմանը անցնելու դեպքում, եթե նույնիսկ չնկատվի ուղղակի թշնամական գործողություններ ռուսական զորքերի նկատմամբ, նրանց դիմավորել մարտով»[142]։

Ցարական կառավարությանը հատկապես մեծ մտահոգություն էր պատճառում համառ կերպով շրջող այն լուրը, որ իբր Իրանի և

---

[141] ЦГИА Груз. ССР, ф. 9, оп. 3, д. 35, л. 198. Մակուի սարդարի հակառուսական գործունեությունը վնասազերծելու համար 1914 թ. հուլիսին փոխ-հյուպատոս Ս. Օլֆերևը ձերբակալեց նրան և ուղարկեց Թիֆլիս։ Սարդարի պաշտոնում նշանակվեց թրդական ցեղապետներից մեկը, որը նախապես հանդիսանում էր ռուսական գործակալ (ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 3796, л. 35).

[142] Նույն տեղում։

Թուրքիայի միջև կնքվել է գաղտնի համաձայնագիր, ըստ որի Իրանը Թուրքիային է զիջում Ուրմիայի նահանգը, որի փոխարեն Բ. Դուռը խոստացել է պատերազմի ընթացքում աջակցություն ցույց տալ Իրանին[143]։

Պետերբուրգին լրջորեն անհանգստացնում էր նաև այն, որ Մոսթոֆի-օլ-Մամալեքի կառավարությունը, որը կազմվեց 1914 թ. օգոստոսին, կայուն զիրք չէր գրավում պատերազմող կոալիցիաների նկատմամբ և վարում էր հավասարակշռելու քաղաքականություն, իսկ Մեջլիսում դեմոկրատները, որոնք ունեին զգալի մեծամասնություն, ըստ էության հանդիսանում էին գերմանական գործակալներ։

Ռուսաստանի համար անհրաժեշտ էր, որ ինչ գնով էլ լինի պահպանվի Իրանի չեզոքությունը։ Այդ պատճառով ցարական արտաքին գործերի մինիստրությունը որոշեց այդ ուղղությամբ կատարել գործնական քայլեր։ Սազոնովը Լոնդոնում հարց բարձրացրեց, որ անհրաժեշտ է հասկացնել շահական կառավարությանը, որ Թուրքիայի հետ ռազմական բախման դեպքում Ռուսաստանին և Անգլիային աջակցություն ցույց տալու դիմաց այս երկու պետությունները կերաշխավորեն Իրանի տերիտորիալ ամբողջականությունը և բացի այդ նրան կհանձնեն շիիթների սրբազան քաղաքներ Քարբալան և Նաջաֆը։ Սազոնովի կարծիքով միաժամանակ անհրաժեշտ էր խստորեն նախազգուշացնել շահական կառավարությանը, որ հակառակ դեպքում «ամեն տեսակի դավերը Իրանի համար կարող են ունենալ կործանարար հետևանքներ»[144]։

Թուրքիան և Գերմանիան ամենաեռանդորեն ուժեղացնում էին իրենց քայքայիչ դիվերսիոն-լրտեսական աշխատանքը Իրանում, որը ղեկավարվում էր գլխավորապես Էրզրումից և Բաղդադից։ Նրանք հատկապես շարունակում էին տենդորեն գինել քրդական ցեղերին։ 1914 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին «Միասնություն և Առաջադիմություն» կուսակցության Ադրբեջանի և Արևելյան Կովկասի գլխավոր «հրահանգիչ» Էմեր Նաջի բեյը, որը գոր-

---

[143] ЦГИА Груз. ССР, ф. 9, оп. 3, д. 35, л. 198.

[144] *Ulrich Gehrke*, Persien in der Deutschen Orientpolitik. ss.. 16—17;

ծում էր մի կողմից երրորդ բանակի շտաբի, մյուս կողմից գերմանական հետախույզ Մաքս ֆոն Շեյբներ-Ռիխտերի հետ սերտ համագործակցությամբ բանակցությունների մեջ մտավ քրդական հայտնի առաջնորդ Էմեր Հեշմաթի հետ, որը ժամանել էր Էրզրում քրդերից անկանոն պարտիզանական ջոկատներ կազմակերպելու վերաբերյալ բանակցություններ վարելու համար[145]։ 1914 թ. սեպտեմբերի 20-ից սկսած Թուրքիան Իրանական Ադրբեջանում և Քրդստանում թուրք-քրդական ջոկատների օգնությամբ հրահրեց «փոքր պատերազմ»։ Այդ ջոկատներին սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում նույնիսկ հաջողվեց գրավել Սալմաստի, Բարադոստի և Թերգևերի շրջանները[146]։ Լարված դրություն էր տիրում նաև Ուրմիայի շրջանում։ 1914 թ. սեպտեմբերի 25-ին Վվեդենսկին Իրանից հաղորդում էր. «Նահանգում (Ուրմիայում—Վ. Բ.) ընդհանուր վիճակը վատթարանում է։ Պարսիկները, որոնք ինչ-որ համաձայնագրով կապված են թուրքերի հետ, Թավրիզից ոչ մի միջոցառում չեն ձեռնարկում։ Կարելի է ասել, մեր ազդեցությունից դուրս են եկել Բարադոստը, Մերգևերը, Թերգևերը և Դեշթը։ Ուշնուում ագիտացիայի ազդեցության տակ նկատվում է տատանում։ Նահանգապետը խնդրում է օգնություն... Քրդերը այրում ու ավերում են քրիստոնեական տաճարները... Նահանգը գտնվում է թուրքական, ֆիդայական և քրդական ֆանատիկ բանդաների ակներև ներխուժման նախօրյակին»[147]։

Այսպիսով ցարիզմի բացասական դիրքորոշումը օսմանյան լծի դեմ քրդական ազգային-ազատագրական շարժման նկատմամբ ունեցավ այն հետևանքը, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Իրանի քրդական զանգվածները թուրքական պրոպագանդայի ազդեցության տակ զինված պայքարի դուրս եկան Ռուսաստանի դեմ։ Բացահայտելով դրա ներքին պատճառները Վ. Մինորսկին 1916 թ. ապրիլին գրում էր. «Ուրմիայի շրջանում մեր նկատմամբ քրդերի

---

[145] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3860, л. 101.

[146] *J. de Morgan*, Contre les barbares de l'Orient, Paris, 1918, p. 190.

[147] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3851, л. 47; МОЭИ, серия III, т. IV, ч. I, М.—Л., 1935, стр. 412.

մոլի թշնամանքը բացատրվում է մեր տեղական բաղաքականության մշտական տատանումներով այն ժամանակներում, երբ պատերազմից առաջ մեր ջոկատները կատարում էին ոստիկանական ծառայություն»[148]։

Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Իրանում, որը խորը դժգոհության տեղիք էր տվել ինչպես դեմոկրատական խավերի ու առհասարակ ժողովրդական զանգվածների, այնպես էլ երկրի կառավարող շրջանների մոտ, պատճառ հանդիսացավ այն բանի, որ համաշխարհային պատերազմի ընթացքում ցարական Ռուսաստանը չկարողացավ կայուն հենարան ստեղծել իր համար Իրանական Ադրբեջանում և Քրդստանում։ Թեև 1914 թ., այսպես կոչված, «Ադրբեջանական ճակատը» ամրապնդելու նպատակով Ռուսաստանը ձեռնամուխ եղավ մի շարք ակտիվ միջոցառումների[149], սակայն, ուշացումով կատարված այդ միջոցառումները բավարար չէին պատանեշ ստեղծելու համար Իրանում Օսմանյան կայսրության ագրեսիվ ձգտումների դեմ։

Թուրքական դիվանագիտությունը ճարպկորեն օգտվեց Իրանում Ռուսաստանի հեղինակության անկումից և եռանդագին սկսեց աշխատել նրան պատերազմի մեջ ներգրավելու, կամ ծայրահեղ դեպքում պատերազմի ընթացքում նրա աջակցությունը ստանալու ուղղությամբ։ Դրա ակներև վկայությունն էր այն, որ 1914 թ. հոկտեմբերին լուրեր տարածվեցին, թե Թուրքիայի և Իրանի միջև ար-

---

[148] АВПР. ф. «Персидский стол Б», 1913—1917, оп. 489, д. 563, лл. 466—467.

[149] Ռուսական իշխանությունները ձերբակալեցին այն բոլոր իրանական ֆեոդալներին, որոնք նախապես արդեն հայտնի էին Թուրքերի հետ ունեցած իրենց կապերով։ Այնուհետև ռազմագիտական կարևոր հանգույցներում ուժեղացվեցին ռուսական զորամասերը, ռուսասիրական ձգտումներ ունեցող տեղական բնակչությանը, հատկապես հայերին և ասորիներին բաժանվեց զենք և այլն (տե՛ս J. de Morgan, Contre les barbares..., թ.թ. 190—191։ ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 3851, лл. 45—46, 75). Ցարական դիվանագետները փորձեր էին անում նաև Սարգար Ռաշիդի գլխավորությամբ կազմակերպել 20 հազարանոց քրդական կորպուս, իսկ Շոջա-էդ-Դոուլեի միջոցով Թուրքերի դեմ ոտքի հանել Ղարագազի, Սերաբի և Խալխալի ցեղերին (ЦГИА Груз. ССР, ф. 9, оп. 3, д. 34, л. 15).

դեն կայացել է համաձայնություն, ըստ որի Իրանը զիջում է Ուրմիայի նահանգը, որի դիմաց Սամսրոլը խոստանում է ամեն տեսակի աջակցություն[150]։

1914 թ. հոկտեմբերի 4-ին Ուրմիայում փոխ-հյուպատոս Վվեդենսկին տեղեկացնում էր, որ տեղի թուրքական փոխ-հյուպատոս Ռահիբ բեյին Թեհրանից հանձնարարված է գաղտնաբար բացատրվել Ուրմիայի նահանգապետի հետ այն իմաստով, որ գուր է նա դրսևորում համառություն ռուսական շահերը պաշտպանելու մեջ. 1) դրանով նա դեմ է գնում Թեհրանի ցանկություններին, որը կապված է Թուրքիայի հետ հատուկ խոստումներով և 2) Ադրբեջանում ռուսական հատուկ շահերի հարցը ավելի շուտ կլուծվի հօգուտ Թուրքիայի, որն ունի լիիրավ իրավունքներ այդ նահանգի նկատմամբ, որ իսլամը պետք է քաղաքականապես միավորի Իրանն և Թուրքիան ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ[151]։ Վվեդենսկու այս հաղորդագրությունից մի քանի օր հետո հայտնի դարձավ, որ պատերազմում Իրանին կենտրոնական պետությունների կողմը գրավելու նպատակով 1914 թ. հոկտեմբերին Սամսրոլում բանակցություններ են սկսվել մի կողմից՝ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի, Էնվերի ու Թալյաթի, իսկ մյուս կողմից՝ Սամսրոլում իրանական դեսպան Միրզա Մահմուդ խանի միջև։ Բանակցությունների ընթացքում թուրքական կողմը աշխատում էր համոզել շահական դեսպանին, որ պատերազմի ընթացքում Թուրքիայի և Գերմանիայի կողմը չանցնելու դեպքում Իրանը կուլ կգնա Ռուսաստանին և առմիշտ կկորցնի իր քաղաքական ինքնուրույնությունն ու անկախությունը։ Թուրքական կողմը առաջարկում էր համաձայնագրի հետևյալ նախագիծը. պարսիկները Գերմանիայի և Թուրքիայի օգնությամբ կազմակերպում են 100 հազարանոց մի բանակ, փոխարենը Իրանը պարտավորվում է Թուրքիային զիջել Ուրմիայի նահանգի վիճելի մասը։ Թուրքիան և Իրանը Իրանական Քրդստանի քրդական ցեղերից կկազմակերպեն հեծելազորային

---

150 ЦГВИА, ф. 2003, оп. 2, д. 776, л. 93.

151 АВПР, ф. «Канцелярия МИД», 1914, д. 42, л. 158.

պնդեր, իսկ Գերմանիան նրանց կմատակարարի զենք և դինվորական հրահանգիչներ[152]։

Չնայած երիտթուրքական կառավարության բոլոր ջանքերին, բանակցությունները դրական արդյունքներ չտվեցին, որովհետև շահական կառավարությունը խոհեմաբար զերադասեց ձեռնպահ մնալ պատերազմին մասնակցելուց[153]։

Դրանից հետո Թուրքիան որոշեց ընդլայնել, այսպես կոչված, «փոքր պատերազմը» Իրանում։ Իրանական տերիտորիայում Թուրքիան Ռուսաստանի դեմ ռազմական գործողություններ սկսեց փաստորեն 1914 թ. հոկտեմբերի 12-ից[154], այսինքն՝ մինչև ռուսական սևծովյան նավատորմի վրա հարձակվելն ու Ռուսաստանին պատերազմ հայտարարելը։

1914 թ. հոկտեմբերի 12-ին, Իրանում Թուրքական և ռուսական զորքերի միջև առաջին ռազմական բախումից հետո, ցարական զերագույն զլխավոր հրամանատարի շտաբի պետը անմիջապես դիմեց կառավարությանը, խնդրելով համապատասխան հրահանգներ։ Մինիստրների խորհրդում հարցը քննարկման ենթարկելուց հետո ռազմական մինիստր Սուխոմլինովը Նիկոլայ II-ին ներկայացրեց զեկուցագիր մինիստրների խորհրդի ընդհանուր որոշման մասին, որտեղ ասվում էր. «Ռուսաստանը փաստորեն պատերազմի մեջ է գտնվում Թուրքիայի հետ, թեև պատերազմի հայտարարություն դեռևս չի արվել։ Կ. Պոլսում կայսերական դեսպանին կարգադրված է դեսպանատան և հյուպատոսությունների ատաշեանավորների հետ մեկնել Թուրքիայից։ Պարսկաստանը անընդունակ է դիմադրություն ցույց տալ Թուրքիային և Ռուսաստանը չպետք է թաշվի շեղոքության նկատառումներից պատերազմ հայտարարելու Պարսկաստանին»։ Հոկտեմբերի 17-ին ցարը այս զեկուցագրի վրա մակագրեց «համաձայն եմ» և այն հաղորդվեց զլխավոր հրաման-

---

[152] АВПР, ф. «Политархив», 1914, д. 4068, л. 261; ф. «Персидский стол Б», 1913—1914, д. 563, л. 221. *Ցիտված է ըստ М. С. Лазарев, Նշվ. աշխ., էջ 299։*

[153] *Տե՛ս Իրանական կառավարության պաշտոնական հրատարակությունը («Կանաչ գիրք»)* بیطرفی ایران، جلد ۱ ص ۳۰

[154] АВПР, ф. «Канцелярия МИД», 1914, д. 42, л. 173.

նատարի շտաբին՝ ի գեկավարություն[155]։ Հոկտեմբերի 19-ին գերագույն գլխավոր հրամանատարը հրամայեց Իրանում ռուսական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Վորոպանովին Ադրբեջանում ձերբակալել բոլոր գերմանական, ավստրիական և թուրքական հյուպատոսներին[156]։

Այսպիսով, «ըստ էության հենց Իրանական Քրդստանում և ոչ թե Սև ծովում դղրդացին համաշխարհային պատերազմի առաջին կրակոցները Մերձավոր Արևելքում»[157]։

Սև ծովում թուրքական նավատորմի կողմից ռուսական նավերի և առափնյա քաղաքների վրա հարձակումից հետո (հոկտեմբերի 29-ին) փաստորեն Ռուսաստանը և Թուրքիան արդեն գտնվում էին պատերազմական վիճակում։

1914 թ. նոյեմբերի 2-ին Իրանը պաշտոնապես հայտարարեց պատերազմում իր չեզոքության մասին։ Ընդ որում, իր չեզոքությունը պաշտպանելու հարցում շահական կառավարությունը հիմնական և առաջնահերթ խնդիր էր համարում ռուսական զորքերի դուրս բերումը երկրից[158], միանգամայն անտեսելով այն սպառնալիքը, որ կախված էր Իրանի չեզոքության վրա Թուրքիայի կողմից։ Մինչդեռ վերջինս բնավ չէր թաքցնում իր ագրեսիվ մտադրությունները Իրանի նկատմամբ։ Նրա չեզոքության խախտումը նախապատրաստելու նպատակով երիտթուրքական կառավարությունը իր հերթին պարտավոր էր դարձնում ռուսական զորքերի ներկայությունը Իրանում[159]։

Թուրքական կառավարությունը միաժամանակ մեծ աշխատանք սկսեց ծավալել Իրանը Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներգրավելու համար։ Նախ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ սուլթան-խալիֆի կրոնական հեղինակությունը տարածվում էր միայն սուննիթների վրա և հետևաբար Անտանտի պետությունների դեմ «սրբազան պատերազմի» կոչը կարող էր անարձագանք

---

155 ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 3796, л. 155.

156 МОЭИ, серия III, т. IV, ч. 2, М.—Л., 1935, стр. 31.

157 *М. С. Лазарев, Նշվ. աշխ., էջ 299։*

158 *Տե՛ս Կորոստովեցի 1914 թ. նոյեմբերի 11-ի № 580 գաղտնի հեռագիրը Սազոնովին* (ЦГВИА, ф. 2000с. оп. 1.л՝ 3860, лл. 220—221).

159 *Նույն տեղում։ Տե՛ս նաև* МОЭИ, серия III, т. VI, ч. 2, стр. 132.

մնալ շիիթների շրջանում, իթթիհադը հորդորեց Քարբալայի և Նաջաֆի շիիթական «մեծ մուջտեհիդներին» հրապարակել ջիհադի ֆեթվա նաև շիիթների համար։ 1914 թ. նոյեմբերի 13-ին հրապարակվեց Իրանի շիիթ-մահմեդականների բարձր հոգևոր հեղինակությունների այդ ֆեթվան, որտեղ կոչ էր արվում սրբազան պատերազմի դուրս գալ այն պետությունների դեմ, որոնք ցանկանում են հանգցնել «իսլամի լույսը»[160]։ Վերոհիշյալ մուջտեհիդները միաժամանակ հեռագրերով դիմեցին շահին, նահանգապետներին, իրանական բարձր հոգևորականությանը և այլն, որոնցում կոչ էին անում միանալ պանիսլամիստական շարժմանը և հայտարարել սրբազան պատերազմ Անտանտի դեմ։ Դրանով, նրանց կարծիքով, կապահովվեր Իրանի քաղաքական ու կրոնական անկախությունը, իսկ հակառակ դեպքում նա կկործանվեր[161]։

Թուրքական գործակալությունը հատկապես կարևոր նշանակություն էր տալիս իրանական հոգևորականությանը պրոթուրքական քաղաքական գործունեության մեջ ներգրավելու հարցին։ Թուրքական գործակալության ակտիվ մասնակցությամբ բազմաթիվ քաղաքներում՝ Թավրիզում, Սպահանում, Ռեշտում և այլն ստեղծվեցին «Իսլամի միասնության» («Էթթեհադ իսլամ») պանիսլամիստական կոմիտեներ, որոնք միավորում էին բուրժուա-ազգայնական տարրերին և շիիթական հոգևորականությանը։ Այդ կոմիտեների ղեկավարող օրգանն էր «Էթթեհադ իսլամ»-ի կենտրոնական կոմիտեն, որի մեջ մտնում էին առևտրական բուրժուազիայի, կալվածատերերի, հոգևորականության և ազգայնական մտավորականության ականավոր ներկայացուցիչները։ Կոմիտեների հիմ-

---

[160] *L. Miroschnikow*. Iran in World War 1, Moscow, 1963, p. 39; „Die Welt des Islams", Berlin, 1915—1916, Bd. 3, N. 3/4. s. s. 205—213.

[161] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 3860, л. 192. Հարկ է նշել, որ ջիհադի այս կոչերը ցանկալի տպավորություն չգործեցին իրանական ժողովրդի վրա։ Ավելին, այդ կոչերը նույնիսկ առաջ բերեցին հոգևորականության որոշ ներկայացուցիչների դիմադրությունը։ Այսպես, օրինակ, Թավրիզի մուջտեհիդ Հաջի Միրզա Հասան աղան և Թեհրանի նախկին իմամ Ջումա Հաջի Միրզա Արդուլ Ղասեմը իրենց պատասխան հեռագրով համոզում էին Նաջաֆի և Քարբալայի մուջտեհիդներին դադարեցնել իրենց «անմիտ ագիտացիան, որովհետև առանձին վնաս չհասցնելով ռուսներին, այն միայն կկործանի Պարսկաստանը» (ЦГИА Груз. ССР, ф. 9, оп. 2, д 14, л. 63).

նական պահանջն էր «սրբազան պատերազմը» հանուն «իսլամի պաշտպանության» և ցարական Ռուսաստանի դեմ պայքարի[162]։

«Սրբազան պատերազմի» օգտին ագիտացիայի հետ միաժամանակ Օսմանյան կայսրության և Գերմանիայի գործակալությունը Իրանում աշխատում էր Թուրքիային և Գերմանիային ներկայացնել որպես ռուսական և անգլիական լծից Իրանի ազատագրման կողմնակիցներ, խաղում էր իրանական ժողովրդի ազգային զգացումների հետ, աշխատում օգտագործել այդ երկրում հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական շարժումները և այլն։

Ռուսաստանը որոշեց կանխել Թուրքիային Իրանական Ադրբեջանը և Քրդստանը գրավելու հարցում։ Սակայն այդ խնդիրը իրականացնելու համար ցարական կառավարող շրջանները որոշեցին նախապես ստանալ բրիտանական կառավարության համաձայնությունը։

1914 թ. նոյեմբերի 6-ին Սազոնովը կարգադրեց Լոնդոնում դեսպան Բենկենդորֆին հայտնել Ֆորին Օֆիսին, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իրանական Ադրբեջանը հանդիսանում է ռազմական գործողությունների բաղա թշնամու թիկունքը դուրս գալու համար, անհրաժեշտ է շտապել օգտվելու այդ նահանգի ռազմագիտական առավելություններից։ Հետևաբար Թուրքիայի դեմ գործող ռուսական զորքերը ստիպված են խախտել Իրանի չեզոքությունը[163]։

Սակայն անգլիական կառավարությունը և մասնավորապես Էդուարդ Գրեյը հավանություն չտվեցին այդ որոշմանը։ Հիշյալ հարցին վերաբերող իր պատասխանի մեջ Գրեյը ասդնապ էր հայտնում, որ Ռուսաստանի ներխուժումը այդ չեզոք մահմեդական երկիրը կարող է տեղիք տալ Անտանտի դեմ Արևելքի մահմեդականների բուռն հուզումների[164]։ Բրիտանական կառավարությա-

---

[162] *М. Н. Иванова*, Национально-освободительное движение в Иране в 1918—1922 гг., М., 1961, стр. 11—12.

[163] *В. В. Готлиб*, Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, стр. 97—98.

[164] «Константинополь и проливы. По секретным документам бывшего Министерства иностранных дел», т. I, № 18, стр. 228.

նը ոչ պակաս տագնապ էր ներշնչում նաև այն, որ Օսմանյան կայսրության դեմ ռուսական զորքերի հարձակողական գործողությունները Իրանական Ադրբեջանից կարող են տարածվել նաև Միջագետքի վրա, որը հնարավորություն կտար Ռուսաստանին այդ շրջաններում ձեռք բերել ռազմական հեղեմոնիա։ Գրեյի անհանգստության մյուս պատճառն այն էր, որ Թուրքական ճակատի նկատմամբ Ռուսաստանի ուշադրության կենտրոնացման հետևանքով եվրոպական ճակատում կթուլանար Գերմանիայի դեմ ռուսական ջանքերի թափը։ Այդ պատճառով Բենկենդորֆի հետ ունեցած զրույցի ընթացքում Գրեյը անընդհատ շեշտում էր, որ պատերազմի հիմնական նպատակն է Գերմանիայի ջախջախումը[165]։ Դրան նա ավելացնում էր, որ դժվար թե Թուրքիան խախտի Իրանի չեզոքությունը, որովհետև Գերմանիան այդ թույլ չի տա թեկուզ և այն պատճառով, որպեսզի իրանական չեզոքության խախտման բոլոր հետևանքները շրջի Անտանտի դեմ[166]։

Ռուսաստանին իր վերոհիշյալ մտադրություններից հետ պահելու համար Բրիտանական արտաքին գործերի ղեկավարը նույնիսկ սպառնում էր, որ եթե նա համառի, ապա Անգլիան ստիպված կլինի Արևելք ուղարկել գերակշռող ուժեր, որի հետևանքով լավագույն դեպքում կթուլանա արևմտյան ճակատը, իսկ վատագույն դեպքում կսկսվեն բախումներ դաշնակիցների միջև[167]։ Նոյեմբերի 9-ին Գրեյը կրկին «խորհուրդ» էր տալիս Ռուսաստանին վարել «ավելի սպասողական տակտիկա» և Թուրքիայի վրա գրոհել Կովկասի կողմից՝ չխախտելով իրանական սահմանը[168]։

Մի քանի օր անց, նոյեմբերի 15-ին, Թեհրանում անգլիական դեսպանորդ Վ. Թոունլեյը Կորոստովեցի հետ հատուկ զրույցի ժամանակ հայտարարում է, որ նպատակահարմար կլիներ, եթե ռուսական զորքերը դուրս բերվեին Մազանդարանից և Խորասանից և թողնվեին միայն Ադրբեջանում։ Ռուսական դեսպանորդը առարկեց

---

165 МОЭИ, серия III, т. VI, ч. 2, М.—Л., 1935, стр. 45. (*Տե՛ս Բենկենդորֆի 1914 թ. նոյեմբերի 9-ի (հոկտեմբերի 27-ի) N 484 հեռագիրը Սազոնովին։*

166 *Նույն տեղում, էջ 46։*

167 «Константинополь и проливы», т. I, № 18, стр. 228; *Տե՛ս նաև* МОЭИ, серия III, т. VI, ч. 2, стр. 45—46.

168 «Константинополь и проливы», т. I, № 18, стр. 228.

այդ առաջարկությանը, գտնելով, որ այդ քայլը կարող է մեկնաբանվել որպես թուլության նշան և նպաստել Իրանում թուրքոֆիլական կուսակցության գործունեության աշխուժացմանը[169]։ Բրիտանական դեսպանորդի այս պահանջը աջակցություն գտավ նաև շահական կառավարության կողմից, որը, ըստ երևույթին, նախապես տեղյակ էր անգլիական այդ առաջարկության բովանդակությանը։ Կորոստովեցի հետ զրույցի ժամանակ վկայակոչելով այն փաստը, որ թուրքական դեսպանը բացատրություն է պահանջում շահական կառավարության գործելակերպի վերաբերյալ այն դեպքում, եթե ռուսական զորքերը շարունակեն մնալ Իրանում, Մոսթոֆի-օլ-Մամալիքը հայտարարում է, որ Թուրքիան նման իրադրության պայմաններում մտադիր է հաշվի չնստել Իրանի շահերի հետ։ Դրան պրեմիեր-մինիստրը ավելացնում է, որ ինքը չի կարող հաշվի չնստել թուրքական ապառնալիքների հետ, որը գործնականում կարտահայտվեր նաև նրանում, որ հոգևորականությունը և դեպի Թուրքիան կողմնորոշվող տեղերը կարող են ապստամբել կառավարության դեմ։ Այդ պատճառով նա խնդրում էր, որպեսզի ռուսական զորքերը դուրս բերվեն թեկուզ Մազանդարանից և Խորասանից[170]։

Անշուշտ այս պահանջի իրագործումը նշանակելու էր, որ Ռուսաստանը պետք է համաձայնի հանուն բրիտանական շահերի՝ Թուրքիայի հետ պատերազմում նախաձեռնությունը տա Անգլիային և զիջի իր դիրքերը Իրանում։ Այդ պատճառով ցարական կառավարությունը որոշեց այլևս վերոհիշյալ հարցով չխորհրդակցել իր դաշնակցի հետ և իր մտադրությունները ուղղակի հայտնել շահական կառավարությանը։ Այցելելով Մոսթոֆի-օլ-Մամալիքին Կորոստովեցը հայտնում է նրան, որ Պետերբուրգից հրահանգ է ստացել հայտարարելու իրանական կառավարությանը, որ թեև Թուրքիայի հետ դեռևս պատերազմ չի հայտարարված, սակայն այն սկսվելուց հետո Կովկասի պաշտպանության համար ռուսները ստիպված կլինեն Ադրբեջանի սահմաններում սկսել որոշ ռազմա-

---

[169] МОЭИ, серия III, т. VI, ч. 2, М.—Л., 1935, стр. 131—132.

[170] Նույն տեղում, էջ 123։

կան գործողություններ։ Ընդ որում, նա նախազգուշացնում էր, որ իրանական կառավարությունը չպետք է այդ գործողությունները համարի իր դեմ ուղղված ակտ[171]։

Մինչդեռ Ռուսաստանը Իրանի չեզոքության պահպանման հարցի վերաբերյալ շարունակում էր դիվանագիտական գրագրությունը շահական կառավարության հետ, Թուրքիան խախտեց այդ չեզոքությունը։ 1914 թ. նոյեմբերի 21-ին գեներալ ֆոն Սանդերսի և Շուքրի փաշայի հրամանատարության տակ գործող թուրքական զորքերը ու քրդական անկանոն ջոկատները Մոսուլի, Սոուջբուլաղի և Խոյի կողմից խախտեցին իրանական սահմանը և ռազմական գործողություններ սկսեցին ռուսական, ադրբեջանական ջոկատի դեմ։

Մոսթոֆի-օլ-Մամալեքի կառավարությունը ոչ միայն չփորձեց դիմադրություն ցույց տալ զավթիչներին, այլև խիստ ցուցում տվեց պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր կձեռնարկեն այդպիսի փորձեր։

Այս պայմաններում Պետերբուրգը որոշեց անհապաղ դիմել հակամիջոցների Արևմտյան Իրանում թուրքական առաջխաղացումը կասեցնելու համար։ Գեներալ Չերնոզուբովին հրամայվեց «Ադրբեջանական ջոկատը» շարժել Խոյի, Ուրմիայի և Սոուջբուլաղի ուղղությամբ[172]։

Այսպիսով իրանական տերիտորիան վերածվեց իմպերիալիստական երկու բլոկների պետությունների ռազմական գործողությունների ասպարեզի։

Առաջինը խախտելով իրանական չեզոքությունը և նետվելով համաշխարհային պատերազմի մեջ, երիտթուրքերի ռազմա-միլիտարիստական կառավարությունը ձգտում էր զենքի ուժով և իր դաշնակցի՝ գերմանական իմպերիալիզմի ամենաակտիվ աջակցությամբ Իրանի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և Աֆղանստանի նկատմամբ իրագործել իր պանիսլամիստական ծրագիրը և կենսագործել «Մեծ թուրքական կայսրություն» ստեղծելու իմպերիալիստական պանթուրքական դաղափարը։

---

[171] ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 3860, л. 208.

[172] W. Litten, Persische Flitterwochen, Berlin, 1925, s. 76.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ Առաջին—Թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների պատմությունից 9
Գլուխ Երկրորդ—Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Իրանում 1905—1908 թթ. և մեծ պետությունների դիրքորոշումը . . 51
Գլուխ Երրորդ—Երիտթուրքական կառավարության էքսպանսիոնիստական քաղաքականությունը Իրանում և Թուրքական բանակի հակահեղափոխական ինտերվենցիան 142
Գլուխ Չորրորդ—Թուրք-իրանական հարաբերությունները առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին 334

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԱՌԱՔԵԼԻ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ
ВААН АРАКЕЛОВИЧ БАЙБУРТЯН

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1900—1914 ԹԹ.)

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ
Նկարիչ
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՉԱԲԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Հ. Ս. ԻԳԻԹՅԱՆ

ՎՊ 00150 Հրատ. 3960 Պատվեր 181 Տպաքանակ 2000

Հանձնված է շարվածքի 17/IX 1973 թ., ստորագրված է տպագրության 26/IX 1974 թ. տպագր. 24,5 մամուլ հրատ. 19,7 մամուլ, պայման. 22,8 մամուլ, թուղթ № 1. 60×841/16:
Գինը 1 ռ. 82 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն. Երևան, 375019, Բարեկամության 24 գ.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան

Ա II 53985

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220053985